Ս. ՎՐԱՑԵԱՆ

# ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ

ՊԷՏՔԵՐ
ՊԷՄՔԵՐ
ՎՊՐՈՒՄՆԵՐ

Ե. ՀԱՅՈՐ
ՊԵՏՀՐԱՏ
1966

ARAM webaram.com

ARAM webaram.com

Ս. ՎՐԱՑԵԱՆ

# ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ

ՊԷՊՔԵՐ

ՊԷՄՔԵՐ

ԱՊՐՈՒՄՆԵՐ

Ե· ՀԱՏՈՐ

ՏՊԱՐԱՆ «ՀԱՄԱԶԳԱՑԻՆ»
ԲՅՑՐՈՒԹ
1966

ARAM webaram.com

ARAM webaram.com

# ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ներկայ հատորը իր մէջ ընդգրկում է 1918 թ· Մայիս 28 — 1921 թ· Փետրուար 18–ի նախօրեակի ժամանակաշրջանը — Հայաստանի հանրապետութեան ծագումը եւ զարգացումը, Հայաստանի հանրապետութեան հաշուեյարդարը բոլշեւիկ — էեմալական համագործակցութեամբ:

Հատորի երկրորդ մասը — «Ցեղկոմի իշխանութեան տակ» — գրուած է 1922—23 թուականներին, դէպքերի թարմ տպաւորութեան տակ, եւ լոյս է տեսել ժամանակին, «Հայրենիք» ամսագրում: Այսօր այդ մասը վերահրատարակւում է գրեթէ անփոփոխ: Կարող է պատահել, որ որոշ մասեր ներկայական բնոյթ են կրում կամ չափազանցուած երեւան այսօրուայ ընթերցողին, բայց, կարող եմ պնդել, որ ա՛յն օրերի հարազատ պատկերացումն են: Ձգէտ է մոռնալ, որ 1921 թուականի առաջին կէսը, բովանդակ Ռուսաստանում, դեռ ռազմական կոմունիզմի շրջան էր, «ամբոխները խելագարուած» շաբունակում էին «բանդել հինը՝ նորը կառուցանելու համար»:

Այդ ժամանակաշրջանի մասին շատ է գրուած, թէ Հայաստանում եւ թէ Սիբիւռում, յուշերի կամ այլ ձեւերով: Սովետների աշխարհում, վերջին տարիները մասնաւորապէս լայն ուշադրութեան առարկայ են այդ օրերի դէպքերը: Հատորներ են լոյս տեսնում իրար յետեւից, վերազնահատութեան փորձեր են տեղի ունենում, բայց ինչ որ ասում է, շատ հեռու է ճշմարտութիւնից: Անհերքելի է մըտում այն իրողութիւնը, որ Հայաստանի հանրապետութիւնը բոլշեւիկները պայթեցրին, թուրք ազգայնականների գործակցութեամբ: Ռուս բոլշեւիկների համար սա Հայաստանի վերանուանում էր· Ձիչերինները Սազոնովի կիսատ ձգած գործն էին լրացնում: Հայ բոլշե-



ARAM webaram.com

ւիկների համար իշխանութեան եւ աթոռի հարց էր· իշխանութեան տիրանալու համար նրանք զոհեցին մանուկ հանրապետութիւնը:

Հայ համայնավարները դեռ շարունակում են թոթովել արեւմըտեան իմպերիալիստների ծառայող «ներիգ դաշնակներ»ի մասին· իբր թէ Հայաստանի անկախութիւնը պաշտպանելով՝ Դաշնակցութիւնը հայ ժողովրդին ստրկացնում էր Անգլիոյ կամ Ամերիկայի ձեռքին, իբր թէ Սեվրը, որ Հայաստանը դարձնում էր միջազգային համակեցութեան ազատ անդամ, գերեզման էր հայութեան համար, եւ Հ· Յ· Դաշնակցութիւնը՝ գերեզմանափոր: Իրենք, հայ բոլշեւիկները, իրատես հայրենասէրներ, թուրքերի ձեռով տապալելով Հայաստանի հանրապետութիւնը՝ փրկեցին հայ ժողովուրդը կործանումից: Ծիծաղելի՛ է: Այդ յիշեցնում է ընկ· Փանջունիի պատմութիւնը· երբ հայրը բարկանում էր որդու վրայ կոտրտած աթոռների կամ այլ կարասիների համար, տղան պատասխանում էր անվրդով «կը շինեմ կոր»: Մինչեւ այսօր էլ հայ բոլշեւիկները շարունակում են թուրթակօրէն կրկնել Ստալինի շնական խօսքը, թէ Սովետական իշխանութիւնը լուծեց հայկական հարցը:

Սովետական իշխանութիւնն էլ շահագործեց հայկական հարցը ճիշդ այն ձեւով, ինչպէս շահագործեցին «արեւմտեան իմպերիալիստները»· ո՛չ աւելի, ո՛չ պակաս:

Մինչեւ այժմ, չգտնուեց մէ՛կ հայ կոմունիստ, որ խոստովանէր այս ճշմարտութիւնը: Ներողութի՛ւն, մէկը բացառութիւնը ունեցաւ հրապարակով, առանց բառերը ծամծմելու, ասելու, թէ Հայաստանն ու հայ ժողովուրդը զոհաբերուեցին յանուն համաշխարհային յեղափոխութեան: Այդ մէկը Բ· Բորեանն էր, որի գլուխը կերաւ Ստալինը:

Այսօր Սովետական պատմագրութեան մէջ, նկատւում է որոշ զգաստացում: Դեկավարութիւնը դեռ մնում է նախկին դիրքերի վրայ: Անհաշիւ անգամներ նրանք յայտարարեցին Դաշնակցութիւնը մեռած, մեծահանդէս յուղարկաւորութիւններ կատարեցին, բայց Դաշնակցութեան գաղափարները մնում են կենդանի եւ շարունակում են անհանգստացնել Արտաշէս Կարինեանների եւ Աշոտ Յովհաննիսեանների մտքերը: Իսկ Սովետահայ հասարակութեան մէջ, մտաւորականութեան եւ ուսանողութեան շարքերում արթնանում, աճում ու զարգանում են այն գաղափարները, որոնց ջահակիրն է Հ· Յ· Դաշնակցութիւնը: Խօսքս մասնաւորապէս հայկական հարցի մասին է: Եւ, կասկած չկայ, ժամանակը եւ առարկայական դէպքերը հայ բոլշեւիկներին էլ պիտի բերեն այն եզրակացութեան, որ



ARAM webaram.com

անհրաժեշտ է վերաշինել ա՛յն, ինչ որ իրենք ճանդում էին մինչեւ այժմ: Ասենք իրե՛նց խօսքով· իրերի տրամաբանութիւնը աւելի զօրաւոր է, քան մարդկային կամքը: Իրերի տրամաբանութիւնը անպարտելի կը դառնայ, երբ նրան միանայ մարդկային կամքը:

Հատորի առաջին մասը, Հայաստանի հանրապետութեան ժամանակաշրջանը, գրուած է 1963 թ· ամառը, Դրոսեայում (Յուսատան): Այս ժամանակի մասին էլ պատմական առատ նիւթ է հաւաքուած առանձին մենագրութիւնների, յուշերի, ուսումնասիրութիւնների եւ այլ կարգի գրութիւնների ձեւով: Կէս դար առաջ տեղի ունեցած դէպքերի մասին կարելի է այլեւս խօսել աւելի՛ սառնարիւն, աւելի՛ անաչառական ձեւով: Գրելիս, ես նպատակ չեմ ունեցել ժամանակաշրջանի առարկայական պատմութիւնը ներկայացնել: Այդ աշխատանքը ես կատարել եմ «Հայաստանի Հանրապետութիւն» հատորում: Այստեղ ես աշխատել եմ գլխաւորապէս արձանագրել իմ տեսած կամ մասնակից եղած «դէպքերը» եւ «ապրումները»: Բնականաբար, իմ գրուածքը կարող է զերծ չլինել ենթակայական նկատումներից, բայց կարող եմ ասել, որ ես չեմ հետապնդել որոշ միտում եւ աշխատել եմ հաւատարիմ մնալ ճշմարտութեան, ի հարկէ, այնպէս, ինչպէս ես եմ հասկացել ճշմարտութիւնը:

Բացի այդ, ես առաջ եմ բերել մի շարք վաւերագրեր, որոնք, իմ կարծիքով, կ'օգնեն աւելի լաւ հասկանալու ժամանակի գործերը եւ ժամանակի ոգին: Ուզում եմ ընդգծել, յատկապէս, բոլշեւիկ պատասխանատու գործիչների, ինչպէս Զիչերինի, Օրջոնիկիձէի եւ ուրիշների հեռագիրները, որոնք ոչ միայն չէին համապատասխանում, այլեւ հակասում էին իրենց կատարած գործերին: Հայաստանի հանրապետութիւնը խորտակելու համար, որից համար ամէն միջոց նեբելի էր:

Հայաստանի հանրապետութեան վերաբերմամբ էլ Սովետահայ պատմագրութիւնը զգալի չափով սկսել է իր դիրքը փոխել: Առաջ, Ստալինի տիրապետութեան տարիներին, կարելի չէր խօսել այն դէպքերի մասին, որոնք ծնունդ տուին Հայաստանի հանրապետութեան: Թարո՛ւ: Ո՛չ Սարդարապատ կար, ո՛չ Բաշապարան, ո՛չ Ղարաբաբիլիսէ, ո՛չ Արամ Մանուկեան, ո՛չ Դրօ, ո՛չ Սիլիկեան, ո՛չ Փիրումեան··· Ո՛չ էլ, ի հարկէ, Հայաստանի հանրապետութիւն: Այսօր, այդ բոլորի մասին խօսւում եւ գրւում է: Բնականաբար, ինչ որ կատարուել է Հայաստանի հանրապետութեան նախօրեակին, եղել է «ժողովրդի», այսինքն բոլշեւիկների գործը, «ի հեճուկս Դաշնակցութեան»: Տխմարութիւնը եւ անճարակութիւնը որոշ հեղինակնե-



ARAM webaram.com

բին հասցնում է այնտեղ, որ ընթերցողը կարող է կարծել, թէ Դաշնակցութիւնը, ի՛նքը, գործում էր «ի հեռուկս Դաշնակցութեան»:

Բայց, անշուշտ, ժամանակը այս էլ կը սրբագրէ: Ժամանակը իմաստուն գործօն է ժողովրդների կեանքում: Հեռու չէ այն օրը, երբ բոլշեւիկները պաշտօնապէս կ'ընդունեն, որ Հայաստանի հանրապետութիւնը իրերի տրամաբանութեան արդիւնք էր եւ իրենք, բոլշեւիկները, իրրեւ հաւատարիմ աշակերտներ Մարքս—Լենինիզմի, հիմք են դրել Հայաստանի հանրապետութեան, եւ այսօրուայ «Սովետական Ռեսպուբլիկան» շարունակութիւնն է Հայաստանի հանրապետութեան··· «ի հեռուկս Դաշնակցութեան»: Բոլշեւիկեան «դիալեկտիկան» ամէն բանի ընդունակ է:

Իմ ցանկութիւնն էր ճշմարտութեան ենթարկել Հայաստանի հանրապետութեան մասին, Հայաստանում եւ արտահայաստանում, Ստալինի անկումից յետոյ լոյս տեսած պատմագրական գործերը, բայց, դժբախտաբար, իմ ներկայ պայմաններում այդ հնարաւոր չեղաւ: Կրկնում եմ, ինչ որ դրուած է այս հատորում իմ տեսած եւ մասնակցած դէպքերն են եւ անձնական ապրումները: Պատմագրութեան տեսակէտից, ի հարկէ, մեծ չէ դրանց արժէքը, բայց *ֆեկտ քուխդ փոտուխ*, ասելին դող ուրիշները անեն:

Այս հատորի պատրաստութեան գործում ինձ հիմնական աշխատակից եղաւ իմ ընկեր Օննիկ Զաքարեանը, որ մի ամիս, Դրոսեայի ՀՕՄ–ի կազդուրման կայանում, տառապեց ինձ հետ, անհաշիւ թղթեր կարդալով եւ գրի առնելով Հայաստանի հանրապետութեան ժամանակաշրջանի «դէպքերն» եւ իմ «ապրումները»: Նոյն ձեւի աջակցութիւն ցոյց տուեց ինձ, Սան Ֆրանսիսկոյի պետական համալսարանի դասախօս եւ Ճեմարանի շրջանաւարտ՝ վարդան Գրիգորեանը:

Համագգայինի գործավար, իմ ընկեր Օննիկ Մելիքսեթեանի ձեռքով կատարուեց հատորի տպագրութեան եւ սրբագրութեան աշխատանքը:

Հատորի վերջնական վերանայումը եւ լրացումը տպագրութեան համար պարտական եմ Ճեմարանի շրջանաւարտ Օր· Շաղիկ Փափազեանին:

Բոլորին՝ իմ ջերմ եւ սրտագին շնորհակալութիւնը:

28 *Մայիս* 1966 Ս· Վ·



ARAM webaram.com

# 1918 - 1920 ԹՈՒԱԿԱՆՆԵՐԸ

ARAM webaram.com

ARAM webaram.com

# Ի՞ՆՉ ԷԻՆՔ ՓՆՏՌՈՒՄ ՀԻՍԻՍՈՒՄ

*Այսպէս, ուրեմն, ընդ հարկ եւ ընդ առաջ անցնելով եւ հազար ու մի չարչարանք կրելով՝ 1918 թ. Մայիս 28–ին, հայ ժողովուրդը ծնունդ առաւ Հայաստանի Հանրապետութեան:*

*Մի չարաթ վերջը, Յունիս 4–ին, Բաթումում կնքուեց հաշտութեան պայմանագիրը նորածնունդ Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիոյ միջեւ: Հայաստանը դարձաւ անկախ պետութիւն եւ հայ ժողովուրդը՝ պետական ազգ: Հայաստան աշխարհը 11 հազար քառակուսի քիլոմեթր՝ էջմիածնից մինչեւ Սեւանայ լիճ: Երեւանը՝ մայրաքաղաք: Պետութեան համար փոքր տարածութիւն, պերեզմանատան համար՝ մեծ:*

*Անկախութեան համար անժամանակ ծնունդ էր Հայաստանի Հանրապետութիւնը: Ո՛չ տարածքային պայմաններով, ոչ ներքին քաղաքական պիտակցութեամբ նախապատրաստուած: Հայ ժողովուրդը երկար ու յամառ պատամարտ էր մղել Հայաստանի պատուհեան համար Թուրքիայում եւ պատուհին առելով հասկացել էր բարենորոգումներ կամ ինքնավարութիւն Օսմանեան կայսրութեան ընդհանուր յարկի տակ: Նրա մտքով իսկ չէր անցել Հայաստան ստեղծել Թուրքիայի սահմաններում: Եւ հիմա, Հայաստանի Հանրապետութիւնը ծնունդ էր առնում Արարատեան դաշտում, ուսանելի տերպետութեան ներքեւ գտնուող հողի վրայ եւ այն էլ անհնարին պայմաններում: Զարմանալի չէր, որ հայ միտքը չփոթի մատնուեց եւ դժուարանում էր ըմբռնել կացութիւնը եւ քաղաքական նոր դիրքորոշում որդեգրել:*

*Պէտք է ի նկատի ունենալ այն օրերի հայ ազգային ուժերի դասաւորումը, որ արտայայտում էր քաղաքական կուսակցութիւն-*



ARAM webaram.com

ների միջոցով: Հրապարակի դեկավար ուժը Հ. Յ. Դաշնակցութիւնն էր, որի մէջ կամ չուրջն էր դանւում հայ ժողովրդի ճնշող մեծամասնութիւնը, կարելի է ասել 80 տոկոսը: Դաշնակցութիւնը իր վրայ էր առել ազգային դատի դեկավարութեան ամբողջ ծանրութիւնը եւ իրերի բերումով իր ուժերի մեծամասնութիւնը արամադրել էր Թուրքահայ դատին եւ Թուրքահայ դատը հետապնդելիս՝ ապաւել էր իր Թանկագին ուժերը: Համաուսական յեղափոխութիւնը նոր պարտականութիւնների եւ զոհողութիւնների առջեւ էր դրել Դաշնակցութիւնը: Այժմ նա կանգնած էր մի աննախընթացօրէն մեծ պարտականութեան առջեւ՝ դնելու նորածնունդ պետութեան հիմքերը եւ կազմակերպելու ու վարելու հայ պետութիւնը: Հասկանալի է այն վարանումը, որ տիրում էր Դաշնակցութեան շարքերում: Այդ վարանումը երեւան եկաւ եւ Հայաստանի անկախութիւնը յայտարարելիս: Տարօրինակ կերպով անկախութեան հակառակ քուէ տուին այնպիսի մարդիկ, որոնք իրենց ամբողջ կեանքը նուիրել էին հայկական ազատամարտին: Տեղն է ասելու, հիւրան եկ և իրքն դնա ոչ ծանեան:


Հայութեան մէջ երկրորդ ուժը ներկայացնողը Հայ ժողովրդական նորակազմ կուսակցութիւնն էր, որ իր մէջ ձգտում էր համախմբել հայ ունեւոր դասակարգը եւ այդ դասակարգի դաղափարախօս մտաւորականութիւնը: Հայ ժողովրդական տարրերը, կարելի է ասել մինչեւ 1918 Թուականը զործակից էին Դաշնակցութեան հետ եւ մասնակից ու պատասխանատու էին Դաշնակցութեան կատարած զործերի համար: Այժմ զարձել էին ընդդիմադիր, Դաշնակցութիւնը համարում էին պատասխանատու՝ հայ ժողովրդի զլխին եկած բոլոր դժբախտութիւնների համար, եւ Սոցիալիստ Յեղափոխականների ու Սոցիալ—Դեմոկրատների հետ միացած՝ պահանջում էին, որ Դաշնակցութիւնը հրապարակից քաշուի եւ Հայաստանի անդրանիկ կառավարութիւն կազմելը իրենց յանձնուի: Դաշնակցութեան մէջ էլ որոշ ընդունելութիւն էր զանում այս առաջարկը. նոր պինին պէտք էր լեցնել նոր սիկերի մէջ: Յայտնի էր թէ ինչ զըժուարութիւններ կային նոր պետութեան կազմակերպման համար: Սակայն, ժողովրդականները չուտով նահանջեցին, երբ իմացուեց, որ Հայոց Ազգային Խորհուրդը եւ կազմուելիք կառավարութիւնը Թիֆլիսից պիտի տեղափոխուեն Երեւան. վրացիները անհամբեր էին ու վրդովուած, որ հայերը չեն հեռանում իրենց մայրաքաղաքից:

Սոցիալիստ Յեղափոխականներն ու Սոցիալ—Դեմոկրատները զեռ հայկական ուժ չէին, հակառակ էին անկախութեան: Ուրիշ ուժ չկար, որ կարողանար կառավարութիւն կազմել: Ուղէր-չուղէր Դաշ-



ARAM webaram.com

նակցութիւնը պիտի առանձնէր այդ պարտականութիւնը: Ցիշում եմ Հ. Յ. Դ. Բիւրոյի յուղումնալից նիստը այդ առթիւ: Մանրամասն քննութեան ենթարկուեցին քաղաքական առարկայական պայմանները եւ հայութեան ենթակայական վիճակը: Ցուսահատական էր կացութիւնը: Բայց Արարատեան դաշտից, ուր տեղական Ապպային Խորհուրդի զեկավարութեամբ եւ Արամի ու Դրօյի ջանքերով հայերի համար քիչ-շատ տանելի դրութիւն էր առեղծուած, հայկական բոլոր գաւառները քաոսային վիճակ էին ներկայացնում ապստամբական բախումների եւ թրքական սպառնալիքի հետեւանքով: Թրքահայոց Ապպային Իշխանութիւնը, այսպէս կոչուած Ապահովութեան Խորհուրդը լքել էր իր դիրքերը եւ անցել էր հիւսիսային կովկաս: Անուանի խմբապետներ Մուրատը, Սեպուհը եւ ուրիշներ նոյնպէս հեռացել էին հիւսիսային կովկաս, այնտեղից Բաքու երթալու համար: Թրքահայ գաղթականութիւնը, իբրեն զգալով անապահով հարաւային կովկասում, շարժուել էր դէպի հիւսիս: Պետութիւն կառուցանելու ոչ մէկ միջոց չկար բռնութեան դաշնապրով Հայաստանին յատկացուած հողամասին վրայ: Հայոց ամբողջ հարստութիւնը եւ մտաւորական ո ւ ժ ե ր ը դուրսն էին: Հայաստանին ընծին էր մնացել մի քանի քլոմետր երկաթուղի եւ մի քանի չոգեշարժ մեքենաներ ու վագոններ: Ճանապարհները արտաքին աշխարհի հետ կտրուած էին: Տնտեսական կեանքը քայքայուած: Պաշտօնէութիւնը, որ մեծ մասամբ բաղկացած էր ռուսներից կամ վրացիներից, ձգել փախել էր: Դրամ չկար: Այսպիսի պայմաններում ի՞նչ կարելի էր անել: Բիւրոն որոշեց իր վրայ առնել Հայաստանի պետական կազմակերպութեան պարտականութիւնը, վերակազմել Ապպային Խորհուրդը՝ տալով նրան Հայաստանի Օրէնսդիր Ժողովի իրաւասութիւն, եւ եթէ անհնարին լինի համապպային ու-



Ա. ՍԱՀԱԿԵԱՆ



ARAM webaram.com

ժերը համախմբել, ի հարկին, միայն դաշնակցականներից կազմել Հայաստանի կառավարութիւնը: Այս կէտերը հիմք ծառայեցին հետագայ անելիքների:

Հայոց Ազգային Ժողովրդը վերակազմուեց Հայաստանի Ժողովուրդ անունով, անդամների թուի եռապատկումով, եւ որովհետեւ նախագահ Ա. Ահարոնեանը պիտի մեկնէր Պոլիս, ապա հաւանական էր, որ Փարիզ ուղարկուելիք պատուիրակութեան պետ նշանակուէր, նրա տեղը Հայաստանի Ժողովրդի նախագահ ընտրուեց Աւետիք Սահակեանը (Հայր Աբրահամ):


Հայաստանի Ժողովրդը Յ. Քաջազնունիին յանձնեց կառավարութեան կազմութիւնը: Քաջազնունին դժկամակում էր առանձնել այդ պարտականութիւնը, բայց ի վերջոյ յանձն առաւ: Բաթումի Ժողովրդաժողովում մենք բաւական մտերմացել էինք, եւ այժմ, Քաջազնունին ուզում էր ինձ եւս մտցնել իր կազմելիք կառավարութեան մէջ: Ես, ընդհակառակն, պատրաստւում էի անցնել Երեւան. մի քանի օր առաջ լուր էր ստացուել Սրամից, որ չտապ կանչում էր Ռ. Տէր Մինասեանին եւ ինձ Երեւան: Սակայն, պայմանները այնպէս դասաւորուեցին, որ ես մեկնեցի ուրիշ ուղղութեամբ: Բաթումի Ժողովրդաժողովի օրերին, Հ. Յ. Դ. Բիւրոյի որոշումով մի շարք պատուիրակութիւններ եւ անհատներ ուղարկուեցին Գերմանիա եւ այլ երկիրներ Հայաստանին ի նպաստ աշխատանքներ կատարելու համար: Այսպէս, Հ. Օհանջանեան եւ Պետական Դումայի նախկին անդամ՝ սոցիալ-դեմոկրատ Ա. Զօհրապեան ուղարկուեցան Բերլին, գերման կառավարութեան աջակցութիւնը խնդրելու համար Հայաստանին: Մոսկուա ուղարկուել էին Ա. Զիլինգարեան եւ Ս. Յակոբեան, Բագուի Ազգային Ժողովրդի կողմից: Իրաւաբան Գ. Ծամոյեան ուղարկուեց Հեռաւոր Արեւելք, Կոլչակի մօտ, եւ ուրիշներ՝ այլ վայրեր: Մեր անհրաժեշտութիւն էր զգացւում մի մարդ էլ ուղարկելու Հարաւային Ռուսաստանի կամաւորական բանակի մօտ, որ այդ ժամանակ, ռուսական մենծպոյն ուժն էր Ռուսաստանում եւ միակը որ կարող էր աւմիջական օգնութեան հասնել Հայաստանին: Բիւրօն, Հայաստանի Ժողովրդի Դիւանի համաձայնութեամբ որոշեց այդ պարտականութիւնը դնել իմ վրայ, որով ջուրն ընկան Քաջազնունիի մտադրութիւնը եւ Սրամի հրաւէրը՝ Երեւան:

Այսպէսով ես պիտի կարուէի Թիֆլիսի Ժոհ ու բոհից եւ Հայաստանի պետութեան անմիջական աշխատանքներից:

Թիֆլիսից մեկնեցի ես Յունիսի վերջերը: Վրաստանը իր վեհապետական իրաւունքների նախանձախնդիր պետութիւն էր այլեւս:



ARAM webaram.com



ՅՈՎՀԱՆՆԷՍ ՓԱՍԱՍՅՈՒՆԻ



ARAM webaram.com

Խիստ հակում էր, սահմաններին վրայ։ Ես անյարմար համարեցի առանց վրաց կառավարութեան դիտութեան հեռանալու Վրաստանից. իմ մեկնումը, մանաւանդ Ռուսաստան, կարող էր կասկածներ առիթ տալ։ Ուստի, Թիֆլիսը հողնելուց մի քանի օր առաջ ես այցելեցի Նոյ Ռամիշվիլիին։ Նոյ Ռամիշվիլին, որ մեր չրջաններում յայտնի էր Ռահմի պէյ անունով, կոպիտ եւ հայատեաց մինչեւիկ էր, բայց իմ հանդէպ բարեկամական վերաբերում ունէր։ Պատճառը թերեւս այն էր, որ ես բարեկամ էի Կորիաքով ընտանիքին հետ, որի մօտ յաճախ լինում էր իր նշանածը։ Ռամիշվիլին տեսակցութիւններ էր ունենում նշանածի հետ Կորիաքովների մօտ, եւ մենք հանդիպում էինք այնտեղ իրար հետ։ Ռամիշվիլին ընդունեց ինձ սիրալիր քաղաքավարութեամբ եւ առանց երկար-բարակ նախաբանի ասաց.

—Ուրեմն Ռուսաստան էք գնում։ Խեր լինի։ Ի՞նչ կայ չկայ։ Ես պատասխանեցի.

— Այո, եկել եմ ձեզ հրաժեշտ տալու։ Գնում եմ իմ ծննդավայրը՝ Նոր-Նախիջեւան։

Ինձ զարմացրեց, որ Ռամիշվիլին արդէն տեղեակ էր իմ ճամբորդութեան մասին։ Նշանակում է, վրաց կառավարութիւնը լաւ էր գործում։

Ռամիշվիլին, ի հարկէ, չհաւատաց թէ իմ ուղեւորութեան պատճառը ծննդավայրս այցելելն է եւ սկսեց խօսել Հիւսիսային Կովկասի եւ Կամաւորական Բանակի գործերի մասին։ Ես յայտնեցի, թէ իմ ճամբորդութիւնը կապ չունի այդ գործերի հետ։ Ցիշում եմ իր հեգնական խօսքը.

— Ընկեր Վրացեան, ես ձեզ լիովին հասկանում եմ, ձեր տեղը գուցէ ես էլ նոյնը անէի, բայց զգուշացնում եմ. կրակի հետ չեն խաղում։ Ձեզ մաղթում եմ բարի ճանապարհ, բայց խմացէք, որ Ռուսաստանի եւ մեր միջեւ ամէն բան վերջացած է։ Քափուր։

Տարիներ վերջը, Փարիզում, ես այս դէպքը յիշեցի Ռամիշվիլիին։ Նա ասաց, թէ իմ ճամբորդութեան մասին լուր էր առացել մեր չրջանակից. նա գիտէր, որ ես գնում էի Կամաւորական Բանակի մօտ։ Նա համոզուած էր, որ, իբր թէ, մենք աշխատում էինք Կամաւորական Բանակը բերել Կովկաս։

Առհասարակ, վրացիները շատ կասկածով էին վերաբերում եւ մեզ համարում էին Ռուսաստանի կոմունակիցներ Կովկասում, ինչ որ շատ հեռու չէր իրականութիւնից։ Հայերի մէջ շատ ամուր կեր-



ARAM webaram.com

պով տեղաւորուել էր ռուսը՝ ճերմակ թէ կարմիր ռուսը: Ըստ ժողովրդական երգի՝

Կ'ուզես բոյշեւիկ լինեմ,
Կ'ուզես մենշեւիկ լինեմ,
Միայն ես եարը լինեմ:

Իմ ճամբորդութեան մասին, դէպի Հիւսիսային Կովկաս եւ Հարաւային Ռուսաստան ես խօսել եմ մի ուրիշ տեղ(*): Այստեղ տալիս եմ մի քանի մանրամասնութիւններ:

Բաթումը դեռ Թուրքիոյ ձեռքին էր, և յարաբերութիւնը Ռուսաստանի հետ տեղի էր ունենում Փոթիից: Նաւերի երթեւեկը պատահական էր: Ինձ յաջողուեց Նովորոսիյսկ գնացող մի նաւ գտնել, որ հանդիպում էր Սեւ ծովի ափերին ընկած բոլոր քաղաքները՝ Օչեմչիրի, Նորաֆոն, Սոխում, Ադլէր, Սոչի, Տուապսէ: Այս քաղաքների մեծ մասում կային հայեր գաղթած՝ Տրապիզոնի շրջանից: Ես առիթն ունեցայ հանդիպելու այդ բոլոր քաղաքները: Մինչեւ Սոչի այդ բոլոր վայրերը պրատել էին վրացիները: Գլխաւոր քաղաքներում ինչպէս Սոխում, Սոչի, պահւում էին վրաց զօրամասեր, որոնք հարատահարում էին ժողովրդին: Վրացիներից զատ, ամէնքը զժգոհ էին վրացական իշխանութիւնից: Մանաւանդ բուռն հակավրացական տրամադրութիւն նկատեցի Սոխումի ափխազների մօտ: Նրանց ներկայացուցիչներից մէկը ինձ գանգատուեց, թէ վրացիները ուզում են բռնի կերպով վրացացնել ափխազներին, որոնք իրենց գլում են առանձին ազգութիւն, որ ո'չ մի կապ չունի վրացիների հետ: Սոխումի շրջանին ապրող հայ քրիստոնեաները նոյնպէս զժգոհ էին վրաց իշխանութիւնից եւ մտածում էին Հայաստան փոխադրուելու մասին:

Նոյն տրամադրութիւնը ես նկատեցի եւ Սոչիում, ուր ստիպուած եղայ բաւական երկար մնալու: Սոչին համբաւաւոր ամարանոց էր ամբողջ Ռուսաստանի համար: Այստեղ ուս ապնուականութիւնը ունէր չքեղ տուներ: Նշանաւոր «Ռիվիէրա» պանդոկը Սեւ ծովի ափին, ամառ ձմեռ լեցուն էր լինում Ռուսաստանի մայրաքաղաքից եւ գանազան կողմերից եկած բազմութիւններով: Քաղաքի արհեստները եւ մանր առուտուրը գտնում էին, մեծ մասամբ, հայերի ձեռքը: Տրապիզոնից գաղթած հայերը մշակում էին եւ շրջակայ հողերը: Եռուն եւ զուարթ քաղաք էր Սոչին: Այժմ կիսամայր, մեռած երեւոյթ ունէր: Պետերբուրգի իշխանների եւ Մոսկուայի վաճառական-

---

(*) Տես, «Կեանքի ուղիներով», հատոր Բ., էջ 104 – 108:



ARAM webaram.com

ների ապարանքները դոց էին եւ «Ռիվիէրա»յում փարթամ պարահանդէսների փոխարէն տեղի էին ունենում վրաց դինուորականների եւ պաշտօնեաների խրախճանքները: Փողոցներում երեւում էին վրացի ձիաւոր դինուորներ, կուշտ ձիերի վրայ նստած, որոնք սարսափ էին ազդում հանդիպող բնակիչների վրայ: Վրացիները նոր էին քշել Սոչիից ռուս կամաւորներին եւ այժմ իրենց պղում էին նուաճած երկրի տէրերը: Ես, որ առաջ ամբոխներով ապրել էի այս պերպատարձ վայրում, այժմ չէի ճանաչում նախկին Սոչին: Իմ ծանօթներից դրեթէ մարդ չէր մնացել: Ռուսները հեռացել էին հիւսիս: Հայերը մտածում էին գաղթելու մասին Հայաստան: Վրացիների թիւը Սոչիում եւ շրջանում աննչան էր:

Այցառել էր մեր հին ընկերներից Արամ Յակոբեանը, որպէսզի, որ Հ. Յ. Դաշնակցութեան առաջին շրջանի ակտիւոր գործիչներից էր՝ կամրէն ծածկանունով: Արամը վայելում էր շրջանի անխտիր բոլոր հայերի բացարձակ վստահութիւնը: Նրան յարգում էին եւ օտարները, նոյնիսկ վրացիները: Արամը հանդամանօրէն նկարագրեց ինձ շրջանի կացութիւնը եւ վրացիների գործած կամայականութիւնները ու բռնութիւնները տեղական բնակչութեան, բայց, մանաւանդ, հայերի վերաբերմամբ. նա խորհուրդ տուեց, որ տեւնուեմ վրացի իշխանաւորների հետ եւ ջանամ համոզել, որ վերջ տան Սոչիի շրջանում իրենց հետեւած քաղաքականութեան, որ նպաստաւոր է միայն բոլշեւիկների եւ ցարական ռուսների համար:

Ես այցելեցի «Ռիվիէրա»ն: Այնտեղ ինձ ընդունեցին քաղաքավարութեամբ: Պարզուեց, որ Սոչիի շրջանի վրացի վարիչները տեղեակ էին ոչ միայն Սոչի հասնելուս մասին, այլ եւ դիտէին, որ ես որոշ առաքելութեամբ գնում էի կամաւորական բանակի մօտ: Ինձ յայտնեցին, որ Սոչի էր գտնւում Իսիդոր Ռամիշվիլին, որ ուրախ պիտի լինէր տեսնուելու ինձ հետ:

Յաջորդ առաւօտ ես նորից գնացի «Ռիվիէրա»: Ռամիշվիլին հետ ես հին ծանօթ էի: Նա ընդունեց ինձ ջերմօրէն: Տարէց մարդ էր: Բացառիկ պարկեշտութեան տէր: Անկեղծ բարեկամ հայերի: Մօտիկ անձնաւորութիւն Ռոստոմի եւ Զաւարեանի: Սոչի էր եկել իբրեւ քննիչ կառավարութեան կողմից եւ գոհ չէր շրջանի գործերից: Ես նրան պատմեցի այն ամէնը, որ Արամը հաղորդել էր ինձ: Նա գլուխը շարժելով լսեց ինձ ուշադրութեամբ եւ ասաց.

— Դժբախտաբար, ես այդ ամէնը գիտեմ: Գիտեմ աւելին: Մեր բաշիբոզուքները չարիք են գործում: Իրաւունք ունի ձեր բարեկամը. մեզնից արարքները ջուր են բոլշեւիկների եւ ցարականների



ARAM webaram.com

ջրաղացին: Բայց ես ի՞նչ կարող եմ անել:

Եւ իսկապէս ի՞նչ կարող էր անել հանդստի կարօտ այս ծերունին: Շրջակայ ծովը այնպէ՛ս խաղաղ էր եւ «Թիվիէրա»յում կեանքը այնքա՛ն հաճելի...

Ես Իսիդօր Թամիշվիլիին հանդիպեցի երկու տարի վերջ Երեւանում: Նա Աբոտաչէս Աբեղեանի հետ Երեւան էր եկել Թիֆլիսում դումարուած Անդրկովկասեան խորհրդաժողովի կողմից, անցնելու համար Շարուր–Նախիջեւան, այնտեղի մահմեդական բնակչութեան խռովութիւնները հանդարտեցնելու նպատակով: Մայիս 1–ի հանդէս էր տեղի ունենում Երեւանում, եւ Թամիշվիլին խորհրդարանի պատշգամբից դիտում էր աղմկոտ չքերթը: Շքերթի յուցաստախտակների վրայ կային և՛ բոլշեւիկեան «լօզունգ»ներ: Իսիդօր Թամիշվիլին գլուխը շարժելով դարձաւ ինձ.

— Ընկե՛ր Վրացեան, կրակի հետ էք խաղում: Այս բոլորից վատ հոտ է գալիս:

Եւ իսկապէս վատ հոտ եկաւ. Մայիս մէկի հանդէսներին յաջորդեցին Մայիսեան խռովութիւնները Հայաստանում, որոնք մահացու հարուած հասցրին երկրին:

Սոչիից ես նաւով անցայ Նովոռոսիսկ. այնտեղից Եկատերինոդար եւ Թոաոով—Նախիջեւան: Թոաոովի եւ Եկատերինոդարի միջեւ երկաթուղին կտրուած էր: Մեծ կամուրջը Կուբանի վրայ խորտակուել էր քաղաքացիական կռիւների միջոցին եւ ճամբորդները, պայուսակները չալակած, անցնում էին ժամանակաւոր փայտէ յեղյեղուկ կամուրջի վրայով միւս կողմի գնացքը առնելու համար:

Անձրեւոտ եղանակ էր, հողը ցեխ էր դարձել եւ մի քանի հարիւր մեթր ճամբան անանցանելի էր թուում:

Եկատերինոդարի նախկին չէն դուարթ կայարանը այժմ դորշ եւ ամայի էր երեւում: Գորշ էին եւ լուռ նաեւ Եկատերինոդարի փողոցները: Մի քանի օր հիւր մնացի մեր ընկեր Նիկողայոս Սաֆունեանի մօտ, որ Դաշնակցութիւնն էր ներկայացնում Կուբանի կառավարութեան եւ կամաւորական Բանակի մօտ: Այդ օրերի մասին ես պատմել եմ «Կեանքի Ուղիներով»ում: Աւելացնեմ միայն մի քանի տող:

Այստեղ տիրում էր ընդհանուր չփոթ եւ անկազմակերպութիւն: Եկատերինոդարի ընդարձակ չուկան դրաւել էին վանեցի գաղթականները: Ինչպէս յայտնի է, Թուրքերի յառաջխաղացման հետեւանքով մանաւանդ կարսի անկումից յետոյ Վրաստան հաւաքուած



ARAM webaram.com

բազմահազար արեւմտահայ դպրթականութիւնը խուճապի մատնուեց:

Արեւմտահայ ապահովութեան Խորհուրդը, դլուխը կորցրած, եւ հազարաւոր դպրթականներ խուճապահար անցան Դարխալի կիրճը եւ ցրուեցին հիւսիսային Սիրիոյ մէջ, ուր, քաղաքներում եւ առանձին գիւղերում քաղաքացիական կոխիներ էին տեղի ունենում: Անպաշտպան եւ անօդնական եկուոր հայերը մէկ ընկնում էին կարմիրների ձեռքը, մերթ ճերմակների՝ երկու կողմից էլ բռնութեան եւ թալանի ենթարկուելով:

Եկատերինոսլաւ հաւաքուել էին մեծ թուով վանեցիներ՝ նոյնպէս անտէր եւ անկազմակերպ, բայց չնորհիւ իրենց ճարպիկութեան լալել էին տեղացիների ձեռքից մանր առեւտուրը՝ քաղաքի բնակչութիւնից: Ես այցելեցի այդ երիտասարդ ազգի եւ չէն չուկան: Գաղթականներ դանդաղում էին իրենց առաջնորդներից, որ լքել էին իրենց: Ամէնքը թէեւ դժգոհ՝ ոգեւորուած էին որ անկախ Հայաստան է առեղծուել: Դեռ հանրապետութիւնը դրօշակ չունէր, բայց ամէն խանութի առջեւ կախուած էր հայկական ինքնահնար դրօշակ: Դժգոհ Եկատերինոսլաւի դպրթականների վիճակը համեմատաբար լաւ էր, քան օրինակ, Ամասիոյ, Վլադիկաւկասի կամ Սատրոպոլի չրջան ընակիչներից: Կայծակահաս՝ հայութիւնը ցրիւ էր եկել, բնութեան եւ մարդկանց չարագործութիւնների առաջեակ:

Ասենք, տեղական բնակչութիւնն էլ չատ փոյլուն դրութեան մէջ չէր: Ո՞ւր էր առաջուայ չէն, լայնասիրտ, կուշտ եւ գութով կուբանցին: Այժմ ամէնքը կասկածամիտ, ամքաշ, գայլի աչքերով էին նայում միմեանց եւ յատկապէս եկուոր օտարների վրայ:

Ընկեր Սաթունեանի հետ այցելեցինք ուր պէտք էր այցելել, չատ խոստումներ լսեցինք, բայց չօշափելի արդիւնք չունեցանք: Եկատերինոսլաւը գտնել էր թիկունք. Կամաւորական Բանակի գեկավարութիւնը գտնուում էր Դոնի չրջանում:

Եկատերինոսլաւից մի յուչ առանձնապէս ամուր մնացել է մտքիս մէջ: Հայոց դպրոցում հանդէս կար: Ինձ էլ հրաւիրել էին ներկայ լինելու: Գնացի Սաթունեանի հետ: Մեզ հետ տարինք մի քանի ուսուցչական եւ ուղեկիցներ:

Հանդէսը մեր սովորական հանդէսների նման մի բան էր. աղդային երգեր, արտասանութիւններ, ճառեր եւ ֆէտայիների կռիւներից մի պատկեր: Ես էլ մի քանի խօսք ասացի Հայաստանի Հանրապետութեան մասին՝ անգուսպ ծափեր խլելով ներկաներից: Յաջորդ երեկոյ՝ պիւուորական ակումբում բանախօսս ծափից: Հանդէսին մեզ



ARAM webaram.com

ընկերացողներից մէկը, ինչպէս պարզուեց նախկին դպրոցական քննիչ, շատ զգոյշ բառերով ինձ յիշեցրեց որ անջատողական գաղափարներ էի քարոզում, որ Հայաստանի Անկախութիւնը ըստ էութեան Ռուսաստանի դէմ է ուղղուած: Մի ուրիշ տաք գլուխ աւելի հեռուներ գնաց: Նրա կարծիքով՝ ես էլ պատկանում էի «սեպարատիստ չովինիստների» կարգին, որովհետեւ Հայաստանի անկախութեան գովքն եմ արել եւ ոչ մի խօսք չեմ ասել Ռուսաստանի մասին, որ հայերին ազատել եւ ազատագրել էր մահմեդականներից: Սաթունեանը իմ կողմն էր, բայց Սաթունեանի պերճախօս բացատրութիւնները չզոհացրին դժգոհներին: Այո՛, զուցէ խիստպէս անդիւանագէտ էի եղել հանդէսում: Եթէ իմ տեղը լինէր ուրիշը, օրինակ Սաթունեանը կամ Ռոստոմի Զալխուչեանը, Հայաստանի գովքը անելուց առաջ մի քանի բիլօ խունկ կը ծխէր Ռուսաստանի առջեւ: Բայց այն ժամանակ ես դեռ նոյնպէս էի. սովոր էի սեւին սեւ ասել եւ ճերմակին՝ ճերմակ, մանաւանդ որ ռուսագէրի համբաւ ունէի: «Ռուսագէ՛ր» — ես չեմ սիրում այդ բառը, ինչպէս եւ անգլիագէրը, ֆրանսագէրը, ամերիկագէրը, գերմանագէրը, ամէն ազգի ակր, ի՞նչ ասել է ակր կամ ատելութիւն մի ազգի վերաբերմամբ, եթէ այդ ազգը թուրքն չէ, թէեւ թուրքերի մէջ էլ պատահում էին մարդ թուրքեր:

Ես ռուսագէր կամ ռուսատեաց չէի առաջ, ոչ էլ ռուսատեաց եմ այժմ: Ամէն ազգի մէջ կան լաւ մարդիկ, կան եւ վատ մարդիկ: Իվան Ահարկունների ազգի մէջ կան Պուշկիններ եւ Տոլստոյներ: Ռուս ժողովուրդը, այո՛, ընդունակ է «խելագարուած ամբոխ» դառնալու բայց եւ ընդունակ է խորունկ մարդասիրութեան, աքանչելի մշակոյթի: Կարելի՞ է ատել այդպիսի մի ժողովուրդ:

Անցնելով Ռոստով—Նախիջեւան եւ այցելելով չրջակայ հայ գիւղերը: Ռոստով—Նախիջեւանը տեսել էր գերմանական զրաւում, ձեռք–ձեռք էր անցել բոլշեւիկների եւ ճերմակների միջեւ: Այժմ կամաւորական Բանակի իշխանութեան տակն էր, բայց ժողովուրդը մտածում էր վազուայ մասին: Ամէն տեղ տիրում էր թախիծ, նախկին չէնութիւնը չկար գիւղերում եւ քաղաքում: Նախիջեւանի համայնական խորհուրդում տիրական էր Ռուբէն Բեբրեբեանը, որ զբաղել էր Գրիգոր Զալխուչեանի տեղը: Այս վերջինը ընդդիմադիր էր Բեբրեբեանին եւ իրեն էր համարում հայութեան ներկայացուցիչը ռուս իշխանութեանց մօտ: Իր սեփական տան ճակատին՝ Ռոստովի Սադոյաւա պողոտայի վրայ, կախել էր ցուցանակ ռուսերէն լեզուով, մէկ երեսին գրուած «Հայկական կոմիտէ», միւս երեսին՝ «Հայոց Բարեգործական Ընկերութիւն»: Երբ բոլշեւիկները էին գալիս


ARAM webaram.com

ցոյց էր տալիս մէկ երեսը, կամաւորներին՝ միւս երեսը: Այժմ՝ «Հայոց Ազգային Կոմիտէ» էր: Բայց վերջը դարձաւ «Հայկական հիւպատոսարան»:

Հասարակական կեանքում եւ ազգական Դաշնակցութեան մէջ ազդեցիկ դէմք էր Համբարձում Տէրտէրեանը, որը արդէն փաստաբանի դրասենեակ ունէր եւ երկու տարի վերջը պիտի դառնար Հայաստանի պարլամենտի անդամ, ապա ֆինանսների նախարար: Տէրտէրեանի կողքին աչքի էր ընկնում երիտասարդ փաստաբան՝ Գրիգոր Զուբարը, որ դեռ Դաշնակցական էր, յետագայ Խրատպէտ, ապա օբէնպիտութեան պրօֆէսօր Երեւանում: Գործի վրայ էին եւ ուրիշ Դաշնակցական երիտասարդներ՝ Գրիգոր Լոդոչնիկեան, Յակոբ Մայրենեան, Սահակ եւ Ալեքսան Զոհրապեաններ, Առաքել Առաքելեան, Սերոբ Տիրացուեան եւայլն:

Իմ դասախօսութեանը՝ Նախիջեւանի Քաղաքային Խորհրդի դահլիճում, ներկայ էր խուռն բազմութիւն: Հայաստանի անկախութեան լուրը խանդավառել էր ամէնքին: Ցիշում եմ դասախօսութենից յետոյ դլուխ-դլխի երկար խօսակցութիւն ունեցանք Գր. Զալխուչեանի հետ: Նա հին եւ վաստակաւոր գործիչ էր համարում իրեն, «Մշակ»ի աշխատակից, լաւ չահոզ փաստաբան, հրատարակել էր, երկու հատորով, Գամառ-Քաթիպայի երկերը՝ Տիկ. Վառվառէ Քանանեանի նիւթական օժանդակութեամբ: Նա իր պարտականութիւնն էր համարում խորհրդներ տալ ինձ պէս երիտասարդ գործիչներին: Զալխուչեանը նախ իմ առջեւ թափեց սրտի ցաւը. ամբողջ կեանքում թէեւ անկուսակցական, եղել էր համակիր եւ գործակցող Դաշնակցութեան: Այժմ նոր հաւեր են դուրս եկել, նոր հաւկիթ են ածում. ուզում են իրեն մեկուսացնել ազգային գործերից: Ո՞վ է Ռուբէն Բէբրեեանը, նախկին հնչակեան, ի՞նչ բան ունի նա Նախիջեւանի ազգային գործերի հետ: Ապա՝ անկախութիւն էք յայտարարել, Հայաստանի Հանրապետութի՛ւն, լաւ է հնչում, բայց մի՛ մոռնաք որ մենք ազգովին երկար գարեր ձգտել ենք դէպի Ռուսաստան: Այսօր էլ առանց Ռուսաստանի չենք կարող ապրել: Այո՛, Ռուսաստանը այսօր «խելագարուել է, հիւանդ է», բայց «գառն ցաւեր մարդու վրայ չեն մնում երկար»: Հայը չի կարող ապրել առանց Ռուսաստանին, ինչպէս որբը չի կարող ապրել առանց խնամակալի: Այն ժամանակուայ ռուսահայ բուրժուազիայի հոգեբանութեան արտայայտիչն էր Գր. Զալխուչեանը: Եւ միայն բուրժուազիայի՞...

Ռոստով—Նախիջեւան իմ գործերի մասին ես գրել եմ արդէն: Արդիւնքը այստեղ ալ շատ մեծ չեղաւ: Նորից բազմաթիւ տեսակցու-



ARAM webaram.com



Ձախից աջ՝ Ս. ՄԻԱՄՆԻԿԵԱՆ, Ա. ԱՌԱՔԵԼԵԱՆ, Ս. ՎՐԱՑԵԱՆ, Գ. ԶՈՒԲԱՐ,
Ս. ՏԻՐԱՑՈՒԵԱՆ. վարը՝ Հ. ՏԷՐՏԷՐԵԱՆ



ARAM webaram.com

թիւն կամաւորական բանակի դէկավարներէն հետ, սիրալիր ընդունելութիւն, քաղցր խօսքեր, բազմաթիւ խոստումներ... բայց Հայաստանը հեռու էր, ծովի եւ ցամաքի ճանապարհները կտրուած էին, Վրաստանը, Ազրբէյջանը, Լեռնականները թշնամի: Ի՞նչ օգնութիւն կարող էր հասցնել մեզ կամաւորական բանակը: Այնուամենայնիւ որոշ օգնութիւն ստացանք:

Երբ ես հրաժեշտ էի տալիս իմ սիրելի Նախիջեւանին, մտքովս չէր անցնում, որ վերջին անգամն էր տեսնում էի հարազատ վայրերն ու մարդկանց: Կործանումից ապաւուած այս հայութիւնը ի՞նչ աւելոծ կեանք ունեցաւ դարերի ընթացքին: Ի՞նչ մեծագործութիւններ կատարեց նա, ի՞նչ մեծ դէմքեր նուիրեց հայութեան. Միքայէլ Նալբանտեան, Գամառ-Քաթիպա, Յ. Ալիխանովկի, Ա. Թամանեան, Մարտիրոս Սարեան եւ բազմաթիւ ուրիշներ, որոնք ճոխացրին մեր ազգային պատմութիւնը: Ես չէի պիտակցում դեռ, որ Նոր-Նախիջեւանը իր հոդեվարքն էր ապրում: Ինչ որ չյաջողեցին անել ցարերը, մի քանի տարի վերջը պիտի կատարէին բոլշեւիկները: Իմ սիրելի Նախիջեւանը կցուեց Ռոստովին, իբրեւ նրա պրոլետարիատական մի Թաղ: Եւ այժմ ո՛չ Նախիջեւան անունը գոյութիւն ունի, ոչ էլ Նախիջեւանցին:

Վերադարձը պակաս տաժանելի չեղաւ, քան երթը: Փոքրեցի Կովկասեան լեռնաշղթայով անցնել, հանքային ջրերի եւ Դարիալի կիրճի վրայով, բայց ճանապարհը կտրուած էր չեչեններէն եւ տեղատարակ լեռնականներէն կողմից: Նոբից բռնեցի Սեւ ծովի ճամբան: Բաթումը արդէն ազատ էր Թուրքերից: Իշխանութիւնը վրացիների ձեռքն էր: Հայատառանի Հանրապետութիւնը ներկայացուցիչ ունէր այնտեղ:

Զորս ամսից աւելի բացակայելուց յետոյ՝ ես վերադարձայ Թիֆլիս:

Թիֆլիսը շատ էր փոխուել, կարծես կորցրել էր իր միջազգային կերպարանքը: Հոկտեմբեր ամսի վերջն էր: Բնութիւնը նոյնն էր, բնական չէնութիւնը, բայց մարդիկ տարբեր էին երեւում: Ազրբէջանցիք քաշուել էին Գանձակ ու Բագու: Հայերը մեկնել էին Երեւան: Նախկին փոխարքայի պալատում, ուր տեղաւորուած էր Սէյմը, այժմ միայն վրացին էր նստած: Հայկական կեանքը խամրել էր: Հայկական կազմակերպութիւնները կորցրել էին իրենց դործունէութեան թափը: Հայ մամուլը՝ ՀՈՐԻԶՈՆ, ԱՇԽԱՏԱՒՈՐ եւայլն չունէին իրենց նախկին տարածումն ու ազդեցութիւնը: Հայկական Թիֆլիսում տեղի էր ունենում ապահայացում: Հայերը այլեւս օտա-



ARAM webaram.com

բական էին Թիֆլիսում, ուր կար Հայաստանի դեսպանատուն: Վրացիները խէթ աչքով էին նայում հայերին եւ արթուն աչքով հետեւում էին դեսպանատանը ելեւմուտք անողներին:

Թիֆլիս հասնելուս երկրորդ օրը «Զաչկա Զայու» արճամբանում ինձ մօտեցաւ երիտասարդ ընկերներից մէկը, որ մի քանի տարի առաջ եկել էր Պալթից եւ այժմ հիանալի խօսում էր ռուսերէն եւ վրացերէն եւ մտերիմ էր վրացական շրջանակներին: Ծանամուտ, ճարպիկ եւ խելացի տղայ էր: Նա ինձ յայտնեց, որ Նոյ Ռամիշվիլին իմացել է իմ վերադարձի մասին եւ ուզում է ինձ տեսնել: Արդէն ես էլ մտադիր էի այցելել նրան. պէտք ունէի նրա արտօնութեան՝ բնակարանս Երեւան փոխադրելու համար: Գնացի: Ինձ ընդունեց սիրալիր, իբրեն յատուկ հեզնական ժպիտով.

– Բարի էք եկել ձեր ծննդավայրից, ասաց նա՝ սեղմելով ձեռքս, յուսամ ձեր ծնողներն ու ազգականները առողջ են...

Յայտնապէս ծաղրում էր ինձ. նա արդէն գիտէր, թէ ո՞ւր եմ եղել, որի՞ հետ եմ տեսնուել եւ ի՞նչ եմ արել:

— Մեր ծերուկը պատմել է ինձ ձեր տեսակցութեան մասին, ասաց նա, ակնարկելով մեր հանդիպման Խախօր Ռամիշվիլիի հետ, Սոչիում: Բացի ձեր ծննդավայրը այցելելուց, անշուշտ, ուրիշ տեղեր էլ եղաք. ի՞նչ կայ-չկայ հետաքրքրական:

Ծանկելիք շատ բան չունէի: Պատմեցի, ինչ որ կարող էի պատմել:

— Տեսա՞ք, կրակից չայրուեցէք եւ այժմ ողջ-առողջ խօսում եմ ձեզ հետ, ասացի ես:

— Այդ մենք վերջը կը տեսնենք, պատասխանեց չնաշան ծիծաղով Ռամիշվիլին:

Ասացի, որ տեղափոխուելու եմ Երեւան եւ պէտք ունեմ արտօնութեան՝ վրացական եւ բնակարանի իրերս տանելու: Նա ուրախութիւն յայտնեց եւ ասաց, որ թէեւ վրացական դուրս հանելը արգիլուած է, բայց սիրով կ'արտօնուի տանելու իմ դրքերը:

Ի միջի այլոց, Ռամիշվիլին յայտնեց, թէ Թիֆլիսի հայ բուրժուազիան սկսել է խելքի գալ, սկսեր է հասկանալ, որ Թիֆլիսը իր տունը չէ, իր տունը Երեւանն է: Ինքը, Ռամիշվիլին, հաճոյքով արձանագրում է այս փաստը: Հիմա ժամանակները այնպէս են, որ ամէն մարդ իր տունը պէտք է ունենայ:

Բայց ինչ որ լսեցի Թիֆլիսում, Նոյ Ռամիշվիլիները չէին բաւականանում սեփական տուն ունենալով, այլ նրանց աչքը ուրիշների տների վրայ էր: Մանաւանդ Հայաստանի վերաբերմամբ նրանք



ARAM webaram.com

ցոյց էին տալիս առանձին ընչաքաղցութիւն: Իրենց էր պատկանում ամբողջ Լօռին, իրենցն էր Ախալքալաքը, իրենց սեփականութիւնն էին հայկական չէնքերը, հայկական հարստութիւնը Թիֆլիսում: Ծայր էր առել վէճը Հայաստանի եւ Վրաստանի մէջեւ Ռուսաստանի ձգած հարստութիւնների համար: Հայերը, որ մինչեւ այդ, մանաւանդ անտեսական տեսակէտից առաջին տեղն էին զբաւում կովկասում, յամառ կերպով աշխատում էին իրենց դիրքերը պահել, բայց ամէն յետնարանից զրկուած էին: Ապագայի համար վատ նախանշան էր հայերի եւ վրացիների մէջեւ նկատուող փոխադարձ նախանձն ու անվստահութիւնը: Մօտալ տիրող դասերի մասին է եւ ո՛չ հասարակ ժողովուրդին: Հայ եւ վրացի ժողովուրդները ապրում էին հաչտ: Հայի աչքին՝ վրացին տուտուց էր, վրացիի համար հայը՝ աշխատող եւ չահասէր: Ճպուռ եւ մրջիւն՝ կողք-կողքի:

Ի զուր չէր ասում Նոյ Ռամիշվիլին.

— Ընկե՛ր Վրացեան, չպէտք է մոռանաք, որ Վրաստանը հարիւր տարի առաջ անկախ պետութիւն էր, մինչդեռ դուք՝ հայերդ, դարեր շարունակ ուրիշ ազգերի հպատակ էք եղել: Վրացիների մէջ դեռ թարմ է պետական ազգի հպարտութիւնը:

Եւ ինչո՞ւ միայն հպարտութիւնը: Մանաւանդ վրաց պետականութեան մէջ դեռ թարմ էր ուրիշ ազգերի հաշուին ապրելու ցանկութիւնը, եւ ուրիշ ազգերի վրայ իշխելու տենչը:

Այո, լաւ նախանշաններ չէին Նոյ Ռամիշվիլիի արտայայտած մտքերը հայ—վրացական խաղաղ կենակցութեան համար, որովհետեւ այդ խօսքերի յետեւից գալիս էին է՛լ համապատասխան գործեր: Վրաց կառավարութիւնը, օրինակ, առանց նախնական խորհրդակցութեան, հրաւիրագրեր էր ուղարկել Ադրբէջանին եւ Հայաստանին, Թիֆլիսում համակովկասեան խորհրդաժողով գումարելու՝ երեք պետութիւններին վերաբերուող գործերը քննելու համար, կարծես Ադրբէջանն ու Հայաստանը՝ Վրաստանին էնթակայ երկիրներ լինէին:

Ինչե՛ր տեսայ, ինչե՛ր լսեցի ես Ռուսաստանում...

Աւանդական պատմութիւնը ասում է, որ Սարմատեան Դաշտը, այժմ Ուկրանիա եւ Ռուսաստան, անհաչիւ տարիներ առաջ բնակեցուած էր սլաւ ցեղերով — ռուս, ռուսին, ճերմակ ռուս —, անկարդ եւ անկերպարան, քաոս էր: Անվերջ վէճ ու կռիւ եւ փոխադարձ յօշոտում: Մի խօսքով՝ «ամբոխները խելագարուած»՝ անընդունակ իրենց կառավարելու:

Ցոգնած այս վիճակից՝ Սարմատեան Դաշտի բնակիչները ժո-



ARAM webaram.com

զով դամասկեցին եւ պատուիրակները ուզակիեցին Հիւսիս, Վարնապ–նեքի մօտ: Պատուիրակները գնացին եւ ասացին.

— Մեր երկիրը բնզարձակ է եւ արդասաբեր, բայց մէջը կարգ չկայ: Եկէ՛ք եւ կառավարեցէ՛ք մեզ:

Եւ Վարնապ երեք եղբայրներ՝ Սինէուս, Տրուվոր, Բիւբիկ Եկան, կարգ մացրին Սարմատեան Դաշտում եւ կառավարեցին: Մանաւանդ, Բիւբիկի ժառանգները երկար ժամանակ տիրեցին Ռուսաստանին:

Այսպէս սկսուեց և այսպէս չարունակուեց Ռուսաստանի պատմութիւնը: Եւ այժմ, նոյնն էր տեղի ունենում Սարմատեան դաշտում, ինչ որ ուս պատմութեան արշալոյսին:

Ռուս ազգը, որ Պուշկին ու Գոգոլ, Տոլստոյ ու Զեխով է տուել մարդկութեան, անկարող ինքն իրեն կառավարելու, գալարուում էր քաօսում. «ամբոխները խելագարուած» եւ կոմաւորական բանակները խելակորոյս՝ յօշոտում ու ջլատում էին Ռուսաստանի մարմինը:

Ի՞նչ էինք փնտռում մենք հիւսիսում: Չէ՞ որ իմ հայրենակից բանաստեղծ Գամառ–Քաթիպան զգուշացրել էր մեզ հիւսիսից սպառնացող «Սելաւ»ի դէմ: Չէ՞ որ նա գայլոյթով չպրտել էր հայերի հացկէն.

— Ի՞նչ էք փնտռում հիւսիսում, ա՛յ, խելացի գիժ հայեր:

Դարեր չարունակ, այդ «գիժ հայերը» իրենց փրկութիւնը որոնել էին հիւսիսի «Սելաւ»ում, այժմ, մենք, նրանց յաջորդները, նոյնն էինք անում. փրկութիւն էինք փնտռում մի ազգից, որ ինքը պէտք ունէր փրկութեան:

Նոյ Թամիշվիլին չուն էր: Նա հասկանում էր իմ ապրումները եւ զգում էր, որ վերապարձել եմ հիասթափուած: Նա ծանօթ էր, որ քաղաքում խօսում էր հայ բուժուական չրջաններին մասին, որ, իբր թէ, զղջացել են սկզբնական անհաչա գնրքից Դաչնակցութեան դէմ եւ այժմ պատմապիր են համապատասխանութեան: Երեւանից հասած լուրերն էլ հաստատում էին, որ ընդհանուր դժգոհութիւն է տիրում Քաջազնունիի կառավարութիւնից եւ խօսում էր կօալիցիայի անհրաժեչտութեան մասին: Կօալիցիան համապատասխան էր նաեւ իմ հոգուն: Ես էլ այն կարծիքին էի, որ Հայաստանը պէտք ունէր ազգային բոլոր ուժերի համախմբման եւ քաղաքական բոլոր հոսանքների գործակցութեան, մանաւանդ, ի նկատի ունենալով պատահմանում տիրող պատմական պրութիւնը, յատկապէս Ռուսաստանից վերադառնալուց յետոյ:



ARAM webaram.com

# ԿՕԱԼԻՑԻԱ

Հայաստանից հասնող լուրերը յուզում էին Թիֆլիսի հայությունը: Հայաստանի Խորհուրդը եւ կառավարութիւնը նուաստացուցիչ պայմաններում հեռացել էին Թիֆլիսից եւ Ազատաֆայի ու Դիլիջանի վրայով հասել էին Երեւան: Ոչ յօրինակ վրացիների՝ Ադրբէջանի կառավարութիւնը եւ ժողովուրդը յարգանքով էին ընդունել եւ ճանապարհ դրել հայերին: Ամբողջ ճանապարհին, հայ ժողովուրդը խանդավառ ցոյցերով ողջունել էր իր Ազգային իշխանութիւնը: Օգոստոս 1-ին, Երեւանում տեղի էր ունեցել Հայաստանի Խորհուրդի պաշտօնական բացումը եւ ապա կառավարութիւնը անցել էր գործի: Կառավարութեան գլխաւոր անդամներն էին Յովհ. Քաջազնունի՝ վարչապետ, Արամ Մանուկեան՝ ներքին գործոց նախարար, Խաչատուր Կարճիկեան՝ պարենաւորման նախարար, և ուրիշներ: Իր վարչապետական ճառում, Հայաստանի Խորհրդի առջեւ, Քաջազնունին Հայաստանը ներկայացրել էր իբրեւ «անճեղ քաօս»· կառավարութիւնը խոստանում էր ձեւ տալ այդ քաօսին: Հայաստանի Խորհրդի նախագահ Աւ. Սահակեանը իր բացման ճառում յոյս էր յայտնել, որ «կեանքի երկաթէ օրէնքով» Հայաստանի ահմանները կ'ընդարձակուեն: Բայց կացութիւնը սրտակարծ կերպով ծանր էր· 11·000 քառակուսի քիլոմեթր կիսաւեր տարածութեան վրայ խռնուած էր մի միլիոնից աւելի ժողովուրդ՝ բնիկները եւ գաղթականներ: Գաղթականների մեծ մասը անպատսպար էր եւ անխնամ, խառնուած՝ հանրակացարաններում եւ բաց երկնքի տակ, ձմեռուայ ցուրտ եղանակին: Երկրում՝ ուտելիքը սպառելու վրայ էր, դեղ չկար: Վառելիք չկար: Սովը եւ համաճարակ հիւանդութիւնները թագաւորում էին: Անիշխանական տարրերը սանձարձակ հարստահարում էին ժո-



ARAM webaram.com

դավուրդը: Քաջպնունին ուզում էր Հայաստանը դարձնել ժողովըրդավար եւ օրէնքի վրայ յենուած պետութիւն. ի՛նչ օրէնքի մասին խօսք կարող էր լինել տիրող պայմաններում: Ներքին գործոց նախարար Ախամը դերապոյն ճիգ էր լարում կարգ ու կանոն հաստատելու երկրում եւ ստիպուած էր բոնի միջոցների դիմել՝ քնակչութեան ուսելիք հասցնելու եւ բնակարան ապահովելու համար: Սեփականատէրերը դժգոհում էին, եւ Օպոզիցիան՝ Հայաստանի Ժողովրդում, անդադար քննադատում էր կառավարութեան գործունէութիւնը եւ ակարացնում էր առանց այն էլ տկար իշխանութիւնը: Կառավարութեան վարկն ու հեղինակութիւնը արագ կերպով թուլանում էին ժողովրդի աչքին: Հարեւանների հետ էլ կառավարութիւնը չկարողացաւ ընդհանուր լեզու գտնել:

Թիֆլիս հասնող լուրերը յուսահատական էին Հայաստանի վիճակի մասին: Հաւանական է, որ այդ լուրերը չափազանցւում էին հակառակորդների ասէ—կոսէներով: Մի բան պարզ էր, ասկայն, Քաջպնունիի կառավարութիւնը դժուարութեան մէջ էր:

Ինձ թւում էր, որ ժամանակը հասել էր կառավարութիւնը վերակազմելու կօալիցիոն հիմունքներով: Այդ կը տար նրան աւելի հեղինակութիւն յաչս ժողովուրդի եւ արտաքին աշխարհի: Կօալիցիան հնարաւոր էր թւում այդ օրերին: Ես դնացի այցելութեան իմ հայրենակից եւ բարեկամ Մինաս Չերքեզեանի մօտ, որ դրամատան տնօրէնն էր Թիֆլիսում, հաւատարիմ գործիչ եւ չափաւոր պահպանողական տիպի դրող, որ դոզորիկ քննադատական յօդուածներ էր դրում «Լումա» ամսագրում: Մինչեւ 1905 թուականը, այսինքն մինչեւ առաջին յեղափոխութիւնը, Մինասը դաշնակցական էր, նոյնիսկ Նալբանդեան (Ռոստով—Նախիջեւանի) կենտրոնական կոմիտէի անդամ էր եղել: Յեղափոխութեան օրերին փոխան Թիֆլիսից եւ դուրս եկաւ Դաշնակցութիւնից, բայց երբէք չմիացաւ հակառակորդներին: Իր եղբօր՝ Ռուբէն Չերքեզեանի պէս մինչեւ մահ մնաց մեզ բարեկամ: Ինձ հետ էլ լաւ յարաբերութիւնների մէջ էր:

Երբ իմ դանդի վրայ Մինաս Չերքեզեանի բնակարանի դուռը բացուեց, ներսից լսուեցին ազմկոտ ձայներ: Ինչ որ կոչունք կար ներսը: Երդ ու պար եւ գուգուած ազամարդիկ ու կանայք՝ չամպանիայի բաժակները ձեռքերին: Չերքեզեանը ինձ ընդունեց գրկանքով: Երեքսով հարիւր ռոքի վրայ՝ ուրախութեան պէս մի բան արտայայտուեց դէմքին: Ապաում էր, թէ ի՛նչ կ'ասեմ: Ես յայտնեցի նրան, որ եկել եմ մի կարեւոր գործով եւ խնդրեցի ժամադրու-


ARAM webaram.com

թիւն յաջորդ օրուայ համար: Նա, կարծես ուրախացած՝ անկոչ հիւրին նշանակեց ժամադրութիւն, յաջորդ օրը առաւօտեան իր գրասենեակում: Տիկինը, որ նոյնպէս պինով էր եւ երեքում էր ոտքի վրայ, փորձեց պահել ինձ, բայց ես անմիջապէս հեռացայ: Շատ վատ էր ազդել իմ վրայ այդ քէֆն ու ուրախութիւնը՝ հայութեան կեանքի ողբերգական պայմաններում: Այդ յիշեցրեց ինձ ուսս բռնատեղծի «քէֆ՝ ժանտախտի ժամանակ» հեղինակութիւնը:



Մ. ԲԵՐԲԵՐԵԱՆ

Յաջորդ առաւօտ, նշանակուած ժամին, ես Բերբերեանի մօտ էի: Այժմ դրաստ՝ նա ուրախութեամբ ընդունեց ինձ: Ես բացատրեցի նրան իմ այցելութեան նպատակը եւ պարզեցի Հայաստանում Դաշնակցականների եւ ժողովրդականների խառն կառավարութիւն կազմելու գաղափարը: Բերբերեանի դէմքը պայծառացաւ. նա հայրենասէր եւ ազգմիտ մարդ էր, կուսակցական նեղմտութիւնից զերծ, եւ ըմբռնում էր համագործակցութեան արժէքը: Իսկոյն, առանց վերապահութեան, խոստացաւ հարցը իսկոյն անցկացնել ժողովրդական կուսակցութեան գնահատութեան մէջ: Մի քանի օրից նա յայտնեց ժողովրդական կուսակցութեան պատրաստակամութիւնը՝ մտնելու Հայաստանի կառավարութեան մէջ:

Այդ ամէնը ես հաղորդեցի Երեւան, Հ. Յ. Դ. Բիւրոյին: Շատ չանցած ստացայ հեռագիր Քալանթարից. մեկնեցէ՛ք Երեւան՝ ժողովրդական կուսակցութեան ներկայացուցիչների հետ:

Դժուար չեղաւ թուրք ներկայացուցչից յատուկ գնացքի արտօնութիւն առանալ Ալեքսանդրապոլի վրայով Երեւան անցնելու համար: Եւ Հոկտեմբերի վերջերը, մի մռայլ երեկոյ, մենք մեկնեցինք Թիֆլիսից: Ժողովրդական կուսակցութեան անդամներն էին Բաբեզոբեկեան Ընկերութեան նախագահ՝ Սամսոն Յարութիւնեա-



ARAM webaram.com

նը, ծխախոտի գործարանատէր՝ Արտաշէս Լինֆիաջեանը, Մինաս Բերբերեանը եւ լրագրող՝ Գէորգ Մելիք-Ղարադէօզեանը, բոլորը ո-րակեալ անդամներ ժողովրդական կուսակցութեան եւ յայտնի հա-սարակական գործիչներ:

Հաճելի էր նրանց ընկերակցութիւնը նաեւ այն պատճառով, որ իրենց հետ ունէին առատ ուտելիք ու խմելիք, կարծես դնում էին փիքնիքի: Ճանապարհին, բոլոր կայարաններում թուրքերի կողմից թալանուած եւ քարուքանդ էին եղած, եւ մենք նեղութիւն չքաշե-ցինք ուտելիքի տեսակէտից: Կայարաններում, թուրք պաշտօնեանե-րը քաղաքավարի էին մեզ հետ եւ ոչ մէկ դժուարութիւն յոյց չտա-լին: Ալեքսանդրապոլի կիսաւեր կայարանում միայն զարմանքով ըն-դունեցին մեզ. ի՞նչ յանդգնութիւն հայերի կողմից անցնել այս ճա-նապարհով:

Երեւան հասանք երեկոյեան դէմ: Քաղաքից եկել էին դիմա-ւորելու ընկերներ ու բարեկամներ: Քաղաքում բոլոր պանդոկները բերնէ բերան լեցուած էին: Ժողովրդականները տեղաւորուեցին ի-րենց բարեկամների տներում: Ես հիւր եղայ իմ ճեմարանական ըն-կեր եւ այն օրերին Հ. Յ. Դ. Մրգաստանի կեդրոնական կոմիտէի եւ Հայաստանի Խորհուրդի անդամ՝ Եփրեմ Սարգսեանի մօտ: Յաջորդ առաւօտ ժողովրդական պատուիրակներին ներկայացրի վարչապետ Քաջազնունիին. դեկուցում տուի իմ ճամբորդութեան մասին կոմա-ւորական Բանակի մօտ եւ Թիֆլիսում կատարած աշխատանքների չուրջ: Դրանով վերջացաւ իմ դերը. այժմ Հ. Յ. Դ. Բիւրօն եւ Քա-ջազնունին պիտի որոշէին կօալիցիայի հարցը:

Բանակցութիւնները երկար չտեւեցին: Խնդիրը հոգեբանօրէն հասունացած էր: Շուտով երկու կողմերը համաձայնութեան եկան եւ Քաջազնունիի նոր կառավարութիւնը նոյեմբեր 4-ի նիստում ներ-կայացաւ Հայաստանի Խորհրդին հետեւեալ կազմով.— Յ. Քաջազ-նունի՝ վարչապետ, Ս. Տիգրանեան՝ արտաքին գործոց նախարար, Գ. Մելիք-Ղարադէօզեան (ժող.) արտաքին գործոց նախարարի օգ-նական, Աբամ Մանուկեան՝ ներքին գործոց, գօր. Յ. Հախվերդեան (անկուս.)՝ պինուորական, Ա. Լինֆիաջեան (ժող.)՝ երեւմտահայ, Սամ. Յարութիւնեան (ժող.) արդարադատութեան, Մ. Ամատէ-եան (ժող.) հանրային կրթութեան, Լ. Ղուլեան (ժող.) պարենա-ւորման, Խ. Կարճիկեան՝ խնամատարութեան:


Պետական վերահսկիչ ընտրուեց Հայաստանի Խորհրդի կողմից Մինաս Բերբերեանը:

Նոր կառավարութիւնը եռանդով գործի անցաւ, բայց, ինչպէս

ARAM webaram.com

ատում են, կատուի վազքը մինչեւ մարդ է լինում: Երեւանի ապաժանելի կեանքը հաճելի չեկաւ Թիֆլիսի բուրժուաներին, եւ ժողովրդական նախաբարքները սկսեցին յաճախակի բացակայել Երեւանից: Ոմանք, ինչպէս Ղուլեանը, Ս. Յարութիւնեանը, հրաժարուեցին եւ նրանց տեղ նշանակուեցին նորեր: Ի վերջոյ, ինչպէս կը տեսնենք, յարմար պատրուակ գտնելով՝ ամբողջ կազմով հրաժարուեցին եւ հեռացան Հայաստանից: Լեռը ծնաւ մուկ:

Ինչպէս վերը գրել եմ, Երեւանում ես տեղաւորուեցի իմ ճեմարանական դասընկեր Եփրեմ Սարգսեանի մօտ: Եփրեմը Կոտայքի ձաւախան գիւղից էր, Երեւանի թեմական դպրոցը աւարտելուց յետոյ, եկաւ Էջմիածին եւ ինձ հետ միասին աւարտեց ճեմարանի լատինական բաժինը, 1906-ին: Ապա, մի տարի հետեւելով բարձրագոյն ուսման մայրաքաղաքում՝ ուսուցիչ հրաւիրուեց Իչխանի հիմնած Ազիամարի վարժարանում, ուր մանկակից կուսակցական կեանքին Արամի, Իչխանի եւ ուրիշների հետ: Վերադառնալով Կովկաս՝ անօրէն նշանակուեց Ալեքսանդրապոլի Ազգային դպրոցի: Աւելի վերջը ընտրուեց Մրզուսանի կենտրոնական կոմիտէի անդամ: 1917—1918 թուականներին, Մրզուսանի կենտրոնական կոմիտէի հեռաձագահ էր, Երեւանի Ազգային Խորհրդի, վերջը Հայաստանի Խորհուրդի եւ պարլամենտի անդամ: Եռանդուն եւ գործունեայ էր՝ հայ ժողովրդի չահերին նուիրուած: Իր կինը, Սիրուշը, գաղափարակից ու գործակից էր ամուսնուն, նախկին ուսուցչուհի, այժմ ընտանիքի գործերը վարող եւ հանրային գործունէութեան մասնակից: Եփրեմի բնակարանը, որքան յիշում եմ, գտնւում էր Գուբերնակի փողոցի վրայ, Ազատաֆեան (այժմ Արամեան) պողոտայի մօտերը: Ինձ ընդունեցին գրկաբաց եւ պահեցին մինչեւ Մարտ, հակառակ անտեսական եւ այլ դժուարութիւնների:




ԵՓՐԵՄ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Երեւանում, եւ պաշտօն չունէի բայց Հ. Յ. Դ. Բիւրոյի ան-



ARAM webaram.com

դամուքիւնից: Հետզհետէ իմ վրայ դրին զանազան պարտականութիւններ, ինչպէս Հայաստանի Խորհուրդի անդամութիւն եւ Խորհուրդի Գաչնակցական ֆրակցիայի ղեկավարութիւն, Մրզաստանի կենտրոնական կոմիտէի պաշտօնաթերթի խմբագրութիւն, Հայաստանի կօօպերացիայի (Հայկօպ) վարչութեան մանակցութիւն եւ պաշտօնաթերթի «Հայկօպ»ի խմբագրութիւնը եւայլն:



ՍԻՐԱՆՈՑՇ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Մանր էին կեանքի պայմանները: Երեւանը, կարծես, դատապարտուած քաղաք լինէր: Ցուրտը անտանելի էր: Հանրակացարաններից լսւում էին մահամերձ գաղթականների հառաչանքներ: Անպատրաստ գաղթականներ, ողորմելի դէմքերով, ցնցոտիների մէջ փաթաթուած, սառւերի պէս մարդ էին գալիս փողոցներում: Առաւօտներ քաղաքային սայլերը դիակներ էին հաւաքում հանրակացարաններից, փողոցներից եւ հրապարակներից: Անհաշիւ մեռնողների վրայ լացողչկար: Սարսափելի էր մանաւանդ, բծաւոր տիֆի դարձած աւերը. անհնար էր պայքարը ոչիլի դէմ: Գրեթէ ամէն օր, փողոցներում հնչում էր դինուորական նուագախումբի Շոպէնի մահերգը. նշանաւոր մեռելներ էին տանում դէպի գերեզմանատուն: 1918 թուականի վերջերը եւ 1919-ի առաջին ամիսները Թանկապին եւ անփոխարինելի կեանքեր խլեցին հայ ժողովրդից: Ցիշենք, թէկուզ ներքին գործոց նախարար Աբամի, պետական վերահսկիչ՝ Մինաս Բերբերեանի անունները, որոնք զոհուեցին իրենց պարտականութեան դիրքերի վրայ:

Բայց եւ այնպէս երկրագունտը դառնում էր իր առանցքի չուրջ: Մարդիկ ճիգ չէին խնայում դուրս բերելու երկիրը այդ ժխտական վիճակից: Սոված, ցրտահար, հազարումէկ նեղութիւնների ենթակայ՝ նրանք կատարում էին իրենց պարտականութիւնը հայրենիքի եւ ժողովուրդի հանդէպ:

Սարսափելի էր մանաւորապէս երեխաների, մանաւանդ որբերի վիճակը: Այդ օրերին մօտ 100 հազար որբեր կային Հայաստանում, որոնց մէկ մասը անպատսպար՝ մատնուած էր իր սեւ ճակա-


ARAM webaram.com

տպրին, իսկ մեծամասնութիւնը գտնւում էր որբանոցներում՝ օտար միխոնարների եւ խնամատարական նախարարութեան հոգածութեան տակ: Նախարարութիւնը հիմնել էր ջուլհականոցներ, ուր գաղթական հայ կանայք ու աղամարդիկ պատրաստում էին Հայաստանի բամբակից գործչադոյն կերպաս: Այդ կերպասով զօրքի եւ որբերի համար կարում էին հագուստներ, որոնք հագնողին բանտարկեալի երեւոյթ էին տալիս: Կառավարութիւնը հազիւ կարողանում էր անունդ հասցնել որբանոցներին:

Ցիշում եմ 1919 թուականի ծննդեան խթումի երեկոն: Այդ երեկոյ Երեւանի որբանոցների երեխաների համար պատրաստուած էր խթումի ընթրիք: Վարչապետ Քալանթարին հրաւիրուած էր, իբրեւ «պատուոյ հիւր» ներկայ գտնուելու ընթրիքին: Քալանթարին լուր ուղարկեց ինձ, որ ընկերանամ իրեն: Գնացինք:

Դիմնազիայի ընդարձակ դահլիճը վերածուած էր ճաշասրահի: Շարք շարք գասաւորուած էին, առանց սփռոցների, հասարակ սեղաններ, որոնց վրայ չարուած էին կապոյտ չիթկո բաժակներ եւ ուտելիքներ -- իւրաքանչիւր որբի համար գարիի եւ լորիի ալիւրի խառնուրդից մէկ բոմբի հաց, կապոյտ չիթկո ամաններից մէջ ինչ որ փիլաւի նման անորոշ մի կերակուր եւ կողքին միրգի նմանող մի բան:

Սրահը դեռ պարապ էր: Մեզ առաջնորդեցին վեր, «պատուոյ սեղանը», որպէսզի այնտեղից դիտենք որբերի մուտքը: Քալանթարին եւ ես էինք: Ցետոյ մեզ միացաւ բժ. Տէր-Թումասեանը, առաքելատիպ մեր ընկերը:

Սկսուեց որբերի մուտքը, առաջ փոքրերը՝ 5—6 տարեկան, յետոյ մեծերը եւ աւելի մեծերը, շարք շարք: Ամէնքը միեւնոյն տեսքը ունէին: Նրանք բոլորը՝ նիհար, ոսկրի վրայ կաշի, լուցկիի նման բարակ վիզ ու մեծ գլուխ՝ նեղս ընկած խոշոր աչքերով, անցնում էին չարքերով լուռ, անշշուկ, տրտում դէմքերով, անժպիտ, կարծես առուերներ լինէին: Անդամուկ նստում էին իրենց ցոյց տրուած տեղերը՝ սպասողական հայեացքով: Սրահը բերնէ բերան լեցուեց, բայց թուում էր, թէ պարապ էր: Մանկութիւնից զուրկ երեխաներ...

Փորձեցին խմբով «Հայր Մեր» երգել — բան դուրս չեկաւ: Կերակուրները էլ, ըստ երեւոյթին չէին դրաւում: Ծամում էին, կարծես, պարտականութիւն էին կատարում: Խթումի ճաշկերոյթ չէր — տառապանք էր սարսափելի...

Քալանթարին մէկ կտոր հաց չդրեց բերանը: Լուռ դիտում էր



ARAM webaram.com


ողանեբին: Եւ երբ սեղանների վրայի ուտելիքը վերջացաւ, մեծ որբերից մէկը դրաւոր մի ուղերձ կարդաց, որով իր ընկերների կողմից շնորհակալութիւն էր յայտնում ճաշկերոյթը սարքողներին եւ, յատկապէս, Հայաստանի սիրելի վարչապետին, որ իր ներկայութեամբ պատուել էր որբերի սեղանը:

Քաջալերանքին ոտքի ելաւ պատասխանելու համար եւ նորից յուզումից երկար չկարողացաւ արտասանել: «Սիրելի՛ երեխաներ» չկրնկեց, վերջապէս, թոյլ ձայնով ու յանկարծ, փղձկաց ջղային ցրնցումներով, սկսեց հեկեկալ ու դեռին պիտի ընկնէր, եթէ բժ. Տէր-Թոմասեանը եւ ես չբռնէինք եւ տեղը չնստեցնէինք: Գլուխը երկու ձեռների մէջ առած՝ լալիս էր անդուլ: Լալիս էին եւ որբերը իրենց ուսուցիչ—ուսուցչուհիների հետ միասին: Սգաւոր խմբում եղաւ մեղի համար...

Հայաստանի հանրապետութիւնը ստեղծուեց, երբ համաշխարհային պատերազմը իր ամենէն տագնապալի շրջանին մէջ էր: Ռուսաստանը դուրս էր եկել Դաշնակիցների շարքից, ծունկի էր եկել Գերմանիայի առջեւ, անձնատուր՝ նորին քաղաքացիական պատերազմի: «Ամրոխները խելագարուած» հողի եւ ապաստութեան ծարաւի, իրար էին յօշոտում: Օսմանեան կայսրութիւնը առիթից օգտուելով աշխատում էր իր սահմանները տարածել մինչեւ Կովկաս եւ Անդրկասպեան երկիրները, նուաճելու եւ իրեն ենթարկելու համար Կովկասն ու Անդրկասպեանը՝ բազմամիլիոն խլամ ժողովուրդներով: Հայաստանը, մի փոքրիկ կէտ էր այդ անսահման տարածութեան վրայ, կեանքի եւ մահուան պայքար էր մղում: Թուում էր, թէ փրկութիւն չկայ Հայաստանին եւ հայ ժողովրդին համար: Բայց, ահա պատահեց հրաշքը. Դեկտեմբերին, Երեւանում տեսցուեց Բադուի Ազգային Խորհուրդի հետեւեալ հեռագիրը. «Պատերազմը վերջացաւ: Դաշնակիցները յաղթեցին: Գերմանիայում յեղափոխութիւն է: Աւստրիայում բոլոր ազգերը յայտարարել են իրենց անկախութիւնը: Բելգիան, Ֆրանսիան, Ալզասը, Հոլլանդի ափերը, Սերբիան, Ռումանիան զատարկուած են: Պոլիս, Սամսոն, Տրապիզոն, Բաթում, Փոթի, Օռեսան գրաւել են անգլիացիք: Տաճիկները զատարկելու են Կովկասը, որ Դաշնակիցները գրաւում են աստիճանաբար՝ ճանաչելով տեղական կառավարութիւնները: Հաղորդում են, որ Աբաթաեան հանրապետութիւնը ունի երկու միլիոն բնակիչ, ուրեմն, գրաւել է Զեմսուտի շրջանը, որը համարում ենք բացարձակ անհրաժեշտութիւն: Պոլիան ու Հայաստանը Թուրքիայից անջատելու


ARAM webaram.com

խնդիրը որոշուած է վերջնականապէս: Հաւանական է ձեր չրջանի միացումը Թրքահայաստանին: Հայերը ճանաչում են պատերազմող կողմ եւ տեղ են տուացել Ռաղապուխեան վհհամոդովում: Նուբարը խնդրում է իր պատգամաւորութիւնն ուժեղացնել երեքական պատգամաւորներով Թուրքիայից, Կովկասից, մէկը՝ Պարսկաստանից: Նոյնը հեռագրում է Լօզանից Համօն: Անհրաժեշտ մանդատները տալով՝ չսասկցրէք պատգամաւորութեան առաքումը Բաթումի վրայով: Ժողովը կը սկսի մի քանի օրից: Մենք այս պատգամաւորների ընտրութիւնը թողնում ենք ձեզ, միայն չսասկցէք: Հեռագրեցինք Ամէն Գարոյին դնալ Փարիզ: Բաղուն թողինք անսպասելիօրէն. մօտ 40 հազար գաղթական վերադառնում են քաղաք: Վեց հազար մարտիկներ Լենքորանից երկաթուղով Երեւան փոխադրելու համար բանակցում ենք: Վանի, Ուրմիայի, Սալմաստի գաղթականների մեծ մասը՝ 8 բատալիոն՝ գնում է Համադան, Ղազուին, Զենջան: Միջոցներ քիչ ունենք: Գաղթականութիւնը պահում ենք մի կերպ. օգնում են անգլիացիք եւս: Մինչեւ դարուն մեր գաղթը դէպի Հայաստան համարում ենք վնասակար, ուստի դիմել ենք ամէն կողմ օժանդակութեան՝ Դաշնակիցներից եւ ամերիկացիներից:



Ս. ԱՐԱՐԱՏԵԱՆ

Մեր մարմիններից խնդրել ենք, որ Բաթումի վրայով հասցնեն հացահատիկ, հագուստեղէն, դեղօրայք: Դիմել ենք տեղիս դեսպանների միջոցով, որ Դաշնակիցները Հայաստանի գլխաւոր կեդրոնները պրաւեն յանձնաժողովներով. նոյնը արուած է եւ Նուբարի կողմից: Բաղուի վրայով ուղարկել ենք յատուկ մարդ: Ռուսաստանը ուղեւորուեց Էնզելի, կ'անցնի Երեւան: Բաղուի Ռորհուրդը Էնզելիի մէջ գործերը կարգադրելուց քիչ յետոյ՝ մենք եւս կը մեկնենք: Եւրոպայից խնդրում են հաղորդել ձեր կացութիւնը, փոխա-



ARAM webaram.com

*բարեբութիւնը, ռազմական եւ այլ մանրամասնութիւնները: Այսուհետ ապաստում ենք ձեր պատասխանին՝ նրանց հաղորդելու համար: Շտապեցէք»: Բազուի Ազգ. Խորհուրդի արտակարգ լիագօր՝ Սարգիս Ա-բաբաեան:*

*Կարելի՞ է երեւակայել, թէ այս հեռագիրը Հայաստանում ինչ ապաւորութիւն գործեց: Ուրախութիւնը թէ՛ կառավարութեան մէջ եւ թէ՛ ժողովրդի շրջանակներում անսահման էր: Ուրեմն, հայ ժողովուրդը պէտք է ապրէր:*

*Շուտով սոացուեցին եւ մանրամասնութիւնները, որոնք աւելի զգայացնց էին եւ խանդավառեցին Հայաստանի ժողովուրդը:*



ARAM webaram.com

# ԶԻՆԱԴԱԴԱՐ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄ

## ՀԱՅ — ՎՐԱՑԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

1918 թ. Հոկտ. 30–ին, անգլիական «Ագամեմնոն» զրահաւորի վրայ, Մուդրոսի նաւահանգստում, ծովակալ Արթուր Քոլթրոպի եւ Օսմանեան ծովային նախարար Ռէուֆ բէյի միջեւ ստորագրուեց զինադադար, որով վերջ տրուեց պատերազմին Թուրքիոյ եւ Դաշնակից պետութիւնների միջեւ:

Զինադադարի պայմաններով Թուրքիան պարտաւորւում էր անմիջապէս ղէնքերը վար դնել եւ անձնատուր լինել Դաշնակիցների կամքին: Դարպանէլն ու Վոսփորը բացուելու էին, եւ Դաշնակից նաւերը անարգել պիտի անցնէին Սեւ ծով: Նեղուցների ամրութիւնները եւ ռազմապիտական կարեւոր կէտերը զրաւելու էին Դաշնակից զօրքերը: Թուրք բանակը պինաթափ էր լինելու, Թրքական ռազմանաւերը պիտի արգելափակուէին: Գերմանացի եւ աւստրիացի պինուորական եւ քաղաքական անձինք անմիջապէս պիտի հեռանային Թուրքիայից: Դաշնակիցների հսկողութեան տակ էին առնուելու Թրքական պինարանները, ռազմամթերքի պահեստները, հեռագիրը, հաղորդակցութեան միջոցները եւ, առհասարակ, պինուորական կարեւորութիւն ունեցող բոլոր հիմնարկութիւնները: Թուրքիան պարտաւորւում էր խզել ամէն յարաբերութիւն կենտրոնական Պետութիւնների հետ:

Հայերի համար Մուդրոսի պինադադարի առանձնապէս հետաքրքրութիւն ներկայացնող կէտերը հետեւեալներն էին.



ARAM webaram.com

Յօդ· 4·— Դաշնակից բոլոր ռազմագերիները, բոլոր արգելափակուած եւ գերի առնուած հայերը պէտք է հաւաքուէին Կ. Պոլիս եւ այնտեղ առանց պայմանի յանձնուէին Դաշնակիցներին:

Յօդ· 5·— Անմիջական վինաթափում թրքական բանակի՝ բացառութեամբ այն զօրամասերի, որոնք անհրաժեշտ էին սահմանների ապահովութեան եւ ներքին անդորրութեան պահպանութեան համար· (այդ զօրքերի քանակն ու տեղաւորուելու վայրը պիտի որոշուէին հետագային Դաշնակիցների կողմից՝ այս մասին թուրք հրամանատարութեան հետ բանակցելուց յետոյ):

Յօդ· 7·— Այն դէպքում, երբ առեղծուէր Դաշնակիցների ապահովութեանը սպառնացող գրութիւն, որոնք իրաւունք պիտի ունենային գրաւելու որոշ ռազմական կէտեր:

Յօդ· 11·— Թուրք զօրքերի, Հիւսիս-արեւմտեան Պարսկաստանից անյապաղ նահանջառեբապմեան սահմանի յետեւը քաշուելու հրամանը արդէն արուած էր եւ սկսուած էր գործադրուել:

Անդրկովկասի մի մասի պարպումը թուրք զօրքերից արդէն կարգադրուած էր: Անդրկովկասի այն մասը, որ թուրք զօրքերը չէին դատարկել, պէտք է պարպուէր, եթէ Դաշնակիցները կացութիւնը ուսումնասիրելուց յետոյ պահանջէին:

Յօդ· 15·— Դաշնակից պատերազմող պէտք է կարգուէին հսկելու համար բոլոր երկաթուղիները, մէջը լինելով նաեւ Անդրկովկասեան երկաթուղու այն մասը, որ այժմ գտնուում էր Թուրքիայի հսկողութեան տակ... Բաթումի գրաւումը մտնում էր այս յօդուածի մէջ: Թուրքիան չպիտի դիմադրէր Բաթումի գրաւման՝ Դաշնակիցների կողմից:

Յօդ· 24·— Հայաստանի վեց վիլայէթներում անկարգութիւններ լինելու պարագային, Դաշնակիցները իրենց էին վերապահում այս վիլայէթների որոշ մասերը գրաւելու իրաւունքը:

Այսպիսով, Դաշնակիցները Թուրքիայի հետ պատերազմը վերջացնելու վայրկեանին չէին մոռանում նաեւ յատուկ պայմաններ դնել հայերի ապահովութեան եւ Հայաստանի պաշտպանութեան համար: Արգելափակուած եւ գերի պահուած հայերը, Դաշնակից գերիներին համահաւասար, պիտի յանձնուէին Դաշնակիցներին: Անդրկովկասը, ուրեմն, եւ Հայաստանի գրաւուած մասը պիտի դատարկուէին թուրք զօրքերից· Հայաստանի վեց վիլայէթների անդորրութիւնն ապահովելու համար զօրք մտցնելու իրաւունք էր վերապահում...

Մի՛ւս կողմից, առանձնապէս ուշադրութիւն էր դարձուում բա-



ARAM webaram.com

դու—Բաթում ճանապարհի վրայ, որը մի կողմից դուռ էր բաց անում դէպի Ազէբռնեան թերակղզու նաւթը, այլ մարզկային արեւնից աւելի թանկագին համարուած չիճուկը, միւս կողմից՝ կապ էր ստեղծում Անդրկովկասի եւ Պարսկաստանի միջեւ, որոնք կամ արդէն բռնուած էին անգլիական զօրամասերով, կամ բռնելու վրայ էին: Թուրքիայի պարտութեամբ ամբողջ Մերձաւոր Արեւելքը ընկնում էր անգլիական բանակների իշխանութեան տակ:

Զինադադարը նախատեսում էր եւ յատուկ կէտեր թուրք բանակի զինաթափման եւ ռազմամթերքի զրաւման մասին: Սակայն այս կէտերը թէ՛ զինադադարի առաջին չրջանին եւ թէ՛ յետոյ նկատի չառնուեցին պահանջուած լրջութեամբ: Մինչդեռ Գերմանիայի համար մարաջախտ Ֆօշը զրակոնական միջոցներ հնարեց եւ ամենակարճ ժամանակում փաստօրէն ոչնչացրեց գերման զինուած բանակը, ո՛չ ծովակալ Քոլթրոպը, ո՛չ էլ նրանից յետոյ եկող անգլիացի հրամանատարները պէտք չեւսան կտրուկ միջոցներ ձեռք առնելու՝ ոչընչացնելու համար թուրք բանակը, որը հակառակ զինադադարի պայմանների՝ չարունակեց գոյութիւն ունենալ երկրի գանազան մասերում: Այս գանցառութիւնից ապագայում առաջացան չատ ծանրակչիռ հետեւանքներ:

Զինադադարի հետեւանքով, հետզհետէ, Դաշնակիցները զրաւեցին Պոլիսը, Ադալիան, Կիլիկիան, Սուրիան, Անդրկովկասը: Ադալիան ընկաւ իտալական զինուորական զրաւման տակ: Անգլօ-Ֆրանսական համաձայնութեամբ Սուրիան եւ Կիլիկիան զրաւեցին Ֆրանսայի ազդեցութեան ներքեւ, եւ 1919 թ. Նոյեմբերի 26ին, այդ երկրների Գերագոյն Կոմիսար նշանակուեց զօր. Գուրօն: Պոլիսը զրաւուեց Դաշնակիցների խառն զօրամասերով եւ զրուեց միջազգային իշխանութեան տակ: Նեղուցները յանձնուեցին միջազգային Յանձնախումբի հսկողութեանը: Անդրկովկասը զրաւուեց անգլիական զօրամասերով, թէեւ Դաշնակից երեք Պետութիւններն էլ այնտեղ ունէին իրենց Բարձր Կոմիսարները: Հայաստանում երեւացին Դաշնակից բանակի ներկայացուցիչները:

Հայ ժողովուրդի յաւուհետութիւնը աւելի բարձրացաւ երբ խօսքերին սկսեց հետեւել գործը. Նոյեմբերի կէսերին Թուրքիոյ ներկայացուցիչը Երեւանում՝ Մհմմէտ Ալի փաշան, պաշտօնապէս յայտնեց Հայաստանի կառավարութեան, որ Թուրքերը հեռանում են իրենց զրաւած վայրերից եւ ո՛չ մի ասկեսր չի մնայ Բրեստ—Լիտովսկի դաշնագրի սահմաններում գտնուող հողամասի վրայ: Հայե-



ARAM webaram.com

րը կարող էին պրաւել այդ հողամասերը, ինչպէս եւ Ախալքալաքի չրջանը, որ պիտի պարպէին Թուրքերը:

Բնորոշ է, որ նոյն ձեւի յայտարարութիւն արաւ եւ վրաց կառավարութեան Թիֆլիսի Բրքական ներկայացուցիչը՝ խորհուրդ տալով մխաժամանակ վրացիներին՝ պրաւել Ախալքալաքի գաւառը: Խաղը պարզ էր. հայերը եւ վրացիները մխաժամանակ ուղելով պրաւել Ախալքալաքը՝ անխուսափելի կերպով պիտի ընդհարուէին, ինչ որ մտնում էր Թուրքերի քաղաքական հաշիւների մէջ: Հայերը, պրաղուած լինելով ներքին աւելի ծանրակչիռ հարցերով՝ ուժ չունէին Ախալքալաքը պրաւելու համար: Վրացիները, օգտուելով առիթից՝ փութացին զօրք մտցնել եւ իրենց իշխանութիւնը տարածել Ախալքալաքի չրջանի վրայ, ինչ որ վրդովում առաջ բերեց հայկական չրջանակներում: Քաջազնունին, յանուն Հայաստանի կառավարութեան վճռական բողոք ներկայացրեց Թիֆլիսում, բայց վրացիները կարեւորութիւն չտուին: Ընդհակառակն, նրանք իրենց ուժերը ուղղեցին դէպի Լոռիի չրջանը, որ նոյնպէս հայաբնակ էր եւ հայերին էր պատկանում: Հայաստանը պրաղուած էր Թուրքերի պարպած հողերը վերապրաւելու եւ պաղթականութիւնը վերազարձնելու ու տեղաւորելու գործով, եւ Քաջազնունիի կառավարութիւնը բաւականանում էր միայն բողոքի նոտաներ ուղարկելով վրաց կառավարութեան: Այս վերջինը, սակայն, Հայաստանի հողերի գրաւումը հետապնդում էր Ախալքալաքի եւ Լոռիի չրջանում:

Վրացիների այս տարօրինակ ու վրդովեցուցիչ քայլերը արտասովոր յուզում առաջ բերին Հայաստանում: Բողոքի խիստ գրութիւններ փոխանակուեցին Հայաստանի եւ Վրաստանի կառավարութիւնների միջեւ: Վրաստանը պղում էր իրեն ամէն տեսակէտից աւելի նպաստաւոր դիրքի մէջ, աւելի ուժեղ եւ ականջ չէր դնում հայերի բողոքներին: Տեղի ունեցան Հայաստանի Խորհուրդի գաղտնի նիստեր. բոլոր կուսակցութիւնները միաձայն դատապարտեցին վրացիների հակահայ յարձակողական ընթացքը: Ի վերջոյ, Դեկտեմբեր 13-ին, պայքեց պատերազմ Հայաստանի եւ Վրաստանի միջեւ:

Նորածին երկու պետութիւնների համար ամօթալի եւ վարկաբեկիչ էր այս պատերազմը, որ կարող էր ծանր հետեւանքներ ունենալ նրանց ապագայի համար, բայց եւ անխուսափելի էր ստեղծուած պայմաններում եւ անհրաժեշտ՝ դուրս հանելու համար Հայաստանը խեղդիչ մթնոլորտից, որի մէջ ընկել էր նա վրացիների եսասէր եւ յարձակողական քաղաքականութեան հետեւանքով: Պատերազմի ընթացքին, նախորդ դէպքերի եւ հետեւանքների մասին



ARAM webaram.com

եւ մանրամասն պրել եմ(*): Այստեղ կարող եմ ասել, որ Հայաստանը բոլորովին անպատրաստ էր նման պատերազմի համար, բայց ժողովուրդը եւ բանակը այնքան վրդովուած էին վրացիների անիրաւ վերաբերումից, որ կռուեցին արտակարգ քաջութեամբ: Ընդհակառակն, վրացիները որ ամէն տեսակէտից գերազանց վիճակի մէջ էին, ունէին առատ ռազմամթերք, ուտելիք, հաղորդակցութեան միջոցներ, պատերազմի համար անհրաժեշտ մեքենայական սարքաւորում, Գերմանիոյ աջակցութիւնը իրենց թիկունքում, զարմանալի կերպով ապահով դուրս եկան: Հայ սրեխաւոր բանակը, Դրօյի ընդհանուր հրամանատարութեան տակ արագ եւ վճռական հարուածներով առաջացաւ Լոռիում, ջարդեց զօրավար Ցուլուկիձէի սալն-վազոնը: Վրացի զօրավարը փախաւ դիչերուայ հագուստով: Վրաց գինուորների մի մասը գերի ընկաւ, միւսները փախան: Հայերի ձեռքն անցաւ առատ ռազմամթերք, երկաթուղային վագոններ ու վայրաշարժեր, հագուստ եւ ուտելիք: Այնուհետեւ պատերազմը շարունակուեց նոյն թափով: Հայերը յառաջանում էին անարգել եւ մէկը միւսի յետեւից գրաւում էին Լոռիի գիւղերը: Հայկական բանակին աջակցում էր եւ տեղական բնակչութիւնը, որ առելութեամբ էր լեցուած վրացի բռնապրաւիչների դէմ: Վրաց կառավարութիւնը արտակարգ միջոցների էր գիմում՝ կանգնեցնելու համար հայերի գրոհը, նորանոր զօրամասեր էր ուղարկում Ճակատ, թիկունքում խիստ միջոցներ էր ձեռք առնում, հայերի դէմ, օդնքից դուրս էր հանել Թիֆլիսի հայ բնակչութիւնը: Հարիւրաւոր հայեր ձերբակալում եւ աքսորում էր Քութայիսի չրջանը: Բայց այդ ամէնը անդօր էր կասեցնելու հայերի յառաջացումը: Դրօյի բանակը, անվանելի ուժով, առաջ էր շարժւում Թիֆլիսի ուղղութեամբ եւ, անկասկած, կը գրաւէր Վրաստանի մայրաքաղաքը եթէ արտաքին միջամտութիւն տեղի չունենար: Հայերը արդէն հասել էին Սադախլուի չրջանը, ուր համախմբուած էին վրացիների գլխաւոր ուժերը՝ զօրավար Մազնիեւի ընդհանուր հրամանատարութեան ներքեւ եւ կողմերը պատրաստւում էին վճռական ճակատամարտի, որ պիտի որոչէր պատերազմի ելքը: Դեկտ. 25-ին, Թիֆլիսում տեղի ունեցաւ համաձայնութիւն անգլիական ու ֆրանսական ներկայացուցիչների եւ վրաց կառավարութեան միջեւ՝ դադարեցնելու հայ—վրացական պատերազմը: Այդ համաձայնութեամբ Լոռին պիտի յայտարարուէր չէզոք գօտի՝ Դաշ-

(*). Տե՛ս, իմ «Հայաստանի Հանրապետութիւն» հատորի հայ — վրացական սահմանագիծը, Գլուխ ԺՐ., էջ՝ 205:



ARAM webaram.com

նակիցների հակակշռին տակ: Լոռիի վերջնական ճակատագիրը պիտի որոշուէր հաշտութեան խորհրդաժողովում: Նոյն համաձայնութեամբ, Ախալքալաքի գաւառը անցնում էր վրացիներին, որի դէմ բողոքեց Հայաստանի ներկայացուցիչը:

Դաշնակիցների միջամտութեամբ վերջ գտաւ հայ-վրացական պատերազմը: Այնուհետեւ տեղի ունեցան բանակցութիւններ Հայաստանի եւ Վրաստանի միջեւ, Հայաստանի առջեւ բացուեց Բաթում տանող երկաթուղին եւ առեղծուեցին աւելի բնականոն յարաբերութիւններ Վրացիների եւ Հայերի միջեւ:

Թէ որքան տարբեր էր հայերի եւ վրացիների փոխադարձ վերաբերումը պատերազմի ընթացքին, ցոյց է տալիս հետեւեալ փաստը: Վրաստանում, ինչպէս վերը յիշեցինք, հայերը ենթարկուեցին հալածանքի ու բռնութեան վրաց կառավարութեան կողմից: Թիֆլիսում, հարիւրաւոր հայեր ձերբակալուեցին եւ ուղարկուեցին Քութայիսի նահանգը, «իբրեւ ռազմագերիներ»: Երեւանում, ընդհակառակն, մի քանի հազարի հասնող վրացի գերիները, պահւում էին գօրանոցներում գրեթէ հայ զինուորների ապրուստի պայմաններում. ստանում էին կանոնաւոր ուտելիք եւ վայելում էին իշխանութիւնների հոգածութիւնը: Ես ներկայ եղայ վրացի գերի սպաների մի խնջոյքի, որ Երեւանի պարեսը, ինչ որ մի առիթով, սարքել էր նրանց համար: Սեղանների վրայ կար առատ ուտելիք եւ խմիչք: Վրացիները կարծես պատերազմական գերիներ չէին, ուրախ եւ աղմկոտ ճառեր էին խօսում, խմում էին հայ եւ վրացի ժողովրդների բարեկամութեան, Հայաստանի կառավարութեան եւ հայ բանակի հրամանատար՝ Դրոյի կենացը: Երգում էին վրացերէն երգեր: Ո՛չ մի թշնամութիւն կամ առերեսութիւն չէր նկատւում նրանց կողմից: Իսկ Վրաստանում՝ հայերը թշնամանքի եւ հալածանքի առարկայ էին, հայ մտաւորականները Քութայիսի անտառներում փայտ էին կտրում իբրեւ ռազմագերիներ:

Հայ-վրացական պատերազմին զուգադիպեց եւ խաղաղութեան վեհաժողովին պատուիրակութիւն ուղարկելու հարցը: Պոլսից նոր էին վերադարձել Ահարոնեանը, Խատիսեանը, Պապաջանեանը, ոնք, Բաթումի դաշնագրից յետոյ, գնացել էին բանակցելու իթթիհատական կառավարութեան հետ: Զինադադարից յետոյ, էնվէր-Թալէաթ-ճէմալ քլիքը եւ միւս ջարդարարները փախան Պոլսից: Հայկական պատուիրակութիւնը այլեւս անելիք չունէր եւ վերադարձաւ Երեւան: Հայաստանի կառավարութիւնը օրակարգի վրայ ունէր Խաղաղութեան վեհաժողովին պատգամաւորներ ուղարկելու



ARAM webaram.com

հարցը: Ահարոնեանը յայտնապէս ցոյց էր տալիս, որ ինքը թեկնածու է այդ առաքելութեան:

Պէտք է ասել, որ երիտասարդութիւնը, մանաւանդ Թիֆլիսի «Աշխատաւոր» թերթի շուրջ խմբուած մտաւորականութիւնը դոհ չէր Ահարոնեանի ընթացքից: Կարելի է ասել, նրան չէին սիրում: Ահարոնեանը persona grata չէր եւ բարձր մտաւորականութեան շրջանակներում: Բայց իբրեւ տաղանդաւոր գրող, սիրճախօս հռետոր եւ ուշիմ մտքի տէր, մանաւանդ իբրեւ հայ յեղափոխութեան երգիչ, սիրուած էր ժողովրդի կողմից: Արդար լինելու համար, պէտք է ասել, որ Ահարոնեանից աւելի յարմարութիւններ ունեցող անձ այն ժամանակ քիչ կար Հայաստանում:

Հայաստանի Ժողհուրդը մի քանի դռնփակ նիստերում, որոնց մասնակցում էին միայն հայ պատգամաւորները, քննեց եւ հաստատեց Հայաստանին վերաբերող այն բոլոր հարցերը, որոնք պիտի լուծուէին Խաղաղութեան վեհաժողովում: Քիչ վերջը, նոյն հարցերը պիտի քննուէին եւ Փարիզում, Պօղոս Նուպարի կողմից հրաւիրուած Ազգային ժողովում:


Ամէնից առաջ, Հայաստանի սահմանների հարցը, ի՞նչ էինք հասկանում մենք Հայաստան ասելով, ի՞նչ հողամասեր պէտք է մտնէին նրա սահմանների մէջ: Հայաստանի Ժողհրդում երեւան եկան մի քանի տեսակէտներ, առանց կուսակցական խտրութեան: Վարչապետ Քաջազնունին, իր ներածական ճառին մէջ, արծարծեց այն միտքը, որ հայերը Խաղաղութեան վեհաժողովում պէտք է բանականանան Թուսահայաստանով եւ Թրքահայաստանից՝ Բայազէտ, Ալաշկերտ, Բասէն հողամասերով, ելքով՝ դէպի Սեւ ծով, Ռիզէում: Այդքանը բաւական էր, գոհացնելու համար հայ ժողովուրդի ազգային պահանջները՝ կենսունակ պետութիւն ունենալու համար:

Այս ծրագիրը խիստ համեստ էր եւ անհամապատասխան հայ ժողովրդի ժամանակի տրամադրութիւններին: Ընդհակառակն, քիչ չէին պատգամաւորներ, որ պահանջում էին ծովից—ծով Հայաստան, Ալեքսանդրեւից ու Մերսինից սկսած մինչեւ Տրապիզոն: Մանաւանդ ժողովրդականները պնդում էին կիլիկիայի վրայ, ուր հարուստ բամբակ եւ առեւտրական լայն հեռանկար կային: Դաշնակցականների մէջ էլ քիչ չէին ծովից—ծով Հայաստան ջատագովողներ:

Հայաստանի Ժողհրդի մեծ մասը, սակայն, աւելի համեստ էր, բաւականանում էր Վասպուրականի, Տարօնի, Բարձր Հայքի չրջաններով եւ ելքով դէպի Սեւ ծով՝ Տրապիզոնում: Ի վերջոյ ընդունուեց մի բանաձեւ՝ յիշեալ հողամասերը եւ ելքով դէպի մէկ



ARAM webaram.com



ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ

ծով: Այս նշանակում էր, որ Հայաստանի Խորհուրդը աչք չունէր Կիլիկիայի վրայ:

Ուրեմն, Ռուսահայաստանի եւ Թրքահայաստանի միացումով՝ պէտք է առեղծուէր Հայաստանի պետութիւն: Պետութիւնը պէտք է լինէր ժողովրդավար հանրապետութիւն:

Բուռն վէճերի առիթ տուեց եւ Խաղաղութեան վեհաժողովին ուղարկուելիք պատուիրակութեան հարցը· պէտք էր առանձին պատուիրակութի՞ւն ուղարկել, թէ օգտուել Փարիզում գոյութիւն ունեցող Պօղոս Նուպարի պատուիրակութիւնից: Եւ եթէ առանձին պատուիրակութիւն պիտի ուղարկուէր, ի՞նչ պիտի լինէր նրա յարաբերութիւնը Պ. Նուպարի պատուիրակութեան հետ: Այս հարցում էլ ժողովրդականների կարծիքը բաժանուում էր Դաշնակցականներից· նրանք պնդում էին, որ պէտք է հաշուի առնել Պ. Նուպարի պատ-



ARAM webaram.com

ուիրակութեան գոյութիւնը, իրրեւ Թրքահայաստանի ներկայացուցչութիւն, որ արդէն որոշ իրաւական դիրք ունէր Դաշնակիցների աչքին: Պ. Նուպարը, Փարիզում, արդէն յայտարարել էր երկու հատուածների միութիւնը եւ իր պատուիրակութեան ներկայացուցչութիւնը Միացեալ Հայաստանի կողմից, բայց այդ մասին երեւանում դեռ տեղեակ չէին: Ընդհակառակն, Ահարոնեան եւ ուրիշներ բուռն կերպով մերժում էին Պ. Նուպարի թեկնածութիւնը՝ առարկելով, թէ Հայաստանի հանրապետութիւնը պէտք է ունենայ առանձին պատուիրակութիւն, թէ երկու Հայաստանների միութեան յայտարարութիւնը վաղաժամ է, թէ ի՞նչ կարող է պատահել վաղը, կարելի չէ նախատեսել եւն.: Հայաստանի Խորհուրդի մեծամասնութիւնը եւս այն կարծիքի էր, որ պէտք էր ուղարկել առանձին պատուիրակութիւն՝ Խաղաղութեան վեհաժողովին: Ապագային, երբ պէտք տեսնուէր միացնել երկու պատուիրակութիւնները, Միացեալ պատուիրակութեան նախագահ պէտք է լինէր Պօղոս Նուպարը:


Մանր տարակարծութիւնների եւ վէճերի առարկայ եղաւ նաեւ պատուիրակութեան կազմի հարցը: Որոշուեց երեք հոգինոց պատուիրակութիւն՝ կօալիցիոն հիմունքներով, ինչպէս կառավարութիւնը կօալիցիոն էր: Թեկնածուներ առաջարկուեցին Ահարոնեանը, Ա. Խատիսեանը, Պապաջանեանը, Հ. Օհանջանեանը, Ստ. Մամիկոնեանը եւ ուրիշներ: Բուռն տարակարծութիւններ եւ վէճեր տեղի ունեցան Ահարոնեանի անձին շուրջ, մանաւանդ երիտասարդութիւնը չէր վստահում նրան: Ընդդիմադիրներն էլ թեթեւ սրտով չէին համաձայնում Ահարոնեանի թեկնածութեան, բայց, ի վերջոյ, դարձաւ ընդհանուր համաձայնութիւն, եւ Ահարոնեանը ընտրուեց պատուիրակութեան նախագահ: Երկրորդ եւ երրորդ պատուիրակներ ընտրուեցին Մ. Պապաջանեանը եւ բժ. Հ. Օհանջանեանը: Վերջինս, արդէն Եւրոպայում էր:

Ուրեմն, Հայաստանի հանրապետութեան Պատուիրակութիւնը պիտի մեկնէր Փարիզ, ներկայացնելու համար Հայաստանի պետութիւնը Խաղաղութեան վեհաժողովում: Իր հիմնական առաջադրութիւններն էին «մէկ ծովային ելքով», հայկական պետութեան de jure ճանաչումը եւ Հայաստանի չահերի պաշտպանութիւնը՝ Դաշնակիցների առջեւ: Ի հարկին, Ահարոնեանը պէտք է դիմէր պատուիրակութեան նախագահութիւնը Պ. Նուպարին, եթէ պէտք դտնուէր երկու պատուիրակութեան միացման:

Այս որոշ յանձնառութեամբ Պատուիրակութիւնը մեկնեց Փարիզ: Հետագայ դէպքերը ցոյց տուին, որ չուկայի հաշիւը տան հաշ-



ARAM webaram.com



ԱՒԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ



ARAM webaram.com

ուին չի համապատասխանում: Պ. Նուպարի մարդիկ հաշտ աչքով չնայեցին Հայաստանի հանրապետութեան պատուիրակութեան վրայ, վերջինս էլ ջերմ զգացումներ չունէր Պ. Նուպարի աղայական պատուիրակութեան հանդէպ: Ահարոնեանի պատուիրակութեան եւրեւումը Փարիզում դուդաղիպեց Պ. Նուպարի հրաւիրած Ազգ. համագումարին, որին Ահարոնեանը մասնակցեց խորհրդակցական ձայնով: Ազգային համագումարը մշակեց Խաղաղութեան Վեհաժողովին ներկայացնելիք նոր պայմաններ, ծովից-ծով Հայաստան ծրագրով եւ Ահարոնեանը ստիպուած եղաւ ընդունել այդ ծրագիրը, հակառակ Հայաստանի Կորհուրդի որոշման: Ծովից-ծով Հայաստան երկու պատուիրակութիւնների ստորագրութեամբ յուշագիր ներկայացուեց Խաղաղութեան Վեհաժողովին, և այնուհետեւ, դժբախտաբար, հաշտ չընթացաւ երկու պատուիրակութիւնների գործակցութիւնը: Տարբեր էին նրանց դեկավարների հետապնդած գաղափարները, մանաւանդ նրանց անձնական վարասիրութիւնները:



ARAM webaram.com

# ԼՈՅՍԵՐ ԵՒ ՅՈՅՍԵՐ

Աբտաւոլոր ձմեռ եղաւ 1918 Նոյեմբեր — 1919 Փետրուար ամիսներին: Ցուրտ: Բուք ու բորան: Անտանելի սառնամանիք:

Հայաստանը իսկական մարմով «անձեւ քաոս» էր: Իշխանութիւնը դեռ անուանական էր: Կառավարութիւնը զերադոյն ճիգ էր թափում կարգ հաստատելու երկրում եւ ժողովուրդը պարենաւորելու: Հայաստանի Մորհրդում օպոզիցիան անասելոր կրքով քննադատում էր կառավարութեան գործերը: Մանաւանդ ծանր եւ յաճախ անարդար հարուածներուի առարկայ էր դառնում ներքին գործոց նախարար՝ Ադամ Մանուկեանը: Ընդհանուր առմամբ չինարար չէր այդ քննադատութիւնը: Օպոզիցիան դեռ չէր հաշտուել Հայաստանի անկախութեան հետ: Այդ քննադատութիւնից օգտուում էին հակապետական տարրերը, այսպէս կոչուած մաուզերիստները, որոնք բռնանում էին եւ հարստահարում անմեղ մարդկանց: Քաղաքացիական քաոսի յատուկ երեւոյթներ, որոնք Հայաստանի Հանրապետութեան առաջին շրջանում, օտար չէին եւ մեր երկրի համար:

Նոյեմբեր 14–ին, օրը ցերեկով, իր գրասենեակում աշխատելիս, սպանուեց Մնամատարական նախարար Յաչատուր Կարճիկեանը: Սպանիչը՝ իր կուսակցական ընկեր Եղոր Տէր–Մինասեանն էր, որ անձնական ո՛չ մէկ խնդիր չունէր Կարճիկեանի հետ: Ընդհակառակն, բարեկամ էին: Եղորը դժգոհ էր Կարճիկեանից, նրա Սէյմում ունեցած գործունէութեան համար: Վերջը պարզուեց, Եղորի մօտից եկած թղթից, որ նա պիտի սպաներ եւ մի շարք ուրիշ մարդկանց, ի միջի այլոց եւ վրացի Զխենկելին:

Կարճիկեանի սպանութիւնը ցնցեց Երեւանի հասարակութիւնը: Կնոջ եւ զաւակներին Թոշակ նշանակուեց: Կարճիկեանի սպանու-


ARAM webaram.com

թիւնը մեծ հարուած էր հայկական նորածին պետականութեան։ Նրա տեղը բաց մնաց Հայաստանի զօրժիչների մէջ։

Յունուար 11–ին, բժաւոր ախֆիչ վախճանուեց պետական վերահսկիչ Մինաս Բերբերեանը, որ նոյնպէս ծանր կորուստ էր։ Մ. Բերբերեանը Նոր–Նախիջեւանցի էր, եղբայրը՝ նշանաւոր հանրային գործիչ Ռուբէն Բերբերեանի, բարձրագոյն ուսման ու գրական հակումների տէր։ Նրա ջանքերով էր, ինչպէս տեսանք, որ համագործակցութիւն հաստատուեց Դաշնակցական ու ժողովրդական կուսակցութիւնների միջեւ։

Յունուար 21–ին, ծանր հիւանդութիւնից յետոյ մահացաւ Ներքին գործոց նախարար Հայաստանի անկախութեան իրական հիմնադիրը՝ Ադամ Մանուկեանը։ Նրա մահը բացառիկ կորուստ էր Հայաստանի եւ հայ ժողովրդի համար։

Ցիշում եմ, Դրոյի բնակարանում նստած էինք ճաշի։ Յանկարծ, դրսի դրան զանգը հնչեց, եւ Դրոյի կինը՝ Աբիգեիլը ներս բերաւ սարսափահար աչքերով մի երիտասարդ։

— Ադամը մեռաւ, ասաց նա։

Դրոյի ձեռքից վար ընկաւ ապուրի դդալը։ Առանց մի խօսք արտասանելու՝ նա դուրս թռաւ սենեակից։

Ես էլ չտապեցի Ադամի բնակարանը։ Տան առջեւ, պլուխները բաց, սխուր կանգնած էին ինձ ծանօթ մարդիկ։ Ներսը, արցունքը աչքերին, լալիս էր վարչապետ Յ. Քաջազնունին։ Սպաւոր բազմութիւնը նստած էր անշշուկ։ Կողքի ննջասենեակում անխռով պառկած էր Ա. Մանուկեանը՝ բոլոր հաշիւները կարած երկրի հետ։ Ադամի կինը, սպաւոր եւ արցունքոտ աչքերով, ելեմուտ էր անում սենեակներում։

Ադամի յուղարկաւորութիւնը կատարուեց համապետական սուգով։ Մանաւանդ, ցնցուած էին վանեցիները, որոնց հարազատ հոգատարն ու առաջնորդն էր նա։ Ծնունդով զարեհաղցի, Ադամը գարձել էր հարազատ վանեցի։

Առաջ եմ բերում իր թաղման նկարագրութիւնը «Աշխատանք» շաբաթաթերթի Ադամին նուիրուած բացառիկ թուից.

«Անմիջապէս Դաշնակցութեան բարձրագոյն, տեղական եւ Ամերիկահայ մարմինները յայտարարեցին յատուկ մահազդները։

Նոյն օրը ժամը 6–ին այդ յայտարութիւններու համաձայն տեղի ունեցաւ ամբիծք հանդուցեալի բնակարանը, ուր ներկայ էին կուսակցական բոլոր մարմինները, ամբողջական կազմով, նախարարներն ու կառավարութեան անդամները։



ARAM webaram.com

Նոյն երեկոյեան ժամը 7–ին «Աչխատանք»ի խմբագրատան մէջ տեղի ունեցաւ Արեւմտահայ Դաշնակցական մարմիններու ներկայացուցչական ժողովը, որը որոշեց՝

Ա.— Պահպնել վասպուրականի Դաշնակցութեան, «Աչխատանք» թերթի, ինչպէս եւ նաեւ «Վասպուրականի Հայ Կանանց Միութեան» կողմէ:

Բ.— «Վասպուրականի Հայ Կանանց Միութեան» յանձնարարել, որ թաղման համար պատրաստէ սուգի նշաններ վասպուրականի դաշնակցականներու համար:

Գ.— Արամի յիշատակին իբրեւ սպասպահ հրատարակել «Աչխատանք»ի բացառիկ թիւ:

Դ.— Թաղման օրը Արեւմտահայ Դաշնակցութեան կողմէ ուղնեննալ երկու խօսողներ Գր. Բուլկարացի եւ Օ. Միխիթարեան:

Ե.— Թաղման օրը դպրոցի առջեւէն տանել վասպուրականի Դաշնակցութեան դրօշակը:

Ցունուար 30–ի Հինդշաբթի երեկոյեան ժամը 7ուկէսին պարլամենտի դաշնակցական ֆրակցիայի սենեակի մէջ դումարուեցաւ դաշնակցական բոլոր մարմիններու ժողովը ուր որոշուեցաւ՝

Ա.— Արամի թաղումը կատարել Շաբաթ օր, առաւօտեան ժամը 11–ին, նոր գերեզմանատուն, Դաշնակցութեան պանթէոնը:

Բ.— Պահպնել դաշնակցական մարմիններու կողմէ:

Գ.— Դաշնակցութեան դրօշակը մէկ շաբաթ կախուած թողնել Դաշնակցութեան տան վրայ:

Դ.— Հրատարակել «Զանգ»ի բացառիկ համար:

Ե.— Հիմնել Արամի անուան ֆօնտ:

Այս առթիւ ժողովը տեղեկացաւ կարդադրիչ կոմիտէի կազմի մասին, որ ընտրուած էր նախապէս մինիսար Յատիսեանի կողմէ:


Փետր. 2–ին տեղի ունեցաւ յուղարկաւորութիւնը եւ թաղումը:

Ամբողջ եկեղեցական դասը առաջնորդ Յորէն եպիսկոպոսի նախագահութեամբ կը կատարէր պատարագի խորհուրդը Ս. Պօղոս — Պետրոս եկեղեցիին մէջ:

Արամի դագաղը շրջապատուած ցինկով զրուած էր եկեղեցւոյ կեդրոնը, ծածկուած բազմաթիւ պսակներով. հազարաւոր ժողովուրդը եկած էր վերջին յարգանքը տալու Արամին:

Պատարագի խորհուրդէն ետք սրտառուչ դամբանական մը խօսեցաւ պատարագիչ Յորէն եպիսկոպոսը, ի վեր հանելով Արամի ժողովրդական մեծութիւնը ու գերը, զոր ունեցաւ ան մեր ազատագրութեան գործին մէջ:

ARAM webaram.com



ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ



ARAM webaram.com

Այնուհետեւ դադարը իր սիրելի վանեցիներու ուսերուն վրայ դուրս բերուեցաւ եկեղեցիէն հետեւեալ կարգով — Թափօրի առջեւէն կ՚երթար ձիաւոր մխիթարեան դունդը, որմէ յետոյ ձեռներու վրայ կը տարուէր դադարի կոփարիչը, ապա Դաշնակցութեան դրօշակները, Վատպուրականի Հայ Կանանց Միութեան պլակատը՝ նուիրուած Միութեան հիմնադիր Արամին, որմէ ետք շրջայ կազմած Միութեան անդամուհիները եւ Արեւմտահայ Օրիորդաց եւ աշակերտներու խմբակը, ապա եկեղեցական դասը Խոբէն եպիսկ.ի գլխաւորութեամբ, որմէ ետք Արամի դադարը պսակներով շրջապատուած եւ մինչեւ դերեզմանատունը բացառապէս վանեցիներու ուսերուն վրայ, իսկ ամենէն վերջ կառավարական օթոմոպիլ մը ծածկուած ամբողջովին ուերով եւ բազմաթիւ պսակներով: Եւ այնուհետեւ հոգեպարար ժողովուրդ:

Թափօրը այդ կարգով հասաւ Դաշնակցութեան տան առջեւ, ուր Արեւելեան Բիւրոյի կողմէ ընկ. Նիկոլ Ազբալեանը խօսեց հոյակապ ճառ մը, բնորոշելով Արամի ամբողջ էութիւնն ու դերը մեր պատմութեան մէջ:

Արեւմտահայ դաշնակցական մարմիններու կողմէ խօսեց ընկ. Օննիկ Մխիթարեանը, ի վեր հանելով Արամի Մոլախաւական դերը Հայ—Իսրայէլի համար: Վարուժանէն արտասանեց Վէսպերը, յոյժ տալով մխաժամանակ Արամի դերը երկրի մէջ: Այնուհետեւ խօսեց նոր սերունդի կողմէ Մելիք Դալալեանը, իսկ պարլամենտի առջեւ խօսեցին՝ մինիստր Յատախեանը կառավարութեան կողմէ, որ մատնանշեց Արամի հսկայ դերը կառավարութեան կազմակերպութեան մէջ, Հայաստանի Կ. Կոմիտէի կողմէն՝ Հայկ Սարգիսեանը, իսկ որբերու կողմէ՝ Ռատանիկը: Գերեզմանատան մէջ, թաղումէն առաջ, խօսեց վաբչապետ Քալոստնունին, վերլուծելով կեանքի ու մահուան եւ մարդու մահէն ետք հոգու անմահութեան պատանիքը:

Թնդանօթներու որոտին մէջ գերեզման իջեցուցին Արամը Դաշնակցութեան պանթէոնին մէջ կարճիկեանին տուընթեր, ու հրաշակեր ժողովուրդը հրաժեշտ տուաւ Արամի թաղամ գերեզմանին: («Աշխատանք»ի թղթակից՝ ձօնուած Արամի յիշատակին, 12 Փետր. 1919, Երեւան):

Դադարը գերեզմանատուն տանելիս, Հ. Յ. Դաշնակցութեան ակումբի դիմաց, անհաշիւ բազմութեան առջեւ, Նիկոլ Ազբալեանը խօսեց անդիմադրելի մի դամբանական, որի նմանը ես չեմ լսել ոչ մի տեղ: Այդ դամբանականի, դժբախտաբար, աղօտ ամփոփումը առաջ եմ բերում նոյն «Աշխատանք»ից:

ARAM webaram.com

«Հայ ժողովուրդ,

Հ. Ց. Դաշնակցութեան Բիւրոյի կողմէ յանձնարարուած է ինձի, հետեւելով ընդունուած սովորութեան, խօսք ասել Հ. Ց. Դաշնակցութեան ամենակարկառուն դէմքի — Արամի մասին:

Կշռելով բոլոր այն խօսքերը, որ ես պիտի ըսեմ, ես կը յայտնեմ, որ մենք այսօր պիտի թաղենք մեծ մարդը, զոր հայ ժողովուրդը տուած է մեծ պատերազմի ընթացքին: Ի՞նչ է մեծ մարդը: Մեծ մարդը այն է, որ դիտէ ըմբռնել ժամանակի հարցը եւ որո՞նք էին այս վերջին չրջանի այն մեծ հարցերը, որ համայն հայ ժողովրդին կը պատկանէին — հայ ժողովուրդի պաշտպանութեան եւ ազատութեան հարցերն էին անոնք:

Թէ՛ Վանը եւ թէ Երեւանը վկայ են, որ Արամը այն մարդն էր, որ ուղիղ վճռեց եւ ազատելով լուծեց այդ երկու խնդիրները:

Վանը բոլորի յիշողութեան մէջն է, հոն, Արամը հանդիսացաւ հայու հերոսական ոգին, վերկելով անոր ռազմական պատիւը:

Երեւանը վկայ էր անոր հզօր ուժին, որ կար եւ կ'ապրէր անոր մէջ, որ կազմակերպեց դիմադրութեան ուժը եւ այդ դիմադրութեան չնորհիւ կարողացաւ հիմք դնել Հայաստանի Հանրապետութեան, հայ ժողովրդի ազատագրութեան:

Մեծ խնդիրներ կը պատրաստուին տակաւ առ տակաւ, ճկուն խելքով եւ համբերատար ոգիով, ան ունէր կազմակերպչական անօրինակ եւ անսովոր կարողութիւն, որուն վկաներն են Վանն ու Երեւանը:

Արամը ընդունակ էր իր պայծառ միտքը օգտագործել եւ դիտէր շատ կերպով, յախուռն բոլոր կենսունակ ուժերը համախմբել մեծ նպատակի չուրջը: Ճանկարծակի կերպով կը լուսափայլէր անոր մէջ լայն-յանդուգն ծրագիրը եւ դէմ կը հանէր թշնամու կազմակերպուած կամքին եւ այն տեղ, այդ թշնամու հնազանդ ու կարգապահ մեծ ուժերը չկարողացան դիմադրել իր ուժերուն:

Արամի գործը կարող ենք նկատել Դաշնակցական անհատի մը ծառայութիւն հայ ժողովրդին եւ Դաշնակցութեան ծառայութիւն հայ ժողովրդին: Այդ գործը ոչ միայն Դաշնակցութեան պատմութեան գործն է այլ հայոց վերջին պատմութեան գործը, եւ հոն ան կ'արձանանայ իր մեծագոյն դէմքով:

Ըմբռնած էր ան ու ազատասէրը, փոքր ուժերով իր ազատութիւնը պաշտպանող, յանդուգն եւ յաջող եւ իր մեծագոյն գործերը Վանի ու Երեւանի մէջ պատկուեր են յաջող:

Մենք կը թաղենք մեծ հերոսի, ժողովրդական հերոսի, մշտա-



ARAM webaram.com

պատրաստ անձնուիրութիւն եւ ո՞վ է հերոսը երէկ ոչ ան, որ ունի հոգիի բարձր կոչումը, նոյնքան բարձր ամբոխէն, որքան լեռներու հսկողը: Լեռներու հովին ու բարձրութեան չեն հասնիր ճահճուտի ցեխը, անախորժ բոյրը, չաւերը եղան, որոնք ցանկացան ցեխ շպրտել այդ բարձրութեան, որ կ'իյնար իրենց՝ նեռոդներուն վրայ:

Պէտք է հայ ժողովուրդը զգայ եւ պարծենայ այդ բարձրութեամբ, իսկ երէկ ան այնքան անզգայ ու ստոբնաքարշ կը մնայ, ապա ուրեմն անով կը պարծենան ուրիշները — յետնորդները: Վաղը կու գայ պատմութիւնը այս անստուեր հերոսի եւ այն տեղ մարդիկ կ'երլան, որոնք նորէն կ'անմահանան իրենց գործերով, ինչպէս Նապոլեոնի Յիսուսը մահնող Յուդան եւ Սոկրատը սպաննող մահնիչները, կը մնայ այդպիսիներու յիշատակը, սակայն սեւ մուրով օծուած:

Երբ գիշերը գայ, մտէք ձեր հոգիի սենեակը եւ խօսեցէք ձեր խղճի հետ եւ ըսէք, արդեօք աշխատե՞ր էք հայ ժողովրդի համար, ինչպէս Արամը, եղե՞ր էք այնքան անձնազոհ, որքան Արամը, տուե՞ր էք ձեր ամբողջ կեանքը հայ ժողովրդին, ինչպէս Արամը...:

Զեզ կը գիմեմ Դաշնակցականներ, ան կը հանդիսանար այն գերագոյն խորհրդանիշը, որուն կը պատկանէր ան, փշէ պսակով զարդարուած է Դաշնակցութեան գլուխը եւ իր հերոսներու արիւնով թրջուած է անոր ճակատը:

Կուսակցական ընկերներ այս մեծ հանդուցեալին, ջերմօրէն պահպանեցէք անոր յիշատակը, պահեցէք անոր անեղծ ոգին, անոր ոգին ուրիշ բան չէ, երէկ ոչ անձնուիրութիւն ժողովրդական չահերու, եւ հանգիստ եղէք այն բոլոր դաւադրութիւններէ ու պարսաւի առաջ, որոնք երբեք չեն կարող կասեցնել մեր կուսակցութեան ընթացքը, որ վճռեր է ժողովուրդը տանել դէպի լուսապայծառ ապագան:

Դո՛ւն, հա՛յ ժողովուրդ, հազարամեայ նահատակ, դուն նոյնպէս փշէ պսակ ունիս ճակատիդ, դուն նոյնպէս չարախօսուած, բամբասուած, բայց եւ այնպէս դուն ալ ստոր նման կը հաւատաս, որ պէտք է յաղթանակէ ճշմարտութիւնը:

Իսկ նոր սերունդը այս մարդու կեանքին մէջ կը գտնէ ամենագաղտնիարարակիչ դասը, որու համար ան կը տօրմի բարձրանալ վեր, խայտանալ դէպի մոքի բարձունքը հայ ժողովրդի հաւատարիմ ծառայութեան ու անձնուիրութեան համար, որովհետեւ մեզ ուրիշ բան չի մնար ընելու, այլ՝ ապրեցնել հայ ժողովուրդը»:

Արամը թաղուեց պերեզմանոցականը, երկաթուղու կայարանի ճանապարհի վրայ, Հ. Յ. Դաշնակցութեան Պանթէոնում: Այժմ,



ARAM webaram.com

այդ պանթէոնը դոյութիւն չունի. բոլշեւիկները մեռելներին իսկ չեն խնայել եւ հոգմացրիւ են արել: Ո՛չ ոք գիտէ, թէ ի՞նչ եղան Մեծ Հայի ճախինները:

Մի քանի անուններ միայն յիշեցի դաժան հնձուորի դերանդիի զոհերից: Անհաչիւ են բծաւոր սիֆի եւ համաճարակ այլ հիւանդութիւնների զոհերը: Պատմութիւնը արձանագրել է քչերի անունները:

Մահը իր ճամբով, կեանքը իր ճամբով: Հակառակ նմանը չունեցող դժուարութիւնների, հայ ժողովուրդը, առանց յուսահատուելու, շարունակում էր իր աւերակ երկրի վերաշինութիւնը: Թուրքերի քաշուելով՝ հետզհետէ իրենց տեղերը վերադարձան Ղամարլուի, Սուրմալուի, Կողբի, Ալեքսանդրապոլի չրջանների գաղթական հայերը: Սկսեցին նորոգել իրենց աւերակ տները, կենդանացնել իրենց խոպանացած արտերն ու այգիները: Հայաստանում երեւացին օտար պետութիւնների ներկայացուցիչները, բոցավառուեց հայ ժողովրդի սրտում ապագայի յոյսը:

Ես յիշում եմ, Յունուարի սկզբին, մի ճաշկերոյթ բժ. Պաչ. Յարութիւնեանի տանը: Երեւանում, անուն ունեցող եւ յարգուած տուն էր. շատ համակրելի մայր, երկու որդիներ՝ բժիշկը եւ փոքր եղբայրը, համալսարանասարտ իրաւարան, բժիշկի կինը՝ պատմաբան Լէոյի աղջիկը, որոնցից իւրաքանչիւրը գործօն մասնակցութիւն ունէր համապատասխան հանրային կազմակերպութիւնների մէջ: Ընտանիքը ապրում էր համերաշխ ու սիրով եւ յարգանք էր վայելում ժողովրդի կողմից:

Ճաշկերոյթին հրաւիրուած էին դրսից եկած «զարիբները», Քալաշնունի, Ազրալեան, որքան յիշում եմ, Սիրական Տիգրանեան, Սահակ Թորոսեան եւ ուրիշներ: Ներկայ էին նաեւ երեւանցիներ, ինչպէս Սարգիս Օհանջանեանը (Ֆարհատ) եւ այլ ականաւոր դաշնակցական դէմքեր:

Ընթրիքը, ժամանակի համար, ճոխ էր եւ հաճելի: Տիկ. Յարութիւնեանը եւ համակրելի հարսը պատրաստել էին կերակուրներ, որոնց անունն էր միայն մնացել Երեւանում: Ընթրիքը անցաւ քաղցր մթնոլորտում, բայց աւելի հետաքրքրական էր ընթրիքին յաջորդող զրոյցը: Հաճոյքով յիշում եմ մանրամասնութիւնները:

Քալաշնունին նետեց առաջին քարը: Նա խօսքը բացեց Փարիզ մեկնած պատուիրակութեան մասին եւ կասկածով արտայայտուեց նրա գործունէութեան վերաբերմամբ: Քալաշնունին չատ չէր սիրում Ահարոնեանին. նրան համարում էր պոռոտախօս: Ընդհակառակն, պատուիրակութեան հետ մեծ յոյսեր էր կապել Ն. Ազրալեանը: Նա



ARAM webaram.com

յիշեցրեց Ապպային Բիւրոյում արտասանած իր մէկ ճառը. վեց ամիս չանցած, ասել էր նա, մենք նամակ կը առանանք Էրզրումից, հայկական նամակագրոշմներով:

— Այն ժամանակ դուք ծիծաղեցիք իմ վրայ, ասաց նա, բայց այսօր իրականութիւն է իմ մարգարէութիւնը. հայկական դրոշմներով նամակներ ենք ուղարկում Երեւանից: Հայոց ազատան պարզ ու յստակ է: Մենք դաշնակից ենք մեծ դաշնակիցներին, որոնք, անկասկած, կը հաւուցանեն մեզ մեր թափած արեան համար:

Քաջադնունին համամիտ չէր Աղբալեանին. ապրելը վարձատրւում են ոչ թէ իրենց թափած արեան համար, այլ թէ ի՞նչ իրական ուժ են ներկայացնում եւ որքա՞ն համապատասխան են մեծ ապրելի չահերին:

Քաջադնունին, առհասարակ, բնաւորութեամբ աւելի յոռետես մարդ էր. երեւոյթները դիտում էր իրապաշտ ակնոցներով: Աղբալեանը, ընդհակառակն, լաւատես էր ու հաւատուր. նրա համար մի Գլադստոնի, մի Գլեմանսոյի, մի Լոյդ Ճորճի խօսք՝ իրական արժէքներ էին: Հանրային աշխատանքի տեսակէտից այս երկու բնաւորութիւնն էլ անհրաժեշտ է եւ օգտակար:

Չեմ ուզում երկարել, բայց Յարութիւնեան ընտանիքի այդ ճաշկերոյթը երկար մնաց իմ յիշողութեան մէջ՝ չերմ համակրանքով:

Գրեթէ նոյն ժամանակ ինձ հետ պատահեց մի դէպք, որ մինչեւ այժմ էլ յիշելիս ատրուռ է ապրում վրաս: Մինչեւ մահ էլ երեւի չպիտի մոռանամ:

Ցունուարի կէսերն էր: Այն դիշեր ես բնաւ չկարողացայ քնել: Աչքերս բաց՝ չուռ էի գալիս անկողնում, մի կողքից միւսը: Հազար ու մի մտքեր պաշարել էին ուղեղս եւ թոյլ չէին տալիս քնելու: Վազ առաւօտ, լուսաբացին, ես չոտպով հաղնուեցի եւ դուրս եկայ փողոց: Անասելի ցուրտ էր: Ձոր ձիւնը խշխշում էր ոտքերիս տակ: Անցայ դէպի Ազատաֆեան պողոտան, իջայ դէպի քաղաքային պարտէզը: Պարտէզը ամայի էր: Այնքան ցուրտ էր, որ ծառերի վրայ ագռաւ չէր մնացել: Անցայ դէպի Անգլիական Այգին, քաղաքապետարանի կողքին: Դռները փակ էին: Շարժում չկար ե՛ւ Հայկօպի չէնքում: Դարձայ ռուսական եկեղեցու շուրջ, որ սեւ, մռայլ տեսքով կանգնած էր հրապարակի վրայ: Կողքի փողոցից դէմս դուրս եկաւ, ուրուականի նման, ցնցոտիների մէջ վաթսթռւած մի կին՝ ականջին խոշոր օղերով, երեսին գեղեցիկ դէմքով, եւ կատաղութեամբ, անէծքով ու հայհոյանքով, յարձակուեց վրաս:



ARAM webaram.com

— Ես քեզ կը ճանչնամ, մարդասպա՛ն: Դո՛ւ սպանեցիր իմ զաւակը: Անիծեա՛լ ըլլաս:

Ես մարդասպան չէի եւ ո՛չ ոքին չէի սպանել, բայց այդ կնոջ խօսքերը ցնցեցին ինձ:

— Ոճրագո՛րծ, ատպա՛կ, չարունակեց կինը, եւ թեւիցս բռնելով քարշ տուեց մօտակայ բակը, ուր կիսաւեր անակի առջեւ, բաց երկնքի տակ, ինկած էր 7—8 տարեկան մանչուկի դիակը: Կաշի եւ ոսկոր, բայց աչքերը յառած էին ինձ:

— Դո՛ւ սպանեցիր, ես քեզ կը ճանչնամ, պոռում էր երեսիս Թչուառ մայրը, մարդասպա՛ն, անիծեա՛լ ըլլաս:

Ո՞վ էր այս կինը: Ի՞նչ էր ուզում ինձանից:

— Դու ո՞րտեղից ես ճանաչում ինձ, հարցրի եա՝ մի բան ասած լինելու համար:

— Ե՞ս... դու Ղարաքիլիսէի բանտարկեալը չէ՞ս, չո՛ւն:

Ես յիշեցի Ղարաքիլիսէի իմ բանտարկութիւնը Սանասարեանի ուսուցիչ Գէորգ Աբուլեանի հետ: Ամէն օր բանտարկեալներին դուրս էին բերում բակը՝ օդ առնելու համար: Հարեւան տանիքից մեզ դիտում էին հայ կանայք եւ երեխաներ: Աբուլեանը իմ ուշադրութիւնս հրաւիրեց մի կնոջ վրայ, որ մեկուսի կանգնած՝ աչքերը յառած էր մեզ վրայ: Բարձրահասակ, չքեղ կազմուածքով եւ դեղեցիկ դէմքով երիտասարդ կին էր: Ականջին մեծ օղերը գնչուի տեսք էին տալիս նրան: Անշարժ դիտում էր մեզ: Կարեկցո՞ւմ էր արդեօք, ցա՞ւ էր զգում մեզ համար — ոչինչ չէր արտայայտւում նրա դէմքի վրայ:

Ահա, այս կինն էր Թչուառ երեխայի մայրը, այժմ ողորմելի, խելակորոյս մի արարած:

Վերջը իմացայ, որ Ղարաքիլիսայում Թուրքերը սպանել էին նրա ամուսնուն: Զգիտեմ ի՛նչ հնարքով նրան յաջողուել էր անցնել Կովկաս, Կարսի շրջանը: Կարսի անկումից յետոյ նա փախել, եկել էր Երեւան՝ հետը բերելով իր միակուսակ զաւակը: Երեւանում անասելի Թչուառութիւններին էր ենթարկուել եւ ահա, կորցրել էր որդին եւ չեմ հասկանում, ինչ զուգորդութեամբ, այժմ ինձ էր համարում նրա մահուան պատճառը:

Այս դէպքը ցնցող տպաւորութիւն գործեց իմ վրայ: Երկար ժամանակ չէի կարողանում մոռանալ: Նման բաներ սակաւ չէին պատահում այն օրերին...

Ինչպէս վերեւ յիշեցի, Հայաստանում սկսեցին երեւալ օտար պետութեանց ներկայացուցիչներ: Վրաստան, Ադրբէյջան եւ Պարսկաստան արդէն ունէին դիւանագիտական ներկայացուցիչներ Երե-



ARAM webaram.com

ւանում: Շուտով, Ֆրանսայի կողմից, եկաւ կապիտան Պուատէպաբը: Իրօք պինուորական չէր նա, այլ ճիզուիտ հոդեւորական: Ծօսում էր հայերէն: «Մորեն բերի ձեզի», ասաց նա, Հայաստանի Ժողովրդի առջեւ արտասանած իր ճառում՝ խլելով ունկնդիրների ծափերը եւ ծիծաղը: Հետը, մի վագոն ցորեն էր բերել սովահար Հայաստանին: Երեւի, այդ ցորենի փոխարէն, քիչ վերջը Ֆրանսացիք իւրացրին Հայաստանի բամպակը Բաթումում:

Եկաւ անգլիացի Գրէյսը, իրրեւ ներկայացուցիչ անգլիական ազգի: Նա ոչ «սորեն» էր բերել, ոչ ուրիշ բան, այլ միայն յոյս: Յոյս՝ որի՞ համար. թշուառութեան մէջ տապլտկող հայ ժողովուրդի՞, թէ բրիտանական կայսրութեան:

Եկաւ եւ իտալական ներկայացուցիչը. բարձրահասակ, գեղեցիկ տեսքով, համակրելի մի երիտասարդ, կարծեմ կոմս, որ պետական գործերով չատ չէր հետաքրքրւում եւ ամբողջ ժամանակը տրամադրում էր զուարճութիւններին:

Եկան եւ ուրիշներ. Երեւանը սկսել էր հետաքրքրական դառնալ եւ արտաքին աշխարհի համար: Գալիս էին և՛ գործի մարդիկ:

Բայց, ի հարկէ, Հայաստանով հետաքրքրուած էին աւելի՝ մեծ պետութիւնները, քաղաքական տեսակէտից: Նրանց կովկասեան ներկայացուցիչների կենտրոնը Թիֆլիսն էր, վրաստանում, ուր նստած էր բրիտանական ներկայացուցիչը, որին ենթակայ էր ամբողջ կովկասը: Միւս պետութիւնները՝ Ֆրանսա, Իտալիա եւայլն, ունէին իրենց ներկայացուցիչները: Հայաստանը դառնում էր Թիֆլիսի ներկայացուցիչների իրաւասութեան սահմանում: Մերթ ընդ մերթ, Թիֆլիսից Երեւան էին գալիս պետութիւնների ներկայացուցիչները, բայց այստեղ երկար չէին մնում. Թիֆլիսի կեանքը աւելի տանելի էր եւ աւելի հրապուրիչ: Երբեմն, արտասահմանից ուղղակի Երեւան էին գալիս առանձին անհատ ներկայացուցիչներ կամ պատուիրակութիւններ՝ որոշ առաքելութեամբ: Հայերի մէջ մեծ հետաքրքրութիւն առաջ բերեց օրերով Հարբորդի առաքելութիւնը, որ Ամերիկայի նախագահ՝ Ուիլսընը ուղարկել էր, ուսումնասիրելու Հայաստանի պայմանները, Հայաստանի հոգատարութիւնը ընդունելու նպատակով: Ամէնքը ուզում էին եւ հաւատում, որ Հայաստանի մանդատը պիտի ընդունէ Ամերիկան:

Ջօրաւոր Հարբորդը իր բազմանդամ արշաւախումբով, այցելեց Թուրքիա, եղաւ Մուսթաֆա Քեմալի մօտ Սվազում, ապա էրզրումի վրայով եկաւ Հայաստան: Կառավարութիւնը եւ ժողովուրդը նրան ցնծութեամբ ընդունեցին: Կառավարութիւնը տուեց սրան ա-



ARAM webaram.com

մէն աջակցութիւն՝ առոյգ ուժեկութիւններ հաւաքելու համար: Ա-
ռաքելութեան կազմին մէջ կային եւ հայեր, ինչպէս կապիտան Ա-
չառուրեանը, որոնք Թարգմանի եւ մինջնորդի դեր էին կատարում
ամերիկացիների եւ հայերի միջեւ: Հարցորդը վերապարձաւ նե-
թերի ափոդին բեռ տանելով հետը եւ դիմուցում տուեց իր կատարած
աշխատանքի մասին: Հայաստանի մանդատը նա չահաւէտ չէր նկա-
տում Ամերիկայի համար տնտեսական եւ ռազմական տեսակէտից: Ըն-
դունելու դէպքում՝ Ամերիկան ստիպուած պիտի լինէր 50 հազար
զինուոր պահել Հայաստանում եւ տարուէ տարի մեծ գումարներ
ծախսել՝ առանց փոխարժէքը տանելու: Ամերիկեան մանդատը,
ինչպէս յայտնի է, ջուրն ընկաւ, ինչպէս Ամերիկայի ընդհանուր
քաղաքականութիւնը՝ Հայաստանի վերաբերմամբ: Ուիլսընը մեծ
հայասէր էր, բայց մեծ, աննկարելի սխալներ գործեց Հայաստանի նը-
կատմամբ:

Ցիշում եմ եւ բրիտանական ներկայացուցչի առաջին այցելու-
թիւնը Հայաստան: Հայերը ժպտուն էին, որ Բրիտանիոյ ներկայա-
ցուցիչը նստել է Թիֆլիսում եւ առանձնապէս չի հետաքրքրուում Հա-
յաստանով. արտաքին գործերից դատելով, կարելի էր մտածել,
որ անգլիացիք կովկասում, ասելի հետաքրքրուած էին Ադրբէյջանով
եւ Վրաստանով:

Հայերին վերաբերուող հարցերը, առհասարակ, անգլիացի-
ների ուշադրութեան չէին արժանանում: Ցատկանշական էր մի
դէպք, կատարուած Ցուլիս ամսին, որ խիստ վրդովում առաջ բերեց
հայերի մէջ:

Ցուլիսի սկիզբը, անգլիացիք պրաւել էին Էրզրումը: Զինա-
թափ էին արել քաղաքը եւ սկսել էին դուրս տանել պէնքն ու ռազ-
մամթերքը: Զէնքի արտահանութիւնը սկսուել էր Ցուլիսի վերջերին:
Երբ դուրս եկաւ առաջին գնացքը՝ բեռնաւորուած մէկ միլիոն փամ-
փուշտներով, 15 թնդանօթներով ու 500 հրացաններով, Էրզրումից
ոչ հեռու՝ նրա վրայ յարձակուեց մի մեծ զինուած խումբ Էրզրումի
թուրք զինուորներից, զինաթափ արաւ անգլիացի պահակներին եւ
գնացքը յետ դարձրեց Էրզրում: Անգլիացիք ոչ մի միջոցի չդիմեցին
պէնքերը հետ առնելու կամ խռովարար թուրք զինուորներին պատժե-
լու համար:

Դրանից առաջ, անգլիացիները ստիպեցին յետաձգել հայերի
մուտքը Կարս եւ իրենք զրաւեցին Կարսի ռազմապահեստներում դիզ-
ուած ռազմամթերքը՝ թնդանօթներ, հրացաններ եւ փամփուշտ, եւ
ուղարկեցին ռուս կամաւորական Բանակին:



ARAM webaram.com

Պէտք է աւելացնեմ եւ այն փաստը, որ անգլիացիք հայերից պահանջեցին եւ ստորագրութիւն առին, որ ապագայում, Հայաստանի անկախութեան ճանաչումից յետոյ, Հայաստանի նաւահանգիստները, Տրապիզոն եւայլն, պէտք է դրուէին անգլիական հակակշռի տակ: Հայերին՝ բարեհամակամ չէին թուում անգլիացիների այս եւ նման արարքները:

Բրիտանական ներկայացուցիչի ժամանումը մեծ ոգեւորութիւն առաջ բերեց երեւանում: Ընդունելութիւնը փառաւոր էր: Քաղաքի Պարէտը՝ նախկին դերասան, այժմ դինուորական Շահխաթունին, հիանալի կերպով բեմադրել էր ընդունելութիւնը: Հայաստանի մայրաքաղաքի պարէտ Շահխաթունին վարպետ բեմադրիչ էր: Նա, օրինակ, աքանչելի կերպով կազմակերպել էր եղիդինների պատուբակութեան ընդունելութիւնը երեւանում: Այդ մասին ես դրել եմ «Կեանքը Ուղիներով»ի Գ. Հատորում:

Հետաքրքրական դէմք էր Շահխաթունին: Հայ բեմի աչքի ընկնող դերասան էր, հետագայ համր չարժապատկերի տաղանդաւոր դործիչ, անզուգական խօսակից եւ նշանաւոր ստախօս: Ամենէն անհաւատալի բաները նա կարող էր ներկայացնել իբրեւ ճշմարտութիւն: Երբ ալպոմի մէջ, Փարիզում, ես դրել էի:

Դերասան էիր, պարէտ օրպակաս,
Ստոտասան էիր, ստոտասան էլ կաս:

Այդ նրան մեծ հաճոյք էր պատճառել:

Այժմ, ապիտակ ձիու վրայ նստած, հպարտ տեսքով, Շահխաթունին երեւանի կայարանից բրիտանական ներկայացուցիչին առաջնորդեց դէպի իրեն յատկացուած «բնակարան»ը: Եւ մի քանի ժամ վերջը, քաղաքում տարածուեցին զարմանալի լուրեր բրիտանական նախարարի այցելութեան մասին:

Յաջորդ երեկոյեան, բրիտանական ներկայացուցչի իջած բնակարանին առջեւ տեղի ունեցաւ ժողովրդական մեծ ցոյց: Ահագին մի բազմութիւն, ամերիկացիների մօտ ծառայող վանեցի պաշտօնեաների առաջնորդութեամբ, խռնուեց բարձր չէնքի առջեւ՝ զանազան դրութիւններով ձեռքերում բռնած յուցատախտակներ: Ծափ ու աղմուկով, յուցատարները պահանջում էին, որ անգլիացին դուրս գայ եւ խօսի իրենց: Վերեւ, պատշգամբի վրայ, երեւաց տաք հագնուած, բայց գլխարաց անգլիացին: Նա մի պահ դիտեց վարի բազմութիւնը եւ աջ ձեռքը պարզելով օդում՝ մեղմ ձայնով սկսեց խօսել անգլերէն:

ARAM webaram.com

Ամէն անգամ, որ արտասանում էր Հայաստան անունը, վարը խելահեղ ծափահարում էին: Ի՞նչ էր ուզում ասել նա, վարը դժուար էր հասկացում: Եւ այդ կարեւոր էլ չէր· բաւական էր, որ խօսողը Անգլիոյ ներկայացուցիչն էր եւ համակրական լեզու էր բանեցնում:

Ես վարը կանգնած էի մայթի վրայ: Մօտս կեցած էր բուրդէ շալի մէջ փաթաթուած մի կին և եռանդով, կարելի է ասել ոգեւորութեամբ ծափահարում էր: Երեւոյթից դատելով՝ նա անգլիացու ամէն խօսքը հասկանում էր եւ ուրախ ու խանդավառ էր լսածներից: Ես հարցրի նրան.

— Շատ ուրախ ես երեւում... այդպէս եռանդով ծափահարում ես: Ի՞նչ է ասում այդ մարդը:

Կինը, յանկարծակիի եկած, զարմանքով երես նայեց:

— Ես պիտե՞մ ինչ է ասում, պատասխանեց նա, յայտնապէս երեւանցիի չեչոով· մեզ ասացին, որ ծափահարենք, մենք էլ ծափահարում ենք:

Ամբոխային հոգեբանութիւնը այսպէս է առեղծւում, «մեզ ասացին որ ծափահարենք, մենք էլ ծափահարում ենք»:

Այնուհետեւ Հայաստան այցելեցին շատ անուանի մարդիկ, որոնց ընդունելութիւնը Երեւանում վառուռոր կերպով կազմակերպուում էր Շահխաթունեի կողմից եւ որոնց ժամանումը նոր յոյս եւ խանդավառութիւն էր առաջ բերում ժողովրդի մէջ: Բայց ամէնից մեծ յոյս ու ոգեւորութիւն առաջացրեց ամերիկացի պնդապետ Հասկելի այցելութիւնը: Նա պալիս էր, իրրեւ Դաշնակիցների Գերագոյն Խորհրդի ներկայացուցիչ, այդպէս էր գրուած եւ նրա առջեւ–վագոնի վրայ, բայց վերջը պարզուեց, որ նա Հուվերի յանձնախումբի պատուիրակ էր: Նա իրեն վերապրում էր բազմաթիւ առաքելութիւններ Հայաստանում, բայց իրօք, դէմառդեմ պարենաւորման հարցերով սահմանափակուած էին նրա իրաւունքները:

Բաթումից մինչեւ Երեւան, նա ընդունուեց արտակարգ խանդավառութեամբ հայ ժողովրդի կողմից: Ղարաքիլիսա կայարանում, բացառիկ պատիւներով դիմաւորեցին նրան Հայաստանի կառավարութեան անդամները, զօրքը եւ ժողովուրդը: Հասկելը Երեւան հասաւ 1919 թ· Օգոստոս 21–ին, առաւօտեան: Երեւանի պարէտը կազմակերպել էր արտակարգ ընդունելութիւն: Ժողովուրդը ցնծութեան մէջ էր· Ամերիկայի լիազօր ներկայացուցիչն էր գալիս· վերջապէս պիտի լուծուէր հայկական հարցը:


Յաջորդ օր, Օգոստ· 22–ին, Հասկելը իր պաշտօնը ներկայա-



ARAM webaram.com

ցրեց խորհրդարանին: Եւ այնուհետեւ սկսուեցին երթուղարձեր Եր-
եւանէ, Թիֆլիսի եւ Բաղուի միջեւ:(*)

Ես, կլանուած պետական նախարարութեան եւ այլ աշխատանքներով, չատ չէի հետեւում Հասկելի գործունէութեան: Յաւով դիտում էի միայն, որ Հասկելի գործունէութեան շուրջ աղմուկ չատ էր բարձրանում, բայց առացուած արդիւնքը աննշան էր: Յիշեմ միայն, կառավարութեան տուած մէկ պարահանդէսը՝ ի պատիւ Հասկելի: Նոր Գիմնազիայի շէնքը, որ յետոյ դարձաւ Կուլտուրայի Տուն, զարդարուած էր արտակարգ չքեղութեամբ: Ընդարձակ, գեղեցիկ սրահը բերնէ բերան լեցուած էր հրաւիրեալներով: Հայաստանի խորհրդարանը, կառավարութիւնը, ազարատեան Նազարբէկեանը իր օդնականների հետ, ներկայ էին ամբողջ կազմով: Գնդապետ Հասկելը իր կնոջ եւ զօրձակիցների հետ ընդհանուր ուրախութեան առարկայ էր: Համեստ, բայց ճաշակով ուտելիք եւ խմելիք էր ներկայացուած: Գրական-գեղարուեստական բաժնից յետոյ, սկսուեցին պարերը, զինուորական նուագախումբի մասնակցութեամբ: Պարերը բացեց վարչապետ Խատիսեանը ներկաների խանդավառ ծափահարութեան տակ: Պարեց եւ ինքը՝ Գնդ. Հասկելը: Հասկելի խնդրանքով, ներկաների աղմկոտ ծափերի մէջ, պարեց Շահխաթունին, մի կովկասեան պար՝ դաշոյնը ձեռքին: Չեմ կարող ասել դիտմամբ թէ պատահաբար՝ դաշոյնով վիրաւորեց իր ոտքը, եւ Հասկելը կինն ու երեւանցի տիկիններըը խնամեցին նրան: Այնու-



ՀԱՍԿԵԼ

(*) Մանրամասնութիւնները տե՛ս, իմ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ» հատորում, էջ 302-ից սկսած:

ARAM webaram.com

հետեւ, երկար ժամանակ, Շահխաթունին քայլում էր կաղալով, որ, կարծեմ, ասելի ցոյց էր, իր վրայ դրաւելու համար հանրային ուշադրութիւնը:

Ուզում եմ արձանագրել եւ Հասկելի մեկնումի առթիւ կառավարութեան տուած ճաշկերոյթը: Հասկելը իր չքախումբով մեկնեց Հայաստանից, բոլշեւիկեան Մայիսեան խռովութիւնների նախօրեակին, պատրուակելով իր ներկայութեան անհրաժեշտութիւնը Փարիզում, բայց, կարծեմ, քիթը վառ հոտ էր առել. Հայաստանում մնալը այլեւս ապահով չէր:

Հրաժեշտի ճաշկերոյթում, խօսեց մի ընդարձակ ճառ՝ ներկայացնելով իր կատարած գործերը Հայաստանում: Նա ասաց, որ ինքը եղել է պլենիպոտենտ Հուվերի ներկայացուցիչը: Հուվերի տաղանդն էր, որ փրկեց Հայաստանը: Իր դիմումների վրայ, Հուվերը Հայաստան ուղարկեց ալիւր եւ այլ մթերքներ՝ փրկելով հայ ժողովուրդը սովից: Իրեն պէտք եղաւ յաղթահարել չատ դժուարութիւններ. վրացիներին ստիպել, որ բաց պահեն Բաթում—Թիֆլիս—Երեւան երկաթուղին՝ Հայաստանի առջեւ. Ադրբէյջանին համոզել, որ նաեւ տայ Հայաստանին: Եւ այս ու միւս բոլոր խնդիրներում՝ Հայաստանի կառավարութիւնը ու բանակը եղել են իր լաւագոյն գործակիցը: Այժմ, թողնելով Հայաստանի տահմանները, նա պարտք էր դղում երախտապիտութեամբ յիշելու անունները բոլոր անձանց ու հիմնարկութիւնների, որոնք օգնել էին հայ ժողովրդին՝ Հուվերին՝ որին Հայաստանում քիչ էին ճանաչում, բայց առանց որի՝ Հայաստանը կորած պիտի լինէր, Մերձաւոր Արեւելքի նպաստամատոյցին, Նիւ Եորքի կոմիտէին, Քանատայի հայասէրներին, Ռոկֆելլերեան Ֆոնտին, Մանչեսթերի Հայաստանի բարեկամներին, Լոնդոնի Լորդ Մեյէրի հիմնարկութեան: Բազմաթիւ միլիոններ հաւաքեցին նրանք Հայաստանի համար եւ ապագայում էլ կը հաւաքեն:

Հասկելն ասաց նաեւ, որ Հայաստան գալիս, ինքը հայերի մասին մի բան պիտէր, որ տառապող եւ օգնութեան կարօտ մարդիկ են: Սակայն, այժմ, ինք համոզուած է, որ հայերը կենսունակ, աշխատանքը սիրող եւ առեղծագործ ժողովուրդ են: Նա տեսել է, թէ ոտված ու մերկ հայ գինուորը ինչպէս է հերոսաբար պաշտպանում իր հայրենիքը: Տեսել է, թէ ինչպէս հայ գիւղացին ամենէն դժուարին պայմաններում մշակում էր իր հողը: Այս տարուայ ապրմնացանը լաւագոյն ապացոյցն է, որ հայ ժողովուրդը իրաւունք ունի օժանդակութիւն առանալու: Ամերիկայում այն համոզումն ունեն, որ օգնել պէտք է միայն նրան, ով ինքն է օգնում իրեն. հայ ժողովուրդը



ARAM webaram.com

օգնում է իրեն, եւ, ի հարկէ, Ամերիկան կը չարունակէ օգնել նրան: Մինչեւ այժմ հայ ժողովուրդը կարօտ էր պարենաւորման. այժմ պէտք ունի քաղաքական եւ զրամական օգնութեան, որն, ի հարկէ, կը ստանայ: Ծանր օրերը արդէն անցել են, գալիս են լաւ օրեր հայ ժողովրդի համար: Կեցցէ՛ Հայաստան, կեցցէ՛ Ամերիկան:

Հասկելի ճառը ընդհատուեց կեցցէներով եւ խանդավառ ծափահարութեամբ: Նրան պատասխանեցին վարչապետ Խատիսեանը, Սպարապետ Նազարբէկեանը եւ ուրիշներ՝ նոյն խմաստով եւ նոյն ոգիով:

Հասկելը Հայաստանից հեռացաւ եւ նրան փոխարինեց Եարօն:

Արձանագրենք նաեւ մի դէպք.— ճանապարհին, Տրապիզոնի մօտ, Հասկելի նաւի վրայ յարձակուեցին մի խումբ քօղածածուկ աւազակներ եւ Հասկելի կնոջից խլեցին մի տոպրակ ադամանդներ եւ ուրիշ թանկագին քարեր, որ Տիկին Հասկելը հաւաքել էր իր ամուսնոյն ուղեկցելիս եւ այժմ տանում էր Ամերիկա: Ասում էին, որ վրացիներն էին կազմակերպել այդ գործը, քանի որ շատ հեռու չէր իրականութիւնից: Հետագային, Նոյ Ռամերիկին ծիծաղով խօսում էր այդ դէպքի մասին:

Ցոյն հին փիլիսոփաներից մէկը ասում էր. կեանքում ամէն ինչ մէջտ հոսում է. — պաւնտառէյ: Կայուն բան չկայ աշխարհիս երեսին, ամէն ինչ չարժման մէջ է: Հայաստանի Հանրապետութեան կեանքն էլ չարժման մէջ էր. «Զախորդ օրերին» յաջորդում էին պայծառ օրերը, լոյսն ու մութը սիրում էին մեր երկրին փոխն ի փոխ: Եւ լոյսը՝ աւելի եւ աւելի սիրական: Գոնէ այնպէս էր մեր ինքնապատգամը, այն օրերին: Մենք ապրում էինք յոյսով եւ ոգեւորւում էինք լոյսով...


ARAM webaram.com

# ԳԻՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Կօալիցիան էլ չուժեղացրեց Քաջազնունիի կառավարութիւնը: Ինչպէս ասացինք, ժողովրդական նախապարտները դժուարութեամբ հաշտուեցին Երեւանում ապրելու անհրաժեշտութեան հետ: Բուրժուանների վախուկ մարմինը վարժուած չէր տոկալու Հայաստանի ցուրտին, սովին, ջրլնգերին եւ այլ կարգի զրկանքներին: Առարկայական պայմանները Հայաստանում չփոխուեցին: Մանաւանդ ապառնական զարձաւ սովի ուրուականը: Ցունուարի վերջերը Քաջազնունին առաջարկ ներկայացրեց կառավարութեան՝ Ամերիկա ուղարկել յատուկ պատուիրակութիւն, նիւթական օգնութիւն եւ պարէն ապահովելու համար: Հայաստանի Խորհուրդը հաւանութիւն տուեց վարչապետի առաջարկութեան եւ որոշեց պատուիրակութիւն ուղարկել Քաջազնունիի նախագահութեամբ: Այդ հնարաւորութիւն կը տար Հայաստանի Խորհրդին կազմելու նոր կառավարութիւն՝ Քաջազնունիի կառավարութեան տեղը: Քաջազնունին ուրախութեամբ առանձնեց այդ պաշտօնը եւ մեկնեց Թիֆլիս, անդլիական իշխանութեանց արտօնութեամբ անցնելու համար Եւրոպա եւ Ամերիկա: Նա պնդեց եւ Հ. Յ. Դ. Բիւրօն էլ յօժարեց, որ ես էլ միանամ իրեն: Ինձ համար էլ ցանկալի էր այդ հեռանկարը: Ես խօսք էի տուել, կարինի Ընդհ. ժողովից յետոյ վերադառնալ Ամերիկա, զեկուցում ներկայացնելու համար եւ հնարաւորութիւն չէի ունեցել իմ խոստումը կատարելու:

Թիֆլիսում մեզ պահեցին բաւական երկար, անորոշութեան մէջ: Ի վերջոյ, անդլիական ներկայացուցչութիւնը մերժեց ինձ վիզա տալ: Վերջը յայտնի եղաւ, որ ես ցանկալի չէի անդլիացիների համար, իբրեւ «ձախ» դաշնակցական: Երեւի, իմ ճամբորդութիւնը կա-



ARAM webaram.com

*ըող էր կործանել Նորին Մեծութիւն՝ Բրիտանիոյ թագաւորի կայսրութիւնը...*

*Քալանունին, վրդովուած անգլիական արդելքից, մերժեց ճանապարհորդել առանձին: Մեր յորդորները անզօր եղան կոտրելու նրա յամառութիւնը: Եւ դժուռ, մենք վերադարձանք Երեւան եւ նա նորից անցաւ վարչապետութեան պաշտօնին:*

*Սակայն, վարչապետութեան մէջ, Ա. Խատիսեանից յետոյ, որ նշանակուել էր փոխանորդ, Քալանունիի դիրքը խախտուած էր երեւում կառավարութեան մէջ: Վերջապէս մեզ յաջողուեց համոզել նրան, եւ իր հետ առնելով ելեւմտական նախարար Ա. Լենֆիաջեանին եւ մի քանի ուրիշ օղնականներ՝ նա մեկնեց Ամերիկա:*

*Քալանունիի մեկնելուց յետոյ, վարչապետութեան պաշտօնը ստանձնեց Ա. Խատիսեանը, որ անպայման աւելի գործօն եւ վարչապէտ մարդ էր: Իրրեւ Թիֆլիսի նախկին քաղաքագլուխ, նա ցոյց էր տուել աչքի ընկնող վարչական հմտութիւն: Խատիսեանը չուտով պատ, որ կօալիցիոն կառավարութիւնը անզօր է երկիրը վարելու եւ Հ. Յ. Դ. Բիւրոյին առաջարկեց կառավարութեան կազմի մէջ մտցնել Բիւրոյի անդամներից մի քանիսին: Բիւրօն և Հայաստանի Յեղափոխական Դաշնակցական Ֆրակցիան տուին իրենց համաձայնութիւնը, եւ Ապրիլ 3-ին, կառավարութիւնը վերակազմուեց: Ա. Ջամալեանը եւս մտանք կառավարութեան կազմի մէջ:*



ԱՐՇԱԿ ՋԱՄԱԼԵԱՆ

*Վերջը իմացայ, որ Քալանունին Ամերիկա մեկնելիս խորհուրդ էր տուել Խատիսեանին ինձ յանձնել դիւպատմական եւ պետական գործերի նախարարութիւնը: Խատիսեանը աւելացրեց նաեւ աշխատանքի նախարարութիւնը: Դիւպատմական նախարարութիւնը բացառիկ կարեւորութիւն եւ նշանակութիւն ունէր երկրի համար, իսկ աշխատանքի՞ — ի՞նչ աշխատանք կարելի էր լինելու «ան-*



ARAM webaram.com

ձեւ քաօս»ում, մանաւանդ, այն ժամանակ, երբ Հայաստանում արդիւնաբերութիւնը եւ արհեստները սաղմնային վիճակում էին:

Ես նախարարական պաշտօնի մասին չէի մտածում: Չէի երեւակայում, մանաւանդ, որ ինձ պիտի վստահուի պետականութիւնը եւ աշխատանքը կազմակերպել մեր երկրում: Ո՛չ մասնագիտական պատրաստութիւն ունէի, ո՛չ փորձառութիւն: Պատանի ժամանակս, ամառները Գէորգեան ճեմարանից վերադառնալով տուն՝ ես, ժամանակ համար, աշխատում էի Մխիթիչա քեռուս ապարանքներում, հնձող մեքենաների վրայ: Արդիւնքը այն էր եղել, որ ես փչացրել էի մի քանի մեքենայ եւ կտրել էի մի քանի անասունների ոտքեր: Բայց այդքան փորձառութիւնը բաւարար չէր պետականութեան նախարար լինելու համար:

Մեր երկիրը աղքատ էր եւ յետամնաց: Առաջ էլ երկրագործութիւնը զարգացած եւ կազմակերպուած չէր Հայաստանում: Երեւանի նահանգապետութեան կից՝ գոյութիւն ունէր «պետականեսութեան եւ պետական գոյքերի բաժանմունք», մի քանի համեստ պաշտօնեաներով, իսկ աշխատանքի վարչութիւն բնաւ գոյութիւն չունէր: Հիմա, ես պիտի վարէի պետականութեան, պետական գոյքերի եւ աշխատանքի նախարարութիւնները:

Երիտասարդ էի եւ խանդավառ: Աւելացնեմ նաեւ, մի քիչ էլ խենթ: Ո՛չ մի անկարելի բան չկար իմ առջեւ: Զեռնարկեցի գործի:

Մեր սերունդը «անկարելիութիւն չէր ճանաչում»: Զոհաբերութիւնից էլ չէր խուսափում: Այն ժամանակ ճապ գոյութիւն չունէր, ոչ էլ այսօրուայ խենթ պարերը: Մեր միտքը կլանուած էր հանրային գործերով: Մեր սիրտն ու հոգին ժողովուրդին էին պատկանում: Անձնական ապրումներ չունէինք մենք:

Զեռնարկելով իմ նոր գործին՝ ես պետականեսական նախարարի օդնականի պաշտօնին մէջ հաստատեցի պետական Թադէոս Տօչեանին, աշխատանքի նախարարութեան օդնական նշանակեցի համալսարանական երիտասարդ՝ Վարոս Բարայեանին: Նրանց ջակցութեամբ սկսեցի ձեւ տալ «անձեւ քաօս»ին:

Առաջին հերթին, հրաւիրեցի Հայաստանում գտնուող պետականեսների խորհրդակցութիւն, մշակելու համար Հայաստանի պետականեսութեան կազմակերպման եւ պետականեսական նախարարութեան գործունէութեան ծրագիրը: Պետականեսական եւ պետական գոյքերի նախարարութիւնը պիտի ունենար հետեւեալ կազմը.— Նախարարի պետան, ջրաքաշխական, պետական գոյքերի, անասնային, լեռնային, երկրագործական եւ անասնաբուժական բաժիններ:



ARAM webaram.com

Իւրաքանչիւր բաժին պիտի ունենար դիւանապետներ: Հայաստանը բաժնուեց երկրագործական չրջաններուն՝ իւրաքանչիւրը դիւզատնտես պետավարով: Մշակուեց երկրի դիւզատնտեսութեան ուսումնասիրութեան, ինչպէս նաեւ հրատապ նշանակութիւն ունեցող ներմնացանի ծրագիրը: Որոշուեց արտասահմանից Հայաստան ներմուծել երկրագործական գործիքներ, որակեալ անասուններ եւայլն: Հրաւիրել դրսից՝ մասնագէտներ:



Վ. ԲԱՔԱՑԵԱՆ

Գործունէութեան մի ընդարձակ ծրագիրը, բայց ո՞վ պիտի գործադրէ այդ ծրագիրը: Հայաստանի անկախութեան յայտարարութեամբ՝ երկիրը թողել ու հեռացել էր օտար պաշտօնէութիւնը: Մնացել էին միայն սակաւաթիւ հայերը: Այսքանը անբաւարար էր լուրջ աշխատանք կատարելու համար: Հարկաւոր էր հրաւիրել նորը, բայց այն ժամանակի պայմաններում եւ այն օրերի ռռճիկներով ո՞վ կը գար Հայաստան: Պաշտօնեաների բարձրագոյն ամսականը Հայաստանում վարչապետն էր առանում՝ 12 հազար ռուբլի, չորք 12 տոլար: Ես, իբրեւ նախարար, առանում էի 10 հազար ռուբլի, որ հաւասար էր մօտաւորապէս 10 տոլարի: Միւս պաշտօնեաները առանում էին աւելի քիչ: Այդպիսի ռռճիկներով հնարաւո՞ր էր մասնագէտներ բերել արտասահմանից: Ես պահանջեցի եւ առացայ կառավարութեան համաձայնութիւնը, որ դիւզատնտեսական նախարարութեան մասնագէտներին աւելի վճարում արուի: Եւ այնուհետեւ կարողացայ ունենալ մի չարք որակեալ մասնագէտներ, ինչպէս՝ հանքային բաժանմունքի վարիչ Թուրեանը, որ իմ հրաւէրով Հայաստան եկաւ Սիբիրից, 25 հազար ռուբլի ամսականով:

Դիւզատնտեսական նախարարութեան վարչական անձնակազմը լրացնելուց յետոյ, մենք անցանք գործի: Առաջին եւ անյետաձգելի գործը ներմնացանն էր: Մեր ձգտումն էր սովից ազատուել Հայաս-



ARAM webaram.com

տանի ապագան: Արդէն Ամերիկայից սկսել էր հասնել Հուվերի ուղարկած ցորենը եւ այլ հացահատիկները: Ժամանակ չաս չունէինք: Երկրի գաշտային մասերում ցանքսը սկսուած էր: Պէտք էր չտապել: Ես ժողովուրդին ուղղեցի մի կոչ, որով պարզում էի Հայաստանի տնտեսական պայմանները եւ յորդորում էի արտերը ցանել, որքան կարելի է մեծ քանակութեամբ: Կազմուեց սերմնացանի յատուկ կոմիտէ, որ եռանդով անցաւ գործի: Կոմիտէն Հայաստանից հաւաքեց 278·731 փութ(*) ցորեն եւ արտասահմանից բերեց 92·290 փ. սերմնացու: Այդ բոլորը եւ աւելի՛ ցանուեցաւ 1919–ին եւ 1920–ի գարնան: Հայ ժողովուրդը սարսափով յիշում էր 1918–1919–ի ահաւոր սովը, մի տարի եւս նման սով՝ Հայաստանում մարդ չէր մնայ: Ընդհակառակն, եթէ ցանուածը ամբողջութեամբ հաւաքուէր, Հայաստանը ապահովուած պիտի լինէր հացի տեսակէտից: Այս նոյն գործունէութիւնը չարունակուեց եւ յաջորդ տարի:

Գիւղատնտեսական նախարարութիւնը հետզհետէ արտասահմանից երկիր բերեց երկրագործական գործիքներ, պղնուացեղ անասուններ՝ կաթնատնտեսութիւնը զարգացնելու համար, հերկելու եւ կալսելու մեքենաներ: Այդ օրերին, Հայաստանի ժողովուրդը տեսաւ առաջին անգամ տրակտորը: Լայն ծրագիրներ մշակուեցին եւ գործադրութեան դրուեցին, Հայաստանի բնական հարստութիւնները հետազօտելու համար:

Սեպտեմբերին, կազմուեց լեռնային տեխնիկական յանձնաժողով, բաղկացած լեռնային բաժնի վարիչ ինժ. Ստ. Թուրեանից, որա օգնական՝ ինժ. Ա. Տէր–Գրիգորեանից ու լեռնային ինժիներներ՝ Մ. Տէր–Դաւիթեանից, Ն. Տէր–Միքայէլեանից եւ չրջանների ինժիներներից: Այս յանձնաժողովի նպատակն էր տեխնիկական հետազօտութիւններ կատարել Հայաստանում գոյութիւն ունեցող գործարանների համար եւ երկրաբանական—արդիւնաբերական հետազօտութիւններ եւ ուսումնասիրութիւններ՝ գոյութիւն ունեցող եւ կամ բացուելիք հանքերում:

Գիւղատնտեսական նախարարութեան լեռնային բաժանմունքին կից հիմնուելու էր լեռնային խորհուրդ, նախարարի նախագահութեամբ: Այդ մասին պատրաստուած էր օրէնքի նախագիծ: Խորհուրդը պէտք է բաղկանար ձեռնհաս հայ հանքարաններից եւ հանքային արդիւնաբերութեան ներկայացուցիչներից եւ պիտի հանդիսա-

(*) 1 փութը կ'ըլնէ 16 ֆլկ·:



ARAM webaram.com

նաբ Հայաստանի ամենահեղինակաւոր մարմինը՝ հանքային արդիւնաբերութեան վերաբերուող խնդիրներում:

Միեւնոյն ժամանակ, Թիֆլիսում, Համառ մասնագէտների կողմից մշակուեց Հայաստանի լեռնային օրէնքի նախագիծը:

1920 թ. ամառը, լեռնային բաժինը ձեռնարկեց հետազօտական լայն աշխատանքների: Դրանից Հայաստան հրաւիրուեցին մի շարք ձեռնհաս մասնագէտներ, ինչպէս՝ հանքային ինժ. Կարապետեանը: Կազմուեցին մասնագէտների խմբակներ, որոնք պիտի ճամբորդէին Հայաստանում եւ տեղնուտեղը ուսումնասիրութիւններ կատարէին: Կազմուեց աշխատանքների ընդարձակ ծրագիր՝ ամառուայ եւ աշնան համար: Առաջին հերթին, պէտք է հետազօտուէր Օլթիի քարածուխի շրջանը, ապա Կաղզուանի ազահանքերն ու զրոնեխը, Սեւանի արեւելեան ափերի խրոմիտի հանքերը, Սուրմալուի ոսկու վայրերը, Շարուր—Դարալագեազի արծաթա-արճճային շրջանը, տորֆի վայրերը, շինարարութեան քարերը եւայլն: Օլթիի յանձնախումբը Երեւանից մեկնեց Օգոստոսի սկզբին:

Հայաստանը, այն ժամանակուայ սահմաններում օգտագործուող բնական հարստութիւններ շատ չունէր. պղնձի հանքեր՝ Լոռիում եւ Ղափանում, տուֆ եւ շինարարութեան այլ տեսակի քարեր, մի քանի աննշան ազահանքեր եւ ուրիշ դրեթէ ոչինչ: Գիւղատնտեսական նախարարութեան լեռնային բաժինը առանդով վիճառում էր հանքային նոր տարբերներ, մասնաւորապէս նաւթ եւ քարածուխ:

Նման աշխատանքներ կատարուում էին եւ գիւղատնտեսական նախարարութեան այլ բաժիններում: Այստեղ առանձնապէս ուզում եմ յիշել ինժ. Զաւալիշինի ձեռնարկը, որի շուրջ, այն օրերին, ահագին աղմուկ եղաւ:

Ինժ. Ս. Զաւալիշինը, Թաւաստանի խորհրդայնացումից առաջ, իբրեւ օրակալ մասնագէտ, պաշտօնակալ էր Կովկասեան առողման վարչութեան մէջ: Կովկասի միութեան քայքայումից յետոյ, այս վարչութիւնն էլ կազմալուծուեց եւ հարիւրաւոր ուս ինժիներներ եւ տեխնիկներ մնացին անդործ: Ես ծանօթ էի Զաւալիշինին, հաւանում էի նրա չիտակ ու նախաձեռնող բնաւորութիւնը. եւ ուզեցի օգտուել անդործ մասնագէտներից, Հայաստանի ջրային հարստութիւնները ուսումնասիրելու համար:

1919 թ. Մայիսի կէսերին, ինժ. Զաւալիշինը դիմեց Հայաստանի կառավարութեան՝ առաջարկելով իրեն յանձնել Հայաստանի ջրային հարստութիւնները հետազօտելու գործը, ներկայացնելով ուրոշ ծրագիր՝ կատարելիք աշխատանքների մասին: Ինձ հետաքրքրում



ARAM webaram.com

էր մասնաւորապէս Սեւանի աւազանի, ինչպէս նաեւ Հրազդանի (Զանգու) ջրա–ելէքտրական ուժը: Զաւալիշինի ծրագիրը այդ չորս–ջանները ի նկատի ունէր:

Կառավարութիւնը ընդառաջ դնաց եղած առաջարկին եւ հարցը քննելով ինժ. Սիմանսոնից եւ Տ. Լինֆիթջեանից ու Գ. Ազաթաթեանից բաղկացած յանձնախումբի կողմից՝ որոշեց ընդունել ներկայացուած ծրագիրը: Եւ աչքի առաջ ունենալով հարցի մեծ կարեւորութիւնը Հայաստանի տնտեսութեան զարգացման տեսակէտից՝ Հայաստանի Խորհուրդը 4 միլիոն ռուբլիի վարկ յատկացրեց, եւ ինժ. Զաւալիշին անցաւ գործի: Նա պաշտօնի հրաւիրեց շուրջ 60–ի հասնող ռուս ինժիներներ ու տեխնիկներ, որոնք մի քանի ամիս դաշտային աշխատանքներ կատարեցին Սեւանի աւազանում, Նոր–Բայազէտի ու Կոտայքի շրջաններում եւ Հրազդանի հովտում՝ հետազօտելով այդ վայրերի առուգման պայմանները: Զաւալիշինի ներկայացրած զեկուցումը, դժբախտաբար կարելի չեղաւ գործադրել՝ բոլշեւիկների յարուցած խռովութիւնների պատճառով, 1920 թ. Մայիսին եւ Հայ–Թրքական պատերազմի հետեւանքով: Հետագային, բոլշեւիկները օգտագործեցին այդ զեկուցումը՝ Սեւան–Հրազդանի ելէքտրականացման համար:

Զաւալիշինի ծրագիրը, ահագին ազմուկ հանեց Երեւանում: Հարցը քննուեց Հայաստանի ինժիներների միութեան մէջ, որի նախագահ ինժ. Ա. Օհանջանեանը կատարի յարձակումներ գործեց պետականտեսական նախարարութեան վրայ, որ գործը փոխանակ իրենց՝ հայ ինժիներներին յանձնելու, ուրուներին է յանձնել: Վէճի մէջ մտան եւ մամուլն ու հանրային գործիչները, որոնք նոյնպէս, ընդհանուր առմամբ, դատապարտում էին մեզ, որ նախապատուութիւն ենք տուել ուրուներին: Հայաստան պէտք է կառուցուէր հայկական ուժերով: Հետագային, Միխանիկեանի օրով, պատմաբան Լէօն, իր «Անցեալից» հատորում, անլուր զրպարտութիւններ եւ հայհոյանքներ թափեց իմ գլխին. իբր թէ Զաւալիշինը իմ ազգականն էր եւ ես նրան էի յանձնել Հայաստանի ջրային ուժի հետազօտութեան գործը՝ անձնական շահերից դրդուած: Լէօն չատ լաւ գիտէր, որ Զաւալիշինը իմ ազգականը չէր: Աւելի լաւ գիտէր նաեւ, որ ես անձնական որեւէ շահագրգռութիւն չունէի այդ գործում: Նա ինձ լաւ ճանաչում էր հակառակ տեսակէտից: Բայց եւ այնպէս դրել էր այդ անպատեհ տողերը՝ հաճոյանալու համար նոր իշխանութեան:

Մեր տերունդը կարելի էր մեղադրել չատ բաներում: Մենք, ի հարկէ, անփորձ էինք եւ զերծ չէինք սխալներից: Մենք պատ–



ARAM webaram.com

բաստուած չէինք պետութիւն կառուցանելու եւ վարելու։ Բայց մենք անձնուէր մարդիկ էինք, նիւթական նպաստակներ չէինք հետապնդում մեր կատարած գործերում։ Ընդհակառակն, մենք պատրաստ էինք զոհելու եւ զոհուելու, մինչեւ վերջին չունչ աշխատելու, առանց որեւէ անձնական ակնկալութեան։

Ես չպատասխանեցի Լէոյին։ Լռութեամբ անցայ եւ մխանների ամբաստանութիւնների վրայից։ Կարեւորը գործն էր, իսկ Զաւալիչինի գործը օտարակար եղաւ Հայաստանի համար։

Գիւղատնտեսական նախարարութիւնից դատ ինձ դրդեցնում էին եւ՛ աշխատանքի ու պետական դոյքերի նախարարութիւնները, բայց չեմ կարող ասել, որ մեծ գործ կատարուեց այս մարզում։ Պետական դոյքեր չատ քիչ ունէինք. Ռուսաստանից ժառանգութիւն մնացած դոյքերը, մեծ մասամբ, «զաւթել» էր վրաստանը։ Հայաստանում գրեթէ բան չէր մնացել։ Մայիսեան ըմբոստութեան օրերին մենք պետականացրինք Շուստովի կոնեակի գործարանը։ Ես իմ ձեռքով կատարեցի նրա գրաւումը ու վերանուանումը — Արարատ։ Պետականացուեցին եւ մի չարք մանր-մունր անտեսական ձեռնարկներ։

Աշխատանքը Հայաստանում նախնական վիճակի մէջ էր։ Տիրողը արհեստաւորութիւնն էր եւ մանր անտեսութիւնը։ Եւրոպական իմաստով պրոլետարիատ գոյութիւն չունէր։ Բանուորները արհեստանոցներում աշխատում էին երկար ժամեր, առողջապահական վատ պայմաններում. չնչին վարձատրութիւն էին ստանում, ընկերային հոգածութիւն չկար պետութեան կամ աշխատանքի տէրերի կողմից։ Մենք մտցրինք 8 ժամուայ աշխատանքի օր, եւ ընկերային որոշ բարենորոգումներ։

Զմոռանանք յիշել եւ հողային հարցը, որ Հայաստանում եւս յուզում էր ժողովրդի մտքերը։ Հայաստանը մանր հողատիրական երկիր էր. խոշոր կալուածներ քիչ կային։ Մի քանի կալուածատէրեր, մի քանի վանքապատկան դիւղեր, ի դերու էր մնում, եւ մանաւանդ մանր հողատիրութիւնը։ Գիւղապատկան հողերը՝ համայնատիրական էին, բայց հողաբաժանում սակաւ էր տեղի ունենում. հողը կենտրոնանում էր կուլակների ձեռքը։ Մեծ էր սակաւահող եւ հողազուրկ գիւղացիների թիւը։

Կառավարութիւնը անկախութեան հէնց առաջին օրերից մըտցրել էր հողային օրէնք, որով պետականացւում էին մանաստիրական եւ վանքապատկան հողերը եւ նոր բաժանում էր կատարուելու գիւղական հողերի։ Բայց երկրի խառնակ վիճակը հնարաւորութիւն չէր տուել օրէնքը գործադրելու, եւ ժողովուրդը դժգոհ էր կառա-


ARAM webaram.com

վարութիւնից։ Գիւղատնտեսական նախարարութիւնը առանձնելով՝ եւ անմիջապէս հերթի դրի հողային հարցը։ Առաջին հերթին պետականացուցին էջմիածնին պատկանող վիւղերը, որ մի կողմից դոհունակութիւն պատճառեց վիւղացիներին, միւս կողմից՝ խիստ դժգոհութիւն էջմիածնի միաբանութեան եւ երկրի կղերամիտ տարրերին։ Ապա, մշակուեցին վիւղատնտեսական համայնական հողերի վերաբաժանման պայմանները, այն հաշուով, որ իւրաքանչիւր ընտանիք ունենայ բաւարար հող։ Կարմուեցին եւ չրջաններըը ուղարկուեցին հողային յանձնաժողովներ, առանց ձղձղումի հողերը վերաբաժանելու համար։ Այսուհետ, առաջ բերենք Նոր-Բայազէդի յանձնաժողովի նախագահ Մ. Օզանեանի դեկուցումը՝ վիւղատնտեսական նախարարութեան։



Մ. ՕԶԱՆԵԱՆ

Մերուժան Օզանեանը Ամերիկայի մեր յայտնի գործիչներից էր։ Երեւան էր եկել Հ. Յ. Դ. 9-րդ Ընդհ. ժողովին՝ պատգամաւորի հանգամանքով։ Ժողովից յետոյ, տեսնելով երկրի մտաւորական ուժերի սուր կարիքը, յօժար կամքով մնաց Հայաստանում եւ մասնակից պետական չինարարութեան, զանազան աստիճաններում։ Եւ Ամերիկա վերադարձաւ միայն՝ անկախութեան անկումից յետոյ։ Առաջին հերթին, նա նշանակուեց Նոր-Բայազէդ գաւառի հողաբաժանման յանձնաժողովի նախագահ եւ գործի վայրը մեկնեց հետեւեալ հրահանգներով՝ նախարարութեան կողմից։

Սակաւահող վիւղերին հող տալ եւ վերաբաժանել համայնական հողերը։ Մասնաւորական հողերը պետականացնել եւ ժողովուրդին տալ։ Լքեալ վիւղերում բնակութիւն հաստատել եւ վերաչինութեան գործին նպաստել։

Իր աշխատանքը լրացնելուց յետոյ, Օզանեանը ներկայացրեց նախարարութեան հետեւեալ զեկուցումը. «1920 թ. ամրան, Հ. Հանրապետութեան երկրագործութեան եւ վիւղատնտեսութեան նախարար՝ Ս. Վրացեանի հրահանգով ուղեւորուեցայ Նոր-Պայազէտ, իբրեւ այդ չրջանի հողային կոմիտէի նախագահ։ Իմ երկու ընկերներն էին Հայաստանի խորհրդարանի անդամ՝ Միքայէլ Տէր-Գէորգեան եւ Նոր-Պայազէտի գաւառի երկրագործական մինիստրութեան ներկա-



ARAM webaram.com

յայուցիչ՝ Նապարէթեան։

«Մեր աշխատանքը այդ շրջանի մէջ կանխօրօք որոշուած էր.— հաղորդուիլ պետական խոշոր պանդուած մը կար, որ տեղաւորուելու էր Թուրքերէն դատարկուած մի շարք պետերու մէջ։

Շրջանի հայութիւնը, դրեթէ ամբողջութեամբ կազմուած էր հողին, առաւելապէս պղպեղով անասնապահութեամբ, մասամբ կաթնատուութեամբ, մեղուաբուծութեամբ եւ արմտիքներու մշակութեամբ։ Արմտիքի մշակութիւնը շրջանի պետացիութեան համար եղած էր ապերախտ աշխատանք մը. ամենաբախտաւոր ժամանակներու մէջ պետացին հազիւ կը առանար մէկի դէմ երեք։ Ծանօթ է արդէն, որ Նոր-Պայազէտ ալպեան անտեսութեան շրջան մըն է եւ պետացիութիւնն ալ կը պարապի այդ շրջանի յատուկ աշխատանքներով։ Այդ պատճառով ալ, մինչ Երեւանի եւ Ալեքսանդրապոլի գաւառներու իւրաքանչիւր հինգ անդամէ բաղկացեալ ընտանիքի կը տրուէր 5—7 ռեսիատին հող, Նոր-Պայազէտի շրջանի իւրաքանչիւր ընտանիքին կը տրուէր միջին հաշուով 30 ռեսիատին հող — արօտատեղի եւ վարելահող։

Յաջորդաբար այցելեցինք Նոր-Պայազէտի ելեւոլկայի, բաազիկեչաի եւ շրջակայքը պտնուող, ինչպէս նաեւ լքեալ պետերը։

Իւրաքանչիւր պետ մտնելուս՝ մեր առաջին գործը կ'ըլլար ծանօթանալ պետի տարածութեան ու բնակչութեան եւ վիճակ ձգելով որոշել՝ պետի յաւելեալ բնակչութիւնը փոխադրելու մօտակայ գաւառի պետերը։ Պետացիութեան փոխադրութիւնը պիտի կատարուէր երկրագործական աշխատանքներէ անմիջապէս յետոյ, նոյն տարուայ աշնան։ Մինչեւ վերջնական ընտրութիւնը, որ պետացին թէեւ կը տանար սակաւահողութենէ, բայց չէր ուզեր նաեւ հաշտուիլ՝ իր պապենական հողը թողելով մօտակայ պետի մը մէջ հաստատուելու գաղափարին հետ։ Այս պատճառով, մեր կոմիտէն ենթարկուեցաւ բաւական դժուարութիւններու եւ այս այն ժամանակ, երբ դեռ վիճակահանութեան արդիւնքները թղթի վրայ կ'արձանագրուէին։

Իրրեւ տրամադրելի պարապ տարածութիւններ մենք նկատի ունէինք գլխաւորապէս Ա.) Սեւանայ լճի հարաւ-արեւմտեան կողմը ելենովկայի եւ Նոր-Պայազէտի միջեւ գտնուող քանի մը պետերը, Բ) Այրիչայի աքանչելի հովիտը, լիճէն բաւական հեռու, դէպի հարաւ, ուր կային նոյնպէս 4—5 պետեր, Գ) Սեւանայ լճի հիւսիսային ափի 7—8 պետերը՝ Դոխլուջա եւայլն։ Աշխարհագրական դերազանց դիրքով այս պետերը, հայկական բնակչութեամբ լեցնելը մեզ համար ունէր նաեւ քաղաքական նշանակութիւն։


ARAM webaram.com

Եթէ նախաբարութիւնը համաձայնէր, ծրագրած էինք մաս մը պիւզայիւթիւն ալ փոխադրել ձղինի Զար եւ Միլլի Զար։

Որպէսզի պիւզայիւթեան պիտի պիւղ փոխադրութիւնը դիւրանար, մեր կոմիտէն խնդրեց երկրագործական նախարարութենէն՝ Ա.) Որ կառավարութիւնը որոշ նիւթական օգնութիւն ընծայէ պիւզայիւթեան, Բ.) Նոր տուներու չինութեան համար հայթայթէ աժանապին առատ, Գ.) Տրամադրէ մասնագէտ վարպետներ՝ նոր պիւղերու արդիական ձեւով չինութեան համար։ Նախարարութիւնը խոստացաւ մեր պահանջին դոհացում տալ։

Հողագործական պիւզայիւթեան որոշ չափով մը բաւարարութիւն տալէ յետոյ, աշխատեցանք առեղծել հողային ֆոնտ մը, որ օգտագործուելու էր կառավարութեան ապագայ ձեռնարկներուն համար։ Արդէն իսկ քիչ ու չատ ունեւոր տարրերէ բազկացեալ քանի մը ընկերութիւններ սկսած էին կազմուիլ, որոնք որոշ պայմաններով մեզ առաջարկեցին օգտուիլ կառավարութեան ֆոնտէն, դրամագլուխ համար կաթնատնտեսութեամբ, մեղուարուծութեամբ եւ մանաւանդ անասնապահութեամբ։ Այդ ընկերութիւններէն մին, որու կեդրոնը Ալեքսանդրովկա մայրաքաղաքին դիւղէն լլլալու էր, մեզ կը խոստանար իր արամադրութեան տակ դրուելիք 800 ոեսխատին հողի փոխարէն, ամէն տարի կառավարութեան ծախել մաւչելի գնով 200—300 փութ կարագ, նոյնչափ մեղր, պանիր եւ առատ քանակութեամբ մսեղ։

Կառավարութեան հողային ֆոնտին մաս պիտի կազմէին նաեւ Ելենովկայի մէջ մայրաքաղաքէ դաստակուած 40—50 տուներ։ Ելենովկան, որ հարուստ էր նաեւ հանքային ջուրերով, իրրեւ սքանչելի ամարանոց կը խոստանար մեծ ապագայ։ Այնտեղ դանուած դաստակ անները մանրամասն արձանագրելէ յետոյ, ցուցակը յանձնուեցաւ մինիստրութեան։ Այդ օրերուն, մեծ թուով երեւանցիներ ու պետական պաշտօնեաներ խոշոր գիներ առաջարկելով՝ կ'ուզէին Ելենովկայի մէջ իրենց համար ամառնային տուներ ապահովել։

Այսպէս վերջացաւ մեր աշխատանքի առաջին մասը։ Գործնական աշխատանքները պիտի սկսէին աշնան վերջերը անմիջապէս, երբ հայ—թրքական պատերազմը ամէն ինչ տակնուվրայ ըրաւ»։

Հողային յանձնաժողովներ կազմուած էին բոլոր դաւառների համար։ Անոնք, անընդհատ, նրանք աշխատանք կատարեցին չորքջանների մէջ։ Որոշ տեղեր, դաշտային մասերում, նրանք լրացրին իրենց աշխատանքները, բայց մեծ մասամբ, Մայիսեան խռովութիւններուն եւ հայ—թրքական պատերազմի հետեւանքով, գործը մնաց



ARAM webaram.com

թերի: Հետագային, այդ գործը «լրացրին» բոլշեւիկները, կոլխոզների եւ սովխոզների կազմութեամբ՝ արմատապէս «լուծելով» հողային հարցը Հայաստանում:

Տաժանելի էր պետական նախարարի գործը այն օրերի պայմաններում, բայց եւ հաճելի: Հաճելի էր, մանաւանդ, անձնուէր եւ հաւատաւոր պաշտօնէութեան գործակցութիւնը: Գիւղատնտեսական նախարարութեան մէջ ամէն պաշտօնեայ կատարում էր իր պարտականութիւնը հաւատարմօրէն, համերաշխութեամբ եւ նուիրումով: Տարապրութեան պայմաններում դժուար է լրիւ կերպով ներկայացնել կատարուած աշխատանքը, բայց յիշողութեամբ արձանագրուած այս վաստաները, յուսամ, որոշ պատկեր կը տան: Հայաստանը անտեսապէս վերածնում էր: Հայ գիւղացու ղէմքին ժպիտ էր երեւում: Հայ ժողովուրդը սկսում էր կուշտ հաց ուտել:

Յիշում եմ, 1920 թ. Ապրիլին, ես գնացել էի Էջմիածին, ինչ որ մի գործով: Այցելեցի եւ Գէորգ Ե. Կաթողիկոսին:

— Հէր օրհնած, ասաց նա, դուք մեզ քանդում էք:

Ակնարկում էր Էջմիածնի գիւղերի գրաւմանը:

— Վեհափա՛ռ, պատասխանեցի ես, ձեզ բաւական հող թողնուեց, որ չքանդուէք: Վանքի մխիթարութիւնը պէտք է աշխատի, մշակէ այդ հողերը, Էջմիածինը կ՚ապրի ու կը զարգանայ:

Կաթողիկոսը, քթի տակ, ինչ որ մի բան ասաց. գոհ չէր երեւում իմ պատասխանից:

Յետոյ եկան բոլշեւիկները, եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը դարձաւ «ընկե՛ր կաթողիկոս»: Նորեկները գրաւեցին ոչ միայն գիւղերը, այլ ամէն բան, որ ունէր Էջմիածինը: Սոխակին, որ Էջմիածնի օրացոյցը հրատարակում նոր ուղղագրութեամբ. օ–ի տեղ՝ ո գնելով. Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր տիտղոսների վրայ աւելացրեց «վշտալի» բառը:

Վերջացնելուց առաջ, այստեղ առաջ բերեմ ժողովուրդին ուղղած հետեւեալ երկու թուղթերը.

## ԿՈՉ ՀԱՑ ՀՈՂԱԳՈՐԾՆԵՐՈՒՆ

### Ա.

*Քաղաքացինե՛ր,*

Հայաստանն այսօր ապրում է դիւանագիտական Ամերիկայի հացով:



ARAM webaram.com

Ամերիկայի դեսպանը ներկայացուցիչ պիտի Հասքէլը Հայաստանի կառավարութեան հեռագրել է ամերիկեան կառավարութեան պաշտօնական որոշումը, թէ Օդոստոսից սկսած Հայաստանին այլեւս ալիւր ուղարկելու չէ:

Մինչեւ յեղափոխութիւնն՝ Հայաստանի հացի խոշոր մասը գալիս էր Ռուսաստանից, այժմ մեր հացը ստանում ենք Ամերիկայից: Օդոստոս ամսից սկսած ո՛չ Ռուսաստանից հաց կ՚ունենանք, ո՛չ Ամերիկայից:

Հայաստանը պէտք է անփոյթ հացով բաւականանայ:

Այս նշանակում է, որ Հայաստանում պէտք է այնքան հացահատիկ ցանուի, որ դրսի ալիւրին կարիք չլինի: Այս նշանակում է, որ Հայաստանի մշակելի հողերը չպէտք է խոպան թողնուեն:

Քաղաքացինե՛ր, ձեր ապագան ձեր ձեռքին է, այժմ միայն ձեզանից է կախուած՝ ա՞ւ պիտի լինի եկող տարի Հայաստանում, թէ առատութիւն:

Կառավարութիւնն իր կողմից ամէն հնարաւոր միջոց գործ է դնում ժողովուրդին աւերմայու եւ լծկան տալու համար: Ինչ որ հնարաւոր է արւում է: Բայց չպէտք է մոռնաք որ միայն կառավարական ուժերը բաւական չեն մեծ կարիքին գոհացում տալու համար, հասարակութիւնն ինքը պէտք է աշխատէ: Աւերմանման գործը պէտք է դառնայ համաժողովրդական գործ:

Ինչպէս պատերազմի ժամանակ իւրաքանչիւր քաղաքացի ոտքի է ելնում պաշտպանելու համար իր կեանքն ու հայրենիքի ապահովութիւնը, այնպէս ալ այսօր ամէն անհատ պարտաւոր է ցանել ինչ որ կարող է: Դրանից է կախուած մեր փրկութիւնը:

Ցանեցէ՛ք հացահատիկներ:

Ցանեցէ՛ք բանջարանոցային բոյսեր:

Ցանեցէ՛ք բամպակ:

Ցանեցէ՛ք ինչ որ կարող էք: Շատ ցանեցէ՛ք:

Գիւղատնտեսական եւ պետական գոյքերի նախարար՝

Ս. ՎՐԱՑԵԱՆ

## Բ.

Քաղաքացինե՛ր,

Գիտէք արդէն որ պարլամէնտը վերցրել է 1920 թ. բերքից սկսած բամպակի մենաշնորհի օրէնքը:

Գիտէք նաեւ Հայաստանի հարստութեան գլխաւոր աղբիւրնե-



ARAM webaram.com

*բից մէկն էլ բամպակն է: Արտասահմանից մեզ համար կենսական անհրաժեշտութիւն ունեցող ապրանքներ բերելու եւ մեր դրամի արժէքը բարձրացնելու համար անհրաժեշտ է շատ բամպակ ցանել:*

*Ինչքան շատ բամպակ ունենաք, այնքան մեր ապրուստը աժան կը լինի: Բամպակը Հայաստանի համար հացի չափ կարեւոր է:*

*Հայ, երկրագործական մեքենաներ ու գործիքներ, կօշիկ, մանիֆակտուրա, դեղօրայք, շաքար, վագօններ, աւտոմօպիլ, ամէն բան կ'ունենաք, եթէ ունենաք բամպակ:*

*Այս դիտակցութեամբ է, որ կառավարութիւնը որոշել է ամէն կերպ օժանդակել բամպակ ցանողներին:*

*Օժանդակել սերմնացուով, դրամով եւ, ըստ կարելւոյն ալիւրով:*

*Կառավարութիւնը առ այժմ յատկացրել է տասը միլիոն բուբլի բամպակագործին օգնելու նպատակով:*

*Գիւղատնտեսութեան եւ պետական գոյքերի նախարարութիւնը մշակել է հետեւեալ պայմանները.—*

*1· Բամպակ ցանողներին տրւում է կառավարութեան օժանդակութիւն սերմնացուով, ալիւրով, դրամով:*

*2· Սերմնացուն վերադարձւում է սերմնացուով:*

*3· Իւրաքանչիւր դեսեատինին տրւում է 25,000 բուբլի, եւ քաղհանից սկսած, մշակներին ալիւր:*

*4· Դրամի եւ ալիւրի փոխարժէքը վերադարձւում է մինչեւ 1921 թ· Փետր·1–ը դրամով կամ, փոխադարձ համաձայնութեամբ բամպակով:*

*5· Բամպակի վաճառքը Հայաստանի ներքին շուկայում ազատ է, արտահանութիւնը կատարւում է անպայման ապրանքափոխանակութեան սկզբունքով:*

*6· Օժանդակութիւն տրւում է թէ՛ համայնքներին, թէ՛ կենսութիւններին եւ թէ անհատներին:*

*7· Դրամական օժանդակութեան մի մասը կարող է տրուել ցանելուց առաջ, միւս մասը յետոյ:*

*8· Օժանդակութիւն տրւում է անմիջապէս նախարարութիւնից, եւ գաւառական ու քաղաքային ինքնավարութիւններէ, կամ որտեղ կայ, մանր վարկի ընկերութիւններէ միջոցով:*

*9· Դրամ եւ ալիւր առացողը պարտաւոր երաշխաւորութիւն է տալիս, որ առացածը կը գործադրի իր նպատակին, եւ առացածի համար պատասխանատու է իր ամբողջ ունեցուածքով ինչպէս նաեւ իր ունեցած ցանքի բերքով:*



ARAM webaram.com

10· Օժանդակութիւն առանալու համար պէտք է ներկայացնել երաշխաւորութիւն գեմստուօ վարչութիւնից, կամ դիւղառնտեսական նախարարութեան ներկայացուցիչից: Անհատ առագողները այս բոլոր երաշխաւորութիւնների փոխարէն կարող են գրաւ դնել իրենց առագուածքը համապատասխան նուտարիալ թուղթ ներկայացնելով:

11· Ալիւր եւ գրամի երկրորդ մասը առանալու համար պէտք է ներկայացնել յօդ· 10-ում յիշուած հիմնարկութիւններից վկայական, թէ այս ինչ տեղ եւ այսքան դեսեատին բամպակ ցանած ունի:

12· Օժանդակութիւն առագողը եւ վերի պայմանները չկատարողը կ'ենթարկուի օրինական պատասխանատուութեան:

Քաղաքացինե՛ր,

Նախարարութիւնս լսած ամենայնի ընդառաջ է գնացել բամպակ ցանողների եւ իր կապմած պայմաններով տալիս է ամէն դիւրութիւն: Մնում է, որ դուք, իբրեւ գիտակից քաղաքացիներ, թէ՛ սեփական եւ թէ պետական շահը աչքի առաջ ունենալով շատ ցանէք:

Որքան շատ բամպակ ցանէք այս տարի, այնքան կուշտ եւ հարուստ կը լինէք դուք եւ այնքան հարուստ կը լինի պետութիւնը:

Գիւղատնտեսական եւ պետական գոյքերի նախարար՝

Ս· ՎՐԱՑԵԱՆ



ARAM webaram.com

# ԿՕԱԼԻՑԻԱՅԻ ԼՈՒԾՈՒՄԸ ԵՒ ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

*Կօալիցիայի կազմութիւնը, որի հետ այնքան յոյսեր կապուած էին Հայաստանում՝ չդուժեց Քաջազնունիի կառավարութիւնը ակտուելիզմից: Ինչպէս ասել եմ արդէն, Թիֆլիսի բուրժուաների վախկոտ մարմինները չհաշտուեցին Երեւանի ցուրտի եւ ոջիլների հետ: Նրանց աչքը դուրսն էր՝ Թիֆլիս կամ Փարիզ, որտեղից Մ. Պապաջանեանը չափազանցուած տեղեկութիւններ էր հաղորդում Պօղոս Նուպարի եւ իւրայիններին դործունէութեան մասին: Փարիզում դումարուել էր, այսպէս կոչուած, Ազգային ժողովը, մեծ մասամբ ապրիլեան ձորից հաւաքուած եւ Հայաստանի իրականութեան անհաղորդ պատգամաւորներով, որին Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութիւնը մանակցել էր խորհրդակցական ձայնով: Այդ Ազգային համագումարը մշակել էր Խաղաղութեան վեհաժողովին ներկայացուելիք հայկական բաղձանքները՝ Ծովից—ծով Հայաստանի սահմաններով: Կազմել էր յանձնախումբեր՝ մշակելու համար Հայաստանի Սահմանադրութիւնը եւ լուծելու վարչական, տնտեսական եւ այլ խնդիրներ: Ազգային համագումարի կողմից ընդունուած հայկական բաղձանքները խաղաղութեան ժողովին պէտք է ներկայացուէին երկու պատուիրակութիւններու անունով՝ Ազգային պատուիրակութեան (այդպէս վերակոչուեց Նուպար փաշայի պատուիրակութիւնը) եւ Հ. Հանրապետութեան պատուիրակութեան անունով: Սահարոնեանը տեղի էր տուել Ազգային համագումարի մեծամասնութեան առջեւ, հակառակ Հայաստանի Խորհուրդին տուած խոստում-*


ARAM webaram.com

ներին: Պապաջանեանը, որ Հայաստանի Խորհուրդի կողմից Հայաստանի պատուիրակութեան անդամ էր նշանակուած, անցել էր Պ. Նուպարի կողմը: Եւ իր նոր դիրքաւորման համեմատ լուսաբանում էր Թիֆլիսի ժողովրդականների մտքերը:

Փարիզի դէպքերը անդրադարձում ունեցան եւ Հայաստանում: Այդ ժամանակ, Հայաստանի արեւմտահայերին յուզում էին Թրքահայաստանի հարցերը: Փաստօրէն նրանք դեռ չէին դադարում իրենց՝ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիները: Նրանցից շատերի զրպանում դեռ մնում էր թրքական անցագիրը: Շատերը չէին հաշտւում պետութեան հարկ վճարելու, զինուոր տալու եւ քաղաքացիական ուրիշ պարտականութիւններ կատարելու հետ: Երեւանի կառավարութիւնը, առհասարակ, Ազգային Հանրապետութեան կառավարութիւն էր նրանց համար: Հայաստանում պահւում էին Թրքահայաստանում գոյութիւն ունեցող բոլոր կազմակերպութիւնները եւ թերթերը:

Որոշ չափով, Փարիզից հասնող լուրերի վրայ, Հայաստանում էլ համագումարի պահանջ դրացուեց, եւ 1919 թ. Փետր. 6—13-ին, Երեւանում տեղի ունեցաւ Արեւմտահայերի երկրորդ համագումարը: Առաջինը գումարուել էր նոյնպէս Երեւանում, Հայաստանի անկախութիւնից առաջ, Ռոստոմի եւ Անդրանիկի մասնակցութեամբ:

Հ. Յ. Դ. Բիւրոյի կողմից ինձ էր յանձնարարուած մասնակցելու Արեւմտահայ երկրորդ համագումարին եւ, առհասարակ, հետեւելու արեւմտահայոց գործերին: Ես ներկայ դտնուեցի Համագումարի բոլոր նիստերին եւ մասնակից եղայ, համագումարից առաջ եւ յետոյ, բոլոր ժողովներին եւ կատարուած գործերին: Մի տեսակ միջնորդ էի արեւմտահայութեան, կառավարութեան եւ կուսակցութեան միջեւ: Կառավարութիւնը առանձնել էր համագումարի բոլոր ծախսերը: Համագումարի օրակարգն էր.

1.— Արեւմտեան Հայաստանի դաղթական հայութեան քաղաքական նպատակները եւ ձեւակերպումն ու արտայայտութիւնը:

2.— Արեւմտեան Հայաստանի դաղթական հայութեան ներդաղթի խնդիրը եւ կազմակերպութիւնը:

3.— Արեւմտեան Հայաստանի դաղթական հայութեան ներկայացուցչական եւ հաշուետուական մարմնի ընտրութիւնը:

Համագումարի հանդիսաւոր բացումը տեղի ունեցաւ Փետր. 6-ին, Հայաստանի Խորհրդի սրահում, ի ներկայութեան 35 պատգամաւորների, եւ ժողովրդի խուռն բազմութեան: Ամենայն Հայոց Կաթողիկոսը դրկել էր օրհնութեան կոնդակ եւ իր կողմից ներկայա-



ARAM webaram.com



ՓԱՐԻԶԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԽՄԲԱՆԿԱՐԸ



ARAM webaram.com

ցուցիչ՝ Գէորգ Եպս. Չէօրէքճեանին: Կառավարութեան կողմից ողջոյնի ճառ խօսեց վարչապետ Յ. Քաջազնունին: Հայաստանի Հարհըրդի կողմից ինձ էր յանձնուած համագումարը ողջունելը:

Համագումարին մասնակցելու հրաւիրուած էր եւ Անդրանիկը, բայց նա մերժել էր դալ՝ պրուար պատասխանելով հետեւեալը. «Մտածելով, որ չեմ կրնար այդ համագումարին մասնակցելովս օգտակար դառնալ եւ թեթեւացնել ձեր աշխատանքները, ուստի հրաժարւում եմ ներկայ լինել այդ համագումարին»: Անդրանիկը արհամարհանք էր ցոյց տալիս դէպի ամէն բան, որ կապ ունէր «թուրքերի ձեռքով ստեղծուած» հանրապետութեան հետ:

Համագումարը անցաւ խաղաղ եւ համերաշխ: Բուռն վէճեր տեղի ունեցան միայն քաղաքական հարցի քննութեան մէջոգին: Ի վերջոյ ընդունուեց հետեւեալ բանաձեւը.

«Արեւմտահայ երկրորդ համագումարը՝ քննելով հայ ժողովրդի ներկայ կացութիւնը՝

1. Արտօնին կ՚ողջունէ եւ կը յայտարարէ Ազատ եւ Միացեալ Հայաստանի անկախութիւնը:

2. Լիակատար վստահութիւն կը յայտնէ Ազատ եւ Միացեալ Հայաստանի Պօղոս Նուպար Փաշայի անդրանիկ դահլիճին:

3. Կը յայտարարէ իր վճռական որոշումն ու կամքը՝ ունենալ քաղաքական եւ պետական մէկ մխութիւն՝ համապետային հաստատութիւնների եւ երկրամասերու մխաւորութեամբ:

4. Կը պարտադրէ ընտրուած «Գործադիր Մարմին»ին՝ նախարարական դահլիճին հետ անմիջական յարաբերութեան մէջ մտնել՝ իրականացնելու եւ գործնականացնելու քաղաքական եւ պետական այն բոլոր աշխատանքները, որոնք հարկաւոր են Ազատ եւ Միացեալ Հայաստանի պետական գոյութիւնը հիմնաւորելու համար:

5. Միաժամանակ կը պարտադրէ ընտրուած Գործադիր Մարմնին՝ գործնական քայլեր առնել Արտաքին հանրապետութեան նախարարութեան եւ խորհրդարանի հետ Միացեալ Ազատ Հայաստանի անկախութիւնը յայտարարելու եւ իր մասնակցութիւնը բերելու գոյութիւն ունեցող պետական եւ օրէնսդրական հաստատութիւններու մէջ համապետային միութիւնը իրականացնելու համար:

6. Կը պահանջէ Ազատ եւ Միացեալ Հայաստանի պետական գոյութեան երաշխաւորումը՝ դաշնակից պետութիւններու քաղաքական, տնտեսական եւ ռազմական օժանդակութեամբ եւ աջակցութեամբ:

7. Կը պահանջէ հայկական մեծ եղեռնի հեղինակ եւ պատաս-



ARAM webaram.com

խանաուս ճիւղերուն՝ Վիլհէլմի, Էնվէրի, Թալէաթի, Ճէմալի, Նայըմի, Պէհաէտտին Շաքիրի եւ ընկերք նահանգապետներու, կառավարիչներու եւ բոլոր զինակալներու պինդ հրամանով պատժուիլը:

8. Կը պահանջէ հայ ժողովրդի վնասներու ամբողջական հատուցումը՝ ի հաշիւ Օսմանեան կառավարութեան:»

Եւ, ի վերջոյ, արտաքնապէս խաղաղ եւ համերաշխ մթնոլորտում, ընտրեց Հայաստանի սահմաններում ապրող արեւմտահայոց Գործադիր Մարմինը՝ հետեւեալ կազմով.

Գրիգոր Բուլղարացի, Սմբատ Բորոյեան, Վարդգէս Տէրոյեան, Յակոբոսեան Պոնապարթեան, Վահան Քրմոյեան, Արմէն Սաւունի, Ռուբէն Դրամբեան, Վաղարշակ Յոխիկեան և Արսէն Կիւռուբ, որ առաջ հնչակեան ծանօթ գործիչ եւ այժմ դարձել էր դաշնակցական:(*)

Թէ՛ քաղաքական բանաձեւը եւ թէ՛ Գործադիր Մարմնի կազմը ցոյց էին տալիս, որ դեռ շատ քաշելիք ունէինք. Թրքահայութիւնը դիւրութեամբ պիտի չհաշտուէր Արարատեան հանրապետութեան հետ:

Համագումարից յետոյ, բանակցութիւնները նորընծաի Գործադիր Մարմնի եւ Հայաստանի կառավարութեան միջեւ հետեւեալ կերպով վերջացան. Մայիս 28–ի օրը տեղի պիտի ունենար Հայաստանի արեւելահայ եւ արեւմտահայ հատուածների միութեան յայտարարութիւնը՝ 12 արեւմտահայ անդամներ մտցնելով Հայաստանի Ժողովրդի կազմի մէջ: Կառավարութեան մէջ պիտի ընդունուէին արեւմտահայ անդամներ եւ արեւմտահայ քաղաքական կազմակերպութիւնները Հայաստանի սահմաններում՝ վերջ պիտի դնէին: Կառավարութիւնը յանձն էր առնում հոգալ այս գործի համար անհրաժեշտ ծախսը:

Եւ իսկապէս, Մայիս 28–ին, մեծ ամբոխութեամբ, ի ներկայութեան Հայաստանի Ժողովրդի օթեակներում բազմած Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ օտար դիւանագիտական ներկայացուցիչների, կառավարութիւնը կարդաց Հայաստանի երկու հատուածների միացման եւ անկախութեան յայտարարութիւնը եւ Արեւմտահայ համագումարի որոշած 12 անձերը բարձրացան բեմ՝ լրացնելու համար Հայաստանի Ժողովրդի կազմը:

---

(*) Արեւմտեան Բ. Համագումարի մասին, տես իմ «Հայաստանի Հանրապետութիւն»ը, Բ. տպագրութիւն, էջ 254—265:

ARAM webaram.com

Ժողովրդական կուսակցութիւնը դէմ էր Հայաստանի կառավարութեան այս քայլին: Դէմ էր նաեւ կառավարութեան ներքին, մանաւանդ հողային քաղաքականութեան: Նրա հոդում աւելի մտերիմ էին Պօղոս Նուպարի Փարիզում կատարած գործերը: Ես աւելին ունեցայ ծանօթանալու Ժողովրդականների ընկերանի եւ Թիֆլիսի մէջեւ, ուղիղ հեռագրաթելով փոխանակուած հեռագիրներին: Ընկերանցի վաստատան, Հայաստանի Կարհրդի անդամ Գրիգոր Տէր Հաչատուրեանը բաւն կերպով բողոքում էր Թիֆլիսեցիների դէմ, որոնք կուսակցութիւնը տանում էին դէպի կօալիցիայի խղում: Կօալիցիան, ընկերանցիների կարծիքով, կենսական անհրաժեշտութիւն էր Հայաստանում: Թիֆլիսից յորդորում էին Տէր-Հաչատուրեանին ենթարկուելու կուսակցութեան որոշումներին:

Ի վերջոյ, կօալիցիան խղուեց: Ժողովրդականները դուրս եկան կառավարութեան կազմից եւ յետ առին պարլամենտական ընտրութիւնների թեկնածուների իրենց ցանկը: Այսպէս անվտանգ կերպով վերջացաւ Հ. Յ. Դաշնակցութեան եւ Հայ Ժողովրդական կուսակցութեան գործակցութիւնը:

Դեռ կօալիցիայի ժամանակաշրջանում գրուել էր Հայաստանի Կարհուրդը, երբեւ անպատուղ խօսարան: Կարհրդի նիստերը վերածուել էին թատերական ներկայացումների, ուր յաճախող ժողովուրդը լսում էր ընդդիմադիր պատգամաւորների անդուստ քննադատութիւնները կառավարութեան, յաճախ անհիմն եւ անարդար: Կարհրդում արտասանուած ճառերը, բերնէ բերան, տարածւում էին դուրսը եւ վրդովում ժողովրդի մտքերը:

Փետր. 28-ին, Հայաստանի Կարհրդում տեղի ունեցան առանձնապէս վրդովեցուցիչ քննադատութիւններ կառավարութեան դէմ: Սրահում ներկայ գտնուող ժողովուրդը, աշխատանքի նախարարութեան պաշտօնեայ Սաքօ Յակոբեանի եւ բժ. Արտաշէս Բաբալեանի առաջնորդութեամբ, յարձակուեց եւ դրաւեց բեմը եւ ցրեց պատգամաւորներին: Այսպիսով վերջ դրաւ Հայաստանի Կարհուրդը: Իսկապէս Սաքօ Յակոբեանը եւ բժ. Բաբալեանը չէին Փետր. 28-ի մէջադէպի հերոսները. յետեւը կային մարդիկ, ինչպէս Ռ. Տէր Մինասեանը, որոնք դժգոհ էին կօալիցիայից եւ Հայաստանի Կարհրդից:

Հայաստանի Կարհրդի գրումից յետոյ, կառավարութիւնը ուրիշից ընտրել Հայաստանի պարլամենտը: Հ. Յ. Դ. Բիւրօն ինձ յանձնարարեց կազմակերպել եւ վարել ընտրութիւնները: Դժուար հարց էր: Պէտք էր հաշուի առնել արեւելահայ եւ արեւմտահայ




ARAM webaram.com

ձգտումները, հանրապետութեան դաւանների առանձնայատուկ պայմանները, թեկնածուների երբեմն հակամարտ նախասիրութիւնները եւայլն:

Մարտ 12–ին, կառավարութիւնը ընդունել էր ընտրութիւնների օրէնքը: Հայաստանը պիտի կազմէր մէկ ընտրական չրջան: Կուսակցութիւնների կողմից թեկնածուներ պիտի առաջարկուէին համրոզչ երկրի համար եւ ուրիչ մանրամասնութիւններ:

Ես խորհրդակցութիւններ ունեցայ Հ. Յ. Դ. Բիւրոյի, կառավարութեան, դաւանների, արեւելեան եւ արեւմտեան հասուածների ներկայացուցիչների հետ եւ կազմեցի պարլամենտական ընտրութիւնների թեկնածուների հետեւեալ ցանկը.

Սահակեան Ալեքիք (Հայր Աբրահամ), Քալջաղնունի Յովհաննէս, Ահարոնեան Ալեխս, Փաստրմաճեան Գարեգին (Արմէն Գարօ), Վարանդեան Միքայէլ, Օհանջանեան Համօ, Տէր-Գաւթեան Յովսէփ, Գիւլխանդանեան Աբրահամ, Տէր-Մինասեան Ռուբէն, Ապրալեան Նիկոլ, Խաչատրեան Ալեքսանդր, Արզուքեան Յովսէփ (Խանասորի խչհանը), Խաչատրեան Սմբատ, Փափազեան Վահան (կոմս), Թաղէոսեան Լեւոն, Կանայեան Դրաստամատ (Դրօ), Արապատեան Սարգիս, Բարալեան Արտաշէս, Բարսեղեան Պերճուհի, Բուզպազեան Յարութիւն, Գրիգորեան Սերոբ, Եպրճեան Հայկ, Եոլեան Զաքար, Թէմուրեան Եուսուֆ (Եղիպի), Թորոսեան Սահակ, Խաւիսեան Գէորգ, Խորէնի Վահան, Ղազազեան Կորիւն, Մանուկեան Հմայեակ, Մաքսապետեան Արմենակ, Յովհաննիսեան Աբշակ, Յարութիւնեան Մարտիրոս, Նալչաջեան Արամ, Նաւասարդեան Վահան, Շանթ Լեւոն, Շիրինեան Աբշակ, Պետրոսեան Լեւոն, Ջամալեան Աբշակ, Սահակեան Վասիլաւէ, Սասունի Կարօ, Սարգսեան Եփրեմ, Սեպուհ, Տէր-Միքայէլեան Յովհաննէս, Տէր-



Ա. ԽԱՏԻՍԵԱՆ



ARAM webaram.com

Յակոբեան Յակոբ, Տիգրանեան Սիրական, Վրացեան Սիմոն, Վարշամեան Գէորգ, Մանասեան Սարգիս, Քաչքեսունի Ռուբէն, Օհանջանեան Աւետիս, Ֆէրիդ Ճէմիլ (Տիգրան Ծամհուր), Տէրտէրեան Համբարձում, Սրեղեան Արտաշէս, Տէր-Յարութիւնեան Գեղամ, Բարայեան Վարոս, Յովհէփեան Արտաշէս (Մալխաս), Ղազարեան Աբրահամ, Քեալաչեան Գառնիկ, Տէր-Թորոսեան Վարդան, Նազարեան Արտաշէս, Աւագեան Ներսէս(*):

Յանկի դլուխը դրուած էին ականաւոր ընկերների անունները: Ոմանց մէջ այդ հանդամանքը դժգոհութիւն առաջ բերեց. կարիք չկար նման բանի: Վերջը ես էլ անդրադարձայ այդ պարապային, երբ Սիրական Տիգրանեանի աչքերում նկատեցի վշտի առուեր. նրա անունն էլ պէտք է դրուէր յանկի առաջին մասում: Մինչեւ այսօր էլ այդ սխալը ատելանում է ինձ:



Պ. ԲԱՐՍԵՂԵԱՆ

Յանկից դժգոհներ քիչ չէին եւ նրանց մէջ, որոնք իրենց էլ արժանի էին համարում պարլամենտի անդամութեան. ինչո՞ւ, օրինակի համար, մի ոմն Ներսէս Աւագեան պիտի դառնար պարլամենտի անդամ եւ ինքը անտեսուէր: Հողեբանութիւնը այնպէս էր, որ եթէ ամբողջ ազգը պարլամենտի թեկնածուների յանկի մէջ դրուէր, նորէն դժգոհներ պիտի դանուէին:

Մեր ձգտումն էր նորընտիր պարլամենտին տալ համապատկերային բնոյթ: Ուզում էինք, որ ամէն հոսանք, մանր թէ խոշոր, ներկայացուած լինէր Հայաստանի օրէնսդիր ժողովում, բայց այդ անհնար եղաւ: Նախ՝ որովհետեւ Դաշնակցութիւնը այնքան տիրական էր հայ ժողովրդու հոգում, որ ամէն մարդ իր քուէն պիտի տար Դաշնակցութեան: Երկրորդ՝ Հայ ժողովրդական կուսակցութիւնը բոլքոտ էր յայտարարել պարլամենտական ընտրութիւնների դէմ: Մեւս հոսանքները աննշան էին Հայաստանում — փոքրաթիւ սոցիալիստ յեղափոխականներ, որոնք մասնակցում էին պարլամենտական ընտրու-

(*) Տե՛ս իմ «Հին թղթեր նոր պատմութեան համար» հատորը, էջ՝ 294:



ARAM webaram.com

թեան, նոյնպէս փոքրաթիւ Սոցիալիստ-դեմոկրատները, որոնք, ժողովրդականներէն պէտ չէին մասնակցում պարլամենտի ընտրութեան, հնչակեաններ համարեա գոյութիւն չունէին Հայաստանում: Ցանկ էր ներկայացրել եւ, այսպէս կոչուած, դիւղացիական Միութիւնը, որ կազմել էր դաշնակցութիւնից հեռացած Արտաշէս Մելքոնեանը (Բրինտար), իր ընտրութիւնը յաջողցնելու համար: Մելքոնեանի յետեւը կեցած էին բոլշեւիկեան տարրեր:



Ա. ԽՈՆԴԿԱՐԵԱՆ

Պարլամենտական ընտրութիւնները տեղի ունեցան Յունիս 21—23-ին, բացի Կարսի եւ Շարուր-Նախիջեւանի շրջաններից՝ Հայաստանի բոլոր վայրերում, ընդհանուր առմամբ խաղաղ եւ կարգապահ մթնոլորտում: Ընտրողների ընդհանուր թիւը 365·780 հոգի էր: Ընտրուեցին 80 պատգամաւորներ:

Հ. Յ. Դաշնակցութիւնը՝ 72, Սոց—Յեղափոխականները՝ 4, Թուրք-Թաթարները՝ 3, Գիւղացիական Միութիւնը՝ 1:

Նորընտիր պարլամենտի բացումը տեղի ունեցաւ Օգոստ. 1-ին:

Այստեղ առաջ բերեմ Ամերիկա մեկնող Յ. Քաջազնունիի ձեռքով՝ Ամէն Գաբոյին իմ Մայիս 18-ի նամակը, որ պատկերացնում էր Հայաստանում տիրող մթնոլորտը՝ պարլամենտական ընտրութիւնների օրերին:

«Ընկ. Քաջազնունին կը պատմէ այստեղի դրութեան մասին. ես կամենում եմ մի քանի տողով նկարագրել մեր ներքին կեանքը եւ կուսակցական վիճակը:

Որքան էլ ծանր եւ աննպաստ լինեն պայմանները — ասլ, աւելը, համաճարակ, զրկանութիւն եւայլն — բայց եւ այնպէս Հայաստանի պետական մեքենան հետզհետէ բարեկարգւում է, եւ մեր կուսակցութիւնը լարում է իր բոլոր ուժերը կեանքի պահանջներին համապատասխանելու համար: Արեւելեան եւ Հայաստանի Բիւրօները միացել են եւ գործունէութիւնը կենտրոնացրել Երեւա-



ARAM webaram.com

նում: Այստեղ են Ռուբէնը, Ջամալեանը, Գիւլխանդանեանը, եւ (Բիւրոյի անդամներ). չուտով պիտի գան թժ. Տէր Դաւթեանը, Գէորգը, Կորիւնը: Մեր աշխատանքը տանում ենք երկու ուղղութեամբ. նախ՝ ամրացնել մեր պետութեան հիմքերը եւ երկրորդ՝ հաւաքել եւ ամրացնել կուսակցութեան ուժերը: Մի քանի օր առաջ տեղի ունեցաւ Հայաստանի Ռայոնական ժողով եւ բոլոր կենտ. Կոմիտէների կոնֆէրանս: Հիմա տեղի է ունենում Երկրի Մարմինների չրջանային ժողովը: Կայ կեանք եւ կենդանութիւն եւ, ընդհանուր առմամբ, նաեւ համերաչխութիւն: Մեր աւագ ընկերների բացակայութիւնը սակայն, չատ է նկատելի: Նախապատրաստւում ենք Ընդհ. ժողովի, որ լինելու է Օգոստ. 15–ին Երեւանում: Վարում ենք պարլամենտական ընտրութիւնների պայքարը. մեր ընտրական ցուցակը՝ թիւ 1 լայն ժողովրդականութիւն է վայելում եւ վստահ ենք, որ 80 պատգամաւորներից առ նուազն 60 հոգի մերոնք կը լինեն: Ցուցակը կազմել ենք խառն՝ ռուսահայերից եւ տաճկահայերից. կան չատ ընկերներ եւ արտասահմանից, որոնց ցուցակը ներփակում եմ եւ խնդրում նրանց իմաց տալ, որ Յուլիսի 10–ին լինեն Երեւանում. պարլամենտը բացւում է Յուլիսի 15–ին: Կուսակցական պայքարը բաւական բուռն է, բայց մեր առաջնութիւնը ոչ մի կասկած չի վերցնում: Պետական ներքին դործունէութեան չատ է մնասում մեր կառավարութեան ցաւալի վիճակը. չունենալով ներկայ խորհրդարանում մեծամասնութիւն, մենք ստիպուած եղանք կօալիցիայի մէջ մտնել եւ հայ ժողովրդական կուսակցութեան հետ միասին կառավարութիւն կազմել. ներկայ ձեւով կօալիցիան կառավարութիւնը քաոսակուսի մի անիւ է, որ չի չարժւում. նոր պարլամենտի բացումով մենք պիտի ստեղծենք եւ նոր կառավարութիւն. եւ մի խումբ ընկերներ (Ռուբէն, Եա, Դրօ, ուրիշներ) մտածում ենք նոր եւ միասրտ կառավարութեան դլուխը դնել քեզ: Սա անհրաժեշտ է մի քանի տեսակէտից. նախ՝ պէտք է՝ դու ամենահամապատասխան մարդն ես, որի չուրջ կարելի կը լինի համախմբել մեր լաւագոյն ընկերներին: Երկրորդ՝ քո տաճկահայ լինելը պրատական է երկու հասուստծների տեսի սերտ միութեան: Երրորդ՝ կուսակցութեան մէջ քո դերը հնարաւորութիւն կը տայ չեզոքացնելու այն բոլոր ասէ—կոսէները, որոնք լինում են ուրիշների անուան չուրջ: Մի խօսքով՝ մենք պտնում ենք մեր ընտրուած պարլամենտից կազմուելիք կառավարութեան ամենայարմար դլուխը քեզ եւ չատ ենք խնդրում, որ մինչեւ Յուլիսի 10–ն անպատճառ լինես Երեւանում: Որքան էլ Եւրոպայում ներկայութիւնդ անհրաժեշտ համարես, այս-



ARAM webaram.com

տեղ քո դալն աւելի կարեւոր է, մանաւանդ հիմա, երբ չկան Ռոսոմը, Ագամը եւ ուրիշ անվիճելի հեղինակութիւն համարուող ընկերները: Ուրիշներ եւ ես առանձնապէս պնդում ենք ժամանակին այստեղ լինելուդ վրայ:

Հիմա մեր ամենամեծ մտահոգութիւնը դօրքին կազմակերպումն է. մենք ունենք 16—17 հազար զինուոր զէնքի տակ. պէտք է ասել, որ մեր զօրքը բաւական լաւ է. բայց հազուադի պակասը շատ է նեղում մեզ: 19—20 տարեկանները (ռուսահայերը) պարտադրապէս ենթակայ են զօրակոչի. չուտով նոյնը պէտք է լինի եւ տաճկահայերի վերաբերմամբ: Վերջիններից առ այժմ կազմուում են կամաւորական բաժանմունքներ ամսականով: Կազմակերպուած են արդէն երկու բաժանմունքներ. մէկի հրամանատարն է Տիգրան Բաղդասարեանը, միւսինը՝ Վահանը (Եղրայրդ): Վերջինս արդէն բաժանմունքի դլուխն անցած չարժուել է Սուրմալու. առողջութիւնը եւ տրամադրութիւնը շատ լաւ են եւ ոգեւորուած աշխատում է. Ղարսի, Շաբուրի, Նախիջեւանի չրջաններն արդէն մեր ձեռքն են. զաղթական ժողովուրդը վերադառնում է, Թուրքերն ամէն տեղ յայտնում են իրենց հպատակութիւնը: Օրերի խնդիր է, որ սահմանն էլ անցնինք դէպի Էրզրում, Ալաշկերտ եւայլն: Եթէ սովը մի քիչ աւելի թոյլ լինէր, ի հարկէ, ժողովուրդի տրամադրութիւնն աւելի բարձր կը լինէր, բայց հիմա էլ բաւական լաւ է: Հացի նեղութիւնը, սակայն, շատ մեծ է. սովամահութեան դէպքերը երթալով աւելանում են: Դրսից հաց քիչ է դալիս. վրաստանը չարունակում է ամէն տեսակ արդելքներ յարուցանել մեզ ուղարկուող պաշարների առջեւ: Նոր ցանքերն էլ անբաւարար են. եթէ ժամանակին դրսից օդնութիւն չհասնի, եկող տարի էլ սովը անխուսափելի կը դառնայ»:(*)


Ուրեմն, Օգոստ. 1-ին բացուել նորընծաի պարլամենտը, հայ ժողովրդի ազատ քուէով ընտրուած խորհրդարանը: Դժուարին պայմաններում էր սկսում նա իր գործունէութիւնը, բայց լաւիններն աւում են. «Յարատեւ եւ երկար աշխատանքը ամէն դժուարութեանց կը յաղթէ»: Դժուարութեանց մեծագոյն մասը ծանրացած էր Դաշնակցութեան վրայ, որի պատգամաւորները ճնշիչ մեծամասնութիւն էին կազմում պարլամենտում: Դաշնակցական Ֆրակցիայի նախապատրաստական նիստերում, մշակուեցին այն կանոնները, որոնցով պարլամենտը պիտի դեկավարուէր, յարաբերութիւնների

(*) Տե՛ս իմ «Հին թղթեր նոր պատմութեան համար», էջ 294—296:



ARAM webaram.com

մէջ՝ կուսակցութեան եւ կառավարութեան հետ: Ֆրակցիան պիտի նշանակէր վարչապետ, որ պիտի կազմէր կառավարութիւն եւ պիտի դրծէր պարլամենտի հակակշռին ներքեւ, պատասխանատու՝ դաշնակցական Ֆրակցիայի առջեւ: Ֆրակցիան պիտի վերահսկէր կուսակցութեան Բարձրագոյն Մարմնի հրահանգներով:



Վ. ՄԻՆԱԽՈՐԵԱՆ

Դաշնակցական Ֆրակցիայի վերահսկութեան համար ընտրուեց հետեւեալ մի Մարմին՝ Ա. Ջամալեան, Վ. Խորէնի եւ Ս. Վրացեան:

Բ. Նիստում՝ կազմուեց պարլամենտի նախագահութիւնը: Փարիզից ստացուած դիմումի վրայ՝ պարլամենտի անուանական նախագահ նշանակուեց Ա. Ահարոնեանը: Իսկական նախագահներ ընտրուեցին Լ. Շանթը եւ Ս. Ազարեանը: Վերջը, Ազարեանի հրաժարումով, նախագահութեան կազմի մէջ մտաւ Ա. Սահակեանը: Աւագ քարտուղար ընտրուեց Ց. Տէր Ցակոբեանը (Ց. Իրաւիկ):

Դ. նիստում՝ Օգոստ. 10ին, պարլամենտը հաստատեց Ա. Խատիսեանի դահլիճը: Ես այդ կառավարութեան կազմի մէջ մնացի Դիւզգաոնեութեան, Պետական գոյքերի եւ Աշխատանքի նախարարի պաշտօնում: Հայաստանի պարլամենտի եւ Խատիսեանի դահլիճին եւ ապա Բիւրօ կառավարութեան մեծ դեր էր վերապահուած մեր արդի պատմութեան մէջ:

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

Աշխատանքը պարլամենտի, կառավարութեան եւ կուսակցութեան մէջ, կարելի է ասել, խլում էին իմ ամբողջ ժամանակը: Ուրիշ գործի հնարաւորութիւն չէր մնում: Հ. Ց. Դ. Բիւրոյին պատ-



ARAM webaram.com

ղեկնում էր Հայաստանում կենտրոնական պաշտօնաթերթի ունենալու հարցը: Այդ օրերին Երեւանում լոյս էր տեսնում Մրպատ անի կեանք. կոմիտէի թերթը: Կուսակցական մամուլը, «Հոբիդոն», «Աշխատաւոր», դեռ մնում էին Թիֆլիսում: Բիւրոյի որոշումով ինձ յանձնուեց Երեւանում կուսակցական պաշտօնաթերթի մեծ լրագրի հիմնադրութեան պարտականութիւնը: Թերթը պիտի կրէր «Յառաջ» անունը՝ Ռուսաստանի 1905 թուականի յեղափոխութիւնից յետոյ Թիֆլիսում լոյս տեսնող «Յառաջ»ի հետեւողութեամբ:

Մամուլը իմ հոգուն օտար չէր: Ես սիրում էի քաղաքական աշխատանքը եւ, ի հարկէ, սիրով ընդունեցի այդ պարտականութիւնը: Ես կազմեցի խմբագրութիւնը հետեւեալ կազմով.— Արշակ Յովհաննէսեանը՝ Բաղուից, Արշակ Մեհրապեանը՝ Թիֆլիսի «Հոբիդոն»ի նախկին խմբագիրներից: Լրաբերներ՝ Ալեքսէյ Բակունց, Նալբանեան կեանք. կոմիտէի անդամ, իմ ընկեր Հրանդ Սարաֆեանի եղբայրը եւ այլն: Աշխատակիցներ՝ ամբողջ դաշնակցական մտաւորականութիւնը: «Յառաջ»ը տպագրւում էր բոլշեւիկների հիմնած «Ուրարտիա» տպարանում:

«Յառաջ»ը մեր մամուլի մէջ դրաւեց առաջնակարգ տեղ: Օրը օրին լուրեր էր տալիս պարլամենտի եւ կառավարութեան գործունէութեան մասին, տեղեակ էր պահում արտասահմանի, Հայաստանի մայրաքաղաքի եւ գաւառների կեանքի մասին: Բիւրօն եւ կառավարութիւնը, ընդհանուր առմամբ, զոհ էին թերթի ուղղութիւնից: Մի անգամ միայն «Յառաջ»ը արժանացաւ խիստ քննադատութեան եւ զգուշացման՝ կառավարութեան եւ հանրային կարծիքի կողմից: Ձեմ յիշում ո՞ր համարում, ես գրել էի մի խմբագրական, «Հայաստանի մանդատ»ի մասին: Այդ յօդուածում ես յայտնում էի այն միտքը, որ ամերիկեան բիզնիսմէնները չեն համաձայնի ընդունել մի այն Հայաստանի մանդատը, որի համար ըստ Հարթմոդի պահանջման, հարիւր է 50 հազար պինուր պահել Հայաստանում եւ ահագին դումար յատկացնել ամերիկեան դանձարանից: Ես նախընտրելի էի համարում, որ ամերիկեան մանդատ պահանջուի ամբողջ Օսմանեան կայսրութեան համար, որ, ի հարկէ, աւելի հրապուրիչ էր: Այդ խմբագրականը լուրջ դժգոհութիւն էր առաջ բերել կառավարութեան եւ հասարակութեան մէջ: Բիւրօն յատուկ նիստ նշանակեց իմ խմբագրականի քննութեան համար: Ես հանդամանօրէն պարզեցի իմ համոզումը Հայաստանի մանդատի մասին եւ այսօր էլ նոյն կարծիքի եմ. Ամերիկան չէր կարող ընդունել միայն Հայաստանի մանդատը: Յամենայն դէպս, Բիւրօն ինձ խիստ նկատողութիւն արաւ: Այնուհետեւ


ARAM webaram.com

նման դէպքեր չպատահեցին:

Ես «Ցառաջ»ի խմբագրութիւնը վարեցի մինչեւ 1920 թ. աշունը, երբ պարտաւորուեցի մեկնիլ ռազմաճակատ, Ղարսի շրջանը: Ինձ յաջորդեցին «Ցառաջ»ի խմբագրութեան մէջ Ա. Զիլինգարեանը, (Ռուբէն Դարբինեան) եւ Մ. Օզանեանը: Ա. Զիլինգարեանը, առարկայական դէպքերի պատճառութեան տակ, դրեց մի շարք թրքանպաստ յօդուածներ, որոնք վերապրուեցին ինձ եւ որոնց համար մինչեւ այժմ էլ խաչում են ինձ: Բոլշեւիկների դէմ էլ Զիլինգարեանը անհաշտ եւ կծու լեզու էր բանեցնում, որից ես խուսափում էի «Ցառաջ»ում: Դրա համար էլ պատասխանատու էի ես:



ՌՈՒԲԷՆ ԴԱՐԲԻՆԵԱՆ

Այս երեւոյթը անսովոր չէ մեր մամուլի իրականութեան. մէկը մի բան է դրում, պատասխանատուն ուրիշն է:

Այսպէս, տարիներ վերջը, էջմիածնի առաջարկով հրատարակային քննութեան առարկայ էր դարձել եկեղեցական բարենորոգումների հարցը: Գարեգին Եպս. Խաչատուրեանը, Ընծայեցի ծածկանունով, արեւելահայերէն մի յօդուած հրատարակեց «Վէմ» հանդէսում՝ խնդրելով ինձ չը հրապարակել իր անունը: Ընծայեցին, բոլշեւիկների դատակալ էր համարում էջմիածինը եւ առաջարկում էր էջմիածնից անկախ կազմակերպել ափիւռքի հայութիւնը:

Այս յօդուածը դրաւեց Ամերիկայի «Հայաստանասէրների» ուշադրութիւնը: Յօդուածի հեղինակութիւնը վերապրում էին Ամերիկայի նախկին Առաջնորդ՝ Տիրայր Եպիսկոպոսին: Բարեգործականը ստատնայ կարել Եպիսկոպոսին առած հոգեպահուստը: Գարեգին Եպիսկոպոսը մնաց լուռ. կարծես ինքը չէր պատճառը իր եղբայրակցին դժբախտութեան: Վերջը ես, աւելի ծանրակշիռ առիթով, հրապարակ հանեցի այս իրողութիւնը: «Ո՛վ դարք, ո՛վ բարք», պիտի ըսէր Օմանեանը:



ARAM webaram.com

Ցիշատակութեան արժանի է եւ Հայաստանի Հանրապետութեան դեղարուեստական առաջին ցուցահանդէսը 1919 թ. գարնան, որի կազմակերպութեան մէջ որոշ բաժին ունէի եւ ես: Նոր դիմնադիայի ընդարձակ սրահներում, Աբովեանի վրայ, ցուցադրուած էին հին եւ նոր նկարիչների ու քանդակագործների գործերը՝ մեծաքանակ որակով եւ քանակով: Վերնիսաժը խիստ փառաւոր էր: Ներկայ էր կառավարութեան կազմը, մայրաքաղաքի մտաւորականութեան ընտրանին, հայ եւ օտար բազմաթիւ այցելուներ: Կառավարութիւնը գնեց ցուցադրուած առարկաների՝ նկարների եւ արձանների կարեւոր մէկ մասը, իբրեւ Փոնտ՝ ապագայ Թանգարանի:

Ինձ էլ բաժին հասաւ այդ ցուցահանդէսից. երիտասարդ նկարիչ Սարգիս Երկանեանը ինձ նուիրեց մի նկար, որ երկար ժամանակ կախուած մնաց իմ աշխատանքի սենեակում՝ հիացում պատճառելով տեսնողներին: Մի խարտեաշ, դեղեցիկ դլխով եւ ճոխ կրծքով երիտասարդ կնոջ նկար էր այդ: Սարգիսը Տրապիզոնցի էր եւ ծովի գոյնի նման էին կնոջ աչքերը:

Ցիշենք նաեւ բարձրագոյն դասընթացքները, որոնց կազմակերպութեան հետ կապ ունէի ես: Բայց նախաձեռնող ոգին Երուանդ Ֆրանգեանն էր, գերմանական կրթութիւն ստացած յայտնի փիլիսոփայ: Իր յօդուածներից եւ դասախօսութիւններից մէկում՝ նա այսպէս էր բնորոշել փիլիսոփայութիւնը. «Փիլիսոփայութիւնը մի գիտութիւն է, որ զբաղւում է փիլիսոփայութեամբ: Փիլիսոփայութեան նպատակը՝ փիլիսոփայութիւնն է»: Եւ ամէնքը, Ֆրանգեանին հանդիպելիս, հեդնանքով ասում էին. «Ողջո՛յն փիլիսոփայութեան փիլիսոփային»:

Ֆրանգեանը եռանդով լծուել էր Բարձրագոյն դասընթացքների գործին: Ամէն երեկոյ, Գայեանեան վարժարանի չէնքում տեղի էին ունենում դասախօսութիւնները, որոնց սիրով յաճախում էր երիտասարդութիւնը: Դասախօսում էին, մեծ մասամբ, Գէորգեան ճեմարանի նախկին ուսուցիչները, ինչպէս եւ զբսից եկած մտաւորականները: Հայերէն լեզուն եւ հայ գրականութեան պատմութիւնը դասաւանդում էր Մանուկ Աբեղեանը, հայոց պատմութիւնը՝ Յակոբ Մանանդեանը, Սոցիոլոգիա եւ ընկերային դիտութիւններ՝ Ա. Ջամալեանը, Իրաւաբանութիւն՝ Ս. Տիգրանեանը, փիլիսոփայութիւնը՝ Ե. Ֆրանգեանը: Ես դասախօսում էի քաղաքաանտեսութիւն եւ քաղաքացիական ուսմունքի մասին: Պետրոգրատի համալսարանում եւ մանկավարժական ճեմարանում ձեռք բերած իմ ուսման պաշարը դեռ չէր ցնդել գլխից, եւ ուսանողները, մանչ թէ աղջիկ,


ARAM webaram.com

խուն բարմութեամբ ներկայ էին գոնուում իմ դասախօսութիւններին:

Բարձրագոյն դասընթացքը ցոյց էր տալիս, որ Երեւանի հայ երիտասարդութիւնը ծարաւի էր գիտութեան: Կենսական պահանջ էր դարձել բարձրագոյն վարժարանի հիմնադրութիւնը: Այդ հարցով զբաղուած էր եւ կառավարութիւնը:



ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼԵԱՆ

Հանրային կրթութեան նախարարութիւնը, ընդունել էր տուել պարլամենտական մի օրէնք՝ Հայաստանի պետական համալսարան հիմնելու մասին: Լուսաւորութեան նախարար Ն. Աղբալեանը կազմակերպել էր յատուկ յանձնախումբ, Փաթիլի ռուսական ազատ համալսարանի անուանի ուսուցչապետ Իւրիյ Զամբարեանի գլխաւորութեամբ, կազմակերպելու համար Հայաստանի համալսարանի հիմնադրութիւնը: Զամբարեանը խորհրդակցութեան էր հրաւիրել հայ եւ ռուս պետականաններին՝ մշակելու համար բացուելիք համալսարանի ծրագիրը: Զամբարեանի օգնականն էր բժ. Յ. Զաւրեանի եղբայրը՝ քիմիայի պրոֆէսոր Դաւիթ Զաւրեանը, որ դասախօսում էր Թիֆլիսի պոլիտեխնիկում: Զաւրեանը մեծ բնակարան ունէր Վերայի կամուրջի շրջանում եւ չատ մեծ զբաղարան: Երեւան փոխադրուելիս, որպէսզի վրացիները չկրաւեն իր զբաղարանը, երիտասարդ կինը մնաց Թիֆլիսում՝ պահելու համար զբաղարանը: Զաւրեանը, Երեւանում, սիրահարուեց իր աշակերտուհու վրայ եւ ամուսնացաւ հետը: Առաջին կինը փրկեց զբաղարանը, բայց կորցրեց ամուսնուն:

Զամբարեանը, Զաւրեանը եւ նրանց գործակիցները նախապատրաստեցին Հայաստանի անդրանիկ համալսարանի բացումը: Երեւանում յարմար չէնք չգտնուելու պատճառով, համալսարանը



ARAM webaram.com

առաջամասէն պիտի բացուէր Ալեքսանդրապոլում: Առաջին տարի՝ պիտի ունենար մէկ բաժանմունք, իրաւաբանական: Յաջորդ տարուանից պիտի գործէր լրիւ կազմով: Արձանագրուել էին շուրջ 400 ուսանող—ուսանողուհիներ: Պրոֆէսորական կազմի մէջ էին Մ. Աբեղեանը, Ս. Տիրքանեանը, Գաբրիէլեան եպ. Յովսէփեանը, Մեսրոպ Մաշխառոսը, որքան յիշում եմ, Յակոբ Մանանդեանը եւ ուրիշներ:

Հայաստանի համալսարանի բացումը տեղի ունեցաւ 1920 թ. Յունուար 31–ին՝ համաժողովրդական մեծ հանդիսաւորութեամբ: Երեւանից եւ Թիֆլիսից, յատուկ վագոններով եկել էին խորհրդարանի եւ կառավարութեան անդամները, օտար դիւանագիտական ներկայացուցիչները եւ բազմաթիւ հրաւիրեալներ: Բացման հանդէսի նկարագրութիւնը կարելի է կարդալ իմ «Հայաստանի Հանրապետութիւն» հատորում(*):

Հայաստանի համալսարանի բացումը, անկասկած, մեծ երեւոյթ էր նորածին պետութեան կեանքում: Յաջորդ տարուայ համար պատրաստուած էր նոր չէնք Երեւանում, կազմուած էր դասախօսների ցանկը, բազմաթիւ ուսանողներ էին արձանագրուած համալսարանի զանազան բաժինների համար, բայց պատերազմը եւ բոլշեւիկեան խորչակը իր ազդի մէջ խեղդեցին ամէն ինչ: Հայաստանի Յեղկոմը, 1921–ին, լուծուած յայտարարեց Հայաստանի համալսարանը եւ փոխարէնը հիմնեց բանուորական դպրոց—ֆաֆակ —, որ ծիծաղելի գործունէութիւն եւ անփառունակ վախճան ունեցաւ:

Ժամանակ այստեղ արձանագրել եւ Արմաշի աշակերտների դալը Հայաստան, պետագանտես—ուսուցիչ Կոպեռնիկ Թանտրճեանի գլխաւորութեամբ: Պոլսի Ազգային Մարմիններըը Հայաստան էին ուղարկել Արմաշի որբանոցի աշակերտութիւնը: Կ. Թանտրճեանն ներկայացաւ ինձ Գիւղատնտեսութեան նախարարութեան չէնքում եւ յայտնեց, որ պոլսահայ ազգայինների ցանկութիւնն է գիւղատնտեսական դպրոց դնել իր բերած տղաները: Իմ ցանկութիւնն էլ այդ էր. հիմնել օրինակելի գիւղատնտեսական վարժարան: Ես ուղարկեցի Արմաշի տղաներին Նոր–Բայազէդի շրջանը, Սեւանայ լճի մօտ: Սրանց տրամադրութեան տակ դրի յարմար մի չէնք եւ ընդարձակ հողամաս: Ապահովեցի նրանց նիւթականը: Կոպեռնիկը աշակերտների հետ Նոր–Բայազէդ մեկնեց ոգեւորուած: Ես էլ ուրախ էի. լաւ գործի հիմք էինք դնում:

Շուտով, սակայն, պայթեց փոթորիկը արմաշականների դէմ–

(*) Էջ՝ 361:



ARAM webaram.com 

խին: Հայաստանը խորհրդայնացաւ: Նորեկ Ցեղկոմը դիմեց վայրագութիւններուն: Առանձնապէս խիստ էր հալածանքը արեւմտահայերուն դէմ: Թանարճեանը հապճեպ կարողացաւ ճողոպրել եւ տղաներուն մէկ մասին հետ վերադառնալ Նոր-Բայազէտ՝ վերադառնալու համար արտասահման: Տղաներուն մէկ մասը հողմացրիւ եղաւ, շատերը փշացան քաղաքացիական կռիւներուն բովում:

Նոյն եւ աւելի վատ վիճակի արժանացան նաեւ Պոլսէն եկած սկաուտները՝ Վահան Զերպոն եւ ուրիշ սկաուտապետներուն դէկավարութեամբ: Բազմահազար սկաուտներուն երեւումը Երեւանում, նրանց տիպար կազմակերպութիւնն ու կարգապահութիւնը, նրանց վայելուն չքերթները, մարզահանդէսները, մեծ ազդեցութիւն գործեցին հասարակութեան վրայ: Կարելի է ասել, նրանք հիմք դրին մարզական շարժման՝ նորազար Հայաստանում: Կառավարութիւնը սիրով եւ մեծ հոգածութեամբ ընդունեց նրանց եւ տեղաւորեց Ալեքսանդրապոլի Պոլիդոն վինուորական թաղամասում: Նրանց ճակատագիրն էլ տխուր եղաւ: Բոլշեւիկեան վարչաձեւի հաստատումով՝ կատաղի հալածանք սկսուեց նրանց դէմ: Ի վերջոյ դնդակահար եղաւ Վահան Զերպոը, իբրեւ «Անգլօ-ամերիկեան իմպերիալիզմի գործակալ»: Սպանուեցին կամ աքսորուեցին եւ նրա գործակիցները: Վահան Զերպոի անունը այսօր էլ յիշւում է պաշտամունքով սիրտքում եւ Մայր Հայրենիքի սահմաններում:

Ինձ հետ կապուած մի դէպք եւս յիշեմ: 1919 թ. գարնան ամիսներին կարծեմ, վրացիները առանձնապէս դժուարութիւններ էին հանում արտասահմանից Հայաստան ուղարկուող մթերքի դէմ: Բաթումից գնացքներ չէին տալիս: Զանազան պատրուակներով յապրշտակում էին Հայաստանի պատկանող ցորենը: Հայաստանում մարդիկ մեռնում էին սովից, եւ Հայաստանի ալիւրը պահւում էր Բաթումի պահեստներում: Երեւանից ուղարկուած բողոքները մնում էին անլսելի: Հասարակական խիղճը վրդովուած էր:

Ես, ինքնաբերաբար մի խիստ հեռագիր ուղարկեցի Թիֆլիսի մեզ համակիր ռուսերէն «Զակ. Սլօվօ» թերթի խմբագրութեան՝ ներկայացնելով վրաց կառավարութեան ու գործիչների հակահայ արարքները, բողոքելով նրանց անարդար քաղաքականութեան դէմ՝ Հայաստանի հանդէպ: Իմ հեռագիրը զուգադիպուեց Քլեմանսոյի խիստ աղաղաղութեան ուղղուած վրաց դեկավարներին՝ արդելք չհանդիսանալու Հայաստանի մատակարարման գործին: Փոթորիկ պայթեց վրաց մամուլի եւ կառավարական շրջանակների մէջ: Այդ թէ ձախ ամէնքը մեղադրում էին ինձ, որ չինծու եւ դրպարտիչ



ARAM webaram.com

տեղեկութիւններ եմ հաղորդել: Վրացիները անմեղ էին, ընդհակառակն, Հայաստանի կառավարութիւնն էր յանցաւոր Հայաստանում ապրող սովին համար: Վրաց կառավարութիւնը նոյնիսկ հրապարակային յայտարարութիւն արաւ՝ մեղադրելով հայերին, որ Հայաստանի երկաթուղային վարչութիւնը չի վերադարձնում վրացական վագոնները, այդ պատճառով Վրաստանի երկաթուղին չի կարողանում բաւում հասնող հայկական ապրանքները փոխադրել Երեւան: Ծիծաղելի էր այս ինքնարդարացումը. նա նման էր Գոգոլի այն մեղադրանքին «Քննիչը»ի մէջ, որ ենթասպայի կինը ինքը իրեն ծեծել է: Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչը Թիֆլիսում առիթուած եղաւ դուրս գալ պաշտօնական հերքումով՝ յայտարարելով, որ Դաշնակիցների Գերագոյն Խորհրդի նախագահ Քլեմանսոյի հեռագիրը հայկական կառավարութեան դանգատի հետեւանք չէր: «Հապա ի՞նչ է» պատասխանում էր վրաց Մենշեւիկների պաշտօնաթերթ «Էրթօբա»ն. «Ի՞նչ է, հայերը մեզ յիմարի տե՞ղ են դնում: Հապա ինչո՞վ բացատրել Հայաստանի խորհրդարանի պատգամաւոր Վրացեանի հեռագիրը՝ ուղարկուած տեղւոյս թերթին»: Նոյն մբռնքով արտայայտւում էր նաեւ վրացի մենշեւիկների ռուսերէն պաշտօնաթերթ «Բորբա»ն:

Առհասարակ, հայ—վրացական յարաբերութիւնները չէին լաւանում ո՛չ Թիֆլիսում եւ ո՛չ Փարիզում, ուր գտնւում էր նրանց պատուիրակութիւնը Զիւննիելիի նախագահութեան տակ: Եւ դրանից վնասւում էին թէ՛ Հայաստանը եւ թէ՛ Վրաստանը:


Առաւօտից երեկոյ, մինչեւ կոկորդ կլանուած աշխատանքներով, ես ժամանակ էի գտնում նաեւ երեկոները յաճախելու թատրոնական ներկայացումների, դասախօսութիւնների եւ երիտասարդ բանաստեղծների «Պանդոկ» ակումբի հաւաքոյթներին:

Թիֆլիսից եկած դերասան—դերասանուհիները, դերասան Յ. Զարիֆեանի գլխաւորութեամբ, ներկայացումներ էին տալիս Զանփոլատեան թատրոնում եւ հասարակութիւնը խուռներամ ներկայ էր լինում այդ ներկայացումներին: Երեւանը, ակնյայտնի կերպով, պէտք ունէր պետական մեծ թատրոնի: Դերասանները գանգատւում էին՝ դժգոհ բեմական անյարմարութիւններից: Բայց հասարակութիւնը գոհ էր եւ ծափահարում էր խանդավառ:

Կառավարութիւնը արդէն յանձնարարել էր դերասան Սեւումեանին կազմակերպել թատրոնական գործը Հայաստանում: Սեւումեանը հիմնել էր դերասանական ստուդիօ, ուր մի խումբ երիտա-

ARAM webaram.com

սարդներ սովորում էին թատերական արուեստը: Ինքը՝ Սեւումեանը, կառավարութեան կողմից ուղարկուել էր Պոլիս՝ այնտեղից հայ դերասաններ բերելու Երեւան:



Ց. ԶԱՐԻՖԵԱՆ

Պարլամենտի դահլիճում երաժշտագէտ Արմէն Տիգրանեանը բեմադրեց իր «Անուշ» օպերան՝ մեծ յաջողութեամբ:

Պարլամենտի նոյն դահլիճում տեղի էին ունենում հրապարակային դասախօսութիւններ, ուր խօսում էին Բաշխի Իշխանեանը, Դաւիթ Անանունը, Արշակ Ջամալեանը, Վահան Թորգնեին եւ Երեւանում գտնուող արտասահմանից եկող ուրիշ մտաւորականները: Պատմաբան Լէօն մի քանի դասախօսութիւններ կարդաց, ջատագովելով Լոռին և Ղարաբաղը Հայաստանին կցելու անհրաժեշտութիւնը: Դասախօսութիւն կարդաց եւ փուտուրիստ Գենջեանը՝ ծիծաղեցնելով բազմաթիւ ունկնդիրներին: Հասարակութեան մէջ մեծ յաջողութիւն էին գտնում Իշխանեանի դասախօսութիւնները. նա անխնայ, առանց բառեր ծամծմելու ճաղկում էր բոլշեւիկներին, Սովետական Ռուսաստանը կոչում էր սովահար Ռուսաստան: Նրա դասախօսութիւններին դժուար էր տեղ գտնել սրահում:

«Պանդոկ»ի մէջ համախմբուած էին երիտասարդ բանաստեղծները՝ Գ. Քեսեյաշեանը, որա եղբայր Անուրջը, Գ. Շահինեանը, եւ ուրիշ մանչ ու աղջիկ սկսնակ գրողներ: Պարբերաբար ժողովներ էին գումարում, դասախօսութիւններ էին կարդում եւ լսում, վիճում էին գրական հարցերի մասին: Ն. Աղբալեանը եւ ես յաճախ ներկայ էինք լինում նրանց հաւաքոյթներին: Հաճելի էր նրանց եռուզեռը: Դեռ շատ բաներ չգիտէին, Փարիզի լատինական թաղամասի սրճարաններից լուր չունէին, բայց Բոդլերից համ առանում էին: Ն. Աղ-



ARAM webaram.com

բալեանը առանձնապէս հետաքրքրուած էր այդ տղաներով։

Ազրալեանի մօտ, հանրային կրթութեան նախարարութեան մէջ, ես հանդիպել եմ եւ Զարենցին։ Նիկոլը նրան պատսպարել էր, իբրեւ նախարարութեան պաշտօնեայ, բայց Զարենցը առճիկ առա-նում էր եւ ա՛չ մի դործ չէր անում։ Նա ապրում էր դատարկապորտ կեանքով, խուլիգանութիւն էր անում Երեւանի փողոցներում՝ վըր-դովելով պարկեշտ քաղաքացիներին։ Նա դեռ մեծ դործեր չէր ար-տադրել, բայց սիրուն բանաստեղծութիւններ էր դրում, որոնք յա-փըշտակութեամբ կարդացւում էին երիտասարդութեան կողմից։ Զարենցը ծառայել էր Անդրանիկի կամաւորական դնդում, լսել էր հերոսի թրքերէն հայհոյանքները, տեսել նրա բռունցքի համբ եւ այժմ ոգեւորուած էր համաչխարհային յեղափոխութեամբ եւ ամ-բոխների խելագարութեամբ։ Ազրալեանի մօտ ես առիթ եմ ունեցել տես վիճաբանութեան Զարենցի հետ։ Ազրալեանը չէր սիրում մարդ եւ ֆաղաֆացի Զարենցին, բայց չատ բարձր էր դնահատում նրան, իբրեւ բանաստեղծ։ Այդ պատճառով էլ անդործ պահում էր նրան իր պաշտօնեանների չարքում՝ նրան ամամահութիւնից փրկելու համար։

Մինչեւ 1919 թ. Մարտ ամիսը ես մնացի Եփրեմի տունը։ Զարմանալի տանտիկին էր նրա կինը՝ Սիրուշը։ Երբ ամբողջ քա-ղաքում ուտելու հաց չէր ճարւում, նա չգիտեմ ի՛նչ հնարքով սե-ղանի վրայ ունէր ամէն բան. թարմ լաւաշ հաց, պանիր, միս, բան-ջարեղէն։ Թէյը մենք խմում էինք չաքարով, մինչդեռ ուրիշ տեղ-րում չամիչ իսկ չէր պատում։ Ո՞րտեղից էր ճարում նա այդ մթերք-ները։ Հայկօպի՞ց, պարլամենտի անդամների պարենաւորման յանձ-նախմբի՞ց, ճաթխրանի՞ց. մնում էր հանելուկ։

Սիրուշը դրաղում էր եւ հասարակական դործերով, իբրեւ անդամին կոմիտէի անդամ, կանանց կազմակերպութիւնների մէջ եւ-այլն։ Յաւելում ես հետագայ Եփրեմի բնակարանից։ Քաղաքային վարչութեան բնակարանային բաժնից ինձ տեղեակ էին յատկացրել թժ. Տէր-Ասեռիքեանի չէնքում, Աբովեանի վրայ։ Այստեղ ապրում էին եւ իմ մօտ բնակւում Սահակ Թորոսեանը եւ Գառնիկ Գիւլալեանը։ Վերջը պիտի դար եւ վահան Թոթովենին։ Շէն ու գուարթ բնակարան էր թժ. Տէր-Ասեռիքեանի չէնքը, ուր ես մնացի մինչեւ Թիֆլիսի բը-նակարանից Երեւան փոխադրելը։ Այս դլուխը փակելու համար ա-ռաջ բերեմ եւ իմ դլխին եկած դաւեչա—ողբերդական մի դէպք։

Ես առաջութիւն ունէի պիչերը քնել տեղեակի դուռն ու պա-տուհանները բաց։ Ազրալեանը միշտ խրատում էր ինձ.

— Ա՛յ տղայ, դուռ ու պատուհան փակ պահիր։ Մի օր գողերը

ARAM webaram.com

կը մտնեն, վարտիքդ ալ կը տանեն: Քե՛զ ասում եմ, փակ պահիր...

Ես ծիծաղում էի եւ առարութիւնս չէի փոխում:

Մի առաւօտ արթնցայ եւ ուզում էի հանդուստս հագնել: Տարաս չկար: Գիշերը դող էր մտել սենեակս եւ տարաս տարել: Հիմա ի՞նչ պիտի անէի: Ուրիշ հագուստ չունէի: Ընկերներիս մօտ իմ հասակին յարմար տարաս չկար: Ո՛չ էլ Երեւանի խանութներում կարելի էր գտնել: Ի՞նչ պիտի անէի:

Կէսօրի մօտ սենեակս մտաւ 7–8 տարեկան մի տղայ՝ ձեռքին հին լրագրի մէջ փաթաթուած մի ծրարով: Իմ տարաս էր: Գրելու անվարժ ձեռքով մի թղթի կտորի վրայ խազմզուած էր. «Ներողութիւն, մենք կարծում էինք, որ հարուստ ամերիկացի ես, բայց դու էլ մեզ պէս աղքատ ես. վերադարձնում ենք վարտիքդ. ներողութիւն»:

Այդ դէպքը դաւեչոի նիւթ դարձաւ իմ չրջապատի մէջ: Աղբալեանը դրեց համերասեան ոճով մի քնարական քերթուած «Վրացեանը եւ իր չալմաթը» վերնագրով: Նա ինձ նմանեցնում էր Աքիլլեսին, որ կռուի է բռնւում արուեստագէտների հետ եւ կռւում կորցնում է իր վարտիքը եւ փախչում: Ոակեծամ դիցուհին կարեկցում է նրան եւ մի նոր տարաս է նուիրում:

Նոյնքան դաւեչոական, բայց աւելի լուրջ մի դէպք եւս:

Անկախութիւնների հէնց առաջին օրերից, Ազրբէյջանը հանդիսա չճողեց Հայաստանը: Թուրքերի աջակցութեամբ, ազրբէջանցիք աշխատում էին զրկել Հայաստանի թուրք—թաթարական բնակչութիւնը Հայկական իշխանութեան դէմ: Ազրբէջանական դեսպան՝ Խան Թեքինսկին գլխաւոր դերակատարն էր այդ գործում: Երկրի զանազան կողմերում նա պահում էր գործակալներ, առատ գրամ էր առանում Բաղուից եւ գաղտնի տեղեկութիւններ էր հաղորդում իր կառավարութեան:

Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան պաշտօնեայ Եակուբեանը, չուտով բացեց շիֆրը, որով Խան Թեքինսկին հեռագիրներ էր փոխանակում իր կառավարութեան հետ: Այնուհետեւ, մենք կարդում էինք Խան Թեքինսկիի ուղարկած եւ առացած գաղտնի հեռագիրները եւ ծանօթ էինք՝ մօտիկ հետեւելով Ազրբէյջանի դաւերին՝ Հայաստանում: Հայաստանի կառավարութեան վճռական բողոքի վրայ, Ազրբէյջանի կառավարութիւնը ստիպուած եղաւ յետ կանչել Խան Թեքինսկիին եւ նրա տեղը նշանակել Ահիվերտովին, որ մտաւորականի եւ բանաստեղծի համբաւ ունէր:

Խան Թեքինսկիի գործունէութեամբ հետաքրքրուած էր Ե՛ւ



ARAM webaram.com

Հ. Ց. Դ. Բիւրօն։ Մի օր, հեռագիր առացուեց. Ալրբէյճանի նոր դեսպան Հախվերտովը եւ ժողովրդական կուսակցութեան պարագլուխ Ս. Ցարուխիւնեանը, նոյն գնացքով, Թիֆլիսից մեկնում էին Երեւան։

Թուրէնի հետ անմիջապէս համապատասխան կարգադրութիւններ արինք եւ Մարտ 8-ի լուսաբացին, Լոռիի չէզոք գօտում, Սանահին—Քոբեր կայարանների միջեւ, մի խումբ դիմակաւոր ու զինուած երիտասարդներ կանդնեցրին գնացքը եւ Հախվերտովից ու Ցարուխիւնեանից խլեցին նրանց գոյքը։ Հախվերտովի մօտից առել էին 3·400·000 ռուբլի ալրբէյճանեան եւ 2 միլիոն ռուբլի անդրկովկասեան բոններ, իսկ Ցարուխիւնեանից՝ 296·000 ռուբլի անդրկովկասեան բոններ, որ նա տանում էր իրենց կուսակցութեան Երեւանի «ժողովուրդ» թերթին։ Տարել էին նոյնպէս եւ Հախվերտովին ուղեկցող թաթարների զրամները, ինչպէս նաեւ բոլորի մօտ գտնուող ոսկեղէն ու թանկագին քարէ զարդարանքները։ Թալանի ընդհանուր արժէքը 6 միլիոն ռուբլուց աւելի էր։

Այս դէպքը ահագին խրատանդամ առաջ բերեց։ Ալրբէյճանեան կառավարութեան կողմից բողոքներ տեղացին Երեւան։ Վրացիք ծիծաղում էին ալրբէյճանցի իրենց բարեկամների վրայ։ Բայց դէպքը չուտով անուշի կապուեց. ալրբէյճանցիների համար ձեռնտու չէր պատահածի մասին շատ խօսելը։ Կարող էր իրենց համար միջից վատ հոտ դուրս գալ։

Հայաստանի կառավարութիւնը ցաւակցութիւն յայտնեց Ս. Ցարուխիւնեանին։ Վերադարձրեց նրանից խլուած զրամը եւ ոսկէ ժամացոյցը, թէեւ Ցարուխիւնեանի բերած զրամը «ժողովուրդ» թերթին՝ պիտի ծախսուէր պայքարելու համար կառավարութեան դէմ։

Զարաչար աշխատանքը չէր ընկճում մեզ։ Մենք միշտ զուարթ, կենսուրախ եւ լաւատես էինք Հայաստանի ապագայի համար։ Հաւի ճուտի պէս էինք. դիշատիչ ուրուրը սաւառնում էր մեր գլխին, բայց մենք չէինք նկատում։


ARAM webaram.com

## ԲՈԼՇԵՒԻԿԵԱՆ ՄՈՒՐՃԻ ԵՒ ԹՐՔԱԿԱՆ ՍԱԼԻ ՄԻՋԵՒ

Այս, վիշտաբեր ուրուրը սաւառնում էր մեր գլխին: Հայաստանի անկախութեան առաջին օրերից սկսած Թուրք-Թաթարական սպառնալիքը հանգիստ չէր թողնում մեզ: Շարուր-Նախիջեւան, Վեդիբասար, Զանգիբասար միշտ խռովութեան վայրեր էին, Ազրբէյջանի եւ Թուրքիայի ձեռքին դաւադրութեան գործիք՝ Հայաստանի դէմ: Շարուր-Նախիջեւանը մի պահ ենթարկուելով մեր իշխանութեան, յետոյ ըմբոստացել էր եւ անջատուել Հայաստանից: Ազրբէյջանը, անհաշտ թշնամի էր եւ դաւեր էր լարում Հայաստանի դէմ: Մի կողմից դաշինք էր կնքել Թուրքերի հետ՝ ընդդէմ Հայաստանի, միւս կողմից, Թուրքերի աջակցութեամբ, ձգտում էր օգտագործել բոլշեւիկեան Ռուսաստանի ուժը:

1919 թ. Հոկտեմբերի 29ին, կնքուել էր հետեւեալ դաշնագիրը, Թուրքիայի եւ Ազրբէյջանի միջեւ.

1. Ընդմէջ իսլամական խալիֆայութեան ներկայացուցիչ Օսմանեան կառավարութեան եւ Ազրբէյջանի հանրապետութեան, որը ձգտում է ձեռք բերելու իր անկախութիւնը, սկզբունքով ընդունուած է, որ որեւէ յարձակման կամ վտանգի պարագային, որ կարող է առաջ գալ Ազրբէյջանի բնական սահմանների պահպանութիւնից, օսմանեան կառավարութիւնը ընձեռնէ իր զինուորական աջակցութիւնը:

2. Ներկայ պայմանագիրը երկու պայմանադրուող երկիրների համար էլ ի զօրու է մէկ տարով՝ սոյն պայմանագրի առորագրութիւնից յետոյ:

3. Թիւրիմացութիւններից որքան կարելի է խուսափելու համար, երկու իսլամ կառավարութիւնների միջեւ կնքուած այս դաշ-



ARAM webaram.com

նպրի մեկնաբանութեան առթիւ՝ հետեւեալ պայմանները դրուած են պինուորական օժանդակութեան մասին.

Ա. Երբ պաշտպիր կողմերից մէկը իրապէս յարձակման կ'ենթարկուի կամ կը պատուի առոյգ վտանգի տակ, այն ժամանակ կը առացուի պինուորական փոխադարձ օժանդակութիւն:

Բ. Փոխադարձ օժանդակութիւնը պիտի կատարուի հետեւեալ հիմքերով.

Երբ պայմանադրուող որեւէ մէկ կողմի երկիրը վտանգուի՝ այս երկիրների հարեւան կառավարութիւններից:

Երբ որեւէ պետութիւն — որը եւ լինի — կամենայ պայմանադրուող երկիրներից մէկը ենթարկել իր քաղաքական, վարչական կամ ֆինանսական հսկողութեան եւ կամ երբ ապացուցուի, որ որեւէ պաշնակցութիւն է կնքուած պայմանադիր երկիրներից մէկի դէմ:

Երբ պայմանադրուող կողմերը պատրաստ են առոյգ վտանգի առջեւ, համապատասխան երկու ապայակոյները կը մշակեն համաձորհուրդ պինուորական գործողութեանց յատակագիծ՝ ձեռք առնելով պինուորական անհրաժեշտ միջոցներն ու պատրաստութիւնները:

Երկու պայմանադիր կողմերի միջեւ վարուելիք քաղաքականութիւնը ճշդուած եւ ընդունուած լինելով Ա. յաւելուածով՝ Ազրբէյջանի հանրապետութեան եւ Օսմանեան կայսրութեան համապատասխան սահմանները պիտի ճշդուին՝ երբ կնքուի հաշտութիւնը, որը Օսմանեան կառավարութիւնը պիտի ընդունէ եւ առորագրէ:

4. Այն պարագային, երբ Ազրբէյջանի հանրապետութեան անկախութիւնը, Ատուած մի՛ արասցէ, ձեռք չբերուի, եւ Օսմանեան կայսրութեան ամբողջականութիւնն ու անկախութիւնը կորչելու վտանգի առջեւ գտնուի, երկու պայմանադրուող կողմերը չպիտի ստորագրեն հաշտութիւնը եւ վար չպիտի դնեն զէնքերը, առանց նախապէս առանալու փոխադարձ համաձայնութիւն ու հաւանութիւն:

. . . . . .

8. Օսմանեան կառավարութիւնը յանձն կ'առնէ իրագործելու Ազրբէյջանի հանրապետութեան բանակի կազմակերպումը եւ ըստ պայմանադիր երկու երկրների համապատասխան ապայակոյների դնահատութեան՝ կ'իրագործէ առաքումը ապանների եւ պինուորական մարդիչների, Ազրբէյջանի բանակի համար: Հաշտութեան կնքումից յետոյ, Օսմանեան կառավարութիւնը կ'ընդունի իր բանակի մէջ մուտքը ազրբէյջանեան առորակաս ապանների՝ կատարելագործելու համար իրենց պինուորական ուսումը:



ARAM webaram.com

9· Օսմանեան կառավարութիւնը, յանձն է առնում հաշտութեան կնքումիս յետոյ, տալու իր պինուորական օժանդակութիւնը Ադրբէյջանի հանրապետութեան, ուղարկելով նրան հրացան, թնդանօթ, սուառնակ եւ ռազմամթերք:

10· Ադրբէյջանի հանրապետութեան կառավարութիւնը յանձն է առնում անվերապահօրէն չկայացնելու ո՛չ մէկ պինուորական դաշինք կամ պայմանագրութիւն, հարեւան երկրներից որեւէ մէկի հետ՝ առանց հաղորդելու Օսմանեան կառավարութեան եւ առանալու նրա հաւանութիւնը:

. . . . . .

Ստորագրութիւն՝

ՃԷՄԱԼ — Օսմանեան լիազօր եւ ընդհ. սպայակոյտի պետ:

ՔԵՐԻՄՈՎ — Ադրբէյջանի հանրապետութեան լիազօր:

Այս դաշնագիրը Ադրբէյջանի եւ Թուրքիայի հին՝ Պոլսի կառավարութեան միջեւ էր, բայց անդին կար Մուսթաֆա Քեմալի միլիտական չարժումը, որ հետզհետէ տիրական էր դառնում Թուրքիայում: Սրա հետ էին կապուած դիւանագէտ Ադրբէյջանի յոյսերը:

Ադրբէյջանը հէնց իր գոյութեան սկզբից չկարողացաւ ամուր պետական իրաւակարգ եւ հեղինակաւոր իշխանութիւն հաստատել: Իրար յաջորդող կառավարութիւնները ենթակայ էին կուսակցական լարուած կրքերի եւ, մանաւանդ, թրքական խաղերի: Վարիչ շրջաններում առանձնապէս նկատուում էր երկու հոսանք. մէկը ձգտում էր ամրացնել եւ տեւականացնել անկախութիւնը՝ համաձայնութեան լեզու գտնելով հարեւանների հետ. միւսը՝ յենուելով թուրքերի վրայ՝ այժ տալ համաթրքութեան կամ համխալամութեան եւ ըստ կարելւոյն չաւտ բան խլել հարեւաններից: Երբ տեղի ունեցաւ մերձեցում թուրքերի եւ բոլշեւիկների միջեւ, երկրորդ հոսանքը նոյնպէս անցաւ բոլշեւիկեան օրիէնտացիայի կողմը:

Առաջին հոսանքը, դժբախտաբար, չաւտ թոյլ էր ադրբէջանեան հասարակութեան դիտակցութեան մէջ եւ սահմանափակ դրօժիչ ուժերով, թէեւ այս վերջիններն անպայման աւելի դիտակից էին պետական տեսակէտից եւ աւելի վայելուչ իրենց գործունէութեան մէջ: Մի պահ, 1920 թ. սկզբին, վարչապետ նշանակուեց Մամէդ Հասան Գաջինսկին, որ առաջին հոսանքի չեշտուած ներկայացուցիչներից էր եւ համարուում էր կողմնակից կովկասեան երեք հանրապետութիւնների համերաշխութեան եւ աւելի մեղմ քաղաքականութեան Հայաստանի հանդէպ: Հայաստանում, այդ նշանակումը հասկացուեց իբրեւ մի քայլ Ադրբէյջանի կողմից՝ վերջ տալու



ARAM webaram.com

յարձակողական ընթացքին Հայաստանի նկատմամբ, ինչպէս նաեւ նաեւ ներքին բռնութիւններին ու կամայականութիւններին: Գաղինակին, սակայն, երկար չդիմացաւ եւ տապալուեց՝ տեղի տալով միւս՝ աւելի անհաշտ հոսանքի ներկայացուցչին:

Այս երկրորդ հոսանքն էր, որ վճռական դեր կատարեց Ազրբէյջանի կեանքում: Մի ձեռքը տալով թուրք ազգայնականներին եւ միւսը բոլշեւիկներին՝ այդ հոսանքը մղում էր պետութիւնը դէպի անհաշտ դիրք հարեւան պետութիւնների եւ, յատկապէս, Հայաստանի նկատմամբ: Այդ հոսանքի գլխավարն էր թիմու ազգայնամոլ եւ համիսլամական «ԻԹԹԻՀԱՏ» կուսակցութիւնը, որը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ թուրք իթթիհատականների ընդօրինակութիւնը: Այդ կուսակցութեան մէջ գործօն դեր էին խաղում Նուրի եւ Խալիլ փաշաները — առաջինը էնվէր փաշայի եղբայրը, երկրորդը՝ փեսան: Կուսակցութեան պարագլուխներն էին Ազրբէյջանի ամենամեծ տարբերը, ինչպէս ախթահոչակ Ջիւանշիրը: Բոլոր ջարդարարներն ու հարստահարիչները համախմբուած էին նրա մէջ կամ նրա շուրջը: Նրա մամուլը կատաղի պայքար էր մղում հայերի դէմ եւ բռնութիւնների ու ջարդերի ներշնչողն էր: «Իթթիհատ»ը պահանջում էր միանալ բոլշեւիկներին եւ անմիջապէս պատերազմ յայտարարել Հայաստանին: Անշուշտ, այդ տրամադրութեան ոյժ էին տալիս եւ թուրքերը, մանաւանդ Խալիլ փաշան, որը Բաքւում մնում էր իբրեւ «պատուիրակ հիւր» եւ բարեկամական յարաբերութիւնների մէջ էր բոլշեւիկների հետ:

Բաքւում յայտնի էր, որ բոլշեւիկների եւ թուրքերի միջեւ կնքուած է դաշինք, որի համաձայն երկու կողմերը պարտաւորւում են օգնել միմեանց թէ՛ դիւանագիտութեան եւ թէ՛ պատերազմի ասպարէզներում: Յայտնի էր նաեւ, որ բոլշեւիկներն ու թուրք ազգայնականները ձգտում են մօտենալ իրար եւ՛ աշխարհագրականօրէն՝ ճանապարհ բանալով Ազրբէյջանի եւ Հայաստանի վրայով: Իթթիհատականների համար գաղտնիք չէր նաեւ, որ Անդօրան խոստացել էր աջակցել բոլշեւիկներին՝ Ազրբէյջանը խորհրդայնացնելու, իսկ բոլշեւիկները յանձն էին առել բանալու Ելախ–Շուշի–Նախիջեւան ճանապարհը: Բաղուի իթթիհատական թերթերը առանց քօղարկելու յայտնում էին իրենց ուրախութիւնը բոլշեւիկ–քեմալական բարեկամութեան այդ հեռանկարների առթիւ եւ պահանջում էին, որ Ազրբէյջանի կառավարութիւնը օր առաջ դիւանագիտական գործողութիւնների սկսի Հայերի դէմ՝ շտապելով գրաւել Ղարաբաղն ու Զանգեզուրը: Իթթիհատի այս տրամադրութիւններին ոյժ էին տալիս եւ մու-



ARAM webaram.com

սաւաթական որոշ չրջաններ, ինչպէս Մոսթով բէկ Սուլթանովը, որ Ղարաբաղի նահանգապետ էր նշանակուել եւ ջերմ կողմնակիցը էր Ղարաբաղ–Զանգեզուրի դրաւման եւ, առհասարակ, թշնամի էր Հայոց ազգին եւ Թուրքերի մարդ էր համարում: Իթթիհատականները աշխատում էին նաեւ տապալել մուսաւաթական կառավարութիւնը եւ իշխանութեան գլուխ դնել իրենց պարագլուխ դր. Ղարաբէկովին, որից յետոյ, անտարակոյս, Ապրէսյանն էլ կը մտնէր Թուրք–բոլշեւիկեան բլոկի մէջ:

Թէ ի՞նչ էր ներկայացնում Թուրք պատգամաւորների եւ բոլշեւիկների հետ բարեկամութիւն ջատագովող «Իթթիհատ»ը, ցոյց են տալիս որոշումները նրա համագումարի, որ տեղի էր ունեցել 1920 թ. սկզբներին: Այսպէս, օրինակ, «համագումարը որոշել է իւր ամենքի յայտարարել, որ «Իթթիհատ» կուսակցութիւնը պահանջում է, անգամ պատերազմի գնով, Թուրքիայի իշխանութեան տակ գրաւել բոլոր հողերը պահպանել անձեռնմխելի՝ Թուրքերի ձեռքը: Դիմել Ապրէսյանի կառավարութեան պահանջելով, որ նա ամենակըտրական միջոցներ ձեռք առնի Զանգեզուրի հարցը լուծելու եւ մահմեդական պատրնակութիւնը պաշտպանելու դաշնակցական կառնառուր եւ անկանոն ուժերից: Միջոցներ ձեռք առնել՝ դումարելու համաշխարհային իսլամական համագումար»:

Ինվէրն, իր 27 տարեկան եղբօր՝ Նուրիին զօրավարի աստիճան տալով՝ Հալէպ–Մուսուլ–Թաւրիզ գծով ուղարկել էր Կովկաս, համիսլամական պրոպագանդի կազմակերպման համար: Կովկասի բաժանումից յետոյ՝ Նուրի փաշան փաստօրէն ակր ու ակրական դարձաւ Ապրէսյանի հանրապետութեան: Ապրէսյան անունն ալ ընտրուած էր Թուրք համիսլամականների կողմից այն ծրագրով, որ ապագային պարսկական Ապրէսյանն էլ կը միացուի: 1918 թ. ամառն ու աշնանը, Ապրէսյանը փաստօրէն վեր էր ածուել Թրքական վիլայէթի, ուր Նուրի փաշայի կամքն էր թագաւորում: Երկրի բոլոր կարեւոր կէտերը գրաւուած էին Թրքական զօրքերի կողմից: Այդ զօրքերը կազմում էին «իսլամական բանակ»ը: Ամէն կողմ Թուրք հոճաններ ու սպաներ: Հանրային ու պետական չէնքերի վրայ ծածանւում էր Թրքական կիսալուսինը: Կազմակերպուած պրոպագանդ էր տարուում եւ՛ կովկասեան լեռնականների մէջ:

Ապրէսյանը առնդպին պատրաստւում էր գրաւելու հայկական Ղարաբաղը եւ Զանգեզուրը ու Նախիջեւանի վրայով միանալու Թուրքիային: Ապրէսյանի գրեթէ ամբողջ բանակը կենտրոնացած էր Ղարաբաղի սահմաններում՝ Եւլախ–Շուշի ճանապարհի վրայ: Բանակի



ARAM webaram.com

ընդհանուր հրամանատարութիւնը առանձնել էր պինուրական նահապետ գօր. Շիլլինգին։ Նահանգապետ Յոսեփ բէյ Սուլթանովը բոնութիւններ էր գործադրում՝ զարաբաղցիներին հպատակեցնելու համար։ Ղարաբաղի ժողովուրդը, ուժը համապատասխանով, յայտնել էր իր վճռական կամքը՝ միանալու Հայաստանին։ Բնական է, որ Հայաստանի կառավարութիւնն էլ անտարբեր չէր դիտում Ազգբէյլեանի այս դաւերը։

Այսպէս էր կացութիւնը, երբ 1919 թ. աշնան, Երեւանում դումարուեց Հ. Յ. Դաշնակցութեան Ընդհ. Ժողովը։ Հինգ տարի էր անցել կարինի Ընդհ. Ժողովից, եւ հայ ժողովուրդը հիմն ի վեր փոխուել էր։ Նոր եւ կենսական հարցեր էին ծագել։ Թրքահայութիւնը բնաջնջուել կամ հոգմայրիս էր եղել։ Հայաստանը դարձել էր անկախ պետութիւն։ Բազմաթիւ բարդ հարցեր կային լուծուելիք։ Ընդհ. Ժողովի դումարումը վաղուց դարձել էր տիպողական։

Հ. Յ. Դ. Բիւրօն, բազմաթիւ խորհրդակցութիւններից յետոյ, դոյութիւն ունեցող մարմինների եւ պատասխանատու ընկերների հետ միասին եւ 1919 թ. Մարտ 1–ին ուղարկեց կուսակցական մարմիններին հետեւեալ Օրակարգը։

## Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

## ՕՐԱԿԱՐԳ

### ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԻՆՆԵՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Ա.— ԶԵԿՈՒՑՈՒՄ ԵՒ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ

1. Արեւելեան Բիւրոյի
2. Հայաստանի Բիւրոյի
3. Կենտրոնական կոմիտէների
4. Կոմիտէների (մեկուսի)։
5. Խորհրդարանական Ֆրակցիայի։
6. Կառավարութեան դաշնակ. ներկայացուցիչների։
7. Արտասահմանեան դելեգացիաների։

Բ.— ՍՈՑԻԱԼ—ՔԱՂԱՔԱԿԱՆ

1. Սահմանադիր ժողով եւ հիմնական օրէնքներ։
2. Արտաքին քաղաքականութիւն (արտաք. գործ. մինիստրութիւն)։
3. Ներքին վարչութիւն (ներքին գործ. մինիստրութիւն)։



ARAM webaram.com

4· Զօրք (պինուորական մինիստրութիւն)։
5· Արդարադատութիւն (արդարութեան մինիստրութիւն)։
6· Հանրային կրթութիւն (ժողովուրդ· լուսաւորութ· մինիստրութիւն)։
7· Հաղորդակցութիւն (ճանապ·, փոստ եւ հեռագր· վարչութ· մինատր·)։
8· Ֆինանսներ (ֆինանսական մինիստրութիւն)։
9· Հասարակական խնամատարութիւն (խնամատար· եւ աշխատ· մինիստր·)։
10· Պարենաւորում (պարենաւորման մինիստրութիւն)։
11· Ներդաղթ եւ վերաշինութիւն։
12· Տնտեսական քաղաքականութիւն· ա·— Հողային հարց, բ·— կապիտալ եւ արդիւնաբերութիւն, գ·— Աշխատանքի պաշտպանութիւն։

## Գ·— ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

1· Նուագարանի ծրագրի փոփոխութիւն։
2· Կազմակերպական կանոնադրութեան փոփոխութիւն։
3· Ազգայի՞ն թէ միջազգային կազմակերպութիւն։
4· Կուսակցութեան ֆինանսների կազմակերպութիւն։
5· Գաղութային կազմակերպութիւնների քաղաքականութիւնը եւ նրանց կապը երկրի կազմակերպութեան հետ։

## Դ·— ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԿԵԱՆՔ

1· Դաշնակցութեան արխիւների կարգաւորում։
2· Կուսակցական թանգարան։
3· Կուսակց· հրատարակչ· ֆոնտ։
4· Կուսակցականների վոխադարձ ապահովութեան դրամարկղ։
5· Կուսակցական պրոպագանդիստների դպրոց։
6· Դաշնակցութեան պանթէոնը։
7· Դաշնակցութեան պատմութիւնը դրելու խնդիր։
8· Դաշնակցութեան երեսնամեակի խնդիր։

## Ե·— ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԾԱՆՕԹ· Ա·— Բոլոր զեկուցումները պէտք է անպայման լինեն մանրամասն, դրաւոր եւ վաւերացուած կուսակցութեան համապատասխան մարմնի բոլոր անդամների ստորագրութեամբ։ Իւրաքանչիւր զեկուցման վերջում



ARAM webaram.com

պէտք է լինի համապատասխան մարմնի դրամական հաշիւը։

ՇԱՆՕԹ. Բ.— Լրացուցիչ հարցեր Օրակարգի մէջ մտցնելու համար կարելի է ուղարկել մինչեւ Օգոստոսի 1, Երեւան, Հ. Յ. Դ. Բիւրոյին։

Ընդհանուր ժողովը բացուելու է 1919 թ. Օգոստոսի 15–ին, Երեւանում։ Ժողովին հրաւիրւում են մասնակցելու հետեւեալ մարմինները.

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Ռուսաստան (Ղրիմ, Ռոստով, Հիւս. Կովկաս) | 2 | պատգամաւոր |
| 2. | Բագու | 4 | » |
| 3. | Գանձակ | 2 | » |
| 4. | Շուշի | 2 | » |
| 5. | Ջանգեզուր | 2 | » |
| 6. | Թիֆլիս | 4 | » |
| 7. | Ծովափ (Բաթում, Սոխում–Սոչիի շրջան) | 2 | » |
| 8. | Ալեքսանդրապոլ | 2 | » |
| 9. | Երեւան | 4 | » |
| 10. | Ղարս | 2 | » |
| 11. | Թեհրան | 2 | » |
| 12. | Թաւրիզ | 2 | » |
| 13. | Վան | 4 | » |
| 14. | Էրզրում | 2 | » |
| 15. | Մուշ | 2 | » |
| 16. | Ալաշկերտ | 2 | » |
| 17. | Խարբերդ | 2 | » |
| 18. | Սըվազ | 2 | » |
| 19. | Տրապիզոն | 2 | » |
| 20. | Տիգրանակերտ | 2 | » |
| 21. | Կիլիկիա | 2 | » |
| 22. | Պոլիս | 4 | » |
| 23. | Եգիպտոս | 2 | » |
| 24. | Բալկաններ | 2 | » |
| 25. | Ամերիկա | 6 | » |
| 26. | Եւրոպա | 1 | » |
| 27. | Խորհրդարան. Ֆրակցիա | 1 | » |
| 28. | Հայաստանի Բիւրօ | 1 | » |
| 29. | Արեւելեան Բիւրօ | 1 | » |

Այն շրջանները, որոնց մարմինները պատերազմի եւ տեղահա-



ARAM webaram.com

նութեան պատճառով քայքայուել են, Ընդհ. Ժողովին մասնակցելու համար պէտք է փութան վերակազմուել: Այդպիսի մարմիններից Ընդհ. Ժողովի համար կանոնապրական ցենզ չի պահանջւում:

Եթէ մի որեւէ շրջանում որեւէ պատճառով կարելի չի լինում վերակազմել մարմին, 1914 Յուլիսի դադարեցման ունեցած կոմիտէների եւ կենտր. կոմիտէների ողջ մնացած անդամները կարող են հատուկ քարտով ուղարկել պատգամաւոր:

Ընդհանուր Ժողովին եկած պատգամաւորների ծախքերը հոգում են ուղարկող մարմինները:

Խնդրում ենք ներկայ հրաւէրը ստանալու մասին անմիջապէս տեղեկացնել մեզ:

Ի Դիմաց

Հ. Յ. Դ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՆԵՐԻ

1919 Մարտ 1, Երեւան

Ամբողջ ամառ, Հայաստանում թէ դուրսը, կուսակցութիւնը հեւ ի հեւ պատրաստւում էր Ընդհ. Ժողովի: Ձենք ուզում դիրքը ծանրաբեռնել մանրամասնութիւններով: Այնքանը ասենք, որ նախապատրաստական աշխատանքները լրացան դրեթէ ժամանակին: Գումարուեցան Ռազմական եւ Շրջ. Ժողովները, քննելու համար օրակարգի հարցերը եւ պատգամաւորներ ընտրելու: Պատրաստեցին մանրամասն զեկուցումներ եւ հաշուետուութիւններ: Մասնաւորապէս, լուրջ աշխատանքներ կատարուեցին ներգաղթականելու եւ մխայնելու համար Արեւելահայ եւ Արեւմտահայ հատուածներին: Ինձ էր յանձնարարուած զեկուցում ներկայացնել Հ. Յ. Դ. Բիւրոյի հնգամեայ գործունէութեան մասին:

Ժողովը տեղի ունեցաւ Երեւանում: Հետաքրքիր կը լինէր ներկայացնել բոլոր պատգամաւորների ցանկը, ինչ որ հնարաւոր չէ, դժբախտաբար: Բացակայ էին այնպիսի կարեւոր ուժեր, ինչպէս Արմէն Գաբօն, որ դեսպան էր Ուաշինկթընի, Աւ. Ահարոնեանը՝ Փարիզի պատուիրակութեան նախագահ, Մ. Վարանդեանը՝ Հռոմի դեսպան, Յ. Քաջազնունին՝ պատուիրակ Ամերիկայում եւայլն:

Ինձ յանձնուած էր Հայաստանի եւ Արեւելեան Բիւրոների կողմից ընդհանուր զեկուցում ներկայացնել Հ. Յ. Դ. 1914—1919 տարիների գործունէութեան մասին: Դժբախտաբար, այս պահուս, ձեռքի տակ չունեմ զեկուցման բնագիրը: Ես մանրամասնօրէն ներկայացրի վերջին հինգ տարիների ընթացքին պատահած դէպքերը եւ կուսակցութեան կատարած գործերը — Համաշխարհային Պատե-



ARAM webaram.com

բազմ, կամաւորական շարժում, Հայաստանի Հանրապետութեան ստեղծում, եւայլն։

Ժողովին մէջ երկու հոսանք էր նկատուում Հայաստանի Հանրապետութեան եւ կուսակցութեան կազմակերպական ձեւի մասին,



Հ· Յ· Դ· 9–ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

եւ բուռն վէճեր տեղի ունեցան այդ հոսանքների ներկայացուցիչների մէջեւ։ Մէկը ուզում էր, կազմակերպական տեսակէտով կենտրոնացնել պետութիւնն ու կուսակցութիւնը՝ վերջ տալով ապակենտրոնացման։ Այս գաղափարի մոլեռանդ պաշտպան էր Ռ· Տէր–Մինասեանը· մեսը՝ չատապովում էր ապակենտրոնացման դրութիւնը, որ եղել է Հայոց պետութեան եւ եկեղեցու կազմակերպութեան հիմքը դարերի ընթացքին։ Այս տեսակէտը պաշտպանում էի եա։ Բուռն վէճեր տեղի ունեցան Ռուբէնի եւ իմ միջեւ, երբեմն խրատ վիրաւորելու աստիճան։ Ձնչիչ մեծամասնութիւնը անցուց մի բանաձեւ, որ


ARAM webaram.com

հաշտեցնում էր երկու հակամարտ կողմերը. Ո՛չ կենտրոնացում, ո՛չ ապակենտրոնացում: Կուսակցությունը պիտի ունենար ապակենտրոն բիւրօներուն փոխարէն Հ. Յ. Դ. Բիւրօ՝ Գործադիր Մարմնի իրաւունքներով: Այս իմաստով փոխուեց եւ կուսակցութեան կանոնադիրը:

Հ. Յ. Դաշնակցութեան Մրցապրն նուագապօղն բաժնից հանուեց Թուրքիային վերաբերող մասը եւ տեղը դրուեց յօդուած՝ Հայաստանի Հանրապետութեան մասին: Հայաստանի Հանրապետութիւնը ճանաչուում էր տր ժիւրէ՝ բովանդակ հայութեան կողմից:

Ընդհ. ժողովը երկարօրէն զբաղուեցաւ եւ Հայաստանի ներքին եւ արտաքին քաղաքական հարցերով, ինչպէս նաեւ համակուսական բնոյթ կրող խնդիրներով եւ, մասնաւորապէս, Ադրբէյջանի յարձակողական պիտաւորութիւններով՝ Հայաստանի դէմ, այլեւ յարաբերութիւններով Ազգային Պատուիրակութեան հետ:

Տեղի ունեցաւ կուսակցութեան դեկավար Մարմնի ընտրութիւնը: Ընտրուեց Բիւրօ՝ հետեւեալ կազմով.

Բժ. Համօ Օհանջանեան, Աբրահամ Գիւլխանդանեան, Աբշակ Ջամալեան, Ռուբէն Տէր-Մինասեան, Գէորգ Ղազարեան, Սարգիս Արարատեան եւ Ս. Վրացեան:



ARAM webaram.com

# ՆԵՐՔԻՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ՍՈՒՐ ՏԱԳՆԱՊՆԵՐ

*Ընդհանուր ժողովի ընթացքին եւ այնուհետեւ ասկի լուրջ բնոյթ ստացան դէպքերը Ադրբէյջանում, որոնք ասկի սրեցին յարաբերութիւնները Հայաստանի հետ: Ադրբէյջանի իշխանութիւնը, ինչպէս տեսանք, պահում էր ծայրայեղ ազգայնամոլների ձեռքը, որոնց նպատակն էր Ադրբէյջանին կցել Ղարաբաղ—Զանգեզուրը եւ Նախիջեւանի վրայով մխանալ Թուրքիայի հետ: Իրենց դործունէութեան մէջ, նրանք յենւում էին Թուրքերի աջակցութեան վրայ եւ, Թուրքերի միջոցով աշխատում էին օդտադործել բոլշեւիկներին: Դենիկինի արշաւանքի ժամանակ Մոսկուայի վրայ, Թուրք—Թաթարները առաջ բերին ապստամբութիւն կամաւորական բանակի թիկունքում, որի հետեւանքով Դենիկինը ստիպուած եղաւ իր զօրքերի մէկ մասը դրաղեցնել ապստամբութեան ճնշումով, եւ չյաջողեց դրաւել Մոսկուան: Այժմ, Խալիլ եւ Նուրի փաշաների աջակցութեամբ եւ, այսպէս կոչուած, Իսլամական բանակի օդնութեամբ Ադրբէյջանը աշխատում էր դրաւել Ղարաբաղն ու Զանգեզուրը: Զանգեզուրը արդէն Հայաստանի իշխանութեան տակ էր՝ հայկական վաշտաձեւով: Հայաստանի կառավարութիւնը, բնականաբար, չէր կարող անտարբեր դիտել, որ զր. Սուլթանովը բռնութեամբ ձգտում էր Ադրբէյջանին ենթարկել ղարաբաղցիներին, որ Ադրբէյջանի բանակը կենտրոնանում էր Ղարաբաղի սահմաններին վրայ, որ անլուր բարբարոսութիւններ էին դործում Ղարաբաղում: Ընդհանուր ժողովը դրաղուել էր Ղարաբաղի հարցով: Հայաստանի կառավարութիւնը միջոցներ էր ձեռք առել՝ պաշտպանելու համար Ղարաբաղը Թուրք—ադրբէյջանական ոտնձգութիւնների դէմ: Բիւրօն ներկայացուցիչներ ուղարկեց Ղարաբաղ, կառավարութիւնը ուղարկեց յատուկ մի ջոկատ, Դրոյի հր-*



ARAM webaram.com

*բամանատարութեան տակ, որ պիտի գործէր Ղարաբաղի Ազգային Խորհրդի հետ միասին:*

*Յարաբերութիւնները ծայր աստիճան լարուած էին եւ բախումը գարձել էր անխուսափելի: Բայց վրայ հասան անակնկալ բաներ, որոնք նոր ընթացք տուին դէպքերին. 1920 թ. Ապրիլ 28–ին, Ազրբէյջանում յայտարարուեց Սովետական իշխանութիւն:*

*Ճիշդ չէ ասելը՝ անակնկալ: Ներքին հակայեղափոխութիւնը դրեթէ հաշուեյարդարի ենթարկելուց յետոյ, Սովետական Ռուսաստանի կառավարութիւնը հերթական էր դարձրել Կովկասը եւ, առաջին հերթին, նաւթի չեմարան Բակուն վերապրաւելու հարցը: Այդ գործում նրան չահակից եւ օգնող ուժ էին բոլշեւիկների հովանաւորութիւնը վայելող թուրք իթթիհատականները, որոնք ազատ գործում էին Ռուսաստանի տահմաններում:(*): Սրանց միջոցով, բոլշեւիկների բարեկամ եւ գործակից էին դարձել նաեւ Անատոլիայի քեմալականները: Մեզ անծանօթ չէին բոլշեւիկեան—քեմալական սիրաբանութիւնները: Այսպէս, մեր հակահեռախուզութիւնը յայտնել էր, որ, երեւոյթանական ժողովի գրումից յետոյ, Պոլիս էին հասել Մուսթաֆա Քեմալի պատուիրակները եւ յայտնել էին սովետական ներկայացուցիչներին, թէ Անատոլիայի ազատամարտը ցանկանում են յարաբերութեան մէջ մանել սովետական Ռուսաստանի հետ: Քեմալական պատուիրակները առաջարկել էին բոլշեւիկների ներկայացուցչին՝ սովետական պատուիրակութիւն ղրկել Անատոլու, հակառակ դէպքում՝ ընդունել քեմալական պատուիրակներին Մոսկուայում: Մեզ յայտնի էին նաեւ ուրիշ մանրամասնութիւններ թուրք — բոլշեւիկեան գործակցութեան մասին, Կովկասի դաշնային չրջաններում:*

*Ապրիլի կէսերին, Կարմիր Բանակը արդէն նուաճել էր Արեւելեան Կովկասի հիւսիսային չրջանները եւ հասել էր մինչեւ Եալամա երկաթուղային կայարանը: Թուրք գործակալների ապրեցութեան տակ, լեռնականները չէին հակառակել Կարմիր Բանակի յառաջացման: Թուրքերը, Խալիլ փաշա, Նուրի փաշա եւայլն, համոզել էին Ազրբէյջանի զեկավարներին չհակառակել և ընդունել բոլշեւիկներին: Թուրքերի խորհուրդով եւ աջակցութեամբ էր, որ տեղի ունեցաւ Ազրբէյջանի խորհրդայնացումը, Ապրիլ 28–ին:*

*Դէպքերը զարգանում էին հեռեւեալ կերպով: Ապրիլի 27–ին,*

---

(*) Տե՛ս, իմ «ՀԱՑԱՍՏԱՆԸ ԲՈԼՇԵՒԻԿԵԱՆ ՄՈՒՐՃԻ ԵՒ ԹՐՔԱԿԱՆ ՍԱԼԻ ՄԻՋԵՒ», Բ. տպագրութիւն, Բէյրութ:



ARAM webaram.com

ցերեկուայ ժամը 3–ին, Համիտ Սուլթանովը Ադրբէյջանի կոմունիստական կուսակցութեան անունից՝ դիմում է վարչապետ Ուսուպբէզովին եւ պահանջում՝ իշխանութիւնը յանձնել կոմունիստական կուսակցութեան: Ժամանակամիջոց է տրւում մինչեւ նոյն օրուայ երեկոյեան ժամը 7: Անմիջապէս հրաւիրւում է պարլամենտի արտակարգ նիստ, ուր կառավարութիւնը զեկուցում է՝ ներկայացուած վերջնագրի մասին: Պարլամենտը ընտրում է յատուկ մի յանձնախումբ կուսակցութիւնների ներկայացուցիչներից՝ դրուած հարցի մասին վերջնական որոշում մշակելու համար: Յանձնախումբի մէջ մտնում են կուսակցութիւնների պարագլուխները, Ռասուլ Զադէ, Մամէդ Հասան Գայիբնակի, դկտ. Կարաբէկով, Սաֆիքիւրդակի, Քարատաչեւ եւ Ազամալի Օղլի: Յանձնախումբը անմիջապէս նիստ է գումարում ներքին դրծոց նախկին նախարար Ջիւանշիրի մօտ, ուր Սուլթանովը նորից ներկայացնում է իշխանութիւնը կոմունիստներին յանձնելու պահանջը, որին կոզմնակից են, իրր թէ, նաեւ բանակը, նաւատորմիղն ու բանուորութիւնը: Յանձնախումբը որոշում է ընդունել այդ պահանջը եւ իր որոշման մասին զեկուցում է պարլամենտի արտակարգ նիստին: Պարլամենտը հաստատում է յանձնախմբի եզրակացութիւնը: Ապրիլի լոյս 28–ի դիշերուայ ժամը 12–ին, Ադրբէյջանի հանրապետական իշխանութիւնը անցնում է կոմունիստական կուսակցութեան ձեռքը: Կազմւում է Յեղափոխական Կոմիտէ, որի նախագահ է նշանակւում Սովետական Ռուսաստանի արեւելեան գործերի կոմիսար պկ. Նարիման Նարիմանովը, որ այդ պահուն գտնւում էր Պետրոգրադում: Յեղափոխական Կոմիտէն Ադրբէյջանը յայտարարում է անկախ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութիւն:

Ադրբէյջանի պարլամենտը իր վերջին նիստում առաւ հետեւեալ որոշումը, որը պարլամենտի նախագահ Մահմէդ Իսուֆ Ջաֆարովի կողմից անմիջապէս հաղորդուեց բոլշեւիկների ներկայացուցիչ Սուլթանովին.

«Ինձ լսով ձեր Ապրիլ 27 թուակիր նամակը եւ նրա բովանդակութիւնը համապրելով ներկայումս ապրած մոմենտին եւ ուշադրութեան առնելով ձեր առաջարկը մեզանից ընտրուած յանձնախմբին այդ մասին.

1· Որ պահպանւում է Ադրբէյջանի անկախութիւնը Խորհրդային իշխանութեան վարչաձեւով.

2· Որ Ադրբէյջանի կոմունիստական կուսակցութեան կողմից կազմուած կառավարութիւնը կը լինի ժամանակաւոր մարմին.

ARAM webaram.com

3· Որ Ազրբէյջանի կառավարութեան վերջնական ձեւը, անկախ արտաքին բոլոր ճնշումներից, որոշւում է Ազրբէյջանի բարձրագոյն օրէնսդրական հիմնարկութեան կողմից՝ յանձին Ազրբէյջանի բանուորական, գիւղացիական եւ ասկերական խորհուրդների ներկայացուցիչների.

4· Որ կառավարական հիմնարկութիւնների բոլոր ծառայողները մնում են իրենց տեղերում եւ փոխւում են միայն այն անձերը, որոնք պատասխանատու պաշտօն ունին.

5· Որ նորակազմ կոմունիստական կառավարութիւնը երաշխաւորում է կառավարութեան եւ պարլամենտի անդամների կեանքի եւ գոյքերի անձեռնմխելիութիւնը.

6· Որ միջոցներ ձեռք կ'առնուին, որպէսզի կարմիր բանակի կռւով բացու մտնելը արգելուի.

7· Որ նոր կառավարութիւնը վճռական կերպով եւ նրա տրամադրութեան տակ եղած բոլոր միջոցներով պիտի կռւի ամէն կարգի արտաքին ուժերի դէմ, որոնց նպատակն է լինելու վտանգել Ազրբէյջանի անկախութիւնը, որտեղից էլ որ հասնելու լինեն նրանք.

Ազրբէյջանի պարլամենտն իր արտակարգ նիստում այս պայմաններն ընդունեց ձայների մեծամասնութեամբ, որ եւ հաղորդում եմ ձեզ ի գիտութիւն»:

Վրաստանի սոց. դեմ. պաշտօնաթերթ «ԽՐԹՕԲԱ»ն, որ, տասհասարակ լաւատեղեակ թերթ էր, Ազրբէյջանի յեղաշրջումից անմիջապէս յետոյ, հաղորդեց, որ Ջիւանշիրի մօտ կատարուած խորհրդակցութեան ժամանակ, կոմունիստների ներկայացուցիչ Սուլթանովը երաշխաւորութիւն է տուել պարլամենտական յանձնաժողովին, թէ Խորհրդային իշխանութիւնը կը չարունակէ պատերազմը Հայաստանի դէմ եւ կ'ապահովէ Ղարաբաղ—Զանգեզուրի կցումը Ազրբէյջանին:

Մեզ թւում էր, որ Ազրբէյջանի կառավարութեան փոփոխութիւնը ծիսական բան էր. ըստ էութեան, նոր իշխանութիւնն էլ ոչընչով չէր տարբերւում նախորդից, գոնէ Հայաստանի վերաբերմամբ: Զօրքերը չարունակում էին իրենց նուաճողական ընթացքը, նահանգապետ դկ. Սուլթանովը, այժմ կարմիր կոմիսար, յոխորտում էր ղարաբաղցիների դէմ, որի գլխաւոր քաղաք Շուշին այրել էր եւ քարուքանդ արել՝ փշացնելով հայ բնակիչներին:

Իրենց ընդհանուր սովորութեան համեմատ, Ազրբէյջանը գրաւելուց յետոյ, Բոլշեւիկները հաստատեցին անտանելի մի ռէժիմ: Բռնագրաւումները, դնդակահարութիւնները ու բանտարկութիւն-



ARAM webaram.com

նները պարձան սովորական երեւոյթ։ Ըստ «Կոմունիստ» պաշտօնաթերթի, Յունիսին Բաղուի Բայիլեան ընդարձակ բանտը արդէն լեցուած էր. այնտեղ կային 1300–ից աւելի «հակայեղափոխականներ»։ «Եւ քանի որ ձերբակալութիւնները չարունակւում են, դրում էր «Կոմունիստ» թերթը, ձեռնարկուեց կենտրոնական բանտի չտապ նորոգութեան, որի համար յատկացուեց 100 հազար ռուբլի»։

Ադրբէյջանի պարլամենտի փոխ–նախագահ Ազայեւը հետեւեալ ձեւով է նկարագրում բոլշեւիկեան քաղաքականութիւնը Ադրբէյջանի խորհրդայնացումից յետոյ. «Պարլամենտի արձակումով Ադրբէյջանի կառավարութիւնը փաստօրէն անցաւ դրսից եկած Սով. Ռուսաստանի գործակալների ձեռքը. յանձին Օրջոնիկիձէի, Քիրովի, Լեւանդովսկու, Պանկրատովի, Միկոյեանի եւ նրանց կողմից նշանակուած ուրիշ անձանց, որոնք կախում ունէն ռուսական կառավարութիւնից։ Հէնց սկզբից՝ Ադրբէյջանի միանգամայն խորթ անձանց այդ կառավարութիւնը աչքի ընկաւ խաղաղ ազգաբնակութեան նկատմամբ դրծադրած բռնութիւններով այն վայրերում, որոնց վրայով անցել են կարմիր զօրքերը։ Ձերբակալելով ու զնդակահարելով Ադրբէյջանի կառավարութեան մէջ պաշտօնավարող մի շարք անձանց, ինչպէս նաեւ միջազգային իրաւունքի տեսակէտից անթոյլատրելի ձերբակալութիւններ կատարելով մի քանի օտարազգի միսիաների եւ Ադրբէյջանի սահմաններում ապաստանած օտարազգի ազանների զանգուածային զնդակահարութիւններով»։

Նոր իշխանութեան հետագայ գործունէութիւնը, ինչպէս, օրինակ, Ադրբէյջանի բանակի վերակազմութեան կարգադրութիւնը, խալամ ազգաբնակութեան զինաթափումը, բռնագրաւումները եւ մի շարք ապրանքների, կենսամթերքների հսկայական քանակութեամբ Ադրբէյջանից արտահանելը՝ անկասկածելիօրէն վկայում են, որ այդ բռնի կերպով հաստատուած օտարազգի իշխանութեան միակ նպատակն է երկրի քաղաքական ստրկացումը եւ նրա ժողովրդի աշխատանքի բարիքների կողոպտումը։

Այս բոլորի հետեւանքով, կարճ ժամանակից յետոյ, երկրի բոլոր վայրերում տարերային կերպով ժողովրդական ապստամբութիւններ ծագեցին՝ պաշտպանելով նոր իշխանութեանը չհպատակող Ադրբէյջանի բանակի զօրամասերին։ Բոլշեւիկները ձեռք առին դրակոնական միջոցներ. ամբակոծութիւնից հողին հաւասարեցուեց Բաղուից յետոյ երկրորդ տեղը բռնող Գանձակ քաղաքի մահմեդական գլխաւոր մասը, որտեղ ջարդուեցին 8000–ի չափ խալամներ եւ 1500 խալամուհիներ, քաղաքը դրաւելիս՝ բռնաբարուեցին ռուս բանակա–



ARAM webaram.com

յիններէն կողմէ»։

Ազրէյջանի յեղաշրջումէ անմիջապէս յետոյ, նոր կառավարութիւնը եւ կարմիր բանակը հեռագիրներով վերջնագիր ուղարկեցին Հայաստանի կառավարութեան՝ պահանջելով, որ երեք օրուայ ընթացքում, հայկական զօրամասերը ու պաշտօնեաները հեռանան Ղարաբաղից եւ Զանգեզուրից, որոնք պատկանում են Ազրէյջանին։ Ազրէյջանի յեղաշրջումը եւ այս վերջնագիրը ցնցող տպաւորութիւն գործեցին Հայաստանում, որ պատրաստւում էր հանդիսաւոր կերպով տօնելու Մայիս 1-ի աշխատաւորական օրը։ Զախակոմէական տարրերը եւ բոլշեւիկները չանցան քաղաքական բնոյթ տալ տօնակատարութեան։ Օրուայ լօզունգների — կարգախօսների — մէջ՝ կային զուտ բոլշեւիկեան բանաձեւեր։ Երեւանում, Մայիս 1-ի հանդէսը եղաւ մեծադիմուկ։ Մի պահ թւում էր, որ խռովութիւններ տեղի կ'ունենան, բայց կառավարութիւնը կարողացաւ պահպանել կարգը։

Ալեքսանդրապոլում, Մայիս 1-ի տօնակատարութիւնը վերածուեց քաղաքական ցոյցի։ Ինչպէս վերջը յայտնի եղաւ, Ազրէյջանի խորհրդայնացումից յետոյ, Աբիս Նուրիջանեանի պէս տաք-պուխ բոլշեւիկ գեկավարները, հակառակ Արմենկոմի — Հայաստանի կոմիտէ —, որոշել էին Ազրէյջանի յեղաշրջումից անմիջապէս յետոյ, ապստամբել եւ գրաւել իշխանութիւնը։ Մայիս 1-ի տօնը եւ Ազրէյջանի վերջնագիրը՝ յարմար առիթ էին։

Ալեքսանդրապոլի բնակչութիւնը եւ պինդ իշխանութիւնները յանկարծակիի էին եկել։ Մայիս մէկեան խաղաղ ցոյցերը, բոլշեւիկ արկածախնդիրների զրգռիչ ճառերի ազդեցութեան տակ, վերածուեցին խռովութիւնների՝ կառավարութեան դէմ։ Յուցարարները, զինաւորապէս երկաթուղային արհեստանոցի բանուորները, խուժեցին Հ. Յ. Դաշնակցութեան Ակումբը եւ ջարդուփշուր արին պատերի նկարները, նեռի ամբողջ կահ-կարասիները, գրքերը։

Նահանգապետը, այդ պահուն, քաղաքում չէր։ Ժանդարմներին առած՝ մեկնել էր գիւղերը։ Իշխանութիւնը չուտարած՝ ի վիճակի չէր կարգը վերականգնելու։ Քաղաքը անցել էր խռովարարների ձեռքը։ Զօրքը չէր միջամտում։ Տեղական դաշնակցական մարմինները չէին նախատեսել նման բան։

Խռովարարները, գրաւելով երկաթուղու կայարանն ու «Վարդան Մամիկոնեան» գրահապատ գնացքը՝ կազմեցին «Հայաստանի յեղափոխական կոմիտէ» — ՅԵՂԿՈՄ —, գրահապատի հրամանատար՝ ապագ Մուսայէլեանի նախագահութեան տակ։ Յեղկոմի անդամներ նշանակուել էին Երեւանից նոր եկած Արտաշէս Մելքոնեանը՝



ARAM webaram.com

պարլամենտի անդամ, եւ Դրաստամատ Սիմէոնեանը, այլ եւ Ափխ Նուբիջանեանը, Ղարիբջանեանը եւ ուրիշներ: Յեղկոմը ջանաց իր ձեռքը առնել քաղաքի ամբողջ իշխանութիւնը եւ վերջնապէս—հետապրոմ՝ պահանջեց, որ իրեն յանձնուի Հայաստանի իշխանութիւնը:

Անմիտ եւ տղայական էին, չասելու համար յանցաւոր, այս մարդկանց գործերը: Նախ՝ յայտնութեան ո՛չ մի հաւանականութիւն չունէին. Հայաստանը Ադրբէյջան չէր, եւ հայ ժողովուրդը պիտէր իր հայրենիքի անկախութեան արժէքը: Երկրորդ՝ երկրի ընդհանուր վիճակը եւ միջպետային կացութիւնը այնպէս էին, որ մեզի յանցաւոր խղճի ամբողջ մարդիկ կարող էին յեղաշրջման փորձ անել:

Ալէքսանդրապոլի դէպքերը մեծ տպաւորութիւն գործեցին Երեւանում: Շտապով գումարուեց Հ. Յ. Դ. Բիւրոյի ժողովը, որ որոշեց անմիջապէս փոխել կառավարութիւնը, իշխանութիւնը յանձնել Հ. Յ. Դ. Բիւրոյին, պինուորական վիճակ յայտարարել երկրում: Բիւրօն վախենում էր, որ Ալէքսանդրապոլի դէպքերը կարող են արձագանգ գտնել եւ միւս գաւառներում եւ առիթ ծառայել արտաքին, յատկապէս Կարմիր Բանակի միջամտութեան: Եւ այդ վախը, ի հարկէ, անհիմն չէր: Այսօր մեզ մեղադրում են, որ պէտք է հետաեւութիւնն ունենայինք եւ այդ վայրկեանին մտածէինք իշխանութիւնը փոխանցել բոլշեւիկներին: Այդ պարագային — ասում են — տեղի չէին ունենայ հետագային Հայաստանին հասած դժբախտութիւնները: Դիւրին է դէպքից յետոյ մարգարէ լինելը. բայց մտածեցէք՝ այդ հնարաւո՞ր էր այն օրերին, Սեւրի նախօրեակին, երբ դեռ դաշնակիցները ափ էին աչխարհի եւ, «Մեծ Դաշնակիցները» դաշնակից ու պինակից էին «Փոքր Դաշնակից» Հայաստանին — այո՛, Բիւրօն որոշեց ամէն գնով հաշուեյարդարի ենթարկել բոլշեւիկեան խառնութիւնները:

Մայիս 5–ին, գումարուեց պարլամենտի արտակարգ նիստը: Ն. Ադբալեանը, այդ նիստում, խօսեց իր նշանաւոր ճառը, որի մէջ, ի միջի այլոց, ասաց, թէ բոլշեւիկները ռուս կանանց վարտիքները դրօշակ դարձրած՝ գալիս են նուաճելու մեր աչխարհը: Խատիսեանի կառավարութիւնը հրաժարական ներկայացրեց պարլամենտին, տեղը նշանակուեց նոր կառավարութիւն՝ Հ. Յ. Դ. Բիւրօն իր ամբողջ կազմով: Փաստօրէն սա նշանակում էր Դաշնակցութեան դիկտատուրա:

Պարլամենտը արձակուրդ ստացաւ մէկ ամիսով: Նոր կառավարութիւնը, բժ. Հ. Օհանջանեանի վարչապետութեամբ անցաւ գործի: Կառավարութեան անդամներն էին՝ Հ. Օհանջանեան՝ վար-



ARAM webaram.com

չապետ եւ արտաքին գործոց նախարար, Աբր. Գիւլխանդանեան՝ ֆիւմտական, Ռ. Տէր-Մինասեան՝ ներքին եւ դիւանագործական, Ա. Ջամալեան՝ հաղորդակցութեան, Ս. Աբարատեան՝ խնամատարութեան, Գ. Ղափարեան՝ հանրային կրթութեան եւ արուեստի, եւ պահեցի նախկին պաշտօններս՝ դիւզատնտեսութեան, պետական գոյքերի եւ աշխատանքի:

Նոր կառավարութիւնը անմիջապէս անցաւ գործի, բոլշեւիկների խռովութիւնների ճնշման, վճռական միջոցներով: Այստեղ աւելորդ եմ համարում մանրամասնութիւնների մէջ մտնել: Ասեմ միայն, որ խռովութիւնները տարածուել էին նաեւ ուրիշ շրջաններում՝ Կարսի, Նոր-Բայազէդի, Սարըղամիշի եւ այլ վայրերում: Կառավարութիւնը ժողովրդի եւ զօրքի օժանդակութեամբ, արագ կերպով, մի քանի շաբաթների ընթացքում, հաչուեյարդարի ենթարկեց խռովութիւնները: Կառավարութիւնը մտցրել էր մահուան պատիժ, կազմել էր արտակարգ դատարաններ, որոնց շատ քիչ պէտք եղաւ հետապատիժներ տուեց: Միայն Ալէքսանդրապոլի արտակարգ դատարանը մի քանի մահուան պատիժներ տուեց: Մինչ Երեւանինը՝ թժ. Տէր-Դաւթեանի նախապահութեամբ ոչ մի մահապատիժ չարձակեց: Խռովարարներին նախապատրաստելու համար, Երեւանի հրապարակում կանգնեցուած կախաղանի վրայ, երախաներն էին ճօճւում...


Իմ պաշտօնը, կառավարութեան մէջ, բոլշեւիկեան խռովութիւնները զսպելու համար պրոպագանդի կազմակերպումն ու ղեկավարութիւնն էր՝ մամուլի եւ այլ միջոցներով, ինչպէս նաեւ ինֆորմացիայի գործը: Մամուլում լոյս տեսած գրեթէ բոլոր կոչերը, պաշտօնական հաղորդագրութիւնները կառավարութեան կողմից՝ գրուած են իմ ձեռքով:

Մայիսի վերջերը, ամէն տեղ, բոլշեւիկեան ըմբոստութիւնները ճնշուած, վերջացած էին՝ որոշ վայրերում դաժան միջոցներով: Ինձ անձնապէս ցաւ պատճառեց իմ նախկին ուսուցիչ Սարուխանեանի ախտը վախճանը: Սարուխանեանը համոզուած կոմունիստ էր, Նոր-Բայազէդի դաւառում՝ ղեկավար էր ապստամբութեան: Ժողովուրդը ձերբակալել էր նրան եւ, ինչպէս պատմում էին, ձիու պոչից կապելով՝ քշել էին քարքարոտ դաշտի մէջ:

Սարսափելի բան է քաղաքացիական կռիւը: Նա ոչ անմեղ է ճանաչում, ոչ մեղաւոր: Բոլշեւիկների չարքում քիչ չէին եւ՛ զազափարական մարդիկ, ինչպէս Մուսայէլեանը, բայց երբ անտառ են կարում, անխուսափելի կերպով տաշեղները կը թռչեն այս ու այն կողմ: Տաշեղները թռան եւ Մայիսեան խռովութիւնների ժամանակ:



ARAM webaram.com




ԲԻՒՐՕ — ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ



ARAM webaram.com

1920 թ. Մայիս 28–ի հանրապետութեան տարեդարձի օրը՝ ոճնուեցաւ արտակարգ խանդավառութեամբ: Երեւանի կենտրոնում, հրապարակի վրայ, ներկայութեան Ամենայն Հայոց Կաթողիկոսի, վարչապետի, պարլամենտի նախագահութեան եւ պարլամենտի ու կառավարութեան անդամների, սպարապետ Նազարբէկեանի, սպայակոյտի անդամների, դիւանագիտական ներկայացուցիչների, օտար հիւրերի, այլ եւ ժողովրդական խուռն բազմութեան՝ Հանրապետական մաղթանք կատարուեց արտակարգ հանդիսաւորութեամբ: Հայաստանը եւ հայ ժողովուրդը ազատուել էին մեծ դժբախտութիւնից:

Բնական պէտք է լինէր, որ բոլշեւիկեան խռովութիւնների հաշուեյարդարով, վերջ դանէր եւ՛ Բիւրօ—կառավարութեան առաքելութիւնը: Այդպէս էլ մտածում էին ժողովուրդի մէջ եւ կառավարութեան մի քանի անդամները: Ես, մանաւանդ, պնդում էի, որ մի ամիսը լրանալուց յետոյ՝ պէտք է դումարուի պարլամենտը, եւ կառավարութիւնը վերկացում ներկայացնելով իր գործունէութեան մասին՝ տայ իր հրաժարականը: Բայց, ասում են, ախորժակը ուտելով կը բացուի: Մանաւանդ վարչապետը եւ դիւնուորական նախարարը պնդում էին, որ Բիւրօ—կառավարութիւնը պէտք է մնայ իշխանութեան վրայ, որովհետեւ դեռ նա շատ հարցեր ունի կարգադրելիք. յարաբերութիւն Այրըէյլանի հետ, յարաբերութիւն Սով. Ռուսաստանի հետ, ներքին հակահեղափոխական տարրերի՝ Զանգիբասարի եւ այլ շրջանների մաքրագործում, եւայլն: Այս հարցի շուրջ, Բիւրօ–կառավարութեան միանձնականութիւնը խախտուեց: Ես, վարչապետին ներկայացրի իմ հրաժարականը կառավարութիւնից: Առաջ եկաւ ներքին տաղնապ: Վարչապետը պատասխանեց, որ եթէ ես պնդեմ իմ հրաժարականի վրայ, ինքն էլ հրաժարական կը տայ: Մեւս նախարարներն էլ արդարեւ չէին երեւում հրաժարուելու եւ յորդորում էին ինձ՝ յետ վերցնել հրաժարականս: Տաղնապը տեւեց մի քանի օր: Ես ստիպուած եղայ մնալ կառավարութեան կազմի մէջ: Պարլամենտը, որ պիտի դումարուէր մէկ ամսուայ արձակուրդից յետոյ, նորից հաստատեց Բիւրօ—կառավարութեան լիազօրութիւնը:

Այնուհետեւ, տեղի ունեցաւ Զանգիբասարի մաքրագործումը, Հայաստանի բանակի մէջոցով: Գրեթէ դուռ թրքաբնակ Զանգիբասարը՝ Երեւանին կից գաւառակ էր: Գանուում էր Թուրքերի ազդեցութեան տակ եւ արհամարհանքով ու թշնամութեամբ՝ մերժում էր հպատակուել Հայաստանի իշխանութեան: Անբնական եւ վարկաբեկիչ դրութիւն էր ստեղծուած Հայաստանի կառավարութեան համար: Հէնց սկզբից Հայաստանը պէտք է լուծէր, եւ հնարաւորութիւն կար



ARAM webaram.com



# Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

# Ա Զ Դ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԲԻՒՐՕՆ Ի ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ
ԵՒ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳԸ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԲՈԼՈՐ ՈՒԺԵՐԻ

# ՄՕԲԻԼԻԶԱՑԻԱ.

*Այսօրուանից սկսած իւրաքանչիւր շրջանի բոլոր դաշնակցական ընկերները պարտաւոր են ներկայանալ տեղական ժարմին կամ Բիւրօյի լիազօրին և նրանց տրամադրութեան տակ դնել իրենց բոլոր ուժերը։*

ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԱՆՊԱՐՏԱՃԱՆԱՁՈՒԹԻՒՆ ԱՑՍ
ԽՆԴՐՈՒՄ ՀԱՄԱՐԻՈՒՄ Է
ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆ

*և պէտք հաւատալ որ նա պատժի արժանանայ։*

Հ. Յ. Դաշնակցութեան
ԲԻՒՐՕ
5 Մայիսի 1920 թ.
Երեւան։

ԶՕՐԱՇԱՐԺԻ ԿՈՉԸ

ARAM webaram.com

լուծելու Զանգիբասարի կնճիռը, բայց ինչ-ինչ պատճառներով՝ հարցը յետաձգուել էր: Այժմ, մայիսեան խռովութիւնների օրերին, հերթական էր նկատուում, թէեւ դժուար և վտանգաւոր խնդիր էր: Զանգիբասարը ոտքից-գլուխ պինուած էր, ունէր թուրք զէկավարներ, նիւթական օգնութիւն էր ստանում Ադրբէյջանից — Զանգիբասարի հաշուեյարդարը բռնի միջոցներով կարող էր մեծ աղմուկ հանել Հայաստանի թշնամիների եւ բարեկամների մէջ: Աւելի վատ, կարող էր բարդացնել եւ կտրմատուածել հայկական գործը, որ պիտի մասնակցէր Զանգիբասարի հաշուեյարդարին:

Այս բոլորը, եւ նկատողութեան յանձնեցի կառավարութեան, երբ քննում էր Զանգիբասարի հարցը: Կառավարութիւնը ընդունեց վարչապետի եւ պինուորական նախարարի առաջարկը՝ անմիջապէս դիմելու պինուորական գործողութիւնների Զանգիբասարի դէմ: Միաժամանակ, հրահանգեց գօրավար Շելկովնիկեանին իր գործը չարժել Շարուր—Նախիջեւանի ուղղութեամբ: Զանգիբասարը, ճիշդ է, մաքրուեց, բայց, դժբախտաբար, ծանր, անդարմանելի գնով: Հայ գործը բարդացաւ ու տկարացաւ: Այդ մենք զգացինք վերջը, պատերազմի օրերին՝ թուրքերի հետ:

Ցաւալի է, ծանր հետեւանքներով յղի, երբ կանոնաւոր բանակը մասնակցում է քաղաքացիական կռուին: Ամենաքաջ պինուորականներն անգամ, յաճախ, գտնում են չհամոզ թալանչիներ: «Զանգիբասար Աւելեչայիտ» — պատասխանատու է Զանգիբասարը — ազգակում էին Զանգիբասարի արշաւանքին մասնակցած սպաները երեւանում, քէֆերի ժամանակ՝ Զանգիբասարում թալանուած գրամներով:

Զանգիբասարի մաքրագործումից անմիջապէս յետոյ, ես գնացի Շարուր, ուր մնել էին արդէն գօրավար Շելկովնիկեանի գօրամասերը: Ինձ հետ էին Ա. Զամալեանը, Արմենակ Բարսեղեանը, որ նոր էր եկել Պոլսից՝ առեղծուածներ բերելով կուսակցական եւ զգայլին գործերի մասին: Մեզ հետ էին եւ վահան Փափազեանի — կոմս — բժշկուհի կինը՝ Հեղուշը եւ մի քանի ուրիշներ: Մեր շրջակաքը կանգ առաւ մի մեծ դիւղում — անունը չեմ յիշում — որի բնակիչները լքել, փախել էր Արաքսի միւս կողմը: Գիւղը մնացել էր ամայի: Տուն, ախոռ, մթերանոց՝ լիքն էին ամէն տեսակ ապրանքներով. ցորեն, բամպակ, կաշի, գորգեր եւայլն: Պահապան չկար: Մի սպայ, պինուորների հետ վազոն էր լեցնում պահեստներից հասած առարկաները: Ես ճանաչում էի այդ սպային. մեր քաջ եւ օրինակելի պինուորականներից էր, որ արժանացել էր կառավա-



ARAM webaram.com

բութեան բարձր դնահատութեան: «Ի՞նչ էք անում դուք այստեղ» հարցրի ես: Նա գետին ուղղեց հայեացքը՝ առանց պատասխանելու ինձ: «Զանգիբասար աովեչայնա»:

Իմ գնկուցման վրայ, կառավարութիւնը նորանուաճ չրջաննեբի լքեալ գիւղերի առաջնուածքները հաւաքելու համար՝ ընդհանուր վարիչ նչանակեց Ն. Ադրալեանին: Հանրային կրթութեան նախարա՛ր, բարձրորակ մտաւորակա՞ն, յայտնի քննադա՞տ եւ լքեալ գիւղերի դոյքերի հաւաքիչ... Նիկոլը սիրում էր այդպիսի տարօրինակ բաներ: Այնուհետեւ, մենք նրան կոչում էին «բրինձի կոմիսար»:

Ադրալեանին օգնական Զանգիբասարում՝ նչանակուեց Հայաստանի Ինքհուրդը ցրող Սաքօ Յակոբեանը: Ես, իբրեւ պետական դոյքերի նախարար, այցելեցի եւ Զանգիբասարի չրջանը: Սաքօն ինձ հիւրասիրեց Զանգիբասարի նչանաւոր Դուդմայով:

Այստեղ յիշեմ եւ հետեւեալ փաստը: Պարլամենտի անդամ բժ. Արշակ Ղազարեանի գլխաւորութեամբ, պարլամենտի մի քանի անդամների եւ մի քանի նախարարների կանանց հետ կազմել էին մի կօօպերատիւ, մի տեսակ «կոլխոզ» պարլամենտի անդամների եւ պետական պաչտօնեաների համար: Վայրը ընտրել էին Զանգիբասարի լքեալ Զարբախ գիւղի հողերը: Դիմել էին գիւղատնտեսական նախարարութեան՝ հատատաեելու համար իրենց ընկերութիւնը: Ի՞նչ կար որ. ամէնքը մտածում էին իրենց ապագայի մասին: Պարլամենտի անդամները եւ պետական պաչտօնեաները ապագայ չունէի՞ն... Ես հատատաեցի Զարբախի կոմունան:

Բայց, յանկարծ, ամէն կողմից լսուեցին դանգատներ ու բողոքներ: Ի՞նչ, երբ անդին աչխատաւոր գիւղացիները եւ գաղթականները մնում էին առանց հողի, թչուառութեան մէջ, պարլամենտի անդամնե՞րը պիտի հարստանային ի հաչիւ լքեալ դոյքերի: Արդարութիւն կա՞ր այս երկրում: Հակառակորդները օգտագործեցին այս պարագան մամուլի մէջ: Ես անդրադարձայ, որ հողեբանական այն մթնոլորտում սխալուել եմ եւ ջնջեցի Զարբախի կոմունայի արտօնութիւնը:

Ի միջի այլոց ասեմ, որ Արշակ Ղազարեանի հետ օրուայ հերոս էր եւ Մալխասը, ամէն տեսակ անյաջող գործերի անյաջող նախաձեռնողը: Ապագայ «Զարթօնք»ի հեղինակը, Երեւանում, վաճեցի ոսկերիչների կօօպերատիւ արհեստանոց էր կազմակերպել, որոնց արուեստի գեղեցիկ գործերը հիւսիսային Կովկասում եւ Ռուսաստում ծախում էր իր հաչուին: Վաճեցի գործակալների միջոցով գործեր եւ թանկագին քարեր էր հաւաքում Երեւանում: Սոխումից բերել էր


ARAM webaram.com

տրապիզոնցի ծխախոտագործներ եւ Սարդարապատում հաստատել էր ծխախոտի մշակողների անտեսութիւն: Այդ ամէնը, ի հարկէ, իր հաշուոյն:

Հայաստանում ձեռք բերած անտեսական փորձառութիւնը, տարիներ վերջը, նա փորձեց կիրարկել եւ Ամերիկայում: Կարծեմ Ուիսքանսըն նահանգում նա, ի հարկէ, փոխ առած դրամներով, հիմնեց խոզաբուծական ագարակ: Խոզերը բազմածին կենդանիներ էին, միսը թանկ արժէր՝ Մալխասը երազում էր արագ հարստանալ: Գնեց մի տասնեակ խոզեր, յանձնեց մի քանի արուավար եղիպտացօրէն, բայց անբրաւ խոզերի մի մասը սատկեց խոզի հիւանդութիւնից եւ եղիպտացօրէնը ոչնչացաւ հեղեղներից՝ յօդս ցնդեցնելով նաեւ Մալխասի անտեսական ծրագիրները:



ARAM webaram.com

# ՍԵՒ ՄՈՒԹ ԱՄՊԵՐ...

Բայց եւ այնպէս, Հայաստանի հանրապետութիւնը, 1920 թ. սկիզբը, արդէն կազմակերպուած պետութիւն էր: Պարլամենտ, կառավարութիւն, սեփական բանակ, արտաքին քաղաքականութիւն, ներքին վարչական կազմ, ելեւմուտք, հարկային տեսչութիւն, դեսպանութիւններ, մշակութային եւ տնտեսական կեանքի կեանք — հայը զարձել էր պետական ազգ՝ սեփական իշխանութեամբ եւ սեփական ղրօշով: 1920 թ. Յունուարին, դաշնակիցների Գերագոյն Խորհուրդը de jure ճանաչել էր անկախ Հայաստանի իշխանութիւնը: Հայ ժողովուրդը սպասում էր խաղաղութեան հաստատման, որով de facto պիտի ճանաչուէր Հայաստանի անկախութիւնը, եւ հայոց պետութիւնը պիտի դառնար միջազգային համակեցութեան մի անդամ՝ ազատ եւ անկախ:

Ազրբէյջանի խորհրդայնացումից եւ Մայիսեան խռովութիւններից յետոյ, մասնաւորապէս սրուել էին յարաբերութիւնները Հայաստանի եւ Սով. Ռուսաստանի միջեւ: Քանի կարմիր բանակը իջնում էր դէպի հարաւ, այնքան յարձակողական, հակահայ էր դառնում Ազրբէյջանը, այնքան սանձարձակ էին դառնում հայ բոլշեւիկները: Դեռ Ապրիլին, Հայաստանի բարեկամները, Մոսկուայից եւ Հիւսիսային Կովկասից խորհուրդ էին տալիս մեզ՝ բանակցութեան մէջ մտնելու Սովետական իշխանութեան հետ, փոխադարձ համաձայնութեամբ հաստատելու համար բարեկամական յարաբերութիւնները՝ երկու երկիրների միջեւ: Վրաց կառավարութիւնը, անաղմուկ, արդէն Մոսկուա էր ուղարկել մենշեւիկ Ուրուտաձէին եւ հաշտութիւն կնքել բոլշեւիկների հետ: Ժամանակն էր հայերի համար էլ անելու նոյնը:


ARAM webaram.com

Կառավարութիւնը մի չարք ժողովներ ունեցաւ եւ որոշեց Մոսկուա ուղարկել յատուկ պատուիրակութիւն: Ո՞վ պիտի լինէր պատուիրակութեան նախագահը: Տրւում էին մի քանի անուններ: Դրօն եւ երիտասարդութիւնը առաջ էին քաշում իմ անունը: Բայց վարչապետը եւ պինուորական նախարարը կարուկ կերպով պահանջեցին, որ Մոսկուա մեկնելիք պատուիրակութեան նախագահը լինի արեւմըտահայ· իրր թէ, այդ ձեւով, աւելի ուժեղ կերպով պիտի պաշտպանուէին Թրքահայոց իրաւունքները: Երեւանում, այն օրերին, բարձր հեղինակութեան տէր անձերն էին Վ. Փափազեանը՝ կոմս եւ պարլամենտի փոխ–նախագահ Լեւոն Շանթը: Փափազեանը հիւանդ էր թիֆով եւ չէր կարող ճանապարհորդել: Շանթը նշանակուեց պատուիրակութեան նախագահ: Պատուիրակութեան կազմի մէջ մտան պարլամենտի անդամներ՝ իրաւաբան Համբարձում Տէրտէրեանը եւ բազուկ բանուորական շրջանում համակրանք վայելող Լեւոն Զարաֆեանը: Հ. Տէրտէրեանը իմ դասընկերն էր Նոր–Նախիջեւանի թեմական դպրոցում եւ Պետրոկրատի համալսարանում: Թոփիկ պիւղացի էր, և ինչպէս ամէն Թոփուեցի, մի քիչ խորամանկ եւ խիստ խնայասէր անձ էր: Մտքով դարպացած, ուղղամիտ, պարտաճանաչ, հայրենասէր՝ նա բարեկամներ ունէր եւ՛ բոլշեւիկների շրջանակներում, մօտ էր մտանուորապէս Ալ. Միասնիկեանի եւ իրեն համապիւղացի Սարգիս Սրապիոնեանի (Լուկաչին) հետ: Յարմար անձ էր Հայաստանը ներկայացնելու Մոսկուայում:



ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՏԷՐՏԷՐԵԱՆ


Շանթը, ընդհակառակն, բնաւ յարմարութիւն չունէր այդ դերի համար: Բնաւորութեամբ չոր, ինքն իր մէջ քաշուած, աչխարհի գործերը հեղնող, ամբողջ էութեամբ բոլշեւիկներին ատող՝ նա չատ պիտի չունէր քաղաքականութեամբ պրպտուելու: Նրան հետաքրքրում էին առանձնապէս պրակտիկ–իմաստասիրական հարցերը: Հ. Տէրտէրեանը պատմում էր, որ Մոսկուայում, բացի պաշտօնական յարաբերութիւններից, նա չատ քիչ մարդկանց հետ էր տեսնուում: Փակուած իր սենեակում՝ աշխատում էր «Ցղիայուածը» թատերգութեան վրայ:



ARAM webaram.com

Պատուիրակութիւնը Երեւանից մեկնեց՝ արագ Մոսկուա հասնելու հրահանգով: Յանձնարարուած էր Մոսկուայում անցկացնել հետեւեալ պահանջները.— Միացեալ Հայաստանի անկախութեան ճանաչումը, նրա սահմանների ճշդումը, Ղարաբաղի եւ Գանձակի հայկական մասերի կցումը Հայաստանին, գաղթականների հոմանուորում եւ Հայաստան տեղափոխուելու արտօնութիւն եւ ֆինանսական աջակցութիւն Հայաստանին:

Մենք գիտէինք, որ Քեմալական թուրքերն էլ Մոսկուա էին ուղարկել պատուիրակութիւն: Բայց, կամայ թէ ակամայ, մերոնց ճամբորդութիւնը դանդաղեց: Նրանք Մոսկուա հասան ակնկալածից աւելի ուշ:



ԼԵՒՈՆ ԶԱՐԱՖԵԱՆ

Մոսկուայում, նրանք ընդունուեցին համակրանքով՝ Զիչէրինի եւ Կարախանի կողմից: Նրանց տեղաւորեցին նախկին ճապոնական դեսպանատան մէջ: Բանակցութիւնները Զիչէրինի եւ Կարախանի հետ ընթացան հարթ եւ Յունիս 10-ին, Շանթը ուղիղ հեռագրաթելով հաղորդեց Երեւան, որ բանակցութիւնները ընթանում են յաջող եւ մէկ-երկու օրից կը սաորագրուի դաշնագիրը: Բայց օր վերջը, սակայն, Շանթը հեռագրում էր Երեւան, որ բանակցութիւնները դանդաղում են, որովհետեւ Ազրբէյջանը եւ հայ կոմունիստները՝ ըստ երեւոյթին էին Մոսկուային յետաձգել բանակցութիւնները՝ պահանջելով Ղարաբաղի ու Զանգեզուրի միացումը Ազրբէյջանին: Առհասարակ, ազրբէջանցի եւ Բաքուում հաւաքուած հայ կոմունիստները կատաղի պայքար էին մղում Հայաստանի հանրապետութեան դէմ: Թէեւ Հայաստանի կառավարութիւնը յետ էր մղել Ազրբէյջանի կառավարութեան եւ կարմիր բանակի առաջին օրերի վերջնագիրը եւ առաջարկում էր խաղաղ բանակցութիւններով լուծել վէճը՝ Հայաստանի ու Ազրբէյջանի միջեւ, Սով. Ազրբէյջանի կառավարութիւնը ձերբակալել էր Հայաստանի դեսպան Մ. Յարութիւնեանին դեսպա-


ARAM webaram.com

նաեւան բոլոր անդամների հետ, անակնկալ յարձակումով՝ Դիլիջանի չրջանից դերել ու Բաքու էր տարել Հայաստանի ներքին գործոց նախարարի օգնական Ս. Մանասեանին, Դիլիջանի չրջանի ինքնավարութեան նախագահ Ն. Ջաղէթեանին եւ մի քանի պաշտօնատարների: Բաքուի բոլշեւիկեան մամուլը անպուսպ հայհոյանքներ էր թափում հայերի եւ Հայաստանի դէմին: Այստեղ առաջ բերենք մի քանի հեռագիրներ, փոխանակուած Ադրբէյջանի եւ Հայաստանի կառավարութիւնների միջեւ, որոնք ցոյց կը տան, թէ ի՛նչ ստոիճանի էին հասել հայ-ադրբէյջանեան յարաբերութիւնները:

Մայիս 8-ին, Սով. Ադրբէյջանի արտաքին գործոց կոմիսար Հուսէյնովը, մի ապատնական ռատիօ-հեռագիր էր ուղղել Հայաստանի կառավարութեան: Ի պատասխան այդ հեռագրի, Մայիս 12-ին, Հայաստանի արտաքին գործոց նախարար Օհանջանեանը քաշեց հետեւեալ հեռագիրը.

Բաքու. Ադրբէյջանեան ժողովուրդին եւ արտաքին գործերի պաշտօնակատար Հուսէյնովին, պատճէնը՝ Հայաստանի ներկայացուցիչ Յարութիւնեանին, Մոսկուա՝ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Չիչէրինին եւ ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ՝ Լենինին.

«Երեւան, 12 Մայիս.— Ի պատասխան ձեր Մայիս 8-ի ռադիո-հեռագրի, ձեզ հաղորդում եմ հետեւեալը.— Ձեր կառավարութեան յարձակումները Հայաստանի կառավարութեան վրայ հարկադրում են մեզ յայտնելու ձեզ, որ ադրբէյջանեան յեղաշրջման իսկական իմաստը հայ ժողովրդի եւ կառավարութեան կողմից արժանի կերպով գնահատուած ու հասկացուած է: Այդ յեղաշրջումը, որի հետեւանքով իրը թէ խան-բէկական մուսաւաթական կառավարութեան փոխարինել է յեղափոխական-սոցիալիստական մի կառավարութիւն, Ադրբէյջանի պետական քաղաքական կեանքի մէջ բան էութեան ո՛չ մի փոփոխութիւն չի մտցրել: Սոցիալիստական կոչուած կառավարութեան հէնց առաջին քայլը եղաւ Ղարաբաղի եւ Զանգեզուրի հայ աշխատաւոր պիւղացիութեան վրայ բռնութեամբ Ադրբէյջանի իշխանութիւնը տարածելու ճիղը, հակառակ այդ չրջանների բազմիցս կտրուկ կերպով արտայայտուած կամքի: Ձեր իշխանութիւնը Ադրբէյջանում հաստատուելու երկրորդ օրն իսկ, Հայաստանի ստացած ձեր վերջնագիրը, իր յարձակողական բնոյթով ոչնչով չէր տարբերուում մուսաւաթական կառավարութեան համանման պրուիթիւններից: Եթէ ի նկատի ունենանք նաեւ այն հաւաստի տեղեկութիւնները, որ ձեր կառավարութիւնը կապ ունի Կիլիկեան կտորածների կազմա-



ARAM webaram.com

կերպիչ Թրքական իմպերիալիզմի դեկտեմբեր Մուսթաֆա Քեմալի եւ ուրիշների հետ, այլ եւ այն փաստը, որ ձեր պետական կեանքին մասնակցում են Թուրքիայում եւ Կովկասում հայկական սարսափելի ջարդերով արտասուրուած Լենէր, Խալիլ եւ Նուրի փաշաները, բնական ու հասկանալի կը լինի, որ Հայաստանի կառավարութիւնը չի կարող ճանաչել Ադրբէյջանի ներկայ կառավարութիւնը իբրեւ դեմոկրատիկ ու սոցիալիստական կառավարութիւն: Ձեր յայտագրի մէջ յիշելով, իբր թէ, Հայաստանի զանազան մասերում տեղի ունեցած բռնութիւնները մահմեդական ազգաբնակութեան նկատմամբ՝ դուք միանգամայն լռում էք այն բազմաթիւ ապստամբութիւնների, հայ պետականութիւնն ու օրքը բնաջնջելու նպատակով արուած յարձակումների մասին. յարձակումներ, որ կազմակերպել են հէնց այդ շրջաններում մուսաւաթական կառավարութեան Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչ խան Թեքինակին եւ, ըստ ադրբէջանեան կառավարութեան վկայութեան, այդ դործում նրան աջակցող Թուրք իմպերիալիստները: Այդ մասին իմ կառավարութիւնը իր ձեռքի տակ ունի փաստացի տուեալներ: Հէնց այդ ուխտադրուժ ու դաւաճան ընթացքի մէջ պէտք է որոնել պատճառները այն ընդհարումների, որոնցից տուժել է թէ՛ հայ եւ թէ՛ մահմեդական ազգաբնակչութիւնը: Դուք բոլորովին չէք յիշում նաեւ այն հռչակաւոր զանգուածային գազանութիւնները, որոնք գործուել են հայ ազգաբնակութեան նկատմամբ Նուխում, Արէշում, Գանձակում, Շամախում եւ Գողթնում: Հայ աղջիկներն ու կանայք այժմս էլ, հէնց ձեր իշխանութեան օրով, շարունակում են տառապել գերութեան մէջ Ադրբէյջանի հարէմներում, իսկ բազմաթիւ աշխատաւոր հայ պետականներ այսօր էլ գեռ սարկութեան մէջ են եւ ձեր երկրի շատ վայրերում բանեցւում են անասունների տեղ: Նուրի փաշան շարունակում է գործել Ջիբրայիլում, իսկ Ղարաբաղի հայութեան ջարդը կազմակերպող Սուլթանովը՝ կարմիր քղամիդ հագնելով՝ նորից իշխանութեան մէջ է մնացել:

Յարաւեւ խաղաղասիրութեան զգացմունքից աւելի քան դրդուած՝ իմ կառավարութիւնն ընդունում է ձեր կառավարութեան առաջարկութիւնը բանակցութիւններ սկսելու մասին՝ երկու հանրապետութիւնների միջեւ գոյութիւն ունեցող վիճելի հարցերը լուծելու համար: Որպէս լիազօր ներկայացուցիչներ՝ մեր կողմից՝ Հայաստանի կառավարութիւնը նշանակում է իր Բազուի դիւանագիտական ներկայացուցիչ Մ. Յարութիւնեանին, ինչպէս նաեւ Ղարաբաղ մեկնած՝ անդրկովկասեան խորհրդաժողովի պատուիրակու-


ARAM webaram.com

թեան անդամներ Պօպօվեանին եւ բժ. Իւզպաշեանին, որոնց կը խընդրէի տեղեկացնել այս բոլորի մասին: Բանակցութիւնների վայր՝ իմ կառավարութիւնը առաջարկում է Ղազախ քաղաքը, ուր բանակցութիւնների սկզբնական շրջանին կը լինեն կառավարութեան կողմից նշանակուած երկու ուրիշ պատուիրակներ: Սպասում եմ ձեր պատասխանին: Թիւ 2898. Հայաստանի արտաքին գործերի նախարար՝ Օհանջանեան»:

Այս հեռագրին՝ չպատասխանեց Ադրբէյջանի կառավարութիւնը:

Մայիս 26–ին, Օհանջանեանը տուեց հետեւեալ հեռագիրը.

Բաքու, արտաքին գործոց ժողովրդ. կոմիսար Հուսէյնովին, պատճէնը՝ Մոսկուա, արտ. գործոց ժողովրդ. կոմիսար Չիչէրինին.

«Երեւան, 26 Մայիս.— Իմ կառավարութեան ստացած տեղեկութիւնների համաձայն, Բաքւում բանտարկուած է Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչ Մարտիրոս Ցարուխիանը: Միեւնոյն ժամանակ ձեր գործերի մի մասը, առանց որեւէ առիթի, անօրէն յարձակում է արել Հայաստանի հանրապետութեան անմիճելի հողամասի վրայ: Այդ գործերը, որոնք Հայաստանի Հանրապետութեան սահմանները թողին միայն այն ժամանակ, երբ մօտեցան Հայաստանի գործերը, հեռանալիս թոյլ են տուել իրենց ձերբակալելու Քարւանսարայում եւ բռնութեամբ տանելու Ադրբէյջան՝ Հայաստանի ներքին գործերի նախարարի օգնական Ս. Մինասեանին, գօրավար Բազդասարեանին, Դիլիջանի գաւառային ինքնավարութեան նախագահ Ն. Զազէթեանին, գաւառային կոմիսար Սարաւիկեանին, գաւառամասի կոմիսար Մելիք–Իսրայէլեանին եւ գաւառային ինքնավարութեան պաշտօնեայ Տէր–Ղուկասեանին:

Ձեր կառավարութեան եւ գործի վերոյիշեալ, միջազգային օրէնքի տեսակէտից անթոյլատրելի գործողութիւնները միանգամայն անբացատրելի են այն վայրկեանին, երբ իմ կառավարութիւնը արել է իր համաձայնութիւնը, ըստ ձեր առաջարկի, երկու հարեւան հանրապետութիւնների միջեւ եղած բոլոր վիճելի հարցերը լուծելու խաղաղութեամբ, եւ այն ժամանակ, երբ այդ երկու հանրապետութիւնները միմեանց հանդէպ պատերազմական վիճակի մէջ չեն գտնւում:

Իմ կառավարութեան անունից վճռականապէս բողոքելով Հայաստանի պաշտօնական անձանց ձերբակալման եւ ձեր գործի յարձակողական գործողութիւնների դէմ, խնդրում եմ ձեզ վերոյիշեալ բոլոր անձերին անմիջապէս արձակել եւ նրանց անձի անձեռնմխե-



ARAM webaram.com

լիութեան երաշխիքով հասցնել Հայաստանի սահմանները: Ձեր կառավարութեան հետագայ քայլերի մասին խնդրում եմ տեղեկացնել ինձ:

Հայաստանի արտաքին գործերի նախարար՝ Օհանջանեան»

Մայիսի վերջերին, Կովկասեան բանակի ռազմահեղափոխական խորհրդի նախագահ Օրջոնիկիձէն դիմում է Ղարաբաղի հայ ազգաբնակութեան եւ յայտնում, որ պինուորական խորհուրդը մտադրութիւն ունի ռուսական կարմիր զօրքեր մտցնել լեռնային հայկական Ղարաբաղ, որովհետեւ մինչեւ Հաքեարի զեօղը պատկանում է Սովետական Ադրբէյջանին: Այս առթիւ, Հայաստանի կառավարութիւնը ուղղում է հետեւեալ հեռագիրը.

Մոսկուա, արտաքին գործերի կոմիսար Զիչէրինին. պատճէնը՝ Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան նախագահ Լեւոն Շանթին եւ Բագուի պինուորական խորհրդի նախագահ Օրջոնիկիձէին.

«Կովկասեան ճակատի պինուորական խորհրդի նախագահ Օրջոնիկիձէն իր լիազօրների Տէր-Գաբրիէլեանի, Կայդալովի եւ Պէրնանի միջոցով յայտարարել է լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակութեան, որ խորհուրդը դիտաւորութիւն ունի ռուսական կարմիր զօրքեր մտցնելու լեռնային Ղարաբաղի սահմանները, որը մինչեւ Հաքեարի զեօղը, իրենց ասելով, պատկանում է սովետական Ադրբէյջանին:

Հայկական լեռնային Ղարաբաղը մինչեւ Համաշխարհային պատերազմի վերջը պաշտպանելով իր անձեռնմխելիութիւնը ամէն կողմից իր վրայ յարձակուող թուրքերի, քրտերի ու թաթարների չահատակութիւններից՝ Դիւզացիական ուժը հերթական համագումարներում վճռական, յատակ որոշումներ է կայացրել մանելու՝ իրեն հարազատ Հայաստանի Հանրապետութեան մէջ: Սոյն թուի Ապրիլի 20-ին, Ղարաբաղի Դիւզացիական 9-րդ համագումարը հաստատեց նախկին համագումարների որոշումները՝ անյողդողդ վճիռ կայացնելով Հայաստանի Հանրապետութեան միանալու մասին: Նոյն համագումարը կտրականապէս մերժեց Ադրբէյջանի իշխանութեան ճանաչելու հնարաւորութիւնը՝ նոյնիսկ քաղաքական յեղաշրջումից եւ այսուեղ խորհրդային իշխանութիւն հաստատուելուց յետոյ: Ձնայած դրան, Հայաստանի կառավարութիւնը՝ չհամենալով Ղարաբաղի դիւզացիութիւնը նորանոր արհաւիրքների ենթարկել, քանիցս առաջարկել է Ադրբէյջանի կառավարութեան, որը փորձում է ինքնուժով պարտադրել Ղարաբաղի դիւզացիութեան ադրբէյջանեան աոե-



ARAM webaram.com

լի իշխանութիւնը, հարցը լուծել խաղաղութեամբ՝ երկու հանրապետութիւնների փոխադարձ համաձայնութեամբ: Ներկայումս, երբ իմ կառավարութեան պատուիրակութիւնը մեկնել է Մոսկուա երկու հանրապետութիւնների՝ Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ բարեկամական յարաբերութիւններ հաստատելու նպատակով, կոմիսար Օրջոնիկիձէի պահանջը, որ Ղարաբաղի դիւղացիութիւնը իրեն համարի Ազրբէյջանի մի մաս, հակառակ այդ դիւղացիութեան պարզ ու որոշ կերպով արտայայտուած կամքի՝ միանգամայն դառնում է անհասկանալի:

Իմ կառավարութեան յայտնի չէ, թէ ո՞ր կառավարութեան՝ Խորհրդային Ռուսաստանի՞, թէ Խորհրդային Ազրբէյջանի անունից է խօսում կոմիսար Օրջոնիկիձէն: Իմ կառավարութիւնն արդէն տեղեկացրել է ձեզ, որ ինքը պատրաստակամ է, որ Ղարաբաղի բախտի տնօրինումը յանձնուի իրեն՝ ազգարնակութեան, որ տասներորդ անգամ ազատօրէն որոշէ, թէ ի՞նչ է իր անկեղծ ցանկութիւնն ու մտադրութիւնը՝ այս կամ այն պետութեանը միանալու խնդրի մասին:

Սրանով նորից պնդում եմ իմ կառավարութեան մատնանշած պատրաստակամութեան վրայ եւ խնդրում եմ այդ հարցի մասին բանակցել մեր պատուիրակութեան հետ Մոսկուայում: Ղարաբաղի ազգարնակութեան ազատ արտայայտուելու հնարաւորութիւնը մերժելու եւ դիւղացիութիւնը՝ խորհրդային զօրքերի կողմից երկրի նեղքը նեղխուժելու դէպքում՝ անխուսափելի կերպով առաջանալիք արիւնահեղութիւնից փրկելու նպատակով՝ իմ կառավարութեան անունից խնդրում եմ չմերժել չտապ կարգադրութիւն անել կանգնեցնելու վերոյիշեալ զօրքերի չարժումը Ղարաբաղի վրայ, ինչպէս նաեւ հեռացնելու նրանց Հայաստանի Հանրապետութեան սահմանների մասը կազմող Ջիւանչիրի գաւառի Հասան Ռիզայի շրջանից:

Երեւան, 1920 թ. Մայիս 31. Արտաքին գործոց նախարար՝ Օհանջանեան»:

Մայիսի վերջերին, Երեւանում ատացուեց Հայաստանի Բադուի գեսպան Մ. Ցարութիւնեանի հեռագիրը: Նա հաղորդում էր, որ ինքը եւ գեսպանատան բոլոր անդամները արձակուել են բանտից, եւ գեսպանատունը Յունիս 1-ից պիտի վերսկսէ իր գործունէութիւնը: Խնդրում էր ազատ արձակել եւ Ազրբէյջանի Երեւանի ներկայացուցիչներին, եթէ նրանք բանտարկուած էին: Միաժամանակ, լուր ատացուեց Մոսկուայից, Հայաստանի պատուիրակութիւնից, որ բանակցութիւնները ընդմիջուել էին, եւ պատուիրակութիւնը վերադառնում էր Երեւան: Բադուի վրայով Երեւան պիտի գար Զիչէրինի



ARAM webaram.com

կողմից Լէդրանը՝ բանակցութիւններ վարելու համար Հայաստանի կառավարութեան հետ: Օհանջանեանը անմիջապէս հեռագրեց Բաքու, որ հայ—ադրբէջանեան խորհրդաժողովի դումարումը առժամանակ յետաձգուի, մինչեւ որ բնականոն յարաբերութիւններ հաստատուին Սով. Ռուսաստանի եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ:

Յունիս 2–ին համաձայնութիւն էր կնքուել Սով. Ադրբէյջանի եւ Հայաստանի կառավարութիւնների միջեւ՝ անխախտ պահել իրերի դրայվիճակը, մինչեւ որ բոլոր վիճելի հարցերը լուծուէին խաղաղ ճանապարհով, Ղազախում տեղի ունենալիք հայ–ադրբէջանեան խորհրդաժողովի կողմից, բայց երկու կողմից էլ համաձայնութիւնը չյարգուեց: Յունիս 5–ին, Հիւսէյնովը հեռագրում էր Օհանջանեանին.

Երեւան, Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարին, պատճէնը՝ Ատրպետնի վրայով Մոսկուա՝ Չիչէրինին, Թիֆլիս՝ Վրաստանի հայկական դիւանագիտական ներկայացուցիչ Բէգզադեանին, Թիֆլիս՝ Վրաստանի ռուսական սոց. Խորհրդ. Դաչն. Հանրապետութեան լիազօր ներկայացուցիչ Կիրովին.

«Ատացուած տեղեկութիւնների համաձայն, հայկական զօրամասերը Զանգիբասարը աւերելուց եւ տեղի մահմեդական բնակչութիւնը արտաքսելուց յետոյ, յարձակում են սկսել Շարուր—Նախիջեւանի չրջանի վրայ: Միւս կողմից՝ ըստ հէնց նոր ստացուած տեղեկութիւնների, զօրամասերը յարձակում են սկսել Ղազախի գաւառի վրայ եւ Յունիսի 5–ի առաւօտեան, ժամը 4–ին, գրաւել են Ղարաղըշլաղ գիւղը:

Ադրբէյջանի Սոցիալիստական Հանրապետութեան եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ բոլոր վիճելի հարցերը խաղաղ ճանապարհով լուծելու նպատակով մօտ ժամանակներս Ղազախ գաւառում հրաւիրուելիք խորհրդաժողովի մասին Յունիսի 2–ին կայացած համաձայնութիւնից յետոյ, Հայաստանի կառավարութեան այսպիսի նուաճողական գործողութիւնները հակասում են վերոյիշեալին: Իմ կառավարութիւնը չի կարող չնկատել այդ՝ որպէս Սովետական Ադրբէյջանի դէմ ակռւած պատերազմական գործողութիւններ եւ պահանջում է զգաստացնել ամէն տեսակ յարձակում՝ հայկական զօրամասերի կողմից: Հակառակ պարագային, իմ կառավարութիւնը հարկադրուած կը լինի պնդելու, որ Յունիսի 2–ի համաձայնութիւնը խախտուած է, ուստի եւ հետագայ գործողութիւնների մէջ իրեն ազատ կը համարի»: Թիւ 26, Թիֆլիս, 5 Յուլիս 1920 թ. Ադրբէյջանի



ARAM webaram.com

Սոց. Խորհրդ. Հանրապետութեան արտաքին գործոց ժող. կոմիսար եւ լիազօր ներկայացուցիչ՝ Հուսէյնով:

Հուսէյնովի հեռագրին՝ Օհանջանեանը պատասխանեց հետեւեալ հեռագրով.

Թիֆլիս՝ Ադրբէյջանի լիազօր ներկայացուցիչ եւ արտաքին գործերի ժողկոմ Հուսէյնովին. պատճէնը՝ Թիֆլիսի Հայաստանի ներկայացուցիչ Բէգզադեանին, պատճէնը՝ Թիֆլիս Ռուս. Սոց. Դաշն. Խորհրդ. Հանրապետութեան լիազօր ներկայացուցիչ Կիրովին, պատճէնը՝ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Զիչերինին.

«Ձեր նոյն Յուլիսի 5–ի թիւ 26 հեռագրին ի պատասխան հաղորդում եմ հետեւեալը. առաջին՝ Շարուր—Նախիջեւանի շրջանը եւ Զանգիբասարը, որ կազմում են Հայաստանի անբաժան մասը բռնուած են Հայաստանի զօրքերով՝ մուսաւաթական եւ թուրք խմպերխալիսանների առաջնորդութեամբ եւ թուրք զինուորական մասերի օժանդակութեամբ, Հայաստանի դեմոկրատիկ հանրապետութեան դէմ գործած իբրեւց հակայեղափոխական արարքների համար: Այդ պատճառով էլ ձեր հարցապնդումը Հայաստանի կառավարութեան յիշեալ շրջանների գործողութիւնների առթիւ՝ իմ կառավարութեան կողմից դիտւում է որպէս միջամտութիւն Հայաստանի ներքին գործերին: Երկրորդ՝ Հայաստանի կառավարութիւնը ոչ մի յարձակողական գործողութեան չի ձեռնարկել Սով. Ադրբէյջանի դէմ ինչպէս Ղազախի, այնպէս էլ այլ սահմանակից շրջաններում: Ընդհակառակն, երկու անգամ, Մայիսի 20–ին եւ Յունիսի մէջերը, ձեր պինուած զօրամասերը առանց որեւէ հիմքի արշաւեցին Հայաստանի Հանրապետութեան անվիճելի հողամասերում գտնուող քաղաքների եւ գիւղերի վրայ: Այդ զօրամասերը ջարդանաարան եւ իր շրջակայքը դրաւելով եւ մեզ հայկական զօրքերի հասնելուց յետոյ քաշուելով՝ վերադարձին կողոպտած են ենթարկել սահմանակից մի շարք հայկական գիւղեր, գնդակահարել են խաղաղ գիւղացիներն եւ գերի տարել Հայաստանի պաշտօնական անձանց: Ձեր կառավարութեան դիտութեամբ եւ ձեր իշխանութիւնների մասնակցութեամբ Ադրբէյջանի զանազան տեղերում եւ մասնաւորապէս Բաքւում, հայերից յատուկ զօրամասեր են կազմակերպւում, որպէս թէ հակայեղափոխական — բէգական չարժումների դէմ ճակատ ուղարկելու նպատակով, բայց իրապէս Ղազախի եւ Աղստաֆայի շրջաններում տեղաւորելուց յետոյ՝ բռնութեամբ Հայաստանի կողմը ուղարկելու եւ Հայաստանի դէմ սկսուելիք թշնամական գործողութիւնների մէջ օգտագործելու նպատակով: Հէնց նոյն մտքով ձեր զօրքերի բռնութեան տակ, Ղա-



ARAM webaram.com

դաս է տեղափոխուած Շամչադինի հայ ազգաբնակութիւնը, որը պնդականների սպառնալիքի տակ ուղարկուած է Հայաստանի կառավարական օրքերի դէմ:

Հանրապետութեան սահմանները ձեր սահմանապահ զօրամասերի ապօրինի արշաւանքներից պաշտպանելու համար, մեր կառավարութեան կողմից ուղարկուած հայկական օրքերը ներկայումս միայն զրաւած ունին այն դիծը, որը բաժանում է Հայաստանը Ադրբէյջանից: Ղարաղչլաղ գիւղը հայ օրքերը չեն զրաւել, եւ Ադրբէյջանի սահմանը ոչ մի կերպ խախտուած չէ: Բոլոր միջադէպերը խաղաղ միջոցներով լուծելու տեսակէտի վրայ անյողդողդ կանգնած մնալով՝ իմ կառավարութիւնը, դեռ Մայիսի մէջ առաջարկել է ձեր կառավարութեան, հրաւիրել յատուկ հայ–ադրբէյջանեան խորհրդաժողով, բոլոր վիճելի հարցերը լուծելու համար, եւ մեր Թիֆլիսի դիւանագիտական ներկայացուցիչի միջոցով ձեզ արուած մեր երկրորդ առաջարկից յետոյ միայն, այժմ ստացուեց ձեր կառավարութեան համաձայնութիւնը: Նորից հաստատելով իմ կառավարութեան պատրաստակամութիւնը Հայաստանի եւ Ադրբէյջանի միջեւ եղած սահմանային բոլոր վէճերը յատուկիկայ Խաղաղութեան Խորհրդաժողովին տանելու որոշումը՝ իմ կառավարութեան կողմից վստահութիւն եմ արտայայտում, որ ձեր կողմից ձեռք կ'առնուեն բոլոր միջոցները արդիւնելու՝ ձեր հանրապետութեան սահմաններում Հայաստանի դէմ թշնամի նպատակներով, բռնի կերպով հաւաքուող զօրամասերի կազմակերպումը, եւ Ադրբէյջանի կողմից Հայաստանի սահմանների անձեռնմխելիութիւնը կ'երաշխաւորուի ինչպէս ձեր զօրքերի, նոյնպէս եւ այլ զօրամասերի յարձակողական գործողութիւններից: Թիւ· 4·076, Յուլիսի 7· Հայաստանի արտաքին գործոց նախարար՝ Օհանջանեան:»

Յուլիս 10–ին, Հայաստանի եւ Ադրբէյջանի կառավարութիւնների միջեւ փոխանակուում են հետեւեալ հեռագիրները·

Ղազախում կայանալիք հայ–ադրբէյջանեան խորհրդաժողովի Հայաստանի պայմանները հետեւեալներն են·

«1·— Հայաստանի եւ Ադրբէյջանի կառավարութիւնները համաձայնուում են Ադրբէյջանում ձերբակալուած բոլոր դաշնակցականներին փոխանակելու՝ Հայաստանում ձերբակալուած բոլշեւիկների հետ:

2·— Մեզադրուողները հեռանում են համապատասխան հանրապետութիւնների սահմաններից:

3·— Փոխանակութիւնը տեղի է ունենալու երկու հանրապե-



ARAM webaram.com

տութիւնների սահմանների վրայ· ցանկալի է, որ այդ լինի Ղազախի եւ Քարվանսարայի միջեւ կամ չէզոք հողի վրայ, օրինակ, Թիֆլիսում, վրաց կառավարութեան հոյակերտութեամբ:

4·— Երկու հանրապետութիւնները էլ զգաստութեան են հրաւիրում իրենց զինակիցներին եւ բոլշեւիկների դէմ եւ խոստանում են պնդակահարութեան չենթարկելու ա՛չ ոքի:

5·— Ադրբէջանեան հանրապետութիւնը ազատ ելքի իրաւունք է տալիս իրենց բոլոր զօքով՝ այն բոլոր հայերին, որոնք ուզում են հեռանալ Ադրբէջանից:

6·— Ադրբէջանը եւ Հայաստանը զգաստութեան են ամէն տեսակ յարձակողական գործողութիւններ իրար դէմ եւ վիճելի խնդիրները լուծելու համար խորհրդաժողով են հրաւիրում Թիֆլիսում:

7·— Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչներ են նշանակում· 1· Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչը Վրաստանում՝ Տ· Բէդզադեան, 2· Դիւանագիտական ներկայացուցիչն Ադրբէջանում՝ Մ· Ջաբուխիենեան, 3· Պարլամենտի անդամ՝ Ն· Ադալեան, 4· Կ· Ղազազեան:

Փոխադարձաբար Ադրբէջանի պայմաններն էին.

«1·— Ադրբէջանի եւ Հայաստանի կառավարութիւնները զգաստութեան են ամէն տեսակ հալածանքներ կոմունիստների դէմ Հայաստանում եւ զինակիցների դէմ Ադրբէջանում և պարտաւորւում են ձերբակալուածներից ա՛չ ոքին չենթարկել բռնութեան կամ պնդակահարութեան:

2·— Երկու հանրապետութիւնները էլ անյապաղ զգաստութեան են ամէն տեսակ յարձակողական գործողութիւն միմեանց դէմ:

3·— Երկու հանրապետութիւնները էլ անյապաղ փոխանակում են իրար հետ՝ ձերբակալուած կոմունիստների ու զինակիցների ցուցակները՝ գոյց տալով նրանց յանցանքը եւ կալանած վճիռը, որից յետոյ անմիջապէս ազատում են ամէնքին, բացի զատարանով պատիժ կրողներից՝ փոխադարձութեան հիմունքներով· իսկ զատապարտուածները փոխադարձաբար փոխանակւում են:

4·— Բոլոր վիճելի խնդիրները լուծելու համար հրաւիրում է հայ–ադրբէջանեան խորհրդաժողով Ղազախում կամ Վլադիկաւկազում:

5·— Ադրբէջանի ներկայացուցիչները կը նշանակուեն այս օրերս»:

Երկու կողմերն էլ համարեա նոյն բանն էին ասում, բայց, դժբախտաբար, միեւնոյն ձեւով չէին գործում: Ադրբէջանը, օրինակ,



ARAM webaram.com

արդէն պնդակահարել էր Քարվանսարայից դէպի տարած ներքին գործոց նախարարի օգնական Ս. Մանասեանին, զօր. Բաղդասարեանին եւ մեւաներին:

Ղարաբաղի կամ Վլադիկաւկազի կոնֆերանսը երբեք տեղի չունեցաւ: Ազբրէյջանը աշխատում էր Մոսկուայի միջոցով լուծել Հայաստանի եւ իր միջեւ եղած խնդիրները, մասնաւորապէս Ղարաբաղ-Զանգեզուրի հարցը: Հայաստանը նոյնպէս յոյսեր էր կապում Սով. Ռուսաստանի հետ, նոյն հարցերի վերաբերմամբ:

Եւ այնուհետեւ, չարունակուեցին փոխադարձ ամբաստանութիւնները եւ հեռագրական ամբաստանութիւնները:

Այսպէս, Յունիսի 4-ին, Երեւանում առացուեց Ռուսաստանի արտաքին գործոց կոմիսար Զիչէրինի Թիւ 424 հեռագիրը.

«Արժանահաւատ տեղեկութիւնների համաձայն Ալեքսանդրապոլում, Երեւանում, Սարըղամիշում, Կարսում եւ Հայաստանի այլ քաղաքներում հարիւրաւոր կոմունիստներ են ձերբակալուած: Հայաստանի կառավարութիւնը թոյլ է տալիս ինքնագործառոյթ: Գաղտնի պնդակահարում է կոմունիստներին: Յատկապէս պնդակահարուած է Ընկ. Միկոյեանը: Խորհրդային կառավարութիւնը մեծ վրդովմունքով իմացաւ այն կամայականութիւնների մասին, որ գործ են դրում Հայաստանի կոմունիստական չարժման գործիչների նկատմամբ:

Ռուսաստանը այս ժամին բանակցութիւններ է վարում Մոսկուայում Հայաստանի կառավարութեան պատուիրակութեան հետ եւ վճռել է հաստատ կերպով օգնել Հայաստանի հայ ժողովրդին՝ իր կրած ծանր փորձութիւնների մէջ, որոնցից մինչեւ այժմ էլ դեռ չի ազատուել: Ռուսաստանը մտադիր է միջոցներ ձեռք առնել՝ կարդ ստեղծելու համար Հայաստանի սահմանների վրայ եւ միջնորդութիւն ստանձնելով Հայաստանի եւ նրան չրջապատող պետութիւնների միջեւ, ձգտում է հայ ժողովրդի կենսունակ եւ խաղաղ բարգաւաճման համար նոր պայմաններ կերտել:

Հայ կոմունիստների նկատմամբ գործադրուած կամայականութիւնների մասին տեղեկութիւններ ստանալուց յետոյ, Ռուսաստանի կառավարութիւնը չի կարող հանդիստ կերպով քննել ձեր Պատուիրակութեան հետ Հայաստանի դրութիւնը եւ կնքելիք բարեկամական դաչինքի պայմանները:

Խորհրդային կառավարութիւնը պնդում է, որ անմիջապէս արձակուեն կոմունիստ բանտարկեալները եւ անյապաղ դադարեցուեն Հայաստանի կոմունիստական չարժման գործիչների ինքնագործառ-


ARAM webaram.com

տաններն ու դնդակահարութիւնները: Մենք խնդրում ենք Ձեր կարդադրութիւնների մասին հաղորդել մեզ, որպէս դի ձեր Պատուիրակութեան հետ ունենալիք մտքերի փոխանակութեանց արդիւնքները վերացուենն»:

Ի հարկէ, Զիչէրինի հեռագրի նիւթ կազմող տեղեկութիւնները հիմնուած էին Ադրբէյջանի հայ կոմունիստների սոսկալի լուրերի եւ զրպարտութիւնների վրայ: Այս հեռագրին Օհանջանեան տուեց հետեւեալ պատասխանը.

«Ի պատասխան ձեր թիւ 424 հեռագրի, պատիւ ունիմ հաղորդելու, որ ձեր յայտագիրը հիմնուած է ձեզ հասած միանգամայն սուտ լուրերի վրայ: Հայաստանի հանրապետութեան կազմակերպման օրից սկսած՝ կոմունիստական կազմակերպութիւնները, միւս քաղաքական կուսակցութիւնների նման, Հայաստանում վայելում էին լիակատար ազատութիւն, համաձայն երկրի օրէնքների եւ ոդու ու չէին ենթարկւում ոչ մի ճնշումի, որ տեղի էր ունենում ուրիշ պետութիւնների մէջ: Օգտուելով ազատութիւնից՝ կոմունիստական կուսակցութեան ղեկավարները, իրենց հերթին, քանիցս խօսք տուին դործօն պայքար չմղել Հայաստանի ռամկավար կարդերի դէմ: Դրութիւնը մնում էր անփոփոխ մինչեւ անցեալ Մայիս ամիսը, երբ պէտք է վերջնականապէս վճռուէր Թրքահայաստանի բախտը եւ Միացեալ Հայաստանի ստեղծման հարցը. մի նպատակ, որի իրականացման համար հայ ժողովուրդը ծով արիւն թափեց եւ իր զաւակներից հարիւր հազարներ զոհեց: Հարկադրուած լինելով պաշտպանուել թշնամիներից իր սահմանների ողջ տարածութեան վրայ՝ տառապեալ ժողովուրդը երազում էր հանդիստ ու քաղաքակրթական ստեղծագործ աշխատանք, գանկութիւններ, որոնք, դատելով ձեր յայտագրից, հայ ժողովրդի նկատմամբ կազմում են նաեւ ձեր մտահոդութեան առարկան: Հէնց այդ բախտորոշ պատմական րոպէին, յենուելով երկրի պաշտպանութեան ծանր կացութեան եւ արտաքին անընդհատ յարձակումներին ու Թուրք–ադրբէյջանեան գործակալների պրոպագանդի միջոցով Հայաստանում մահմեդական ապստամբութիւն ստեղծելու յաճախակի փորձերից առաջացած ժողովրդի յոդնածութեան վրայ, չվիտենք, թէ ո՞ւմ չարամիտ ցուցմունքով, Հայաստանի բոլոր խոշոր կենտրոններում փորձեր եղան անիշխանութիւն առաջ բերելու երկրում: Թրքական սահմանագծի վրայ, մինչ ենթակայ վտանգի, այդ անիշխանական չարժումը սպառնում էր երկիրը ողողել արիւնով եւ վերջնականօրէն խորտակել մեր ժողովուրդն ու պետութիւնը: Կառավարութեան պարտականութիւնը



ARAM webaram.com

պարզ էր — վերականգնել կարգը եւ վրկել ժողովրդին: Միաժամանակ բոլոր փաստերը ցոյց են տալիս, որ այդ մտածուած չարժումը երբեք կոմունիստական բնոյթ չի կրել, այլ դեկավարուել է մի խումբ հակայեղափոխական պաշտօնեաների եւ սպաների, նախկին կամաւորականների, զոր ծառայողների եւ անխիղճ թալանիչների կողմից, որոնք ձգտում էին ապրուստ ճարել անիշխանութեան ալիքների մէջ: Շարժմանը մասնակցում էին անհատ կոմունիստներ, որոնք անծանօթ էին երեւի երկրի դրութեան եւ չարժման բնաւորութեան, որ ի վերջոյ խոստովանեցին էլ:

Այս դժուարին վայրկեանին, ինքը՝ ժողովուրդը դանդուածօրէն խմբուեց կառավարութեան չուրջ եւ իր հզօր տարերային պոռթկումով, զրեթէ անարիւն վերջ տուեց անիշխանական փորձերին՝ յայտնելով իր անսահման կամքը՝ պահպանելու Հայաստանի անկախութիւնը եւ նրա դեմոկրատական կարգերը: Ամերիկեան տուեալներն ու թիւերը անվիճելիօրէն մատնանշում են այն հանգամանքը, որ չարժման հաշուեյարդարը կատարուեց զարմանալի կերպով խաղաղ եւ համարեա անարիւն:

Իրրեւ Ռեւկոմի անդամներ՝ ապստամբութիւն բարձրացնող դաշնակցական կոմունիստներ Մուսայէլեանի եւ Ղարիբջանեանի կեանքը ապահովուած է: Արտակարգ դատարանը մահուան է դատապարտել միայն ժողովրդի եւ օրքի վրայ դործօն յարձակում կատարկերպողներին, որոնք օդտադործեցին չարժումը անձնական նպատակների համար: Դատի տակ գտնուածների նկատմամբ կատարում է քննութիւն եւ վերջանալու մօտ է. այդպիսիների մեծ մասին կ'ազատարկուի թողնել Հայաստանի սահմանները: Ընկ. Միկոյեանը երբեք չէ եղած Հայաստանում. նա ողջ է եւ ապրում է Բաքւում: Ոչ մի ինքնադատաստան չէ եղած, բացի մի դժբախտ դէպքից, որի մասին տեղեկութիւն չունէր կառավարութիւնը եւ որի մեղսակիցները պիտի ենթարկուեն դատի: Ընդհակառակն, ապստամբների կողմից Քարվանսարայի դաւադրում սպանուած են մեր զօրամասի դլխաւոր Մուրադը, 30-ի չափ դինուորներ եւ դերի են տարուած Հայաստանի իշխանութեան ներկայացուցիչները: Միաժամանակ, Հայաստանի դանազան մասերում եւ նրա սահմանների վրայ, հակայեղափոխական տարրերը, Հայաստանի անկախութեան եւ ժողովրդի թշնամիները կոմունիստական նշանաբանների տակ թագնուած՝ պատրաստւում էին իրականացնելու իրենց սեւ ծրագիրները՝ երկրի աշխատաւորական զանգուածների եւ դեմոկրատական կարգերի դէմ:

Այս բոլորի մասին հաղորդակից անելով ձեզ՝ Հայաստանի կա-


ARAM webaram.com

ռավարութիւնը հաստատ հաւատ ունի, որ կը կարողանայ ցրել Ռուսաստանի կառավարութեան բոլոր կասկածները եւ պատճառ չի դառնայ մեր Պատուիրակութեան հետ ունեցած բանակցութիւնների խզման. բանակցութիւններ, որոնց հետեւանքին Հայաստանի ժողովուրդը սպասում է անհամբեր եւ պայծառ յոյսերով:

Միաժամանակ ես չեմ կարող չմատնանշել Հայաստանի հանրապետութեան անբաժան մասը կազմող լեռնային Ղարաբաղի ուղղութեամբ Մորհրդային զօրքերի շարժումը: Կառավարութիւնը կըրկին ու կրկին խնդրում է ձեզանից կանգնեցնել այդ շարժումը եւ դրանով հնարաւորութիւն տալ պաշտպանելու Հայաստանի սահմանները եւ երաշխաւորելու երկրի ներքին խաղաղութիւնը»:

Այնուհետեւ, որոշ վերապահութիւններով, բոլշեւիկները միջադէպեր էին ստեղծում Հայաստանի սահմանների վրայ: Յուլիս 15-ին, կամրիր Բանակի Գանձակի զօրամասի հրամանատար Վելիկանովը, վերջնագիր հեռագրով պահանջում էր Սպարապետ Նազարբէկեանից եւ Յուլիս 17-ին Դիլիջանի եւ Ղարաքիլիսայի հայկական զօրամասի պետ Սեպուհից՝ անմիջապէս դուրս հանել հայկական զօրքը Ուզունթալա, Լալաբէկ, Օձաքար, Սար, Թաթլու գծից հարաւ գտնուող դիւղերից: Նազարբէկեանը եւ Սեպուհը պատասխանեցին, որ այդ շրջանները անվիճելի կերպով մտնում են Հայաստանի սահմանների մէջ եւ իրենց պարտականութիւնն է պաշտպանել Հայաստանի հողամասերը. իսկ եթէ Վելիկանովը վիճելի է համարում այդ հողերը, պարտական է դիմել Հայաստանի կառավարութեան:

Միեւնոյն ժամանակ, նման միջադէպեր տեղի էին ունենում եւ Հայաստանի միւս մասերում: Այդ առթիւ, հեռագրների փոխանակութիւն է կատարուել Օհանջանեանի եւ Լէդրանի միջեւ, որ, իբրեւ Սով. Ռուսաստանի պատուիրակ, նոր էր հասել Թիֆլիս: Լէդրանը հեռագրում է Օհանջանեանին, Յուլիս 29-ին, թիւ 45.

«Ռուսաց Մորհրդային Հանրապետութեան կառավարութիւնը լիապօրել է ինձ հաշուութեան բանակցութիւններ վարելու Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան հետ՝ յուսալով, որ իմ ներեան գալը կը նպաստէ չուտով բարեկամական յարաբերութիւններ հաստատելու երկու հանրապետութիւնների միջեւ: Մեր առաքելութեան գալու մասին նախապէս ծանուցուած էր Հայաստանի կառավարութեան՝ պատգրի գործոց ժող. կոմիսար Զիչէրինի Յուլիսի 30 թիւ 19·299 հեռագրով: Սով. Ռուսաստանի բարեկամական վերաբերութիւնը եւ նրա անկեղծ ձգտումը հաստատելու այնպիսի պայմաններ, որոնք կարողանան նպաստել հայ ժողովրդի խաղաղ զարգաց-



ARAM webaram.com

մանը հարեւան ժողովրդների համագործակցութեամբ, իրենց արտայայտութիւնը գտան Զիչէրինի Յուլիսի 20 թիւ 751 հեռագրի մէջ։ Այն ինչ Սով. Ռուսաստանի Վրաստանի լիազօր ներկայացուցչի՝ Հայաստանի Վրաստանի ներկայացուցչից ստացած հաղորդագրութիւնը ցոյց է տալիս, որ Սով. Ռուսաստանի բարեկամական եւ խաղաղ դիտաւորութիւնները Հայաստանի կառավարութեան կողմից չեն գրաւում այն արձագանգը, որը կարողանար դրական հանդիսանալ սկսուած հաշտարար բանակցութիւնները արագութեամբ եւ յաջող կերպով վերջացնելու։

Խաղաղ յարաբերութիւնների ժամանակաւոր ընդհատումից խուսափելու համար, խորհրդային կառավարութիւնը անհրաժեշտ է համարում չյետաձգել հաշտութեան բանակցութիւնների վերանորոգումը Երեւանում՝ նախքան պատուիրակ Շանթի Մոսկուայից վերադառնալը. նրա չուտափոյթ Երեւան վերադառնալու համար ձեռք է առնուած ամէն միջոց։ Նկատի ունենալով Հայաստանի սահմաններում ստեղծուած պայմանները՝ Սով. Ռուսաստանի հետ հաշտութեան բանակցութիւնների ամէն մի ընդհատում կարող է առաջ բերել բոլորովին անցանկալի բարդութիւններ երկու հանրապետութիւնների ժողովուրդների յարաբերութեան մէջեւ այդ դէպքում պատահածի պատասխանատուութիւնը կ՚ընկնի Հայաստանի կառավարութեան վրայ»։

Խորհրդային կառավարութեան լիազօր՝ Լէգրան

Ի պատասխան այս հեռագրին՝ Օհանջանեանը Օգոստոսի 3-ին ուղարկեց թիւ 4595 հետեւեալ հեռագիրը.

«Ռուսաստանի արտաքին գործոց կոմիսար Զիչէրինին իմ ուղղած նախկին մի շարք հեռագիրներով, իմ կառավարութիւնը մի քանի անգամ չեշտել է այն տարբերութիւնները, որոնք գոյութիւն ունեն Ռուսաստանի խորհրդային կառավարութեան Հայաստանին տրուած հաւատարիմացումների եւ Հայաստանի սահմանների չուրջը կատարուած Այրիէյանում գտնուող խորհրդային զօրքերի գործողութիւնների միջեւ։ Զիչէրինի այն պնդումը, թէ Խորհրդային Ռուսաստանը հատուկ է օգնել հայ ժողովրդին այն ծանր փորձութիւնների մէջ, որ նա ապրել է եւ ապրում է այժմ եւ թէ մտադրութիւն ունի միջոցներ ձեռք առնելու, որպէս զի Հայաստանի սահմանների վրայ ստեղծի անդորրութիւն, ինչպէս նաեւ հայ ժողովրդի կեանքի եւ խաղաղ զարգացման պայմաններ, իրականին մէջ արտայայտուել չէ ընդհատուող թշնամական եւ պատերազմական գործողութիւններով՝ ընդդէմ Հայաստանի եւ մեր սահմանների ու մի շարք


ARAM webaram.com

անվիճելի հողամասերի յաճախադէպ առնահարումներով խորհրդային զօրքերի կողմից: Այն գործողութիւնները, որ կատարւում են այժմ Ղարաբաղի, Զանգեզուրի եւ Նախիջեւանի շրջաններում, շատ քիչ են համապատասխանում Ռուսաստանի արտաքին գործոց կոմիսար Չիչէրինի վերոյիշեալ բաղմաթիւ անգամ չեչտուած այն հաւատիացումին, թէ՝ «հայ ժողովուրդը կարող է ունենալ ամուր յենարան յանձին Սով. Ռուսաստանի անդաւաճան բարեկամական վերաբերմունքի եւ յոյս ունենալ միշտ, որ հնարաւորութեան սահմաններում նա կը հասնի օգնութեան՝ վերջնականապէս ազատելու համար հայ ժողովուրդը զալիք նորանոր արիւնահեղութիւններից»: Նաեւ հակառակ խորհրդային կառավարութեան այն հաւատիացումներին, որոնց նպատակն է, իբր թէ, նպաստել Հայաստանի սահմանների լայնացման եւ հայ ժողովրդի կենսունակ ընդունակութիւնների պարզացման՝ իրականութեան մէջ խորհրդային զօրքերի դանադան գործողութիւնների հետեւանքով՝ Հայաստանի հողը անընդհատ կրճատւում է եւ Հայաստանից անջատւում են նորանոր հողամասեր — սկզբում Ղարաբաղը, ապա՝ Զանգեզուրն ու Նախիջեւանը: Ռուսաստանի խորհրդային կառավարութիւնը, առանց ազատելու հայ—ազրբէջանեան վիճելի խնդիրների խաղաղ լուծման իմ եւ Ազրբէջանի կառավարութիւնների միջեւ, խորհրդային զօրքերի ղէնքի ուժով բռնութեամբ ստիպում է Հայաստանին ընդունելու իր որոշումը յօդուտ Ազրբէջանի՝ միաժամանակ դանադան լուրեր տարածելով իր որոշումների մասին այնպիսի շրջանների վերաբերմամբ, որոնք երբեք չեն համարուել վիճելի, ինչպէս, օրինակ, հայկական Ղարաբաղը, Նախիջեւանը եւ Զանգեզուրը: Իսկ մեւս կողմից Ազրբէջանի դանադան զօրամասերի հրամանատարները անընդհատ վերջնագրեր են ներկայացնում Հայաստանին՝ պահանջելով մաքրել հայկական զօրքերից Հայաստանին պատկանող այս կամ այն վայրը: Սպառնալով, հակառակ դէպքում, ղէնքի ուժով գործադրել իրենց պահանջը:

Հեռու չդնանք, հէնց այս օրերս, 11-րդ կարմիր բանակի հրամանատար Վասիլենկոն դիմել է Հայաստանի Հանրապետութեան զօրքերի հրամանատարին մի վերջնագրով, որով պահանջում է անարգել թոյլ տալ խորհրդային զօրքերը Հայաստանի հողի վրայով դէպի Զանգեզուր եւ Նախիջեւան, որպէս թէ յիշեալ վայրերում գոյութիւն ունեցող հայ—թաթարական եւ թրքական արիւնահեղութիւնները վերջ տալու նպատակով: Վերջնագրի ժամանակամիջոցը նշանակուած է Օգոստոսի 5, որից յետոյ հրամանատար Վասիլենկոն սպառնում է խստագոյն գործողութիւնների սկսել Հայաստանի դէմ:



ARAM webaram.com

Սով. Ռուսաստանի կառավարութիւնը պէտք է ընդունի, որ խորհրդային զօրքերի հրամանատարների նման դործողութիւնները, զօրքի յառաջխաղացումը դէպի Հայաստանի ներսերը այն ճանապարհով, որով ծրագրել էին անցնել նախկին մուսաւաթական կառավարութիւնն ու իմպերիալիստական Թուրքիան, կարող են հայ ժողովրդի կողմից դիտուել որպէս այնպիսի քաղաքական դործեր, որոնք նպատակ ունեն խորհրդային զօրքերի միջոցով ի կատար ածել Մուսաւաթի նախկին ծրագիրը — Հայաստանի կենդանի մարմնի վրայով կապ հաստատել Իմպերիալիստական Թուրքիայի հետ: Այսպիսի պարադաներում կորչում է ամէն մի յոյս ու հաւատ Ռուսաստանի անկեղծ բարեկամական հաւաստիացումների նկատմամբ, եւ խորհրդային զօրքերի Հայաստանի դէմ ուղղուած գործողութիւնները կ'ունենան այն արդիւնքը, որ կ'իրագործուին իմպերիալիստական Թուրքիայի եւ ազրբէջանեան հակայեղափոխականների ծրագիրները, որոնց նպատակն է ոչնչացնել Հայաստանի աղատութիւնն ու անկախութիւնը:

Հայ ժողովուրդը, կանդնած այս մահացու վտանգի առջեւ, ստիպուած է դիմելու ամէն մի ժողովրդի սրբազնագոյն իրաւունքին — բոլոր հնարաւոր միջոցներով առաջն առնելու իր հայրենիքի աղատութեան եւ անկախութեան վտանգումին եւ պաշտպանելու նրա նուիրական սահմանները:

Իմ կառավարութիւնը, ինչպէս նաեւ բովանդակ ժողովուրդը անկեղծօրէն ձգտել են եւ այժմ էլ ձգտում են բարեկամական յարաբերութիւններ ստեղծել Սով. Ռուսաստանի հետ: Այս նպատակով դեռ եւս Մայիս ամսին իմ կառավարութեան կողմից Մոսկուա ուղարկուել է մի պատուիրակութիւն՝ բանակցելու ձեր կառավարութեան հետ բարեկամական դաշինք կնքելու նպատակով, եւ եթէ մինչեւ այսօր էլ այդ չի յաջողուել, ձգձգման պատճառը, յամենայն դէպս, հայոց կառավարութիւնը չէ եւ ոչ էլ նրա վերաբերմունքի անկեղծութիւնից զուրկ լինելը:

Եւ այժմ իմ կառավարութիւնը կարող է միայն ջերմօրէն փափաքել, որ այդ բարեկամական դաշինքի կնքումը կատարուի չուտով, բայց միեւնոյն ժամանակ նա իրաւունք ունի նաեւ հաշուի առնելու, որ դադարեցնելով թշնամական գործողութիւնները Հայաստանի հանդէպ եւ հեռացնելով նրա սահմաններից խորհրդային զօրքերը, Ռուսաստանի խորհրդային կառավարութեան կողմից Հայաստանին կը տրուեն անհրաժեշտ երաշխիքներ, առանց որի հնարաւոր


ARAM webaram.com

չէ իմ եւ ձեր կառավարութեան միջեւ մոքերի հանդիստ փոխանակութիւն՝ բարեկամական դաշինք կնքելու համար եւ առանց որի կորչում է ամէն հաւատ դէպի Մոսկուայի անկեղծ բարեկամական հաւատիացումները: Վերեւ մատնանշուած հարցի մասին ձեզ հետ նախնական բանակցութեան նստելու համար՝ իմ կառավարութիւնը յանձնարարում է իր երկու ներկայացուցիչներին, որոնք այս քանի օրերս ճանապարհւում են դէպի Թիֆլիս»:

«Երկու ներկայացուցիչները» Արշ. Զամալեանն ու Աբտ. Բաբալեանն էին, որոնք Հայաստանի կառավարութեան կողմից ուղարկւում էին Թիֆլիս, բանակցելու համար խորհրդային ներկայացուցչութեան հետ, Ղարաքաղ—Նախիջեւանի հարցի մասին:

Կարմիր բանակը, կենտրոնացնելով ուռուական զօրամասեր Ղարաքաղի սահմաններում եւ պրաւելով լեռնային Ղարաքաղը՝ Զաբուխի կիրճով ներխուժել էր Զանգեզուր, ապա պրաւել էր Նախիջեւանը: Հայաստանի կառավարութիւնը վճռական բողոք ներկայացրեց այդ արարքի դէմ: Այդ հարցը քննելու համար՝ Խորհրդային Իշխանութեան եւ Հայաստանի կառավարութեան համաձայնութեամբ նշանակուեց խորհրդակցութիւն: Զամալեանը, Բաբալեանը եւ Սով. Ռուսաստանի ներկայացուցիչը Թիֆլիսում, քննեցին այդ հարցը եւ Օգոստ. 10-ին առորոշեցին համաձայնագիր՝ երկու երկրների միջեւ: Ըստ այդ համաձայնագրի՝ Ղարաքաղ, Զանգեզուր եւ Նախիջեւանը պիտի մնային կարմիր Բանակի իշխանութեան տակ՝ իրրեւ չեզոք չրջան, մինչեւ վերջնական լուծումը նրանց մասին:

Այստեղ յիշենք, որ նոյն օրը, Օգոստ. 10-ին, Փարիզի արուարձան Սեւրում, յախճապակիի գործարանի սրահում, առորագրւում էր Սեւրի դաշնագիրը, որով, Հայաստանը տր ժիւրէ ճանաչւում էր անկախ հանրապետութիւն: Ըստ Սեւրի դաշնագրի՝ Հայաստանի հանրապետութեան սահմանների մէջ պիտի մտնէին հողամասեր Վանի, Բիթլիսի, Էրզրումի եւ Տրապիզոնի վիլայէթներից: Վերջնական սահմանները, Սեւրի խորհրդաժողովի մասնակից պետութիւնների որոշումով՝ յանձնուած էր Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահ Ուիլսընին: Ուիլսընը պիտի որոշէր Հայաստանի սահմանները. Հայաստանը դառնում էր միացեալ եւ աւիկախ պետութիւն:

Արդար եւ օրինական կը լինէր, եթէ, Ամերիկեան հետ, իր առորագրութիւնը Սեւրի դաշնագրի տակ դնէր եւ Պօզոս Նուպար փաշան: Ահարոնեանը, վարչապետին ուղղած իր տեղեկագրով, հաղորդում էր, թէ՝ Նուպար փաշան էլ ուզեց առորագրել դաշնագիրը, բայց չյաջողեց:



ARAM webaram.com

*Սևբի դաշնագիրը, բնականաբար, արտակարգ ոգեւորութիւն առաջ բերեց Հայ ժողովրդի բոլոր հատուածների մէջ: Իրականանում էին հայութեան ազգային իղձերը: Հայաստանում եւ արտասահմանում ցնծութիւն էր տիրում հայերի մէջ: Հանդէսներ էին տեղի ունենում ամէնուրեք, ուր թնդում էր ազգային երգը՝*

Մեր հայրենիք՝ ազատ, անկախ:

*Բայց չուտով պիտի երգէինք.*

Սեւ մութ ամպեր ճակտիդ դիզուած...


ARAM webaram.com

# ԾԱՂԿԱՁՈՐՈՒՄ

Ծաղկաձորում էի 1920-ի ամառը:

Երեւանի ու Սեւանի ճանապարհին, գեղեցիկ անտառում զբաղվել էի ամառանոց. նահանգային ռուս պաշտօնէութեան ծանօթ ապաստանարանը չոգերից՝ Դարա Ջիչակ:

Եկել էի կարճ ժամանակով հանգստանալու մայրաքաղաքի թոհուբոհից:

Բոլշեւիկեան Մայիսեան խռովութիւնները հաչուեյարդարի էին ենթարկուած: Յաջողութեամբ վերջացել էր եւ Զանգիբասարի օպերացիան: Բայց երկրի ներքին վիճակը մտահոգիչ էր: Շինարարութիւնը գրեթէ բոլորովին կանգ էր առել: Թուրքն հարաւից, բոլշեւիկ ռուսը հիւսիսից սպառնում էին մեր ազատութեան:

Ջիղերս խանգարուած էին եւ պէտք ունէի հանգստի: Ծաղկաձորից լաւ տեղ չկար դրա համար. Երեւանին մօտ եւ Երեւանի իրարանցումից հեռու:

Պայծառ երկինք, զով օդ, ամէն կողմ կանաչութիւն, մեծ ճանապարհից մեկուսի:

Համարեա ամբողջ օր ես թափառում էի անտառում մենակ՝ կնուտ Համասնի կամ Մարք Թուէյնի հատորը թեւիս տակ: կարծում էի սկանտինաւիացի կամ ամերիկացի հեղինակների վառ երեւակայութեամբ մոռացնել տալ առօրեան, բայց հատորն չէր բացւում եւ առօրեան միշտ մնում էր մէջս:

Պառկում էի աղբիւրի կողքին, արեւի տակ՝ հայեացքս երկրնքին, ուր իրար էին հալածում սպիտակ ամպի պատառիկները: Անտառը խօսում էր միջատների և թռչունների լեզուով: Աղբիւրի ջուրը կարկաչով հոսում էր բարձր խոտի միջով: Թռչունների բոյները



ARAM webaram.com

բարձր ծառերի վրայ այլեւս պարապ էին. ձագերը թեւ էին առել ու թողել բոյները: Ծաղիկ չէր մնացել ծառերի վրայ: Ծաղիկներին տեղ բռնել էին վայրի տանձը, խոզակաղինը եւ պէսպէս ուրիշ պտուղներ:

Ցանկարծ, խառերի միջից դլուխ էր բարձրացնում վախկոտ նապաստակը, կուչ էր գալիս եւ երկար ականջները չարժելով՝ սարսափից փախչում էր:

Ողնին ոռներիդ տակ փչոտ կծիկ էր ձեւանում: Օձը ֆշշալով կորչում էր մացառների մէջ:

Հաճելի էր չրջել անտառում, դիրքը թեւի տակ՝ ականջ դնելով բնութեան համանուագին, մենակ, մեծ քաղաքի ժխորից հեռու:

Անմոռանալի են Ծաղկաձորի երեկոները մանաւանդ, վերջալոյսից առաջ, երբ արեւը հեռու չէ մայրամուտից, բայց զեփիւռն արդէն չոյում է նապաստակով ցարտսիի արծաթէ բուները կամ բիւրեղի հնչիւններով զոդցնում է բարտիի տերեւները:

Օրը դեռ չմթնած՝ առանձնապէս հաճելի էր նստել քարի վրայ, դիւղի ծայրում եւ դիտել ագռաւների թռիչքը, կործանուած եկեղեցու աւերակների վրայ:

Որքա՜ն չատ էին այդ թռչունները՝ դոյնզդոյն, կենսուրախ, սիրուն դլուխներով, թրվռուն:

Աւերակ եկեղեցին նրանց հաւաքավայրն էր, նրանց տունը, մինչնաբերդը ապահով: Այստեղ նրանք սիրում էին իրար: Հաւկիթ ածում եւ թուխս էին նստում: Ծնողները կերակրում եւ խնամում էին հաւկիթից լոյս աշխարհ եկած ձագերին: Ձագերը մեծանում եւ թողնում էին բոյնը, որպէսզի յաջորդ տարի իրենք սիրեն ու ձագեր հանեն: Եւ այսպէս տարուէ տարի, սերնդից սերունդ:

Գիւղացիք ձեռք չէին տալիս դրանց: Մեղք էր: Ագռաւներն աւերակ եկեղեցու վրայ բախտ էին բերում դիւղին: Ես սիրում էի ժամերով նստած քարի վրայ՝ դիտել ագռաւների խաղը աւերակ եկեղեցու վրայ, արուների կռիւը էգերի համար, արուների նազանքը էգերի չուրջ:

Ցանկարծ, հարիւրաւոր թեւեր թափ տալով՝ բարձրանում էին երկինքն ի վեր՝ արծաթէ փնջերով արեւի տակ: Ապա նորից տեղաւորւում էին աւերակ եկեղեցու պատերի վրայ՝ մինչեւ արեւմտեան ուղեղ էր տիրում աւերակ եկեղեցու վրայ: Արեւի հետ ագռաւների աղմուկն էլ էր մարում:

Գիշերը Ծաղկաձորի վրայ իջնում էր հանդարտ խաղաղութիւն:

Ու մի երեկոյ էլ Դրօն երեւաց Ծաղկաձորում: Նոր էր վերա-


ARAM webaram.com

դարձել Ղարաբաղ—Զանգեզուրից եւ իջել էր մի օրով Մաղկաձոր ինձ տեսնելու եւ նոյն ապատ չունչն առնելու: Ծողնած ու դառնացած էր եւ պէտք ունէր «հոդեշարժ» խօսակցութեան:

Մինչեւ ուշ գիշեր խօսեցինք ամէն բանի մասին: Ան իր սիրտը պարպեց իմ առջեւ, ես նրան պարպեցի իմ ցաւերն ու մտածումները:

Առաւօտ ընդոստ վեր թռայ անկողնից: Ինձ թուաց, որ պատերազմի դաշտում եմ, եւ գնդացիրների տրաքտրիքը պատռում է ականջներս: Եւ իսկապէս, դրսից հրացանի որոտ էր լսւում:

Գիւղի ծայրում իմ աչքերիս առջեւ պարզուեց այսպիսի տեսարան: Որտեղից որտեղ Դրօն ճարել էր որսորդական հրացան եւ մի քանի գիւղացի տղաներ եռեւը ձգած, առաւօտ կանուխ, ելել էր որսորդութեան եւ նրա առաջին զոհը եղել էին աւերակ եկեղեցու աղաւնիները: Մի քանի տասնեակ անմեղ թռչուններ փռուած էին նրա ոտներուն տակ:

— Ի՞նչ ես անում, բարկացայ ես, այս թռչուններին ձեռք չեն տալիս, մեղք է:

— Հիանալի քաշովի կը լինի, պատասխանեց նա խնդալով:

Գիւղացիների «մեղքը» նախատաշարում էր, ի հարկէ, բայց ես էլ արբանպղծութիւն համարեցի Դրօյի արարքը: Գիւղացիք ուղղակի սգաւոր էին երեւում, թէեւ չէին համարձակում դատապարտութեան խօսք ասել Դրօյին:

Դրօն ինքն էլ զոհ չէր երեւում իր արածից: Նա տղաներին ձեռքով նշան արաւ, թէ՝ տանեն սպանուած թռչունները եւ հրացանը ձեռքին բարձրացաւ անտառն ի վեր: Կէսօրին վերադարձաւ առանց մէկ որսի, մոայլ: Ոչ մի փամփուշտ չէր արձակել:

* * *

Մօտաւորապէս նոյն օրերին, Երեւանից եկաւ վարչապետ Համօ Օհանջանեանը, որի բնտանիքն Ծաղկաձորում էր: Ծողնած երեւոյթ ունէր, եւ դեղնկիկ աչքերը տխուր էին, թախծոտ:

Զարմանալի էլ չէր: Ծանր բեռ էր դրուած Բիւրօ—կառավարութեան ուսերին, Հայաստանի ամենաողբերգական շրջանում:

Համոյի հետ 1908 թուի Ռայոնական ժողովում մենք մի դժբախտ միջադէպ էինք ունեցել, եւ այդ օրուանից նա մտերիմ չէր ինձ, թէեւ արտաքնապէս ոչնչով ցոյց չէր տալիս:

Վիեննայի Ընդհ. ժողովից յետոյ, Հ. Յ. Դաշնակցութեան կովկասի առաջին Ռայոնական ժողովն էր: Ընկերավարութեան շուրջ տեղի ունեցած վէճերն ու կիրքերը դեռ չէին մարած դաշնակցական երիտասարդութեան մէջ:



ARAM webaram.com

Ռայոնական ժողովում արագ կերպով կազմուեց երիտասարդական «Ֆրակցիա», որ ժողովի հէնց առաջին օրից փորձեց իր ոյժը ցոյց տալ: Զնայած իմ բուռն հակառակութեան, «Ֆրակցիա»ն որոշեց իմ թեկնածութիւնը դնել ժողովի նախագահութեան՝ Համոյի թեկնածութեան դէմ: Անընդելի բան էր, ի հարկէ, բայց երիտասարդ էինք եւ անխելք բաներ յաճախ էինք կատարում: Մի ժողովում, որին մասնակցում էին Ս. Զաւարեան, Ա. Ահարոնեան, Ա. Վռամեան, Հայր Աբրահամ, Ե. Թումչեան, Յ. Շահրիկեան, Յ. Քալջեաններ եւ ուրիշ պատկառելի անձնաւորութիւններ, նախագահ ընտրել ուզել մի նորելուկ, աննշան ոգայ, առնուազն յիմարութիւն էր:

Նախ քան քուէարկութիւնը փորձ եղաւ երիտասարդներին պզուշացնելու: Իմաստութեան ճառեր արտասանուեցան, բայց մի քանի պատանի քուէարկութիւն ցոյց տուեց, որ բոլոր ճառերը ի զուր էին անցել. միշտ ինձ երկու-երեք քուէ աւելի էր տրւում, բայց երկու-երրորդի մեծամասնութիւն չէր գոյանում:

Ի վերջոյ, հակառակ ընկերներիս կատաղի ընդդիմութեան, ես վերցրի իմ թեկնածութիւնը, եւ նախագահ ընտրուեց Համօն, որ օրուայ աչքի ընկնող գործիչներից էր, որ իր կուսակցական անցեալով, պարզացումով եւ փորձառութեամբ ինձանից չատ բարձր էր եւ աւելի արժանաւոր Ռայոնական ժողովի նախագահութեան: Այնուամենայնիւ, ես զգում եմ, այդ միջադէպը անհետեւանք չէր անցել մեր փոխ-յարաբերութիւնների մէջ:

Բիւրո-կառավարութեան մէջ էլ տարակարծութիւններ պատահում էին: Երկու հիմնական ըմբռնում կար իշխանութեան մասին.- կոմիտաջիական եւ պետական: Ես կարծում էի, որ իշխանութիւնն պէտք է զեկավարուի պետական օրէնքներով եւ արտակառավարական անհատական կամ կոմիտէական արարքները պետական գործերը վարելու հարցում անթոյլատրելի են, մանաւանդ եթէ այդ արարքներն չէին վայելում ժողովրդականութիւն: Ուրիշներ նեղելի եւ օտտակար էին համարում արտակառավարական միջոցներն ու անհատական նախաձեռնութիւնները, որոնք, իմ կարծիքով, խախտում էին պետութեան հիմքերը:

Այս պատճառով երբեմն սուր տարակարծութիւններ էին ծագում եւ բուռն վէճեր էին տեղի ունենում կառավարութեան մէջ: Համօն, իբրեւ կառավարութեան նախագահ, աշխատում էր հաւասարակշռութիւնը պահել, երբեմն աչք գոցելով ապօրինի արարքների վրայ, բայց դժուար էր լինում ջուրն ու կրակը մէկ ամանում պահել:


ARAM webaram.com

Երեւանից մեկնելուց առաջ, մի տաք բախումից յետոյ, ես պրաւոր հրաժարական էի ներկայացրել վարչապետին և քաշուել պատերից, որով կառավարական տաղնապ էր առաջացել: Համաձն Ծաղկաձորում այդ տաղնապն էլ պիտի լուծէր:

Գլուխ-գլխի խօսակցութիւններով մենք կարողացանք եզրակացութեան գալ, եւ տաղնապը հարթուեց: Երկրի կացութիւնը այնպէս էր, որ գործող ուժերի համերաշխութիւնը առաջին պայմանն էր գոյութեան:



ARAM webaram.com

# ՁԱԽՈՐԴ ՕՐԵՐԸ ԿԸ ԳԱՆ ՈՒ Կ'ԵՐԹԱՆ

*Ինչպէս ասացինք, Շանթի պատուիրակութիւնը Մոսկուայում, բանակցութիւնները յաջող սկսելուց եւ դրեթէ համաձայնութեան գալուց յետոյ, Զիչէրինի եւ Կարախանի հետ, Ադրբէյջանի եւ Բաքւում հաւաքուած հայ կոմունիստների ճնշման տակ՝ ստիպուած եղաւ համաձայնուել խորհրդային կառավարութեան հետ՝ բանակցութիւնները փոխադրել Երեւան եւ Սեպտեմբերին վերադարձաւ Հայաստան: Սով. Ռուսաստանի կառավարութիւնը, իր կողմից ներկայացուցիչ նշանակեց Լէգրանին: Վերջինս մեկնեց Բաքու, իբր թէ, Ադրբէյջանի կառավարութեան հետ համաձայնութեան գալու նպատակով, մասնակցեց Արեւելեան ժողովուրդների Համագումարին, եւ ապա անցաւ Թիֆլիս: Պարզ էր, որ Բաքւում, նա անպտուղ չէր նստել: Թիֆլիսից, Սեպտ. 23–ին, ուղղեց Հայաստանի կառավարութեան հետեւեալ հեռագիրը.*

*«Հայաստանի արտաքին գործոց նախարար Օհանջանեանին*

*Ռուսաստանի Սոց. Դաշն. Խորհրդային Հանրապետութեան լիազօր ներկայացուցչութիւնը՝ մեկնելով Սով. Ռուսաստանի անփոփոխ բարեկամական մտադրութիւնից դէպի Հայաստանի ժողովուրդները եւ ձգտելով չուտով հաստատել տեւական խաղաղ յարաբերութիւններ Ռուս. Խորհրդ. Հանրապետութեան եւ Հայաստանի Հանրապետութեան մէջեւ՝ ամէն ճիգ թափեց վերացնելու համար այն արգելքները, որոնք ուշացնում են երկու կառավարութիւնների յարաբերութիւնների յաջող զարգացումը: Այդ նպատակով, դեռ այս տարուայ Յուլիսի 29–ին, մենք առաջարկեցինք Հայաստանի կառավարութեան հաշտութեան բանակցութիւնների վերսկսումը Երեւանում չյետաձգել՝ մինչեւ հայկական պատուիրակութեան վերադարձը*


ARAM webaram.com

Մոսկուայից։ Նոյն նպատակով էլ ընդ առաջ դնացինք Հայաստանի կառավարութեան առաջարկին՝ Թիֆլիսում սկսելու համար նախնական բանակցութիւններ Հայաստանի ներկայացուցիչների հետ, թէեւ այդ, անկասկած, ձգձգում էր հաշտութեան բանակցութիւնների բակըսումը Երեւանում, եւ նրանց հետ Օգոստ. 10–ին կնքեցինք ժամանակաւոր համաձայնութիւն։ Ապա, հէնց որ հայկական կառավարութիւնը Երեւանի համար տուեց երկաթուղային հաղորդակցութեան միջոցներ, այնտեղ ուղարկեցինք ներկայացուցչութեան առաջին քարտուղարին, որպէս դի պատրաստէ անհրաժեշտ բնակարան։

Դժբախտաբար, միայն Սեպտ. 19–ին, մեր սկզբնական դիմումից հօթը շաբաթ անցած, հայկական կառավարութիւնը տեղեկացնում է, որ սպասում է մեր Երեւան գալուն, որպէս դի չարունակենք հաշտութեան բանակցութիւնները։ Այդ երկարատեւ ձգձգման հետեւանքով առեղծուածին եւ չարունակւում են առեղծուել թիւրիմացութիւնները, որոնք երբեմն սպառնում են վերածուել երկու կառավարութիւնների միջեւ քաղաքական բարդութիւնների եւ որին յաճախ նպաստում է Հայաստանի կառավարութեան ներկայացուցիչներից ոմանց Օգոստ. 10–ի համաձայնութեան անճիշդ եւ միակողմանի ըմբռնումը։ Այսպէս, Սեպտ. 21—22–ին, Վրաստանի հայկական դիւանագիտութեան ներկայացուցիչ Տ. Բէգզադեանը դիմեց մեզ Հայաստանի կառավարութեան անունից՝ պահանջելով դադարեցնել խորհրդային զօրքերի յարձակումը Ազսիբարա, Բօգանիս—Այրում, Ղուչչի—Այրում դիւղերի վրայ եւ խորհրդային զօրքերը հեռացնել թէ՛ այդ եւ թէ՛ Փաբախլի ու Մազամլի դիւղերից՝ մատնանշելով, թէ հակառակ դէպքում հետեւանքների ամբողջ պատասխանատուութիւնը պէտք է ընկնի յարձակուողների վրայ։ Միաժամանակ Տ. Բէգզադեանը հաւատացնում է, թէ երբեւ թէ յիշուած բոլոր կէտերը Օգոստոս 10–ի համաձայնութեամբ ճանաչուած են որպէս հայկական զօրքերի գտնուած սահմանների մէջ մտնող վայրեր՝ համաձայն Յուլիս 30–ի նրանց գրաւած ռազմական գծի։ Նախ Պր. Բէգզադեանի կռմից Օգոստ. 10–ի յիշատակումը, ներկայ դէպքում, դուրկ է հիմքից, քանի որ Ղազախի չրջանի սահմանների նկատմամբ պայմանագրի երկրորդ կէտում ասուած է միայն, որ Հայաստանի հանրապետութեան զօրքերը Ղազախի չրջանում գրաւում են այս տարուայ Յուլիս 30–ին երանց բռնած գիծը։ Քանի որ պայմանագրի ստորագրութեան միջոցին յիշեալ կէտերը գրաւուել էին խորհրդային զօրքերով ու խորհրդային հրամանատարութեան տեղեկութիւններով նրանցից ո՛չ մէկը Յուլիս 30–ին գրաւուած չէ եղել հայկական զօրքերով, նախ



ARAM webaram.com

քան յիշեալ կէտերից զօրքերի հեռացման պահանջ ներկայացնելը՝ հայկական կառավարութիւնը պէտք է ապացոյցներ ներկայացնէր, թէ այդ կէտերն, իրօք, Յուլիս 30–ին դրաւուած են եղել իր զօրքերով, ուստի պայմանագրի ուժով պէտք է պարպուեն խորհրդային զօրքերից: Իսկ կարծել, որ խորհրդային կառավարութեան համար պարտադիր ուժ ունի Օգոստ. 10–ի համաձայնութեան այս կամ այն կէտի մեկնաբանութիւնը Հայաստանի կառավարութեան կողմից, հայկական կառավարութիւնը ո՛չ մէկ հիմք չունի միջազգային օրէնքներով, որոնց վրայ է յենւում նա, ո՛չ էլ մարդկային համակեցութեան մէջ ընդունուած որեւէ այլ օրէնքներով: Մեր կրնքած պայմանագրի այդպիսի կամայական մեկնաբանութիւնը հէնց Հայաստանի քաղաքական պատասխանատու ներկայացուցիչների կողմից, անկասկած, նպաստում է եւ քայլերում ծաւալումը ամէն տեսակ ընդհարումների, որոնք տակաւին խանգարում են անդորրութիւնը սահմանների վրայ: Երկրորդ, իրապէս ո՛չ մի խօսք չի կարող լինել այն մասին, որ խորհրդային զօրքերը յարձակումներ են գործում Ղազախի չրջանում եւ ապօրինի կերպով գրաւում են հայկական հողեր: Խորհրդային հրամանատարութեան տեղեկութիւնների համաձայն մեր զօրքերի չարժումը պատասխան է եղել հայկական զօրամասերի գործողութիւնների, որոնք դրանից առաջ յետ են չըպըրտել մեր զօրքերը Ախթբարա, Բօգանիս—Այրում, Ղուչչի—Այրում եւ Մադամլի դիւղերից եւ գրաւել են այդ կէտերը. ընդ ամին՝ հայկական զօրքերի յիշեալ գործողութիւնների դադարման վերջնագիրը է տրուած մեր հրամանատարութեան, որ Օգոստ. 10–ի համաձայնութեան հիման վրայ՝ յիշեալ կէտերը պարպուեն: Ես բողոքում եմ հայկական իշխանութիւնների այդպիսի թշնամական արարքների դէմ եւ ցաւ եմ յայտնում այն մասին, որ հայկական կառավարութիւնը փոխանակ դիւանագիտական յարաբերութիւնների կարգով միջոցներ ձեռք առնելու՝ փոխադարձաբար պարզելու համար այն կէտերը, որոնք Յուլիսի 30–ին Հայաստանի զօրքերի կողմից բռնուած են եղել եւ Օգոստ. 10–ի համաձայնութեան հիման վրայ պէտք է պահպանուեն ներկայումս, թոյլ է տալիս, որ իր զօրքերը յարձակուեն մեր զօրքերի վրայ եւ խորհրդային կառավարութեան ներկայացնում է գործադրութեան ենթակայ չեղող պահանջներ: Ենթադրում եմ, որ յանուն հաչտութեան ու արդարութեան՝ հայկական կառավարութիւնը պէտք է անմիջապէս հրաման արձակէ իր զօրքերին դադարեցնելու յարձակումները խորհրդային զօրքերի վրայ եւ հեռանալու Ախթբարա, Բօգանիս—Այրում, Ղուչչի—Այրում եւ Մա-


ARAM webaram.com

զամլի գիւղերից, մինչեւ որ դիւանագիտական ճանապարհով պարզուի, թէ ո՞ր գօրքերը — Խորհրդային Ռուսաստանի՞, թէ հայկական — դրաւում էին այդ կէտերը Յուլիսի 30-ին: Բոլոր սահմանադծային հակառակութիւններին վերջ կը տրուի եւ դրանց ծագելու հնարաւորութիւնն իսկ կը կանխուի ժամանակին, եթէ հայկական կառավարութիւնը մեկնելով խորհրդային կառավարութեան բարեկամական մտադրութիւնների մասին ունեցած վստահութիւնից՝ ծագող հարցերի լուծման համար այլ ճանապարհներ չփնտռէ, քան բարեկամական խաղաղ յարաբերութիւններից խորհրդային կառավարութեան հետ: Այդ պայմանով, խորհրդային կառավարութիւնը լիովին համոզուած է, որ այժմ արդէն մօտաւոր օրերին հաշտութեան բանակցութիւնների վերսկսումը Երեւանում, կարճ ժամանակուայ մէջ, Հայաստանի եւ խորհրդային Ռուսաստանի ժողովուրդների կենսական փոխադարձ շահերին վերաբերուող բոլոր հարցերը կը հասցնէ խաղաղ համաձայնութեան հաստատման:

*Թիւ 135, Սեպտ. 23, Թիֆլիս*

*Ռուս. Սոց. Դաշն. Խորհրդ. Հանրապետութիւն*

*Լիազօր ներկայացուցիչ՝ Լէգրան*

Հոկտեմբերի 11-ին, առաւօտեան, յատուկ գնացքով Երեւան ժամանեց Սով. Ռուսաստանի լիազօր ներկայացուցիչ Լէգրանը՝ իր ներկայացուցչութեան բոլոր անդամների հետ: Հայաստանի կառավարութիւնը նրան ցոյց տուեց հանդիսաւոր ընդունելութիւն: կայարանը զրուած էր պատուաւոր պահակ: Ընդառաջ էին եկել պաշտօնական ներկայացուցիչներ: Լէգրանին կայարանում ողջունեցին փինուորական նախարարի օգնական զօր. Հախվէրդեանը, արտաքին գործերի նախարարի օգնական Պետրոսեանը, Մոսկուայի հայկական պատուիրակութեան անդամ Տէրտէրեանը, մայրաքաղաքի պարէտը եւ ուրիշներ: Լէգրանը չոյուած էր երեւում իրեն ցոյց տրուած ուշադրութեան եւ յարգանքի համար, մանաւանդ առանձնապէս զոհ էր զգում, որ սահմանի վրայ նրան դիմաւորել է Հայաստանի հաղորդակցութեան նախարար Ա. Ջամալեանը, որ այդ ժամանակ, պատահմամբ, այն կողմերն էր գտնուում: Երբ Լէգրանը դուրս եկաւ Սալօն—վագոնից, երաժշտախումբը նուագեց «Ինտերնացիոնալ»ը, եւ զօրքերը պատուի առին: Լէգրանը անցնելով պատուի առած զօրաշարքի առջեւով՝ ողջունեց նրանց, որից յետոյ կատարուեց փինուորական տողանցք: Լէգրանի ներկայացուցչութեան ամբողջ կազմը բաղկացած էր 47 հոգուց, որոնց մէջն էին եւ Սահակ Տէր-Գաբրիէլեանը, Աշոտ Յովհաննիսեանը եւ ուրիշներ:



ARAM webaram.com

Երեւան հասնելու օրն իսկ, Լէդրանը այցելեց արտաքին գործոց նախարար Հ. Օհանջանեանին: Իսկ Հոկտեմբերի 13–ին, Հայաստանի կառավարութեան ներկայացրեց հետեւեալ պահանջները.

1.— Թոյլ տալ Ռուսական զօրամասերին անցնել իրենց ռազմամթերքով Հայաստանով՝ Թէ՛ սրա երկաթուղիներով եւ Թէ՛ խճուղիներով՝ Քեմալ փաշայի ապստամբ զօրքերի հետ միանալու համար եւ Անտանտի դէմ կռուելու նպատակով:

2.— Հրաժարուել Սեւրի դաշնագրից:

Եթէ այս երկու պայմաններն ընդունուէին, Լէդրանը խոստանում էր, որ Սով. կառավարութիւնը միջնորդ կը լինի Հայաստանի եւ Մուսթաֆա Քեմալի միջեւ:

Հոկտեմբերի 11–ին, Հայաստանի Թիֆլիսի դիւանագիտական ներկայացուցիչ Տ. Բէգզադեանը հետեւեալ դեկուցումը ուղարկեց Փարիզի Հ. Հ. Պատուիրակութեան.

«Օգոստոս 10–ին, Սով. Ռուսաստանի հետ կայացած ժամանակաւոր համաձայնութիւնից յետոյ, մեր Հանրապետութեան արտաքին քաղաքականութեան նշանաւոր անցքերը կապուած էին եւ կապուած են մինչեւ օրս նոյն Սով. Ռուսաստանի եւ նրա ստորագրեալ «Սովետական» Ադրբէյջանի քաղաքականութեան հետ:

Սով. Ռուսաստանի ոտնձգութիւնները Հայաստանի Հանրապետութեան դէմ այդ համաձայնութիւնից յետոյ էլ չարունակուեցին: Մեր սահմանները, չարաթ չէր անցնում, որպէս զի այս կամ այն յարձակման չենթարկուէին սովետական զօրքերի կողմից: Մի կողմ թողնենք այն զաղանութիւնները, որ տեղի ունեցան Զանգեզուրում եւ Ղարաբաղում, որոնք այդ համաձայնութեամբ անցան Սով. իշխանութեան ապղեցութեան տակ: Մեր անընդհատ դիմումներին՝ վերջ տալու այս յարձակումներին, Պր. Լէդրանը սովորաբար պատասխանում եւ հաւաստիացնում էր, որ կատարուող դէպքերը մեծ մասամբ բացատրւում են տեղական նախաձեռնութեամբ եւ որ նրանք բոլորովին այն իմաստը չունեն, իբր Թէ, Սով. Ռուսաստանը դէմ է մեր անկախութեան: Այս դրութիւնը չարունակուեց մինչեւ Սեպտեմբերի սկիզբները, երբ Սով. Ռուսաստանի յարձակողական դիրքը դէպի մեր Հանրապետութիւնը մի քիչ մեղմացաւ միայն՝ չնորհիւ այն ծանր կացութեան, որ ստեղծուեց սովետական միւս ճակատներում՝ լեհական զօրքերի եւ Վրանգելի յառաջխաղացութեամբ:

Միաժամանակ այս դէպքերի հետ, անսպասելի կերպով, երեւի Թէ մեղ ցոյց տալու համար, որ նա իր սեփական դէմքը դեռ եւս չի կորցրել, Սովետական Ադրբէյջանը երեւան եկաւ հայ–ադրբէջանեան


ARAM webaram.com

կոնֆերանսի առաջարկությամբ: Մեր կառավարությունը իրաւամբ չընդունեց այդ առաջարկությունը՝ համարելով այդ վաղաժամ, քանի որ Սով. Ռուսաստանի հետ, որը խօսում էր Ակրբէջանի անունից, պէտք էր դեռ եւս կայացնել վերջնական համաձայնութիւն:

Սեպտեմբերի սկզբին, Մոսկուայից վերադարձաւ մեր պատուիրակութիւնը Շանթի նախագահութեամբ: Շանթի տպաւորութիւնից եւ նրա ունեցած բանակցութիւններից պարզուեց, որ այնքան էլ ճիշդ չէր մեր այն ընդունուած տեսակէտը, իբր թէ սովետական կենտրոնը բարեացակամ վերաբերում ունի դէպի Հայաստանի անկախութիւնը: Երեւում է, որ այս հարցում, Սովետական կենտրոնը միակարծիք չէ: Մինչդեռ Լենինը, Զիչէրինը, Կարախանը իրօք բարեացակամ վերաբերմունք ունին դէպի մեր դատը եւ Հայաստանի անկախութիւնը, Տրօցկին, դլուխ անցած պինուորական ուժերի, ուզում է Սով. Ռուսաստան առնուազն 1914 թ. սահմաններում եւ դէմ է թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Վրաստանի անկախութեան:

Շանթի այս դիտողութիւնները, անկասկած, իրաւացի պէտք է համարել, եթէ ի նկատի ունենանք, որ մասնաւորապէս Հայաստանի սահմաններում կատարուող դէպքերը բացատրւում են ո՛չ միայն տեղական՝ ակրբէջանեան նախաձեռնութեամբ, այլ եւ սովետական զօրավարների կամեցողութեամբ:

Թէ այս տեսակէտներից որի՞ն է կողմնակից սովետական ներկայացուցչութեան դլուխը — Լէպրանը — այժմ մեր քիչ դժուար է որոշել, սակայն ուշագրաւ է հետեւեալ հանդամանքը. Շանթի Հայաստան վերադառնալուց յետոյ, պէտք էր ենթադրել, որ Լէպրանն էլ անմիջապէս կը տեղափոխուէր Հայաստան՝ մեր կառավարութեան հետ վերջնական համաձայնութեան դալու նպատակով: Բայց այդ տեղի չունեցաւ: Լէպրանի Հայաստան գնալը նախ յետաձգուեց այն պատրուակով, որ, իբր թէ, նա նեղկայ պիտի լինի Բաքւում արեւելեան ժողովուրդների համագումարին: Ի դէպ, այդ համագումարը՝ սովետական արեւելեան քաղաքականութեան ուշագրաւ անցքերից մէկը պէտք է համարել: Համագումարին նեղկայ էին սովետական ամենամօլեռանդ պաղտխարաբաժանների Զինովիեւը, իբրեւ համագումարի նախագահ, եւ Ռադէկը: Նրանց արտասանած կոմունիստական ճառերին յաջորդեց Լենինի փաշայի դրաւոր դիմումը համագումարին: Ինտերնացիոնալի պաղտխարների առաջնորդները այդ պիտով ձեռք մեկնեցին Բաքւում պանիսլամիզմի խոշոր գործիչին եւ նրանց կոմունիստական տենչերը նեղկուեցին այս անգամ պաղատանքի ոչակցիան եւ արիւնարբու դոյներով: Արեւելեան ժողովուրդնե-



ARAM webaram.com

րի համագումարի արդյունքը ա՛յն եղաւ, որ մինչ այդ ենթադրական եւ ոչ այնքան պարզ յարաբերութիւնները բոլշեւիկների եւ Մուսթաֆա Քեմալի միջեւ՝ կոնկրէտ ձեւ ստացան: Որ իրենք՝ բոլշեւիկներն իսկ չեն ժխտում այժմ այդ կապը, եւ այսօր արդէն մենք կանգնած ենք Թուրք–բոլշեւիկեան ռէակցիոն վտանգի առաջ:

Սեպտեմբեր 23–ին, երեւացին մեր սահմաններում դինուորական գործողութիւնների նշանները: 28–ին պարզուեց, որ թուրքերը մեր սահմաններում կենտրոնացրել են աւելի մեծ ուժեր, մօտաւորապէս երկու դիվիզիա, եւ միաժամանակ դինուորական գործողութիւններ են սկսել Սարիղամիշի, Օլթիի եւ Իղդիրի ուղղութեամբ: Թրքական յառաջխաղացումը առաջին օրերը, մինչ մենք կը կարողանայինք բաւականաչափ ուժեր կենտրոնացնել, պարզ էր՝ պիտի ունենար որոշ յաջողութիւններ, եւ թուրքերին յաջողուեց գրաւել Սարիղամիշը, Օլթին եւ հասնել մինչեւ Նովօ—Սէլիմի դիրքերը, իսկ կազդուանը եւ կողքը մենք պարպեցինք: Այժմ, թէկուզ վտանգը վերջնականապէս վերացած չի կարելի համարել, սակայն դրութիւնը փոխուել է, եւ յոյս ունինք այդ արկածախնդրութեան վերջ տալ: Երկրում տիրում է մեծ ոգեւորութիւն:

...Երեւի թէ թուրքական յառաջխաղացման յաջողութեան հետ կապ ունի Լէդրանի Հայաստան դնալու ձգձգումը՝ արեւելեան ժողովուրդների համագումարի վերջանալուց յետոյ: Յատկանշական է, որ երբ պարզուեց, որ թրքական յառաջխաղացումը չպիտի ունենայ մեր հանրապետութեան կեանքում այն անսպասելի հետեւանքները, որոնք ենթադրւում էին, Լէդրանը, իր հերթին, պարզեց, վերջապէս, իր դրութիւնը. եւ երկկ առաւօտեան ուղեւորուեց Հայաստան: Ուշագրաւ է նաեւ, որ Սովետական Ադրբէյջանի կողմից կրկին առաջարկութիւն եղաւ մեր կառավարութեան՝ հայ—ադրբէջանական կոնֆերանս գումարել: Կառավարութիւնը այս անգամ պատասխանել է համաձայնութեամբ. եւ երկկ ևս կառավարութիւնից այդ իմաստով ստացած հեռագիրը՝ ուղարկեցի Բաքու»:

Սեպտեմբերի 1–ին, Բաքւում, բացուեց արեւելեան ժողովուրդների համագումարը: Բացումը կատարեց, Գ. Զինովիեւի անունից, Նարիմանովը: Ներկայ էին Գ. Զինովիեւի ներկայացուցիչներ Զինովիեւ, Ռադէկ, Բելա–Կուն եւ շուրջ 1800 պատգամաւորներ: Ի միջի այլոց, հայ կոմունիստներն էլ ունէին պատուիրակութիւն: Նախագահ ընտրուեց Զինովիեւ. պատուաւոր նախագահ ընտրուեց Լենինը, պատուաւոր անդամներ՝ Տրոցկին, Ռադէկ, Բելա–Կուն, Ստալին եւ արեւմտեան կոմունիստների


ARAM webaram.com

ներկայացուցիչներ: Համագումարի առաջին նիստը նուիրուեց Զինովիեւի ճառին, որը պարզաբանեց Համագումարի նպատակները: Զինովիեւի ճառի այն մասը, ուր նա արեւելքի ժողովուրդներին սրբագրած պատերազմի էր հրաւիրում, ընդհատուեց պատգամաւորների կատաղի ցոյցերով. պատգամաւորները վերացումի մէջ վեր թռան տեղերից, մերկացրին սրերը եւ սկսեցին շարժել օդի մէջ: Սրահը լեցուեց ամէն լեզուի ազազակներով: «Ինտերնացիոնալ»ի հնչիւնների տակ, համագումարը երկա՛ր երդուեց հաւատարիմ մնալու աշխատաւորութեան դատին:

Արեւելեան ժողովուրդների համագումարի երրորդ օրը, Ինվէր փաշայի դլխաւորութեամբ, մի մեծ մխիթ է դումարում Թագա—Փիր մզկիթում: Համագումարի պատգամաւորների մեծ մասը, ամբողջ համխալամական Բազուն, ներկայ է գտնում: Ինվէր փաշան եւ ուրիշները արտասանում են բուռն ճառեր արեւմտեան «իմպերիալիստների» դէմ: Հրաբորբոք ճառեր են արտասանում եւ մոլլաները, որոնք կոչ են ուղղում խալամ աշխարհին, պաշտպանելու մարգարէի հաւատը քրիստոնեայ գեաուրների դէմ: Ամէնքը երդւում են Ղուրանի վրայ, մինչեւ արեան վերջին կաթիլը կռուել խալիֆայական դրօշի եւ կիսալուսնի նշանի տակ...

Երբ այս տաքօրինակ մխիթի լուրը հասնում է Զինովիեւին ու Ռադէկին, որոնք չտապում են միջոցներ ձեռք առնելու այդ խայտառակութեանը վերջ տալու համար: Մզկիթ է վազում Նարիմանովը եւ սկսում է խօսել կոմունիստական գաղափարների մասին: Երբ նա արտասանում է «Պրոլետարիատ» բառը, ամբոխը յուզւում է, սկսում է ուռլել եւ պահանջում է Նարիմանովից լռել:

Կոմունիստների ճիգերը հանդարտեցնելու համար համխալամական կրքերը՝ անցնում են ապարդիւն... Համագումարում լուեց նաեւ Ինվէր փաշայի ճառը, որի մէջ նա յայտնում էր հետեւեալը.

«Ընկերնե՛ր, իմ եւ ընկերներիս կողմից չնորհակալութիւն եմ յայտնում Գ. Ինտերնացիոնալին եւ նրա նախագահութեան, որ հրաւիրութիւն տուեց մեզ, համաշխարհային իմպերիալիզմի ու կապիտալիզմի դէմ պատերազմելիս, հաւաքուել այստեղ՝ Բազում:

Մենք երջանիկ ենք համարում մեզ, որ իրը հակադրութիւն իմպերիալիզմի ու կապիտալիզմի, որի համար բաւական չէ մեզ թալանելն ու մերկացնելը, այլ աշխատում է իմել մեր արիւնն էլ ու ոչնչացնել էլ մեզ, եւ հակառակ եւրոպական խաբեբայ քաղաքագէտներին, մենք այսօր կանգնած ենք կողք կողքի մի հաւատարիմ ու ճշմարտասէր դինակից՝ Գ. Ինտերնացիոնալի հետ:



ARAM webaram.com

Երբ Թուրքիան մտաւ պատերազմի մէջ, աշխարհը բաժանուել էր երկու բանակի: Մէկ բանակում էին նախկին իմպերիալիստական ցարական Ռուսաստանն ու իր դաշնակիցները. միւսում՝ նոյնպէս իմպերիալիստ ու կապիտալիստ Գերմանիան ու իր դինակիցները: Այս երկու խմբակցութիւններից՝ մեզ բոլորովին խեղդել ու բնաջնջել ուզող ցարական Ռուսաստանի, Անգլիոյ եւ այլոց դէմ կռուելով՝ մենք ընտրեցինք եւ պատերազմեցինք Գերմանիոյ կողքին, որը դոնէ համաձայնուեց մեզ կեանք պարգեւել: Գերման իմպերիալիստները մեզ օգտագործեցին իրենց աւազակային նպատակների համար. բայց մեր փափաքն էր միայն պահպանել մեր անկախութիւնը:

Այս դէպքումը, որ մեզ տարաւ Բերլինի խաղաղ կեանքից դէպի Տրիպոլիսի ոսկի անապատներն ու բէտուինների աղքատիկ վրանները եւ ստիպեց նրանց հետ անցկացնել մեր կեանքի դժուարագոյն մասը, իմպերիալիզմի դպացում չէր: Մենք աշխատում էինք պատել Տրիպոլիան իր բնակիչների համար եւ այժմ ուրախ ենք, որ ինը տարուայ կռուից յետոյ նրանց յաջողուեց վանել իտալական իմպերիալիստներին:

Ազրբէյջանի նկատմամբ էլ մենք ուրիշ մտադրութիւն չենք ունեցել: Մենք գանում ենք, որ Ազրբէյջանը պատկանում է Ազրբէյջանցիներին:

Ընկերնե՛ր, համաշխարհային պատերազմի ժամանակ ես ամենակարեւոր պաշտօնն ունէի: Հաւատացնում եմ ձեզ, որ ես ցաւում եմ, որ մենք հարկադրուեցինք կռուելու գերման իմպերիալիզմի կողքին: Ես նոյնքան ատում եւ անիծում եմ գերման իմպերիալիստներին, որքան անգլիական իմպերիալիզմն ու իմպերիալիստներին: Ըստ իս, բոլոր նրանք, որոնք մտածել են աշխատաւորներին հարստահարելու մասին, արժանի են ոչնչացման: Այս է իմ տեսակէտը իմպերիալիզմի մասին:

Հաւատացնում եմ ձեզ, որ եթէ այժմուայ Ռուսաստանը այն ժամանակ գոյութիւն ունենար եւ պատերազմէր այժմեան նպատակների համար, մենք, ինչպէս հիմա, բոլանդակ թափով կը կանգնէինք նրա կողքին. որպէս զի աւելի պարզ ապացուցեմ իմ միտքը, կ'ասեմ, որ մենք վճռել ենք ու սկսել համագործակցել Սով. Ռուսաստանի հետ: Իւդենիչի բանակը կանգնած էր Պետրոգրադի մօտ, Կոլչակը իր ձեռքին էր պահում Ուրալը, Դէնիկինը հարաւից մօտենում էր Մոսկուային: Այդ ուժերը չարժող Անտանտը, որ խաղը հաստատում էր վերջացած իր օգտին, ցոյց էր տալիս իր աւազակային



ARAM webaram.com

ժանիքները եւ զոհունակութեամբ ձեռքերն էր շփում։ Այդպէս էր կացութիւնը, երբ մենք աշխատում էինք բարեկամ դառնալ Ռուսաստանին։ Եթէ Սեւ ծովի ալիքները ինձ յետ չշպրտէին կտրելով իմ նաւի կայմերը, եթէ Քոմնոյի ու Ռիոպայի բանաերի վանդակապատները եւ իմ նաւած առւտրական անկումը չկասեցնէին ինձ, ես ձեզ մօտ կը գայի Ռուսաստանի ամենածանր ժամանակին եւ առիթուած չէի լինի ձեզ պատմել այս աւելորդ բաները, որպէս զի բացատրութիւններ տուած լինեմ մի քանի ընկերների։

Դուք գիտէք, որ այս համաչխարհային պատերազմի առաջին իմպերիալիստական գօտեմարտում մենք յաղթուեցինք։ Բայց կեղեքուածների պատերազմի տեսակէտից՝ ես մեզ յաղթուած չեմ նկատում, որովհետեւ Թուրքիան՝ իր Նեղուցների վակման պատճառով՝ զարձաւ մէկը այն զօրծօններից, որոնք խորտակման առաջնորդեցին ցարական անցած Ռուսաստանը եւ նրա տեղը նկաւ բոլոր ճնշուածների բնական պինակիցը՝ Սով. Ռուսաստանը։ Այսպիսով Թուրքիան նպաստեց, որ աշխարհի փրկութեան մի նոր ճանապարհ բացուի։ Ես այդ համարում եմ յաղթանակ՝ ճնշուածների տեսակէտից։

Այն բանակը, որ ներկայումս հերոսական կռիւ է մղում իմպերիալիզմի դէմ եւ որ իր ուժերը սառնում է դիւզացիութիւնից, ինչպէս ասացի, չյաղթուեց։ Նա միայն ժամանակաւորապէս ցած է դրել իր զէնքը։ Ներկայումս այդ նոյն թշնամու դէմ 15 տարի պատերազմելուց յետոյ, նա, ամենամեծ զրկանքների մէջ, երկրորդ տարին է, որ կռւում է։ Ներկայ կռիւը չի կարելի բաղդատել նախորդի հետ։ Տեսնելով, որ այժմ արեւելեան աշխարհը պինակից է Գ. Ինտերնացիոնալին, այսինքն՝ ամբողջ աշխարհի ճնշուածները աջակցում են նրա արդար պահանջներին, նա համակուած է յաղթելու վճռական յոյսով։

Թրանսուալի պատերազմից սկսած՝ Համաչխարհային Պատերազմի լարուած շրջանը չարունակուեց 1914 թուականից մինչեւ 1917 եւ չյանգեց իր վախճանին։ Բայց պատերազմը այժմ մտել է իր վրճռական շրջանի մէջ եւ կը վերջանայ անպայման մեր յաղթանակով, այսինքն՝ ճնշուածների յաղթանակով եւ ոչ միայն իմպերիալիզմի ու կապիտալիզմի պարտութեամբ, այլ եւ նրանց լիակատար բնաջնջումով։

Ներկայ համագումարը նոր ուժեր կը տայ ճնշուածների պաշտպանութեան համար իր արիւնը թափող կարմիր Բանակին, ինչպէս նաեւ թուրք մարտիկներին։ Ներկայ համագումարը կը նպաստէ նաեւ, որ պատերազմը վերջանայ մեր յաղթանակով, այսինքն՝ ի-



ARAM webaram.com

բաւունքի յաղթանակով: Մենք ղէպի Գ. Ինտերնացիոնալը ուղղուեցինք ո՛չ միայն մեր սկսած կռւում յենարան պահելու ձգտումով: Կարող է պատահել, որ դրա պատճառը միաժամանակ էլ նաեւ սկըզբունքների մօտիկութիւնը: Մենք մեր յեղափոխական ուժը առացել ենք ժողովուրդից, ժողովրդի ճնշուած մասից, այսինքն՝ պիւրացիներից: Եթէ մեր զործարանային բանուորները լինէին ուժեղ, եա առաջին տեղում, նրանց կը յիշէի, նրանք մեզ հետ կը լինէին: Նրբանք հոգով ու մարմնով մեզ հետ կ'աշխատէին: Այդ այժմ էլ այդպէս է: Այդպիսով, մենք յենուել ենք ժողովրդի ճնշուած մասի վրայ եւ զգում ենք նրա ցաւը, ապրում ենք նրա հետ եւ կը մեռնենք նրա հետ միասին:

Հաշուի առնելով ժողովրդների բաղձանքները՝ մենք կողմնակից ենք տալու նրանց ինքնորոշման իրաւունքներ: Մենք մեր ամբողջ կեանքում մեզ ամուր կապերով կապուած ենք համարում նրանց հետ, ովքեր ուզում են ապրել մեզ հետ. ովքեր այդ բանը չեն կամենում, մենք ուզում ենք իրաւունք տալ իրենց ճակատագիրը անորոշելու: Ահա մեր տեսակէտը ազգային հարցի մասին:

Մենք ղէմ ենք պատերազմին, այսինքն՝ այն բանին, որ մարդիկ միմեանց խեղդեն իշխանութեան համար: Եւ յատուկենական խաղաղութիւն ձեռք բերելու նպատակով մենք ընթանում ենք Գ. Ինտերնացիոնալի հետ, ուսոի եւ ներկայումս, հակառակ ամէն տեսակ արգելքների, մենք մղում ենք արիւնահեղ կռիւներ եւ պիտի չարունակենք կռուել:

Մենք երջանկութիւն ենք ցանկանում աշխատաւորութեան, այսինքն՝ մենք ղէմ ենք, որ չարաչահները՝ օտար թէ տեղացի՝ օգտուեն ուրիշի աշխատանքից. նրանց վերաբերմամբ պէտք է լինել անվերապահ: Մենք ուզում ենք, որ մեր երկիրն օգտուի ընդհանուր աշխատանքի պտուղներից, երկրագործութեան եւ արդիւնաբերութեան լայն զարգացումից: Այդ է մեր միտքը տնտեսական հարցի մասին:

Մենք համոզուած ենք, որ միայն պիտակից ժողովուրդը կարող է երջանկութիւն եւ ազատութիւն ձեռք բերել: Մենք ուզում ենք, որ աշխատանքին միացած լինեն եւ մեր ճշմարիտ ազատութիւնը ապահովող հիմնական պիտակները եւ լուսաւորեն մեր երկիրը, այդ հարցում մենք տարբերութիւն չենք ճանաչում ազամարդու եւ կնոջ մէջ: Այդ է մեր միտքը ընկերային քաղաքականութեան մասին:

Եւ յայտարարում եմ ձեզ, որ Մարոքի, Թունուզի, Տրիպոլիի,


ARAM webaram.com

Եղիպտոսի, Արաբիայի եւ Փիլիպիոնի յեղափոխական կազմակերպութիւնները, որոնք ինձ ուղարկել են իրենց ներկայացուցիչը, այս հարցերում բոլորովին համերաշխ են մեղի հետ: Ներքանք լիովին համոզուած են, որ յեղափոխական բոլոր միջոցների գործադրութեամբ՝ նրանց կը յաջողուի ջարդել վայրագ զազանների ժանիքները եւ անզօրացնել վերջնականապէս:

Ընկերնե՛ր, այդ նպատակով չարժման դրուած ձեռքերը իրար են երկարում: Ես սեղմում եմ ձեռքերը նրանց, ովքեր կ՚աշխատեն միանաբար մինչեւ վախճանը այս պատերազմի, որ կը տեւէ երկար, բայց կը վերջանայ միայն մեր յաղթանակով:

Յաղթութիւն եմ ցանկանում ձեզ: Կեցցէ՛ ճնշուածների պինակցութիւնը: Կորչի՛ն այդ պինակցութեան առջեւ զոդացող կեղեքիչները»:

Տեսնո՞ւմ էք, ինչ կոմունիստական ճառ է խօսում Թուրք ջարդարարը...

Համագումարը ինչ բարձր ոգեւորութեամբ սկսուեց, այնպէս պերազրական խանդավառութեամբ էլ վերջացաւ. արեւելեան ժողովուրդները ցոյց տուին իրենց ամբողջ հաւատարը: Բայց ճառն ու արերի ճօճումը, իրենց հերթին, աւելի կարեւոր էին համագումարի որոշումները, մանաւանդ, վարագոյրի յետեւում, պարագլուխների կողմից, կնքուած համաձայնութիւնները:

Համագումարը միաձայնութեամբ քուէարկեց անհաչա պայքար մղել իմպերիալիզմի, յատկապէս անգլիական կայսերապաշտութեան դէմ, որի մէկ արտայայտութիւնն էր Սեւրի դաշնագիրը: Ինչպէս վերջը իմացուեց, գաղանի համաձայնութիւն կնքուեց բոլշեւիկների եւ քեմալականների միջեւ, միահամուռ ուժերով կռուելու բրիտանական կայսերապաշտութեան, յատկապէս «Անգլիոյ ձեռքին գործիք ծառայող Հայաստանի հանրապետութեան» դէմ: Բոլշեւիկները խոստանում էին նիւթական աջակցութիւն եւ զէնք տալ Թուրքերին: Համագումարի միւս որոշումները, այս պահուս, կենսական չեն մեզ համար:

Բարեմիտ ասողներ կան, որ եթէ Հայաստանի կառավարութիւնը ժամանակին կարողանար Խորհրդային Մոսկուայի հետ ընդհանուր լեզու գտնել, հետապայ ազէտները տեղի չէին ունենար, եւ Հայաստանը, թէկուզ եւ խորհրդային, կ՚ունենար աւելի ընդարձակ սահմաններ՝ իր մէջ առնելով հողամասեր նոյնիսկ Թրքահայաստանից:



ARAM webaram.com

Այս միտքը, անառարկելի, շատ է պրպտելի եւ չարունակում է պրպտելի հայ քաղաքական գործիչներին: Կռահում եմ՝ ինձ էլ նա հանգիստ չի տալիս ու չարունակ տանջում է: Արդեօ՞ք մենք մենք չզործեցինք ճակատագրական սխալ, արդեօ՞ք չպէտք էր Հայաստանը խորհրդայնացնէինք հէնց Ապրիլեանի հետ միասին, կամ վերջը՝ Յուլիս—Օգոստոս ամիսներին: Արդեօ՞ք չպէտք էր թքնէինք բոլոր Եւրոպաների, բոլոր Սեւրերի ու Ուիլսոնների վրայ ու մեր յոյսը կապէինք Մոսկուայի հետ:

Անշուշտ, խիստ դժուար էր այդ օրերին նման նախատեսութիւն ու քայլ: Ո՞վ կը համարձակէր մտածել անգամ, որ Սեւրը պիտի վերջանայ... Լոզանով եւ Եւրոպայի ու Ամերիկայի բոլոր խոստումներն ու յանձնառութիւնները հաւկիթի կճեպի պիտի իսկ չպիտի ունենան: Հոգեբանօրէն անհնար էր այդ, բայց... Բայց չէ՞ որ ատոմիկ ճնշուած էր եւ Թուրքերի հոգեբանութիւնը, բայց եւ այնպէս դուրս էկաւ մի Մուսթաֆա Քեմալ, մի Ռէուֆ բէյ, եւ պատմութեան ընթացքը բոլորովին փոխուեց: Չէ՞ր կարող արդեօք մեզ էլս փրկել մի ՀԱՅ Մուսթաֆա Քեմալ, մի խիզախ ըմբոստացում անընդդէմ Եւրոպայի դէմ, մի անջատ համաձայնութիւն բոլշեւիկների հետ...

Դժուար է պնդել, բայց թւում է, թէ չէր փրկի: Մեր վիճակը ուրիշ էր: Նախ՝ Մոսկուայի եւ Երեւանի միջեւ երէկ համաձայնութիւն ու գործակցութիւն լինէր Ապրիլեանի խորհրդայնացումից առաջ, վաղուց Հայաստանը խեղդամահ կը լինէր վրացի եւ ապրբէջանցի ազգայնականների ձեռքով, եւ այս գործում նրանց սիրով կ'օգնէին եւ Թուրք ազգայնականները: Հայաստանը չունէր ուրիշ ճանապարհ, քան իր հարեւանների բռնած ճանապարհը, որքան եւ քարքարոտ լինէր այն: Երկրորդ՝ երբ Ապրիլեանը գործաւ խորհրդային, համագործակցութիւնը բոլշեւիկների եւ Թուրք ազգայնականների միջեւ վաղուօրէն արդէն հաստատուած էր, իսկ Թուրք ազգայնականների «ԱԶԳԱՅԻՆ ՈՒԽՏ»ով հայերին ոչ միայն մի թիզ հող չէին պիտի Թուրքիայից, այլ եւ Հայաստանից էլ խլում էին Կարսն ու Արդահանը: Մոսկուայի համար Թուրքերի բարեկամութիւնն այնքան կարեւոր էր, որ, ինչպէս հետագայ պատմութիւնը ցոյց տուեց, նա ո՛չ միայն Թուրքերից հողային նոր պահանջ չէր անի, այլ հեշտութեամբ կը պիտի իր ունեցածից էլ մասեր:

Ո՛չ, ճակատագիրը անօրինել էր այնպէս, որ մենք պիտի ապրէինք, կամ խեղդուէինք՝ քայլելով մեր հարեւանների հետ միեւնոյն ուղիով եւ մնալով «համաշխարհային իմպերիալիզմի լաճէի» դե-


ARAM webaram.com

բում: Հայաստանը եթէ այսօր գոյութիւն ունի, իրրեւ ընդհանուր հայութեան հայրենիք եւ հայ ժողովուրդը իրրեւ հայ կ'ապրի իր հայրենիքում եւ կը զարգանայ, պատճառը մեր այդ դերն է: Ճիշդ է, մենք չատ տառապեցինք եւ չատ զոհեր տուինք, մենք չվայելեցինք մեր նորագտած հայրենիքի բարիքները, բայց հպարտ ու երջանիկ ենք, որ մեզանից յետոյ Հայաստանն ու հայ ժողովուրդը կ'ապրեն ու պիտի ապրեն:

Վարչաձեւերը յաւիտենական ինքնանպատակներ չեն: Ծովի ալիքների նման կու գան ու կ'երթան. ամէն ազգ, իր կեանքում, քանի՛ վարչաձեւ է տեսել: Իսկականը՝ ազգն ու հայրենիքն է:

Ձախորդ օրերը ամպաճ նման կը գան ու կ'երթան,
Վհատելու չէ, վերջ կ'ունենան, կը գան ու կ'երթան:



ARAM webaram.com

## ՀԱՅ-ԹՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

*Ես ներողութիւն պիտի խնդրեմ ընթերցողներից, որ այս հատորը լեցրի յոգնեցնող եւ տաղտկալի վաւերագրերով, որոնց ընթերցումը քուն կը բերէ մարդու վրայ: Աւելի լաւ չէ՞ր լինի, եթէ մի վէպ գրէի Մաքոյի եւ Գողոյի սիրային արկածների, կամ՝ ուսումնասիրութիւն ցազի կամ սուիճկի թողած հոգեբնախօսական ազդեցութիւնների մասին: Այդ դէպքում՝ թէ գիրքս կը սպառէր եւ թէ ընթերցող կ'ունենայի:*

*Մինչդեռ իմ գրքի նիւթը ձանձրալի վաւերագրեր են, եւ հիմա, պիտի գրեմ հայ—թրքական պատերազմի մասին:*

*Հայ—թրքական պատերազմի մասին բաւական գրուած է. ես էլ եմ գրել «Կեանքի ուղիներով»ի Գ. հատորում: Բայց, դժբախտաբար, չեն գրել նրանք, որոնք ամէնից շատ իրաւունք ունէին եւ պարտական էին գրել: Վարչապետ Համօ Օհանջանեանը կամ պինուտրական նախարար Ռուբէն Տէր-Մինասեանը, կարելի է ասել, ոչ մի յուշ չեն թողել հայ—թրքական պատերազմի մասին, մինչդեռ նրանք էին այդ շրջանի գլխաւոր դերակատարները եւ պատասխանատուները:*

*Առանց նախապատմի եւ մանրամասնութիւնների մէջ մտնելու, ասեմ, որ պատերազմը սկսեցին թուրքերը եւ ո՛չ թէ մենք: Թուրքերը մե՛ղ են համարում պատերազմի պատճառը. իբր թէ, մենք գրաւել էինք իրենց պատկանող Օլթիի քարածուխի շրջանը՝ դէպի էրզրում յառաջանալու նպատակով: Որ էրզրումի վրայ աչք ունեցողներ կային մեր մէջ՝ ճիշդ է, բայց թուրքերը շատ լաւ գիտէին, որ մենք ի վիճակի չէինք իրենց ձեռքը գտնուող հողերը գրաւելու: Օլթիի քարածուխը, իսկապէս կենսական անհրաժեշտութիւն էր մեզ*



ARAM webaram.com

համար. Այրէյջանը պաղատեցրել էր Բալուից նաեւ թողնել Հայաստանին, բանակի ճամբան փակ էր մեր առջեւ, մեր երկաթուղին հողեւարքի մէջ էր. Օլթիի քարածուխը միակ փրկութիւնն էր մեզ համար այդ դժոխային պայմաններում: Օլթին, Թուրքերի «Ազգային Ուխտ»ի սահմաններում չէր. Բրեստ—Լիտովսկի դաշնագրով էր անցել Թուրքերին:

Թուրքերը այդ չատ լաւ գիտէին, բայց պատրաստակ էին փրնտռում պատերազմ սկսելու Հայաստանի դէմ, մանաւանդ երբ միջազգային կացութիւնն էլ նպաստաւոր էր իրենց համար:

Մուսթաֆա Քեմալի համար Հայաստանի վրայ յարձակուելու պայմանները չատ էին յարմար. Ժողովրդականները կանդնեցրել էր իր արշաւանքները Իզմիրի ճակատում, եւ Վենիզէլոսը փորձեր էր անում հաշտացողութեան գալու Քեմալականների հետ: Ֆրանսիան՝ Ֆրանկլին Բույոնի միջոցով խնդրում էր Քեմալականների բարեկամութիւնը՝ անգամ կիլիկիան պարպելու գնով: Ահագին քանակութեամբ ռազմամթերք էր յանձնում Թուրքերին՝ Ֆրանսիական բանակից: Իտալիան բացայայտ կերպով օգնում էր Անատոլուի ըմբոստաններին: Օգնում էր եւ Սով. Ռուսաստանը, որի դլուխը խառնուած էր լեհական ճակատում: Չկար ոչ մի իրական ոյժ, իակ բոլշեւիկների կողմից է՛ւ կամք, որ պաշտպաներ Հայաստանը Թուրքերի ներխուժումից:

Եւ այն ժամանակ, երբ հայկական բանակն ու հայ ժողովուրդը պրպտուած էին բոլշեւիկեան եւ Թաթարական ապստամբութիւնները զսպելով ու ներքին խնդիրները լուծելով՝ Մուսթաֆա Քեմալը հաւաքում է Հայաստանի սահմանների վրայ բաւական ուժեղ մի զօրաբանակ՝ բաղկացած հետեւեալ մասերից — 3րդ, 9րդ, 11րդ, 12րդ եւ մի խառն դիւիզիաներ, մի բրիդադ հեծելազօր, 2 աշխարհական դունդ, ադրբէջանեան ձիաւորների մի հարիւրեակ, լեզգինների մի հարիւրեակ, քրդական ու Թաթարական հրոսախումբեր: Թրքական կանոնաւոր զօրքերի թիւը հաշւում է 25—30 հազար զինուոր, որից 3 հազարը՝ ձիաւոր: Բանակը ունէր համապատասխան քանակով հրետանի, աւտոմոբիլային մասեր, լաւ պարէնաւորուած էր եւ օժտուած տեխնիկական մասերով, եւ որ գլխաւորն է, գոնում էր համառ ու հայրենասէր սպանների գեկավարութեան տակ:

Սեպտ. 23-ին, Քեազիմ Կարաբեքիրի բանակը, առանց պատերազմի յայտարարութեան, յարձակուեց Հայաստանի սահմանների վրայ: Հայաստանը պատրաստ չէր պատերազմի: Նա հազիւ 20 հազար կանոնաւոր զօրք ունէր՝ երկրի բոլոր սահմանները պաշտպանե-



ARAM webaram.com

լու եւ ներքին կարգը ապահովելու համար: Այդ զօրքի մէկ մասը հին, տասը տարուց աւելի զէնքի տակ էր, յոգնած ու տկարացած. մեւս մասը նորակոչներ էին, պատերազմի անվարժ. մի մասն էլ անկանոն զօրամասեր՝ խմբապետների հրամանատարութեան տակ:

Բանակի հոգեբանութեան վրայ մեծապէս ազդել էր նրա մասնակցութիւնը ներքին քաղաքացիական կռիւներին եւ երկրի մաքրագործման՝ հակապետական տարրերից, ինչպէս եւ՝ բոլշեւիկեան քարոզչութիւնը:

Իր կոչման բարձրութեան վրայ չէր եւ՝ բանակի հրամանատարութեան կազմը, ինչպէս նաեւ զեկավարութիւնը: Գործօն զօրամասերի հրամանատարական կազմի մէջ մնացել էին հայրենասիրութիւնից դուրկ, չահամոլ զօրավարներ, եւ զինուորական նախապատրաստութիւնը հանդուրժում էր նրանց:

Մէկ խօսքով՝ Հայաստանը պատրաստ չէր պատերազմի:

Ուժերը անհաւասար էին հայերի եւ թուրքերի միջեւ: Աչքի ընկնում էր նաեւ, Ամերիկան կտրուած էր հին աշխարհից: Մեզ համակիր էին մնացել միայն ամերիկեան պատուիրակները եւ եւրոպական մխիթարնները, այսպէս կոչուած՝ հայասէրները: Հայաստանը մեկուսացած՝ մնացել էր անուժ եւ անօգնական:

Ի՞նչ էր լինելու հետեւանքը: Չեմ ուզում մանել մանրամասնութիւնների մէջ, առաջ բերել վաւերագրեր, մեծ ու փոքր մարդոց կողմից քաշուած հեռագիրներն ու փոխադարձ ամբաստանութիւնները: Չեմ ուզում նաեւ ուրիշներին մեղադրել եւ մեղ արդարացնել: Փաստը այն է, որ մենք պարտուեցինք այս պատերազմում: Թուրքերը առաջին զրոհով անցան հին, ռուս—թրքական սահմանը, գրաւեցին Սարըղամիշը: Հայաստանի կառավարութիւնը, յանկարծակիի եկած, դիմեց ինքնապաշտպանութեան. Սուրմալուի ճակատի պաշտպանութիւնը յանձնեց Դրոյին, Կարսի շրջանի զօրքերի ընդհանուր հրամանատար նշանակեց զօր. Սիլիկեանին, երկիրը յայտարարեց պատերազմական վիճակի մէջ, վարչապետի եւ զինուորական նախարարի առաջարկով՝ կառավարութեան բոլոր անդամները ուղարկուեցին շրջաններըը, մայրաքաղաք մնացին միայն վարչապետը եւ զինուորական նախարարը՝ ապարապետ Նազարբէկեանի հետ միասին: Ես եւ առողջապահական նախարարի օգնական Արտ. Բաբալեանը գնացինք Կարսի շրջանը:

Հոկտեմբերի 8–ին, վարչապետ Օհանջանեանը ուղղեց հետեւեալ հեռագրական կոչը՝ «աշխարհի խղճին».

«Ամէնքին, ամէնքին, ամէնքին



ARAM webaram.com

Թուրք կառավարութեան դաժան լծի ու բռնապետութեան դէմ դարաւոր հերոսական պայքարի եւ իր հայրենիքի իրաւունքի, ազատութեան եւ անկախութեան սիրոյն միլիոնաւոր զոհերի գնով է, որ հայ ժողովուրդը ձեռք է բերել իր անկախութիւնը եւ Թօթափելով օտար լծի ամէն չղթաները՝ կազմակերպել է իր ազատ ու անկախ պետութիւնը՝ Հայաստանի Հանրապետութիւնը: Օգոստոս 10–ին, Սեւրում, անկախ եւ միացեալ Հայաստանի Հանրապետութիւնը ճանաչուեց ընդհանուրի կողմից — թէ՛ աշխարհի մեծ պետութիւնների եւ թէ՛ օսմանեան կառավարութեան կողմից, որը նրանց հետ կնքեց հաշտութեան պայմանագիրը, որով Տաճկաստանը ընդմիշտ հրաժարուեց պատմականօրէն Հայաստանին պատկանող ու նրան վերադարձուած հողերի — Վանի, Բիթլիսի, Էրզրումի եւ Տրապիզոնի վիլայէթների մասին ամէն տեսակ պահանջներից եւ պարտաւորուեց ճանաչել Հայաստանի օրինական իրաւունքները նրանց վրայ: Այժմ, երբ հայ ժողովուրդը՝ սպասելով Գերագոյն իրաւարարի՝ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահի կողմից Հայաստանի սահմանների ճշգրիտ որոշման, ձեռնարկել է մշակութային խաղաղ աշխատանքի, որպէս զի վերականգնէ Թուրքերի ձեռքով աւերուած հայրենիքը, եւ հարիւր հազարաւոր հայ գիւղացիութիւնը սկսել է պատրաստուել դաշտային ու գիւղական աշխատանքներին, յանկարծ, վերջ տրուեց հայ ժողովրդի մշակութային աշխատանքին, եւ նա նորից ստիպուած է զէնքի եւ լարել իր բոլոր ուժերը՝ վանելու համար արտաքին մահացու վտանգը, որ սպառնում է նոյնիսկ իր ազատ հայրենիքի գոյութեան: Ներկայ տարուայ Մայիս. 23–ից սկսած, Թուրք կառավարութիւնը, որը չնայած իր ստորագրած պայմանագրին՝ չի կամենում հաշտուել ազատ Հայաստանի գոյութեան հնարաւորութեան գաղափարի հետ, իր անպաշտօն գործակալ Մուսթաֆա Քեմալի միջոցով առաջ չարժեց իր զօրքը՝ դէպի Հայաստանի Հանրապետութեան կենտրոնը — Ղարսի, Օլթիի, Արտահանի, Կաղզուանի եւ Սարըղամիշի շրջանները, որպէս զի վերջնականապէս ոչընչացնէ նրան: Թուրք հորդաների ճնշման տակ, յիշեալ շրջանների զինուորական ուժերը կրկին ստիպուեց հեռանալ իր դարաւոր բնակավայրից, եւ անցած պատերազմների ահռելիներից հազիւ մէջքը ուղղած երկիրը՝ դարձեալ վեր է ածւում արիւնալի կռիւների թատերաբեմի: Հայ ժողովուրդն իր անկախութեան ուղղուած այդ ազատագրիչ հանդէպ մի մարդու պէս ոտքի կանգնեց՝ պաշտպանելու համար իր հայրենիքը եւ այնքա՛ն թանկ գնով ձեռք բերուած ազատութիւնը: Հայաստանի կառավարութիւնը այս ճգնաժամային րոպէին,



ARAM webaram.com

բովանդակ հայ ժողովրդի անունով դիմում է ամբողջ աշխարհի քաղաքակիրթ ժողովուրդներին եւ նրանց կառավարութիւններին՝ վրճռական բողոք յայտնելով Թուրք ոճրագործականների դէմ եւ ջերմ կոչ ուղղելով Հայաստանին օգնելու՝ իր հայրենիքի, պատուի, ազատութեան եւ անկախութեան համար հայ ժողովրդի մղած սրբազան կռուում: Իրաքանչիւր ժողովրդի անկապտելի իրաւունքների համար մղուող այս վճռական կռուի մէջ՝ հայ ժողովուրդը վստահ է, որ չի մնայ առանց բովանդակ քաղաքակիրթ աշխարհի օժանդակութեան»:

Վարչապետ եւ արտաքին գործոց նախարար
Հ. Օհանջանեան

Նոյն օրերին, հայ ժողովրդի կեանքի ամենադարհուրելի վայրկեանին, հայ սոց. դեմոկրատ Դաւիթ Անանունը, իր դայրոյթն էր թափում եւրոպական իմպերիալիստների եւ ռուս բոլշեւիկների գլխին: Նա գրում էր «Հայաստանի կօօպերացիա» թերթում:

«Ո՛չ իմպերիալիստները, ո՛չ սոցիալիստները: Ձգաստ: Ո՛չ ոք չի տայ մեզ փրկութիւն, այլ այն պիտի նուաճենք մեր տոկունութեամբ եւ մեր կորովով: Ձգա՛ստ: Խտացրո՛ւ չարքերդ, հա՛յ ժողովուրդ: Թո՛ղ քո մէջ դլուխ բարձրացնէ ապնուութեան եւ անճնութեան Մասիսը: Հայաստանը քոնն է, իսկ ինքդ ապահով՝ Արեւելքի դիշատիչներից»:

Նոյն յօդուածում, որ ուղղուած էր յայտնի հայ բոլշեւիկ Ա. Կարինեանի դէմ, որը ժխտում էր Հայաստանի անկախութեան գոյութիւնը, Դ. Անանունը գրում է. «Հայաստանի անկախութիւնը նուաճուել ու պահւում է հայ տրեխաւոր ժողովուրդի եւ անճնուէր մտաւորականութեան ոգորումով: Բայց-ճակատ իմպերիալիստները միայն ճանաչել են առեղծուած փաստը: Դաւադիր իմպերիալիստները, յանձինս ռուս կոմունիստների, ատամ են կրճատացնում այդ անկախութեան հանդէպ»:

Եւ վերջը.

«Մեր ժողովուրդը իր բնազդով իմաստուն է: Նա դիտէ, որ երբ պղտորւում են յարաբերութիւնները քաղաքակիրթ ազդերի միջեւ, Թուրքը պիտի ելնէ ասպատակութեան: Համաշխարհային յեղափոխութիւնը հէնց Թուրքի ցանկացածն է: Նա հաւատացած է, որ այդ փոթորիկը կազմալուծում է եւրոպական ազդերի դիմադրական կորովը, եւ ինքը, կոխնած իր առհմական բնազդին՝ կը միացնէ Թուրանն ու Շամը եւ նորից կը բախէ Վիէննայի պարիսպները: Անշուշտ, Թուրքի քիմն ու պռունկը կը ջարդուեն հէնց Թրակիայում, բայց նա


ARAM webaram.com

կ'իրագործէ իր հին ծրագիրներէն մէկը — կ'ոչնչացնէ հայկական տեսը»։

Հայերը լարեցին իրենց բոլոր ուժերը՝ կեցնելու համար թրքական յառաջխաղացումը, բայց միայն Սուրմալուի ճակատի վրայ յաջողեցան։ Ղարսի ճակատի մեր զօրքերը անզօր եղան։ Սարըղամիշէն յետոյ, Հոկտ. 30–ին, թուրքերը գրաւեցին Ղարսը՝ հայ բանակի համար նուաստացուցիչ պայմաններում։ Համաձայն Քեմալական պաշտօնական դեկոյցի, թուրքերի ձեռքը գերի էին ընկել «1254 սինուորականներ, որոնց մէջ էին Ղարսի բերդապետ զօր. Փիրումեանը, ուրիշ երկու զօրավարներ, նախկին սինուորական նախարարը, 12 գնդապետ, 16 հարիւրապետ եւ 71 ենթասպայ ու տեղակալ։ Երկու հրամանատարներ աւելի լաւ էին համարել ինքնասպանութիւն գործել, քան թէ անձնատուր լինել»։

Դրանից առաջ, իր գնդի սինուորների աչքի առջեւ, ատրճանակով ինքնասպանութիւն էր գործել գնդապետ Մադմանեանը։ Հայաստանի ժողովուրդը երկար ժամանակ չէր մոռանում նրա անունը եւ արցունքը աչքերին՝ երգում էր «Մադմանեանի երգը»։

Աբտ. Բաբալեանը եւ Գարեգին Եպ. Յովսէփեանը (ապագայ Կաթողիկոսը Կիլիկիոյ), որոնք նոյնպէս գերի էին ընկել թուրքերի ձեռքը, հետագային, իրենց յուշերի մէջ, ամենամռայլ գոյներով էին ներկայացնում կարսի անկումը եւ թուրքերի գործած գազանութիւնները։

Կարսի անկումից յետոյ, Հայաստանի կառավարութիւնը պինդ հաստատ եւ հաշտութիւն առաջարկեց թուրքերին։ Այդ առթիւ տեղի ունեցող բանակցութիւնների մէջոցին, թուրքերը գրաւեցին եւ Ալեքսանդրապոլը։ Հայերը, առանց դիմադրութեան զօտարկել էին եւ կազդուռնի չէրջանը։ Շուրջ 200 հազար հայեր, խուճապահար եւ համաբեա մերկ, անցել էին Ախուրեանի հիւսիսը։ Կառավարութիւնը գերագոյն ճիգ էր թափում՝ տեղաւորելու եւ խնամելու գաղթականներին։

Նոյեմբեր 25–ին, անբնականոն պայմաններում կնքուեց պինդադար թուրքերի եւ հայերի միջեւ։ Թուրքերը, պինդադարի համար, անսանելի պայմաններ առաջարկեցին, եւ հայերը ստիպուած եղան ընդունել։ Եւ Ալեքսանդրապոլում նշանակուեց հաշտութեան խորհրդաժողով՝ հայ–թրքական պատերազմին վերջ տալու նպատակով։

Դրանից առաջ, Նոյեմբերի 7–ին, Քեմալական Թուրքիոյ արտաքին գործերի կոմիսար Ահմէդ Մուխթարը առաջարկել էր հայե-



ARAM webaram.com

րին՝ հաշտութեան հետեւեալ պայմանները.

«1.— Հայ—Թրքական սահմանների հարցը վիճակագրական եւ հանրաքուէի պարզ հարց է լինելու: Համաձայն նախապահ Ուիլսընի եւ բոլշեւիկների հռչակած ինքնորոշման սկզբունքների՝ բոլոր վիճելի շրջանների ազգաբնակութիւնները պիտի հրաւիրուին որոշելու իրենց քաղաքական ապագան: Ներանք կարող են, առանց որեւէ մէկից կախում ունենալու, վճռել իրենց անկախ պետութեան կազմը եւ կամ յայտնել, թէ երկու երկիրներից որին են միանում: Հայ ժողովրդի կառավարեալ ազատութիւնը ապահովելու համար մենք ընդունում ենք, որ մինչ այդ վիճելի շրջանների պահպանութիւնը լինեն մեր երկրների ժանդարմական մասերով: Այդ հանրաքուէն լինելու է, ի հարկէ, որքան կարելի է շուտ: Անդարայի կառավարութիւնը անկեղծ եւ խորը համոզում ունի, որ այս ձեւի լուծումը բուն արդարութիւնն է եւ համապատասխանում է բոլանդակ մարդկութեան, որով նաեւ վիճելի հողամասերում ապրող հայ եւ թուրք ժողովրդների չահերին: Սակայն, դժբախտաբար, մենք կարծում ենք, որ Արեւմուտքի իմպերիալիստներին, մանաւանդ Անգլիային հաճելի լինելու համար Երեւանի կառավարութիւնը որոմամոլիր է այն ձեւի լուծման, որ մեծ վիրաւորանք է հասցնում Ատրիկէի եւ Ասիայի ժողովուրդների հանդէպ Արեւմուտքի պաշտպանների կողմից քարոզած եւ գործադրած քաղաքական վարդապետութիւններին:

2.— Թուրքիան յանձն է առնում իր տրամադրութեան տակ գտնուած բոլոր միջոցները տալ իր հարեւաններին, որպէս զի նրանք կարողանան պարպանալ կառավարել անկախութեան եւ ապահովութեան մէջ:

3.— Մենք մեր միջոցներով կ'օգնենք Հայաստանի պարենաւորման եւ տնտեսական բնականոն դրութեան վերականգման, երկրում:

4.— Երկու կողմերը յանձն կ'առնեն իրենց երկաթուղիներով եւ հաղորդակցութեան բոլոր միջոցներով ազատ անցք տալ միւս կողմին պատկանող անձերին ու ապրանքներին եւ արգելք չեն յարուցանելու միւս կողմի եւ ծովի, ինչպէս նաեւ այլ երկրների միջեւ եղած տրանզիտի դէմ:

5.— Թուրքիան յանձն է առնում իրենց օջախներում վերաբերնակեցնել համաչխարհային պատերազմի պատճառով իրենց հողամասերից գաղթած հայերին եւ տալ նրանց ամենաքաղաքակրթուած երկիրներում ապրային փոքրամասնութեանց արուած լայնագոյն իրաւունքները:


ARAM webaram.com

6·— Թուրքիան պահանջում է, որ Հայաստանը իր ապահովութեան համար պէտք եղած երաշխիքները տայ: Մեր պատուիրակները սպասում են ձեր բանագնացներին Ալեքսանդրապոլում: Վերջիններս պէտք է ունենան իրենց հետ բանակցելու եւ հաշտութիւն ստորագրելու լիազօրագրերը:

Արտաքին գործոց ժող. կոմիսար՝
Ահմէդ Մուխթար»

Այստեղ արձանագրենք եւ հետեւեալը:

Հասկանալու համար, թէ Քեմալականների յաջողութիւնները ինչպիսի արձագանգ էին գտնում Ազրբէյջանում եւ ուս կոմունիստների մէջ, պէտք է ի նկատի ունենալ, որ Մայիս ամսից սկսած Ազրբէյջանի գնդապան մասերում տեղի էին ունեցել հակաբոլշեւիկեան ուժեղ ցոյցեր, եւ խորհրդային զօրքերը ամէնից անողոք կերպով պատժել էին ապստամբներին: Գանճակի թրքական մասը քարոզքանդ էր արուել, հաղարաւոր թուրքեր էին կոտորուել, բազմաթիւ գիւղեր աւերուել: Ազրբէյջանի ամբողջ ժողովուրդը լեցուած էր բուռն ատելութեամբ ու թշնամանքով դէպի բոլշեւիկները: Քեմալի յաղթանակներն ու յառաջխաղացումը, բնականաբար, հրճուանքով էին ընդունւում Ազրբէյջանի գնդուածների կողմից:

Ցուզումը Ազրբէյջանում սաստկացաւ, մանաւանդ, կարսի անկումից յետոյ: Թուրք գնդուածները Մուսթաֆա Քեմալի վրայ նայում էին իրրեւ իրենց փրկիչի, որ գալիս է ազատելու իրենց՝ բոլշեւիկեան բռնութիւններից: Բաքւում եւ գաւառում համխալամական տարրերը սկսում են գլուխ բարձրացնել ու պատրաստուել դիմադրելու քեմալականներին: Նոյնիսկ Ազրբէյջանի կոմունիստ կուսակցութեան կենտրոնական կոմիտէում քննութեան առարկայ է լինում այդ խնդիրը: Բոլշեւիկների մէջ սկսում է կասկած ընկնել, որ Թուրքերի յառաջխաղացումը ընդհանուր ապստամբութիւն առաջ կը բերէ կովկասեան մահմեդականների մէջ եւ կը ստիպէ, որ Կարմիր Բանակը պարտէ Բաքուն, որի տիրապետութեանը այնքա՛ն խոշոր նշանակութիւն էր տուում Մոսկուայում:

Այս հանգամանքներով է բացատրւում այն փաստը, որ հայ—թրքական պատերազմի ամբողջ ընթացքին, այնպէս անտարբեր հանդիսատեսի դիրքում գտնուող Սով. Ռուսաստանի կառավարութիւնը, կարսի եւ Ալեքսանդրապոլի անկումից յետոյ, յանկարծ ոտ ու ձեռք է ընկնում եւ սկսում է միջոցներ խորհել քեմալական արշաւանքը կանգնեցնելու համար: Մոսկուային պարզ է դառնում, որ Թուրքերը



ARAM webaram.com

հետամուտ են լինում մասնաւոր նպատակների, որոնք չեն հաշտւում բոլշեւիկեան ծրագիրների հետ: Բոլշեւիկները ըմբռնում են նաեւ, որ կովկաս մնալուց յետոյ, Քեմալը կարող է ահագին ժողովրդականութիւն ստեղծել իրենց համար: Դրան նպաստում է Թուրքերի բռնած դիրքը. քանի Քեմալիմ կարաբեքիրի գործերը առաջանում էին դէպի Հայաստանի խորքերը, այնքան քեմալական մամուլի լեզուն դառնում էր սանձարձակ եւ երեւան հանում Թուրքերի ու բոլշեւիկների ներհակութիւնը՝ իրենց ձգտումների մէջ: Այսպէս, Նոյեմբերի կէսերին, Անատոլուի մամուլը արձանագրում էր, թէ այն օրուանից, որ Կարաբեքիր փաշայի գործերը մտան Ալեքսանդրապոլ, Ռուսաստանի կառավարութիւնը ոչ մի խորհուրդ չի տուել եւ բարեկամութեան ոչ մի խօսք չի ուղղել Քեմալ փաշայի հրամանատարութեան:

Հայաստանի կառավարութիւնը Ալեքսանդրապոլում կայանալիք հաշտութեան խորհրդաժողովի համար ուղարկեց մի պատուիրակութիւն՝ Ա. Խատիսեանի գլխաւորութեամբ: Պատուիրակութեան անդամներ էին նախարար՝ Ա. Գիւլխանդանեանը, պարլամենտի անդամ՝ Վ. Մինախորեանը, եւ կարսի նահանգապետ՝ Ղորղանեանը:

Դրանից առաջ, Հայաստանի կառավարութիւնը խնդրել էր Սով. Ռուսաստանին՝ յանձն առնելու միջնորդել Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ: Զիչէրինի առաջարկով՝ Սով. Ռուսաստանի կառավարութիւնը ուղարկել էր Բուդու Մախմանին, մասնակցելու Ալեքսանդրապոլի խորհրդաժողովին, իբրեւ միջնորդ հայերի եւ Թուրքերի միջեւ:

Ո՞վ էր այդ Բուդու Մախմանին, որին վստահում էր այդպիսի մի կարեւոր պաշտօն: Ճարպիկ եւ ծակամուտ կոմունիստ էր նա, բայց իրապէս ազդեցիկ մի վրացի: Մոսկուայի կառավարութիւնը զործ էր ածում նրան զանազան բանակցութիւնների եւ անհետեւական ձեռնարկների համար: Նա ուղարկուել էր եւ՛ Անգարա, իբրեւ Սով. Ռուսաստանի պատուիրակ: Վերջը, ես նրան հանդիպել էի Փարիզում. նա կատակածելի դեր էր կատարում վրացի մենշեւիկների եւ աջակողմեան ազգայնականների շրջանակներում: Իմ ձեռքս անցաւ նրա մէկ զեկուցումը, որ նա տուել էր Վրաստանի կառավարութեան նախագահ՝ Նոյ Ժորդանիային:

Թուրքերը կտրուկ կերպով մերժեցին Բուդու Մախմանին՝ մասնակցելու Ալեքսանդրապոլի խորհրդաժողովում, իսկ թէ միջնորդի ինչպիսի՞ դեր կատարեց նա, վկայում է Հայաստանի պատուիրակութեան նախագահ՝ Ա. Խատիսեանը, իր «Հայաստանի Հանրապետութեան Ծագումն ու Զարգացումը» հատորում:


ARAM webaram.com

Փաստօրէն Բուդու Մոխմանին Ալեքսանդրապոլում աչխատեց Թուրքերին ի նպաստ։(*)

Ուշագրաւ են բոլշեւիկ Ալիխանեանի հաղորդած տեղեկութիւնները Բ. Մոխմանիի Ալեքսանդրապոլում խաղացած դերի մասին։ Ալիխանեանը գրում է.

«Զիչէրինին եւ Օրջոնիկիձէին Նոյ. 24–ին ուղարկած հեռագրում Մոխմանին ասում է.

«Ժամանակի այսօր 5–ին։ 11–ին գրուցեցի Կարաբեքիրի հետ։ Նա յայտնեց որ Անկարայի կառավարութիւնը մեր միջնորդութիւնը համարում է աւելորդ, նկատի ունենալով, որ հայերը արդէն ընդունել են Թուրքերի բոլոր պայմանները։ Կարաբեքիրը յայտնեց, որ ինքը Անկարայից հրահանգ է ստացել բանակցութիւններ վարել միայն հայերի հետ։ Զրոյցն ընդհատուեց հայկական պատուիրակութեան այցելութեամբ։ Կարաբեքիրը ասաց, որ հայ—թրքական բանակցութիւններին մեր մասնակից չլինելը ամենեւին չի բացառում մեր բանակցութիւնները Թուրքերի հետ, իրրեւ բարեկամների հետ, որոնք ձգտում են մէկ նպատակի։ Նա միաժամանակ նշեց Թիֆլիսի դրաւումով մենշեւիկեան վրաստանի ջախջախման անհրաժեշտութիւնը, որպէս իմպերիալիստական բազայի։ Այն հարցին, թէ ում կողմից պէտք է դրաւուի Թիֆլիսը, նա պատասխանեց. «Սովետական զօրքերի»։

Յաջորդ օրը՝ Նոյեմբեր 25–ին Կարաբեքիրն ինքն է այցելում Մոխմանուն եւ պնդում Կարմիր Բանակի կողմից Թիֆլիսը գրաւելու անհրաժեշտութիւնը, նա խոստանում է, որ ինքն էլ իր ուժերով կը սպառնայ անգլիացիներին եւ կը կտրէն նրանց ճանապարհը, եթէ նրանք փորձեն Բաթումի կողմից յարձակուել։ Դրա համար նա խընդիր է դնում, որ իրենց անյապաղ օգնութիւն ցոյց տրուի զէնքով ու զինամթերքով։

Երկու օր յետոյ Մոխմանին նոր հանդիպումներ է ունենում Թուրքիայի Ազգային Մեծ ժողովի երկու պղենիկ անդամների հետ, կոնկրետ խնդիր դնելով՝ Թուրքիայի եւ Ռ.Ս.Ֆ.Ս.Ռ.ի միջեւ փոխադարձ օգնութեան պայմանագիր կնքելու վերաբերեալ։ Նրանք առերես նոյնիսկ պարտաւորւում են պայքարել անգլիացիների դէմ եւ

---

(*) Տե՛ս Ս. Տ. Ալիխանեան, «ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ», Երեւան, 1964, էջ 171, 172, 173)։



ARAM webaram.com

Արեւելքում անցկացրել պրօսովետական քաղաքականութիւն: Թուրքերը պահանջում են որ սովետական զօրքերը Հայաստան եւ Վրաստան մտցուին իրենց աջակցութեամբ»:

Լէպրանն իր Զիչէրինին ուղղած հեռագրի մէջ (Նոյ. 28, 1920) ի միջի այլոց գրում է.

«Նոյնիսկ ընկ. Մոլիանին, չնայած քեմալականների մօտ կարճատեւ գոնուելուն, դայթակղուել է Հայաստանի սովետականացման նրանց պլանով եւ այսօր առաջարկում է օգտագործել Թուրքերի կողմից կազմուած Սովետական Հայաստանի Ռեւկոմը» (նկատի ունի Ալեքսանդրապոլի Ռեւկոմը — Ս. Ա.).

«Ալեքսանդրապոլի Ռեւկոմը պէտք է անմիջապէս լուծարքի ենթարկուէը, որպէսզի այն թուրքական օկուպացման քաղաքականութեան դործիք չդառնար, Մոլիանին կուլ գնաց նաեւ այս հարցում:

Մենք չունենք հայ—թրքական հարցերում որոշակի դիծ կամ նման որեւէ բան, եւ մենք քարշ ենք տալիս դէպքերի պոչից»:

Նոյն հեռագրի մէջ Լէպրանը գրում է.

«Հայաստանի դէմ ամէն մի պատերազմ, կարաբեքրի զօրքերի յարձակում, կոմունիստական պարտիայի եւ սովետական իշխանութեան կողմից աջակցութեան արժանի եւ ռեւոլուցիոն ակտ դիտելը՝ ընդհանուր ճանաչում է դտել: Նոյնիսկ Ալեքսանդրապոլի հայ կոմունիստները բաց են թողել թուրքիկներ, ողջունելով թուրքական ռեւոլուցիոն զօրքերի յարձակումը, որոնք գնում են իբրեւ թէ հայ ժողովրդին դաշնակցականներից ազատագրելու և բանուորա-դիւղացիական կարգեր հաստատելու»:



ARAM webaram.com

# ԻՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

*Ինչպէս տեսանք, Հայաստանի կառավարութիւնը հաշտութեան պատուիրակութիւն ուղարկեց Ալեքսանդրապոլ: Բիւրօ–կառավարութեան վերջին գործն էր այս: Այնուհետեւ, նա ներկայացրեց իր հրաժարականը:*

*Ծնուած մայիսեան օրերին, բոլշեւիկեան ապստամբութեան մրրկի մէջ, նա աւելի շուտ յեղափոխական կոմիտէ էր, քան սովորական կառավարութիւն: Նա հայ ժողովրդի ուժերը հաւաքեց պետական լծման, ճնշեց ներքին բոլոր հակապետական տարրերը եւ տեղի տուեց միայն արտաքին պետական ոյժի՝ բոլշեւիկ–քեմալականների դրոհի առջեւ: Մայիս–Յունիս ամիսներին օրհութեան պատմաճնակէտին էր հասել նա. Հոկտեմբերին ժողովուրդն արդէն պահանջում էր նոր կառավարութիւն: Այս պահանջն է՛լ աւելի սաստկացաւ, երբ Հոկտեմբերի կէսերին Թուրքերը դրաւեցին նաեւ Ալեքսանդրապոլը:*

*Յաջորդելիք նոր կառավարութեան բնոյթի մասին թէ՛ հասարակութեան մէջ եւ թէ՛ Հ. Յ. Դաշնակցութեան շարքերում երկու տեսակէտ էր իշխում: Ոմանք անհրաժեշտ էին գտնում բոլոր կուսակցութիւնների լայն համախմբումը, մի այնպիսի մարդու նախագահութեամբ, որը ընդունակ լինէր միացնել իր անձի շուրջ բոլոր հոսանքները եւ կարողանար վստահութիւն ներշնչել Թուրքերին: Ուրիշներ օգտակար էին համարում «ձախակողմեան» կառավարութեան կազմութիւնը, որպէսզի հնարաւոր լինի ընդհանուր լեզու գտնել բոլշեւիկների հետ:*

*Պարլամենտի մեծամասնութիւնը կողմնակից էր առաջին կարծիքին: Ուստի եւ կառավարութիւն կազմելու պաշտօնը յանձնուեց*



ARAM webaram.com

Յ. Քաջազնունիին, որը նոր էր վերադարձել Ամերիկայից եւ, մասնակից չլինելով վերջին մէկ ու կէս տարուայ պետական աշխատանքներին, համարւում էր լայն կօալիցիա ստեղծելու տեսակէտից յարմար թեկնածու: Բացի այդ, նա ճանաչուած էր իբրեւ Թուրքերի աչքին վտահելի անձնաւորութիւն եւ յոյս էր յայտնւում, որ նրան կը յաջողուի կնքել քիչ չատ տանելի հաշտութիւն:

Յ. Քաջազնունին ընդունեց կառավարութիւն կազմելու պարտականութիւնը եւ ձեռնարկեց բանակցութիւնների կուսակցութեանց ներկայացուցիչների հետ: Նա ուզում էր ունենալ 5 կամ 7 հոգինոց կառավարութիւն բոլոր կուսակցութիւնների մասնակցութեամբ: Սակայն, բանակցութիւնները ապաւուած արդիւնքը չտուին: Սոց.-յեղափոխականները պայման էին դրել, որ նոր կառավարութիւնը քննի նախորդ կառավարութեան կատարած մի քանի գործերը բոլշեւիկների վերաբերմամբ եւ յանցաւորներին պատժի: Հայ-ժողովրդական կուսակցութիւնը պահանջում էր ունենալ տեղ (2 կամ 3), քան Քաջազնունին հնարաւոր էր համարում տրամադրելու: Միայն Հայ Սոց. Դեմոկրատները ո՛չ մի պայման չէին դնում եւ պատրաստ էին իրենց համաձայնութիւնը մտնելու կառավարութեան մէջ:

Քաջազնունին փորձեց կառավարութիւն կազմել առանց ժողովրդականների, բայց չկարողացաւ (Գ. Զաղիքեան) մասնակցութեամբ: Այդ ժամանակ սոց.-յեղափոխականները պահանջեցին երկու տեղ, որի վրայ սոց.-դեմոկրատները էլ 2 տեղի պահանջ դրին: Նրանք ասում էին, թէ իրենք միշտ հաւատարիմ են եղել անկախութեան գաղափարին, մինչդեռ սոց.-յեղափոխականները մինչեւ վերջին օրերը հակառակ դիրք էին բռնել. նրանց սոց.-յեղափոխականները կառավարութեան մէջ երկու տեղ պիտի ստանան, արդարութիւնը թելադրում է, որ իրենց էլ առնուազն այդքան տեղ տրուի:

Քաջազնունիի ջանքերը անցան ապարդիւն, եւ նա հրաժարուեց իրեն յանձնուած պաշտօնից՝ միաժամանակ յայտարարելով, թէ ինքն էլ եկել է այն համոզման, որ հարկաւոր է «ձախ» տարրերից կազմել կառավարութիւնը:

Ահա այսպիսի հանգամանքներում, ինձ համար բոլորովին անըմբռնելի կերպով, առաջ եկաւ իմ թեկնածութիւնը: Աչերտը եմ համարում առաջ բերել մանրամասնութիւնները եւ իմ ներքին դրդումները: Պարզ է, որ հաճոյքով չէր, որ համաձայնւում էի առանձնել այդ դերը, բայց կուսակցութիւնը որոշում էր, եւ ես պարտաւոր էի ենթարկուել:

Վարանումի ժամանակ ու տեղ չկար: Ընկ. Հ. Օհանջանեանի


ARAM webaram.com

կառավարութիւնը փաստօրէն ձեռնթափ էր եղել գործերից: Երկիրը չփոթի մէջ էր: Զինադադարը կնքուած ու հաշտութեան բանակցութիւնները սկսուելու վրայ էին թէեւ, բայց թուրքերը ամբարտաւան դիրք էին բռնել, եւ ամէն րոպէ վախ կար խզումի ու նոր բարդութիւնների: Միւս կողմից, բոլշեւիկների ներկայացուցիչ Լէգրանի հետ սկսուած բանակցութիւններն էլ մնում էին անպատուղ, եւ բոլշեւիկեան ներկայացուցչութիւնից ամէն կողմ լուրեր էին տարածւում, թէ Սով. Ռուսաստանը ուզում է օգնել հայերին, բայց Հայաստանի կառավարութիւնը դժուարութիւններ է յարուցանում: Ընկ. Օհանջանեանի դիմումը Մոսկուա միջնորդութեան խնդրանքով, այն հեռեւանքն ունեցաւ, որ Զիչէրինը, ինչպէս տեսանք, Ալեքսանդրապոլ ուղարկեց վրացի կոմունիստ Բուդու Մախվանիին:

Այսպիսի պայմաններում, հոդեկան չափից աւելի ծանր տպաւորութեամբ, ես ստիպուած եղայ ընդունել ինձ առաջարկուած «պատիւը»: Հայաստանում այդ պահուն ո՛չ մի մարդ չկար, որ նախանձէր ինձ...

Նախընթաց դէպքերը եւ թուրքերի վերաբերումը կասկածի տեղ չէին թողնում, որ Հայաստանը անվանելի ուժով պիտի մղուի դէպի բոլշեւիկեան քաղաքականութեան աղեղութեան շրջանը: Այդ պատճառով ես փորձեցի կազմել այնպիսի կառավարութիւն, որը իր դաղափարներով եւ նախարարների անձնական յատկութիւններով ամէնից աւելի ընդունելի լինէր բոլշեւիկներին: Ինձ թւում էր — եւ ո՛չ միայն ինձ — որ ընկերային հարցերում բոլշեւիկների հետ մենք կը կարողանանք ընդհանուր լեզու գտնել: Հայաստանը դիւղացիական եւ մանր-արհեստաւորական երկիր էր. մի երկու խոշոր արդիւնաբերական ձեռնարկները, ինչպէս, օրինակ, Շուստովի կօնեակի գործարանը, եւ մասնատիրական հողերը արդէն իսկ պետականացուած էին: Էլ ինչ պիտի անէին բոլշեւիկները:

Թւում էր, որ արտաքին քաղաքականութեան հարցերում էլ մենք պիտի կարողանայինք իրար հասկանալ: Ռուսաստանին, Հայաստանը հարկաւոր էր իբրեւ մի կամուրջ Անգլիայի հետ յարաբերութիւն պահելու: Այդ կամուրջի ազատութիւնը մենք կ'ապահովէինք: Ուրեմն էլ ի՞նչ անհրաժեշտութիւն կար անպատճառ խորհրդային կարգեր մտցնելու եւ հայ ժողովրդին զրկելու այն նիւթական ու քաղաքական ակնկալութիւններից, որ նա ունէր Արեւմուտքից: Այդպէս էին ասում եւ մեր ունեցած մասնաւոր տեղեկութիւնները. բոլշեւիկները չէն ձգտում Հայաստանը խորհրդայնացնելու: Մոսկուայի համար աւելի ընդունելի էր ունենալ դաշնակից ոչ-



ARAM webaram.com

բոլշեւիկեան Հայաստանը: Այսպէս, դեռ Յունուար ամսին նման հաւատախացումներ լսել էինք Կաբիւրոյի քարտուղար Հ. Նազարէթեանից: Այդ հաւատախացումները, կարծես, հիմք ունէին իրենց տակ: Ես դոնէ հաւատում էի, որ այդ ձեւով կարելի կը լինէր ապահովել Հայաստանի պետական գոյութիւնը եւ ընդարձակման հնարաւորութիւնները:

Նոր կառավարութիւնը կազմուեց խորհրդարանական սկզբունքով: Ես հրաւիրեցի սոց.-յեղափոխականներին եւ Թիֆլիսում «Աշխատաւոր»ի չուրջը խմբուած ընկերներին:

Առաջինները մտան կառավարութեան մէջ առանց պայմանի. վերջիններս խուսափեցին՝ բերելով մի շարք պատճառաբանութիւններ, որոնք բնաւ համոզեցուցիչ չէին:

Կառավարութիւնը կազմուեց հետեւեալ ձեւով.

Նախարարապետ եւ արտաքին գործերի նախարար.— Ս. Վրացեան.

Ջինուորական նախարար.— Դրաստամատ Կանայեան (Դրօ).

Օգնական՝ Զօրավար Յ. Հախվէրդեան.

Գիւղատնտեսութեան եւ Աշխատանքի նախարար.— Ա. Յովհաննիսեան.

Արդարադատութեան նախարար.— Ա. Խոնդկարեան.

Ֆինանսների նախարար.— Հ. Տէրտէրեան. Օգնական՝ Գր. Զաղիքեան.

Հանրային կրթութեան եւ Արուեստի նախարար.— Վ. Մինախորեան.

Ինամատարութեան նախարար.— Բժ. Ռ. Իւզբաշեան:

Միւս նախարարութիւնները մի առ ժամանակ թափուր էին:

Նոյեմբեր 23-ին, Խորհրդարանի արտակարգ նիստում հաստատուեց կառավարութեան կազմը, իսկ յաջորդ օրը՝ Նոյ. 24-ին կարդացուեց կառավարական յայտագիրը, որ երկու խօսքով հետեւեալն էր.—

«Տարապայման ծանր գրութիւն է ստեղծուել Հայաստանի համար: Նոր կառավարութեան գլխաւոր ճիգը պէտք է լինի գուրս բերել երկիրը քաղաքական արհաւիրքների ջրապտոյտից եւ տալ ժողովրդին խաղաղութիւն: Իր գործունէութեան ընթացքում նա պիտի ղեկավարուի ոչ թէ օտարերկրեայ ազդեցութիւններով, այլ Հայաստանի դեմոկրատիայի իրական ուժերով: Անկեղծ հաշտութիւն Տաճկաստանի եւ համերաշխութիւն հարեւան ժողովուրդների հետ — այս է կառավարութեան նշանաբանը:



ARAM webaram.com

Դիտակցելով, սակայն, որ ժամանակակից պայմաններում այժմ սակաւին իրաւունքից աւելի բարձր է, կառավարութիւնը պիտի աշխատէ կազմակերպել զօրաւոր ժողովրդական բանակ՝ ուժեղացնելով նրա մէջ պետականութեան եւ անձնազոհութեան զգացմունքը եւ հասարակաւորների զօրացրումի միջոցով ազատելով նրան յոգնած ու ապիկար տարրերից:

Ներքին կեանքում կառավարութիւնը հետեւելու է «ամբողջ իշխանութիւնը ժողովրդին» սկզբունքին, պայքարելու է պետութեան հիմքերը փորող տարրերի դէմ: Կառավարութեան անխախտ ձգտումն է երկրում հաստատել ազգային հաւասարութիւն. Հայաստանը պատկանելու է իր մէջ ապրող բոլոր ժողովուրդներին:



ԱՐՇԱԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Մաքրագործել և բարեկարգել վարչութիւնն ու դատարանը: Կանոնաւորել հաղորդակցութեան միջոցները: Պայքար ֆինանսական սուր տագնապի դէմ: Կրճատել պետական ծախսերը, քաջալերել արդիւնաբերութիւնն ու առեղծագործական ուժերը: Զարգացնել առեւտրական ինքնավարութիւնները: Վերացնել ամէն տեսակ արտակարգ միջոցները: Պատասխանատուութեան սկզբունք բոլորի համար՝ բարձրից մինչեւ ամենայետին պաշտօնեան: Օրէնքի դիտակցութեան ուժեղացում:

Թեթեւացնել պատերազմի արհաւրալի հետեւանքները: Կազմակերպել զաղթականների տեղաւորման եւ նպաստի գործը: Պայքար չարաչահութեան եւ պարենաւորման տագնապի դէմ:

Ընկերային հարցերում անել այն ամէնը, ինչ որ կարող է անել մի սոցիալիստական կառավարութիւն բուրժուական կարգերում:

Յենուած Հայաստանի աշխատաւորութեան կամքի եւ խորհրդարանի վստահութեան վրայ՝ կառավարութիւնը պիտի ձգտի երկրին տալ խաղաղութիւն, պետական չինարարութիւն եւ տնտեսա-



ARAM webaram.com

կան ու մշակութային առեղծվածութեան հնարաւորութիւնները»:

Անցնելով իշխանութեան՝ նոր կառավարութիւնն ընդունեց մի անօրինակ ծանր ժառանգութիւն: Պետական մեքենան քայքայուած էր, բանակի մեծ մասը բարոյալքուած, ժողովուրդը՝ խռովայոյզ ու դժգոհ. երկիրը բոլորովին կարուած արտաքին աշխարհից ու սեղմուած թուրքերի ու բոլշեւիկների միջեւ: Բնականաբար, կառավարութեան անմիջական ու պլխաւոր մտահոգութիւնն էր վերջ տալ պատերազմին, ապահովել ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը, տարրական իրաւակարգ մտցնել եւ ազատել պետութիւնը նոր ցնցումներից:

Այս դիտաւորութեամբ կառավարութեան առաջին գործը եղաւ հաստատել Ալեքսանդրապոլում հաշտութեան բանակցութիւններ վարող պատուիրակութեան լիազօրութիւնները եւ հետապրել Անդրա, որ հայ ժողովուրդը փափաքում է վերջ տալ թշնամական յարաբերութիւններին եւ երկու երկրների միջեւ տեւական հաշտութիւն կնքել: Թուրքերի համար առեղծւում էր հոգեբանական չատ նպաստաւոր վայրկեան ապացուցանելու, որ իրենք իսկապէս ուզում են ճանաչել Հայաստանի պետական գոյութիւնը եւ հաշտուել հայերի հետ՝ զոհացում տալով նրանց ազգային դէմ նուազագոյն բաղձանքներին: Շուտով, սակայն, պարզուեց, որ դրանք ո՛չ մի տրամադրութիւն չունէին այդ ուղղութեամբ գնալու:

Առանձնելով արտաքին գործոց նախարարութիւնը՝ ես այցելութիւն տուի օտար պետութեանց ներկայացուցիչներին: Սոլ. Ռուսաստանի լիազօր ներկայացուցիչ Լէգրանի հետ ունեցած կարճ զրոյցից պարզուեց, որ նա միայն մի մտահոգութիւն ունի – ե՞րբ պիտի Հայաստանի կառավարութիւնը համաձայնի կարմիր զօրամասեր մտցնել Հայաստան:

Ես պարզաբանեցի, որ նոր կառավարութիւնն էլ, նախորդի պէս, ամուր կանգնած է անկախութեան տեսակէտի վրայ, բայց իր քաղաքական ու ընկերային համակրանքներով հակուած է դէպի Սոլ. Ռուսաստանը:

Լէգրանին, ըստ երեւոյթին, այդքանը չէր գոհացնում. նա՝ հեղնական ժպիտը չրթունքներին եւ ձեռքերը չփելով՝ հասկացնում էր, որ դրական օգնութիւն ստանալու համար անհրաժեշտ է դրական գործ կատարել, այսինքն՝ մեր սեփական ձեռքերով Հայաստանը դարձնել Խորհրդային...

Ես զատն զգացումով հեռացայ Ե՛ւ Վրաստանի ներկայացուցիչ զօր. Կարալովի մօտից: Մեր ժողովրդի ամենէն ողբերգական օրե-


ARAM webaram.com

բին վրաց կառավարութիւնը աշխատում էր Հայաստանից վերցնել ինչ որ կարելի էր: Մինչ մեր զօրքերը Մէրվէնէկի առջեւ կուռծք էին տալիս Թուրքերին, վրաց զօրամասերը չտապում էին, առանց մեր համաձայնութեան, դրաւել Ախալհան գաւառի կարեւոր կէտերը:

Ես պատերազմի ընթացքին կարում էի, եւ իմ ձեռքն էին անցել մի շարք վրացական վաստաթղթեր, – դրաւոր հրամաններ պինուորական իշխանութիւնների, – որոնք ուղղուած էին Հայաստանի դէմ:

Միւս կողմից, ռազմագիտական նկատումների պատրուակով, վրաց զօրքերը, հակառակ հայկական իշխանութիւնների բողոքի, բռնի կերպով դրաւել էին Լոռին՝ գրեթէ մինչեւ Ղարաքլիսա: Միեւնոյն ժամանակ մենք առացել էինք տեղեկութիւն, որ ինչ որ գաղտնի համաձայնութիւն է կնքուել Թուրքերի եւ վրացիների միջեւ եւ վրացի պինուորական մի ներկայացուցիչ գտնւում է Կարսում՝ Թուրք սպայակոյտի մօտ:

Այդ ամէնը նիւթ ծառայեց լուրջ խօսակցութիւն ունենալու զօր. Կարալովի հետ եւ նրա ուշադրութիւնը հրաւիրելու այն բանի վրայ, որ վրաց կառավարութեան այդ քաղաքականութիւնը երկու երկիրներն էլ կը տանէ դէպի անխուսափելի խորտակում: Ընդհակառակը, երկու երկրների շահը պահանջում է մերձեցում եւ փոխադարձ օգնութիւն:

Կարալովը պնդում էր, թէ իրեն ոչինչ յայտնի չէ եւ տենդային հետաքրքրութեամբ՝ արդեօք Թուրքերը Ղարաքլիսայից առաջ չե՞ն չարժուել: Յաջորդ օրը ես Կարալովին ուղարկեցի դրաւոր բողոքնօտա եւ հեռագրով էլ յանձնարարեցի մեր Վրաստանի ներկայացուցիչ Տ. Բէգզադեանին բողոքելու Լոռիի դրաւման դէմ:

Իմ երկրորդ տեսակցութիւնը Էդրանի հետ վերաբերում էր այն հարցերին, որոնց մասին նա արդէն բանակցութիւններ վարել էր նախորդ աւտաքին գործոց նախարարի հետ – Հայաստանի եւ Սովետական Ռուսաստանի փոխյարաբերութիւն, ռուսական օգնութիւն հայ–Թրքական վէճի մէջ, ռուս–հայկական համաձայնութիւն եւայլն:

Էդրանի բոլոր մտքերը պտտում էին մի կէտի չուրջ.– հիմա այլեւս ուշ է այդ նիւթերի մասին խօսելը: Նա առաջարկում էր անմիջապէս յետ կանչել մեր պատուիրակութիւնը Ալեքսանդրապոլից, խզել ամէն յարաբերութիւն Թուրքերի հետ եւ ռուսական զօրք մըտցընել Հայաստան: Նա մեզադրում էր Հ. Օհանջանեանին եւ Ռ. Տէր Մինասեանին, որոնք ժամանակին չէին ընդունել իր պայմանները եւ դրանով, իբր Թէ, պատճառ էին դարձել, որ Թուրքերը դրաւեն



ARAM webaram.com

կարան ու Ալեքսանդրապոլը:

Ես պիտի տուի Լէդրանին, որ իր առաջարկութիւնը հաւասար էր Հայաստանի անկախութեան ջնջման. դրանով պէտք է բացատրել նախորդ կառավարութեան ընթացքը: Նա զայրոյթով ու հեգնութեամբ սկսեց պախարակել միամտութիւնը հայ գործիչների, որոնք կարծում են, թէ Հայաստանը անկախ պետութիւն է: «Ի՞նչ անկախութիւն: Կապիտալիստական կարգերում ո՛չ մի փոքր պետութիւն չի կարող լինել անկախ, իսկ սոցիալիստական կարգերում անկախութեան պէտք չկայ: Ծիծաղելի է, երբ մարդիկ լուրջ կերպով խօսում են ինչ որ անկախութեան մասին: Դա բացատրւում է չօվինիզմով միայն: Կովկասեան, այսպէս կոչուած, հանրապետութիւնների համար մի ճանապարհ կայ միայն. նրանք կամ կախուած պիտի լինեն իմպերիալիստական Անգլիայից կամ Սոցիալիստական Ռուսաստանից: Ուրիշ ելք չունին»:

Ես, ի հարկէ, չէի կարող համաձայնուել Լէդրանի տեսակէտին: Բացի այդ, նրա առաջարկը անընդունելի էր եւ դուս գործնական նկատումներով: Ասենք թէ մենք յետ կանչէինք մեր հաւատութեան պատուիրակութիւնը Ալեքսանդրապոլից եւ խզէինք բանակցութիւնները թուրքերի հետ: Ի՞նչ կը լինէր արդիւնքը: Պարզ է. մինչեւ կարմիր զօրքերը կը հասնէին, թուրքերը կը լինէին Երեւանում ու Դարալագեազում, եթէ ո՛չ աւելի հեռուները: Դրանից յետոյ ի՞նչ արժէք կ'ունենար բոլշեւիկեան օգնութիւնը:

Լէդրանը հաւաստիացնում էր, թէ թուրքերը դուրս չեն գայ ռուս զօրքի դէմ: Հապա եթէ դուրս գային: Հապա եթէ ռուս զօրքի մուտքը Հայաստան առիթ դառնար Քեազիմ Կարաբեքիրի ձեռքին իր բանակն առաջ չարժելո՞ւ: Մինչեւ ռուսները Ազստաֆայից ու Ղազախից չարժուէին, Երեւանի մէջ քարը քարի վրայ չէր մնայ:

Լէդրանի առաջարկած միջոցը դուռ էր բանալու նոր ընդհարումների, հայ ժողովրդի համար ապէտաւոր նոր կռիւների, մինչդեռ մեր փնտռածը խաղաղութիւն էր:

Ակնբեւ էր, որ Լէդրանին պրպղեցնողը հայ ժողովրդի ճակատագիրը չէր բնաւ, այլ, ըստ կարելւոյն չուտ, Հայաստանը խորհրդայնացնելը: Նա համարում էր ժամանակը հասած Հայաստանի բոլշեւիկացման, բայց ուզում էր, որ այդ յեղաշրջումը մեր ձեռքով կատարուի: Եւ չատ էր ջղայնանում, երբ դիմադրութեան էր հանդիպում: Ես նորից պնդեցի ռուսների դիւանագիտական միջամտութեան վրայ: Եթէ բոլշեւիկները լուրջ կերպով կամենում են, որ իրենց խօսքը ազդեցութիւն ունենայ քեմալականների մօտ, պէտք է



ARAM webaram.com

աչքի ընկնող քանակութեամբ զօրք կենտրոնացնեն Հայաստանի սահմաններուն մօտ: Ռուսական զօրքը կարող է Հայաստան մտնել այդ դէպքում միայն, երբ դիւանագիտական միջամտութիւնն անցնի ապարդիւն, եւ Թուրքերը կամենան չարաշնակել պատերազմը հայերի դէմ:

Միեւնոյն ժամանակ ես երկարօրէն բացատրեցի Հայաստանը խորհրդային ռեժիմի ենթարկելու բոլոր անպատեհութիւնները: Նախ՝ բոլշեւիկեան Հայաստանը կարող է կորուել արտաքին աշխարհից եւ զրկուել ամերիկեան օգնութիւնից եւ ալիւրից, առանց որի հարիւր հազարաւոր հայեր կը լինեն սովամահ: Յետոյ, Հայաստանի անկախութեան ջնջումով մահացու հարուած կը հասցուի Թրքահայ դատին: Վերջապէս, Հայաստանի ներքին վիճակն ու հայ ժողովրդի ընկերային կազմը այնպէս է, որ կոմունիստական փորձերը կարող են աղէտաւոր հետեւանքներ տալ: Այն, ինչ որ կարող է տանել հարիւր միլիոնանոց ռուս ժողովուրդը, բոլորովին անտանելի կը լինի պատերազմներից ու տեղահանութիւններից հիւծուած ու թուլացած հայ ժողովրդի համար: Եթէ Մոլ. Ռուսաստանին անհրաժեշտ է բարեկամ ու միեւնոյն քաղաքականութեան հետեւող Հայաստան – այդպիսին է ներկայ կառավարութիւնը: Եթէ Ռուսաստանին հարկաւոր են Հայաստանի ճանապարհները արեւելեան քաղաքականութեան եւ բոլշեւիկ–քեմալական յարաբերութեան համար – Հայաստանի բոլոր ճանապարհները բաց են բոլշեւիկ զօրքի եւ զորձիչների առջեւ: Ինչի՞ է պէտք ուրեմն անպատճառ Հայաստանում մրցընել բոլշեւիկեան վարչաձեւ:

Լէդրանի առարկութիւնն էր. ռուս զօրքերի կենտրոնացումը Հայաստանի սահմաններուն մօտ կարող է դժգոհութիւն առաջ բերել Թուրքերի մէջ եւ առիթ ընծայել անցանկալի խօսակցութիւններին: Թուրքերին պէտք է դնել կատարուած փաստի առջեւ եւ մինչեւ Ալեքսանդրապոլ դրաւել բոլշեւիկեան զօրքերով: Երբ կարմիր Բանակը լինի Ալեքսանդրապոլի տակ, այն ժամանակ կարելի կը լինի խօսել եւ կարօտ մասին: Հայերը պարտաւոր են ընդ միշտ հրաժարուել արեւմուտքից եւ խաչ քաշել Սեւրի դաշնագրի վրայ: Հայերը իրենց ամբողջ յոյսը պէտք է կապեն համաշխարհային յեղափոխութեան հետ: Անհեթեթութիւն է մտածել ինչ որ ալիւրի մասին, որը ամերիկեան բանկերների եւ պատուէրների կողմից չպրտուում է իբրեւ մուրացկանի ողորմութիւն: Դրա դիմաց կայ Կուբանի անսպառ ալիւրը: Ի՞նչ դժուարութիւն կարող է լինել մեծ Ռուսաստանի համար մի քանի միլիոն փութ ալիւր հասցնել եղբայրական Հայաստանին:



ARAM webaram.com

Մի քանի ամսուայ մէջ Կուբանից Հայաստան կը բերուի երեք միլիոն փութ ալիւր եւ զանազան ապրանք: Բայց դրա համար Հայաստանը պէտք է աւելի սերտ կապերով կապուի Ռուսաստանի հետ:

Ես դարձեալ կրկնեցի, որ կառավարութիւնը բուռն կերպով ձգտում է սերտ կապեր հաստատել Ռուսաստանի հետ, սակայն մի կէտում մենք անկարող ենք պիջել.— Հայաստանը պէտք է մնայ անկախ պետութիւն: Այդ է հայ ժողովրդի միահամուռ եւ վճռական կամքը: Այս պնդումը բնաւ հաճելի չէր Լէդրանին: Նա, երեւի, ապաում էր, որ մենք պէտք է ընդառաջ դնանք իր ցանկութեան եւ չտապենք մեր ձեռքով իսկ վիճը պլոբել Հայաստանի պետութիւնը: Նոյն հաշիւները ունէին եւ հայ կոմունիստները, որոնք չափազանց դժգոհ Լէդրանի դանդաղաշարժութիւնից եւ միացած ապրբէջանցիների հետ՝ ճգնում էին արագացնել Հայաստանի խորհրդայնացումը:

Մի կողմից՝ բանակցելով Լէդրանի հետ, մենք միւս կողմից աշխատում էինք արագացնել հաշտութեան բանակցութիւնները: Ռուսական զօրամասեր Հայաստան մացնելուց մենք խուսափում էինք՝ այդ քայլը նկատելով ո՛չ միայն մահ անկախութեան համար, այլեւ առիթ պատերազմը Թուրքերի հետ վերսկսելու եւ Հայաստանի մնացած մասերն էլ Թուրքերի ոտքի կոխան դարձնելու: Ամանց մէջ յոյս կար նաեւ, որ Թուրքերը՝ նախատեսելով ռուսական միջամտութիւնը՝ կը լինեն չափաւոր եւ հայերին չեն մղի բոլշեւիկների գիրկը: Մեր այն ժամանակուայ հասկացողութեամբ Թուրքերի համար ցանկալի չպիտի լինէր Հայաստանի պրաւումը ռուսներից: Նրանց չահերի տեսակէտից աւելի զերազանցելի պիտի լինէր իրենց կողքին ունենալ անկախ Հայաստանը, քան բոլշեւիկներին, որոնք, վերջ ի վերջոյ, նոյն ռուսներն էին եւ որոնց արտաքին քաղաքականութիւնը, ըստ էութեան, կրկնութիւնն էր՝ Սազոնովների ու Միլիւկովների աշխարհակալական ծրագիրների:

Սակայն, այսպէս մտածողների հաշիւները սխալ դուրս եկան. Թուրքերը վարում էին վայրկեանի քաղաքականութիւն՝ յափշտակուած ժամանակաւոր յաջողութիւններով: Նրանք ձգտում էին անմիջական ու չօչափելի արդիւնքի վերածել իրենց յաղթանակի պտուղները եւ առնել Հայաստանից ինչ որ կարելի էր առնել: Մեր պատուիրակութեան հետ Ալեքսանդրապոլում նրանք փաստօրէն չէին բանակցում, այլ իրենց կամքը թելադրում: Քեազիմ Կարաբեքիրի վերջնագրի առջեւ մեր պատուիրակութիւնը ստիպուել էր հրաժարուել Սեւրի դաշնագրից եւ ընդունել Թուրքերի բոլոր պայմանները՝


ARAM webaram.com

յուսալով որ դաշնակիցները հաստատ կը մնան Սեւրի դաշնագրի վրայ։

Վա՜յ պարտուածին։

Պարտուած էինք եւ անոյժ։ Մեզ պրաղեցնում էր մի մտահոգութիւն — փրկել ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը եւ մեր անկախութիւնը։ Եւ յանուն այդ վերապոյն նպատակի յանձն էինք առնում բարոյական ամենածանր պրկանքները։



ARAM webaram.com

## «ՍԱ՛ Է ՎԵՐՋԻՆ ԵՒ ՎՃՌԱԿԱՆ ԿՌԻՒԸ ՄԵՐ»

*Նոյեմբեր 29–ին Ղափանի ճակատի զօրքերի հրամանատարութիւնը հեռագրով հաղորդեց կառավարութեան, որ ռուսական մի քանի զօրամասեր Ադրբէյջանից ներս են խուժել Հայաստանի սահմանները եւ պրաւել Իջեւանը՝ բանտարկելով մեր սպաներին ու պետական պաշտօնեաներին: Ես չտապեցի բողոք ներկայացնել Էդրանին ու պահանջեցի դուրս հանել ռուս զօրքերը:*

*Էդրանը սկզբում զարմացաւ. ապա վճռական ու եռանդուն կերպով պնդեց, թէ այդպիսի բան չէր կարող պատահել: Անպատճառ ինչ որ մի թիւրիմացութիւն է: Եւ խնդրեց իրաւունք տալ իրեն խօսելու ուղիղ հեռագրաթելով Բադուի հետ: Յաջորդ առաւօտ, Նոյեմբեր 30–ին, Էդրանից առացայ պաշտօնական մի զրուցիւն, որով նա ցաւ էր յայտնում Իջեւանի շրջանում պատահած «թիւրիմացութեան» համար եւ հաղորդում էր, թէ կարգադրուած է պարպել պրաւուած վայրերը եւ ապատ արձակել բանտարկեալներին:*

*Սակայն, կէս ժամ չանցած, բոլշեւիկեան մխիթարիչ հեռախօսով խնդրեցին ինձանից ժամադրութիւն նշանակել Էդրանի համար: Էդրանը խնդրում էր, որ մեր խօսակցութեան ներկայ լինի եւ Դրօն: Ժամը 12–ին Էդրանը իր քարտուղարի հետ եկաւ մօտս եւ Դրոյի ներկայութեամբ, զրեթէ բառացի, յայտնեց հետեւեալը.—*

*— Ռուսաստանի կոմունիստական կուսակցութեան կենտրոնական կոմիտէն որոշել է Հայաստանում մտցնել խորհրդային կարգեր: Հայաստանի Յեղկոմը արդէն մտել է Հայաստանի սահմանները: Ընկերնե՛ր, դանդաղելը յղի է ծանր հետեւանքներով: Ես ուզում եմ իմանալ, թէ ի՞նչ է լինելու ձեր վերջը:*

*Ես յանկարծակիի եկած ու վրդովուած՝ բողոքեցի այդ բռա-*


ARAM webaram.com

նութեան դէմ։ Ցուղուած՝ բողոքեց եւ Դրօն։ Բայց, Լէպրանը այդ քայլը համարում էր անխուսափելի, քանի որ մենք ինքներս յամառում ու ձգձգում էինք։ Ես պահանջեցի յայտարարութիւնը ներկայացնել գրաւոր։ Նա խոստացաւ եւ յաջորդ առաւօտ, Դեկտ. 1-ին, ստացուեց նրա գրութիւնը, որ կրկնութիւնն էր նախորդ օրուայ ասածի։

Այսպէս, ուրեմն, մի կողմից՝ թուրքերն էին ապառնալիքներով ու վերջնագրերով խօսում մեզ հետ, միւս կողմից՝ թուրքերի դաշնակից բոլշեւիկները։ Հայաստանն ընկել էր երկու կրակի միջեւ։

Այստեղ առաջ ենք բերում մի հատուած Հայկական ՍՍՌ. Ա-կադեմիայի հրատարակած Ռ. Գ. Սահակեանի Սովետա—թրքական յարաբերութիւնների պատմութեան հակագիտական լուսաբանումը ժամանակակից բուրք պատմագրութեան մէջ. «1920 թուի Դեկտ. 1-ին Հայաստանում ՌՍՖՍՌ ներկայացուցիչ Բ. Վ. Լէպրանին ուղարկած հեռագրում Զիչէրինը յանձնարարում էր բացատրել Անկարայի կառավարութեանը ՌՍՖՍՌ կառավարութեան տեսակէտը Անդրկովկասին վերաբերող մի շարք հարցերում։

«Մեզ յանկալի է իմանալ — գրում էր Զիչէրինը — ստացե՞լ է արդեօք թրքական կառավարութիւնը պայմանագրի նախագիծը, որը մշակուել է մեր կողմից Բեքիր Սամի Բէյի հետ միասին եւ որը ուղարկուել է Անկարա Իսուֆ Քեմալի միջոցով» (էջ 26–27)։ Ըստ Սահակեանի «Խօսքը 1920 թուի Օգոստոս 24-ին նախնական առորակրուած սովետա—թրքական պայմանագրի մասին էր» (էջ 24)։

Ուրեմն, թուրքերը եւ բոլշեւիկները բանակցել եւ որոշ համաձայնութեան էին եկել Դեկտ. 2-ից շատ առաջ եւ Լէպրանը բանակցութեան մէջ էր ոչ միայն Հայաստանի կառավարութեան՝ այլեւ թուրքերի հետ։ Առհասարակ, բոլշեւիկ—քեմալական յարաբերութիւնները շատ աւելի մտերիմ եւ գործնական էին, քան մենք կարծում էինք։

Բոլշեւիկները չէին բաւականանում վերջնագրերով ու պինուռական գործողութիւններով և իրենց գործակալների միջոցով պատնէշ պրոպագանդ էին մղում։ Նրանք խոստանում էին հայերին ազատել թուրքերից, յետ առանալ Կարսն ու Սուրմալուն, բերել առատ հաց, ոսկի, մանուֆակտուրա, նաւթ եւ այլ տեսակ բարիքներ։ Այս ամէնը շատ էր գրաւիչ յոգնած ու տնաքանդ ժողովրդի համար։ Դեռ թարմ էր եւ յիշատակը հին Ռուսաստանի, որից կովկասը մեծ օգուտներ էր տեսել ժամանակին։



ARAM webaram.com

Միայն այս հոգեբանական վիճակով կարելի է բացատրել այն փաստը, որ կարմիր զօրքերը համարեա առանց դիմադրութեան հանդիպելու մտան Հայաստան: Իջեւանի շրջանում, տեղացիներից կազմուած երկրապահ զօրքերը ո՛չ միայն չէին կռուել ռուսների դէմ, այլեւ հրացանները առած կրուել էին իրենց անները: Գիւղացիութիւնը նոյնպէս համակրանքով էր ընդունել բոլշեւիկներին, որոնք, Իջեւանը գրաւելով, առանց լուրջ դիմադրութիւն տեսնելու, շարժուել էին դէպի Դիլիջան:

Կառավարութեան համար զաղտնիք չէր ժողովրդի այս տրամադրութիւնը: Որքան թուրքերը անդիջող էին դառնում, ա՛յնքան ուժեղանում էր բոլշեւիկասիրութիւնը ազգաբնակութեան ու զօրքի մէջ: Այս չէր նշանակում, թ հարկէ, որ ժողովուրդը բոլորովին պատրաստ չէր դէնքը ձեռին պաշտպանելու իր անկախութիւնը: Եթէ կառավարութիւնը փորձէր դէնքով դիմադրել բոլշեւիկներին, շատ հաւանական էր, որ — հակառակ Դրոյի եւ ուրիշների յոռետեսութեան — հայկական զօրքի եւ ժողովրդի մէկ, դուցէ եւ մեծ մասը կռուէր կարմիր Բանակի դէմ, մինչ որ տեղի ունենար Զամբարակի շրջանում, ուր մեր զօրամասերից մէկը՝ կտրուած իր ռազմապետական խարխափից եւ անտեղեակ դէպքերին՝ տաք ճակատամարտ ունեցաւ յարձակուող ռուս զօրքերի հետ, ահագին վնասներ պատճառեց նրանց եւ յետ քաշուեց միայն՝ նահանջի հրաման ստանալուց յետոյ:

Այս օրինակը, ինչպէս եւ ուրիշ շատ փաստեր ցոյց են տալիս, որ անպայման չափազանցուած է այն կարծիքը, թէ հայ զինուորը չէր կռուի ռուսի դէմ: Կային զօրամասեր, որոնք պահել էին իրենց ներքին կարգապահութիւնը եւ ռազմական ոգին եւ անպայման կը դիմադրէին բոլշեւիկներին, եթէ այդ իմաստով հրաման տրուէր: Զինուորական մասերից զատ երկրի մէջ, առհասարակ, քիչ չէին այնպիսի ուժեր, որոնց կարելի էր հանել բոլշեւիկների դէմ: Սակայն այդ դէպքում քաղաքացիական կռիւը կը դառնար անխուսափելի, մինչդեռ մեր գլխաւոր նպատակը երկրին խաղաղութիւն տալն էր: Ինչ եւ լինէր քաղաքացիական կռուի ելքը, ժողովուրդը մեծապէս պիտի տուժէր:

Այս պատճառով ահա կառավարութիւնը կանգնեց այն տեսակէտի վրայ, որ հայ—բոլշեւիկեան վէճը պէտք չէ դէնքով լուծուի: Կառավարութեան որոշումով բարձր հրամանատարութիւնը կարգադրեց Ղափանի ճակատի զօրքերին կռուի չբռնուել եւ բոլշեւիկների յառաջխաղացման համեմատ քայլ առ քայլ նահանջել: Մենք, անտա-



ARAM webaram.com

բակոյա, պղում էինք այս զործելակերպի հետեւանքները, բայց ուրիշ ելք չէինք տեսնում:

Պէտք է ասել եւ այն, որ հէնց կառավարութեան մէջ բացառիկ մթնոլորտն չկար այս խնդրում. մինչդեռ, օրինակ, փոխարտաքին գործոց նախարար Ս. Յովհաննէսեանը համոզուած չառաջով էր զործօն քայլերի ըոլշեւիկների դէմ, վինուորական նախարար Դրօն նոյնքան համոզուած հակառակորդ էր պետպրութեան: Նա հաւատացած էր, որ հայ զօրքը ռուսի դէմ չի կռուի, եւ չգի՛տէ, թէ կռուի, որովհետեւ, իր կարծիքով, հայ ժողովրդի փրկութիւնը կախուած էր Ռուսաստանից՝ ինչ գնի ու վարչաձեւ ունենար վերջինս:

Այսպէս թէ այնպէս, դէպքերը արագ կերպով զարգանում էին: Նոյեմբեր 30-ին, կէս օրից յետոյ, կառավարութիւնը մի կարճ նիստում քննեց Էջմիածնի զրած հարցը եւ նկատեց անհրաժեշտ, որ Հայաստանի խորհրդայնացումը անխուսափելի է եւ երկրի ու ժողովրդի կենսական շահերը պահանջում են այդ ակտը կատարել առանց ցնցումների եւ արիւնահեղութեան: Բայց վերջնական որոշում տալուց առաջ վճռուեց հարցը քննութեան դնել նաեւ կուսակցութիւններին եւ խորհրդարանական խմբակների ժողովներում:

Նոյեմբեր 30 լոյս Դեկտ. 1-ի գիշերը, արտաքին զործոց նախարարութեան առանձնասենեակում, տեղի ունեցաւ Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոյի, Հայաստանի կենտրոնական կոմիտէի, խորհրդարանական հատուածի ու կառավարութեան անդամների և մի շարք պատասխանատու քննիչների համատուտաք նիստը, լուծելու համար Էջմիածնի առաջադրած խնդիրը:

Նիստի սկզբում ընդհանուր տրամադրութիւնը անհաչա էր: Իրար յետեւից խօսեցին ընկերներ Հ. Օհանջանեանը, Ս. Ադրատեանը, Ա. Յովհաննէսեանը, Ա. Զիլինգարեանը, Վ. Նաւասարդեանը և ուրիշներ, որոնք բոլորն էլ անհանդուրժելի էին համարում Էջմիածնի պահանջը եւ առաջարկում էին անմիջապէս դէնքի դիմել երկիրը բոլշեւիկեան նուաճումից պաշտպանելու համար: Ընկերներից մէկը նոյնիսկ առաջարկում էր ձերբակալել Էջմիածնին ու բոլոր բոլշեւիկներին, երկիրը դնել պատերազմական—յեղափոխական վիճակի մէջ եւ, ինչպէս մայիսեան օրերին, յանուն անկախութեան պաշտպանութեան, համոզիչ երկաթէ ճակատ ստեղծել կարմիր վտանգի դէմ:

Ճառախօսները հերքում էին այն կարծիքը, թէ հայ զինուորը չի կռուի ռուսի դէմ. Հայաստանի անկախութեան համոյքը այնքան զօրաւոր է, որ հայ զինուորը կը կռուի բոլոր թշնամիների դէմ: Քաղաքագիտական կռիւը անխուսափելի է եւ վաղ թէ ուշ տեղի պիտի ու-



ARAM webaram.com

նենայ. աւելի լաւ է հիմա ընդունել: Թրքական վտա՞նգ. Թուրքերը չեն խմբի մեր թիկունքին, որովհետեւ նրանց համար էլ օգտակար է հակաբոլշեւիկ Հայաստանի գոյութիւնը: Ընկերներից ոմանք համոզուած էին, որ մենք յաղթող դուրս կը գանք, իսկ ուրիշները հնարաւոր էին համարում մեր պարտութիւնը, բայց պերազատում էին պիմազրել եւ տեղի տալ միայն բռնի ոյժի ճնշման տակ:

Ժողովականներից ոմանք, ինչպէս Յ. Քաջազնունին, Դրօն, Ռուբէն Տէր-Մինասեանը եւն. հակառակն էին պնդում եւ կռիւը բոլշեւիկների դէմ համարում էին ապէտաւոր, որովհետեւ, չատ հաւանական էր որ կռուի դէպքում կը առեղծուէր երկու ճակատ, իսկ Հայաստանը անկարող էր միաժամանակ կռուել եւ՛ բոլշեւիկների, եւ՛ Թուրքերի դէմ: Երկիրը կարօտ էր հանգստի. եթէ բոլշեւիկները կարող են տալ այդ հանգիստը, թո՛ղ տան. չխանգարենք: Մեր պարտականութիւնն է ժողովուրդը փրկել փոթորիկներից եւ ո՛չ թէ նրան նոր փոթորիկների մէջ նետել:

Բացի այդ, նախորդ պինուորական նախարար Ռուբէն Տէր-Մինասեանը յայտնում էր, որ հայ զօրքը ի վիճակի չէ որեւէ պատերազմ վարելու, իսկ ներկայ պինուորական նախարար Դրօն աւելացնում էր, որ, առհասարակ, հայ զօրքը չի կռուի ռուս զօրքի դէմ: Հետեւաբար, կռուի ամէն կոչ ոչ այլ ինչ էր եթէ ոչ աննպատակ մի արկածախնդրութիւն:

Ես էլ էի համոզուած, որ մենք խոհեմութիւնը պիտի ունենայինք խուսափելու նոր պատերազմից, այն էլ Ռուսաստանի դէմ: Քանի որ մեր հաշիւները բոլշեւիկների հետ ընդհանուր լեզու գտնելու մասին սխալ էին դուրս եկել, պէտք էր հրաժարուէինք իշխանութիւնից յօգուտ բոլշեւիկների՝ դէթ ձեւականօրէն ապահովելով Հայաստանի անկախութեան պաշտպանը:

Վիճաբանութիւնները չափազանց բուռն էին ու երկարատեւ: Կէս գիշեր էր արդէն, երբ ինձ կանչեցին ուղիղ հեռագրաթելի մօտ: Ալեքսանդրապոլից, մեր հաչտարար պատուիրակութեան նախագահ ընկ. Ա. Խատիսեանը հաղորդեց, որ Թուրքերը ներկայացրել են հաչտութեան պայմանները եւ տուել են վերջնագիր՝ 48 ժամում ընդունելու կամ մերժելու: Ներկայացուած պայմանները չափից աւելի ծանր էին: Ընկ. Խատիսեանը խնդրում էր առանց ուշացնելու տալ հրահանգներ, որովհետեւ Թուրքերը չատ էին չտապեցնում: Երեւանում կատարուող դէպքերը, որոնց մասին նրանք պարմանալի կերպով լաւ էին տեղեակ, ջղայնացնում էին նրանց: Թուրքերը, ըստ երեւոյթին, վախենում էին իրենց դաշնակից բոլշեւիկների խաղերից եւ



ARAM webaram.com

չտապում էին օր առաջ տորադրել հաշտութիւնը:

Երբ ես վերադարձայ Հեռագրատնից եւ կարդացի Քեազիմ Կարաբէքիրի վերջնագիրը եւ հաշտութեան պայմանները, սենեակում մի պահ սիրտս խորին լռութիւն. այդքա՞ն ծանր պայման ոչ ոք չէր սպասում: Առանձնապէս սաստիկ վրդովում առաջ բերեց Սուրմալուի պահանջը: Այդ նշանակում էր, որ տաճիկները չէին ուզում հաշտուել անկախ Հայաստանի գոյութեան հետ: Այդ նշանակում էր նոյնպէս, որ քաղաքագիտական կռիւը կարող էր թուրքերի համար աւելի ծանրանալ ներխուժելու Հայաստան...

Որքան եւ բուռն լինէին հետագայ վիճաբանութիւնները, թուրքերի վերջնագիրը փաստօրէն վճռեց խնդիրը. ժողովականների ճնշող մեծամասնութիւնը յանգեց այն եզրակացութեան, որ Լէդրանի վերջնագիրը պէտք էր ընդունուէր, բայց պէտք էր ընդունուէր նաեւ Քեազիմ Կարաբէքիրի վերջնագիրը: Այս վերջին քայլը համարւում էր անհրաժեշտ նրա համար, որ երկիրը զերծ մնար թրքական նոր արշաւանքից, որովհետեւ եթէ թրքական պայմանները մերժուէին, մինչեւ բոլշեւիկների հասնելը՝ երեւանը կը դրաւուէր ասկեարների կողմից:

Մենք շատ լաւ գիտակցում էինք, որ ընդունել Քեազիմ Կարաբէքիրի վերջնագիրը, կը նշանակէր, ապագային, անհուն նուաստացումների ենթարկել մեր կառավարութիւնը եւ սուր գէնք տալ հակառակորդների ձեռքը: Լէդրանի առաջարկն ընդունելուց յետոյ մենք կարող էինք մի զեղչիկ ժեստով յետ մղել թրքական պահանջները, որով յետին աստիճանի ծանր դրութեան մէջ դրած կը լինէինք բոլշեւիկներին, որոնք, կասկած չկայ, ստիպուած պիտի լինէին տեղի տալ իրենց դաշնակից թուրքերի առջեւ: Բայց մեր այդ քայլից կը տուժէր հայ ժողովուրդը: Ալեքսանդրապոլի դաշնագիրը տորադրելով՝ մենք փրկեցինք ժողովուրդը նոր փորձութիւններից, թէեւ դրանով ուժեղ հարուած հասցրինք մեր վարկին:

Նոյն ժողովում մշակուեցին այն սկզբունքները, որոնցմով պէտք է տեղի ունենար իշխանութեան փոխանցումը: Որոշուեց նաեւ յանձնարարել ընկ. Դրոյին եւ Հ. Տէրտէրեանին, առանց ուշացնելու, կուսակցութեան եւ կառավարութեան կողմից բանակցութեան մէջ մտնել Լէդրանի հետ: Լէդրանին առաջարկուելիք հիմնական պայմանները պիտի լինէին, – Հայաստանի անկախութեան ճանաչում եւ սահմանների պաշտպանութիւն, նիւթական եւ մթերքի աջակցութիւն հայ ժողովուրդին. քաղաքական կուսակցութիւնների անդամների եւ բանակի հրամանատարական կազմը պատասխանատուութեան



ARAM webaram.com

չափաբ ենթարկուէին իրենց առաջուայ գործերի համար. Հայաստանի Ցեղկոմը պիտի կազմուէր կօալիցիոն հիմքերով՝ հայ կոմունիստներից ու «ձախ» Դաշնակցականներից:

Ժողովը տեւեց գրեթէ մինչեւ լուսաբաց: Դրօն եւ Տէրտէրեանը անմիջապէս անցան իրենց գործին եւ յաջորդ ամբողջ օրը բանակցում էին Լէգրանի հետ: Այս առթիւ Հ. Տէրտէրեանը գրում է իր յուշերում.

«Բանակցութեան համար մեզ տուել էին հետեւեալ հիմունքները.

1) Հայաստանը պէտք է ճանաչուի եւ յայտարարուի իբր անկախ սոցիալիստական խորհրդային հանրապետութիւն:

2) Անվիճելիօրէն Հայաստանի անբաժան մասը պիտի համարուին Երեւանի նահանգը ամբողջովին, Կարսի շրջանի մի մասը, Ջանդեզուրը, Ղափանի գաւառի այն մասը, որ մեզ էր անցնում բոլշեւիկների հետ նոյն 1920 թ. Օգոստ. 10-ին ունեցած համաձայնութեամբ, Թիֆլիսի նահանգի այն մասը, որ մեր տիրապետութեան տակ էր մինչեւ 1920 թ. Սեպտ. 28-ը, այսինքն մինչեւ հայ-թրքական պատերազմի սկիզբը: Սա մեր նուազագոյն հողային պահանջն էր:

3) Որ ոչ մի սոցիալիստական քաղաքական կուսակցութիւն պէտք չէ հալածանքի ենթարկուի, ինչպէս եւ չպէտք է հալածուեն նրանք, որ մասնակցել են բոլշեւիկեան չարժման ճնշմանը 1920 թ. Մայիս ամսին: Պարզուեց, որ անկախ մեզանից էսէրներն եւս նոյն հիմքերն էին որոշել բանակցութեանց համար:

Նոյն պիչերը եա եւ Դրօն գնացինք Լէգրանի մօտ եւ յայտնեցինք թէ Հայաստանի կառավարութիւնը համաձայն է երկրի խորհրդայնացման վերը յիշած հիմքերով: Միաժամանակ յայտնեցինք որ Հայաստանի Ցեղկոմի մէջ մեր կուսակցութիւնն եւս պէտք է տեղ ունենայ եւ որ Ցեղկոմը պէտք է կօալիցիոն լինի: Առարկելով կօալիցիային՝ Լէգրանը կողմնակից էր անհատական մասնակցութեան՝ յատկապէս մատնանշելով ինձ եւ Դրօյին: Լէգրանը խոստացաւ հետեւեալ օրը ներկայացնել մեզ համաձայնութեան մի նախագիծ: Եւ իսկապէս մեւս օրը, այսինքն Դեկտ. 1-ին նա մեզ առաջարկեց եօթը կէտից կազմուած մի համաձայնութեան նախագիծ: Նկատողութեան արժանի էր 5-րդ կէտը, ըստ որում Դաշնակցութեան կուսակցութեան անդամները պէտք է չենթարկուէին հալածանքի, իսկ Խորհրդային Ռուսաստանի եւ կոմունիստական կուսակցութեան դէմ պայքարողներին խոստացւում էր կեանքի ապահովութիւն: Ես եւ Դրօն


ARAM webaram.com

ուժգնօրէն բողոքեցինք այդ կէտի դէմ եւ առաջարկեցինք երկու ուղղում. առաջին՝ որ հալածանքի չեն ենթարկուելու ոչ միայն Դաշնակցականները, այլեւ բոլոր սոցիալիստական կուսակցութեանց պատկանողները. եւ երկրորդ որ հալածանքի չեն ենթարկուում նաեւ նրանք, որ մասնակցել են բոլշեւիկների դէմ վարած կռուին: Լէդրանը չէր համաձայնուում եւ պնդում էր իր առաջարկի վրայ: Այն ժամանակ ես ջնջեցի «ապահովում է կեանքը» բառերը եւ արի հեռանալ յայտարարութիւնը:

— Հ. Յ. Դաշնակցութիւնը 30 տարուայ յեղափոխական անցեալ ունի եւ իր երկարատեւ յեղափոխական պայքարի ընթացքում ոչ ոքից չէ աղերսել կեանքի ապահովութիւն. մեր առաջարկը ոգորմութիւն խնդրել չէ: Ոչ մի դաշնակցական այս ծանր վայրկեանին իր կեանքի ապահովութեան մասին չի մտածում, այլ աշխատաւոր հայ զանգուածների ճակատի մասին: Ես կարող եմ պնդել, որ դուք այս իսկ վայրկեանին եւս մտածում էք քաղաքական պայքարի եւ ոչ թէ համամարդկայնութեան մասին: Կարող էք անել, ինչ որ կամենում էք: Դրանից յետոյ այդ բառերը ջնջեցինք Լէդրանի նախագծի 5-րդ կէտից, յայտնելով, որ վերջնական պատասխան եւ մեր հականախագիծը կը ներկայացնենք հետեւեալ օրը:

Լէդրանի նախագծի մասին պէտք է ասենք թէ կառավարութեանը եւ թէ մեր կուսակցութեան խառն նիստին: Երանք ընդհանուր առմամբ հաւանութիւն տուին այդ նախագծին, մանաւանդ որ մեր ընկերներից ոչ մէկը չէր հաւատում բոլշեւիկների անկեղծութեան եւ այդ թղթի վրայ նայում էին իբր սոսկ ձեւակերպութիւն: Յանձնարարուեց մեզ վերջացնել եւ ստորագրել թուղթը ինչ ձեւով որ յարմար նկատենք:

Դեկտ. 2-ին ցերեկուայ ժամը 1-ին Լէդրանը մեր հրաւէրով եկաւ արտաքին գործոց նախարարութեան չէնքը. իր հետ էին մի քարտուղար եւ դեներալ Բոբրիշչեւ. մեր կողմից ես էի, Դրօն եւ Եակուլեանն իբր քարտուղար: Լէդրանի նախագծի մէջ մենք մտցնել տուինք մի քանի ուղղումներ եւ լրացումներ, որով կէտերի թիւը դարձաւ տասն եւ մէկ: Լէդրանն առաջարկում էր պայմանը ստորագրելուց անմիջապէս յետոյ իշխանութիւնն յանձնել իրանց: Իսկ մենք առաջարկում էինք իշխանութեան փոխանցումը կատարել Դեկտ. 3-ին, երբ կառավարութիւնը տուած կը լինի իր յայտագիրը զօրքին ու ժողովրդին: Այդ խնդրի առթիւ եղած վիճաբանութեան ժամանակ Լէդրանն իրեն թոյլ տուաւ մի արտայայտութիւն, որ ինձ տեղն ու տեղը ապտնեց հոդեպէս. լիրբ դէմքով եւ ատելի լրբենի ժպիտով



ARAM webaram.com

ինչպէս կը խօսէն վոզոցային անառակ կանանց հետ՝ նա ասաւ.— Ընկեր Տէրտէրեան, ի՞նչ նպատակ ունէք դուք է: Զարմացայ յուզուած՝ եւ խօսքէն պատասխանեցի.

— Ներողութի՛ւն, ընկեր Լէպրան, կարծեմ իշխանութիւնը դեռ մեր ձեռքին է եւ Դիլիջանից մինչ Ալեքսանդրապոլ դեռ եւս մե՛ր զօրքերն են կանոնած եւ մենք դեռ պարտուած չենք: Այդ լեզուով մեզ հետ կարող էիք խօսել այն դէպքում միայն, երբ ձեր թնդանօթները ամբակոծելիս լինէին մեր մայրաքաղաքը, եւ ձեր զօրքերը չերջացած լինէին մեզ: Նա աթոռից եւ զղաց իր անառակութիւնը:

Ես առաջարկեցի ընդմիջում անել, որ խորհրդակցել կարողանանք կառավարութեան անդամների հետ: Լէպրանը մնաց, իսկ մենք մտանք Վրացեանի կաբինետը եւ խնդրեցինք լիազօրութիւններ իշխանութիւնը յանձնելու ժամանակի եւ կարգի վերաբերմամբ: Խորհրդակցութեան ժամանակ միայն Դրօն էր, որ չափազանց նեարդային՝ պահանջում էր չտապեցնել համաձայնութեան առորոշութիւնը, նկատելով որ «հակառակ դէպքում ուշ կը լինի, այն ինչ որ պիտի կատարուի՝ կը կատարուի առանց մեզ». ուզում էր ասել թէ ներքին յեղափոխութիւն կը լինի, մեզ էլ կը ձերբակալեն եւ իշխանութիւնը կը յանձնեն բոլշեւիկներին: Նախարարների խորհուրդը մեզ լիազօրից մի կերպ վերջ տալ այդ պատմութեան:

Վերադարձանք Լէպրանի մօտ: Ժամը 2–ին առորոշուեց համաձայնագիրը, որով իշխանութեան փոխանցումը կատարուելու էր հետեւեալ ձեւով.— Հայաստանի կառավարութիւնը իր բովանդակ իշխանութիւնը փոխանցում էր ռազմական նախարար Դրոյին, որին խորհրդային իշխանութիւնը իր կողմից նշանակում է բոլոր ռազմական ուժերի հրամանատար: Մինչ Հայաստանի Յեղկոմի ժամանումը երկրի բովանդակ իշխանութիւնը մնում էր Դրոյի ձեռքին, որին կից, իբր խորհրդական, նշանակւում էր ընկ. Սիլինը: Հայաստանի կառավարութիւնը պարտաւորւում էր նոյն օրը (Դեկտ. 2) երեկոյեան ժամը 6–ին բովանդակ իշխանութիւնը փոխանցել Դրոյին: Համաձայնագիրը երկու օրինակ էր, որոնցից մէկը մնաց կառավարութեան դիւանում, իսկ միւսը յանձնուեց Լէպրանին: Համաձայնագրից հանել տուինք մի քանի տասնեակ պատճէն եւ ուղարկեցինք Եւրոպա, մի մասն էլ մեր ընկերներին պահ տուինք:

Դրանից յետոյ ինձ եւ Արշամ Խոնդկարեանին յանձնարարուեց կազմել մի յայտագիր կառավարութեան անունից ուղղուած զօրքին ու ժողովրդին: Նրա բովանդակութիւնը մօտաւորապէս հետեւեալն էր.— Նկատի ունենալով արտաքին քաղաքական հանգա-


ARAM webaram.com

մանքների շնորհիւ երկրի ներսում ստեղծուած կացութիւնը, Հայաստանի կառավարութիւնը երկրի ամբողջ պինուորական եւ քաղաքացիական իշխանութիւնը այսօրուանից յանձնում է պինուորական նախարար Դրոյին եւ հրաժարւում է իր բոլոր լիազօրութիւններից։ Ցայտապիրն ստորագրեցին բոլոր նախարարները»(*)։

Միւս օրը, Դեկտ. 1–ին, մօտս եկաւ խորհրդային միսիայի պաշտօնեայ Աչոտ Յովհաննիսեանը, որը Էջմիածնի յանձնարարութեամբ առաջարկեց արձակել Հայաստանի բանտերում պահուող կոմունիստներին։ Ես նման պայման դրի Ադրբէյջանի եւ Ռուսաստանի բանտերում գտնուող դաշնակցականների համար։ Երկուսաւոր քննութիւն եղաւ, գրաւոր կերպով ձեւակերպուեց ու ստորագրուեց, որ Դեկտ. 2–ին, երեկոյեան ժամը 6–ին, Հայաստանի, Ադրբէյջանի ու Ռուսաստանի բանտերից պիտի ազատ արձակուէին բանտարկուած բոլոր կոմունիստներն ու դաշնակցականները։ Արդարադատութեան նախարարի օգնական Գրիգոր Զուբարին յանձնարարուեց Ա. Յովհաննիսեանի հետ միասին ի կատար ածել այդ որոշումը։ Մենք կատարեցինք մեր խոստումը, բայց բոլշեւիկները, ըստ սովորութեան, խաբեցին...

Դեկտ. 1–ի երեկոյեան, Խորհրդարանի չէնքում տեղի ունեցաւ Դաշնակցական Ֆրակցիայի վերջին նիստը։

Ելեկտրականութիւնը մարած էր, եւ մոմի աղօտ լոյսի տակ Ֆրակցիայի ընդարձակ սենեակը՝ լի պատգամաւորներով եւ կուսակցական պատասխանատու գործիչներով՝ խորհրդաւոր կերպարանք էր ընդունել։ Կառավարութեան եւ Բիւրոյի ներկայացուցիչների զեկուցումներից յետոյ, գրեթէ նոյնութեամբ, կրկնուեցին նախորդ օրուայ վիճաբանութիւնները, բայց այս անգամ աւելի թոյլ էին հնչում կուսի կողմնակիցների յորդորները։

Քուէարկութեան արդիւնքը եղաւ — 7 քուէ Էջմիածնի առաջարկի դէմ, 22 քուէ՝ թեր...


Մինչ տեղի էին ունենում այս վիճաբանութիւններն ու խորհրդակցութիւնները, Դրօն ու Հ. Տէրտէրեանը, ինչպէս տեսանք, բանակցում էին Էջմիածնի հետ, եւ Դեկտ. 2–ի կէս օրին համաձայնագրի նախագիծն արդէն պատրաստ էր։ Կառավարութիւնը քննեց այդ նա-

---

(*) Տես Համբարձում Տէրտէրեանի յուշերը 1920 Դեկտ. 2–ից մինչեւ 1921 Ապրիլ 2–ը կատարուած դէպքերի մասին։ Գրի առաւ Ն. Ադբալեան (1921 Թաւրիզ), աւտիպ, էջ 6–12։



ARAM webaram.com



Գաղէն

Հ. Հ.
ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

2 դեկտեմբերի 1920 թ.
Երեւան

# ԱԿՏ

Ի նկատի ունենալով արտաքին հանգամանքների շնորհիւ երկրում առեղծուած կացութիւնը, Հայաստանի Հանրապետութեան Կառավարութիւնը իր 1920 թ-ի դեկտեմբերի 2-ի նիստում որոշեց հրաժարուել իշխանութիւնից և յանձնել Զինուորական և Քաղաքացիական բոլանդակ իշխանութիւնը պետական Ընդհանուր հրամանատարին, որպէսի պաշտօնում նշանակել Ռազմական նախարար Դրօին։

Նախարարների Խորհրդի
Նախագահ՝ Ս. Վրացեան
Նախարարներ՝ Ա. Յովհաննիսեան.
Ա. Խոնդկարեան.
Հ. Տէր-Ղեւոնդեան.
Գ. Կոնդրեան.

Իշխանի հետ հիշա է՝
Գործակատար՝ Հ. Թումանեանց

Копія

СОВѢТЪ МИНИСТРОВЪ
Республики Армении

2 декабря 1920 года
г. Эривань

# А К Т Ъ

Имѣя ввиду создавшееся положеніе внутри страны благодаря внѣшнимъ обстоятельствамъ, П-во Республики Арменіи на засѣданіи своемъ 2 декабря с. г. постановило: отказаться отъ власти и сдать всю власть, военную и гражданскую, Главнокомандующему Войсками, на должность котораго назначить Военнаго Министра Дро.

Предсѣдатель Совѣта Министровъ
С. Врацянъ
Министры:
А. Овасепянъ
А. Хондкарянъ
Е. Тертерянъ
Д. Канаянъ

Начальникъ Канцеляріи Туманянъ

## Հ. Հ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ



ARAM webaram.com

խաղիծը եւ որոշ փոփոխութիւններով հաստատուեց: Կառավարութեան մէջ եւս առանձնապէս վճռի առարկայ եղաւ այն կէտը, որով խորհրդային իշխանութիւնը պարտաւորւում էր երաշխաւորել Մայիսեան բոլշեւիկեան ապստամբութեան դէմ գործող անձանց կեանքը:

Մենք պնդում էինք, որ ոչ մէկից որեւէ կեանքը պէտք է ապահովուէր, այլ, առհասարակ, մինչեւ Դեկտ. 2-ը բոլշեւիկների դէմ պայքարած ո՛չ մի քաղաքացի կամ պինուորական՝ պատժի ենթարկուէր: Ապա Լէպրանը համաձայնւում էր երաշխաւորել մեզ Դաշնակցականների անձեռնմխելիութիւնը, իսկ մենք պահանջում էինք պատժից ազատ համարել բոլոր կուսակցութիւնների անդամներին: Վերջին կէտում Լէպրանը դիջեց եւ ընդունեց, որ, պատմանը վերաբերուի բոլոր բնակիչներին:

Ի վերջոյ, Դեկտ. 2-ին, կէսօրից յետոյ, տորթպրուեց հեռեւեալ համաձայնագիրը.—

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Ռ.Մ.Ֆ.Ս.Հ. լիազօր ներկայացուցչութեան եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ.

2 Դեկտ. 1920 թուին, մի կողմից Ռ.Մ.Ֆ.Ս.Հ. լիազօր ներկայացուիչ ընկ. Լէպրանը, Ռ.Կ.Կ.Կ.-ի (*) լիազօրութեամբ, ի դիմաց Ռուսաստանի Սով. կառավարութեան, եւ միւս կողմից ընկերներ Դրօն եւ Տէրտէրեանը ի դիմաց Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան՝ կնքեցին համաձայնութիւն հետեւեալի մասին.

1. Հայաստանը յայտարարում է Անկախ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութիւն:

2. Մինչեւ Հայաստանի Խորհուրդների համագումարի հրաւիրումը կազմւում է ժամանակաւոր Ռազմա-Յեղափոխական Կոմիտէ, որին կ'անցնի բոլանդակ իշխանութիւնը Հայաստանում:

3. Ռուսաստանի Խորհրդային կառավարութիւնը ընդունում է, որ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան հողերի մէջ անվիճելի կերպով մտնում են — Երեւանի նահանգը իր բոլոր պատառներով, Կարսի նահանգի մի մասը, որը պինուորական ռեւակէտից կ'ապահովէ երկաթուղու տերապետութիւնը՝ Ջալալօղ-

(*) Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցութեան Կեդեսր. Կոմիտէի: Ս. վ.



ARAM webaram.com

կայսրանից Ախալքա–կայսրանը, Գանձակի նահանգի Զանգեզուրի գաւառը եւ Ղազախի գաւառի մի մասը Օղուզ։ 10–ի համաձայնութեան ահմաններում։ եւ Թիֆլիսի նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի միրաղեաւութեան տակ էին գտնւում մինչեւ 1920 թ։ Սեպտ։ 28։

4։ Հայկական բանակի հրամանատարական կազմը չի ենթարկւում պատասխանատուութեան այն գործերի համար, որ կատարել է բանակի չարքերում մինչեւ Հայաստանում Խորհրդային իշխանութեան յայտարարումը։

5։ Դաշնակցութեան եւ ուրիշ սոցիալիստական կուսակցութիւնների (Ս։ Յ։, Ս։ Դ։) անդամները ո՛չ մի հալածանքի չպիտի ենթարկուին կուսակցութեան պատկանելու եւ հոմանիշական կուսակցութեան դէմ մղուած կռուին մասնակցելու ու խորհրդային Հայաստանի յայտարարութիւնից առաջ կատարած գործերի համար։

6։ Ռազմա–Յեղափոխական Կոմիտէի մէջ մտնում են հինգ անդամներ հոմանիշական կուսակցութեան կողմից նշանակուած եւ երկու անդամ ձախ–Դաշնակցականների խմբակից՝ համաձայնելով հոմանիշական կուսակցութեան հետ։

7։ Ռուսաստանի Խորհրդային կառավարութիւնը միջոցներ է ձեռք առնում անմիջապէս կենսագործելու Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան անկախութեան պաշտպանութեան համար անհրաժեշտ պինուրական ուժեր։

8։ Սոյն համաձայնագիրը ստորագրուելուց յետոյ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը քաշւում է իշխանութիւնից։ Իշխանութիւնը ժամանակաւոր կերպով, մինչեւ Յեղափոխական Կոմիտէի գալը, անցնում է զօրահրամանատարութեան, որի պլուխն է կանգնում գնդ։ Դրօն։ Ռ։Ս։Ֆ։Ս։Հ։ կողմից Հայաստանի հրամանատարութեան կից կոմիսար է նշանակւում գնդ։ Սիլինը։

Պատրաստուած է երկու օրինակ։

Ռ։Ս։Ֆ։Ս։Հ։ լիազօր ներկայացուցիչ՝

ԼԻԳՐԱՆ

Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան լիազօրութեամբ՝

ԴՐՕ, ՏԻՐՏԻՐԵԱՆ(*)

---

(*) Այս համաձայնագիրը բոլշեւիկները հրատարակել են «Ժողովածու Գործող Դաշնագրերի» Գ–րդ պրակում, Մոսկուա, 1922 թ։ Թիւ 79, էջ 14–15 (Տես Ա։ Աբեղեանի «Դաշնագրեր» յօդուածը «Հայ–



ARAM webaram.com

*Պայմանաւորուեցինք, որ կառավարութիւնը Դեկտ. 2-ի գիշերուայ ժամը 12-ին իշխանութիւնը կը յանձնի Դրոյին, իրրեւ բանակի գերագոյն հրամանատարի եւ սա՝ իրեն խորհրդական ունենալով Էդրանի ներկայացուցիչ Լաաիչ Սիլինին՝ կը կառավարէ երկիրը մինչեւ Յեղկոմի երեւան հանելը: Կազմուեց նոյն իմաստով ժողովրդին ուղղուած մի յայտարարութիւն, որը հեռագրուեց գաւառները եւ գիշերը փակցուեց քաղաքի պատերին բոլոր նախարարների ստորագրութեամբ: Դեռ առաւօտեան հեռագրական հրամանագրով հաղորդուած էր գաւառական պաշտօնեաներին եւ գինուորական մասերին գալիք փոփոխութեան մասին եւ ամէնքին հրահանգուած էր մնալ իրենց տեղերում, պահպանել կարգ ու անդորրութիւն եւ անայլայլ կատարել նորեկ իշխանութեան կարգադրութիւնները:*

*Նոյն օրը Ս. Օրջոնիկիձէն հեռագրում էր Մոսկուա.*

Հաղորդում Լենինին եւ Ստալինին

Բագու, 2 Դեկտ. 1920

*«Ընկ. Ընկ. Լենինին եւ Ստալինին հաղորդեցէք հետեւեալը. «Հէնց նոր երեւանից հաղորդում ստացուեց, որ երեւանում հռչակուել է Սովետ. իշխանութիւն, հին կառավարութիւնը վերացուել է, ամբողջ իշխանութիւնը ժամանակաւորապէս, մինչեւ Ռեւկոմի ժամանումը յանձնուել է գինուորական հրամանատարութեանը՝ Դրոյի գլխաւորութեամբ, Հայաստանի գինուորական կոմիսար նշանակուել է Սիլինը:*

*«Զօրքերին հրաման է տրուած նրանց Ռեւկոմի տրամադրութեանը յանձնելու մասին: Ռեւկոմը ներկայումս Դիլիջանումն է, վաղը առաւօտեան կը մեկնի երեւան:*

«Ռեւկոմը ողջոյնի հեռագիր է ստացել թիւրքական հրամանատար կարաբեքիրից եւ Թիւրքիայի ներկայացուցիչ Ֆեազիմ Բէյից: Ռեւկոմը երեւանի ճանապարհին է: Ալեքսանդրապոլից այսօր եկած րնկերը հաղորդում է, որ բեմալական զօրքերի մէջ տիրում է մեր նկատմամբ վերին աստիճանի բարեկամական տրամադրութիւն, զօր-

---

րեվիֆ» ամսագրի թիւ 7-ում): Սակայն որոշ տարբերութիւններ կան իմ ունեցած օրինակի եւ բոլշեւիկների հրատարակածի միջեւ: Այսպէս, Լէգրանը դաշնագիրը ստորագրել է Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցութեան Կենտր. Կոմիտէի լիազօրութեամբ, մինչդեռ բոլշեւիկների հրատարակածի մէջ այդ կտորը դուրս է ձգուած:

Ս. Վ.



ARAM webaram.com



Գ Ր Օ



ARAM webaram.com

ֆերը կրում են կարմիր կրծքանշաններ եւ իրենց համարում են կարմիր բանակայիններ: Ազրբէյջանը երէկ Սովետ Հայաստանի օգտին յայտարարեց Նախիջեւանը, Զանգեզուրը եւ Լեռնային Ղարաբաղը (Հայաստանին) յանձնելու մասին:

ՕՐՋՈՆԻԿԻՁԷ»

*Դրանից մի օր առաջ, Դեկտ. 1-ին Բաքում Հայաստանի խորհրդայնացման առթիւ, Սովետի հանդիսաւոր նիստում, Ազրբէջանական Սովետական Ռեսպուբլիկայի ժողկոմսովետի նախագահ Ն. Ն. Նարիմանովը, յանուն Ազրբէյջանի կառավարութեան յայտարարութիւն է անում որ Ղարաբաղը, Զանգեզուրը եւ Նախիջեւանը յանձնւում են եղբայրական Հայաստանին: Այդ առթիւ մեծ ճառ է խօսում Սովետական Ռուսաստանի ներկայացուցիչ Ս. Օրջոնիկիձէն որ, ի միջի այլոց ասում է հետեւեալը.*

*«Ընկերնե՛ր. Սովետական Ազրբէյջանը, որն այսօր հանդէս է կաւ յանձինս ընկ. (Ն. Ն.) Նարիմանովի, ամբողջ աշխարհի եւ ամէնից առաջ Հայաստանի բանուորներին եւ գիւղացիներին ապացուցեց, որ միայն սովետական իշխանութիւնն է ընդունակ լուծելու ազգամիջեան թշնամանքի հետ կապուած այն անիծեալ հարցերը, որ կային այստեղ եւ որոնք չատ են ամբողջ աշխարհում:*

*«Շատ բնորոշ է ընկ. Նարիմանովի ելոյթը: Նա մեզ կարդաց իր դեկլարացիան: Զանգեզուր, Նախիջեւան եւ Ղարաբաղ անուններըը, այդ խօսքերի բովանդակութեանն անծանօթ ոուս մարդու ականջին բոլորովին ոչինչ չեն ասում: Ինչ որ Զանգեզուր անբերրի լեռներ, ա՛չ հայ կայ, ա՛չ ջուր: Այնտեղ ոչինչ չկայ: Ինչ-որ Նախիջեւան, ճահիճ, մալարիա եւ ուրիշ ոչինչ: Ինչ որ Լեռնային Ղարաբաղ: Ի՞նչ կայ այդ Ղարաբաղում: Ո՛չինչ չկայ: Եւ ահա ընկ. Նարիմանովն ասում է. «Դրանք ձեզ վերցրէք: Այդ անբերրի հողերը վերցրէք Հայաստանի համար»: Կարծես թէ Սովետական Ազրբէյջանն ազատւում է մի աւելորդ բեռից: Բայց ո՛չ: Այդ դաւառներում, այդ անբերրի հողերի մէջն է կայանում այստեղ Անդրկովկասում այսպէս կոչուած հայ—մուսուլմանական հարցի հանգոյցը, այն հարցի, որը դարձաւ սարսափների պատճառ, այն հարցի, որը մուսուլման աշխատաւորին նետում էր հայ աշխատաւորի վրայ՝ փոխադարձաբար իրար ոչնչացնելու համար»:*

*«Եւ ահա այսօր Ազրբէջանական ռեսպուբլիկայի դեկլարացիան հանդէս է գալիս եւ ասում.*

*«Այդ սարսափելի հարցն այլեւս գոյութիւն չունի: (Ազմկալից*



ARAM webaram.com

ծափահարութիւններ)։ Այլեւս թշնամանք չկայ մուսուլմաններէն եւ հայերէն միջեւ։ Մուսուլմաններն ու հայերը, այդ աշխատաւորները, այսուհետեւ պատնում են հարատեւ եղբայրներ՝ սովետական իշխանութեան կարմիր դրօշների տակ» (Ծափահարութիւններ)։ Այսօրեղ կարդացուած այս ակտը մեծագոյն կարեւորութիւն ունեցող ակտ է. սա պատմական մի ակտ է, որը մարդկութեան պատմութեան մէջ իր օրինակը չունի»(*)։

Մինչ անդի էին ունենում այս դէպքերը, քաղաքից արդէն սկսել էին հեռանալ բոլշեւիկների հանդէպ իրենց վատնդուած համարող գործիչները։ Այս հանգամանքը առեղծեց քաղաքում ջղային տրամադրութիւն, որի հետեւանքով Երեւանից հեռացան նաեւ այնպիսի մարդիկ, որոնք բնաւ պատճառ չունէին բոլշեւիկներից վախենալու։

Ժամը 5ը անցած էր, երբ կառավարութեան բոլոր անդամներս հեռացանք կառավարական շէնքից՝ «բոլանդակ իշխանութիւնը» յանձնելով նախարարապետի անձնական քարտուղար Սերեժա Թոքոսեանին։

— Սերեժա՛, Հայաստանի իշխանութիւնը քե՛զ ենք յանձնում։ Լաւ պահիր, որ վերջը ապահով վերադարձնես մեզ, — կատակեց մեզանից մէկը։

Տաք եւ արեւոտ օր էր։ Փողոցներում ո՛չ ոք չէր երեւում։ Մենք բարձրանում էինք Հանրապետութեան փողոցով։ Տիրում էր բացարձակ խաղաղութիւն։ Յանկարծ, մօտիկից լսուեց ատրճանակի մի պայթիւն։

— Այս էլ մեր պատուին։ Տեսա՞ք որ իշխանութիւնը կռուով յանձնեցինք, — արտասանեց դիւզատնտեսութեան եւ աշխատանքի նախարարը։

Մենք լուռ ցրուեցինք մեր տները։

Լուռ էր եւ խաղաղ նաեւ քաղաքը։ Լուռ էր եւ Մասիսը, որ պարուրուած ձանձր ամպերի մէջ՝ խոհում էր աշխարհի ունայնութեան մասին...

Այս էր ահա, որ հետապային բոլշեւիկները յայտարարեցին իրրեւ «բանուորապիւզացիական արիւնոտ յեղաշրջում»...։

Երեկոյեան մօտ եկան Հայր Աբրահամը եւ Պապաչան՝ անսո-

---

(*) Ս. Կ. Օրջոնիկիձէ, «ԸՆՏԻՐ ՅՕԴՈՒԱԾՆԵՐ ԵՒ ՃԱՌԵՐ», 1918—1937 (Հայպետհրատ, Երեւան, 1950) էջ 35, 32—33։


ARAM webaram.com

վոր կերպով տխուր: Անխօս նստեցին: Լուռ էի ե՛ւ ես՝ իմ աչխատանքի սեղանի մօտ: Ձախ կողմս, պատից, նայում էր մեզ նկարիչ Երկանեանի նուիրած նկարը — սուր աչքերով, սիրուն դէմքով եւ ճոխ կրծքով տրապիզոնցի աղջիկը: Լայն պատուհանից, կիսախաւարի մէջ, նչմարւում էր Մասիսի ուրուագիծը: Լուսինն էր սիրում սենեակում, ինչպէս մեր հոգիներում:

Բերին Հայր Աբրահամի սիրած գինին՝ «Արարատ» գործարանի թիւ 35–ը: Ոչ ոք ուշադրութիւն չդարձրեց լեցուած բաժակներին:

Յանկարծ, դրսից ներս խուժեցին «Ինտերնացիոնալ»ի հնչիւնները: Մեր դինուորական նուագախումբն էր, որ դեռ առաւօտեան «Մեր Հայրենիք» էր նուագում: Նուագի հետ, մեր ականջին հասնում էին ամբոխի աղաղակները: Յստակ կերպով լսում էր.

— Սա՛ է վերջին եւ վճռական կռիւը մեր...

Բանտից նոր արձակուած բոլշեւիկներն էին, որոնց պիտի հիւրասիրէին Պարլամենտի սրահում:

— «Վերջին եւ վճռական կռիւը», մտախոհ արտասանեց Հայր Աբրահամը եւ գինու բաժակը մօտեցրեց շրթունքներին:

— Ո՛չ վերջին, ո՛չ վճռական կռիւ եղաւ մեր կռիւը, Հա՛յր Աբրահամ, պատասխանեցի ես: Մենք կռուել ենք, կռուեցինք եւ պիտի կռուենք: Պէ՛տք է կռուենք, դժբախտաբար: Ո՛չ Եւրոպա, ո՛չ Ամերիկա եւ վախենում եմ՝ նաեւ ո՛չ Ռուսաստան: Ցիշեցէ՛ք իմ հայրենակից Քամառ Քաթիպայի խօսքերը. «Ի՞նչ էք փնտռում հիւսիսում, ա՛յ խելացնոր, գիժ հայեր»: Նա զգուշացնում էր մեզ հիւսիսի «Սեւլաւից»:

— Բայց եւ այնպէս, այդ «Սեւլաւ»ը չխեղդեց մեզ, նկատեց Պապաչան: Նայեցէ՛ք Արարատին. քանի նա մեզ հետ է, մենք կ'ապրենք:

— Այդ փիլիսոփայութիւն է, պատասխանեց Հայր Աբրահամը եւ գինի լեցրեց իր բաժակի մէջ:

Իսկապէս, փիլիսոփայութի՞ւն էր: Դարեր շարունակ մենք փիլիսոփայութեա՞մբ էինք զբաղուած, որ աղօթում էինք, որպէս զի «խաչապաշտ թագաւոր»ի սուրը կարուկ լինի: Եւ այսօր էլ, Եւրոպան եւ Ամերիկան ողոքելուց յետոյ, նորից ընկնում էինք հիւսիսի «Սեւլաւ»ի մէջ:

Շատ չէր մեր փնտռածը, ա՛յն, որ ամէն ապր՝ մեծ թէ փոքր՝ ունէր: Եւրոպա եւ Ամերիկա խոստացան եւ չտուին: Պիտի տայի՞ն «ամբոխները խելագարուած»...:



ARAM webaram.com

# ՅԵՂԿՈՄԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ

«Մեճ երկրագուդը կը վերածեճ դրախտի»

Լ. ՏՐՈՑԿԻ

ARAM webaram.com

ARAM webaram.com

# ԲՈԼՇԵՒԻԿԵԱՆ ՄԵՂՐԱԼՈՒՍԻՆԸ

1920 Թ. Դեկտեմբերի 2–ին ես վակուեցի տանս եւ դրեթէ ա–ռանց դուրս գալու դիտում էի դրսում կատարուածը:

Նոյն օրը երեկոյեան, ժամը 6–ին, Հ. Հ. կառավարութեան ներկայացուցիչ Գր. Զուբարը եւ Լէդրանի ներկայացուցիչ Աչոտ Յովհաննիսեանը, կառավարութեան կարգադրութեան համաձայն, ազատ արձակեցին բանտարկեալ կոմունիստներին, որոնք առօք–փառօք եկան Ժորհրդարանի չէնքը, ուր նրանց համար պատրաստը–ւած էր հիւրասիրութիւն: Բանտարկեալների ազատութեան առիթ–տեղի ունեցաւ միտինգ, ուր արտասանուեցին ապառնական ճառեր «ներկ Դաշնակ»ների դէմ:

Այդ ապառնալիքները իսկոյն եւ եթ սկսուեցին գործադրուել. բոլշեւիկ խմբակները յարձակուեցին Հ. Օհանջանեանի, Ս. Ազարաա–եանի և Ա. Զիլինգարեանի (Ռ. Դարբինեան) բնակարանների վրայ եւ խուզարկեցին ու տակն ու վրայ արին ամէն ինչ. փնտռում էին «Դաշ–նակ նախարարներին»:

Փորձեր եղան եւ չուկան թալանելու, բայց պինուորական իշ–խանութեան ձեռք առած կտրուկ միջոցներով պահպանուեց օրինա–կելի կարգ:

Երբ ես պիչերը ինքնաշարժով գնում էի անթել հեռագրի կա–յանը խօսելու համար Թիֆլիսի հետ, քաղաքում սիրում էր մեռելա–յին լռութիւն: Փողոցները դատարկ էին: Պարլամենտի դլխին չէր երեւում եռագոյն դրօշը: Տեղ–տեղ նշմարւում էին կարմիր դրօշակ–ներ, մասնաւորապէս հարուստների տների վրայ: Երբ անցնում էի պարլամենտի կողքով, ներսից ականջիս հասան «Ինտերնացիոնալի» հնչիւնները: Բոլշեւիկները իրենց «յաղթանակն» էին տօնում...


ARAM webaram.com

Յաջորդ օրը, Դեկտ. 3-ի առաւօտեան, քաղաքի պատերին արդէն փակցուած էր Դրօյի հրամանը Հայաստանը խորհրդային յայտարարելու մասին: Պետական բոլոր հաստատութիւնների եւ մասնաւոր անձերի վրայ կախուած էին կարմիր դրօշակները: Այդպէս էր կարգադրել նոր իշխանութիւնը: Կարմիր նշաններ կային եւ մարդկանց կրծքերի վրայ: Կարծես մոգական զաւազանի ուժով քաղաքի ամբողջ ազգաբնակութիւնը «կարմրել» էր. ամէնքը պահել էին իրենց նոր հագուստները եւ զարդարուել հին ու պատառոտուած չորերով: Կանայք փողոց էին դուրս եկել առանց դլխարկի, թաշկինակով: Տղամարդիկ, մեծ մասամբ, հագել էին դորշ վերարկուներ: Մայրաքաղաքը մի դիշերուայ մէջ կերպարանափոխուել էր:

Հակառակ Դրօյի տուած խիստ հրամանների՝ առաւօտեան տեղի ունեցան մի շարք անախորժ դէպքեր: Մութ տարրերը ուզեցին օգտուել առիթից՝ չուկայի խանութները թալանելու համար: Բոլշեւիկ տականքները թափառում էին փողոցից փողոց, աղմկում եւ անկարգութիւններ էին անում: Գրաւուեցին Հ. Օհանջանեանի, Ռուբէն Տէր Մինասեանի եւ մի քանի ուրիշների բնակարանները: Եկան եւ ինձ մօտ եւ հրամայեցին անմիջապէս պատարկել բնակարանս: Լուր տուի Դրօյին, եւ քիչ յետոյ մօտս եկաւ քաղաքի նոր պարէտը, խընդրեց գոյց տալ, թէ ո՞վ էր բնակարանս պահանջողը, եւ յայտնեց, որ իմ բնակարանը ընդմիշտ ազատ է բռնադրաւումից, կառավարութեան կողմից նեղողութիւն խնդրեց պատահածի համար եւ շատ քաղաքավարի կերպով հեռացաւ: Այնքան սիրալիր ու քաղաքավարի, որ ես ինձ մի պահ զգացի Ամերիկայում...

Մի քանի օր յետոյ եկան եւ բնակարանիս կէսը գրաւեցին...

Դեկտեմբերի 2-ը հաստատութեան վրայ, կարծես, առանձին աղդեցութիւն չէր արել: Շատ յուզուած էին միայն թրքահայերը, որոնք դառն կերպով ապում էին անկախութեան խորտակումը: Գաւառները, հաղորդակցութեան միջոցների դժուարութեան պատճառով, մեծ մասամբ յանկարծակիի էին եկել, բայց այնտեղ էլ առանձին ափսոսանք չէր նկատւում: Ոմանք նոյնիսկ ուրախ էին. վերջապէս, ռուսը կը գայ եւ կը փրկի մեզ. թրքերից էլ կ'ապահովուենք, հայ էլ կ'ունենանք, նաեւ էլ կը գայ. կեանքը կը դառնայ աւելի դիւրին: Այս էր ընդհանուր մտայնութիւնը:

Ինչ որ չափազանց յատկանշական էր, մասնաւոր զոհունակութիւն էր նկատւում հայ բուրժուազիայի մէջ: Հայ ժողովրդական կուսակցութեան մարդիկ չէին ծածկում իրենց ուրախութիւնը:



ARAM webaram.com

փոյթ չէ, թէ անկախութիւնը խորտակուեց, հօ՛ Դաշնակցականներն էլ ընկա՛ն...

Դեռ չաթաթներ առաջ, Հայ ժողովրդական Կուսակցութեան Թիֆլիսի թերթը բոլշեւիկներին անուանել էր հայոց ազգային «նոր» քաղաքականութեան ջահակիր եւ ազնուել նրանց դալը: Նոյն արտայայտութիւնն էր իշխում եւ երեւանում: Հայ բուրժուազիան, որ Ռուսաստանում ամէնից քիչ է մասնակցել ազգային կեանքին, մեծ մասով զուրկ էր ազգային պիտակցութիւնից, անհաղորդ էր մնացել ազգային մշակոյթին, չէր հասկանում ու չէր զուրգուրում անկախութեան վրայ: Հայաստանի Հանրապետութեան կեանքի ամենալաւ օրերին նա չկարողացաւ թայֆայական նեղ շահերից բարձր կանգնել, չունեցաւ պետական հասունութիւն, չլծուեց, չկամեցաւ լրջօրէն լծուել պետական գործին, այլ պատճառով էլ արտի կատարեալ հանդարտութեամբ հրաժարուեց անկախութիւնից ու ծափ զարկեց բոլշեւիկներին:

Դեկտ. 4-ին Ալրբէյջանից Երեւան հասան «Ճեղկոմի» նախագահ Ս. Կասեանը եւ Ճեղկոմի անդամ Ալիխ Նուրիջանեանը, որոնց դիմաւորելու համար ընդառաջ էին գնացել նաեւ Դրօն ու Հ. Տէր-Աէրեանը, իբրեւ թեկնածուներ կազմուելիք իշխանութեան: Ռուսական ներկայացուցչութեան առջեւ տեղի է ունենում միտինգ, ուր ճառեր են խօսում թէ՛ նոքեկները եւ թէ՛ դիմաւորողներից ոմանք: Ընդունելութիւնը լինում է անշուք ու զուսպ: Հասարակութիւնը լուռ ապառում է:

Միտինգից յետոյ, Դրօն եւ Տէր-Աէրեանը ուզում են տեսնել Կասեանին եւ Ալիխին եւ չորս ժամ ապարդիւն սպասում են ընդունարանում՝ Լէդրանի առանձնասենեակի դրանը: Ճեղոյ պարզուեց, որ այդ ժամանակամիջոցին Լէդրանի առանձնասենեակում ազմկոտ վէճ է եղել: Կասեանն ու Ալիխը յայտնում են իրենց դժգոհութիւնն ու զայրոյթը, որ Լէդրանը համաձայնութիւն է կնքել Դաշնակցականների հետ եւ դրանով պատճառ դարձել, որ իշխանութիւնը առանց կռուի անցնի իրենց ձեռքը: Նրանք մերժել են ընդունել Լէդրանի առարարած համաձայնագիրը եւ չեն ուզել տեսնուել, «տապալուած» կառավարութեան ներկայացուցիչների՝ Դրօյի եւ Տէր-Աէրեանի հետ: Էլ ի՞նչ բրոլետարիատի տիկտատուրա, երբ ինչ որ կօալիցիա պիտի կազմուի «Դաշնակների» հետ...

Այս պատմութիւնը անմիջապէս յայտնի դարձաւ քաղաքում եւ խիստ ծանր տպաւորութիւն թողեց հասարակութեան վրայ:

Աւելի վատ տպաւորութիւն գործեցին այն անվերջ միտինգնե-


ARAM webaram.com

րը, որոնք յայտարարեցին բոլշեւիկների դաւն։ Սկզբի օրերին շատ մարդ էր լինում այդ միտինգներին. հետաքրքրւում էին իմանալ, թէ ի՞նչ նոր խօսք է ասուելու, բայց յետոյ բոլշեւիկները մնացին միանակ, եւ ինչի՛ր ասես չէին խօսում։ Նրանք արբեցած էին իրենց «յաղթանակով» եւ չանթ ու կայծակ էին թափում «Դաշնակ»ների դէմին։ Կաշուից դուրս էին գալիս համոզելու համար, որ իրենք յեղափոխութեամբ են տիրացել իշխանութեան եւ, ի հարկէ, լսել իսկ չէին ուզում համաձայնութեան մասին։

Օրուայ նշանաբանն էր՝ «Ֆիզիքական մահ Դաշնակցութեան»։ Ճառերի, թռուցիկների ու պլակարտների մէջ փառաբանում էր քաղաքացիական կռիւը։

Դեկտ. 4–ին սկսուեց հրատարակուել «Կոմունիստ» պաշտօնաթերթը Հ. Յ. Դաշնակցութեան տպարանում եւ «Յառաջ»ի դրաշարներով ու թղթով։ Հէնց առաջին համարից «Կոմունիստը» սկզբ դրեց կատաղի պայքարի Դաշնակցութեան դէմ։ Ամենալկտի հայհոյանքների, ստերի ու զրպարտութիւնների մարմնացում էին «Կոմունիստ»ի համարները։ Երբ ծանօթ մարդիկ դիտել էին տալիս խմբագիր Աչ. Յովհաննիսեանին, թէ ինչո՞ւ է բացայայտ ստեր հրատարակում, նա շնական պատասխան էր տալիս, թէ Դաշնակցութեան դէմ կռուի ամէն միջոց նեղելի է...

Նոյն այդ կոյր ու նեղմիտ ոգին արտայայտուեց եւ Յեղկոմի չգործադրուեց։ Քաղաքացիական բոլոր պատուիրանները վերացուեցին։ Բռնապրաւուեցին բոլոր տպարանները։ Ոչ–կոմունիստական թերթերի հրատարակութիւնը արգիլուեց։ Արգիլուեցին ամէն տեսակ ժողովներ, բացի կոմունիստականից։ Ամենէն անմեղ հաւաքոյթներն անգամ թոյլ չէին տրուում։

Այսպէս, Դեկտեմբերի սկզբներին Երեւան էր եկել Գողթանի ներկայացուցիչ Քրիստափոր Տէր–Մկրտչեանը իր բնաւեր հայրենակիցների համար կառավարութիւնից հայց եւ օգնութիւն խնդրելու։ Որպէսզի Երեւանաբնակ գողթնեցիներին դեկուցում տայ, նա դիմում է խորհրդային իշխանութեան արտօնութիւն առանալու համար. պատասխանը լինում է մերժում։ Դիմում է երկրորդ անգամ եւ առաջարկում է կառավարութեան կողմից ներկայացուցիչ ուղարկել Ժողովին, բայց նրան այս անգամ բացատրում են, որ հայրենակցական միութիւնները բուրժուական բաներ են եւ չեն կարող դոյութիւն ունենալ սոցիալիստական պետութեան մէջ։ Ինչը — մի անկուսակցական եւ ըստ ամենայնիւ անվնաս մարդ — չա՛տ չարչարուեց եւ



ARAM webaram.com

չկարողացաւ իր հայրենակիցների համար մի նպաստ առանալ...

Շուտով Երեւան հասաւ եւ «ռուսական զօրքը», ա՛յն որին այնպէս անհամբեր սպասում էին Երեւանցիք: Քաղաք մտան 200-ի չափ ձիաւորներ՝ քոսոտ ձիերի վրայ նստած, ցնցոտիապատ ու ողորմելի: «Զօրքի» յետեւից գալիս էր «օբօզը» — 10—15 խարխլած սայլակներ՝ լծուած վատոյժ, հազիւ չարժուող ձիեր՝ չուանէ արդ ու սարքով: Սայլակների վրայ դրուած էին ծառի կեղեւից հիւսուած կեղտոտ տոպրակներ, իսկ տոպրակների վրայ բազմած էին ռուս կիներ՝ ազմկաբար ու լրբերէս... Տեսարանը հոյակապ էր...

«Ռուս զօրքի» այս «հանդիսաւոր» մուտքը մայրաքաղաք՝ սառը ջուր լեցրեց Երեւանցիների գլխին: Այս ողորմելի սովալլուկ խուժա՞նը պիտի փրկէր մեզ Թուրքերից... Հիասթափութեան զգացումը է՛լ աւելի սաստկանում էր, երբ տեսնում էին ռուսներին դիմաւորելու եկած առողջ, կուշտ ու հիանալի հագուած հայ զինուորներին...

Փոխանակ զօրանոց, հայ զօրքի մօտ տանելու, բոլշեւիկ զինուորներին տեղաւորեցին քաղաքացիների բնակարաններում, ուր նրանք ստացան ո՛չ միայն դիշերելու տեղ, այլ, ի հաշիւ քաղաքացիների, նաեւ անուն: Այս եւս դարձաւ դժգոհութեան աղբիւր ապագա բնակութեան համար:

Շուտով ռուս զինուորները հագան հայ բանակի համար Անգլիայից բերուած հագուստները, կշտացան եւ քաղաքում մացրին բոլշեւիկեան բարքեր:

Երեւան եկան եւ ուրիշ զօրամասեր, որոնք քիչ բանով էին տարբերւում առաջիններից: Եւ որքան ռուս սուիններն թիւը աւելանում էր, բոլշեւիկները այնքան դառնում էին անզուսպ ու անհանդուրժող: Իրենցից զատ ո՛չ ոք իրաւունք չունէր օդ շնչելու: Իրենք ամէն ինչ էին — Երեւանի ապագանակութիւնը՝ ցեխ ու ոչնչութիւն:

Բոլշեւիկների առաջին գործը եղաւ Զէկայի կազմակերպումը: Նրան յատկացուեցին Ռոստոմի եւ կարճիկեան փողոցի անկիւնում երկու խոշոր շինութիւններ: Զէկայի նախագահութեան համար բռնագրաւուեց Խորհրդարանի փոխ-նախագահ Ա. Սահակեանի բնակարանը: Եւ սկսուեցին ձերբակալութիւններ: Առաջին բանտարկուողը եղաւ Հայ Սոցիալ—Դեմոկրատ կուսակցութեան կենտր. կոմիտէի անդամ Բաշխի Իշխանեանը: «Կոմունիստ»ը հանդիսաւոր կերպով յայտարարեց.— «Ձերբակալուած է յայտնի հակայեղափոխական Բ. Իշխանեանը»: Ապա բանտարկուեց խմբապետ Համազասպը: Հասարակութեան վրայ առանձնապէս ճնշող տպաւորութիւն թողեցին Համազասպի ձերբակալութեան մանրամասնութիւնները:



ARAM webaram.com

Համազասպը, որ վարում էր Բասար Գէչարի գօրամասի հրամանատարի պաշտօնը, Նոյեմբերի վերջերին Երեւանում էր եւ ծանօթ էր Էդպրանի վերջնագրին, այդ առթիւ կատարուած խորհրդակցութիւններին եւ ընդունուած որոշումին: Դեկտեմբերի 2-ին, երբ չատերը հեռացան Երեւանից, նա էլ մեկնեց դէպի Բասար Գէչար, այնտեղից Զանգեզուր անցնելու համար: Սակայն ճանապարհին, փախչելու մտադրութիւնը փոխելով յետ է դալիս ու պահւում է Երեւանի մօտակայ գիւղերից մէկում: Այստեղից նա դէմում է կուսակցական ընկերներին եւ հարցնում նրանց խորհուրդը իր անելիքի մասին: Ի միջի այլոց դիմել էր եւ ինձ: Ես վախենալով, որ նրան կը պատժեն Բազուի գործերի համար, պատասխանեցի որ անմիջապէս հեռանայ Հայաստանից եւ ո՛չ մի պայմանով չներկայանայ բոլշեւիկներին: Նոյն խորհուրդը տուել էին եւ ուրիշները:

Համազասպը միաժամանակ նամակ է գրում եւ բոլշեւիկ Ասխին, որը այժմ զինուորական կոմիսար էր: Համազասպը եւ Ասխը մի ժամանակ շատ մտերիմ ընկերներ են եղել: Ասխը նրան պատասխանում է մի շատ սիրալիր նամակով եւ մտերմական խօսքերով հրաւիրում է քաղաք «միասին աշխատելու համար»: Համազասպը հաւատում է եւ գալիս Ասխի մօտ, որը ընդունում է նրան գրկաբաց, համբուրում է եւ խոստանում լաւ պաշտօն տալ, բայց հէնց որ Համազասպը, ուրախ տրամադրութեան մէջ դուրս է գնում, անմիջապէս կարգադրում է ձերբակալել եւ բանտ դնել:

Երեւանում ընդհանուր սուգ պատճառեց Երեւանից հեռացած գործիչների բռնուելու լուրը: Դեկտ. 6-ին, Թիֆլիսի հանապարհի վրայ, Ղարաքիլիսա գիւղից ոչ հեռու ձերբակալուել էին մի խումբ աչքի ընկնող Դաշնակցական գործիչներ – Հ. Օհանջանեանը, Բժ. Ց. Տէր-Դաւթեանը, Արտ. Զիլինգարեանը, Կոր. Ղազարեանը, Վ. Նաւասարդեանը, Վ. Բարայեանը, Ա. Ամատունեաարեանը, Բժ. Ց. Մելիքեանը, Գ. Վարչամեանը եւ ուրիշներ – ընդամէնը 19 հոգի: Ձերբակալուածներից մի մասին բեռնակիր ինքնաշարժը լեցրած, միւսներին ոտքով բերին Երեւան:

Այս դէպքը աննկարագրելի ուրախութիւն առաջ բերեց բոլշեւիկների շարքերում: «Կոմունիստը» պրովոկացիոն լուրեր եւ յօդուածներ հրատարակեց: Փախստականներին մեղադրում էին պետական գոյքի գողութեան մէջ: Մի անգամ պրեցին, թէ բռնուածների մօտից դուրս է եկել 15 ֆունտ ոսկի: Ապա պրեցին, թէ մեծ քանակութեամբ պետական դրամ է բռնուել: Սկսեցին առաստպելական մեղադրանքներ ուղղել Դաշնակցականների հասցէին՝ օր աւուր կրկնե-



ARAM webaram.com

լով, թէ հարիւրաւոր միլիոններ են գողցուած:

Ես փոքձեցի փաստական հերքում ապել տալ «Կոմունիստ»ում: Հերքելը չատ հեշտ էր, որովհետեւ պետական գանձարանի հաշիւներից պարզ երեւում էր, թէ ում ի՞նչ գրամ էր տրուած: Իրենք բոլշեւիկներն էլ չատ լաւ գիտէին, ի հարկէ, որ ամբաստանութիւնները անհիմն էին, բայց այդպէս էր պահանջում իրենց կուսակցական չահը, պէտք էր Դաշնակցականներին խայտառակել ժողովրդի աչքին:

Իմ խնդրանքով ընկ. Հ. Տէրտէրեանը դիմեց «Կոմունիստ»ի խմբագիր եւ Լուսժողկոմ Ա. Յովհաննիսեանին, որը խոստացաւ հերքուածը հրատարակել իմ հերքումը, պայմանով, որ եթէ իմ գրածը ճիշդ դուրս չգայ, փոխած բնկերների փոխարէն ինձ դատեն: Ես համաձայնուեցի եւ ուղարկեցի հերքումը, բայց Ա. Յովհաննիսեանը խաբեց ու չտպեց: Ընդհակառակը, «յեղափոխական դատարան» ու Չէկան չատ աշխատեցին քրէական գործ յարուցանել մի չարք Դաշնակցական գործիչների դէմ, բայց քննիչների բոլոր ջանքերն ի դերեւ եկան. մեղադրական նիւթ չկար:

Բանտարկեալներին սկզբի օրերին պահեցին Ռորհրդարանի չէնքում, համեմատաբար տանելի պայմանների մէջ: Այդ փոխադրեցին կենտրոնական բանտը եւ օրէցօր ծանրացրին ռեժիմը: Ցունուարի սկզբներին, երբ Երեւան հասաւ Աթաբէկեանը, բանտարկեալների վիճակը գործաւ սարսափելի: Բացի ֆիզիքական տանջանքներից, ցրտից ու անօթութիւնից, ամէնքի դլխին, դամոկլեան սրի պէս, կախուած էր մահուան ապառնալիքը:

Քաղաքում հազար տեսակ լուրեր էին պտտում: Չէկայում բացայայտ կերպով խօսում էին դնդակահարութիւնների անհրաժեշտութեան մասին: Մահուան թեկնածուների անուններ էլ էին տալիս եւ միչտ առաջին թեկնածուն համարում էր Ա.րա. Զիլինգարեանը (Ռ. Դարբինեան), ապա՝ Ս. Մելիք Եօլչեանը, Համազասպը, Բ. Իշխանեանը, ու մի քանի վաճառականներ...

Այդ լուրերը, բնականաբար, յուզում էին բանտարկեալների ազգականներին ու մօտիկ մարդկանց: Ջղայնանում էր եւ քաղաքի ազգաբնակչութիւնը, որի յոյսերը այնպէս սարսափելի կերպով խորտակւում էին: Բայց բոլշեւիկներն իրենց լաւ էին դգում: Նրանց ուրախութեանը սահման չկար. խորտակելով «Դաշնակների» առեղծած դեմոկրատիկ հանրապետութիւնը՝ նրանք հաստատում էին «խորհրդային-սոցիալիստական պետութիւն»՝ կապկօրէն ընդօրինակելով Ռուսաստանի նեռսերը գործադրուող բոլոր փորձերը...



ARAM webaram.com

## «ՁԱԽ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ»

*Պէտք է անկեղծօրէն խոստովանուել, որ Դեկտ. 2-ին իշխանութիւնը բոլշեւիկներին յանձնելիս, մեզանից ոչ ոք չէր սպասում այդպիսի թեթեւամիտ վերաբերում բոլշեւիկների կողմից: Մեզ թւում էր, թէ նրանք կը կարողանան հասկանալ Հայաստանի բացառիկ փափուկ դրութիւնն ու մեր քայլի իսկական իմաստը եւ կ'աշխատեն առեղծել այնպիսի փոխյարաբերութիւններ, որոնք երկիրը չեն մղի քաղաքացիական կռուի դիրքը:*

*Ճիշդ է, հայ բոլշեւիկների անցեալը չատ էլ յուսատու չէր այդ տեսակէտից: Այդ նրա՛նք էին, որ Մայիսին ապստամբութիւն առաջ բերին Հայաստանի հիւսիսային սահմանների վրայ եւ ապրբէջանցիներին դրդռեցին Հայաստանի դէմ: Այդ նրանք էին, վերջապէս, որ օգնեցին Թուրքերին գրաւելու Կարսը եւ պայթեցնելու Հայաստանի անկախութիւնը:*

*Բայց – մոռացում էինք մենք – այն ժամանակ իշխանութեան ձգտում կար, իսկ չէ՞ որ այժմ իշխանութիւնն արդէն իրենց ձեռքին է, եւ մենք էլ անվերապահ պատրաստակամութիւն էինք ցոյց տալիս օգնելու նրանց: Մեզանից ոչ ոք աչք չունէր իշխանութեան, եւ նրանք պատճառ չունէին մեզ չհաւատալու:*

*Մեր համոզումն այն էր, որ հայ մտաւորականութիւնը պարտաւոր է առանց վարանումի օժանդակել բոլշեւիկներին, որովհետեւ առեղծուած պայմաններում խորհրդային իշխանութիւնն ունէր մի շարք առաւելութիւններ: Նախ՝ կարմիր բանակի աջակցութեամբ հնարաւոր կը լինէր դուրս բերել երկիրը արտաքին եւ ներքին պատերազմների չրջանից եւ աւելի հեշտութեամբ լուծել Հայաստանի սահմանների խնդիրը: Ապա՝ մտնելով խորհրդային պետութիւննե-*



ARAM webaram.com

րի չարքը՝ Հայաստանը դուրս կը գար կղզիացումից եւ ազատ ելք կ՚ունենար դէպի Սեւ ծով, Բագու ու Թուրքստան, ինչպէս նաեւ դէպի պարսկական չուկան: Հիւսիսային Կովկասից ու Թուրքստանի նեղուցներից կարելի կը լինէր բերել հաց ու զանազան ապրանքներ, ռուսական գործարանից առանալ զրամական օգնութիւն, Բագուից՝ նաւթ... Ո՞վ կարող էր հաւատալ, որ Թուրքստանը ինքն էլ մուրացկանի վիճակում էր եւ կարօտ նոյնիսկ Հայաստանի փչրանքներին... Եւ, վերջապէս, մեզանից ոմանց սրտին մօտ էր եւ բոլշեւիկների ընկերային–մշակութային գաղափարախոհութիւնը:

Մամուլից ու հրատարակուած տեկրէտներից զատ էլ չատ հրապուրիչ էր թւում նրանց չինարարութիւնը եւ չէր կարող չգրաւել սոցիալիստներին: Անշուշտ, ճարտարարուեստից եւ պրոլետարիատից զուրկ, դիւզացիական Հայաստանում անկարելի պիտի լինէր կիրարկել բոլոր այն կարգերը, որ բոլշեւիկները մտցնում էին Թուրքստանում. բայց – մտածում էինք – հայ կոմունիստներն իրենք էլ տարբերութիւն կը դնեն Թուրքստանի ու Հայաստանի միջեւ:

Այսպիսի մտորումներով էր, որ մենք աշխատում էինք համոզել ամէնքին լծուիլ գործի եւ ձեռք ձեռքի տուած նորեկ իշխանութեան հետ՝ ջանալ բարելաւելու երկրի տնտեսական ու կրթական վիճակը: Քաղաքական հարցերից, բնականաբար, մենք պէտք է մըտնայինք հեռու, որովհետեւ բոլշեւիկները այդ ասպարէզում ո՛չ մի դիջում չէին անի: Այս իմաստով էլ խորհրդակցելով մի քանի ընկերների հետ, ես կազմեցի ընկերներին ուղղուած մի ընդարձակ չրջաբերական, որի մէջ չեշտում էի անհրաժեշտութիւնը խիստ օրինապահութեան եւ հրաւիրում էի առանց յետին մտքերի օժանդակել բոլշեւիկներին:

Շրջաբերականը յանձնեցի ընկ. Հ. Տէրտէրեանին, որպէս զի նա տեսնուի տպարանների կոմիսար Աչ. Յովհաննիսեանի հետ եւ նրանից իրաւունք խնդրի տպագրելու: Յովհաննիսեանը առաջարկեց այդ չրջաբերականը հրատարակել «Կոմունիստ»ում, բայց առանալով մերժում՝ խոստացաւ տպել տալ առանձին: Երկար սպասեցինք, բայց պ. կոմիսարը այս անգամ էլ խաբեց: Մենք աշխատեցինք չրջաբերականի մտքերը ուրիշ միջոցով հասցնել երկրի զանազան կողմերը...

Ինչպէս տեսանք, Լէդրանի հետ կնքուած համաձայնութեամբ Հայաստանի Յեղկոմի մէջ պէտք է մտնէին եւ երկու «ձախ–դաշնակցականներ»: Հէնց առաջարկուած թեկնածուներից արդէն պարզ էր,



ARAM webaram.com

եւ Լէդրանն էլ շատ լաւ պիտէր, որ «ձախ» բառը այստեղ սոսկ ձեւ է, իսկ իրօք իշխանութեան մէջ մտնելու էին երկու դաշնակցականները: Ձեւը անհրաժեշտ էր պահպանել, – այդպէս էր բոլշեւիկեան մտայնութիւնը:

«Ձախ–Դաշնակցականների» խմբակը մեր կուսակցութեան ներսը պոյութիւն էր առել դեռ հայ–թրքական պատերազմից առաջ: Նա կազմուած էր Բագուից եկած մի քանի ուսանողներից ու բանուորներից: Առ հասարակ, Բագուից եկողները մեզ մօտ իրենց էին վերապահում «ձախութեան» տիտղոսը եւ շատ էին նեղանում, երբ իրենց այդ յատկութիւնը կասկածի տակ էր առնւում: Խմբակի անդամները, միայն իրենց էին համարում հեռեւողական սոցիալիստ, չէին հաւանում Դաշնակցութեան վարիչ շրջանների դործելակերպը եւ ուզում էին, որ Հայաստանում մտցուէին խորհրդային կարգեր: «Բիւրօ–կառավարութեան» հակաբոլշեւիկեան քաղաքականութիւնը համարում էին յեղափոխական:

Խմբակը մի որոշ ժամանակ մնացել էր դաղտնի: Նրա ոգին հանդիսանում էր Արհեստակցական միութիւնների վարչութեան նախկին նախագահ Հայկ Աւալեանը, մի լաւ ամենայնի քրէական տիպ, որ յայտնի էր իր կատարած թալաններով Շարուրում եւ որի դէմ դատական հետապնդում էր պատրաստուում: Այս խմբակին միացել էին եւ պարլամենտի մի քանի անդամներ – Ա. Օհանջանեանը, Զ. Եօլեանը, Հայկ Սարդսեանը եւ ուրիշները:

Նոյեմբերի վերջերին խմբակը մինչ որ դաղտնի յարաբերութեան մէջ է մտնում բոլշեւիկեան ներկայացուցչութեան անդամների, ապա եւ Լէդրանի հետ:

Ընդհանուր առմամբ, խմբակի անդամները իրենց շատ անարժան կերպով էին պահում կուսակցութեան մէջ եւ անպատիւ՝ հանդէպ բոլշեւիկների: Բոլշեւիկների առջեւ սաոր քծնութիւն ու ծառայական խոնարհութիւն, կուսակցութեան ներսը՝ դաւադիր նենդութիւն ու յոխորտանք: Դեկտ. 2–ին, բանտից արձակուած բոլշեւիկների ընդունելութեան ժամանակ նրանց ներկայացուցչի խօսած դեհերիկ ճառը ընդհանուր վրդովում էր յառաջ բերել հասարակութեան մէջ, իսկ նրանց բաց թողած երկու թռուցիկները դուրկ էին բոլորովին արժանապատուութեան դգացումից եւ լեցուն փողոցային հայհոյանքներով մեր կուսակցութեան հասցէին: Թռուցիկներն սաորագրուած էին՝ «Հայաստանի Ինաերնացիոնալ Ձախ Դաշնակցականների Խորհուրդ»: Երկրորդ թռուցիկը վերջանում էր այսպէս.

«Մենք միշտ ասել ենք եւ այժմ էլ ասում ենք ի լուր բոլորի,



ARAM webaram.com

որ միջազգային իմպերիալիզմի եւ համաշխարհային ռէակցիայի մէջ չէ, որ հայ աշխատաւորութիւնը պիտի փնտռէ իր փրկութիւնը, այլ միջազգային սոցիալիզմի եւ համաշխարհային յեղափոխութեան, որի մարմնացումն է յեղափոխական բանուորապետական Ռուսաստանը:

Զնայած ուշ, բայց մեր ասածը կատարուած է:

Այսօր նոր արեւ է բարձրանում մեր երկրի վրայ:

Երկար յեղափոխական պայքարից յետոյ, վերջապէս, մենք ընկնում ենք յեղափոխութեան գիրկը այն վստահ յուսով եւ ամուր գիտակցութեամբ, որ այդ յեղափոխութեան մէջ է հայ աշխատաւորութեան փրկութիւնը:

Մօմէնտը վճռական է:

Ընկերնե՛ր, դէպատ եղէք եւ կազմակերպուեցէք:

Սեղմենք մեր շարքերը – ուժեղացրէ՛ք յեղափոխական թափը՝ նշանաբան ունենալով «Աշխատաւորութեան համար, աշխատաւորութեան հետ եւ նրա միջոցով»:

Կորչի՛ հակայեղափոխութիւնը եւ ռէակցիան:

Կեցցէ՛ համաշխարհային յեղափոխութիւնը եւ նրա առաջնորդ բանուորա-պետական Ռուսաստանը:

Կեցցէ՛ յեղափոխական խորհրդային Ռուսաստանը եւ նրա կարմիր բանակը:

Կեցցէ՛ երրորդ ինտերնացիոնալը»:

Կատարեալ բոլշեւիկեան ժարգօն:

Բոլշեւիկների երեւան գալուց յետոյ, ոչ-կոմունիստ տարրերից միայն «ձախ-Դաշնակցականները» էին կարողանում ժողովներ գումարել, այդ պատճառով ընկերներից շատերը մտան անոնց շարքերը եւ աշխատեցին կազմակերպել եւ առողջ հունի մէջ դնել այդ հոսանքը: Ոմանք հաւատում էին, որ բոլշեւիկները կը վաւերացնեն այդ խմբակը եւ իրաւունք կը տան ապատ գործելու, որով հնարաւոր կը լինէր ունենալ սեփական թերթ եւ վայելել օրինաւոր կուսակցութեան բոլոր առաւելութիւնները: Լէդրանի հետ կնքուած համաձայնութիւնն էլ անհրաժեշտ էր դարձնում այդ հոսանքի օգտագործումը:

Նախկին պարլամենտի դահլիճում տեղի ունեցան «ձախ»երի մի շարք անդամական եւ հրապարակային ժողովներ, որտեղ խօսւում էր քաղաքական մօմէնտի եւ «ձախ-Դաշնակցութեան» հետեւելիք ուղղութեան մասին: Այդ ժողովներում մշակուեց այն ծրագիր-նախա-


ARAM webaram.com

պիծը, որ յետոյ յանձնուեց Ցեղկոմին վաւերացնելու համար:

Ծրագրի հիմնական սկզբունքները հետեւեալներն էին.— «Ձախ–Դաշնակցութիւնը» յեղափոխական սոցիալիզմի կուսակցութիւն է: Նա ընդունում է Խորհրդային իրաւակարգ եւ յարում է Երրորդ Ինտերնացիոնալին: Անկախ եւ Միացեալ Հայաստանի պահանջը մնում է անխախտ հայ աշխատաւորութեան համար: Հողի համալնացում: Ընկերային բարեփոխութիւնները պէտք է յարմարցուին Հայաստանի ուրոյն պայմաններին: – Այս սկզբունքներով էլ սկսուեց կազմակերպական աշխատանքը մայրաքաղաքում ու գաւառներում:

Մինչ «Ձախ–Դաշնակցականները» կազմակերպւում ու բանակցում էին կառավարութեան հետ իրենց դոյութիւնն օրինականացնելու եւ Դրոյին ու Տէրտէրեանին Ցեղկոմի մէջ մտցնելու մասին, բոլշեւիկների շարքերում ուժեղ վէճ էր տեղի ունենում նոյն հարցի շուրջ: Զահել բոլշեւիկները անհաշտ էին եւ ո՛չ մի դնով չէին համաձայնում ճանաչել «ձախ–դաշնակցականներին»: Նրանց բերանն էր Աւխը, որը պնդում էր, թէ «ձախ» եւ «աջ» դաշնակցական չկայ, – բոլոր էութեան երկուսն էլ նոյնն են: Ովքեր ընդունում են խորհրդային կարգեր, պէտք է ձուլուեն կոմունիստների հետ: Սոցիալիստական Հայաստանում միայն կոմունիստները դոյութեան իրաւունք ունեն:

Ձախաւոր հոսանքը թոյլ էր. այդ պատճառով էլ յաղթութիւնը մնաց անհաշտներին. Ցեղկոմը մերժեց օրինականացնել «Ձախ–Դաշնակցութիւնը», որով համագործակցութեան վերջին ճիգն էլ ջուրն ինկաւ: Այնուհետեւ «ձախ»երից մի չնչին խմբակ միացաւ կոմունիստներին, իսկ մեծ մասը՝ հիասթափուած ու դժգոհ բոլշեւիկներից՝ մնաց Դաշնակցութեան մէջ եւ հետագային զօրաւոր դեր ունեցաւ հակաբոլշեւիկեան պայքարի մէջ: «Ձախ–Դաշնակցականների» չարժումը վերջացնելու համար տեղի ունեցաւ ընդհանուր ժողով, եւ նախագահ Ա. Օհանջանեանը, որ խիստ մութ դեր էր խաղացել այդ հոսանքի զոյութեան առաջին շրջանում, մի վայելուչ ճառով նշանակեց բոլշեւիկների ամբող քաղաքականութիւնը եւ յայտարարեց «Ձախ–Դաշնակցութիւնը» լուծուած:

Չնայած բոլշեւիկների ցուցադրած անհաշտութեան՝ մենք յայտնեցինք Ցեղկոմին, որ բոլոր դաշնակցականները անհատաբար իրենց դնում են իշխանութեան տրամադրութեան տակ եւ պատրաստ են կատարելու ամէն տեսակ աշխատանք: Եւ մեզանից ամանք հրաւիրուեցին պաշտօնի: Այսպէս, Հ. Տէրտէրեանը, որ Ցեղկոմի անդամ պէտք է լինէր, կարգուեց պետական դանձարանի կոմիսար –



ARAM webaram.com

մի ըստ ամենայնի աննշան տեղ: Ց. Քալաշնունուն նշանակեցին հաղորդակցութեան կոմիսարութեան խճուղային բաժնի վարիչի օգնական: Լ. Շանթը, Ն. Աղբալեանը, Ս. Տիգրանեանը, Ա. Խոնդկարեանը (էսէր) եւ ես դարձանք արդարադատութեան կոմիսարութեան բառարանային յանձնաժողովի անդամներ, Վ. Մինախորեանը (էսէր) երդուեալ պաշտպան...

Բոլորն ալ երրորդական ու չորրորդական պաշտօններ, որով բոլշեւիկները, կարծես ուզում էին ծաղրել ու վիրաւորել մեզ... Իսկ պատասխանատու, դիտութիւն ու փորձառութիւն պահանջող տեղերի վրայ դնում էին ռէէտ ու ողորմելի կոմունիստներին, մեծ մասամբ պատանիներ, որոնք ոչ պատրաստութիւնն ունէին պետական գործեր վարելու եւ ոչ էլ դիտակցութիւն:


ARAM webaram.com

# ԴՐՈՅԻ ԱՔՍՈՐԸ

Հակառակ հայ մտաւորականութեան ցոյց տուած անվերապահ պատրաստակամութեան՝ զործակցելու բոլշեւիկներին, վերջիններս դիտակցօրէն յետ էին մղում նրանց եւ մինչեւոյն ժամանակ միջոցներ էին ձեռք առնում չէզոքացնելու ժողովրդի վրայ ազդեցութիւն ունեցող գործիչներին: Ամանց ձերբակալում ու բանտն էին նետում, ուրիշներին ուղարկում աքսոր: Այս վերջիններն էլ ընկաւ եւ Դրօն:

Դեկտեմբերի 2–ից յետոյ, մինչեւ Ցեղկոմի գալն ու իշխանութիւնն իր ձեռքը առնելը, նա էր երկրի իրական ոյժի տէրը. լատիշն սպաներն ու մարտիկները համբուած էին նրա շուրջը: Իրրեւ դաշնակցական, նա իր յետեւն ունէր կուսակցութիւնը: Իրրեւ յեղափոխական գործիչ, նա վայելում էր լայն ժողովրդական հեղինակութիւն: Նրա ձեռքի տակ էին 3000 հոգուց աւելի առողջ ու մարտունակ զինուորներ: Բոլշեւիկները չատ չուտով համոզուեցին, որ Դրօն մինակ անհամեմատ աւելի ազդեցութիւն ունէր երկրում, քան ամբողջ Ցեղկոմը իր Չէկայով ու կոմունիստական կազմակերպութեամբ: Բայց, փոխանակ այդ խոշոր բարոյական ոյժը իրենց հետ կապելու եւ զարձնելու իրենց իշխանութեան յենարան, չափազանց ջղայնանում էին եւ միջոցներ որոնում նրանից ազատուելու:

Պէտք է ասել, որ Հայաստանում ոչ ոք այնքան համոզուած եւ անկեղծ պաշտպան չէր բոլշեւիկների, որքան Դրօն: Նրան չատ չէին հետաքրքրում բոլշեւիկների ընկերային ծրագիրները ու գործերը. նրա համար ռուսն էր կարեւորը. բոլշեւիկները ռուսներն էին. յանձին բոլշեւիկների՝ Ռուսաստանն էր գալիս: Նրա կարծիքով հայ ժողովրդի ապահովութիւնն ու հայկական հարցի լուծումը ամբողջապէս կախուած էին Ռուսաստանից: Նա համոզուած էր, որ Թուրքե-



ARAM webaram.com

րի ու բոլշեւիկների միջեւ մօտալուտ ընդհարումն անխուսափելի է. եւ կարմիր բանակը չահագրգռուած պիտի լինի հայերի բարեկամութիւնն ունենալու: Նա քիչ էր տեղեակ բոլշեւիկների արեւելեան քաղաքականութեան եւ չէր հաւատում, որ Թուռանատանը իր քաղաքական հաշիւների համար կը զոհի հայերին: Եւ այդ պատճառով նա նայում էր առանց տատանուելու բոլշեւիկների տիրապետութեան վրայ:

Սակայն, ուրիշների հետ, նա եւս չատ չուտով տեսաւ, որ իր ապատումները չիրականացան: Հայ կոմունիստների խելագար արարքները այնչափ յուզում էին նրան, բայց եւ այնպէս նա չէր մտածում դիմադրութեան կամ բողոքի մասին: Նա սրտանց հաւատում էր, որ չուտով «երիխաները» տեղ կը դան «կարգին բոլշեւիկներ», եւ դրութիւնը արմատապէս կը փոխուի:

Դրոյին հեռացնելու չշուկները տարածուեցին հէնց Յեղկոմի գալու առաջին օրերից: Հայ կոմունիստներն անյարմար էին համարում նրան թողնել Հայաստանում. ի՞նչ կ'ասեն ապրիլեանցի ընկերները, որոնք չօշափելի փաստեր էին ապատում՝ ապացուցանող, որ իրենք տարբերւում են «Դաշնակ»ներից: Թուրքերի հետ բարեկամութիւնն ամրացնելու տեսակէտից էլ անկարելի էր «մաուզէրիստ» Դրոյին պահել Հայաստանում: Բայց այդ բոլշեւիկները ներքին վախ էին զգում Դրոյի ներկայութիւնից եւ վայելուչ ձեւ էին փնտռում նրան հեռացնելու, միաժամանակ աստիճանաբար խլելով նրա ձեռքից իրաւունքները եւ հետզհետէ կարելով նրա կապը զօրամասերի հետ:

Վայելուչ ձեւ գտնուեց, հէնց որ Հայաստան բերուած ռուս զօրքերը համարուեցին բաւարար օրէնք ըմբոստացում կամ դիմադրութիւն ճնշելու համար: Յունուարի սկիզբների 11-րդ զօրաբանակի հրամանատար Հէկկէրը, ուղիղ հեռագրաթելի մօտ կանչելով Դրոյին, յայտնեց նրան իր համակրանքն ու ողջոյնները ու առաջարկեց գալ իր մօտ Բագու «գեկուցում ներկայացնելու համար»: Ամէնքի համար պարզ էր այդ «հրաւէրի» իմաստը: Դրօն ինքն էլ հասկացաւ, որ իրեն ուզում են դուրս հանել Հայաստանից, բայց եւ այնպէս յայտնեց իր համաձայնութիւնը: Այդ հրաւէրը նրա վրայ չատ ծանր ազդեց, նա զգաց, որ իր բոլոր յոյսերը օդն են ցնդում, օճառի պղպջակների պէս: Մի յոյս էր միայն մնացել. նա դեռ ապատում էր, որ Հէկկէրը կամ Տրօցկին իր գեկուցումները լսելուց յետոյ, կը միջամտեն եւ վերջ կը տան հայ կոմունիստների անխորհուրդ քայլերին: Այդ պատճառով աշխատում էր առատ նիւթ հաւաքել եւ հարուստ փաստերով հիմնաւորուած գեկուցում կազմել Հայաստանի


ARAM webaram.com

քաղաքական ու ռազմավիտական նշանակութեան մասին:

Երեւանում ամէն ոք համոզուած էր, որ Բաքում Դրոյի դլուխը կ'ուանեն: Շատերը խորհուրդ էին տալիս նրան չդնալ ու թաքնուել: Այնպիսի խոհեմ ու պրոյշ մարդիկ, ինչպէս Ց. Քաջազնունին, համոզուած էին, որ Դրօն Ադրբէյջանում ողջ չի մնայ եւ պնդում էին, որ չենթարկուի Հէկկէրի հրամանին ու պահուի:

Դրօն վճռական կերպով մերժեց նման խորհուրդները: Նա պատրաստում էր ենթարկել իր անձը վտանգի եւ առիթ չտալ քաղաքական կռիւների: Ի հարկէ, շատ հեշտութեամբ կարելի էր խուսափել Բաքու ճամբորդելուց եւ, ուրիշների պէս, պահուել կամ անցնել արտասահման. բայց նա իրաւամբ մխիթարում էր, որ իր այդ քայլը կը նկատուի իբրեւ մարտահրաւէր եւ պատճառ կը դառնայ ծանր ազէտների: Եւ, իրօք, այն ժամանակուայ պայմաններում Դրոյի անհնազանդութիւնը անխուսափելի կերպով պիտի սրէր յարաբերութիւնները եւ երկիրը ձգէր անուղղելի փորձութիւնների դիրքը:

Երբ Դրօն ուզեց իմանալ իմ կարծիքը, ես էլ խորհուրդ տուի նրան ենթարկուել Հէկկէրի հրաւէրին եւ աշխատել, առանց Բաքում մնալու, անցնել Մոսկուա: Միեւնոյն ժամանակ պատրաստակամութիւն յայտնեցի միանալու իրեն, եթէ այդ անհրաժեշտ նկատուէր: Մենք պայմանաւորուեցինք, որ Բաքուից նա կը կանչի ինձ ուղիղ հեռագրաթելի մօտ եւ, եթէ պէտք դտայուի իմ ներկայութեան, ես էլ կը մեկնեմ Բաքու կամ Մոսկուա: Մեր երկար մտահոգութիւնն էլ նոյնն էր. վատահութիւն ներշնչել բոլշեւիկներին, որ մենք իսկապէս չենք ձգտում իշխանութեան եւ ամէն գնով աշխատում ենք Հայաստանը պահել խաղաղ եւ քաղաքացիական կռուից ազատ:

Եւ այսօր էլ ինձ թւում է, որ այն ժամանակուայ մեր տեսակէտը ճիշդ էր, եւ մեղքը մերը չէ, որ անկարելի եղաւ քաղաքացիական կռիւներից խուսափել...

Դրօն Երեւանից մեկնեց 1921 թ. Յունուարի 10–ին, 12 ոգիների հետ:

Արեւոտ պայծառ օր էր, բայց քաղաքը կարծես լաց էր լինում: Ձաւարեան փոզոյի բերանը, Դրոյի բնակարանի առջեւ, խըտնրւել էր ահագին բազմութիւն՝ լուռ, դլխիկոր ու չուարած: Ընկերներն ու բարեկամները եկել էին «վերջին» մնաս բարով ասելու: Շատերն արտասուում էին: Տանիքների վրայ լեցուել էին երեխաներ եւ կանայք եւ վախեցած աչքերով նայում էին Դրոյի պատուհաններին...



ARAM webaram.com

Երբ Դրօն իր գէնքի եւ զաղափարի ընկերների հրաժեշտից սաստիկ ազդուած ու յուզուած դուրս եկաւ անից եւ նստեց սահնակը, մի ելեկտրական հոսանք անցաւ բազմութեան միջից: Հէնց որ սահնակը ճոճուեց ու շարժուեց իր ձեան վրայով, հազարաւոր ըղձուխները, յանկարծ, մերկացան եւ ամէնքի բերանից դուրս թռաւ սրտառուչ.

— Բարի՛ ճանապարհ... Բարի՛ վերադարձ... Աստուած քեզ պահի՛...

Սահնակը արագութեամբ չուռ եկաւ դէպի Աբովեան պողոտան եւ չքացաւ բազմութեան աչքից, բայց մարդիկ դեռ երկար մնացին իրենց տեղը, ապա ցրուեցին անչշուկ եւ անհանգիստ: Սա մի անկազմակերպ ու տարերային բողոք էր բոլշեւիկների դէմ, մի ժողովրդական ինքնաբուխ ցոյց, որից Ցեղկոմը չատ էր աշխատում խուսափել: Այդ ցոյցը հեռագրային այնքան էլ աժան չնստեց մահնակցողներից չատերի վրայ:

Երբ ես տուն էի գնում, քաղաքապետարանի կողմից լսում էին պինուորական նուագախումբի հնչիւնները: Բոլշեւիկները երաժըշտութեամբ ղրաղեցնում էին քաղաքի պինուորներին, որպէս զի սրանք ժամանակ չունենան մտածելու «հակայեղափոխական դաշնակ»ի աքսորի մասին...

Այնուհետեւ Դրօն Բաղուից մի անգամ կանչեց ինձ ուղիղ հեռագրաթելի մօտ եւ հաղորդեց, թէ իրեն 11-րդ բանակի հրամանատարը լաւ է ընդունել, թէ հէկկէբը միջոցներ է ձեռք առնում Զանգեզուրի հարցը խաղաղութեամբ լուծելու, աւելացնելով միաժամանակ, որ, եթէ խաղաղութեամբ կարելի չլինի հպատակեցնել, 11-րդ բանակը պատրաստւում է պինուորական գործողութիւնների դիմելու: Ապա յայտնելով, որ ինքը չուտով մեկնելու է Մոսկուա, հարցնում էր, թէ արդեօք ես էլ չե՞մ կամենայ ճանապարհուել: Ես պատասխանեցի, որ եթէ իմ դալս օդտակար էր, պատրաստ եմ մեկնելու եւ խնդրեցի ինձ տրամադրել տեղափոխութեան միջոցներ...

Այնուհետեւ երկար ժամանակ Դրոյից տեղեկութիւն չեկաւ: Հազար ու մի լուրեր էին պտտում: Մէկ ասում էին, թէ նա նշանակուած է Դաղստանի բոլշեւիկեան զօրքերի հրամանատար: Մէկ պնդում էին, թէ գնդակահարուած է Նարդէն կղզում: Ուրիշները «ամենաստոյգ աղբիւրից» գիտէին, որ նա Զանգեզուր է անցել: Ոմանք «տեսել էին» նրան Մոսկուայի ճանապարհին... Շատ ուշ միայն, զարտուղի միջոցներով, կարողացանք ճշդել, որ նա իրօք,


ARAM webaram.com

*ողջ–առողջ հասել է Մոսկուա, բայց թէ ի՞նչ էր անում այնտեղ, չգիտէինք։*

*Մի բան միայն պարզ էր, որ նրա ապաստանները չէին արդարացել, այլապէս նա հնարաւորութիւն կ՚ունենար իմացնելու։ Բազուն ու Մոսկուան էլ համամիտ էին Հայաստանում կատարուող բռնութիւններին...*



ARAM webaram.com

# ՏՈՊՐԱԿԻ ՄԷՋ

Դրոյի գնալուց յետոյ Հայաստանի մթնոլորտը էլ աւելի թանձրացաւ ու դարձաւ անտանելի: Դրոյից բոլշեւիկները որոշ չափով քաշւում էին: Նրան դիմում էին քաղաքացիները ամէն անգամ, երբ անիրաւութիւն էր գործւում, եւ նրա միջամտութիւնները երբեմն օգնում էին:

Դրոյի հեռանալով՝ Հայաստանը յանձնուեց Ամբարէգեանին եւ Ալիխին, որոնք ամբողջ թափով սկսեցին «զարգացնել քաղաքացիական կռիւը» եւ «խորացնել բանուորա-գիւղացիական յեղափոխութիւնը»:

Հայաստանի իսկական տէրերը այս երկու խելագարներն էին՝ Ամբարէգեանն ու Ալիխը: Կասեանը, որին իր ընկերները հեգնանքով անուանում էին «Սարկաւագ», Մռաւեանը եւ, առհասարակ, խոհեմութեան կուսակիցները խրտուիլակներ էին լոկ եւ չատ քիչ ազդեցութիւն ունէին կոմունիստների չարքերում: Ռուսաստանի զանազան ծայրերից Հայաստան թափուող լակոտ-լուկասները հիանում էին Ամբարէգեանի վճռականութեամբ եւ Ալիխի խուժանավարութիւններով եւ այժ էին տալիս նրանց խաղութիւններին:

Այս հոսանքը քաջալերութիւն էր գտնում եւ Ազրբէյջանից, որի վարիչները մեծ ազդեցութիւն ունէին Երեւանի գործերի վրայ: Ազրբէյջանցիների պահանջով էր, որ աւելի եւ աւելի սաստկանում էին հալածանքները Դաշնակցականների դէմ: Նոյն Ազրբէյջանցիներին դիւր գալու համար էր, որ հայ կոմունիստները Հայաստանի Ցեղկոմի անդամ նշանակեցին Մուսթաֆա Քեմալի գործակալ Թուրք ապայ Սուլէյման Նուրիին:

Այս վերջինը վարում էր Հայաստանի արդարադատութեան



ARAM webaram.com

նախարարի պաշտօնը եւ եկաւ փոխարինելու յայտնի կոմունիստ Ս. Բաղդասարեանին, որը, մի քանի օր միայն արդարադատութեան կոմիսարի պաշտօնը վարելուց յետոյ, չկարողացաւ հանդուրժել Հայաստանում տիրող մթնոլորտին, եւ շտապեց հեռանալ Թուրքաստան: Սուլէյման Նուրին, որ ո՛չ հայերէն գիտէր եւ ո՛չ ռուսերէն, բնականաբար, շատ քիչ բան էր հասկանում Հայաստանի դատաստանական գործերից եւ ուրիշ շատ պրպտուած էր լրտեսութեամբ եւ Թուրքերին տեղեկութիւններ հաղորդելով:

Այդ բանը գիտէին իրենք բոլշեւիկները, բայց համակերպւում էին. այդպէս էին ուզում պղրէջանցի ընկերները...

Բոլշեւիկներին շատ էր պրպտեցնում «հակայեղափոխութիւնը»: Նրանք համոզուած էին, որ «Դաշնակ»ները հանգիստ չեն նստած եւ «գաւեր» են լարում «բանուորա-գիւղացիական» իշխանութեան դէմ: Նրանց առանձնապէս յուզում էր Զանգեզուրը, որի մասին հեքիաթային լուրեր էին տարածւում ժողովրդի մէջ: Եւ որքան բոլշեւիկեան ռեժիմը խստանում էր, այնքան Զանգեզուրի հմայքը բարձրանում էր ժողովրդի աչքին:

Երեւան լուրեր էին հասնում, որ Դեկտեմբերի վերջերին Տաթեւում ինչ որ համագումար է տեղի ունեցել, որը յայտարարել է Զանգեզուրը անկախ եւ կազմել է սեփական կառավարութիւն:

Բոլշեւիկ ճառախօսները միտինգներում պնդում էին, որ այդ ամէնը արդիւնք է «հայ ազգի գահիճ Ռուբէն փաշայի աւանդութիւնների», թէեւ շատ լաւ գիտէին, որ Զանգեզուրի կառավարութեան նախագահը ոչ թէ Ռուբէն Տէր-Մինասեանն էր, այլ զանգեզուրցի Գէղեան Տէր-Մինասեանը: Աւելի ամէն տեղ յայտարարում էր, որ «գահիճ Ռուբէն փաշան» սպանել է տուել Աշոտ-Մելիք-Մուսեանին, որը գնացել էր՝ Զանգեզուրը Խորհրդային Հայաստանի իշխանութեան ենթարկելու. թէեւ նրան յայտնի էր, որ Մելիք-Մուսեանը ինքնասպանութիւն էր գործել Գորիսի հիւանդանոցում, քառասուն աստիճան տաքութեան մէջ եւ թողել էր այդ քայլի պատճառները բացատրող մի նամակ:

Բոլշեւիկները յամառօրէն լուրեր էին տարածում նաեւ, որ, իբր թէ, Թիֆլիսում կազմակերպւում է «հակայեղափոխութիւն» Խորհրդային Հայաստանի դէմ: Աւելի միտինգներում յայտարարել էր, որ Թիֆլիսում տեղի է ունեցել Դաշնակցականների խորհրդաժողով, որոշելու համար կուսակցութեան վերաբերումը դէպի Խորհրդային Հայաստանը եւ որ այդտեղ, իբր թէ, առաջացել է երկու հոսանք. մի հոսանքը Ս. Աբրահամեանի եւ բժ. Բաղդասարեանի գլխ-



ARAM webaram.com

խաւորութեամբ պաշտպանել է բոլշեւիկների դէմ անհաշտ պայքարելու ծրագիրը, միւսը՝ Կարին Ղազարեանի առաջնորդութեամբ կողմնակից է եղել համագործակցութեան բոլշեւիկների հետ: Զայների մեծամասնութեամբ անցել է առաջին տեսակէտը, եւ այդ առթիւ ժողովում, իբր թէ, առաջ է եկել կռիւ, որի ժամանակ «աջ–Դաշնակ»ները սպանել են «ձախ–Դաշնակ» Ղազարեանին: Այսպիսով մի տեղ «աջ–Դաշնակ»ները սպանում են «ձախ–Դաշնակ» Մելիք Մուսեանին, մի ուրիշ տեղ Կարին Ղազարեանին:

Ընդհանուր եղրակացութիւնը պարզ էր.— «Դաշնակցութիւնը քայքայուել է, եւ Դաշնակցականները փոխադարձ ոչնչացումով են պրազուած: Սրանից էլ հրապուրիչ վիճակ էլ ո՞րտեղից կարող էր ճարուել հայ կոմունիստների համար...

Ժողովրդի մէջ խօսւում էր նոյնպէս, որ Դեկտեմբեր 2–ից յետոյ «արտասահմանի հակայեղափոխականները» Պարիզում կազմել են Հայաստանի նոր կառավարութիւն Պօղոս Նուպարի նախագահութեամբ եւ Ա. Ահարոնեանի մասնակցութեամբ, որ այդ կառավարութիւնը Դաշնակիցներից առացել է խոշոր գումարներ ու Անգլիայի զեկավարութեան տակ բանակ էր կազմակերպւում Հայաստանի նուաճման համար, եւ որ միեւժամանակ, Թումանեանական կառավարութիւնը պատրաստակամութիւն էր յայտնել տրամադրելու մի զօրաբանակ, Հայաստանը ազատելու նպատակով: Նոյնիսկ մի օր Երեւանում «առոյգ տեղեկութիւն» առացուեց, որ Գ. Նորատունկեանը արդէն Անգորայում էր եւ բանակցութիւններ էր վարում Մուսթաֆա Քեմալի հետ, եւ որ այդ առթիւ Ալեքսապոլի փէշերին ապրող Սասունցիները պատրաստւում էին յարձակուելու Երեւանի վրայ եւ առպաղելու բոլշեւիկներին: Իսկ մի առաւօտ շնչասպառ մօտս եկաւ մի երիտասարդ եւ յայտնեց, որ ինքը «իր սեփական աչքերով տեսել է», թէ ինչպէս բոլշեւիկները խուճապով իջեցրել են կառավարութեան շէնքից կարմիր դրօշակը եւ պատրաստւում են փախչել քաղաքից: Ինքը «տեսել» էր նոյնպէս որ կոմիսար Ոսկանեանը ինքնաշարժով փախել է Ախուռեանի ուղղութեամբ...

Քաղաքի ապրուստի պարագաները ապրում էր նման անհեթեթ լուրերով: Դրան այժ էին տալիս եւ այն արհամարհական հեռագիրները, որ Անգորայի կառավարութիւնը ուղարկում էր Երեւան եւ մերժում պարզել Ալեքսանդրապոլը: Ո՞րտեղից էին դուրս գալիս այդ լուրերը, ո՞վ էր յօրինում եւ ի՞նչ նպատակով էին բաց թողնւում: Ամէն պարապի տակ հասարակութիւնը հաւատում էր նրանց եւ ամէն գիշեր պահակում էր այն յուսով, որ յաջորդ առաւօտ «մի բան


ARAM webaram.com

կը լինի», մի հրաչք կը կատարուի, մի տեղից օգնութիւն կը հասնի: Բայց օգնութիւն չկար ու չկար:

Ընդհակառակը, բոլշեւիկները չափազանց ջղայնանում ու պայթանում էին այդ լուրերից: «Կոմունիստ»ը հակայեղափոխական ու խորհրդային կարգերի թշնամի էր յայտարարում բոլոր թրքահայերին եւ պրոլետարիատի համերաշխութեան կոչ էր տալիս նրանց դէմ: Աւելի հայհոյալից ու ջարդարար լեզու էր գործածում Դաշնակցականների հասցէին: «Ֆիդիքական մա՛հ Դաշնակցութեան» — այս էր բոլշեւիկների կարգախօսը:

Եւ չուտով երկրում առեղծուեց գժոխային դրութիւն: Անկարելի էր շնչել: Մարդ խեղդւում էր ու բարոյալքւում:

Իմ առաքելութիւնները Ցեղկոմի նախագահ Կասեանի, Զեկայի պետ Ամաթրէդեանի, Աւխի, Մռաւեանի եւ այլոց հետ դիւրացնելու համար որ իրենց քաղաքականութիւնը երկիրը տանում է դէպի քաղաքացիական կռիւ, դէպի քայքայում՝ ոչ մէկ ազդեցութիւն արին նրանց վրայ: Բոլշեւիկները անուղղելի էին:

Հայաստանի ամբողջ տարածութեան վրայ բոլորովին մեռաւ ազատ միտքն ու հասարակական կեանքը: Բոլշեւիկեան միտինգներից դատ չկար ո՛չ մի հաւաքոյթ: Մարդիկ, նոյն իսկ ոճներ առթիւ, վախենում էին միմեանց մօտ գնալ: Մամուլը ներկայացուած էր «Կոմունիստ», «Ազգատ Գիւղացի» ու «Կարմիր Զինուոր» անթոմանգակ ու ոգորմելի հայհոյաթերթերով, որոնք վանկցում էին պատերին եւ Դաշնակցականների գլխին թափուած ջղագար լուտանքներից ու կոմունիստական անհամ յօդուածներից դատ ոչինչ չէին պարունակում: Տեղական լուրեր գրեթէ չէին տպւում, իսկ Մոսկուայի ռադիոյի լուրերին նոյն իսկ իրենք՝ բոլշեւիկները չէին հաւատում: Հանրային միտքը խեղդուեց, մեռաւ: Անհատական կարծիք ունենալը, եւ մանաւանդ, արտայայտելը, արգիլուեց: Ամբողջ երկիրը եւ, առանձնապէս մայրաքաղաքը, առնուեց խիստ լրտեսութեան տակ:

Լրտեսութիւնը պարտադիր դարձուեց բոլոր կոմունիստների համար: Նոյն իսկ աշակերտ-աշակերտուհիներից կազմուեցին լրտեսական խմբեր, որոնք պարտաւոր էին Զեկային տեղեկութիւններ հաղորդել ո՛չ միայն իրենց ընկերների եւ ուսուցիչների, այլ եւ ծնողների եւ ազգականների «հակայեղափոխական» զազափարների ու քայլերի մասին: Ըստ բոլշեւիկեան բարոյականութեան, որին պէտք է մատնէր հօրը, քոյրը՝ եղբօր: Կասկածի թոյնը մտաւ ընտանիքների մէջ: Հաւատն ու փոխադարձ վստահութիւնը վերացուեց: Զեկայի համատարած լրտեսութեան տակ՝ երեւանը կծկուեց ու խեղճացաւ:



ARAM webaram.com

երգը, զուարթ խօսքը, երեւանցուն յատուկ ուրախութիւններն ու քէֆերը ի սպառ մեռան, եթէ հաշուի չառնենք բոլշեւիկների սարքած պինարրուքները: Կեանքը դարձաւ անտանելի: Եղան ինքնասպանութիւններ: Ցիշեմ մեր ծերունի գօրավար Փիրումեանին, որ քաղաքային այգում, օրը ցերեկով, առջեւից վերջ առեց իր կեանքին՝ ասելով, թէ ինքը ամօթ է համարում այս վիճակում ապրելը...

Հայաստանը վատառօրէն յանձնուեց Զեկայի խելագար վարիչի կամայականութեան: Բոլշեւիկների տիրապետութեան առաջին օրերին «իրապէկ մարդիկ» հաւատախացնում էին, որ Ա.Թաթրէկեանը երեւան չի գալու, իսկ ամանք պնդում էին, թէ որ գալու էլ լինի, Հայաստանում նա չի գործադրի այն գազանութիւնները, ինչ որ արել էր ուրիշ տեղեր: Շուտով, սակայն, յայտնի եղաւ, որ նա գալիս է եւ Համառուսական Զեկայից ունի ամենալայն լիազօրութիւններ «հակայեղափոխականութեան դէմ կռուելու համար»:

Ա.Թաթրէկեանը էջմիածնեցի մի երիտասարդ էր, Մոսկուայի համալսարանի ուսանող: Նա ծագում էր թոքախտաւորների եւ հոգեկան հիւանդների մի ընտանիքից եւ ինքն էլ թոքախտաւոր էր ու անբօրմալ: Պատերազմի ընթացքում ծառայել էր Կազաքների Միութեան էջմիածնի դրասենեակում եւ պատկանում էր Ռուս Սահմանադիր–Ժամկամարների կուսակցութեան: Յարիւրի տապալումից յետոյ, նա ոխերիմ հակառակորդ էր յեղափոխութեան եւ մխիթարնեբում պաշտպանում էր այն կարծիքը, թէ հայոց ապագին տեսակէտից միապետական Ռուսաստանի դոյութիւնը աւելի օգտակար էր: Շուտով հեռացաւ Հայաստանից եւ բոլշեւիկեան յեղաշրջումից յետոյ, յանկարծ, երեւան եկաւ Հիւսիսային Կովկասում, իբրեւ թունդ կոմունիստ եւ Զեկայի ամենահոլու կամակատարներից մէկը:

Նա յատկապէս յայտնի դարձաւ իր վայրագութիւններով Պեատիգորսկում, ուր մի անգամից սպանեց 76 բարձրաստիճան պաշտօնեաներ ու զօրավարներ, որոնց թւում եւ բուլգար նշանաւոր զօրավար Ռադկո Դմիտրիեւին: Երբ հարկաւոր էր լինում առանձնապէս զարշելի մի ոճրագործութիւն կատարել, Զեկան նրան էր առաջ քաշում, եւ նա իր անզուսպ արիւնաչտութեամբ ու հիւանդ խղճով սարսափեցնում էր ամէնքին: Հիւսիսային Կովկասի կազակները ահով ու նողկանքով էին արտասանում նրա անունը:

Յունուարի սկզբին հասնելով Երեւան՝ Ա.Թաթրէկեանը անմիջապէս «կարգի բերեց» հակայեղափոխութեան դէմ կռուելու գործը եւ իր ձեռքն առաւ Զեկայի գեկավարութիւնը: Ջահիլ կոմունիստները հրճուանքով ընդունեցին նրան: Նա շուտով «բարեկարգեց» Զե-


ARAM webaram.com

կայի գործունէութիւնը եւ բազմապատկեց լրտեսների ու գործակալների թիւը: Նրա պահանջով էր նաեւ, որ Դրօն աքսորուեց Հայաստանից: Նա էր, որ աստիճանաբար Աղբէկեանն էր քշում Հայկական Բանակի պատերին: Նա էր դլխաւոր ներշնչողը հակապաշնակցական անհաշտ քաղաքականութեան ու հալածանքներին: Նրա առջեւ կանգնած էր, առհասարակ, Յեղկոմի չափաւոր անդամները անոյժ էին ու տկար: Ընդհակառակը, ծայրայեղները, Ախախ տիպի խելագարները դարձան էլ աւելի յախուռն ու անզուսպ:

Ամբարբէկեանի գալուց յետոյ կեանքը Հայաստանում աւելի եւս դժուարացաւ: Օր չէր անցնում, որ բանտարկութիւններ տեղի չունենային: Երեւանի ու գաւառի բանտերը լեցւում էին արագութեամբ: Ամէն դիշեր բազմաթիւ խուզարկութիւններ էին կատարւում: Խուզարկուած տներից շատ անգամ ո՛չ միայն մարդ էին տանում, այլ եւ դրամ, ոսկեղէն ու զոհարեղէն, գորգեր, մետաքսի եւ այլ թանգարժէք կտորներ, շաքար, սապոն, գանազան հագուստ — այն ամէնը, ինչ որ խուզարկողների դիւր էր գալիս: Տարուած իրերը ամբողջապէս բաժանում էին կոմունիստների միջեւ: Ճաճախ, դիշերը, խուզարկութեան ժամանակ առնուած կաշուէ մուշտակը, եամփունջին կամ փափախը յաջորդ օրն իսկ տեսնում էին այս կամ այն բոլշեւիկի վրայ: Այդ սովորական երեւոյթ էր եւ ընդունուած բոլոր բոլշեւիկների կողմից: «Պիղծ բուրժուաների» առացուածքը խլելը, թալան ու գողութիւն չէր համարւում:

Իր «բանագրաւումներով» Երեւանում առանձնապէս աչքի ընկաւ Յեղափոխական Տրիբունալի կոմենդանտ Բօղդանեանը, որի տունակը Յեղարիբունալի չէնքում լեցուն էր թալանուած իրերով եւ որը ոտքից գլուխ հագնուած ու զուգուած էր գողացուած հագուստներով ու զարդարանքներով: Երբ ինչ որ մի կուսակցական ներքին խնդրի համար խուզարկել էին նրա բնակարանը, այնտեղից դուրս էր եկել փթերով շաքար, կակաո, թէյ, խտացրած կաթ, բրինձ, մի քանի զոյգ կօշիկ, գորգեր, արծաթէ ու ոսկէ իրեր, ժամացոյցներ, կանանց զարդարանքներ, մի քանի թուի կերպասեղէն, թանկագին մորթիներ, յախճապակիէ ամաններ, ծխախոտի տուփեր, երաժշտական գործիքներ եւ ուրիշ շատ իրեր: Այդ բոլորի ցուցակը մնացել էր կանանի գրոցում եւ Փետրուարի 18–ից յետոյ անցել էր մեր ձեռքը: Այդ ցուցակը ես յանձնել էի հանգուցեալ Բաշխի Իշխանեանին, որ հարուստ նիւթ էր հաւաքել բոլշեւիկեան ալան–թալանների մասին...

Հալածանքներն առանձնապէս սաստիկ էին մտաւորականների



ARAM webaram.com

դէմ. ձերբակալում էին եւ հրամանագրով, եւ՛ առանց հրամանագրի: Բանտարկութիւնները կատարում էին մեծ մասամբ քրէական ամբաստանութեամբ, եւ ի հարկէ, չինծու մեղադրանքներով:

Այսպէս, Պարլամենտի նախագահ Ա. Սահակեանը, Ինամատարութեան նախարարի օգնական բժ. Յ. Տէր-Միքայէլեանը, Պարլամենտի անդամ բժ. Ա. Ղազարեանը եւ մի շարք ուրիշներ բանտարկուեցին իբրեւ «սպեկուլեանաներ», թէեւ որոշ ո՛չ մի փաստ չէր բերւում:

Հետախուզութեան եւ ձերբակալութեան գործը կազմակերպուած էր համաութեամբ եւ մեծ ճարպիկութիւն էր հարկաւոր չեկիստներից ազատուելու համար: Մանաւանդ ոնային կոմիտէների կազմակերպումից յետոյ, հսկողութեան գործը շատ հեշտացաւ, որովհետեւ ոնային կոմիտէների նախագահները մահուան սպառնալիքի տակ պարտաւոր էին կատարել Չեկայի բոլոր կարգադրութիւնները: Չեկային խոշոր ծառայութիւն էին մատուցանում եւ կամաւոր լրտեսներն ու գործակալները:

Չեկան իր գործունէութեան ընթացքում բնաւ հաշուի չէր առնում քաղաքների անդորրութիւնը: Ցաճախ քաղաքի ամբողջ փողոցներ կամ թաղեր բռնւում էին պինուորներով ու զնդացիրներով եւ ամբողջ օրերով կանգնեցնելով հասարակութեան երթեւեկութիւնը, Չեկան խուզարկութիւններ էր կատարում: Արհամարհանքը դէպի ժողովուրդը այնտեղ էր հասնում, որ շատ անգամ դասալիք պինուորներ որոնելիս տուրս փողոցներում ժամերով պահում էին եւ՛ կանանց ու երեխաներին: Բողոքե՞լ, բայց ո՞ւմ: Ո՞վ կարեւորութիւն կը տար բողոքին: Եւ, մանաւանդ, ո՞վ կը համարձակուէր բողոքել:

Առանձնապէս շուա-շուա էին կատարում խուզարկութիւնները դասալիքներ բռնելու պատրուակով: Այդպիսի դէպքերը ոտքի էին հանում բոլոր ոնային կոմիտէները: Քաղաքացիական ու պինուորական իշխանութիւնները գործում էին միասին: Փողոցների բերանները բռնւում էին ռուս զնդացրային մասերով ու թնդանօթներով: Անցուդարձը բոլորովին կանգ էր առնում: Մարդիկ սարսափահար փախում էին տները եւ պատուհանից դիտում, թէ ինչպէս խումբ-խումբ կոմունիստներ քշում էին ձերբակալուածներին:

Զափից աւելի ամարդի եղաւ հայկական բանակի զլխատման ու քայքայման գործը, որ կատարուեց Ա֊Թարբէդեան–Ա.իսի միացեալ ջանքերով:


ARAM webaram.com

## ՍՊԱՅՈՒԹԵԱՆ ԱՔՍՈՐԸ

Իրենց իշխանութեան հէնց առաջին օրերից բոլշեւիկները հասկացան, որ հայկական բանակը հանդիսանում է Հայաստանի անկախութեան գլխաւոր ապահովներից մէկը: Ճիշդ է, նա չարաչար պարտութիւնների էր ենթարկուել, բայց եւ այնպէս դեռ հաշուի առնելիք ոյժ էր: Հայկական բանակի մէջ, դժբախտաբար, կային անառակներ, հայրենասիրութիւնից զուրկ ու չահամոզ սպաներ, բայց իրենց մեծ մասը, նա անպայման քարձր էր կանգնած եւ ամուր փարած էր պետականութեան գաղափարին, որի համար շատ էր աշխատել ու զոհաբերել եւ պատրաստ էր էլի զոհեր տալու: Հայաստանի սպայութեան շարքերում բազմաթիւ էին իսկական հերոսներ, որոնց համար երկրի անկախութիւնն ու ժողովրդի բարիքը գաղափարական հնչիւններ չէին: Գտնուելով հեռու քաղաքական յուզումնալից պայքարի ասպարէզներից՝ նրանք կատարուող երեւոյթներից շատ բան չէին լսում, թէեւ բնազդօրէն զգում էին, որ բոլշեւիզմը՝ գալիս է իրենց թշնամի եւ խորտակելու է հայ ժողովրդի յոյսերը: Նրանցից ոմանք Հիւսիսային Կովկասում ու Ռուսաստանում արդէն ճաշակել էին բոլշեւիկեան իշխանութեան հրապոյրները եւ Հայաստանում էլ լաւ բան չէին սպասում նրանցից:

Այսպէս թէ այնպէս, հայ սպայութիւնը անուրախ սրտով ընդունեց բոլշեւիկների մուտքը Հայաստան: Բոլշեւիկներն էլ քնքոյշ զգացմունքներ չունէին դէպի հայ սպաները: Ռուսաստանում նրանք կատորել էին տասնեակ հազարաւոր «հակայեղափոխական» սպաներ, պատճառ չունէին այլ կերպ վարուելու եւ Հայաստանում: Հակառակ Դրօշի թափած չանքերին՝ հէնց սկզբից նրանք ձեռնարկեցին բանակի մաքրագործման, թէեւ քանի իրանց տրամադրութեան տակ զըտ-



ARAM webaram.com

նըւազ ռուս զօրքերի թիւը քիչ էր, բաւական զգոյշ ու զուսպ էին վարւում: Սակայն, հէնց որ ռուսական ոյժը երեւանում համարուեց բաւարար, վերաբերումը արմատապէս փոխուեց, եւ ազայութիւնը պանդուածօրէն յայտարարուեց «հակայեղափոխական» եւ «խորհրդային կարգերի թշնամի»:

Հայաստանի կառավարութեան եւ Լէդրանի միջեւ Դեկտ. 2-ին առորակրուած պայմանագրի կէտերից մէկը, ինչպէս տեսանք, ասում էր, որ հայկական բանակի ազանները պատասխանատուութեան չպիտի ենթարկուեն իրենց նախկին ծառայութեան ընթացքում ունեցած գործունէութեան համար: Հէնց նոյն Դեկտ. 2-ին, Հայաստանի դըլխաւոր չէնքում Դրօն եւ Լէդրանի ներկայացուցիչ Սիլինը հաղորդում են ազանների ու զինուորական պաշտօնեաների կատարուած փոփոխութեան մասին՝ յայտարարելով, որ այդ օրուանից Հայաստանի Հանրապետութիւնը դառնում է Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւն: Միեւնոյն ժամանակ Սիլինը՝ բացատրելով մարտական հրամանի ու զինուորական կարգապահութեան նշանակութիւնը կարմիր բանակի շարքերում, Ռուսաստանի կարմիր Բանակի գերագոյն հրամանատարութեան անունից խոստանում է հալածանք չյարուցանել ո՛չ միայն հայ, այլ եւ Հայաստանում պաշտօն ունեցող Դենիկինեան ազանների դէմ: Նա կոչ է անում ամէնքին մնալ իրենց պաշտօններում եւ ապահով է տալիս, թէ նրանցից ո՛չ ոք չի հեռացուի Հայաստանի սահմաններից:

Յաջորդ օրը, Դեկտ. 3-ին լոյս տեսած հրամանով Դրօն նշանակում է Սոցիալիստական Հայաստանի կարմիր Բանակի ազարապետ: Իսկ զօրավար Նազարբէկեանը՝ նրան խորհրդական: Բայց մի օր յետոյ, առանց պատճառները բացատրելու, յատուկ հրամանագրով զօր. Նազարբէկեանը ընդմիշտ հեռացւում է պաշտօնից եւ, առհասարակ, հայկական բանակից: Նոյն հրամանագրով վերացուած են յայտարարւում ազայական բոլոր աստիճանները եւ արգիլւում է կրել կարմիր Բանակում ընդունուած նշաններից զատ ուրիշ տեսակ պատուանշաններ: Հրամայւում է նաեւ վերացնել «զինուոր» ու «ազայ» անունները եւ գործածութեան մէջ մացնել «հրամանատար» ու «կարմիր բանակային» բառերը, իսկ բանակը կոչել՝ Հայաստանի կարմիր Բանակ:

Այնուհետեւ սկսւում է բանակի «վերակազմութիւնը»: Նախորդ բոլոր զինուորական օրէնքներն ու հրամանները յայտարարւում են վերացուած եւ նրանց տեղ ընդունւում են ռուսական օրէնքներն ու հրամանները: Կենտրոնական ու ազարատական չտարբերի պե-


ARAM webaram.com

տերին ու բաժիններէն վարիչներին հեռացնում են եւ նրանց տեղ նըշանակում ռուս կոմունիստներ: Ռուսաստանից բերուած կոմունիստներից կոմիսարներ են կարգւում զօրամասերում եւ պինուորական վարչութիւնների մէջ: Ապա հետզհետէ փոխւում են բրիգադների եւ առանձին զօրամասերի պետերը եւ տեղը գրւում են բոլշեւիկներ: Իրար յետեւից հեռացւում են եւ ստորին ստաֆեանի հրամանատարներն ու պաշտօնեաները եւ սրանց տեղ նշանակւում են բացառապէս կոմունիստներ՝ գրեթէ բոլորն էլ Ռուսաստանից բերուած ռուսներ: Ամէն տեղ պաշտօնական լեզուն դառնում է ռուսերէնը, եւ հայկական բանակը արագ կերպով կերպարանափոխւում է եւ ռուսանում:

Դեկտեմբերի առաջին կէսին, ծառայութեան մէջ գտնուող բոլոր հայ զօրավարները պաշտօնանկ եղան, իսկ մի քանիսը բանտարկուեցին առանց որեւէ մեղադրանքի: Զինուորական գործադարձութիւնը «բարեկարգելու» պատրուակով, 7—8 սպաներ, գնդ. Աթաեանի գլխաւորութեամբ, ուղարկուեց Բաղու՝ 11-րդ բանակի կենտրոնատեղին, իբր թէ, կարմիր բանակի կարգերին ծանօթանալու համար, բայց յետոյ պարզուեց, որ նրանց Բաղու են տարել իբրեւ պինուորական գերիներ եւ ապա աքսորել են Ռեւազանի նահանգը: Արդէն առաջուց Լէդրանի մխիթարի անդամները ունէին պատրաստուած, Հայաստանի «հակայեղափոխական» սպաների ցուցակները եւ այդ ցուցակներով, գանազան պատրուակների տակ, սկսեցին խումբ-խումբ հեռացնել սպաներին դէպի Ախրբէջան կամ պարզապէս ձերբակալել ու բանտ նետել: Դեկտեմբերի քսաններին Երեւանի պինուորական բանտում արդէն 200-ից աւելի հայ սպաներ կային:

Մօտաւորապէս Դեկտեմբերի քսաններին է, որ բոլոր հայ պինուորականներին — պաշտօն ունեցող թէ ոչ — բաժանեցին, այսպէս կոչուած, «անկէտային թերթիկներ» (հարցացուցակներ) եւ պահանջեցին 24 ժամուայ ընթացքում լեցնել ու վերադարձնել: Ի միջի այլոց, տեղեկութիւն էր պահանջւում, թէ ի՞նչքան ժամանակ եւ ո՞ր զօրամասում է ծառայել կամ ծառայում է այժմ, ի՞նչ պաշտօն է ունեցել ցարական բանակում յեղափոխութիւնից առաջ, ապա՝ յեղափոխութիւնից յետոյ մինչեւ Հոկտ. 25-ը, այսինքն՝ բոլշեւիկեան յեղաշրջումը. ո՞ւր է գտնուել եւ ի՞նչ պաշտօնում Հոկտ. 25-ից յետոյ մինչեւ Հայաստանի խորհրդային դառնալը. ի՞նչ ստաֆեան է ունեցել եւ ո՞ր ճակատում է եղել վերջին հայ-թրքական պատերազմին. մանակցութիւն ունեցե՞լ է եւ ի՞նչ՝ բոլշեւիկների մայիսեան ապստամբութեան ճնշումին, ծառայե՞լ է Կոլչակի, Դենիկինի եւ Վրանգելի բանակներում, ո՞ր կուսակցութեան է պատկանում եւ, եթէ ան-



ARAM webaram.com

կուսակցական է, ո՞ւմ է համակրում. կարո՞ղ է որեւէ կոմունիստից երաշխաւորութիւն ներկայացնել եւայլն եւայլն:

Ստացուած բոլոր պատասխանները հաւաքուեցին Զեկայում եւ ենթարկուեցին ամենախիստ քննութեան ու դասաւորութեան: Այս տեղեկութիւնների եւ նախօրօք հաւաքուած տուեալների վրայ հիմնուած՝ կարզադրուեց հայկական բանակի պինուորականների ճակատագիրը: Շուտով պարզուեց որ չափազանց դառն էր լինելու այդ ճակատագիրը: Սպաներից չատերը նոյն իսկ նախանձում էին իրենց ֆեպղիմ Քարաբէքիրի ձեռքը ընկած ընկերներին:

Դեկտեմբերի վերջերին սկսուեցին պարզուել «անկէտայի» գործնական հետեւանքները: 70 սպաներ ուղարկուեցին Բաղու, իրրեւ թէ, 11-րդ բանակի մասերում հրամանատարական պաշտօններ ստանձնելու կամ պինուորական վարժարաններ մտնելու համար: Քիչ յետոյ ուղարկուեց էլ աւելի մեծ խումբ: Եւ երբ հասարակութեան ու սպաների մէջ ծայր առաւ դժգոհութիւնը, պինուորական իշխանութիւնները լուր բաց թողին, թէ կարմիր Բանակում հրամանատարական կազմի մեծ պակասութիւն է զգացւում. եւ 11-րդ բանակի պետը խնդրել է իրեն հայ սպաներ ուղարկել զանազան պաշտօնների համար: Այս բացատրութիւնները, ի հարկէ, ոչ ոքի չէին կարող դոհացնել, որովհետեւ մի կողմից հայ սպաներին էին հեռացնում, իսկ միւս կողմից ռուս պինուորականներ էին բերւում Ռուսաստանից եւ զբաղում հեռացուած հայերի տեղը: Շուտով յայտնի դարձաւ եւ այն, որ Բաղու հասած սպաները ո՛չ պաշտօն են ստացել եւ ո՛չ էլ պինուորական զգեստ զբաղել, այլ բանտարկուել են Զեկայի նկուղներում եւ նարզէն կղզու զնտաններում:

Այս լուրը պատճառ դարձաւ, որ Ապրիլեանի տարուող սպանների մի մասը ճանապարհին վախչի եւ պահուի հայկական գիւղերում:

Հայ պինուորականների դէմ սկսած արշաւանքը լարման դադաթնակէտին հասաւ Յունուարի 23-ին: Մի օր առաջ հրատարակուեց Զեկայի հրամանը, որով պահանջւում էր, որ յաջորդ օրը ժամը 12-ին նախկին ու ներկայ բոլոր սպաները, լինին պաշտօնում, ծեր թէ երիտասարդ, առողջ թէ հիւանդ, մայրաքաղաքում թէ գտնուում, առանց որեւէ առարկութեան, ներկայանան արձանագրուելու համար: Որպէս զի կասկածի տեղի չտրուի, լուր էր տարածուած, թէ արձանագրուելուց յետոյ սպաներին պաշտօն պիտի տրուի զօրամասերում:

Յունուարի 23-ի կէսօրին, մայրաքաղաքում գտնուող հազարից աւելի սպաները հաւաքուեցին նախկին պարլամենտի շէնքը, որի


ARAM webaram.com

ներսը կային պինուած ռուս պահակներ ու գնդացիրային մի ջոկատ։ Բեմի վրայ դրուած էին փողերը դէպի սրահ ուղղուած եւ կրակելու պատրաստ գնդացիրներ։ Ներս մտնող ազգաները յանկարծակիի էին գալիս։ Ներսից մէկիկ մէկիկ խուզարկում էին, առնում մօտի առրճանակներն ու արկերը եւ սկսում արճանապրել։

Գործը այնպէս էր կազմակերպուած, որ դուրսը ոչ ոք չէր իմանում, թէ ինչ էր կատարւում ներսը։ Այդ պատճառով ո՛չ մի փորձ չեղաւ դիմադրելու կամ խուսափելու։ Հասարակական յուզումների եւ զանազան անակնկալների առաջքն առնելու նպատակով՝ դէպի Ա-բովեան պողոտան դուրս եկող բոլոր փողոցների բերանները բռնուած էին ուժեղ զօրամասերով ու թնդանօթներով։ Քաղաքում չորջում էին պինուած խմբեր, իսկ կէսօրից յետոյ պարլամենտի շէնքը շրջապատուեց թնդանօթներով, գնդացիրներով եւ պինուած կոզակներով։

Նոյն օրը, երեկոյեան, առանց որեւէ մէկին տուն թողնելու, ազգաները հետիոտն քշեցին դէպի Քանաքեռ։ Անասելի տուրս երեկոյ էր։ Առատ ձիւն էր եկել եւ փչում էր հիւսիսի ծակող քամին։ Ազգաների մեծ մասը գնում էր առանց վերարկուի, թեթեւ կօշիկներով, անօթի ու անդրամ։ Նրանց մէջ էին եւ Հայաստանի բանակի վաստակաւոր վետերանները՝ առաջին պինուորական նախարար եւ ապա ազգայինոյի պետ զօր. Հախվէրտեանը, ազգարապետ զօր. Նազարբէգեանը, Հայաստանի հրետանիի պետ զօր. Ղամազեանը, Սարդարապատի հերոս զօր. Սիլիկեանը, զօր. Շէլկովնիկեանը եւ ուրիշ շատերը։ Գնում էին արտասուքը աչքերին...

Ո՞ւր եւ ինչո՞ւ — ոչ ոք չգիտէր։

Աննկարագրելի իրարանցում տիրեց քաղաքում։ Զինուորականների ազգականները խելակորոյս վազում էին մերթ դէպի Յեղկոմը, մերթ դէպի Չեկան, մերթ կոմունիստական կուսակցութեան կեդրոնատեղին։ Աղերսում էին, որ դէթ իրաւունք տրուի հայ ու տաք հագուստ հասցնելու գնացողներին, բայց ամէն տեղից մերժում էին առանում։ Շատերի կանայք եւ ազգականները հետեւեցին մինչեւ Քանաքեռ, բայց պահակ կոզակները չետ քշեցին նրանց հրացանների սպառնալիքով։ Այդ օրը Երեւանում հարիւրաւոր ընտանիքներ որբացան եւ սուգ էին անում։ Ամբողջ քաղաքը դղրդուած էր։

Քանաքեռում ազգաներին լեցրին տուրս զօրանոցները, մերկ ու անօթի։ Միւս օրը Երեւանից գալիս է մի յատուկ յանձնախումբ. բժշկի մասնակցութեամբ, իբր թէ ազատելու հիւանդներին ու անկարողներին, բայց ազատ են արձակում միայն մի քանի հոգի՝ յետո-



ARAM webaram.com

նի բոլշեւիկների երաչխաւորութեամբ, իսկ մնացեալները — նոյնիսկ ակնյայտնի ինվալիդներ, վիրաւորներ ու հիւանդներ, ոտքով քշւում են մինչեւ Ադատաֆա:

Ով ծանօթ է Երեւան–Դիլիջան ճանապարհի յունուարեան ցրտերին, Սեւանի չրջակայքի սարսափելի սառնամանիքներին ու ձիւնախառն փոթորիկներին, նա կարող է երեւակայել, թէ ինչ անօրինակ նեղութիւններ են կրել աքսորուող սպաները: Ներանցկեց չաւերի ոտներն ու ձեռքերը ցրտահար են եղել· ամենք ծանր հիւանդացել են, բայց ծեծի ու սպառնալիքի տակ հասել են Ադատաֆա ու ապա երկաթուղով Բաքու:



ԶՕՐ· ԹՈՎՄԱՍ ՆԱԶԱՐԲԷԳԵԱՆ

Աքսորուած սպաների վիճակի մասին Երեւանում այլեւս ստոյգ տեղեկութիւն չստացուեց: Բոլշեւիկները իրենք պընդում էին, թէ ամէնքը ողջ են եւ պաշտօններ են ստացել կարմիր բանակում, բայց ապրիլը–նակութիւնը չէր հաւատում: Երբեմն–երբեմն լուրեր էին պատում, թէ այսինչին գնդակահարել են, այնինչին ծովն են նետել Նարգէն կղզին տանելիս: Եւ միայն փետրուարեան յեղաշրջումից յետոյ յայտնի եղաւ, որ բոլոր սպաներին, բացառութեամբ բռնական ու ֆիզիքական ծանր պրկանքների ենթարկուելուց յետոյ՝ աքսորել են Թուրքստանի նեռները:

Նոյն ձեւով վարուեցին եւ գաւառում գտնուող սպաների հետ: Նրանց խումբ–խումբ հաւաքեցին Երեւանի Զեկայի չէնքում եւ այստեղից ամանց փոխադրեցին պինուորական բանտը, իսկ մեծ մասին նոյնպէս քշեցին Ադրբէջան:

Բոլշեւիկների այս արարքը անասելի վրդովում առաջ բերեց ժողովրդի մէջ: Հանրային գայրոյթն այնքա՞ն բուռն էր, որ նոյնիսկ կառավարութիւնը իրեն պարտաւոր զգաց բացատրութիւն տալու:


ARAM webaram.com

«Կոմունիստ» թերթում լոյս տեսաւ Ալիխի մէկ խօսակցութիւնը թղթակցի հետ, որով պինուորական կոմիսարը մօտաւորապէս այսպիսի կարծիքներ էր յայտնում:

Ամէնից առաջ նա զարմանում էր ու չէր կարողանում հասկանալ, թէ ինչո՞ւ համար է այս աղմուկը, ի՞նչ է պատահել, ինչո՞ւ են դժգոհ իրենից: Ինքը ապաների ու սրանց ազգականների կողմից չնորհակալութեան է արժանի եւ ոչ դժգոհութեան, որովհետեւ ապաները հէնց իրենց «բարիքի» համար ուղարկուել են Թուսաստան, ուր կարմիր Բանակը մեծ կարիք ունի հրամանատարների: Հայ ապաների մի մասը կը մտցուի կարմիր Բանակի հրամանատարական կազմի մէջ, իսկ միւս մասը կը մտնի պինուորական գործարանների նպատակով: Այնտեղ նրանք եւ՛ լաւ կը վարձատրուեն եւ՛ յառաջդիմելու լայն պատեհութիւններ կ՝ունենան, անհամեմատ աւելի լայն, քան Հայաստանի նեղ ու անհրապոյր սահմաններում: «Դաշնակ»ներն ու «հակայեղափոխականներն են, որ պրպտում են ժողովրդին իշխանութեան դէմ. ընդհակառակը, ապաները եւ իրենց ընտանիքները փառք պէտք է տան խորհրդային իշխանութեան...

Ինձ յայտնի չէ՝ փառք տուե՞ն արդեօք ապաները իրենց ընձեռուած «լայն պատեհութիւնների» համար, բայց ամէն օր լսում էի, թէ ինչպէս նրանց թշուառ ընտանիքները անիծում էին բոլշեւիկներին: Նրանք ամէնքը, բառիս բուն նշանակութեամբ, մնացին առանց հացի եւ վերին աստիճանի ողորմելի վիճակի մէջ: Կառավարութիւնը, ի հարկէ, իրեն պարտական չէր զգում օգնելու «հակայեղափոխականների» ընտանիքներին. թո՛ղ կոտորուին չնները. որքան շուտ, այնքան լաւ՝ բանուորա-գիւղացիական իշխանութեան համար...



ARAM webaram.com

# ԲՈՆԱԳՐԱՒՈՒՄՆԵՐ

*Սպանելի աքսորն ու հասարակական դործիչների բանտարկութիւնը յուզում էին դլխաւորապէս մտաւորական շրջանները: Հասարակ ժողովրդին աւելի պրաղեցնում էր բոլշեւիկների վերաբերումը դէպի մանաւոր սեփականութիւնը եւ դիւղերում ու քաղաքներում սկսուած օրինական եւ ապօրինի բռնապրաւումները:*

*Հայաստանում, բոլշեւիկեան իշխանութեան յատկանշող կողմը, առհասարակ, օրէնքի եւ քաղաքացիական իրաւունքի կատարեալ բռնաբարումն էր, բայց ո՛չ մի կամայականութիւն չէր կարող համեմատուել այն խայտառակութիւնների հետ, որոնցմով այնքա՛ն հարուստ էր կոմունիստների տնտեսական ու պարենաւորման քաղաքականութիւնը:*

*Այն ժամանակ, Ռուսաստանում էլ դեռ տիրապետողը, այսպէս կոչուած, «ռազմական կոմունիզմն» էր, այսինքն՝ մանաւոր սեփականութեան բացարձակ ժխտումը եւ տնտեսութեան համայնական կազմակերպումը — մի ձեւ, որ հիմքից քայքայեց ռուսական ժողովրդական տնտեսութիւնը: Հայաստան եկած բոլշեւիկները՝ ճնշող մեծամասնութեամբ՝ ոդէտ ու անբարոյական, չատերը քրէական անցեալի տէր՝ պիշատիչ անդղների պէս յարձակուեցին հայ ժողովրդի ու պետութեան ստացուածքի վրայ ու սկսեցին առանց խնայելու խժռել: Հետեւողական համայնացումը վերածուեց հետեւողական թալանի եւ աւազակութեան: Բռնապրաւումը դարձաւ ո՛չ միայն անհրաժեշտութեան արդիւնք, այլ պետական ընթացիկ քաղաքականութեան սկզբունք: «Բռնապրաւել բռնապրաւողների ստացուածքը» — այս էր կոմունիստների նշանաբանը: Մա՛հ բուրժուաներին, վե՛րջ մանաւոր սեփականութեան, համայնացում, ո՛չ միայն արտադրու-*


ARAM webaram.com

թեան միջոցների, այլեւ անհատական պէտքերին գոհացում տուող առարկաների:

Բռնապրաւումը յայտարարուեց սխտեմ. բռնապրաւումը թալանի պաշտօնական անունն էր: Բռնապրաւում էր ամէն ոք եւ ինչ որ կամենար: Քաղաքացիները ահաբեկուած էին ու չէին դիմադրում: Եւ ինչպէ՞ս դիմադրէին. բռնապրաւումը կատարւում էր յանուն «յեղափոխական օրէնքի», իսկ ով դիմադրէր «յեղափոխական օրէնքին», թշնամի էր «բանուորական պետական իշխանութեան», այսինքն «հակայեղափոխական» էր, իսկ ո՞ւմ յայտնի չէր, թէ ինչպէս է վարւում «պրոլետարիատի սիկուտատուրան» «հակայեղափոխականների» հետ: «Երեւանի փողոցները կ'ողողենք հակայեղափոխականների հատած արիւնով», ապառնացել էր Չեկան...

Չեկայից յետոյ ամենալաւ կերպով կազմակերպուած էին բռնապրաւող մարմինները, եւ բռնապրաւման գործողութիւններին պարտադիր կերպով մասնակցում էին անխտիր բոլոր կոմունխանները՝ մեծ թէ փոքր: Երեւանում բռնապրաւման գործը վարում էր Գաւյեղկոմը — Գաւառական Յեղափոխական Կոմիտէն, որը այդ նպատակով պահում էր ծառայողների ահագին բազմութիւն եւ անհաշիւ գործակալներ. վերջիններս ամէն օր վաղ առաւօտից մինչեւ երեկոյ շրջում էին անից տուն եւ մանրակրկիտ կերպով ծանօթանալով քաղաքացիների ունեցածին՝ արձանագրում ու տեղեկացնում էին Գաւյեղկոմին: Ամէն ինչ, որ քիչ-շատ արժէք էր ներկայացնում, առնւում էր ցուցակի մէջ — ցորեն, ալիւր, թխած հաց, իւղ, պանիր, դաւարմա, բրինձ, վառելափայտ, ածուխ, ամանեղէն, կահ-կարասիք, հագուստ, գիրք, ապխտակեղէն, երաժշտական գործիք, դրելու թուղթ, մատիտ, գրչածայր, նօտաներ, դորգ, կաշի, ծխախոտ, համիչք — մի խօսքով՝ ամէն բան: Արձանագրուած իրերի տէրը ո՛չ ծախելու իրաւունք ունէր և ո՛չ գործածելու. նա պէտք է ապասէր բռնապրաւման հրահանգի: Դժուար չէ երեւակայել դրութիւնը շատ քաղաքացիների, որոնց ապրուստի միակ ապրիւրը իրենց հին հագուստի ու կարասիների վաճառումն էր...

Արձանագրութիւնները կատարւում էին ոչ թէ բոլոր իրերի համար մի անգամից, այլ առանձին-առանձին: Մի օր արձանագրում էին աւեհակները, միւս օր՝ վառելիքը, երրորդ օր՝ գրքերը, ապա՝ հացը, կահ-կարասիքը եւայլն: Ամէն օր քաղաքացիք պարտաւոր էին պատրաստ լինել ընդունելու եւ տեղեկութիւններ հաղորդելու գործակալներին, թոյլ տալու, որ սրանք քրքրեն պահարանները, սնտուկները, մառանները, յաճախ նոյնիսկ անկողինները՝ «թաքնուած»



ARAM webaram.com

առարկաներ երեւան հանելու նպատակով։ Գործակալները, ընդհանրապէս, «կոմպատանիները» էին — կոմունիստ պատանիները — անքաղաքավարի ու կոպիտ, որոնք ոգեւորուած իրենց պաշտօնով՝ «բուրժուաներին» վրայ նայում էին վերեւից, արհամարհանքով եւ նրանց հետ վարւում էին անասուններին պէս։ Ինչ չէր պատահում, որ արձանագրելիս, գործակալները իւրացնում էին իրենց հաւանած իրերը։

Յիշում եմ մի կոմպատանի, որ նոր էր հասել հիւսիսային կովկասից, եկել էր մեզ մօտ վայր եւ ածուխ արձանագրելու։ Ըստ սովորութեան մառանն ու խոհանոցը հետազօտելուց եւ բան չգտնելուց յետոյ՝ սկսեց քրքրել եւ ննջարանը, որը միաժամանակ եւ իմ աշխատելու սենեակն էր։ Սեղանիս վրայ դրուած էր ռուս գրագէտ Կուպրինի մի մեծ հատորը՝ «Եամա»։

— Ա՛հ, այս ի՞նչ հետաքրքիր գիրք է, բացականչեց նա եւ առանց այլեւայլութեան, վերցրեց ու դրեց վերարկուի գրպանը։

Ի՞նչ ասէի։ Ո՞ւմ բողոքէի։ Չէ՞ որ «հակայեղափոխական» էի, «բուրժուա» ու «նախկին մինիստր»...

Այս «նախկին մինիստրը» իմ բոլոր այցելուների համար հետնանքի ու արտօսրութեան առարկայ էր միշտ.

— Ա՛հ, ընկեր «նախկին մինիստր»... ի՞նչպէս էք, ընկեր «նախկին մինիստր»...

Գաղաքում թալանը սկսուեց հէնց առաջին օրերից, մանաւանդ բնակարաններում տեղաւորուած զօրքի կողմից։ Գաղաքացիները ոչինչ չէին խնայում նրանցից, իրենց բերանի պատառը կիսում էին նրանց հետ, բայց այդ քիչ էր օգնում։ Զինուորները յաճախ իրենց հիւրընկալ տներից գողանում էին՝ ինչ որ աչքի էր զարնում։ Ամէն տուն ստիպուած էր պահել մի քանի ռուս զինուորներ, եւ գողութիւնը սովորական բնոյթ էր գործել Երեւանում։

Իմ բնակարանում էլ տեղաւորեցին երեք ռուս զինուորներ Զեկայի գնդացրային վաշտից։ Հինգ հոգի մենք էինք եւ երեք բոլշեւիկ զինուոր երկու սենեակների մէջ։ Նրանք ուտում էին ու քնում մեզ հետ եւ մեծնոյն ժամանակ լրտեսում ինձ։

Հոգեբանական տեսակէտից չատ հետաքրքրական էր եւ այն, որ բուռ երեւոյթին, վատ մարդիկ էլ չէին այդ զինուորները։ Գոնէ մէկը նրանցից միշտ կարդում էր Լ. Տոլստոյի բարոյախոսական գրքուածքները, իրեն համարում էր համոզուած տոլստոյական, չատ փափուկ սիրտ ունէր, յաճախ յիշում էր իր կնոջ ու երեխային եւ կարօտով արտասուում...

Երեւանի բռնագրաւումների սկիզբը դրեց Ճեկոմի անդամ Ա-


ARAM webaram.com

ւիսը: Կարծեմ, հէնց Երեւան հասնելու օրը, նա հրամայել էր վաճառականներ Գ. Ամիրեանին եւ Ա. Աւետեանին մի քանի ժամուայ մէջ պատրաստել եւ հասցնել իրեն եւ իր ընկերներին համար չորս մահճակալ՝ լաւ անկողիններով ու սպիտակեղէններով: Մահճակալները պահանջուած ժամին տեղ էին հասել: Այդ ինքնին աննշան դէպքը ահագին խօսակցութիւնների նիւթ դարձաւ քաղաքում, բայց չուտով մոռացուեց, որովհետեւ նա մի անմեղ կատակ էր վերջը պատահածների հետ համեմատած:

Ռուսաստանից եւ Ազրբէյջանից հետզհետէ Երեւան էին հասնում անվերջ կոմիսարներ, պինուորականներ, չեկիստներ, պաշտօնատար եւ պարզ կոմունիստներ, որոնց համար պրաւում էին քաղաքի ամենալաւ սենեակներն ու կահաւորութիւնը: Յեղկոմի անդամներն ու «պատասխանատու գործիչներ» տեղաւորւում էին հարուստների բնակարաններում, պրաւում էին քաղաքացիներից ճոխ կահ-կարասիք, սպիտակեղէն, զորգեր եւ զանազան տնային իրեր: Բոլշեւիկեան իշխանութեան առաջին շաբաթը Երեւանում ընդհանուր տեղափոխութիւն էր կատարւում. օրն ի բուն կրում էին մահճակալներ, դաշնամուրներ, աթոռներ, սեղաններ, զորգեր, էլեկտրական լամպեր, պրպտարանի ու հադուստի պահարաններ, ամանեղէն, խոհանոցի առարկաներ, պատի նկարներ, ամաններով ծաղիկ, անկողին, գրամոֆոն եւ ուրիշ իրեր «պատասխանատու գործիչների» բնակարանները կահաւորելու համար: Բոլշեւիկ գործիչների բնակարանները նմանում էին գործածուած իրեր վաճառող խանութի, ուր չորս կողմից հաւաքուած էին ամէն տեսակ ապրանքներ: Երեւան եկած բոլշեւիկ գործիչները շատ չուտով ցոյց տուին, որ ապրել գիտեն... Փետրուարեան յեղաշրջումից յետոյ պէտք եղաւ կազմել յատուկ մի յանձնաժողով ներքին գործոց նախարարութեան կից, որպէսզի բռնագրաւուած իրերը վերադարձուին իրենց տէրերին: Ծաղրով ու վրդովմունքով էին պատմում յանձնաժողովի անդամները բոլշեւիկ «պատասխանատու գործիչների» եւ Յեղկոմի անդամների բնակարաններից ու կոմունիստական հաստատութիւններից դուրս հանուած իրերի մասին:

Այսպէս, հանրային կրթութեան կոմիսար Աշոտ Յովհաննիսեանի բնակարանում գտնուել էին Լազարեան ճեմարանի սաւանները, անձեռոցիկներն ու ուրիշ սպիտակեղէն, ինչպէս նաեւ քաղաքացիներից բռնագրաւուած սեղան, աթոռ, գրակալ, դիրք, գորգ եւ այլ իրեր: Ախալ բնակարանից դուրս էր եկել բաւական առատութեամբ կոնեակ «Արարատ» պետական գործարանից, մեծ քանակութեամբ



ARAM webaram.com

խառցրած կաթ, կոնեակի պարապ չիշեր, ուրիշի գորգեր եւ կահ–
ւորութիւն: Հետաքրքրական էր Կասեանի բնակարանի իրերի ցու–
ցակը հէնց իր՝ Կասեանի կողմից ստորագրուած: Այդ ցուցակը գոնուում
էր հանգուցեալ Բ. Իշխանեանի ձեռքը: Առհասարակ, Իշխանեանը
հարուստ նիւթ էր հաւաքել բոլշեւիկների կառաբած թալանի մասին
եւ պատրաստուում էր առանձին գիրք հրատարակել:

Առանձնապէս յատկանշական էին կոմունիստական կուսակցու–
թեան կենտ. կոմիտէի ու Զեկայի չէնքերից եւ կոմունիստ պատա–
նիների ակումբից հանուած իրերը: Կենտր. կոմիտէի սենեակներում
դիպուած էին մի քանի հարիւր կոնեակի դատարկ չիշեր եւ դէկերով
խառցրած կաթի պարապ տուփեր, ինչպէս նաեւ ազուէսի մորթի–
ներ, ընտիր գորգեր, տոպրակներով չաքար ու կակաո: Կոնեակի ու
գինու բազմաթիւ չիշեր հանուել էին եւ Զեկայից եւ կոմպատանինե–
րի ակումբից: Վերջինում՝ հարեւանների պատմելով՝ ամէն գիշեր
տեղի էին ունենում ազգկոտ քէֆեր, որոնց մասնակցում էին եւ գիմ–
նազիայի աշակերտուհիներ: Դէպքեր են պատահել, երբ հայրերը ե–
կել են եւ գորով տուն տարել իրենց պատկներին:

Փետրուարեան յեղաշրջումից յետոյ, այս բոլոր երեւոյթների
ու փատաների մասին կազմուեցին պաշտօնական արձանագրութիւն–
ներ, որոնք, սակայն, ուրիշ բազմաթիւ ու թանկագին նիւթերի հետ
մնացին բոլշեւիկներին: Բոլշեւիկները, որ դաշնակցականներին վար–
կաբեկելու բնոյթ կրող ամէն փատաթուղթ հրատարակութեան են
տալիս այնպէս խնամքով, ի հարկէ չեն համաձակի տալու այդ
անձանց գրութիւնները, որոնք, անշուշտ, արդէն ոչնչացուած կը լի–
նեն:

Բռնագրաւումները յաճախ ընդունում էին այլանդակ ձեւեր և,
մանաւանդ, դէմ էին ու բծախնդիր նախկին նախարարների
եւ ոչ–կոմունիստ հասարակական գործիչների վերաբերմամբ: Գոր–
ծակալները, դիտաւորեալ կերպով, ջղայնացնելու եւ վիրաւորելու
նպատակով, օրական անհաշիւ անգամներ ձեծում էին գուռը եւ ման–
րակրկիտ խուզարկութիւն ու զանազան քննութիւններ կատարում:
Պարտաւոր էիր ամէն մի խլինքոտ լակոտի առաջ բանալ պահարան–
ները, ցոյց տալ ունեցածդ, անվերջ մրեւնոյն բացատրութիւնները
կրկնել, լսել նրանց խորհրդաւոր կարծիքներն ու կարդադրութիւննե–
րը, հաշիւ տալ, թէ ո՞րտեղից է ձեռք բերուած այս ինչ կամ այն ինչ
առարկան, ինչի՞ է ծառայում նա, ինչո՞ւ այս ինչ նիւթից այսքան
ունիս եւ ոչ աւելի կամ պակաս: Կատարեալ հաւատաքննութիւն՝ նը–
ւաստացուցիչ ու զզուելի...


ARAM webaram.com

Մեր տան կահ-կարասիքը արձանապրեցին մի քանի անգամ եւ դաան, որ ես իրաւունք չունեմ 12 աթոռ ունենալու. բաւական է եւ վեցը-հինգը մեզ համար եւ մէկը՝ հիւրի: Մնացած վեցը տարին «հաղորդակցութեան կոմիսարիատի կարիքների համար»: Ցետոյ, այդ աթոռներից երկուսը տեսել էին նոյն կոմիսարութեան մի կոմունիստ պաշտօնեայի մօտ:

Կինս մի պիտար (երաժշտական գործիք) ունէր — մանկութեան օրերի յիշատակ: Մի քանի շաբաթ շարունակ այդ պիտարը պրպտեցրեց Գաւյեղկոմի գործակալներին. իրար յետեւից ամէն օր գալիս էին քննում, արձանագրում: Եւ մի օր էլ Գաւյեղկոմի արուեստների բաժնից եկաւ խիստ հրաման, որ ես պիտարը չծախեմ, ուրիշի չտամ եւ պահեմ մօտս մինչեւ յատուկ կարգադրութիւն, այլապէս պատասխանատու եմ յեղափոխական արիւնալի առջեւ...

Մի օր պատկած էի հիւանդ: Ցանկարծ, սենեակի դուռը սաստիկ աղմուկով բացուեց եւ ներս ընկաւ մի կոմպատանի:

— Դո՞ւք էք Վրացեանը, դիմեց նա ինձ:

— Այո՛:

— Կարգադրեցէ՛ք, որ պորտֆէյլը յանձնեն ինձ:

— Ի՞նչ պորտֆէյլ, չուարեցի ես:

— Դուք մինիստր չէ՞ք եղել:

— Եղել եմ...

— Պորտֆէյլ չէ՞ք ունեցել:

— Ունեցել եմ...

— Հէնց այդ պորտֆէյլը ինձ յանձնեցէք:

— Ի՞նչպէս թէ յանձնեմ ձեզ. դուք ո՞վ էք...

— Միեւնոյնը չէ՞ ձեզ համար: Գաւյեղկոմում ձեր պորտֆէյլի բռնագրաւման համար արդէն հրաման է դրուած: Փոխանակ ուրիշին տալու, ի՛նձ յանձնեցէք:

Ես չկարողացայ զսպել ինձ եւ ջղայնացած դռռացի վրան: Նա չսպասեց հեռանալ: Բայց դրանով պորտֆէյլս ի հարկէ չվերադարձաց. քիչ վերջը եկան ու տարին...

Այսպիսի դէպքեր սովորական էին: Ինձ էին միմեանց ձեռքից, կռւում էին իրար հետ: Լաւ սենեակ, լաւ դրասենեակ, լաւ եփունջի — որեւէ լաւ իր որ պատահում էր, ամէն ոք վազում էր Գաւյեղկոմ բռնագրաւման հրաման առնելու: Շատ անգամ միեւնոյն սենեակի կամ միեւնոյն իրի համար միաժամանակ մի քանի հրաման էր տրւում. ով առաջ էր հասնում, նա էր տիրանում: Գաւյեղկոմի նախագահ Թաւաքալեանը ինքն էլ էր սիրում բռնագրաւել. վերջապէս



ARAM webaram.com

*եան յեղաշրջումից յետոյ նրա բնակարանից էլ մեծ քանակութեամբ պողպատած ապրանքներ դուրս եկան եւ, ի միջի այլոց, չիչերով օդը-կօլօն...*

*Մասնաւորապէս զարշելի սանձարձակութիւններ էին կատարւում բնակարանների բռնագրաւման գործում: Երեւան հասնելուն պէս, բոլշեւիկները հրամայեցին պարպել քաղաքի մի շարք խոշոր տները եւ յատկացնել իրենց հասատատութիւններին, կոմիսարներին եւ «պատասխանատու գործիչներին»: Գրաւուեցին Ա֊ֆրիկեանի մեծ տները Ռոստոմի փողոցի վրայ, Ղորասանեանի, Ղանդաուեանի, Բժ. Տէր-Ա.եաեանի տները Աբովեան պողոտայի վրայ եւ բազմաթիւ ուրիշ չէնքեր: Անմիջապէս դատարկեցին եւ բոլշեւիկներին տուին Հ. Օհանջանեանի, Ս. Ազարատեանի, Ա. Գիւլխանդանեանի, Ռ. Տէր-Մինասեանի եւ ուրիշ գործիչների բնակարանները: Տան տէրերին նրկուղներն էին քշում կամ պարզապէս նետում էին փողոց:*

*Բնակարանային հարցը Երեւանում առաջ էլ չափազանց սուր էր:*

*25—30 հազար բնակչի յարմարեցուած նախկին նահանգային քաղաքը այժմ դարձել էր պետութեան մայրաքաղաք 125 հազար ապրանքակութեամբ: Կարելի է երեւակայել, թէ ինչ նեղուածք էր ստեղծուել: Մեր իշխանութեան ժամանակ էլ ահագին դժգոհութիւն կար բնակարանային խնդրի շուրջ, բայց բոլշեւիկների ստեղծած դրութիւնը անուն չունէր: Նրանց զեկավարները գրաւել էին լաւագոյն բնակարանները 3–4–5 ճոխ կահաւորուած սենեակներով, իսկ քաղաքացիները թափուել էին իրար վրայ: Փողոց չպրտուած տանտէրերի հաշիւը չկար: 8–10 հոգուց բաղկացած ընտանիքներ խցկուում էին մութ ու խոնաւ նկուղներում, մինչդեռ կոմունիստ «պատասխանատու գործիչները» բռնում էին ամբողջ յարկաբաժինները: Երեւանցի ծանօթ վաճառական Առաքել Ա֊ֆրիկեանը, որի երեք մեծ տները գրաւուած էին, իրեն երջանիկ էր համարում, որ իր բազմանդամ ընտանիքով իրաւունք էր ստացել իր մի տան ներքնայարկում մի սենեակ ունենալու: Մի ուրիշը՝ Ալանեանը՝ իր մեծ ընտանիքով կծկուել էր խոհանոցի մէջ, իսկ նրա ընդարձակ բնակարանում տեղաւորուել էին բոլշեւիկները: Պարլամենտի նախագահ Ս. Սահակեանին իր 6 հոգիանոց ընտանիքով թողել էին մի սենեակ՝ մեւսները գրաւելով Չեկայի պաշտօնէութեան համար: Իսկ նախարարներ Հ. Օհանջանեանի ու Ա. Գիւլխանդանեանի, պարլամենտի անդամներ Տէր Գէորգեանի, Յովսէփեանի, վաստակաւոր բժիշկ Տէր Ա.եաեանի եւ շատ ուրիշների ընտանիքներ ուղղակի տնից դուրս քշուեցին*


ARAM webaram.com

առանց արեւէ անկիւն առանալու։ Իմ 3 սենեակնոց բնակարանի կէսը պրաւեցին «105–երորդ գնդի պարաշիւտի» (կուսակցական պարոց) համար։ Եւ ամէն օր՝ օրական երկու անգամ գինուորները իմ կողքին բարձրաձայն երգում էին «Ինտերնացիոնալը», եւ ու մուտ անում իմ սենեակները, ծխում, աղմկում, թքում ու կեղտոտում՝ անվերջ ջրաջնջացնելով ամէնքիս։ «Բուրժուա մինիստրը» ի՞նչ է, որ նրա հանգիստը հաշուի առնուի...

Մեր ապրած տունը արտաքինից գրաւիչ տեսք ունէր, թէեւ ներքին յարմարութիւններից զուրկ էր։ Եւ ամէն օր, առաւօտից մինչեւ երեկոյ մենք հանգիստ չէինք։ Սովորաբար Երեւան եկած կոմունիստներին որոշ սենեակ չէին յատկացնում, այլ բնակարանային յանձնաժողովը տալիս էր բռնագրաւման հրամանագիր։ Եւ ամէն ոք՝ թուղթը՝ ձեռքին՝ պատում էր տնից տուն եւ իրեն համար սենեակ որոնում։ Մենք երբեմն օրական 10–15 այդպիսի յաճախորդ էինք ունենում։ Դուռը ծեծողներից հանգիստ չկար։ Ամէն մի լակոտ իրաւունք էր համարում անարգել մտնել բնակարանդ, ամէն տեղ քիթը կոխել, եւ դու պիտի, որ ուզած րոպէին կարող ես քեզ ընտանիքով փողոց չպրտել եւ ինքը տեղդ նստել։ Քիչ չէին լինում եւ սրախօսութիւններ.

— Հէ՛յ, ընկեր մինիստր, բաւական է ինչքան քէֆ արիր, հիմա հերթը մերն է...

Եւ ի՛նչ ողբերգութիւններ էին պատահում այս բնակարանային հարցի շուրջ։ Քիչ չէին եւ դաւեշտներ։

Դրոյի աքսորից յետոյ, նրա բնակարանը դարձել էր բոլշեւիկների ուշադրութեան առարկայ։ Գրաւել ցանկացողների թիւը մեծ էր, սակայն գինուորական իշխանութիւնը Դրոյին խոստացել էր, որ նրա ընտանիքին նեղութիւն չեն տայ ու բնակարանին չեն դպչի։ Այդ մտքով էլ թուղթ էր ուղարկուած Դրոյի կնոջ, բայց մի բան է թուղթը, ուրիշ բան՝ կեանքը։ Մի օր գալիս է ինչ որ մի ռուս կոմիսար եւ հրամայում է անմիջապէս դատարկել բնակարանը։ Դրոյի կինը ցոյց է տալիս գինուորական իշխանութեան թուղթը – անօգուտ։ Կնոջ կինը չուռպում է գինուորական կոմիսար Աւխի եւ ընդհանուր հրամանատար Սվիբիտովի մօտ։ Սրանք նորից հրաման են արձակում, որ Դրոյի բնակարանը թողնուի հանգիստ։ Տիկինը վերադառնում է տուն, եւ այնտեղ գտնում է ռուս կոմիսարին՝ մի խումբ մելիցիոներների հետ, որոնք փորձում են զօրով պարպել բնակարանը։ Նոր դիմում ու խնդիր, նոր յուզում եւ աղմուկ։ Հետեւանքը լինում է այն, որ Սվիբիտովը ուղարկում է երկու գինուոր, պաշտպանելու Դրոյի



ARAM webaram.com

բնակարանը բռնագրաւումից: Այնուհետեւ այդ երկու հրացանաւոր պինուորները միշտ մնացին Դրոյի տանը, որպէս բնակարանի հսկիչներ...

Ինչ չէին պատահում դէպքեր, երբ բոլշեւիկները հրամանատուղի էին տանում իրենց համար զրաւելու անհնականներ ամբողջ կահաւորութեամբ: Այս իրաւունքից, մանաւանդ, լայնօրէն օգտւում էին Զեկայի ծառայողները: Գալիս մտնում էին այս կամ այն քաղաքացու տունը եւ կարգադրում հաւանած անհնակը ամբողջ կահաւորութեամբ դնել իրենց տրամադրութեան տակ: Ո՞վ կը համարձակէր մերժել: Ցիշեմ այդպիսի բազմաթիւ դէպքերից մէկը:

Զեկայի գաղտնի գործակալներից մէկը՝ մի երիտասարդ ռուս կին՝ մտնում է վաճառական Ա.–ի տունը եւ հրամայում անմիջապէս իրեն յանձնել հիւրասրահը իր ամբողջ բոլանդակութեամբ: Տանտիկինը փորձում է առարկել, բայց ռուս կինը գոռում է վրան՝ յայտնելով, թէ ինքը Զեկայի պաշտօնեայ Օրլովա Դաւիդովան է եւ ուրեմն ի զուր է բողոքը: Փետրուարեան յեղաշրջումից յետոյ այդ կնոջ անհնակում, թղթերի մէջ, գտնուեց Զեկային ուղղուած մի ընդարձակ զեկուցում՝ «Դաշնակների դէմ կռուելու լաւագոյն միջոցների» մասին: Այդ զեկուցումով Օրլովա Դաւիդովան, որը, ի դէպ ասած, էջմիածնի ցարական օրերի ոստիկանապետ Պոպովի աղջիկը դուրս եկաւ – առաջարկում էր, որ Զեկան «Դաշնակներին աննկատելի կերպով ոչնչացնելու» գործը յանձնի իրեն: Դրա համար ինքը գտել է յարմար միջոց.— հարկաւոր է մանր ապակի եւ խառնելով ալիւրի հետ՝ հաց թխել: Այդ հացով կերակրուած բանտարկեալները կը մեռնեն աստիճանաբար, առանց աչքի զարնելու եւ առանց աղմուկի...

Զեկուցումը կարգացողները պատմում էին, որ նրա մէջ առաջ էին բերուած մի շարք պատմական օրինակներ Ֆրանսիական եւ այլ յեղափոխութիւններից, այլ եւ «դիտական փաստեր» ապացուցանելու համար առաջարկի գործնական լինելը: Ծանօթ մարդիկ ասում էին նոյնպէս, որ նոյն այդ Օրլովա Դաւիդովան՝ ուրիշ գլուխ դիւուած, մաուղէր ատրճանակը ձեռքին, ներկայ է եղել բանտում Փետրուար 16 եւ 17 դիշերներին եւ անձամբ մասնակցել դաշնակցականների գնդակահարութեան...

Բռնագրաւումների հետ զուգընթացաբար կատարւում էր եւ «բնակարանների խտացումը»: Գաւյեղիմի կողմից մշակուած յատուկ օրէնքով որոշում էին քաղաքացիների բնակարանային իրաւունքները եւ ապահովում ամէնքի բնակարանային պահանջները: Եւ


ARAM webaram.com

որովհետեւ այդ օրէնքը վաստօրէն չէր պոծադրում պինուորական-ներբի եւ կամաւնիսա «պատասխանատու պոծիչներբի» վերաբերմամբ, այդ պատճառով նա վերածուեց ազատակող անարդարութեան հա-սարակ մահկանացուներբի համար: «Բնակարաններբի խառացում» ա-սածդ վերջ ի վերջոյ յանգեց այն բանի, որ յանուն օրէնքի քաղաքա-յիններբին զուրս էին ձգում իրենց սենեակներից եւ տեղաւորում բո-ղշեւիկներբին: Մարդիկ չէին համարձակւում բողոքել, իսկ բողոքող-ներբին ցոյց էր արւում Զեկան:

Բռնութիւն, կամայականութիւն, մարդկային արժանապատ-ուութեան եւ տարրական իրաւունքների ոտնահարում — ո՞ւր էր կեն-սուրախ եւ ազատասէր Երեւանդին...



ARAM webaram.com

## «ԹԱԼՇԱԲԱԹ»

Պէտք է արդար լինել եւ խոստովանել, որ բոլշեւիկները իրենց ուզածը կազմակերպում էին չատ յաջող եւ այնպէս դաղանի, որ հասարակութիւնը, յաճախ, յանկարծակիի էր բերւում: Ամենավարպետ ծրագրուած ու կազմակերպուած գործերից մէկն էլ, անշուշտ, եղաւ «Պարէնի չարաթը» կամ ինչպէս Երեւանցիք աւելի ճիշտ բնորոշել էին, «Թալչարաթը» (թալանի չարաթը), Յունուար ամսի վերջերին:

Կոմունիստական կուսակցութեան կենտրոնական Կոմիտէն որոշել էր, Ռուսաստանի օրինակով, Հայաստանում էլ դրաւել ու պետական դարձնել ապրանքակութեան մասնաւոր առեւտուրը: Կոմունիստական պետութեան մէջ ամէն ինչ պէտք է լինէր համայնական: Վճռուած էր առաջին հերթին դրաւել պարէնը, ասա՝ ալիւրակեղէնը, յետոյ՝ ոսկին ու արծաթը եւ այսպէս մինչեւ վերջ:

Պարէնի դրաւման համար ամբողջ Երեւանը բաժանուած էր բազմաթիւ մանր մասերի եւ իւրաքանչիւր մասի համար նշանակուած էին կոմունիստներից կազմուած խուզարկու եւ արձանագրող խմբեր: Որպէսզի կողմնապահութիւն չլինի, խմբերը կազմուած էին խառն՝ հայերից, ռուսներից եւ թուրքերից: Խմբերին պարտադրաբար պէտք է մասնակցէին բոլոր կոմունիստները: Նախօրօք գծուած էին մանրամասն հրահանգներ, որոնցմով պիտի ղեկավարուէին խմբերը:

Նշանակուած ժամանակին, Երեւանի բոլոր փողոցների ելուխները բռնուեցին հետեւակ զօրամասերով եւ երթեւեկութիւնը բոլորովին կանգնեցուեց: Աթոռների պողոտայի վրայ դրուեցին թնդանօթներ ու գնդացիրներ: Ամէն տեղ երեւացին ուժեղացուած պահակներ: Բանից անտեղեակ ապրանքակութիւնը մասնուեց ահ ու սարսափի եւ փակուեց տներում: Եւ այս դրութեան մէջ քաղաքը մը-


ARAM webaram.com

նաց երեք օր: Կոմունիստական խմբերը, դիշեր ու ցերեկ, անընդհատ չրջում էին տուն եւ տեղ տներում, մառաններում, դոմերում եւ ամէն տեղ մանրապնդին խուզարկութիւն կատարելով՝ արձանագրում էին մթերքները — ցորեն, ալիւր, թխած հաց, իւղ, պանիր, բրինձ, շաքար, թէյ, սապոն, մոմ եւայլն: Տեղ-տեղ քանդում էին տեղեակի յատակն ու պատերը պահուած մթերքը երեւան հանելու համար: Մարդապլուխ Թողնում էին մէկ ամսուայ պաշար, իսկ մնացածը ամբողջապէս գրաւում էին յօդուտ պետութեան:

Երեւանը մեծ չուկայ չունէր, եւ քաղաքացիք, սովորաբար, ձմեռուայ պաշարը պատրաստում էին առաջուց: Ամէն ընտանիք իրեն համար ունենում էր մի բան: Առնել այդ պաշարը կը նշանակէր շատերին բառացի կերպով սովամահութեան ենթարկել, մանաւանդ որ բոնագրաւուած մթերքի փոխարէն գրամ էլ չէին վճարում, այլ տալիս էին միայն տոացականներ՝ ապագային մթերք տալու խոստումով: Կարելի է երեւակայել, թէ ի՛նչ իրարանցում առաջ եկաւ ապրանաքութեան մէջ բոլշեւիկների օրը ցերեկով կատարած այս թալանի առթիւ: Մարդապլուխ 30 ֆունտ հաց էր Թողնում, — ինչպէ՞ս կարելի էր դրանով ապրել...

Բնականաբար, ինչպէս միշտ, այս անգամ էլ հարուստներն ընդհանրապէս փրկեցին իրենց ունեցածը եւ տուժեցին չքաւորները: Տեղի ունեցան անհաչիւ գողութիւններ, կամայականութիւններ եւ անարդարութիւններ: Վատատակաւոր մանկավարժ Տ. Յարմաճեանից խլեցին գրեթէ վերջին պարկ ցորենը՝ Թողնելով նրա բազմանդամ ընտանիքը սովի ճիրաններում, իսկ վաճառական Ս.-ին, որ երկու չարաթ առաջ կոմիսարներին ճաշ էր տուել, բնաւ չխուզարկեցին էլ: Հայ յայտնի քննադատ Ն. Ալբալեանի 7 հոգինոց ընտանիքից վերցրին սեփական ձեռքով հաւաքած 4 փութ ցորենը եւ 30 ֆունտ իւղը, իսկ մի ուրիշ վաճառական Ա.-ին, որի տանը ապրում էր ներքին գործոց կոմիսարը, ամենեւին չանհանգստացրին էլ: Կոնեակի վաճառական Ա.-ի տանը խուզարկու խումբը բաւականացել էր միայն թէյ խմելով ու նախաճաշելով, իսկ նրա կողքին, կարով ու լուացքով ապրող որբեւայրի Գ.-ից, տարել էր մի քանի փութ ցորենը, որ, խեղճ կինը ինքը հաւաքել էր լքեալ արտերից եւ չալակով բերել իր որբ երեխաներին ապրեցնելու համար: Պարլամենտի նախագահ Յ. Քաջազնունուց գրաւել էին 8 փութ ցորեն, իսկ չարաշահ Ա.-ի բրինձի պահեստները Թողնուել էին անձեռնմխելի: Եւ այսպէս անվերջ:

Հասկնալի է, որ այս ամէնը աննկարագրելի յուզում ու պայ-



ARAM webaram.com

*ոյթի առաջ բերեց հասարակութեան մէջ: Ցայտնուած արտունջների վրայ բոլշեւիկները չարունակ կրկնում էին.— Ո՛չ մի անհատ իրաւունք չունի սեփականութիւն ունենալու: Քաղաքացու առաջնուածքը սեփականութիւն է պետութեան: Երբ պետութիւնը կարիքի մէջ է, պէտք է վերցնի քաղաքացիներից: Երբ քաղաքացիները պէտք ունենան, պետութիւնը կը տայ ինչ որ անհրաժեշտ է: Ի՞նչ խօսք կարող է լինել հատուցման մասին...*

*«Թալչաբաթից» առաջուած մթերքի մի մասը յանձնուեց զօրքին, միւս մասը գնաց պետական ճաշարանները, բայց մեծ բաժինը չան ու գայլի կեր դարձաւ: «Կոմպատանիների» ակումբը, քաղաքային ակումբի ամառուայ չէնքը, բոլոր չեկիստների բնակարանները լիքն էին բռնագրաւուած մթերքներով, որոնք արագօրէն թալանուեցին ու վատնուեցին: Մի փոքր մաս ամառնային ակումբի չէնքում մնացել էր մինչեւ փետրուարեան յեղաշրջումը, եւ մենք յանձնեցինք հասարակական ճաշարաններին:*

*Պարէնի չարաթից բոլշեւիկները, ի հարկէ, չօշափելի օգուտ չտացան: Հասարակութիւնից առնուած մթերքները չմեղմացրին պարենաւորման սուր տագնապը, բայց ժողովրդին աստիճ գայրացրին եւ ընդմիշտ թշնամացրին խորհրդային իշխանութեան: Երեւանցին չատ բանի հետ կարող էր հաշտուել, մոռանալ է՛ւ բանտարկութիւնները, է՛ւ սպանների աքսորը, բայց այնպիսի ոտնձգութիւն իր սեփականութեան հանդէպ չէր կարող հանդուրժել: Եւ միայն պարմանալ կարելի է այն կարճատեսութեան վրայ, որ ցոյց տուին բոլշեւիկները:*

*Այսօր նրանք աշխատում են արդարանալ, որ իրենք պարենաւորման ճգնաժամի պատճառով էին հարկադրուած բռնագրաւումներ կատարելու, մինչդեռ իրենք չատ լաւ տեսնում էին, որ այդ միջոցով կարելի չէր լուծել պարենաւորման հարցը: Եւ այդ չէր բնաւ համատարած բռնագրաւումների պատճառը. ընդհանուր սոցիալիստական յեղաշրջում էին կատարում նրանք եւ ուզում էին ոչնչացնել մասնաւոր սեփականութիւնը: «Թալչաբաթների» նպատակը «կոմունիզմի» իրագործումն էր եւ ոչ թէ պարենաւորման պահանջներին բաւարարութիւն տալը: Եւ հայ բոլշեւիկների յետին թուով կատարած արդարացումները առնուազն միամիտ են ու ծիծաղելի:*

*Արբեցած «Թալչաբաթի» յաջողութիւնից՝ բոլշեւիկները սկսեցին եռանդով պատրաստուել «Սպիտակեղէնի չարաթ»ին, որին պիտի յաջորդէր «Ոսկու չարաթը»: Երեւանը թօթափում էր իր վրայից բուժուական նախապաշարումները եւ ամուր կերպով ոտք կոխում*


ARAM webaram.com

«կոմունիստական չինարարության» ճանապարհի վրայ: Առաջատար Ախալքի չէմքին, հայ «պրոլետարիատը» կատարում էր իր պատմական առաքելությունը...

Հայ «պրոլետարիատից» պակաս եռանդ ցույց չէր տալիս եւ «հայ ընչազուրկ դիւղացին»: Գիւղերում տեղի ունեցած թալանի ու հարստահարութիւնների հետ համեմատած՝ քաղաքներում կատարուածը անմեղ բաներ էին: Գիւղական բռունցքների ու վաչխառուների դէմ կռուելու սահմանուած «դիւղկոմները» ամէն տեղ կապ-մուեցին դիւղի ցեցերից ու քրէական յանցաւորներից: Թայֆայական կռիւներն ու աւազակութիւնները անասելի աստիճանների հասան դաւառում: Զօրքի, պետական պաշտօնեաների եւ կոմունիստների կրիքների համար կատարուող անհաչիւ բռնագրաւումները դործադրւում էին այս «յեղկոմների» ձեռքով, որոնք պետական շահի կողքին չէին մոռանում եւ սեփական օգուտը: Հայ դիւղում տեղի էին ունենում դէպքեր, որոնք յիշեցնում էին պարսից խաների օրերը:

Գիւղացուց խլում էին ամէն ինչ՝ հացը, սերմնացուն, լծկանը, իւղն ու պանիրը, խոտն ու վառելիքը, հատն ու հաւկիթը: Փոխարէնը տալիս էին ատացականներ եւ աուտո խոստումներ: Շատ անգամ ատացական էլ չէին տալիս: Անհաչիւ բռնագրաւումներից առանձնապէս տուժեցին Ծաղկաձորի, Կոտայքի, Նոր Բայազէտի եւ Իջեւանի շրջանները: Ծաղկաձորից, Յունուար ամսին, միայն 10 օրուայ ընթացքում բռնագրաւել էին 1500 ոչխար եւ մի քանի հարիւր տաւար: Մեծ քանակութեամբ մսացու դուրս բերուեց նաեւ Նոր-Բայազէտի դիւղերից: Գրաւուած ցորենն ու տաւարը, ընդհանրապէս, բաժանւում էր ռուս զօրամասերին եւ ուղարկւում էր Ապրիլեան, 11-րդ բանակի կարիքների համար: Հայ դիւղացին՝ տեսնելով այս համատարած թալանը՝ սկսեց մորթել իր լծկաններն ու ոչխարները եւ դաւսրմա չինելով՝ թաղել հողի տակ: Մորթում եւ ուտում էին հաւերը, որ հաւկիթի պարտականութիւնից զերծ լինեն: Մորթում էին կովերը, որ կաթի, իւղի ու պանրի պահանջից ազատուեն: Այնպէս, ինչպէս քաղաքացիք ջարդում ու վառում էին թանկարժէք գրասեղաններ ու պահարաններ, չինուհեան զերաններ ու կահ-կարասիք, դիւղերում՝ կոտորում էին կենդանիներին, անխնայ ուտում սերմնացուն ու լծկանները — միայն թէ բոլշեւիկների ձեռքը չընկնի:

Բռնագրաւումները աւելի եւ աւելի անհեթեթ ձեւեր էին ընդունում: Գիւղերում «յեղկոմ»ները արձանագրում էին ոչխարը, կովն ու հաւը եւ դրա համաձայն պահանջում էին իւղ, պանիր, հաւկիթ: Անկախ նրանից, թէ կովը կթո՞ւմ է, կամ հաւը ածո՞ւմ է,



ARAM webaram.com

տէրը պարտական էր նշանակուած «պարէն–տուրքը» վճարել: Եւ չատ անգամ, գիւղացին հարկադրուած ծախում էր իր ցորենը կամ ոչխարը, որպէսզի դնի իւղ, պանիր ու հաւկիթ եւ տայ տուրքը: Սեւանայ լճի մօտի գիւղերը պարտաւոր էին ձուկ հասցնել բոլշեւիկներին:

Մի չարք գիւղերից պահանջուել էին որոշ կենդանիներ: Կոտայքի Ջրվէժ գիւղի վրայ դրուել էր կաքաւի տուրք: Գիւղացիք պէտք է հասցնէին 250 հատ կաքաւ, եւ գիւղի երիտասարդութիւնը մի քանի օր, ձորերն ընկած, կաքաւ էր որսում կոմիսարների համար: Երեւանից յաճախ ամբողջ արշաւախմբեր էին գնում գիւղերը, թնդանօթներով ու գնդացիրներով, որոնք մի կողմից կոմունիստական զաղափարներ էին քարոզում, միւս կողմից՝ մթերք էին բռնագրաւում: Այս արշաւախումբերը սպառնալիքով, ծեծով ու բանտարկութիւններով՝ ստիպում էին գիւղացիներին վճարել պահանջուած տուրքը: Արշաւախմբերին օգնում էին գիւղական «յեղկոմ»ներն ու «կոմբջիջ»ները: Դժուար չէ երեւակայել, թէ ի՜նչ սարսափելի վիճակ էր ստեղծուած հայ գիւղերում:

Բռնագրաւումների հողի վրայ մի չարք վայրերում տեղի ունեցան տարերային ըմբոստութիւններ. գիւղացիք մերժեցին տալ պահանջուած մթերքը եւ քշեցին յեղկոմներին ու կոմիսարներին: Երեւանից ուղարկուեցին պատժիչ զօրամասեր, որոնք ամբակոծեցին ըմբոստ գիւղերը եւ արեան ու կրակի ուժով ստացան պահանջուածը: Պատժիչ զօրամասերը, սովորաբար, կազմուում էին ռուս գինուորներից ու կոզակներից. հայ գինուորներին չէին վստահում: Ռուսները չէին խնայում «Դաշնակ գիւղացիներին» եւ աննկարագրելի բռնութիւններ էին գործ դնում:

Բռնագրաւումների թողած ծանր ազդեցութիւնները մեղմացնելու համար՝ բոլշեւիկները շուայլ խոստումներ էին տալիս ժողովրդին: Թիֆլիսում եւ միւս նահանգներում ամէն օր կրկնւում էր, որ Ռուսաստանից մի չարք գնացքներով հաց ու ապրանք է գալիս Հայաստանի համար, թէ Բաքւում պատրաստ կանգնած են ալիւրով, բրինձով ու նաւթով բեռնուած գնացքներ, որ առաջին գնացքը արդէն հասել է Փոյլի կայարանը, բայց Վրաստանը ճանապարհը կըտրել է ու չի թողնում: Մերթ ընդ մերթ հրապարակւում էին եւ թուներ. առաջին հերթին, Հիւսիսային Կովկասից պիտի գար 300,000 փութ ցորեն, Մոսկուայից՝ մէկ ու կէս միլիոն արշին մանուֆակտուրա եւ 3 միլիոն բուբլի ոսկի, Բաքուից՝ 400 ցիստէրն նաւթ: Ժողովուրդը սկզբում հաւատում էր եւ սրտատրոփ սպասում, բայց շու-


ARAM webaram.com

ատ համոզուեց, որ սուտ է եւ սկսեց հեգնանքով ու ծաղրով վերաբերուել դէպի բոլշեւիկեան խոստումները, որոնցից եւ ոչ մէկը չէր արդարացուել, Հայաստան բերուեց միայն մէկ աւտոմօբիլ սովետական թղթադրամ եւ մի քանի սայլ կոմունիստական գրքոյկներ ու թռուցիկներ...

Բայց դրա փոխարէն, բոլշեւիկները սկսեցին մեծ եռանդով պարպել Հայաստանի պահեստները: Ամէնից առաջ առնուեցին զինուորական հագուստները, մթերքները, ռազմական պիտոյքները: Եբեւան հասած սկզբի ու սոված կարմիր բանակայիններն անմիջապէս հագնուեցին «Դաշնակների» հագուստով եւ Հայաստանի բեռնակիր աւտոմօբիլները պարէն ու ռազմամթերք լեցնելով՝ վերադարձան Ադրբէյջան: Ապա, հետզհետէ սկսեցին ուղարկել նաւէրներ — «Հայաստանի պրոլէտարիատից նուէր ընկեր Լենինին», նոյն պրոլէտարիատից «նուէր 11-րդ բանակին», նուէր՝ «Ադրբէյջանի աշխատաւորութեան» եւայլն եւայլն: Տանում էին որբանոցների ալիւրը, խտացրած կաթ, կակաո, մանուֆակտուրա, կաշի, կօնեակ, չաքար, աւտոմօբիլի պարագաներ: Տարին «նոր դիմնազիայի» չէնքի համար պատրաստուած մի քանի վահօն ապակին ու այլ արժէքաւոր ապրանքներ Ղարաքիլիսայի պահեստից: Ապակին տեղ չէին հասցրել. Ղարաքիլիսա–Դիլիջան ճանապարհին սայլերը մնացել էին ձեան մէջ եւ ապակին՝ կոտրատել ու փշացել:

Մեւս կողմից խնամատարութեան ու ֆինանսական նախարարութեանց պահեստների ապրանքը արագ կերպով բաժանւում էր կոմունիստների մէջ: «Հարուածող բաժիններին» եւ սովորական «պայօկ»ների ձեւով մի քանի չաբաթուայ մէջ դոլորշիացան նախորդ կառավարութեան օրով այնքա՛ն դժուարութեամբ հաւաքուած եւ խնամքով պահուած հագուստեղէնը, կօշիկները, չաքարը, ալիւրը, բրինձը, թէյը, ծխախոտը, սապոնը, լուցկին... Որքան նախորդ իշխանութեան մարդիկ ժլատ էին եւ ծայրայեղ աստիճանի խնայող, այնքան այս նորերը չռայլ էին եւ անխնայ դէպի ժողովրդական հարստութիւնները: Ռուսաստանի դանապան ծայրերից յարձակուեցին պահեստների վրայ եւ ձեռքից ձեռք էին խլում պետական ապրանքները: Մի զարշելի թալան էր կատարւում օրը ցերեկով, ամէնքի աչքի առջեւ: Ամէն չաբաթ սարքւում էին ազմկոտ քէֆեր այս ու այն կոմիսարի կամ «պատասխանատու գործչի» բնակարանում: «Արարատ» պետական գործարանի հին դինիներն ու կոնեակը առատ հոսում էին այդ քէֆերին: Ամբողջ քաղաքը խօսում էր բոլշեւիկների կեր ու խումի եւ քէֆերի մասին...



ARAM webaram.com

Այո՛, բոլշեւիկները սիրում էին ուտել ու խմել: Կոմմնակի դիտողի վրայ նրանց վարմունքը այնպիսի տպաւորութիւն էր թողնում, որ, կարծես, թշնամիներ էին մտել Հայաստան եւ՝ վատահ չլինելով իրենց իշխանութեան յարատեւութեան վրայ՝ աշխատում էին օգտուել առիթից եւ առնել ինչ որ կարելի էր առնել: Փեթրիմ կարաբէքիրի հորդաները քանդում եւ ամայացնում էին Կարսի եւ Շիրակի շրջանները, իսկ բոլշեւիկ հորդաները աւերում ու փշացնում էին հայ ժողովրդի նիւթական ու բարոյական ստացուածքը: Աւելի անխիղճ, աւելի տմարդի ու խելագար վարմունք դժուար էր երեւակայել:

Հայ ժողովուրդը տեսնում էր այս ամէնը: Զայրոյթը նրա մէջ օր օրի վրայ դիզւում ու լեռնանում էր: Եւ աւելի ու աւելի դժուար էր լինում զսպել այդ զայրոյթի ժայթքումը...


ARAM webaram.com

## «ՊԵՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ»

Բոլշեւիկները ոչ պակաս անձնապաստան, քայլ եւ նոյնքան ապիկար դուրս եկան եւ, նեղ մտքով առած, պետական չինարարութեան ասպարէզում: Հասնելով Հայաստան՝ նրանց առաջին գործը եղաւ ոչնչացնել «Դաշնակների» ստեղծած բոլոր օրէնքները, հիմնարկութիւնները եւ կազմակերպութիւնները եւ պարտադիր յայտարարել Սով. Ռուսաստանի օրէնքներն ու հաստատութիւնները: Եւ որովհետեւ ո՛չ ձեռնհաս ղեկավարներ ունէին եւ ո՛չ բարեխիղճ ու յարատեւ աշխատանքի ընդունակ պաշտօնեաներ, հինը արագ քանդուեց, իսկ տեղը ո՛չ մի կանոնաւոր նոր չէնք չշինուեց: «Դաշնակ» պաշտօնեաներից ամենակարեւորներին հեռացրին եւ տեղը դրին իրենց մարդկանց, որոնց գլխաւոր առաքինութիւնն էր «չարաթօրեակներ» կազմակերպել եւ միտինգներում հակադաշնակցական ճառեր արտասանել:

Կարճ ժամանակում վերացուեցին քաղաքային եւ գաւառական ընտրովի ինքնավարութիւնները եւ նշանակուեցին յեղկոմներ: Պետական հիմնարկութիւնները վերակազմուեցին ռուսական օրինակով, եւ փաստօրէն նորից սիրող գարձաւ ռուսերէնն լեզուն: Բացուեցին բազմաթիւ նոր վարչութիւններ անհաշիւ պաշտօնեաներով: Մեր ժամանակ, երբ դեռ կարսի նահանգը, Զանգեզուրը, Նախիջեւանն ու Սուրմալուն էլ Հայաստանի մէջ էին մտնում, պետական պաշտօնեաների թիւը՝ մէջը հաշուելով միլիցիան ու մօտ 500 երկաթուղային պաշտօնէութիւնը, հասնում էր 16,000 հոգու, որի առթիւ ահագին դժգոհութիւն կար, եւ պարլամենտը յատուկ յանձնաժողովի միջոցով սկսել էր կրճատել եւ վերջերս հասցրել էր 12,000–ի· իսկ բոլ-



ARAM webaram.com

չեխիների օրով պաշտօնէութեան թիւը հասաւ 36,000-ի եւ դեռ ամէն օր աւելանում էր:

Կոմունիստների սկզբունքն էր, — իւրաքանչիւր քաղաքացի պէտք է լինի պետական պաշտօնեայ, եւ հիմնարկութիւնները լեցուում էին ամէն կողմից հաւաքուող բոլշեւիկներով: Ռուսաստանում հայ կոմունիստների մօբիլիզացիա էր յայտարարուած՝ առիպոդաբար Հայաստան ուղարկուելու նպատակով, բայց Հայաստան էին պալիս նրանք, որոնք դիրք ու պաշտօն չունէին Ռուսաստանում: Փիչ-չաո խելքի ու դիրքի տէր մարդիկ չէին չտապում եւ վերադառնում էին մնալ Ռուսաստանում: Եւ զարմանալի չէ, որ Հայաստանի պետական հիմնարկութիւնները լեցուեցին թերուս, հայ իրականութեան ու լեզուին անտեղեակ, յաճախ երես առած ու բախտախնդիր կոմունիստներով, որոնց աւելի հետաքրքրում էին թատրոնական «չաքթօրեակ»ները եւ մթերքաբաժինները, քան պաշտօնատների պրպտնեղիչ աշխատանքը: Այս նորեկ կոմունիստների մեծ ոհմակը, անգամ զեկավարներից շատերը, բառիս բուն նշանակութեամբ անծանօթ էին Հայաստանին եւ ոչնչով կապուած չէին նրա հետ, չէին հետաքրքրւում ու չէին ապրում նրանով: Ոմանք էլ եկել էին, որովհետեւ այդ էր Մոսկուայի հրամանը: Եկել էին իրենց կամքին հակառակ, դժկամակութեամբ:

Յիշում եմ այսպիսի մի դէպք: Ղարաբաղի հայրենակցական Միութեան նախագահ Եղիշէ Իշխանեանի հետ կապուած ինչ որ խնդրի համար ինձ կանչել էին Զեկայ՝ յուշմունքներ տալու:

— Եղիշէ Իշխանեանին ճանաչո՞ւմ էք, սկսեց հարցաքննութիւնը ռուսերէն լեզուով՝ քննիչը, ինձ անծանօթ, բայց, ըստ երեւոյթին, համակրելի մի երիտասարդ, որ նոր էր եկել Հայաստան:

— Ճանաչում եմ Բախչի Իշխանեանին, — պատասխանեցի ես:

— Դա մեւնո՞յն մարդն է... — Ու քիչ մտածելուց յետոյ, երեւի, յիշելով, որ Բախչի Իշխանեանը բանտուած է, նորէն դիմեց ինձ.

— Ասում են Եղիշէ Իշխանեանը Դարալագեազումն է, ճի՞շդ է:

— Չգիտե՛մ:

— Իսկ, ասացէ՛ք խնդրեմ, ի՞նչ բան է այդ Դարալագեազ ասուածը՝ գի՞ւղ է, քաղա՞ք է, երկաթուղու մօ՞տ է, ինչքա՞ն ժամանակից կարելի է հասնել...

Ես բացատրեցի, թէ ինչ բան է, «այդ Դարալագեազ ասուածը», եւ նա չատ գժգոհ մնաց, որ այնտեղ երկաթուղի չի գնում:

— Գիտե՛ք, զարմաւ նա ինձ, կարծես արդարանալով, բերել


ARAM webaram.com

են մեզ այս նզովեալ լեռների մէջ, ո՛չ գիւղը գիտենք, ո՛չ քաղաքը: Ամբողջ կեանքս Թուսաստանում եմ ապրել. ես ի՞նչ գիտեմ, թէ աշխարհիս երեսին ինչ որ Դարալագեազ էլ գոյութիւն ունի: Եւ ինչի՞ս է հարկաւոր այդ անիծեալ Դարալագեազը...

Ի հարկէ, ինչի՞ն էր հարկաւոր այդ խեղճ երիտասարդին այդ անիծեալ Դարալագեազը — եւ ամբո՛ղջ Հայաստանը, որի ո՛չ լեռն էր խօսում հոգուն, ո՛չ դաշտը: Եւ այն ժամանակ, երբ նա որոնում էր Եղիշէ Իչխանեանին, վերջինս Դարալագեազի Ցեղկոմի նախագահ էր...

Այդ դեռ Զեկայի մի երկրորդական քննիչն էր, իսկ պարենաւորման ժողկոմը, մի օր, Ապարանի անունը լսելով՝ զարմանքով հարցնում է.

— Ի՞նչ է այդ Ապարանը, դի՞ւղ է թէ քաղաք...

Եւ չատ վատ է լինում, երբ Հայաստանի կառավարութեան անդամին բացատրում են, որ Ապարանը Հայաստանի մէկ գաւառակն է, մօտ երեք տասնեակ գիւղերով:

Այսպիսի մարդիկ էին եկել Հայաստանը կառավարելու:

Եւ ցաւը այն չէ, թէ նրանք չէին ճանաչում իրենց կառավարած երկիրը. նրանք չէին էլ ձգտում ճանաչելու: Կառավարելու համար նրանք ունէին պատրաստի կազապարներ, — ա՛յն, որ զործ էին ածւում Թուսաստանում եւ կուրօրէն հետեւում էին նրանց առանց հաշուի առնելու տեղական առանձնայատկութիւնները: Կառավարելու այս ձեւը չատ հեշտ էր. երկիրն ուսումնասիրելու եւ ժողովրդի կենցաղին եւ հոգեկան կեանքին ծանօթանալու պէտք չկար, բաւական էր ունենալ ռուսական սուիններ եւ ուղիղ հետադրաթել...

Ուղիղ հետադրաթելը հայ կոմունիստների ներշնչման եւ պետական իմաստութեան աղբիւրն էր: Ամէն անգամ, երբ լուրջ հարց էր ծագում, միանում էին ուղիղ հետադրաթելով Բաքուի հետ, եւ ինչ որ հրամայէր Կաւբիւրոյի նախագահ Օրջօնիկիձէն, կամ 11-րդ բանակի հրամանատար Հէկկէրը, այնպէս էլ կ՚անէին: Սրանք էին Հայաստանի կառավարութիւնը, իսկ Կասեանի Ցեղկոմը մի ժժգոյն ցուցանակ էր, մի ոլորմելի խամաճիկ — ուրիշ ոչինչ: Ցեղկոմի անդամները իրենք էլ չատ լուրջ նշանակութիւն չէին տալիս իրենց հրատարակած օրէնքներին եւ արած կարգադրութիւններին եւ հեգնանքով էին վերաբերում դէպի կառավարութեան պետը՝ Կասեանը՝ չնորհունակ «Սարկաւագը»:

Ցեղկոմի կազմը յաճախ փոխւում էր, նշանակում էին պատահական, ըստ ամենայնի անարժան մարդիկ: Այսպէս, ներքին գոր-



ARAM webaram.com

ծոց կոմիսար էր Բաղուեցի նախկին զործակատար Դոլլաթեանը, որը իր պաշտօնը չարաչահում էր, սպեկուլեացիայով էր զբաղում եւ կաշառք էր ուտում: Ֆինանսների կոմիսար էր «Հայկօօպի» հաշուապահ Ե. Եղիկեանը՝ մի տգէտ ու մոլորուած ծերուկ, որը ինքն էլ էր ծիծաղում իր պաշտօնի վրայ: Արդարադատութեան կոմիսար էր կարգուած, ինչպէս տեսանք քեմալական սպայ Սուլէյման Նուրին, որ Մուսթաֆա Քեմալի զործակալն էր եւ Երեւանի տաճիկ ներկայացուցչի միջոցով Անդորա տեղեկութիւն էր հասցնում Հայաստանի եւ, առհասարակ, բոլշեւիկների վիճակի մասին: Քիչ էին իրենց դիրքին ու պաշտօնին դիտակից եւ ազնիւ մարդիկ, բայց այդ պիսիներն էլ չուտ զգուեցին տիրող խայտառակ վիճակից եւ հեռացան:

Բացի Օրջոնիկիձէից եւ 11-րդ բանակի հրամանատարութիւնից՝ հայ բոլշեւիկների վարուելակերպի վրայ ահագին ազդեցութիւն ունէին է'ւ ապրէլեանցի կոմունիստները: Նրանք պահանջում էին, որ հայ բոլշեւիկները անողոք լինեն դէպի «Դաշնակ»ները, ստիպում էին բանտարկութիւններ ու զնդակահարութիւններ անել, եւ հայերը՝ իրենց թուրք ընկերների առջեւ պարզերեա երեւալու ձգտումով, եռանդ էին ցոյց տալիս եւ Դաշնակցութեան դէմ ձեռք էին առնում արտակարգ միջոցներ: Անարի, խեղճ ու փոքրոգի՝ հայ բոլշեւիկները ապաստարի կամակատարութեամբ խոնարհւում էին Նարիմանովների, Հիւսէյնովների ու Քարաեւների առջեւ, որպէս զի այս վերջիններս իրենց պակաս յեղափոխական չհամարեն. Հայաստանը աստիճանաբար վեր էին ածում զժոխքի, մինչ նոյն այդ ժամանակ Ապրբէյջանցի մուսաւաթականները վայելում էին նոյն Նարիմանովների ու Հիւսէյնովների բարեհաճ հովանաւորութիւնը:

Հայաստանում միակ կազմակերպուած, զործունեայ եւ լայն նախաձեռնութիւն ունեցող հիմնարկութիւնը Ձեկան էր, որը նախանձելի եռանդով կռւում էր «հակայեղափոխութեան եւ չարաչահութեան դէմ»: Նրա առջեւ պրսխ էին խոնարհում բոլոր իշխանութիւնները: Իսկապէս, Ձեկան ինքնուրոյն եւ անկախ մարմին էր, որի հետ համեմատած Ցեղկոմը անոյժ էր եւ ողորմելի: Ցեղկոմը մի քանի անգամ փորձեր արաւ իր ազդեցութեան եւ օրէնքի տակ դնելու Ձեկայի զործունէութիւնը, բայց դրանից ոչինչ դուրս չեկաւ: Փորձեցին Ձեկայի իրաւասութիւնը սահմանափակել եւ զաւառատանական մասը ամփոփել Ցեղտրիբունալի մէջ, բայց այդ էլ անցաւ անյաջող: Ցեղտրիբունալը մինչեւ վերջ էլ զործի չկարաւ, մնաց առհասարհուած, իսկ Ձեկան չարունակեց իր ամենազօր իշխանութիւնը:



ARAM webaram.com

Նա և՛ ռամիկանական մարմին էր, և՛ քննիչ, և՛ դատաստանական, և՛ դահիճ: Նա և՛ խուզարկութիւններ էր անում, և՛ բանտարկում ու աքսորում, և՛ մահավճիռ արձակում եւ դնդակահարութիւններ կատարում: Նա ամէն ի՛նչ էր: Նրա համար օրէնք չկար. նա ի՛նքն էր օրէնքը: Եւ նոյնիսկ Ցեղկոմի անդամներն ու նախագահը խոնարհում էին նրա կամքի առջեւ:

Բոլշեւիկների պետական իմաստութեան դլուխ գործոցը «Դաշնակ»ների չինածը քանդելն ու «Դաշնակ»ներին հայհոյելն էր: Նրանք աշխատում էին այնպէս անել, որ «Դաշնակ»ների պետութիւնից ո՛չ մի հետք չմնայ եւ մեծ փութկոտութեամբ ոչնչացնում էին «Դաշնակ»ների արխիւները: Երեւանի Գաւյեղկոմի որոշումով այրուեցին Երեւան քաղաքի եւ գաւառական ինքնավարութեան թղթերը: Տարիների ընթացքում մեծ խնամքով պահուած ահագին պատմական ու գործնական արժէք ունեցող հարիւրաւոր կապոց նիւթերը մի քանի օր տաքացնում էին գաւյեղկոմի սենեակների վառարանները: Նախարարութիւնների, դատարանների, դինուորական ու քաղաքացիական հիմնարկութիւնների արխիւները — աւելի քան 600 փութ — ուղարկուել էին Պարսկաստան, իբրեւ «վալիւտային արժէք» ապրանքափոխանութեան համար:

Այդ թղթերը ծախուել էին Թաւրիզի չուկայում, պարսիկ վաճառականներին, որոնք նրանց մէջ ապրանք էին փաթաթում: Ես ինքս Թաւրիզում, խաղողամաճառ պարսիկի մօտ տեսել եմ տոպրակներ՝ չինուած Հայ Հանրապետութեան Գիւղատնտեսութեան նախարարութեան պաշտօնական դրութիւններից, որոնցից մէկի վրայ կար իմ տորթագրութիւնը, մեսակ վրայ՝ Ստ. Կամսարականի: Թաւրիզում տեսել եմ Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարութեան արխիւի թղթերից չինուած տոպրակներ: Թաւրիզի ամերիկեան դարմանատան բժիշկը ինձ ուղարկել էր մի կապոց թղթեր Հայաստանի արխիւներից, որ ամերիկեան պաշտօնեան գնել էր չուկայից դեղեր փաթաթելու համար: Հանրային կրթութեան նախկին նախարար Նիկ. Աղբալեանը Թաւրիզի մի նպարավաճառի մօտ տեսել էր տոպրակի վերածուած իր մէկ պաշտօնական դրութիւնը՝ ուղղուած Սարդարապատի քաղաքային վարչութեան... Սրանք բոլորը պատահարար Թաւրիզ ընկած թղթեր չէին. Թաւրիզի խանութներում յաճախ կարելի էր տեսնել տոպրակներ Հայաստանի «Դաշնակ» կառավարութեան արխիւների թղթերից: Պանիր, չաքար, թէու վարունգ, սոխ, չամիչ եւ այլ տեսակ Թաւրիզեան բարիքներ վաճառւում էին «Դաշնակ» նա-



ARAM webaram.com

*խարարների ու գործիչների առորագրութիւնը կրող թղթերի մէջ վաճառուած...*

*Բոլշեւիկների համար դա ամբողջ մի սխեմա էր — այնպէս անել, որ Դաշնակցութիւնից ո՛չ մի հետք չմնայ Հայաստանի պատմութեան էջերում...*

*Այս հոգեբանութեամբ էր ներշնչուած եւ բոլշեւիկների օրէնդրութիւնը: Նրանք, սովորաբար, քիչ էին կարեւորութիւն տալիս օրէնքներին եւ, ինչպէս յաճախ էին արտայայտւում՝ օրէնքները դրւում էին միայն ժողովրդի համար: Իրենք՝ բոլշեւիկները օրէնքից վեր էին: Կապկօրէն թարգմանւում էին ռուսական օրէնքները՝ վերին աստիճան անփոյթ ու տղէտ կերպով, առանց նոյն իսկ արտաքին ձեւերը պահպանելու: Յաճախ փոխոխում էին օրէնքները, լրացնում, բացատրում:*

*Մի շարք օրէնքներ եւ կարգադրութիւններ, յատկապէս դիւղատնտեսական նախարարութեան վերաբերուող եւ հողային խնդիրը չօչափող, համարեա բառացի կրկնութիւնն էին մեր հրատարակած օրէնքների, բայց որպէս դի չասուի, թէ «Դաշնակ»ների օրէնքները պահուել են անխախտ, հանդիսաւորապէս յայտարարեցին բոլոր մեր օրէնքները ջնջուած եւ յետոյ հրատարակեցին իրենց նոր օրէնքը, որի առթիւ ահագին աղմուկ հանեցին՝ թմբկահարելով, թէ «բանուորադիւղացիական իշխանութիւնը» մէկ հարուածով լուծեց «Դաշնակ»ների խճճած հողային հարցը:*

*Աղմուկ ու շարժում շատ կար: Անհաչիւ եռանդ ու դրամ էր ապառում: Անվերջ ծրագիրներ էին կազմւում, թղթեր գրւում: Ժողովներ, խորհրդակցութիւններ, յանձնախմբեր, զեկուցումներ, վէճ, յուզում. իսկ մէջտեղը չօչափելի ո՛չ մի գործ: Թերթերում գրածներին ու մխիթարներում խօսուածներին որ հաւատայիր, երկրում ահագին «չինարար» աշխատանք կատարուած պիտի լինէր, մինչ իրականութեան մէջ թղթից ու խօսքից զատ ոչինչ չկար: Պետական պաշտօնատները զարձել էին անգործութեան վայր: Միակ բանը, որով բոլոր հաստատութիւնների մէջ զբաղւում էին մեծ եռանդով, «մթերքաբաժինն» էր...*

*Հասարակական կեանք ու նախաձեռնութիւն գոյութիւն չունէր: Քաղաքային ու գաւառական ինքնավարութիւնների կենդանի գործունէութիւնը չկար: Նրանց տեղ դրուած էին յեղկոմներ, որոնք կենարանի գործակալներն էին եւ Չեկայի կամակատարը: Ժողովուրդը նրանց նայում էր խորթ աչքով: Կօօպերատիւ շարժումը, որ Հայաստանում ծաղկում էր եւ պատկառելի ոյժ էր վերածուել, ապան-*


ARAM webaram.com

ուեց։ «Հայկօօպը» դարձաւ կառավարական մարմին եւ սկսեց արագ կերպով կծկուել։ Եւ միայն նրա դեկավարների քաղաքական ազդեցութեան կարելի է վերագրել, որ նա ի սպառ չքայքայուեց եւ պահեց իր դոյութիւնը։

Ո՛չ մի դրական գործ չկատարելով պետական ներքին կեանքում, բոլշեւիկները աւելի՛ անճարակ դառնացին արտաքին քաղաքականութեան մէջ։ Հայաստանի խորհրդայնացման դլխաւոր պատճառը Թրքական խնդիրն էր։ Հայ ժողովուրդը հաւատում էր, որ ռուս զօրքի ներկայութիւնը Հայաստանում բաւական կը լինի, որ տաճիկները քաշուեն ո՛չ միայն Ախուրեանի եւ Արաքսի ափերից, այլեւ կարսից։

Իրենք հայ կոմունիստներն էլ նոյնն էին կրկնում։ Նրանք ամենակծու խօսքերով դատապարտում էին «Դաշնակ»ների ստորագրած Ալեքսանդրապոլի դաշնագիրը, հաւատացնում էին, որ սով. իչխանութիւնը կը լուծէ Հայաստանի տահմանների հարցը եւ նոյնիսկ ակնարկներ էին անում Թրքահայաստանի մասին։ Սակայն ռուսները եկան ու նստեցին Երեւանում։ Հայաստանի արտաքին գործերի կոմիսարը իրար յետեւից հեռագիրներ էր քաշում Անդորա՝ պահանջելով Ալեքսանդրապոլի պարպումը, իսկ թուրքերը ամուր նստել էին Արաքսի ափին եւ Արագածի վէշերին եւ տեղից չէին շարժուում։ Եւ ոչ միայն չէին հեռանում, այլեւ արհամարհական պատասխաններ էին տալիս Հայաստանի Յեղկոմին եւ հէնց բոլշեւիկների աչքի առջեւ թալանում, աւերում ու կոտորում էին Շիրակի հայկական գիւղերը։

Ի վերջոյ, բոլշեւիկները ստիպուած եղան դիմել Ալեքսանդրապոլի դաշնագրի անունից, բայց այդ էլ չօգնեց։ Ընդհակառակը, տաճիկները սկսեցին հալածել եւ բոլշեւիկներին Ալեքսանդրապոլում։ Եւ այն տեղի հայ կոմունիստները, որոնք դեռ երէկ, օգնում էին Քեազիմ Կարաբէքիր փաշային Դաշնակների դէմ(*), ստիպուած եղան փախչել իրենց անձը փրկելու համար։

---

(*) Երբ թուրք զօրքերը գրաւեցին Ալեքսանդրապոլը, այնտեղի բոլշեւիկները կարմիր դրօշակներով եւ ողջոյնի ճառերով դիմաւորեցին ասկեարներին։ Ի պատիւ տաճիկ զօրքերի կազմուած միտինգներից մէկում, հայ կոմունիստների ներկայացուցիչ ընկ. Նուշիկը ողջոյնի ու փառաբանութեան խօսքեր ուղղեց Քեազիմ Կարաբէքիր փաշային եւ, ի միջի այլոց, ասաց։

— Մենք ողջունում ենք Քեազիմ Կարաբէքիրի վեհանձն եւ ազ-



ARAM webaram.com

Հայաստանի ժողովուրդը ապշած ու հիասթափուած նայում էր բոլշեւիկներին: Ո՞ւր է հապա Մոսկուան. ինչո՞ւ չի միջամտում: Ո՞ւր են նրա խոստումները օգնելու հայերին: Ո՞ւր են Լէդրանի հաւատիացումները: Ի՞նչ եղան հայ կոմունիստների յոխորտանքները: Մոսկուան լուռ էր, որովհետեւ նա այդ ժամանակ ամբողջ Հայաստանն էլ, Թիֆլիսն էլ դուցէ, կը դիջէր Թուրքերին, միայն թէ նրանց պահէր բարեկամ, որովհետեւ Մոսկուայի արեւելեան քաղաքականութեան եւ Անգլիայի դէմ վարած պայքարի տեսակէտից Անդրան շատ աւելի մեծ կարեւորութիւն ունէր, քան մի քանի Հայաստաններ միասին առած:

Փետրուարի սկիզբներին Յարհրդային Հայաստանի եւ տաճկների յարաբերութիւնները այնպէս էին սրուել, որ ժողովուրդը սըրտատրոփ պատերազմի էր սպասում: Եղան օրեր, որ Երեւանում յատուկ լուրեր տարածուեցին, թէ Սարդարապատի ու Ղամարլուի կողմերը ընդհարումներ են տեղի ունեցել Թուրք սակեարների եւ կարմիր զօրքերի միջեւ: Հասարակութիւնը չափազանց յուզուած էր եւ ապրում կասկածի ու անորոշութեան մէջ: Ամէնքը եկել էին այն համոզման, որ բոլշեւիկներն անզօր են ապահովելու հայ ժողովրդի քիպիքական գոյութիւնը եւ որ ուս քեմալական բարեկամութեան մէջ տեղ չունի Հայաստանը:

Հայ կոմունիստները նոյն անկարողութիւնը ցոյց տուին եւ միւս հարեւանների նկատմամբ: Հայ–ադրբէջանեան սահմանային վէճը չլուծուեց, չնայած, որ Ադրբէջանի Ցեղկոմը դեռ Մայիս ամսին յայտարարել էր, թէ ինքը հրաժարւում է Լեռնային Ղարաբաղից յօգուտ Խ. Հայաստանի: Ադրբէջանցիք հետագային յայտնեցին, որ իրենց այդ յայտարարութիւնը եղել է լոկ խաղ «Դաշնակ»ների դէմ եւ որ իրենք ամէնեւին նպատակ չեն ունեցել Ղարաբաղից ձեռք քաշելու: Չնայած որ Հայաստանից հեռացած Թուրքերը պատրաստում էին իրենց տեղերը, Ադրբէջանցիք մինչեւ վերջ էլ իրաւունք չտուին վերադառնալու, Նուխեցի ու Արէշցի հայ գաղթականներին: Զանգիբասար վերադարձած 3000–ից աւելի Թուրք գիւղացիները քշեցին Նուխեցիներին եւ բռնեցին նրանց տեղերը: Նու–

---

նիւ բանակը, որ եկաւ ազատելու մեզ «Դաշնակ»ների բռնութիւններից···

Նոյն այդ միջոցին Քեազիմ կարաբէքիրը վերջնագիր էր տուել Հայաստանի ներկայացուցիչներին, իսկ ասկեարները թալանում էին Շիրակի հայ գիւղերը եւ կոտորում հայ ազգաբնակութիւնը···



ARAM webaram.com

խեղճները մնացին կախուած օդի մէջ. ո՛չ Ազրէյեան իրաւունք ուներին վերադառնալ, ո՛չ էլ Հայաստանում տեղ ունէին:

Աւելի վատ էին յարաբերութիւնները Վրաստանի հետ: Հայաստանի Ցեղասպի բոլոր պահանջներին ու հայհոյանքներին վրաց կառավարութիւնը պատասխանում էր արհամարհանքով: Վրացիք մերժեցին դատարկել ապօրինի կերպով գրաւուած Լոռին, կտրեցին Հայաստանի երկաթուղային հաղորդակցութիւնը Բաթումի ու Բաքուի հետ, ձեռք դրին Հայաստանի Թիֆլիսի ներկայացուցչութեան վրայ, եւ Հայաստանի բոլշեւիկ վարիչները անզօր՝ նրանց խօսք հասկըցնելու՝ դրդում էին Վրաստանի դէմ լոռեցի գիւղացիներին: Եւ վրաց կառավարութիւնը, փոխանակ քաշուելու Լոռիից եւ հաւաքուելու Վրաստանի ազգային սահմաններում մէջ, յամառեց եւ դեռ պնդում է նրանց իր կոյր ագահութեան:

Այսպէս, ուրեմն, ո՛չ ներքին քաղաքականութեան մէջ՝ հայ ժողովրդի հանդէպ, եւ ո՛չ արտաքին ուժերի հետ Հայաստանի Խորհրդային իշխանութիւնը չկարողացաւ ընդհանուր լեզու գտնել եւ դէմ նուազագոյն չափով արդարացնել իր վրայ դրուած յոյսերը: Նա Հայաստան մտաւ իբրեւ թշնամի եւ մինչեւ վերջ էլ մնաց թշնամի: Հայաստանի նեղ հորիզոնը բոլշեւիկների տիրապետութեան տակ էլ աւելի նեղացաւ եւ դարձաւ անհանդուրժելի: Երկուս ու կէս ամսուայ ժամանակամիջոցը կատարելապէս բաւական եղաւ, որպէսզի Հայաստանում ամէնքը թշնամի դառնան նորելի իշխանութեան եւ սկսեն փրկութեան ուղիներ որոնել: Եւ ընդհանուր վրդովմամբ էին լսում Տրոցկիի մամուլում ու մխիթարներում ամէն օր կրկնուող խօսքերը. «Մենք երկրագունդը կը վերածենք դրախտ...»:

Ահա այս դէպքերի ու զազափարների առիթած հոգեբանական մթնոլորտում ծնունդ առաւ ու հասունացաւ ժողովրդական զայրոյթը, որ այնպէս տարերային կերպով պայթեց Փետրուարի 18-ին:



ARAM webaram.com

# ԱՊԱՐԴԻՒՆ ՃԻԳԵՐ

## ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԱՍԵԱՆԻ, ԱԹԱՐԲԵԳԵԱՆԻ ԵՒ ԱԻԻՍԻ ՀԵՏ

1920 թ. Դեկտեմբերի 2-ից մինչեւ 1921 թ. Փետրուարի 18 Հայաստանը պանուում էր Ամբարձեան—Ալիխ խմբակի ձեռքին:

Կասեանի իշխանութիւնը անուանական էր. նա ո՛չ մի հեղինակութիւն չունէր ո՛չ ժողովուրդի, ո՛չ էլ կոմունիստական կուսակցութեան մէջ: Ամբարձեանը Համառուսական Զեկայի լիազօր ներկայացուցիչ էր եւ Հայաստան էր եկել «հակայեղափոխութեան» դէմ կռուելու համար, իսկ Ալիխը պինուորական կոմիսար էր եւ ամենէն ազդեցիկ անձը այն ժամանակ Հայաստանում պանուող հայ կոմունիստների շարքում: Երկուսն էլ կուսակից էին Ծայրայեղ բանուորների ու քաղաքացիական կռուի: Երկուսի ձեռքին էր Հայաստանի իրական իշխանութիւնը եւ կոմունիստական կուսակցութեան դեկավարութիւնը: Նրանց աչքին Հայաստանը կոմունիստական փորձերի վայր էր, եւ հայ ժողովուրդը արժէք ունէր այն չափով, որչափով որ նպաստում էր պրոլետարական դիկտատուրային ու համաշխարհային յեղափոխութեան:

«Պրոլետարական դիկտատուրան ոչ մի երկրում չի կարող ամբանալ առանց քաղաքացիական կռուի բովից անցնելու: Հայաստանը չպիտի բացառութիւն կազմէր», — ամէն օր կրկնում էր բոլշեւիկեան միջինդներում եւ «Կոմունիստ» թերթի էջերից:

Եւ, իրօք, բոլշեւիկների բոլոր ջանքերն ուղղուած էին այն կողմ, որ քաղաքացիական կռիւ ստեղծուի: Եւ «Ջահել» կոմունիստ-



ARAM webaram.com

ները չափազանց դժգոհ էին, որ «հակայեղափոխութիւնը» Հայաստանում ղլուխ չի բարձրացնում: Երեւանի եւ գաւառի բանտերը լիքն էին: Հայկական բանակի ամբողջ սպայութիւնը աքսորուած էր Ռուսաստան: Ամէն օր մէկը միւսից անհեթեթ ու դրդռիչ խուզարկութիւններ եւ բռնապրաւումներ էին կատարւում: Մայրաքաղաքն ու գաւառները չարունակական թալանի ու հարստահարութեան էին մատնւում: Հայաստանը համատարած բանտի էր վերածուել. ժողովուրդը լուռ տառապում էր: Ռուսաստանի զանազան կողմերից Հայաստան թափուած քաղցած ու տկլոր բոլշեւիկները ամենալիրբ վարմունքն էին ցոյց տալիս դէպի տեղական ազգաբնակութիւնն ու գործերը: Բայց եւ այնպէս «հակայեղափոխութիւնը ղլուխ չէր բարձրացնում», եւ «եննդ գաշնակները», որոնց դէմ մահու եւ կենաց կռիւ էր յայտարարուած, ո՛չ միայն չէին ըմբոստանում, այլեւ ջանք էին թափում ժողովրդական դժգոհութիւններն ու տարերային չարժումները զսպելու:

Եւ, յիրաւի, տարօրինակ դրութիւն էր ստեղծուել այդ ամիսներին Հայաստանում: Իրական ոյժն ու ազդեցութիւնը, երկրում Հ. Յ. Դաշնակցութեան կողմն էր: Հակառակ որ բոլշեւիկները կատաղի կռիւ էին մղում նրա դէմ, ժողովրդի համակրանքն արագ կերպով թեքւում էր դէպի Դաշնակցութիւնը: Եւ թէեւ դաշնակցական դեկավարների ու գործիչների մեծ մասը բանտում էր եւ նրա մարմինները՝ քայքայուած, ժողովուրդն ինքնաբերաբար, մանաւանդ դիւղերում, վերականգնում էր Հ. Յ. Դաշնակցութեան՝ հայ–թրքական անյաջող պատերազմից յետոյ թուլացած կազմակերպութիւնը: Երկրի կառավարութիւնը, կոմունիստական կուսակցութիւնը մնում էր իշխանութեան ղլուխ ո՛չ միայն Դաշնակցութեան վարած լօյալ քաղաքականութեան հետեւանքով, այլ՝ հէնց Դաշնակցականների ցանկութեամբ եւ աջակցութեամբ:

Մեր մտածումներն այն ժամանակ հետեւեալ կերպով էին դառնում.— Ստեղծուած պայմաններում խորհրդային իշխանութիւնը հայ ժողովրդի համար անհրաժեշտութիւն է: Նախ՝ նրանով աւելի հեշտ կը լինի երկիրը դուրս հանել արտաքին ու ներքին յարատեւ պատերազմների չրջանից եւ ժողովրդին տալ համեմատական խաղաղութիւն: Երկրորդ՝ Խորհրդային Ռուսաստանի հետ անմիջական յարաբերութեան մէջ մտնելով՝ հայ ժողովուրդը կը ստանար նրանից պարէն ու դրամական օժանդակութիւն իր հայրենիքի վերաչինութեան համար:

Շատերին դրաւիչ էր երեւում եւ բոլշեւիկների ընկերային չի-



ARAM webaram.com

նարարութիւնը: Անշուշտ, դործարանային արդիւնաբերութիւնից դուրկ դիւղացիական Հայաստանում հնարաւոր չէր մտցնել հետեւողական սոցիալիզացիա, բայց չէ՞ որ բոլշեւիկներն իրենք էլ այնքան կարճամիտ չեն լինի, որ չհասկանան այս տարբերութիւնը Ռուսաստանի ու Հայաստանի միջեւ...

Այս մտածումներով էր, որ մենք Դեկտ. 2–ից յետոյ ոչ թէ տակտիկական նկատումներով էինք համակերպուել կատարուած փոփոխութեան, այլ միանդամայն անկեղծ կերպով ուղում էինք օժանդակել նոր իշխանութեան, հեշտացնել նրա աշխատանքը երկրում: Այսպէս, Դեկտ. 2–ից յետոյ, սակաւաթիւ ազատ մնացած ընկերներով կազմեցինք Դաշնակցական մարմիններին ուղղուած ընդարձակ մի շրջաբերական, որի մէջ հանդամանօրէն բացատրուում էր անհրաժեշտութիւնը օժանդակելու նոր իշխանութեան եւ կոչ էր արուում դործակցելու բոլշեւիկներին: Այդ շրջաբերականը ուղարկուեց հրատարակութեան, տպարաններին կոմիսար եւ Ցեղկոմի անդամ Աշոտ Յովհաննիսեանը խոստացաւ տպել տալ, բայց չկատարեց իր խոստումը: Այնուամենայնիւ երկրի բոլոր անկիւնները կարելի եղաւ հասցնել կուսակցական հրահանդը եւ հակառակ բոլշեւիկների թշնամանքին ու յարձակումներին՝ անչեզ ընթանալ ընդդծուած ճանապարհով:

Ջնայած ժողովրդի բարեացակամ ու հաչտարար վերաբերումին, բոլշեւիկներն իրենց թեթեւամիտ ընթացքով չատ չուտով դրդռեցին եւ իրենց դէմ հանեցին երկրի բոլոր խաւերը: Եւ Յունուարի սկիզբին արդէն, մանաւանդ Դրօշի աքսորից յետոյ, գաւառի վիճակին մօտից ծանօթ մարդիկ լուրջ վախ էին յայտնում դիւղացիական խռովութիւնների մասին: Հարկաւոր էր ինչ գնով եւ լինէր այդ դրժբախտութեան առաջն առնել եւ թոյլ չտալ, որ երկիրը քաղաքացիական կռուի փոթորիկների դիրկն ընկնի: Հարկաւոր էր բանալ կուսակցական կրքից կուրացած բոլշեւիկների աչքերը եւ ցոյց տալ նրանց, թէ ինչ սարսափելի մթնոլորտ են ստեղծել իրենց չուրջը: Եւ այս նպատակով, ընկերների հետ խորհրդակցելուց յետոյ, ես Ցեղկոմի նախագահ Կասեանից խնդրեցի տեսակցութիւն, եւ Փինանսների նախկին նախարար Հ. Տէրտէրեանի հետ գնացի մօտը:

Երկար խօսակցութեամբ, նրան ներկայացրինք այն հանդամանքները, որոնք առաջ բերին Դեկտ. 2–ի ակտը եւ պարզաբանեցինք մեր տեսակէտը յետագայ անելիքների մասին:

Հայաստանում խորհրդային իշխանութեան յայտարարուեց ո՛չ թէ յեղափոխութեան, այլ փոխադարձ համաձայնութեան հետեւան-


ARAM webaram.com

քով: Դաշնակցութիւնը տեղի տուեց ո՛չ թէ դաւադրական նպատակներով, այլ անկեղծօրէն համոզուած, որ այդ փոխոխութիւնը բարիք պիտի բերի երկրին: Կոմունիստները Հայաստանում նոր մարդիկ են եւ հայ ժողովրդին անծանօթ: Որպէսզի իրենց իշխանութիւնը դարձնեն ամուր ու տեւական, նրանք պէտք է աշխատեն դրաւել յանդուգնների համակրանքը: Կոմունիստները հայ իրականութեան քիչ են ծանօթ. Հայաստանը պիւզանտական երկիր է: Նրա մէջ իշխում է մանր անասելութիւնը, եւ մեծ արդիւնաբերութիւն ու բանուորութիւն չկայ: Հետեւաբար, սխալ է Հայաստանին մօտենալ այն ծրագիրներով, որոնք կարող են գործադրուել բարձր արդիւնաբերութիւն ունեցող երկրներում: Խորհրդային իշխանութիւնը մուտք գործեց Հայաստան քաղաքական պատճառներով, եւ հայ ժողովրդի ոչ մի հոգանք չի մատծում նրա տապալման մասին, մինչդեռ բոլշեւիկներն իրենց պահում են այնպէս, որ, կարծես, դէնքով գրաւուած թշնամի երկրում լինեն եւ ամէն տեղ դաւադրութիւն են փնտռում: Այսպէս, Դեկտ. 2-ի համաձայնագիրը չյարգուեց, քաղաքական կուսակցութիւնները արգիլուած են եւ նրանց աչքի ընկնող անդամները բանտարկուում են: Հայաստանից հեռանալ ուզող գործիչները ամենաիբաւարական ձեւով ձերբակալուած են, և Հ. Օհանջանեանի պէս ժողովրդական մարդիկ պահւում են բանտում:

Հայ բանակի սպաները հալածւում են եւ խումբ-խումբ աքսորւում են Ադրբէյջան: Երկրում տիրում են բռնութիւններ, լրտեսութիւն ու անվերջ խուզարկութիւններ, թալան ու բռնագրաւումներ: Ազատ մամուլ չկայ: Ժողովները արգիլուած են: Ժողովուրդը տանջւում է անիրաւութիւններից եւ կամայականութիւններից: Ռուսաստանից խոստացուած հացը չեկաւ: Տաճիկները չարունակում են մնալ Արաքսի ափին եւ չեն մաքրում Ալէքսանդրապոլը: Երկիրը աքսորվէն տարուում է դէպի քաղաքացիական կռիւ, մինչդեռ նա կարօտ է ներքին խաղաղութեան եւ չինարար բոլոր ուժերի համերաշխութեան: Հ. Յ. Դաշնակցութիւնը անվերապահօրէն համոզուած է, որ ներկայ պայմաններում անհրաժեշտ է ուժեղացնել իշխանութիւնը եւ իր բոլոր ուժերը դնում է կառավարութեան տրամադրութեան տակ:

Այս բոլոր նկատումներով մենք մեր պարտականութիւն ենք համարում բարձր իշխանութեան ուշադրութիւնը հրաւիրել առեղծուած վտանգաւոր կացութեան վրայ եւ անհրաժեշտ ենք գտնում վերջ տալ քաղաքական հալածանքներին եւ ազատ արձակել բանտարկեալներին: Եթէ նրանց ներկայութիւնը Հայաստանում որեւէ պատճա-



ARAM webaram.com

ռով համաբուում է անթոյլատրելի, արտօնեցէք նրանց հեռանալու արտասահման: Հարկաւոր է վերջ տալ բռնապրաւումներին եւ դիւղերում կատարուող ալան-թալանին: Եթէ ինչ-ինչ նկատումներով չի կարելի բոլորովին վերացնել բռնապրաւումները, պէտք է դնել որոշ սահման եւ ենթարկել օրէնքի: Ստեղծել սոցիալիստական ուժերի համապատասխանութիւն եւ վերականգնել մամուլի ազատութիւնը: Դաշնակցական մամուլի դոյութիւնը միայն օգուտ կը բերի բոլշեւիկներին, որովհետեւ նա նեցուկ կը հանդիսանայ նոր իշխանութեան:

Կատեանը այս երկար ճառը լսեց լուռ՝ իր անբռնդակ հայեացքը ուղղելով մերթ ինձ, մերթ Տէրտէրեանին: Երբեմն-երբեմն միայն, կարծես խայթուած, անհանգիստ եւ զարմացական չարժումներ էր անում: Իսկ պատասխանը եղաւ մեզ համար միանգամայն անսպասելի:

Մենք ի դուր ենք յուզւում եւ անհանգստանում. երկրի վիճակն ու ժողովրդի տրամադրութիւնը բոլորովին այնպէս չէ, ինչ որ մենք ենք ցոյց տալիս: Ինքըամէն օր դանագան կողմերից հեռագիրներ է ստանում, որոնք վկայում են, որ ժողովուրդը կատարելապէս զոհ է Մորհրդային կարգերից եւ անիծում Դաշնակներին: Ա՛յ, հէնց հիմա ստացուեց Ղամարլուի շրջանային ժողովի բանաձեւը, որով հաստատմութիւն է յայտնւում խորհրդային իշխանութեան, որի հեղինակութիւնը օրէցօր մեծանում է երկրում: Կատարեալ ճեռք առած միջոցների չնորհիւ ամէն տեղ հաստատում է անդորրութիւն եւ խաղաղ աշխատելու հնարաւորութիւն: Բանտարկութիւննե՞ր են կատարում. բայց ո՞ր պետութեան մէջ չի պատահում այդ: Ընդհակառակը, բոլշեւիկները չատ մեղմ են ու նեղոզամիտ դէպի Դաշնակները եւ նոյնիսկ պաշտօններ էլ են տալիս նրանց. ա՛յ, հէնց ընկեր Տէրտէրեանը կամ Քաջազնունին(*)... Իսկ թէ Հայաստանում կոմունիստական կուսակցութիւնից զատ ուրիշ կուսակցութիւն չի կարող գոյութիւն ունենալ, — այդ չատ բնական է: «Պրոլետարական դիկտատուրայի» սկզբունքն է այդ: Պրոլետարական դիկտատուրայի չրջանում միայն կոմունիստական մամուլ ու ժողովներ կարող են

---

(*) Ֆինանսների նախարար Հ. Տէրտէրեանը նշանակուած էր պետական գանձատան կոմիսար, որ մի չորրորդական պաշտօն էր, իսկ նախկին նախարարապետ եւ խորհրդարանի նախագահ Յ. Քաջազնունին նշանակուած էր հաղորդակցութեան կոմիսարիատի խմբագային բաժնի վարիչի օգնականի պաշտօնին:


ARAM webaram.com

լինել: Զերբակալութիւնները չատանո՞ւմ են. այո՛, բայց դա հետեւանք է Դաշնակների Թիֆլիսում ու Զանգեզուրում սարքած դաւերի...

Տէրտէրեանն ու ես փորձեցինք նորից բանալ Կասեանի աչքերը եւ համոզել, որ բոլշեւիկները սխալւում են: Բայց մեր խօսքերը հանդիպում էին խուլ պատի: Կասեանը երջանիկ ինքնագոհութեամբ՝ ոգեւորւում էր պանսլաւական վայրերից, «կոմբջիջների» թելադրութեամբ քաչուած հեռագիրներով ու մխօրինակ բանաձեւերով եւ չէր ուզում նայել իրականութեան աչքերին: Եւ նա դեռ բոլշեւիկներից ամենախելացի ու խոհեմն էր...

Հիասթափուած ու վրդովուած հեռացանք Ցեղկոմի նախագահի մօտից: Սակայն, անհնարին էր հանդիսատեսնել, թէ ինչպէս սեւ ամպերը կուտակւում էին հայ ժողովրդի դլխին: Պէտք էր բախել եւ ուրիշ դռներ: Հարկաւոր էր տեսնուել կիրարկուող քաղաքականութեան իսկական հեղինակների հետ եւ փորձել հասկացնել խելապատութիւնը նրանց որդեգրած գործելակերպի: Առիթը ներկայացաւ չատ չուտով:

Երեւանի բոլշեւիկներին չափազանց դրաղեցնում էր Զանգեզուրը: Օր չէր անցնում, որ Զանգեզուրի մասին չդրուէր «Կոմունիատ»ում ու չխօսուէր միտինգների մէջ:

Ասում էր նոյնպէս, որ 11-րդ բանակը Բագուից պինուորական գործողութիւններ է պատրաստում Զանգեզուրի դէմ, իսկ մինչ այդ փորձեր են արւում խաղաղ ճանապարհով ընկճելու Զանգեզուրցիներին: Ինձ յայտնի էր, որ Դրօն էլ Բագուից քայլեր էր արել զանգեզուրցիներին ընդունել տալու բոլշեւիկեան կարգերը: Բոլշեւիկներից ոմանք ուզում էին օգտուել նաեւ Երեւանի ոչ-բոլշեւիկ մտաւորականների աջակցութիւնից: Եւ այս միտքը, ինչպէս ասում էին, պաշտպանում էին Կասեանը եւ արտաքին գործոց կոմիսար Մռաւեանը, որոնք համարւում էին չափաւոր ուղղութեան ներկայացուցիչներ եւ պայքար էին մղում Ամարբէգեան—Ախա քլիքի դէմ: Զանգեզուր ուղարկելու համար տրւում էին Դաւիթ Անանունի, Վահան Մինախորեանի եւ իմ անունները:

Ինձ անպաշտօն կերպով ուղղուած հարցումին՝ ես տուի սկզբունքային համաձայնութիւն: Ինձ թւում էր, որ մեր պատասխանութիւնն է ընդունել այդ առաջարկը եւ փորձել Զանգեզուրեան հարցը լուծել խաղաղ կերպով, փոխադարձ համաձայնութեամբ, որովհետեւ ես վախենում էի, որ սարերի ձիւնը հալելուց յետոյ, բոլշեւիկ-



ARAM webaram.com

ները Ազրբէյջանի կողմից խոշոր ուժեր կը չպրտեն դէպի Զանգեզուր եւ «արեան մէջ կը խեղդեն երկիրը»:

Քանի Թիֆլիս—կարս երկաթուղին բոլշեւիկների ձեռք չէր, Ելիսաւետ—Շուշի—Նախիջեւան խճուղին նրանց համար առաջնակարգ նշանակութիւն ունէր, յատկապէս քեմալականների հետ անմիջական կապ պահելու տեսակէտով, եւ դժուար էր ենթադրել, որ 11-րդ բանակը պահանջուած քանակութեամբ զօրք չտրամադրէր այդ գծին տիրանալու համար:

Ինձ թւում էր, որ բոլշեւիկները, աչքի առաջ ունենալով տեղական իւրայատուկ պայմանները, կը համաձայնուին զանգեզուրցիներին տալ տեղական լայն ինքնավարութիւն: Բացի այդ, անկախ՝ բանակցութիւնների ելքից, ես օգտակար էի համարում տեսնուել զանգեզուրցիների հետ, ստոյգ տեղեկութիւններ ստանալ նրանց վիճակի մասին եւ լայնօրէն իրազեկ դարձնել նրանց՝ Հայաստանի ընդհանուր դրութեան եւ մեր մտածումների մասին: Սակայն իրրեւ նախապայման Զանգեզուր գնալու, ես անհրաժեշտ էի համարում, որ Հայաստանի Ցեղկոմը երաշխաւորի տալ զանգեզուրցիներին տեղական ինքնավարութիւն եւ վերջ դնել հալածանքներին Հայաստանում:

Ինձ հաղորդեցին, որ կասեանն ընդունելի է համարում այս պայմանները, բայց հանդիպում է խիստ դիմադրութեան Ա.Թաարբէգեանի եւ, մանաւանդ, Աւխի կողմից, որը պահանջել է Զանգեզուրը զէնքով գրաւել: Ցեղկոմի եւ կոմունիստական կուսակցութեան կենտրոնական կոմիտէի մի շարք նիստերում Ա.Թաարբէգեանի եւ կասեանի միջեւ տեղի են ունեցել բուռն վիճաբանութիւններ, որոնց հետեւանքով, երեւի, Փետր. 4-ին ես ստացայ կասեանից մի «խիստ գաղտնի» տոմսակ, որով խնդրում էր ինձ, Զանգեզուրի հետ կապուած մի քանի կարեւոր հարցեր պարզելու համար հանդիպել ընկ. Ա.Թաարբէգեանին:

***

Փետր. 4-ին, ժամը 12-ին ես արդէն Ա.Թաարբէգեանի մօտ էի: Հետաքրքրական է նկարագրել, թէ ի՞նչպէս էր ապրում «բանուորա-գիւղացիական» իշխանութեան այդ ներկայացուցիչը, որի անունը սարսափով եւ անէծքով էր արտասանւում Հայաստանում ամենքի կողմից:

Ա.Թաարբէգեանն ապրում էր Աբամեան եւ կարճիկեան փողոցի անկիւնի տանը, որի մուտքի դուռը նախապատուհանի համար, գամուած էր տախտակներով, եւ ել ու մուտ էր լինում դարպասից, որի առջեւ գիշեր ու ցերեկ կանգնած էին 4—5 հրացանաւոր կողակ-


ARAM webaram.com

ներ, իսկ տան չուրջը պատում էին պինուած ռուս պահակներ եւ թոյլ չէին տալիս մայթի վրայով անցուդարձ անելու:

Դարպասը հսկող կոզակներից մէկին խնդրեցի յայտնել իմ գալու մասին եւ տուբ անունս: Նա մի պննող հայեացք ձգեց դիմիցս մինչեւ ոտքերս եւ մտաւ ներս: Փողոցի մէս կողմով անցնող քաղաքացիք զգուշութեամբ նայում էին ինձ եւ դիմով յատակցական նշաններ անում, նրանք համոզուած էին, որ ինձ ձերբակալել են եւ տանում Չեկայի պնդանը...

Մի քանի րոպէից յետոյ պինուորը վերադարձաւ եւ ինձ ներս թողեց:

Բակում, դարպասից մինչեւ պատշգամբը, ամէն հինգ-տասը քայլի վրայ, կանգնած էին 5–6 ոտքից մինչեւ գլուխ պինուած կոզակներ, եւ նրանցից իւրաքանչիւրը կանգնեցնում էր ինձ եւ հարցնում անունս եւ այցելութեանս նպատակը: Կոզակներից մէկը կանգնեցրեց ինձ բակում, իսկ ինքը բարձրացաւ պատշգամբը, որտեղ, մի քանի րոպէ յետոյ, երեւաց «ընկեր կոմենտանտը», եւ խմանալով անունս՝ մտաւ ներս եւ իսկոյն դուրս եկաւ, հրամայելով թողնել ինձ: Ջինուած կոզակներ էին կանգնած և՛ ասղուխքի վրայ, և՛ պատշգամբում, և՛, նոյնիսկ, կիսաբաւար խոհանոցում, որի միջից անցկացրին ինձ: Եւ ամէնքը հարցնում էին անունս եւ ինչ նպատակով գալս...

Վերջապէս, «ընկ. կոմենտանտի» գեկուցումից յետոյ մտայ ընկ. Ախարբէկեանի սենեակը:

Ինձ դիմաւորեց պարզ հագուստով, չէկ, երկար ու խնամքով սանրած մօրուքով, դէր, միջակից մի քիչ բարձր հասակով, առողջ ու լուրջ դէմքով մի երիտասարդ սրածայր գլխարկը գլխին: Երկու փողոցների վրայ նայող բարձր սենեակը զարդարուած էր շատ համեստ. աջքի էին ընկնում չափից աւելի մեծ կարմիր գրոշակները: Սեղանի վրայ գրուած էր մի ատրճանակ, մի ուրիշն էլ կախուած գօտուց:

Ախարբէկեանի դէմքը, մանաւանդ նրա կապոյտ աչքերն ու չէկ մօրուքը ինձ շատ ծանօթ երեւացին, բայց չկարողացայ յիշել, թէ ո՞ւր եմ տեսել:

Յետոյ միայն գլխի ընկայ, որ նա այնչափ նման էր Ալեքսանդր Երզնկի պատկերին:

Խօսում էր, ի հարկէ, ռուսերէն. խօսակցութիւնը միջակ էր, սկզբում՝ կցկտուր: Տրամաբանութիւնը այնքան էլ ուժեղ չէր: Երբ երես առ երես էինք խօսում, պահում էր իրեն անբռնազբօսիկ, ու-



ARAM webaram.com

չափութեամբ լսում էր առարկութիւններս, չատ բաներում համաձայնւում էր: Բայց, երբ եկաւ Աւետը, ընդունեց ունկի խրոխտ կեցուածք եւ այլեւս ոչ մի հակաճառութիւն չէր վերցնում:

Սկսեց ինձ ուղղուած մի քանի հաճոյախօսութիւններով: Իմ անունը իրեն յայտնի էր իբրեւ ազնիւ ու պաղատիարական գործչի. ինքը յարգում էր պաղատիարական հակառակորդներին(*): Ինքը, իբրեւ համաուսական Ձեկայի լիազօր ներկայացուցիչ պարտականութիւն ունէր կռւելու ամէն կարգի «հակայեղափոխութեան» դէմ: Խորհրդային իշխանութեան համար հերթական խնդիր էր «Զանգեզուրեան հակայեղափոխութեան» վերացումը: Ի հարկէ, կարմիր բանակը այնքան ուժ ունէր, որ արեան մէջ կարող էր խեղդել Զանգեզուրը. բայց իր ցանկութիւնն էր հարցը խաղաղ միջոցներով լուծել: Մինչեւ գարուն, երբ 11-րդ բանակը շարժման մէջ է դրուելու, պէտք էր սպառել բոլոր խաղաղ միջոցները: Իրենց չրջանում խօսք է եղել նաեւ իմ ուժերից օգտուելու մասին. բայց նախ քան պաշտօնական առաջարկութիւն անելը ինքը կը կամենար անձամբ խօսել հետս եւ չօշափել իմ տեսակէտները: Այդ կարեւոր էր է՛ւ այն պատճառով, որ իրեն յայտնի էր, թէ ես չատ մօտ եմ «հայ ազգի դաւիթ Ռուբէն փաշայի» հետ, «որը մեծ պատասխանատուն էր հայ ժողովրդի բոլոր ժողովութիւնների» եւ, իր կարծիքով, անկեղծ հայրենասիրութիւնից զուրկ մի անձնաւորութիւն էր: Ինքը համոզուած էր, թէ ես ազնուութեամբ կը կատարեմ իմ ստանձնած պաշտօնը. բայց, եթէ խաբեմ էլ, չատ վախ չունէր, որովհետեւ իր ձեռքին, իբրեւ պատանդ, կը մնար իմ ընտանիքը եւ յետոյ — է՛հ, մի զատաճան ունէր կամ պակաս, ի՞նչ նշանակութիւն ունէր «բանուորա-գիւղացիական» իշխանութեան համար: Ինքը խնդրում էր պարզել, ի՞նչ էր իմ հայեացքը առհասարակ խորհրդային իշխանութեան մասին եւ թէ ես ի՞նչպէս էի վերաբերւում դէպի Զանգեզուրեան հարցը:

Ես պատասխանեցի, թէ ոչ թէ ինքս եմ առաջարկել իմ ծառայութիւնը, այլ ընդ առաջ եմ գնացել ինձ արուած առաջարկութեան: Ստեղծուած հանգամանքներում, Հայաստանը պէտք է ունէր խորհուրդների վրայ: Եւ դրա համար էր, որ Դեկտ. 2-ին մենք համաձայնութիւն կնքեցինք Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Լէգրանի հետ եւ իշխանութիւնը կամովին յանձնեցինք բոլշեւիկներին: Քանի Ազրբէյջանն ու Հայաստանը խորհրդային են, Զան-

(*) Միսչդեո Ձեկայից ինձ տեղեկացրել էին, որ Աբտարբէգեանը ամէն կերպ աշխատում էր առիթ ստեղծել ինձ եւս ձերբակալելու:

ARAM webaram.com

դեղուրը չէր կարող մնալ թշնամական վիճակում եւ, որպէսզի Զանգեզուրի դիւղացիութիւնը նոր արիւնահեղութիւններէ զոհ չդառնայ, հարկաւոր էր խաղաղ եղանակով լուծել Զանգեզուրի հարցը: Այդ նպատակով, պէտք էր Զանգեզուր ուղարկել պաշտօնական մի պատուիրակութիւն, որին կարող եմ մասնակցել եւ ես: Պատուիրակութեան մէջ անպայման պէտք է մտնի ե՛ւ բոլշեւիկ ներկայացուցիչ: Եւ որպէսզի պատուիրակութիւնը յաջողութիւն ունենար, անհրաժեշտ էր ստեղծել հոգեբանական նախապայմաններ, այսինքն՝ վերջ տալ Հայաստանում կատարուող բռնութիւններին ու բանտարկութիւններին: Ի՞նչ կարող էինք ասել մենք Զանգեզուրում եւ ի՞նչ եւ բաշխաւորութիւններ կարող էինք տալ, երբ Հայաստանում տիրող ներկայ քաղաքականութիւնը յայտնի էր Զանգեզուրցիներին ե՛ւ ոչ մի վստահութիւն չէր ներշնչի դէպի մեր առաքելութիւնը:

Ապա, օգտուելով առիթից, երկարօրէն կանգ առի բոլշեւիկների գործունէութեան, բռնապրաւումների, բանտարկութիւնների, զանգուածային աքսորների, երկրում տիրող խեղդիչ մթնոլորտի վրայ եւ ցոյց տուի, որ զանգեզուրցին չի հաւատայ մեր անկեղծութեան, եթէ այդ դրութիւնը չարունակուէր: Ոչ թէ բոլշեւիկեան քաղաքականութիւնն էր հետեւանք Զանգեզուրի, ինչպէս պնդում էին բոլշեւիկները, այլ «Զանգեզուրեան հակայեղափոխութիւնը» ծնունդ էր բոլշեւիկների վարած քաղաքականութեան: Հայ ժողովուրդը, որ զրկաբաց ընդունեց բոլշեւիկներին, հետզհետէ հիասթափուեց: Եւ այժմ ո՞ւր էր Հայաստանում Խորհրդային իշխանութիւնը, — Զանգեզո՞ւմ, Արագածոտնո՞ւմ, Կոտայքո՞ւմ: Ամէն տեղ դժգոհութիւն ու յուզում: Ժողովուրդը չէր հաւատում իշխանութեանը, որը ո՛չ մի խոստում եւ ո՛չ մի համաձայնութիւն չէր յարգել: Ես ի՞նչ ասէի Զանգեզուրում:

— Դուք, կորեց խօսքս Աթարբէգեանը, կ՚ասէք Զանգեզուրում, որ ինչ համաձայնութիւն որ կնքուի Հայաստանի Ցեղկոմի եւ Զանգեզուրցիների միջեւ, ե՛ս եմ երաշխաւորում. ես՝ համառուսական խորհրդների լիազօր ներկայացուցիչս:

— Բայց չէ՞ որ Զանգեզուրցին կարող է ինձ առարկել, թէ՝ համառուսական խորհուրդների մի ուրիշ լիազօր ներկայացուցիչ, Դեկտ. 2-ին, ստորագրեց ու երաշխաւորեց մի ուրիշ համաձայնութիւն: Ո՞ւր է այդ համաձայնութիւնը: Ես ի՞նչ պատասխանէի:

— Այն ուրիշ էր, այս՝ ուրիշ, — պատասխանեց Աթարբէգեանը եւ չարունակեց պարզել իր մտքերը:

— Ձեր տեսակէտները Զանգեզուրի մասին ինձ զոհացնում են,



ARAM webaram.com

բայց յայտնուած կասկածները անհեղի են: Բանուորա-պիւզայիական իշխանութիւնը անարդար չէր կարող լինել, եւ եթէ մեր միջեւ համաձայնութիւն կնքուի, երբեք չի խախտուի:

Ապա՝ չփոթուելով ու կմկմալով սկսեց բացատրել, թէ պաշտօնական պատուիրակութիւն ուղարկելու կարիք չկար. ես կարող էի իմ թելադրութիւնները նամակով յայտնել Զանգեզուրցիներին, կամ յօդուած գրել թերթերում եւ կամ թռուցիկներ տպել ու Զանգեզուր ուղարկել: Վերջապէս, ծայրայեղ դէպքում, կարելի էր այնպէս անել, որ ես մինակ գնամ, իբր թէ բոլշեւիկներից պաշտպանել եմ Զանգեզուր:

Ինձ համար, ի հարկէ, դժուար չէր ցոյց տալ այս բոլոր առաջարկութիւնների «անյարմարութիւնը»: Իմ նամակին կամ թռուցիկին ո՞վ կը հաւատար: Կ'ասէին, թէ ճնշման տակ եմ գրել: Ասելին եւս. ո՞վ կարեւորութիւն կը տար իմ խօսքին, եթէ իմանար, որ բոլշեւիկների ձեռքից փախել եմ: Եթէ Հայաստանի վիճակը լաւ էր, ի՞նչ պէտք կար փախչելու: Մամուլում արտայայտուելը շատ օգտակար կը լինէր, բայց դրա համար հարկաւոր էր իրաւունք տալ մեզ սեփական թերթն ունենալու: «Կոմունիստ»ին ես չեմ աշխատակից: Հէնց գործի յաջողութեան տեսակէտից շատ նպատակայարմար պիտի լինէր թոյլ տալ մեզ առանձին թերթ ունենալու: Դրանով խորհրդային իշխանութիւնն էլ առիթ կ'ունենար համոզուելու, որ մենք իր թշնամիները չէինք:

Ամբարձումեանն իմ առաջին առարկութիւնները ընդունեց հիմնաւոր եւ համաձայնուեց, որ պաշտօնական պատուիրակութիւն ուղարկուի, բայց տատանւում էր մէկը բոլշեւիկ դնել՝ վախենալով, որ Զանգեզուրցիները կը սպանէին նրան: Ես յայտնեցի, որ իմ վրայ եմ վերցնում պատասխանատուութիւնը նրա ապահովութեան համար եւ հաւատացած եմ, որ կամ նրա հետ միասին կը վերադառնանք, կամ երկուսս էլ կը մնանք:

Ես նորից ծանրացայ երաշխիքների եւ Հայաստանի ներքին քաղաքականութեան փոփոխութեան անհրաժեշտութեան վրայ: Որպէս զի մեր առաքելութիւնը Զանգեզուրում յաջողութիւն ունենար, հարկաւոր էր վերջ տալ հալածանքներին ու բռնաւարկութիւններին եւ սկսել նոր, մեղմ քաղաքականութիւն: Մանաւորապէս, բոլշեւիկները պէտք էր յանձն առնէին մինչեւ մեր վերադարձը Զանգեզուրից, ո՛չ մի սպանութիւն չկատարել:

Այդ ժամանակ Երեւանում յամառ կերպով խօսւում էր, թէ խորհրդային իշխանութեան ոյժը ցուցադրելու նպատակով Ամբար-


ARAM webaram.com

բէգեանը որոշել էր առանց դատի սպանել Աբտաչէս Զիլինգարեանին, Համազասպ Սրուանձտեանին, Սարգիս Մելիք Եօլչեանին եւ ծանօթ վաճառականներ Աբտուշ Աւետեանին եւ Ներսէս Նալբանտեանին:

Ես դիտել տուի, որ, եթէ այս լուրերը ճիշդ են, ապա առաջուց կարելի էր ասել, որ մեր ճանապարհորդութիւնը Զանգեզուրում դրական արդիւնք չէր տայ:

Աթաբէգեանը սկզբում զայրոյթով ու յուզումով մերժեց խորհրդային իշխանութեան գործունէութիւնը կապել Զանգեզուրում վարուելիք բանակցութիւնների հետ, բայց, յետոյ հանդարտացաւ եւ տուեց իր համաձայնութիւնը, թէեւ չէր ծածկում, որ Ա. Զիլինգարեանի պէս հակայեղափոխականներին ու բանուորա-գիւղացիական իշխանութեան թշնամիներին պէտք էր սպանել:

— Ես դժուարութեամբ եմ խոստումներ տալիս, բայց որ արւի, կը կատարեմ, — եզրափակեց նա:

Այդ միջոցին ներս մտաւ Աւետը: Ենթադրելով, որ այդ պատահական այցելութիւն չէր, եւ նորից վերադարձայ Հայաստանում տիրող պայմաններին եւ բոլշեւիկների վարած քաղաքականութեան, դատապարտելով Դրոյի ու սպանների ոգորը, համաստատած թալանի ձեւ առացած բռնագրաւումները, կամայականութիւնները ու բանտարկութիւնները: Վճռականապէս մերժելով որեւէ դաշտրութեան գոյութիւն, չեշտեցի անհրաժեշտութիւնը մեզ քաղաքականութեան եւ սոցիալիստական հոսանքների համերաշխ գործակցութեան: Միայն էր այն միտքը, թէ Հայաստանում հնարաւոր էր յեղաշրջում. Հայաստանի դրութիւնը կախուած էր Հայաստանի ներքին վիճակից, քանի բոլշեւիկեան իշխանութիւնը ամուր էր Ռուսաստանում, ո՞վ կարող էր մտածել Հայաստանի ներքին յեղաշրջման մասին: Բոլշեւիկները ձգտում են Հայաստանում արհեստական կերպով քաղաքացիական կռիւ առաջ բերել եւ երկիրը մատնել անիշխանութեան...

— Ո՛չ, բնկեր Վրացեան, անհամբերութեամբ միջամտեց Աւետը, դուք սխալւում էք: Մենք՝ մարքսիստօրէն մտածողներս՝ պիտենք դէպքերը նախատեսել: Մենք պիտենք, որ Հայաստանում էլ «հակայեղափոխութիւնը» անխուսափելի է: Ահա նա պլուխ է բարձրացրել արդէն: Օրինա՛կ ձեզ Զանգեզուրը, ուր Ռուբէն փաշան սպանել է տալիս խորհրդային իշխանութեան կողմնակից Աչոտ Մելիք Մուսեանին: Օրինա՛կ ձեզ Թիֆլիսը, ուր «աջ-գաշնակները» սպանել են Ղազարեանին...(*)

---

(*) Աշոտ Մելիք-Մուսեանը մեռել էր Գորիսի հիւանդանոցում



ARAM webaram.com

Ես հերքեցի Կորիւնի ապանութեան լուրը:

— Ո՛չ, ապանուած է, պնդեց Աւխը:

— Ես գիտեմ, ապանուած չէ:

— Ո՛չ, ապանուած է, եւ ասոր ապացոյցն ունեմ:

Ապա երկար ու չափազանցուած հեղինակաւոր ոճով բացատրեց ինձ մարքսիզմի իսկական տեսակէտը քաղաքացիական կռուի եւ խորհրդային դարձած բոլոր երկրների պրոլետարական դիկտատուրան ամրացնելու միջոցների մասին:

Աֆարբէդեանը փոքրիկ ընդմիջումներով եւ բացատրութիւններով հաւանութիւն էր տալիս նրա դաղափարներին:

Ըստ Աւխի, առանց քաղաքացիական կռուի ո՛չ մի պրոլետարական դիկտատուրա գոյութիւն չէր կարող ունենալ: Բոլոր խորհրդային երկրներում քաղաքացիական կռիւը անխուսափելի է: Հայաստանն էլ պէտք է անցնի քաղաքացիական կռուի բովից: Հայաստանի յաղթական պրոլետարիատն ու կարմիր դիւզացիութիւնը, իրենց ձեռքն առնելով իշխանութիւնը, պէտք է հրապարակից վերացրնեն խորհրդային իշխանութեան բոլոր թշնամիներին: Ծիծաղելի է խօսել դասակարգային համերաշխութեան մասին: Ի դուր են Դաշնակները ատրատփում քաղաքացիական կռուից — մենք՝ կոմունիստներս ձգտում ենք քաղաքացիական կռուին եւ, որքան չուտ դայ նա, այնքան լաւ: Պրոլետարական դիկտատուրայի չրջանում անհեթեթութիւն է քաղաքացիական ազատութիւնների պահանջը: Դրանք մանր բուրժուական, քաղքենի հասկացողութիւններ են: Ով մեզ հետ չէ, մեզ դէմ է: Ով մեզ հետ է, պէտք է մոռի մեր չարքերը: Երբորդ ճանապարհ չկայ: Եթէ Դաշնակցութիւնն ատում է, թէ ինքը մեզ հետ է, բայց մնում է առանձին, նշանակում է նա անկեղծ չէ: Հէնց նրա գոյութիւնն ինքնին ապացոյց է, որ հակայեղափոխութիւնը մեռած չէ եւ պէտք է չտապեցնել քաղաքացիական կռիւը:

Պարզ, յստակ ու վճռակա՛ն: Ի՞նչ կարող էի առարկել ես իմ

---

սիմֆից այն ժամանակ, երբ Ռուբէնը բոլորովին ուրիշ վայրում էր գտնւում: Կորիւն Ղազազեանը Թիֆլիսի «*Աչխատաւոր*» թերթի խմբագիր էր, եւ բանտարկուած էր Մետեխի բերդում: Դաշնակցութեան շարքերում խռովութիւն սերմանելու նպատակով բոլշեւիկները բազմաթիւ ստեր էին հնարում զանազան պատակտումների եւ ըսպանութիւնների մասին եւ եռանդով տարածում միտինգներում ու թերթերի մէջ:

Ս. Վ.



ARAM webaram.com

«մանր–բուրժուական, քաղքենի» հասկացողութիւններով:

Ա.Թաթրէկեանն էլ մի քանի խօսքով լրացրեց իր ընկերոջ մտքերը եւ «իրրեւ մարքսիստօրէն մտածող», նոյնպէս անխուսափելի եւ անհրաժեշտ դասեր քաղաքացիական կռիւը Հայաստանում: Այդ կռուի ընթացքում արեան մէջ կը խեղդուի հակայեղափոխութեան ամէն մի փորձ:

— Բայց այդ քաղաքացիական կռիւը բոլորովին կը կործանէ հայ ժողովուրդը, — սարսափով պատասխանեցի ես:

— Հայ ժողո՞վուրդ — զարմացաւ Ա.Թաթրէկեան — դա քաղքենի հասկացողութիւն է: Մեզ համար ժողովուրդ գոյութիւն չունի: Մեզ համար գոյութիւն ունի դասակարգ: Մենք ձգտում ենք պրոլետարիատի յաղթանակին եւ համաշխարհային յեղափոխութեան: Եթէ սոցիալական այդ վիթխարի վերիվայրումի ժամանակ ոմանք տակ պիտի գնայ հայ ժողովուրդը, թո՛ղ գնայ: Ճանուն այնպիսի բարձր գաղափարի ի՞նչ արժէք ունի մէկ միլիոն հայ ժողովուրդը: Մենք Ռուսաստանում 15 միլիոն մարդ ոչնչացրինք: Եթէ պէտք լինի, մի 15 միլիոն էլ կ'ոչնչացնենք — միայն համաշխարհային յեղափոխութիւնը յաղթանակէ...

— Այո՛, վրայ բերեց Աւիսը, մեր նպատակը դասակարգային պայքարի խորացումն է եւ դրա լաւագոյն միջոցը քաղաքացիական կռիւն է: Դա պատմական անհրաժեշտութիւն է, եւ մենք՝ մարքսիստօրէն մտածողներս՝ շատ լաւ ենք հասկանում այդ:

Եւ երկուսն էլ երկար ու բարակ սկսեցին հասկացնել ինձ «մարքսիստական մտածողութեան» եւ «բանուորա–դիւցազական յեղափոխութեան» էութիւնը:

Ինձ սակայն աւելի հետաքրքրում էին այդ «մարքսիստական մտածողութեան» անմիջական պտուղները, այդ պատճառով ես խոսակցութիւնը նորից դարձրի բանտարկութիւնների եւ սպանների աքսորի վրայ:

Աւիսը սաստիկ զարմացաւ, որ ես էլ «քաղքենի» վերաբերում եմ ցոյց տալիս դէպի այդ պարզ քայլը: Սպանները չէին աքսորուած, այլ ուղարկուել էին Ռուսաստան. նրանց մի մասը պիտի մտնէր ընդունարանական դպրոց, իսկ մնացեալները պիտի տեղաւորուէին կարմիր բանակում: Սպանների ապագայի տեսակէտից դա պէտք էր բարիք համարուէր, եւ ինքը մնացել էր չուարած, թէ ինչո՞ւ սպանները ու նրանց ադիւտանները, փոխանակ չնորհակալ լինելու իրեն, դժգոհութիւն էին յայտնում...

Ի՞նչ կարող էի ասել: Ինձ շատ լաւ յայտնի էր թէ ի՛նչ պին-



ARAM webaram.com

ուրախան դպրոց եւ ի՛նչ կարմիր բանակ էին մտնելու աքսորուած ապանները...

Ա.Թարրէզեանն աւելի անկեղծ դտնուեց: Նա ընդունեց, որ իրենք ամարդի կերպով են վարուել ապանների հետ: Համաձայնուեց նաեւ, որ «չատ անյարմար բան էր եղել», որ զօր. Նազարբէգեանի պէս ծերունիներ ստիպուել են ձիւն-ձմեռին ոտքով ճանապարհորդելու, բայց — «յեղափոխութիւնը դոհեր է պահանջում»...

Ա.Թարրէզեանի մօտից ես հեռացայ այն եղրակացութեամբ, որ նա իմ բացատրութիւնները համարեց բաւարար, եւ, ուրեմն, պէտք էր ապասէլ Յեղկոմի պաշտօնական առաջարկին: Որովհետեւ Ա.Թարրէզեանն ինքը չուտով պիտի հեռանար Հայաստանից, ես գործ պէտք է ունենայի անմիջապէս Յեղկոմի հետ եւ վերջինին առաջարկութիւնները պէտք էր ընդունէի:

Հեռացայ եւ այնուհետեւ ինձ ոչ Յեղկոմից առաջարկութիւն եղաւ, ո՛չ էլ Ա.Թարրէզեանից(*): Ո՛չ էլ ուէք փոփոխութիւն տեսնուեց բոլշեւիկների քաղաքականութեան կամ Զեկայի գործունէութեան մէջ, թէեւ, ճիշդ է, Ա. Զիլինգարեանն ու մի քանները, մինչեւ վերջն էլ դնդակահար չեղան: Զգիտեմ, այս խօսակցութիւնն արդեօք որեւէ դեր կատարե՞ց նրանց ճակատագրի մէջ թէ ոչ:

---

(*) Հիմա պարզում է, որ բոլշեւիկների մէջ տարակարծութիւններ կային Հայաստանում հետեւելիք քաղաքականութեան մասին եւ, Կասեան ու Մռաւեան հրաժարուել էին Յեղկոմի անդամութիւնից: (Տես Ալիխանեանի մեր կացումները հատորիս «Յաւելուած»ում):



ARAM webaram.com

## ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄՌԱՒԵԱՆԻ ՀԵՏ

*Մ֊ինոլորտը Հայաստանում աւելի եւս պարձաւ հեղձուցիչ, եւ ժողովրդական դժգոհութիւնը սկսաւ գործնական արտայայտութիւններ ստանալ: Գաւառի զանազան կողմերից սկսան լուրեր հասնել պիւզանդիական չարժումների եւ ընդհարումների մասին: Միեւնոյն ժամանակ Երեւանում յամառ լուրեր էին պտտում, թէ բոլշեւիկ֊Թրքական յարաբերութիւնները խիստ լարուած են, եւ Զամարլուի կողմերը արդէն կռիւներ են սկսուած կարմիր զօրքերի եւ Թուրքերի միջեւ:*

*Այդ լուրերը չատերին հաւանական էին թւում, որովհետեւ, հակառակ բոլշեւիկների զգուշութեան, քաղաքում ամէնքը գիտէին, որ Հայաստանի արտաքին գործոց կոմիսարիատը մի ոչ֊բարեկամական եւ նոյնիսկ սպառնական հեռագիր էր ստացել Անդրանիկից: Ընկերներից չատերը պնդում էին, որ եւս նորից տեսնուեմ Կասեանի հետ եւ աշխատեմ պարզել իրերի իսկական դրութիւնը եւ նորից յայտնեմ բոլշեւիկներին որ չնայած տիրող տարաձայնութիւնների պայմաններին, որեւէ արտաքին վտանգի դէպքում, Դաշնակցութիւնը պատրաստ է իր բոլոր ուժերը տրամադրելու կառավարութեան:*

*Մինչ եւս պատրաստւում էի գնալ Կասեանի մօտ, Փետր. 9 լոյս 10֊ի գիշերը Երեւանում տեղի ունեցան զանգուածային ձերբակալութիւններ եւ 220 յայտնի հասարակական գործիչներ, որոնց թւում էին եւ Լ. Շանթը, Ն. Աղբալեանը, Յ. Քաջազնունին, բանտարկուեցին: Փետրուար 10֊ի առաւօտեան, ես յուզուած մտայ Յեղկոմի նախագահի առանձնասենեակը: Յայտնեցին որ Կասեանը «հիւանդ» է, եւ ինձ ընդունեց նրա փոխանորդ Մռաւեանը: Ես յայտնեցի այցելութեանս նպատակը, բայց աւելացրի, որ այս գիշերուայ*



ARAM webaram.com

դէպքերից յետոյ, երեւի, այլեւս աւելորդ էր դարս:

— Ի՞նչ դէպքեր, պարմայաւ Մռաւեանը:

Ես վրդովուած սկսեցի բողոքել կատարուած ձերբակալութիւնների դէմ եւ, ի միջի այլոց, յիշեցի նաեւ Աղբալեանի ու Շանթի անունները:

— Աղբալեա՞ն, Շա՞նթ, — ընդմիջեց նա պարմանքով, — անկարելի բան է: Դուք սխալւում էք: Այդպիսի բան չի կարող պատահել: Ես լսել եմ, որ մի քանի օրիորդներ են ձերբակալուել... Այն հասո օրիորդը — Սաթօ է, կարծեմ, անունը... Ու բլօկ-նօտի վրայ չտապ-չտապ գրեց Աղբալեանի եւ Շանթի անունները, խոստանալով պարզել թիւրիմացութիւնը եւ անմիջապէս կարգադրութիւն անել:



Ս Ա Թ Օ

Ես յայտնեցի, որ Աղբալեանը Տանը հիւանդ է, եւ բեկիսաները նրան անկողնից են տարել: Ցաւուն հայ դրականութեան նրան պէտք է խնայել: Մռաւեանը նորից կրկնեց, որ ես թիւրիմացութեան մէջ եմ, որ ինքը անմիջապէս կը պարզէ խնդիրը եւ կարգադրութիւն կ'անի(*): Ես կըցկտուր ու անկապ խօսքերով ցաւ յայտնեց կատարուող դէպքերի համար:

Իր անկեղծութեան մասին բնաւ չպէտք է կասկածել. ինքը հակառակ է խիստ միջոցների, բայց իրենց մէջ էլ կան կուսակցական նեղբրին տարակարծութիւններ եւ պատահածը դրա արդիւնք է... Իսկ ինչ վերաբերում է բոլշեւիկ-տաճկական յարաբերութիւններին, տարաձուած լուրերն անհիմն են: Ոչ մի պատերազմ չկայ եւ չի կարող լինել: Մեր աջակցութեան էլ պէտք չունեն: Անասելի զառնութեամբ ու հիասթափուած հեռացայ ես Մռաւեանի մօտից: Քաղաքացիական կռիւը, որից մենք այնպէս սար-

---

(*) Ես ոչ մի կարգադրութիւն չարաւ: Իմ եւ Աղբալեանի կրցնոջ բոլոր դիմումները — գոնէ տամ հազուստ ու գիրք յանձնելու հայ հեղինակաւոր էնինադատին — մերժուեցին կտրականապէս:

Ս. Վ.



ARAM webaram.com

սափրում էինք եւ այնքան հիպ էինք թափում խուսափելու, արագ քայլերով մօտենում էր մեզ: Երկիրն անվանելի մղումով դիմում էր դէպի խորխորատ: Ժողովրդի ղեկավարները, ապրեցութիւն ունեցող մարդկանց մեծ մասը բանտերում էին: Գերակշռութիւնն անցնում էր նրանց, ովքեր պատրաստ էին ուժին ուժով պատասխանելու եւ քաղաքացիական կռուի մարտահրաւէրը ընդունելու: Մեր բոլոր ճիգերը՝ սթափեցնելու բոլշեւիկներին, չետ պահելու նրանց խելացնոր քայլերից, անցան ապարդիւն: Հարկաւոր էին աւելի ցնցող միջոցներ նրանց զգաստացնելու համար:

Մոսկուանի մօտից նոր էի տուն վերադարձել, երբ Զեկայից լուր բերին, որ հրաման է ստացուած ինձ եւս ձերբակալելու եւ արդէն նշանակուած են մարդիկ ինձ հսկելու եւ դիշերը բանտ տանելու համար: Երկար մտածելու ժամանակ չկար — կամ բանտ, կամ թաքստոց:

Ես ընտրեցի վերջինը: Այդ միջոցին մօտս եկաւ Համբարձում Տէրտէրեանը, որ յայտնեց թէ ինքն էլ լուր է առել որ Զեկայում Բագուից հեռագիր է ստացուել «Վրացեանի կառավարութեան դաշնակցական անդամների» ձերբակալութեան մասին եւ որ ինքը մտածում է չյանձնուել, այլ «պետնի տակ մտնել»: Մենք պայմանաւորուեցինք միասին թաղնուել:

Կէսօրից յետոյ էր: Ես դուրս եկայ տնից եւ քայլերս ուղղեցի դէպի Տէրտէրեանի բնակարանը Փինանսների կոմիսարիատի շէնքի մէջ: Փողոցները ամայի էին եւ փաթիլ-փաթիլ թանձր ձիւն էր գալիս: Տէրտէրեանի մօտ պատահեցի ընկերներ՝ Հ. Յ. Դ. Հայաստանի կոմիտէի անդամներ եւ ուրիշներ, որոնք հաւաքուել էին խորհրդակցութեան համար:

Հ. Յ. Դ. Բիւրօն հեռացել էր Հայաստանից Դեկտ. 2-ից յետոյ եւ կուսակցական վերին իշխանութիւնը Հայաստանում պատկում էր Հայաստանի կոմիտէի ձեռքը: Ես խորհրդակցական ձայնով մասնակցում էի կոմիտէի նիստերին: Մեր ընդհանուր քաղաքականութիւնն էր անպայման աջակցել Հայաստանի չինարարութեան եւ թոյլ չտալ որ արդելքներ հանուին նոր իշխանութեան դէմ: Մասնաւորապէս իմ տեսակէտը այն էր, որ Հայաստանը ներքին եւ արտաքին տեսակէտով պէտք է մնայ խաղաղ, եւ հայ ժողովուրդը պէտք է նուիրուի հայրենիքի վերաչինութեան: Բացարձակապէս չինծու են բոլշեւիկների մեղադրանքները, որ Դաշնակցութիւնը խորհրդայնացման հէնց առաջին օրերից նպատակ էր դրել տապալել խորհրդային իշխանութիւնը Հայաստանում: Անհեթեթութիւն է այն պնդումը, որ



ARAM webaram.com

բոլշեւիկները մինչեւ այժմ էլ կրկնում են, թէ Դաշնակցականները Թիֆլիսում ժողով են գումարել խորհրդային իշխանութիւնը Հայաստանում տապալելու նպատակով: Կամ թէ Հ. Յ. Դ. Հայաստանի կոմիտէն յարաբերութիւն է պահել Գ. Նժդեհի հետ, Զանգեզուրում, նոյն նպատակով եւ կամ Հայաստանի Դաշնակցականները կապ էին պահում Դաշնակիցների ներկայացուցիչների հետ: Մենք բացարձակապէս անտեղեակ էինք, թէ ի՞նչ էր կատարւում արտաքին ասպարէզում, կամ ի՞նչ էին մտածում մեր մասին Դաշնակիցները: Մեր միակ մտահոգութիւնն էր Հայաստանը պահել խաղաղ, բայց բոլշեւիկները իրենք, իրենց անխորհուրդ քայլերով, իրենց դէմ էին հանում Հայաստանի ժողովուրդին:

Խորհրդակցութիւնը Համբարձում Տէրտէրեանի մօտ, անհերքելի փաստերով ցոյց տուեց, որ երկիրը ջղագրգիռ վիճակի մէջ էր, որ Յեղկոմի վարած քաղաքականութիւնը անխուսափելի էր դարձնում քաղաքացիական կռիւը, որ բոլշեւիկները դինուորական ուժեր էին կեդրոնացնում երկրի զանազան մասերում, որ երկրի իրական իշխանութիւնը Յեղկոմը չէր, այլ Բաղուի հեռագրաթելը: Այնուամենայնիւ քաղաքացիական կռիւը ինձ թւում էր աղէտ՝ մեր երկրի եւ ժողովրդի համար: Խորհրդակցութիւնը երկար չտեւեց, բայց բոլորի տպաւորութիւնը այն էր, որ աղէտը անխուսափելի էր: Մասնաւորապէս վիճակը չատ ծանր էր Ալագեազի շրջանում եւ Կոտայքում: Կոտայք մեկնեցին մի քանի ընկերներ Հայաստանի Կոմիտէից՝ Եփրեմ Սարգսեան եւ ուրիշներ: Համբարձում Տէրտէրեան, Լեւոն Զարաֆեան եւ ես «մտանք դեռնի տակ», մի ընկերոջ տանը, Գեղարքայի շրջանում: Իմ կեանքում պատահարները, յաճախ, ճակատագրական դեր են կատարել: Հէնց այդ դիշեր մենք կարող էինք ձերբակալուել եւ իմ երդը երգուած կը լինէր: Բայց այդպէս չեղաւ: Նոր էինք ընթրել եւ նստած դրուցում էինք մեզ պահող երիտասարդ ընկերոջ հետ երբ դուռը ամուր ծեծեցին: Շտապեցինք հեռանալ կողքի սենեակը, հարայ հրոցով ներս մտան երեք հոգի եւ խօսքի բռնուեցին տանտիրոջ հետ: Խօսակցութիւնից երեւաց, որ ինչ որ պաշտօնական մարդիկ էին եւ ինչ որ բան էին փնտռում: Կամ մեզ այդպէս թուաց: Չէ՞ որ վախի աչքերը սուր են լինում: Ես մտածում էի, որ հիմա կ'անցնեն խուզարկութեան եւ մեր բանը բուրդ կը լինի: Բայց բաւական ազմկելուց եւ մի-մի գաւաթ օղի խմելուց յետոյ անկոչ հիւրերը հեռացան: Երիտասարդ ընկերը պատմեց որ Թաղի ապահովութեան հակիչ ուժերն էին: Այդտեղ մնալը այլեւս վտանգաւոր էր մեզ համար. միւս օրը Տէրտէրեանը եւ Զա-


ARAM webaram.com

բաֆեանը փոխադրուեցին ուրիշ տեղեր, եւ անցայ Կոնդը, Սաքօ անունով արհեստաւոր մի ընկերոջ տունը, ուր մնացի մի քանի օր:

Մեր բոլոր յոյսերը խորտակուում էին: Մանաւորապէս անտանելի էր իմ հոգեկան վիճակը: Ի՞նչ էինք ապառում եւ ի՞նչ դուրս եկաւ: Ինչո՞ւ: Մեր ո՞ր մեղքի համար: Հայաստանը ինչո՞ւ պէտք է անցնէր քաղաքացիական կռւի ժոխքից:

Քաղաքացիական կռիւը Ռուսաստանը կործանելուց յետոյ հասել էր մեզ եւ պիշաախչ ուրուրի պէս սաւառնում էր մեր գլխին:

Երկու ամիս յետոյ, Ապրիլ 14–ին Լենինը հետեւեալ նամակը ուղարկեց Ալ. Մխանիկեանի միջոցով Հայաստանի, Ադրբէյջանի եւ Վրաստանի կոմունիստներին, որը այնուհետեւ դարձաւ այդ երեք երկրների բոլշեւիկների քաղաքականութեան ուղեկիցը.

«Ներմօրէն ապշունելով Կովկասի խորհրդային հանրապետութիւնները, եւ թոյլ կը տամ ինձ յուսալու, որ նրանց սերտ դաշնակցութիւնը կը տանեզծէ բուրժուազիայի օրով չտեսնուած եւ բուրժուական կարգերում անհնարին ապրային խաղաղութեան մի օրինակ:

Բայց որքան եւ կարեւոր է Կովկասի ապրութիւններին պատկանող բանուորների եւ գիւղացիների միջեւ ապրային խաղաղութիւնը, անհամեմատ աւելի կարեւոր է պահել ու զարգացնել խորհրդային իշխանութիւնը, իրրեւ սոցիալիզմին անցնելու մի միջոց: Նրա բարեյաջող լուծման համար ամենից աւելի կարեւոր է, որ Անդրկովկասի կոմունիստները հասկանան, որ ոչ թէ պէտք է ընդօրինակել մեր գործելակերպը, այլ մտածուած կերպով ձեւափոխել ու յարմարեցնել կոնկրէտ պայմանների տարբերութիւններին:

Խորհրդային հանրապետութիւնը Ռուսաստանում ոչ մի տեղից քաղաքական ու գիւղատնտեսական օգնութիւն չունեցաւ: Ընդհակառակը, նա տարիներ շարունակ կռւեց Անտանտայի գիւղատնտեսական յարձակումների եւ նրա պաշարման դէմ:

Կովկասի խորհրդային հանրապետութիւնները ունեցան քաղաքական եւ մի փոքր չափով էլ գիւղատնտեսական աջակցութիւն Խորհրդային Ռուսաստանի կողմից: Սա հիմնական տարբերութիւնն է:

Երկրորդ՝ այժմ չպէտք է վախենալ Անտանտայի յարձակումներից եւ վրացի, ադրբէջանցի, հայ, տաղտաոանցի ու լեռնցի գործիչների գիւղատնտեսական օժանդակութիւնից: Անտանտան իր «բերանը այրեց» Ռուսաստանի վրայ եւ այդ կը սոխկէ նրան, երեւի, մի սա ժամանակ զգոյշ լինելու:

Երրորդ՝ կովկասեան հանրապետութիւնները աւելի գիւղացիական երկրներ են, քան նախկին Ռուսաստանը:



ARAM webaram.com

Զորբորդ՝ Ռուսաստանը անտեսապէս եղել է եւ կարեւոր չափով հիմա էլ մնում է կորուած կապիտալիստական առաջաւոր երկրներից: Գովկասը կարող է «կենակցել» եւ ապրանքափոխութիւն ունենալ կապիտալիստական արեւմուտքի հետ աւելի արագ եւ աւելի հեշտ կերպով:

Սրանք բոլոր տարբերութիւնները չեն: Բայց ցոյց տրուած տարբերութիւններն էլ բաւական են հասկնալու համար ուրիշ դրծելակերպի անհրաժեշտութիւնը:

Աւելի շատ մեղմութիւն, զգուշութիւն, դիջողութիւն մանր բուրժուազիայի, մտաւորականութեան եւ, մանաւանդ, գիւղացիութեան նկատմամբ: Ամէն կերպ, ուժդնօրէն, փութով օգտագործել անտեսապէս կապիտալիստական արեւմուտքը, կօնցէսեաների եւ ապրանքափոխութեան քաղաքականութեամբ, նաւթը, մանգանէզը, քարածուխը, պղինձը — ահա խիստ թերի ցանկը լեռնային ահագին հարստութիւնների: Կատարեալ հնարաւորութիւն կայ կօնցէսեաների եւ ապրանքափոխութեան քաղաքականութիւնը արտաստահմանի հետ պարզել լայնօրէն:

Պէտք է այդ անել լայնօրէն, ամուր կերպով, հմուտ ու զգուշաւոր՝ ամէն կերպ օգտագործելով այդ բանուորների եւ գիւղացիների վիճակի բարելաւման, մտաւորականութիւնը անտեսական շինարարութեան համար գրաւելու նպատակով: Օգտագործելով ապրանքափոխութիւնը Իտալիայի, Ամերիկայի եւ ուրիշ երկրների հետ՝ բոլոր ուժով պէտք է զարգացնել հարուստ երկրի արտադրական միջոցները, սպիտակ ածուխը, ոռոգումը: Ոռոգումը մանաւորապէս կարեւոր է՝ բարձրացնելու համար, ինչ գնով եւ լինի հողագործութիւնն ու անասնապահութիւնը:

Աւելի դանդաղ, աւելի զգուշաւոր, աւելի աստիճանական փոխանցում սոցիալիզմի, – ահա՛ ինչ հնարաւոր է եւ հարկաւոր է կովկասեան հանրապետութիւնների համար, իրրեւ տարբերութիւն Խորհրդային Ռուսաստանից: Ահա՛ թէ ինչ պէտք է հասկանալ եւ կարողանալ իրագործել մեր դրծելակերպից տարբեր կերպով:

Մենք բաց արինք առաջին ճեղքը համաչխարհային կապիտալիզմի մէջ: Ճեղքը բացուած է: Մենք պաշտպանեցինք մեզ մոլեգին, դերբնականօրէն ծանր ու դժուար, տաւադինօրէն դաժան պատերազմի մէջ ընդդէմ սպիտակների, էսէրների, մենշեւիկների, որոնց օգնում էր ամբողջ Անտանտան, իր ծովապաշարումով, իր ռազմական օժանդակութեամբ:


ARAM webaram.com

Դուք, Կովկասի կոմունիստ ընկերներ, պէտք չունիք ճեղք բանալու։ Պէտք է պահանջել մեծ զգուշութեամբ եւ հետեւողականութեամբ առեղծել նորը, օգտագործելով 1921 թուականի ձեզ համար նպաստաւոր միջազգային կացութիւնը։ Եւ Եւրոպան եւ ամբողջ աշխարհը 1921 թուին այն չեն, ինչ որ 1917 եւ 1918 թուերին։

Ըմբռնելու համար մեր գործելակերպը, այլ ինքնուրոյն կերպով մտածել ու քննել նրա առանձնայատկութիւնները, նրա պայմաններն ու եղրակացութիւնները, ձեզ մօտ գործադրել ոչ թէ 1917—1921 թ. փորձերի տառը, այլ ոգին, իմաստը, դասերը։ Տնտեսապէս անյապաղ յենուել ապրանքափոխութեան վրայ կապիտալիստական արտասահմանի հետ, ժլատ չլինել։ Մոտ լեռնային հարստութիւններից տասնեակ միլիոններ անցնեն նրա ձեռքը։

Իսկոյն պէտք է աշխատել լուացնել վիճակը պիւղացիների ու սկսել էլեկտրականացման եւ ոռոգման խոշոր աշխատանքներ։ Ոռոգումը ամէնից աւելի է հարկաւոր եւ ամէնից աւելի կը վերաչինէ երկիրը, կը վերածնէ նրան, կը թաղէ անցեալը, կ'ամրացնէ սոցիալիզմի փոխանցումը։

Ներողութիւն եմ խնդրում, որ անփոյթ դուրս եկաւ այս նամակը, որը պէտք է հապճեպով գրէի, որ ուղարկեմ ընկ. Միասնիկովի հետ եւ մէկ անգամ էլ ուղարկում եմ լաւագոյն ողջոյններս ու բարեմաղթութիւններս Կովկասի խորհրդային հանրապետութիւնների բանուորներին ու պիւղացիներին։

Լենին»

Իսկ ինչ էինք ասում մենք դեռ ամիսներ առաջ։ Մենք պընդում էինք, որ «Հայաստանը պիւղացիական երկիր է», որ «Հայաստանի դրութիւնը առանձնայատուկ է Խորհրդային Ռուսաստանի պայմանների հետ համեմատած», որ «չպէտք է ընդօրինակել Ռուսաստանի գործելակերպը», այլ հարկաւոր է «աւելի մեղմութիւն, զգուշութիւն, պիջողութիւն մանր բուրժուազիայի, մտաւորականութեան եւ, մանաւանդ, պիւղացիութեան նկատմամբ», «աւելի դանդաղ, աւելի զգուշաւոր, աւելի աստիճանական փոխանցում սոցիալիզմի — ահա ինչ է հնարաւոր եւ հարկաւոր կովկասեան հանրապետութիւնների համար»։

Մենք միեւնոյն մտքերը պաշտպանում էինք դեռ Յունուարին ու Փետրուարին, եւ եթէ այն ժամանակ հայ բոլշեւիկները աւելի «ինքնուրոյն կերպով մտածէին ու քննէին նրա գործելակերպի առանձնայատկութիւնը, նրա պայմաններն ու եղրակացութիւնները,



ARAM webaram.com

*գործադրէին ոչ թէ 1917—1921 թ. փորձերի տառը, այլ ոգին, իմաստը, դասերը», անշուշտ հայ ժողովուրդը ազատ պիտի լինէր անօրինակ աղէտից եւ անհաչիւ կորուստներից, որ պատճառեց բոլշեւիկների ձեռքով արուեստականօրէն ստեղծուած քաղաքացիական կռիւը:*

*Եթէ Դեկտ. 2-ից յետոյ Հայաստան եկած լինէին սեփական ուղեղի տէր բոլշեւիկներ եւ ոչ թէ ինքնուրոյնութիւնից զուրկ, թեթեւամիտ եւ խակ ֆանֆարօններ, պատասխանատուութեան դիտակցութիւնը չունեցող երեխաներ, Ա.Թարբէդեանի ու Ա.Լիսի պէս հոդեկան հիւանդներ եւ կամ կասեանի տիպի անկամ ներքինիներ — մարդիկ որոնց քաղաքական իմաստութիւնը ոչ թէ սեփական երկրի իրական վիճակից էր թելադրւում, այլ Լենինների հապճեպով գրուած պատահական նամակներից — հայ կեանքի չատ պայմաններ այլ կերպ կը դասաւորուէին...*

*Այո՛, քաղաքացիական կռիւը անխուսափելի էր: Ալիխներն ու Ա.Թարբէդեանները այդպէս էին ուզում: Այդ էր եւ Բագուի անթեւի կամքը: Հայ ժողովուրդը պէտք է անցնէր քաղաքացիական պատերազմի բովից կոմունիստական բախտին արժանանալու համար: Ի՞նչ կարող էինք անել մենք: Պիղատոսի պէս մի կո՞ղմ քաշուել: Մեր անձը փրկելու մասի՞ն մտածել. հեռանալ երկրից՝ մենակ թողնելով ժողովուրդը, յօժար կերպով յանձնուել Չեկայի՞ն վերջը կացինահար լինելու համար: Ինչք եւ խիղճ ունեցողի համար ուրիշ ելք չկար, քան մնալ ժողովուրդին մէջ եւ ժողովուրդի հետ միասին անել այն, ինչ որ անհրաժեշտ էր անել: Կարելի չէր եւ ներելի չէր խուսափել անխուսափելիից:*



ARAM webaram.com

ARAM webaram.com

# ՑԱՒԵԼՈՒԱԾ

ARAM webaram.com

ARAM webaram.com

# Հ. Հ. ՓԱՐԻԶԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ ՉԵԿՈՒՑՈՒՄԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ

*Թէ հայկական գործերը ինչ վիճակում էին արտասահմանում, թէ Դաշնակից պետութիւնները ի՞նչ յարաբերութեան մէջ էին ընդհանրապէս Օսմանեան կայսրութեան եւ ի մասնաւորի Հայաստանի և հայկական հարցի շուրջ ցոյց է տալիս յետագայ զեկուցումը, որ Հայաստանի Պատուիրակութեան նախագահ Ա. Ահարոնեանը ուղարկել է Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարար Ս. Տիգրանեանին 1919 թ. Յուլիս ամսին:*

*Մենք մեր ձեռքին տակ ունինք Ա. Ահարոնեանի զեկուցման պատճէնը, որին կցուած են հակիրճ տեղեկութիւններ Պատուիրակութեան կատարած աշխատանքների եւ այլեւայլ դէպքերի մասին:*

*Այս զեկուցումից յստակ կերպով տեսնում է հակամարտութիւնը մասնաւորապէս Անգլիայի եւ Ֆրանսայի միջեւ Օսմանեան կայսրութեան շուրջ եւ իսկամ աշխարհի խաղացած դերը, իրրեւ գործիք Անգլօ—Ֆրանսական դիւանագիտութեան ձեռքին, այլեւ Ամերիկայի Միացեալ Նահանգների ներքին հակամարտութիւնը եւ նախագահ Վիլսընի տարօրինակ հայասիրութիւնը որին գոհ գնաց հայկական հարցը:*

*Հայաստանի արտաքին գործոց նախարար*
*Մեծապատիւ Պ. Ս. Տիգրանեան*

*Սրանից տասն օր առաջ հասաւ Պ. Պապաջանեան: Ձեր Մայիս 10 թուակիր Թիւ 1375 եւ փոխ-վարչապետի՝ Պ. Ա. Խատիսեանի Մայիս 6-ի Թիւ 1555 գրութիւնները ստացայ: Ֆրանսիական արտա-*


ARAM webaram.com

քին գործոց նախաարարութիւնը հաղորդեց ինձ նաեւ ձեր Յունիս 6 եւ 14 թուակիր հեռագիրները: Ձեր առաջին հեռագրից տեսնում էր, որ սոսցել էք իմ Ապրիլ 24–25 գրութիւնը: Հետեւապէս իրազեկ էք մինչեւ այդ թիւը տեղի ունեցած քաղաքական անցուդարձին, ինչպէս եւ մեր հարցի վիճակին:

Տարաբախտաբար հաղորդակցութեան դժուարութիւնները անհնարին են դարձնում աւելի յաճախակի թղթակցութիւն:

Խնդրում են հաւատալ, որ սուրհանդակի նուազութիւնն այստեղից ուրիչ պատճառ չունի եւ չի կարող ունենալ:

Կառավարութեան եւ պատուիրակութեան մէջ գործողութեանց միութիւն եւ համերաշխութիւն ստեղծելու խափանումի պատճառը վերացնելու հնարը չկայ: Սոխպուած ենք ամէն անգամ պատեհութիւն հետամտել եւ մեկնող նաւով Ձեզ սուրհանդակ ղրկել:

Հասան նախարարապետ Ց. Քալէնուն եւ ֆինանսների նախարար Պ. Լենֆիլտեան: Նրանց զեկուցումներին եւ Ձեր վերջին գրութիւններին ի պատասխան պարտք եմ համարում հաղորդել հետեւեալը.—



ՎԻԼՍՐՆ

ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԸ.— Նախ ասեմ, որ իմ վերջին զեկոյցից ի վեր (Մայիս եւ Յունիս) մեզ անմիջապէս չհատգրգռող խոշոր քաղաքական անցքեր տեղի չեն ունեցել. հաշտութեան կոնֆէրանսը դրաղուած է եղել մեծ մասամբ պատասխաններ խմբագրելով գերմանական պատուիրակութեան հակա-առաջարկներին, որոնք վերաբերում էին պրոկղորֆ Ռանցաուի առաջարկութեան եղջիւրից թափւում էին այնպիսի առատութեամբ, որ անգամ չորսի ծանրախոհ եւ անյոյզ խորհուրդը սկսեց յուզուել եւ վերջ դրեց այդ բոլորին իր նախագահի՝ Ժ. Քլեմանսոյի մի վերին աստիճանի կտրուկ, չոր եւ գրեթէ կոպիտ վերջնագրով:



ARAM webaram.com

Գերմանացոց նպատակն էր յօդուտ իրենց փոխհատուցման ենթարկել տալ, եթէ հնար է, խաղաղութեան պայմանագրի ծրագիրը: Այդ փորձերն անօգուտ անցան եւ նրանց վերջնական պայմանաժամը նշանակուած է Յունիս 23ի երեկոյեան ժամը 7ը պատասխան տալու:

Կոմս Պրոկդորֆ Ռանցաուի մեկնեց վերադարձից յայտարարելով, որ առորագրելու չէ. իսկ մինչեւ այդ՝ Շայտեմանի նախարարութիւնը, որ անհաշտ էր, տուել էր իր հրաժարականը եւ նրան յաջորդող կառավարութիւնը ըստ երեւոյթին առորագրելու է դաշնակիցների պայմանները իրենց ամբողջութեամբ:

Հաւատացած եմ, որ այս գրութիւնս թղթատարին չյանձնած՝ խաղաղութեան պաշնագիրը Գերմանիայի եւ իր յաղթողների միջեւ առորագրուած կը լինի:

Հաւատացած եմ նաեւ, որ այնուհետեւ միայն հերթը կը հասնի միւս խնդիրներին — եւ հետեւապէս մեր հարցին:

ԹՈՒՐՔԵՐԸ.— Արդէն կանչուած են Թուրքերը: Մի չաբաթից ի վեր ապառում են Պարիզից դուրս մի արուարձանում:

Սրանք հաշտութեան իրաւազօր պատուիրակներ չեն, այլ պարզ տեղեկատուներ, որ Ֆրանսիական կառավարութեան ջանքերով «հրաւիրուել են պարզելու Թուրքական հայեցակէտը Արեւելքի խնդիրների մասին»:

Այն հանգամանքը, որ Թուրքերն այս չնորհով (կարելի է ասել բացառիկ եւ անապատելի) պարտական են Ֆրանսիային՝ կարծում էինք պիտի առաջ բերէր Ֆրանսիական մամուլի մէջ Թիւրքօֆիլ մի հոսանք:

Բարեբախտաբար մեր վախերը չարդարացան. մամուլի տոնը մնաց նոյնը, սառն ու քաղրևկտ արձանագրեցին պարզապէս նրանց գալստեան փաստը եւ նրանց ախոշոնները, նկարներ գրին քանի մի Ֆրանսիական ոճով համեղ սրամտութիւններ արին եւ լռութիւն տիրեց նրանց շուրջը ու մոռացուեցին:

Անգամ անուղղելի Թիւրքամոլ եւ Միացեալ Հայաստանի ուխտեալ հակառակորդ «Temps»-ը մեղմացուցիչ պարագաներ և սփոփիչ կամ աւելի ճիշդ յուսալից խօսքեր չգտաւ Դամատ Ֆէրիտ փաշայի եւ իր հետեւորդների համար: Մինչդեռ դրա ծախուած երկու խոշոր պահպանողական թերթեր «Journal Des Débats» եւ «Figaro» մի չարք խարանիչ յօդուածների տեղ տուին իրենց էջերում յաւիտենապէս կեղծարար Թիւրքերի մասին: Թիւրք պատուիրակութիւնն արդէն մի անգամ ներկայացաւ տաճկի խորհուրդին, որին եւ յանձնեցին Թուրք կառավարութեան պահանջները:


ARAM webaram.com

Ընդհանուր դծերով այդ դրութիւնը մեզ ծանօթ է. հին յանկերգն է թուրքական, որից աչքարհը վաղուց է ձանձրացել եւ որից թիւրքերը ազատուել չեն կարողանում: Զարդերի մէջ մեզաւոր է ոչ թուրք ժողովուրդը — ասում է Ֆէրիդ փաշայի մեմուարը, այլ մի խումբ յանցագործներ, Միութիւն եւ Յառաջդիմութիւն կոմիտէ անունով, որ էլ դոյութիւն չունի, անիրաւութիւն կը լինէր թուրք անմեղ ժողովուրդը պատժել մի խումբ յանցագործների համար: Թուրք ժողովուրդն ինքն էլ մեծապէս տուժել է եւ արժանի է կարեկցութեան:

Թուրք կառավարութիւնը համաձայն է որ Արաբիան զատուի, բայց նրանից դուրս կայսրութեան ամբողջութիւնը կը մնայ անձեռնմխելի: Ինչ վերաբերում է «Արեւելեան Անատոլու»ի նահանգներին, այսինքն Հայաստանին՝ թուրք կառավարութիւնը պատրաստ է Դաշնակիցների աջակցութեամբ ամենալայն ինքնավարութիւն տալ Քրիստոնեաներին: Ի հարկէ դրա հետ միաժամանակ չեն մոռացուած հայերի թուի նուազութեան արդումէնդները, իսլամների մեծամասնութիւնը, վոքրաթիւ Քրիստոնեաների պետութեան մէջ թուրք մեծամասնութեան հոգեբանութեան վտանգաւոր հետեւանքները, եւայլն, եւայլն: Ինչպէս տեսնում էք անգամ այս զարհուրելի պատերազմը թուրքերին ոչինչ չուսուց եւ ոչինչ չմոռացրեց:

Տաճկի խորհուրդը լսեց այդ բոլորը մի զարմանալի համբերութեամբ եւ յայտնեց թէ նրանց կը պատասխանեն մի քանի օրից: Այդ պատասխանը դեռ տրուած չէ: Հաւանաբար կը տան Գերմանիայի հետ խաղաղութիւնն ստորագրելուց յետոյ — Յունիս 24–25ին: Մեր պատուիրակութիւնը հիմքեր ունի հաւատալու, որ թիւրքերի գալով Հայաստանի մասին եղած որոշումը, որ ստորագրուած է այս տարուայ Յունուար 30–ին, որի մասին Ձեզ գրել եմ ժամանակին, փոփոխութեան չի ենթարկուի: Հրաշք կը լինի, եթէ թիւրքերը կարողանան Միջերկրականից Սեւ ծով անցնող Այաշ—Օրտու գծից դէպի արեւմուտք (Առանց Զմիւռնիայի եւ իր նահանգի, որ գրաւել են Յոյները) պահել թիւրքական բացարձակ գերիշխանութեան տակ: Թիւրքերի հրաւէրը հէնց այս հարցերի չուրջը ծագած վէճից առաջ եղաւ: Մօտ մի ամիս առաջ — ինչպէս այդ կը տեսնէք այս տեղեկագրից Ձեզ ղրկածս լրագրներից — Արեւմտեան Անատոլիան — այսինքն, այնինչ նկատուում է այժմ pays turc proprement dit վերջնականապէս բաժան–բաժան լինելու վրայ էր: Հարաւը, Ադալիայից մինչեւ Գոնիա, տանում էր Իտալիան որպէս մանտատէր, Հիւսիսը, Բրուսայից մինչեւ Սեւ ծով, Զունգուլտակ, Սամսոն — տանում



ARAM webaram.com

էր Ֆրանսիան եւ Կ. Պոլիսը փոքրիկ հիսէրլանոով à cheval Բօսֆորի վրայ ու Տարտանելի՝ դառնում էր փոքրիկ պետութիւն Ամերիկայի մանուշակի տակ, ինչպէս Հայաստանը: Եւրոպայի թիւրքոֆիլները, մասնաւորապէս խոշոր դրամատէրները, որոնք մեծ չահեր ունին Թիւրքիայում ձիչ բարձրացրին և փորձեր արին փրկել եթէ ոչ Թիւրքիայի ամբողջութիւնը, գէթ նրան իրր թէ թողած մասերը՝ Պոլսի հետ միասին: Անատոլիան այդ ուղղութեամբ աւելի վճռական դեր կատարեց, քանի որ Լոնտոնից Պարիզ եկաւ Հնդկաստանի նախարար Մօնդէգիւ, բերելով իր հետ հնդիկ մահմետականների մի ամբողջ միսիա՝ մի ոմն Ագախանի առաջնորդութեամբ, որոնք կարողացան ներկայանալ Զորսի խորհրդին ասելու համար, թէ Պօլիսը խղել խալիֆայից եւ Սուլթանին Բրուսա փոխադրել ու նրա պետութիւնը ոչնչէ օտար խնամատարութեան յանձնել՝ կը նշանակէ վիրաւորել ամբողջ իսլամ աշխարհը եւ մօտ ժամանակում ամբողջ Արեւելքը վերբերաին նորանոր փոթորկումների ասպարէզ դարձնել:

Թաւերական այս ցոյցը որքան եւ չիսուակ անճանց ժպիտը յարուցեց, այնուամենայնիւ չմնաց առանց հետեւանքի: Ֆրանսայի եւ Անգլիայի մամուլի մի քանի խոշոր օրգաններ արձագանք տուին իսլամական մեծ վտանգը հրապարակ նետելով, այս առթիւ չմոռացան յիշատակել, որ Անգլիան եւ Ֆրանսիան «իսլամ» պետութիւններ են հետեւապէս չահ չունին մուսուլմաններին չատ անհաճոյ լինելու: Եւ իրրեւ արդիւնք՝ Զորսի խորհուրդը անկախ թողեց Թիւրքիային մնալիք Արեւմտեան Անատոլիայի վիճակի կարգադրութիւնը, ինչպէս եւ Կ. Պօլսի խնդիրը եւ դրա փոխարէն հրաւիրեցին Թուրք պատուիրակներ նրանց կարծիքն էլ լսելու՝ մուսուլմաններին ի հաճոյս: Եւ Ֆրանկօ—Անգլիական խուլ, բայց ուժեղ մրցութիւնն այս անգամ եւս երեւան եկաւ: Մօնդէգիւն Պարիզ եկաւ հնդիկ իսլամների պատգամաւորութեամբ, Ֆրանսիական կառավարութիւնն էլ իր իսլամ հպատակներին չահելու համար՝ կարողացաւ Պարիզ բերել տալ այս Թուրք պատուիրակութիւնը: Ամերիկան Թոյլ է տալիս բոլոր խաղերը՝ առանց մտքի չափ չեղուելու իր ընդունած դծից: Կրկնում եմ՝ այս Թուրք պատուիրակութիւնը լսում են այսպէս կոչուած «Թուրք երկրի» համար, եւ այլն, ոչ որպէս plénipotentiaire այլ որպէս տեղեկատուներ:

Հայաստանը Կիլիկիայի հետ միասին՝ այդ բանակցութիւններից դուրս է, ինչպէս եւ Արաբիան, Պաղեստինը, Սիւրիան, Միջագետքը եւ Զմիւռնիայի վիլայէթը: Գլխաւոր խնդիրն այժմ Կ. Պոլսի բախտն է — կը մնա՞յ Թուրքիային, թէ կը դառնայ միջազգային

ARAM webaram.com

կամ Ligue des Nations–ի հովանու տակ կը յանձնուի մէկ պետութեան: Այս մասին որքան ևս կարողացայ իմանալ՝ տակաւին որևէ վերջնական որոշում չկայ եւ հարկ թէ լինի զերմանական հաշտութեան պայմանագիրն առորագրելուց առաջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՏԱՏԸ.— Այս պայմաններում բնականաբար հայոց հարցն էլ մնում էր իր լուծման: Բոլոր մեր դիմումներն ու պահանջները, օգնութեան մեր բոլոր աղաղակները դալիս են բախելու մանտատի խնդրին, որ տակաւին մնում է չլուծուած՝ շնորհիւ Ամերիկայի ներքին քաղաքականութեան: Ձեզ դրել եմ արդէն որ մենք վճռական հաւատիք ունինք, որ Վիլսընը, պաշտօնապէս եւ պայմանաւոր ձեւով ընդունել է Հայաստանի մանտատը: Մեզ՝ Հայաստանի պատուիրակներիս այդ բանը կիսապաշտօնապէս յայտարարուած է մի քանի անգամ եւ դաշնական կողմերից: Ասացի, որ Վիլսընը ընդունել է մեր մանտատը պայմանով, որ Ամերիկական Սենատն ու Կոնգրէսն այն վաւերացնեն: Արդ, դժբախտութիւնն այն է որ Վիլսընը նոր Սենատում եւ կոնգրէսում մեծամասնութիւն չունի:

Իշխողները Թուապէս՝ իր հակառակորդներն են — Հանրապետական կուսակցութիւնը, որ դէմ է արտայայտուել Վիլսընի արտաքին քաղաքականութեան և մասնաւորապէս Ligue des Nations-ին, որ բախում է Monroë–ի դոկտրինի հետ: Վիլսընն ինքը եւ իր կուսակցութիւնը — Դեմոկրատներ — յոյս ունին հակառակ իրենց փոքրամասնութեան տանել յաղթանակը՝ նախ՝ որովհետեւ Ligue des Nations-ի charte –ը մի քանի կարեւոր փոփոխութեան ենթարկուեց այստեղ Պարիզում, որպէսզի շատ չբախուէն Monroë –ի դոկտրինին, երկրորդ՝ Հայաստանի խնդիրը այնքան ժողովրդական է Ամերիկայում, այնպիսի լայն խաւեր է թափանցել, որպէս զերազանցապէս մարդասիրական գործ, որ հեշտութեամբ կարելի է այն լծունդ դարձընել՝ հասարակական կարծիքը իրենց յետեւից քարշ տալու համար: Ես ձեզ դրել էի արդէն Վիլսընի մեզ ասած խօսքերը. «Եթէ Ամերիկան որեւէ Մանդատ ընդունի — դա կը լինի Հայաստանը»:

Անհնարին է ենթադրել, որ Վիլսընի պէս խոհուն մարդ թեթեւամտութիւն ունենայ Հ–ի մանդատի յանձնառութիւնն առանձնել, առանց կանխապէս վստահ լինելու յաջողութեան:

Այսօր Ամերիկայից հասնող լուրերը հաստատում են այդ լաւատեսութիւնը:

Հանրապետական կուսակցութեան մէջ չատանում են Ligue des Nations-ի պաշտպանները, հետեւապէս եւ Հ–ի մանտատի չանսերը աստղութեամբ աճում են:



ARAM webaram.com

Գիտեմ, բոլոր իմ այս յուսալից զեկոյցները որքան եւ հաճելի լինեն, հեռու են Ձեզ գոհացնելուց, քանի որ անմիջական օգնութիւնը եւ մեր հարցի անմիջական լուծումը միայն կարող էր փրկել մեր ժողովուրդը, որի վրայ չարունակում է ծանրացած մնալ պատերազմի արհաւիրքը։(*)

Մայիս 10-ի մի նամակով — մեր երկրից ստացած ծանր լուրերի ազդեցութեան տակ — դիմել եմ Վիլսընին։ Նրա պատասխանը ներփակ ուղարկում եմ. տեսնում էք ինչքան սիրտ կայ Վիլսընի պատասխանի մէջ. վշտանում է որ անզօր է անմիջական օգնութիւն հասցընել։ Առանց Վիլսընի մեր արիւնը վերստին վաճառուած կը լինէր երեսուն արծաթով։ Ցուսով եմ, որ Վիլսընն Ամերիկա մեկնելով մեր հարցի մասին կ'աշխատի եւ մի դրական լուծումն կը ստանայ Ամերիկայի Սենատից եւ կօնգրէսից։

ՄԵՆՔ ԵՒ ՌՈՒՍՆԵՐԸ.— Իմ ձեզ ուղարկած վերջին զեկոյցից յետոյ (Ապրիլ 24–25) մի քանի անգամ տեսնուել ենք Պարիզի ռուսական ներկայացուցիչների հետ — Conférence politique russe-ի անդամների հետ. դրանց մէջ են՝ Գիրս, Մ. Մակլաքով, Բախմէդեւ, Իշխան Լվով, Զայքովսկի, Մանդէլչտամ եւայլն։ Մենք մեր նպատակը անկեղծօրէն պարզեցինք նրանց առաջ, ասելով որ մենք որքան եւ համակիր ենք Ռուսաստանին, նրա կուլտուրային, այնուամենայնիւ ստիպուած ենք միանալ Թիւրքայ Հայաստանի հետ։ Վերոյիշեալ բոլոր պարոնները տարբեր օրերում մեզ տուել են հետեւեալ պատասխանը։ — Կովկասեան եւ Թիւրքայ Հ-ի միացումը անխուսափելի անհրաժեշտութիւն է։ Ռուսաստանը պէտք է ընդունի այդ անհրաժեշտութիւնը ոչ միայն նրա համար, որ բոլոր հայերը հանդէպ Ռուսաստանի հետեւել են չատ չիտակ քաղաքականութեան, այլ նրա համար, որ այդ է պահանջում Ռուսաստանի չահը։ Միացեալ Հայաստանը, ասում են նրանք, մեզ ձեռնտու է, որովհետեւ 1. Մեր հեռուտես սահմանների վրայ ստեղծում է մի քրիստոնեայ պետութիւն, որ մեզ բարեկամ, դուցէ եւ «դաշնակից» կը լինի, 2. Հայաստանը ըստ երեւոյթին ունենալու է եւ կիլիկիան, մինչդեռ մենք հնար չունինք Միջերկրականին հասնելու, ձեր միջոցով մենք հնար կ'ունենանք առեւտուրը օգտուել բաց ծովից, 3. Ձեր մանդատէրն Ձեզ մերժել միացումը, որովհետեւ հակառակ կը լինի ազգերի սկզբ-

(*) ԾԱՆՕԹ.— Այստեղից սկսած արտագրուած է կրճատումներով եւ ամփոփումներով։


ARAM webaram.com

բունքին, որի հիման վրայ մենք պահանջում ենք Գալիցիան, 5. եթէ մերժենք, մեր սահմանների վրայ կը սեղծենք irrédentisme: Ահա մօտաւորապէս նրանց արդումենտացիան, որ մենք դնահատում ենք մեր ակնոցներով: Աւելացնում են նաեւ, որ նրանք համաձայն են իրենց համակրութիւնը յայտնել կիսապաշտօն ձեւով, բայց ոչ հրապարակով, քանի որ կառավարութիւն չունեն տակաւին: Բայց եթէ հաշտութեան կոնֆէրանսը «առանց մեզ հարցնելու՝ մեր հողերը խլէ մեզանից, մենք կը բողոքենք — Հայաստանի համար մեր բողոքը կը լինի ձեւական»: Մեզ իրաւունք է տրուած ասել ուր հարկն է, որ ռուսները դէմ չեն Հ–ի միութեան:

ԿՈԼՉԱԿ·— Սակայն այս լոլորին եկաւ միանալու Կոլչակին ճանաչելու խնդիրը: Դաշնակից պետութիւնները ուզում են որեւէ կերպ Ռուսաստանի կառավարութիւն ստեղծուի, որպէսզի նրա վրին փաթաթեն հաշտութեան դաշինքը եւ այսպիսով կնքուի աշխարհի վերակազմութեան ընդհանուր գործը: Այս յանկութիւնը այնքան տիրական է, որ մի քանի ժամանակ առաջ հարց կար բոլշեւիկների կառավարութիւնը ընդունելու փաստօրէն: Ֆրանսիան դլխաւորապէս հակառակ եղաւ այս մտքին. այժմ էլ տրուած է Կոլչակի կառավարութիւնը ճանաչելու խնդիրը: Դաշնակիցները նրան պայմաններ են դրել — ճանաչել Լեհաստանի եւ Ֆինլանտայի անկախութիւնը. պահանջում են կտրել Բեսարաբիան եւ միացնել Ռումանիային:

Պահանջում են միւս ազգերին իմիւնօրիտետը ընդունել եւ նրանց վիճակի լուծումը յանձնել Ազգերի Լիգային: Մեր չրջանների համար ասուած է «կովկասեան ժողովուրդներ» — Հայաստանի համար առանձին խօսք չկայ: Այս առաջարկի պաշտօնական բնագիրը դաղտնի է. մամուլը հրատարակեց քաղուածքներ միայն: Իսկականի մէջ Հայաստանի մասին խօսք կա՞յ — չկարողացայ իմանալ: Բայց այն փաստը, որ Բեսարաբիան յանձնուում է Ռումանիային — մեր վիճակը լաւացնում է, քանի որ խախտուում է ռուսական նախկին հողերի անձեռնմխելիութեան դոգմը:

Սա հիմք կը տայ մեզ հանդէպ ռուսների հնարաւոր չկամութեան, քանի որ կայ Սպաղանով, անդամ Միլիւքով որ լսել անդամ չեն ուզում Ռուսաստանից թէկուզ որեւէ հնչին հող կտրելու մասին:

Կոլչակը պատկանում է սրանց չարքին եւ պետութիւններին ուղղած իր պատասխանը այդ ոգով է խմբագրուած: Նա թողնում է տերրիտորիալ խնդիրները Ռուսաստանի Սահմանադիր ժողովին եւ խուսափում է որեւէ յանձնառութիւնից: Ամերիկան է լինելու, որ վազ թէ ուշ հեռանալու է, 4. Զենք կարող



ARAM webaram.com

ԻՏԱԼԱՑԻՔ ԵՒ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ ։— *Մեր հաւաքած տեղեկութիւնները հաստատում են, որ անգլիական զօրքին Կովկասում փոխարինելու են իտալացիք։ Թէեւ Զէյմս Բրայսը ասել է, թէ «իմ հայրենակիցները հապա թէ ամբողջովին դաւադրկեն Կովկասը»։ Իտալացիների հետ մենք այստեղ յարաբերութեան մէջ ենք, դուք էլ այդտեղ կապ պահպանեցէք եւ նրանց ընթացքի մասին օրը օրին մեզ իրազեկ պահեցէք։*

ՂԱՐԱԲԱՂ ։— *Կարսի եւ Նախիջեւանի առիթով ես այստեղ Բալֆուրին չնորհակալութեան դիր ուղղեցի։ Ղարաբաղի մասին ձեր վերջին հեռագրի եւ դրութեան վրայ հիմնուած նոր խնդիր ուղարկեցի Բալֆուրին։ Ղարաբաղի նկատմամբ մենք ոչ մի պիջում չենք անի։ Մ. Վարանդեան ուղարկուած է Լոնտոն Ղարաբաղի համար. նրա նամակների ընդհանուրը հաղորդում է Ղարաբաղի ընդհարման եւ անգլիացի պինուորների սպանութեան մասին տեղեկութիւն է խնդրում։*

ՎԻԼՍՈՆԻՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԸ ։— *Վիլսոնին դիմում եմ արել. ներկայիս ուղարկում եմ Ձեզ նամակին պատճէնը — խնդրել եմ փոխադրութիւն, ռազմամթերք, բանակի կազմակերպութեան համար աջակցութիւն, հանրապետութեան ճանաչում։*

ՊԱՐԵՆԱԻՈՐՈՒՄ ։— *Ուղարկում եմ նպաստամատոյց ընկերութեան այն նամակի պատճէնը, որի մասին Ձեզ հեռագրել եմ։*

*Հաղորդեցէք թէ մեր ջանքերը պարենաւորման համար ի՞նչ արդիւնք տուին։ Ինչքա՞ն հաց ստացուեց Հայաստանում։*

ԴԱՆԻԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԸ ։— *Մոսկուայի հայերը դիմել են եւ օգնութիւն են խնդրում, չատերը ուզում են դուրս գալ Ռուսաստանից, մօտ 30·000 հայ գաղթական կայ ամբողջ Սովետական Ռուսաստանում։ Պէտք է նրանց հայրենիք ճամբել։ Այս մասին մէջտեղում է Դանիական կարմիր Խաչը եւ պէտք եղած աջակցութիւնը տալիս է մեզ։ Ուղարկում եմ Ձեզ Մոսկուայի նամակի պատճէնը եւ Դանիական կարմիր Խաչի հեռագրի ու նամակի պատճէնները։*

ՆԵՐՔԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ — ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐԻ ՓԱՂԱՓԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ։— *Պատմուած է վերջալի դիրքը դէպի Կովկասի Հայաստանը, պարլամենտական ընտրութիւնները, կաթողիկոսին տուած հեռագիրը, որով արդիլում է Թիւրքահայերի մասնակցութիւնը, Թիւրքահայ պատուիրակութիւնը կառավարութիւն դարձնելու ձգտումը, այսպիսով երկու կառավարութիւն ստեղծելու վտանգաւոր քաղաքականութիւնը։ Պատուիրակութեան վերջին ժողովի (Յունիս 23) նիստի որոշումները՝ համերաշխութեան չուրջը եւայլն։*


ARAM webaram.com

## Ա. ՋԱՄԱԼԵԱՆԻ ԵՒ Վ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

*Սիրելի Ռոստոմ,*

*Մի ժամից յետոյ թողնում եմ Թիֆլիսը Մխախլի անդամների հետ միասին: Գնում եմ Բաթում եւ ոչ թէ Երեւան, որովհետեւ միայն Բաթումից կարելի է կապ պահպանել Եւրոպայի հետ: Մեր դեկտեմբերը — Ահարոնեան եւ Պապաջանեան այստեղ են, սակայն չգիտեմ, նրանք կարո՞ղ են մեկնել արտասահման թէ չէ: Եթէ դաշնակիցները չմիջամտեն, երեւի վրացիք չեն թողնի նրանց մեկնելու:*

*Պատերազմը չարունակւում է մեզնից կողմից մեծ յամառութեամբ: Այս դիչեր (23–24) մենք չկարողացանք քնել ռմբակոծութեան ձայնից, մեր տունն ուղղակի դողում էր. թէ որտեղէն կատարում են պատերազմական գործողութիւնները չգիտեմ: Ըստ վերջին տեղեկութիւնների կռիւը Սաղախլու կայարանի չուրջն է մի կողմից եւ Բէլիկլիսւի մօտերքը միւս կողմից: Վերջին տեղեկութիւնը պաշտօնական չէ:*

*Անգլիական եւ Ֆրանսական ներկայացուցիչներին իրենց ձեռքը ձգելու համար վրացիք ջանք չեն խնայում: Ասում են, որ նրանք որոշ չափով արդարացրել են իրենց օգտին անգլիացիներին իսկ Ֆրանսացիներին՝ ոչ: Ուղարկում եմ Ձեզ մեր բանակցութիւնների պատճէնը, որպէսզի համապատասխան ձեւով տղէք այդ տեղի չրջանների վրայ: Ըստ իմ վերջին տեղեկութեան՝ դաշնակիցները ուզում են դադարեցնել տալ Բորչալուի գաւառը մեզանից էլ վրացիներից էլ, թողնելով ադմինիստրացիան նրանց ձեռքը: Սա մեզ համար ի հարկէ անընդունելի է: Պատերազմական դրութիւնը անհնարին է դարձնում*



ARAM webaram.com

մերձենալ դաշնակիցներին եւ նրանց պարզել իրերի դրութիւնը: Մինչդեռ վրացիք ապատօրէն օգտւում են այդ բանից: Ես դնում եմ, մեր ընկերները դրեթէ բոլորն էլ ձերբակալուած են, իսկ մնացած հասարակութիւնը ահաբեկուած է:

Ուղարկում եմ քեզ եւ Վահանի նամակը, որ որոշ չափով կը պարզի երկրի դրութիւնը այստեղ:

Բարեւներս բոլորիդ՝
Ա. ՋԱՄԱԼԵԱՆ

Բաթում եղածս մէջոցին բաւական մանրամասն տեղեկութիւններ առայայ Պոլսից: Այնտեղ միանգամայն քաօսային դրութիւն է. մարդ չկայ, որ ընթացք տայ դործերին: Ընկերների մէջ միայն Շաւարշի անունն է յիշւում: Եթէ յաջողուի ինձ Պոլիս անցնել կը դնամ:

Բաթումում կան բաւականաչափ հայ սպաներ:

*Սերբլի Ռոսում*


Աշխակը քեզ արդէն դրել է վերջին անցուդարձերի մասին. կրկնութիւններ անել չեմ ուզում, բայց համառօտ, այնուամենայնիւ, պիտի թուեմ կարեւորագոյն փաստերը, որոնք առեղծեցին հայ-վրացական մէջադէպը:

1. «Վիճելի» Լոռին, ինչպէս յայտնի է քեզ, Գերման-Վրացական զօրքերով գրաւուած էր մօտ եօթ ամիս առաջ, Թրքական արշաւի օրերին: Թիւրքական արշաւանքը դադար առնելուց եւ գերման զօրքերն այստեղից հեռանալուց յետոյ էլ վրացական զօրագունդը այնուամենայնիւ, մնաց Լոռում եւ ոչ մի ցանկութիւն չյայտնեց, մինչեւ վիճելի շրջանի ճակատագրի անօրինումը խաղաղ ճանապարհով, թողնել այդ շրջանը:

2. Դեկտեմբերի 4-ին Թիւրքերը վերջնականապէս դաւադրելով Ախալքալաքը, այդ մասին իմաց են տալիս վրաց կառավարութեան, որը Դեկտեմբերի 5-ին մացնում է այդտեղ իր զօրքերը: Դեկտեմբերի 5-ին յատուկ հեռագրով Հայաստանի կառավարութիւնն առաջարկում է Վրաստանի կառավարութեան՝ այդ շրջանը զօրք չմացնել, քանի նա «վիճելի» հողամասերից է համարւում, բայց ե. Գեղեչկորին (արտաքին գործոց նախարար) ի պատասխան այդ առաջարկի հեռագրում է Երեւան, որ վրացական զօրքը մտնում է Ախալքալաք, այնտեղ կարգ մացնելու, աւելացնելով միաժամանակ՝ որ Ախալքալաքը թէ՛ պատմական, թէ՛ քաղաքական եւ թէ՛ բարոյական տեսակէտից վիճելի համարուել չի կարող:


ARAM webaram.com

3· Երեւանում գտնուող վրացական դիւանագիտական ներկայացուցիչ Ս· Մդիւանին՝ Ախալքալաքի երեք չորրորդը բռնագրաւելուց յետոյ համաձայնութեան է գալիս Հայաստանի կառավարութեան հետ, որ վերջինս իր զօրքերով գրաւի ապառ մնացած մէկ չորրորդը (հարաւ արեւմտեան անկիւնը Բոգդանովկայի ուղղութեամբ) եւ, յանուն երկու աջակից ժողովրդների բարի հարեւանութեան, ապրեսխ քայլերի չանցնի մինչեւ կոնֆերանսի հրաւիրուելը: Երեւանում այդ համաձայնութիւնը տրւում է Մդիւանուն, բայց վրաց կառավարութիւնը, հաշուի չառնելով Հայաստանի այդքան առօրնացուցիչ եւ ծայր խաղաղասիրական փորձերը՝ իր զօրքերով հարկադրում է մինչեւ Դեկտեմբերի 8-9ը դադարկել անջատ այդ փոքրիկ անկիւնը:



ՎԱՀԱՆ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

4· Լոռի գտնուող վրաց զօրքերը տեղական ազգաբնակութեան նկատմամբ գործադրելիս են եղել ամենախստաւոյն, վրդովեցուցիչ ու վայրագ բռնութիւնները: Լուրերը տեսնելով, որ իրենց բոլոր թախանձանքները՝ վերջ տալ բռնութիւններին — ապարդիւն են անցնում — ըմբոստանում են վրաց զօրքերի դէմ եւ զէնքի ուժով հարկադրում նրանց դադարկել Ուդունլարը, ուր նրանք, ի միջի այլոց, ապանած են լինում և Ուզունլարի դիւղական կոմիսարին: Վրացական զօրագունդը ըմբոստացածներին խաղաղեցնելու համար թնդանօթներից և գնդացիրներից սկսում է ամբակոծել գիւղը· այդ տեղի է ունենում Դեկտ·ի 9-ին: Հայաստանի կառավարութիւնը յատուկ հեռագրով վրացական զօրքերի նման արարքների առիթով բողոք է ներկայացնում Վրաստանին եւ պահանջում՝ վերջ տալ վիճելի չրջանի հայ ազգաբնակութեան դիւղերի ամբակոծութեան եւ որեւէ տանելի կենցաղաձեւ մշակել մինչեւ կոնֆերանսի հրաւիրուելը:



ARAM webaram.com

*Ի պատասխան այդ հեռագրի յայտարարում է, որ վրացական զօրքերը հրեաններից կրակ են բացել միայն Դեկտեմբերի 13–ից սկսած, երբ մեր զօրքերի մասնակցութիւնը ժողովրդական ռազմական դործողութիւններին արդէն փաստ էր իրենց համար, մոռնալով, հաւանօրէն, որ հէնց իրենք Դեկտեմբերի 9–ից «Բորբա»ում պինուորական հաղորդագրութիւն ունեն տպագրած այն մասին, որ այդ թուից — 9–ից — արդէն ամբակոծում են հայկական դիւղերը:*



Հ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԹԻՖԼԻՍԻ ԴԵՍՊԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ
ԿԵԴՐՈՆԸ՝ Տ. ԲԷԳԶԱԴԵԱՆ

*5. Աբխազահեղութիւնից խուսափած լինելու համար Հայաստանի կառավարութիւնը վերջին ճիգերն է գործադրում եւ Դրոյի միջոցով Ղարաքիլիսայում Դեկտեմբեր 11–ին եւ 12–ին առաջարկում դէպի Թիֆլիս մեկնած Վրաստանի դիւանագիտական ներկայացուցիչ Մդիւանուն՝ զօրքերը դուրս տանել «վիճելի Լոռուց» եւ պահել այնտեղ մեկ վրացական վարչութիւնը բայց այս առաջարկն էլ, ըստ բախտաբար, նորէն մնում է անհետեւանք:*

*Ահա այս բոլոր փորձերից յետոյ տեսնելով, որ խաղաղ ճանապարհով ստեղծուած անհանդուրժելի վիճակը չի կարող վերանալ՝ Հայաստանի կառավարութիւնը կարգադրում է իր զօրքերին անցնել դեմարկացիոն գիծն ու դուրս քշել վիճելի հողամասերից վրացական զօրաղնդերը:*


ARAM webaram.com

Ըստ մեր ունեցած տեղեկութիւնների Դեկտ. 13-ից մինչեւ այսօր հետեւեալ անցքերն են տեղի ունեցել:

1. Ոչնչացուած են վրացական բոլոր զրահապատ գնացքները՝ թուով երեք հատ. մէկը պայթեցրել են հէնց իրենք վրացական զօրքերը, իսկ երկուսը՝ գերուել են:

2. Լոռու չրջանի գնդապետ Ցուլուկիձէի զօրապետնդն ամբողջովին չարդուած է:

3. Լոռու չրջանում մեր զօրքերը դանուում են շատ մօտ Թրամ գետին Շուլաւէրն էլ հայ զօրքերի ձեռքին է:

4. Ախալքալաքի ուղղութեամբ Վորոնցովկայում գտնուել Ցիցիանովի զօրապետնդը նոյնպէս չարդուած է, իսկ գեներալն իր ադյուտանտով գերուած է:

5. Ասւած է վերցուած՝ մօտ կէս միլիոն փամփուշտ, 1000 կոմպլեկտ հագուստեղէն, մօտ 10 գնդացիր, 6 թնդանօթ, 1400 սնար-հաղ (ռումբ), բաւականաթիւ ձիաններ, հրացաններ եւ այլ պատերազմական պոյք:

Ներկայումս խաղութիւններ են տեղի ունենում Թիֆլիսում: Գոցուած են «Կամկապկոյէ Սլօվօ», «Հորիզոն» եւ «Աչխատաւոր» թերթերը. վերջիններիս խմբագիրներին փնտռում են: Դաշնակցութեան «Ունիոն» ճաշարանը փակուել, իսկ ճաշարանում գտնուողներին աքսորել են Քութայիս: Ձերբակալել են՝ Գ. Խատիսեանին, Խունդկինին եւ այլ ականաւոր մարդկանց: Զինաթափել են հայ միլիցիոներին՝ թուով մօտ 300 հ.: Բորչալուի թուրքերից մօտ 100 հոգուց բաղկացած մի զօրապետնդ են բերել Թիֆլիս: Խուզարկութիւնները, ձերբակալութիւններն ու չուրչկալները սովորական երեւոյթ են դարձել:

Դաշնակցութեան տեղիս կենտրոնական կոմիտէն ներկայացել է Ն. Ռամիշվիլիին եւ առաջարկել՝ քանի որ իրենց լոյեալութեան նկատմամբ տարակուսանքներ կան կամ ձերբակալել իրենց կամ վերջ տալ անմիտ հետապնդումներին, որին ներքին գործոց նախարար Ն. Ռամիշվիլին պատասխանել է, որ նա Դաշնակցականների հետ եւ ոչ մի խոսակցութիւն ունենալ չի կարող եւ չի ցանկանում:

Թիֆլիսի քաղաքային դուման 40 ձայնով ընդդէմ 34-ի դէմ է արտայայտուել status quo ante bellum -ին. 40-ին մէջ են՝ Դաշնակցականները, Սոց.-յեղափոխականները, Կադետները եւ 15 Սոց.-դեմոկրատները:



ARAM webaram.com

Հայաստանում եւ «Վիճելի» շրջաններում, ըստ մեր ունեցած տեղեկութեանց, արամատրութիւնը բարձր է:

Թիֆլիսում բոլոր չզոցուած թերթերը — հայ, ռուս եւ վրացի — չարունակ փառաբանում են վրաց կառավարութիւնը:

Մոռացայ յիշատակել, որ ապաստող անկարգութիւնները կանխելու մտահոգութեամբ մեր կողմից դիմում է արուած՝ անգլիական, ֆրանսական եւ պարսկական դիւանագիտական ներկայացուցիչներին:

Բորչալուի թրքութեան մեծ մի փոքրիկ մասը, ըստ երեւոյթին վրացիների հետ մէկտեղ պիտի մասնակցի ռազմական գործողութիւններին. լուր ունենք, որ Հայաստանի կառավարութիւնը մերժել է օգտագործել նրանց կողմից արուած նոյնանման առաջարկը իրեն եւ խորհուրդ է տուել՝ մնալ չէզոք եւ չմիջակցել եւ ոչ մի կողմին:

Կոնֆերանսների մասին ոչինչ չեմ գրում, որովհետեւ Արշակն արդէն գրել է:

*Կարօտալի համբոյրներով*

ՎԱՀԱՆ (ՆԱԻՄԱՍԱՐԴԵԱՆ)



ARAM webaram.com

## 3. ՔԱՋԱԶՆՈՒՆԻ ՁԱՌԸ
## (ԽՕՍՈՒԱԾ ՆԻՒ ԵՈՐՔԻ ՄԻՔԻՆԿԻՆ ՄԷՋ)

*Դեկտ. 7–ը 1919 թ. Նիւ Եորքի* Hippodrome *–ում դումարուած հրապարակային ժողովին մէջ, Հայաստանի Հանրապետութեան առաջին նախարարապետ՝ Ց. Քաջազնունի խօսել է հետեւեալ ճառը.*

*«Բարի գալուստ մաղթեցիք դուք մեզ: Շնորհակալութի՛ւն: Ես եւս բարեւներ ունիմ բերած, ես եւս ողջոյնի խօսք ունիմ ասելու ձեզ: Հայաստանի Հանրապետութեան կողմից է, որ բարեւներ եմ բերել ձեզ, ամերիկահայ հայրենակիցնե՛ր:*

*Ալեւոր Մասիսի սրբազան գագաթից ու Արագածի ծաղկաւէտ լանջերից: Արցախի ու Սիւնիքի հսկայական լեռներից ու անզնդաթոր ձորերից: Մայր–Արաքսի կանաչ ափերից ու Սեւանի բիւրեղ ջրերից: Անիի ու Դուինի հոյակապ աւերակներից, Էջմիածնի Մայր–Տաճարից, Հաղբատի, Տաթեւի եւ Գանձասարի փառահեղ վանքերից՝ բարեւներ եմ բերել ձեզ, հայրենակիցնե՛ր:*

*Զգիտեմ, ի՛նչ էք զգում դուք, երբ լսում էք այս նուիրական անունները: Արդեօք ձեր ականջների համար էլ նրանք նոյնքան դիւթակա՞ն են, որքան իմ ականջին. արդեօք ձեր սրտերն էլ, ինչպէս իմը այս րոպէիս, լեցո՞ւմ են որդիական սիրոյ, կարօտի, երախտապիտութեան եւ հպարտութեան, ինչպէս նաեւ մեծ վշտի բուռն զգացմունքներով:*

*Ձեր հայրենի ու պապերի երկիրն է այն, հայրենակիցնե՛ր: Այնտեղ են նրանք ապրել ու աշխատել, արիւն–քրտինք թափել. այնտեղ են ուրախացել ու մանաւանդ տանջուել, այնտեղ են դեռ վերջին հանգիստը...:*



ARAM webaram.com

Այդ սրբազան երկիրը այսօր մերն է, հայրենակիցներ, — ձերը եւ իմը: Այսօր մենք ենք տէրը մեզանից խլուած ժառանգութեանը, մեր պապերի չինած տանը: Չկայ այլեւս Ցարը, չկայ Շահը, չկայ Սուլթանը: Հայաստանի հողի վրայ ծածանւում է արդէն հայկական դրօշակը, — լսո՞ւմ էք, հայկական դրօշակը: Այսօր Հայաստանի Պարլամենտը, ժողովրդի քուէով լիազօրուած, մշակում է հայ երկրի օրէնքները: Դատարանը գործում է, վճիռներ կայացնում եւ ի կատար ածում այն յանուն Հայաստանի Հանրապետութեան: Հայ զօրքը, հայ զօրավարների հրամանատարութեան տակ, արիւն պահապան է կանգնած հայրենիքի ազատութեանը:

Հայաստանի Պարլամենտի, Հայաստանի կառավարութեան ու Հայկ· զօրքի կողմից է, որ բարեւներ եմ բերել ձեզ, ամերիկեան հայրենակիցներ:

Երազե՞լ էիք երբ եւ իցէ, որ ձեզ, ձեր կեանքի ընթացքում, վիճակուել էր լսել այդ անունները — Հայկական Պարլամենտ, կառավարութիւն, զօրք — ոչ իբրեւ բաղձանք կամ հեռաւոր յոյս, այլ իբրեւ կատարուած փաստ, գոյութիւն ունեցող իրականութիւն:

Եւ ահաւասիկ ես կանգնած եմ ձեր առաջ իբրեւ կենդանի վկայ եւ մեծ ուրախ եմ տալիս ձեզ·—

— Գլուխներդ բա՛րձր պահեցէք, հայ մարդիկ, չակեցէք դարերով կորացած իրաններդ· Հայաստանը վերածնւում է, Հայկական ազատ պետութիւնը վերաչինւում է եւ այդ վերաչինման հիմնաքարը դրուած է արդէն հայ ցեղի պատմական օրրանի մէջ, Հայաստանի սրտում, Արարատեան դաշտի չուրջը:

Ձգո՞ւմ էք արդեօք այս իրողութեան ամբողջ վեհութիւնը:

Պատմութեան մեծ դէպքերը ունին մի առանձնայատկութիւն· նրանք չեն հասկացւում, չեն դնահատւում ըստ արժանիքի ժամանակակիցների կողմից: Պատմութիւնը մեծ է, լայն ու խոր, իսկ մարդկային միտքը՝ թոյլ ու սահմանափակ: Ժամանակ պէտք է անցնի, որ յանկարծակիի բերուած մտքերը կարողանան մարսել եւ իւրացրնել անցած եղելութիւնը: Անմիջական մանրամասնութիւնները՝ յաճախ տպող ու վրդովեցուցիչ եւ միշտ չնչին՝ ամբողջութիւնը ուրկելու համար՝ առօրեայ մանր-մունր փոխյարաբերութիւնները, անհատական, խմբային կամ կուսակցական համակրութիւնները կուրացնում են ժամանակակիցների կարճատես աչքերը, սխալ պատկերներ են տալիս կատարուած իրողութեան մեծութեան մասին:

Վախենում եմ, թէ մենք էլ դեռ ենք այդ անխուսափելի կարճատեսութեանը: Բայց կը գայ օրը — եւ հեռու չէ այն — երբ մեր


ARAM webaram.com

աչքերը պիտի բացուին եւ մենք կը տեսնենք, որ հայ ապրի պատմութեան մէջ՝ Բագրատունիներուն հարստութեան անկման օրից՝ տեղի չի ունեցել վերածնուելու մի ուրիշ փորձ, որը լինէր այնքան մեծ, այնքան զօրեղ ու այնքան բեղմնաւոր, որքան է այն ինչ կատարուեց մեր աչքերի առաջ, անցեալ 1918 Թուականին, Արարատեան դաշտում:

Սերունդը որին ես եմ պատկանում, ուրիշ կերպ էր պատկերացնում, ուրիշ ճամբով էր ծրագրում մեր պետական կեանքի վերականգնումը: Մեր աչքերը յառած էին դէպի հարաւ ու արեւմուտք — Կարին, Վան, Մուշ — ահա թէ ո՛րտեղից մտածում էինք մենք վերսկսել մեր պատմութիւնը, ահա թէ ո՛ւր կեդրոնացրել էինք մենք մեր բոլոր յոյսերը, մեր ամբողջ ուշադրութիւնը եւ մեր ամբողջ աշխատանքը: Այդպարտը մնում էր իրրեւ հեռաւոր ու անորոշ հնարաւորութիւն, — այնքան հեռաւոր ու այնքան անորոշ, որ երբեք չէր առնում անմիջական գործունէութեան չրջանակի մէջ:

Բայց պատմութիւնը ունի իր սեփական օրէնքները, իր սեփական ընթացքը: Մարդը չէ, որ պիտի դիմադրէ այդ ընթացքին, — դա անկարելի բան է: Մնում է միայն հաշուի առնել իրերի նոր դրութիւնը եւ հարթեցնել նոր ճամբաներ՝ նոյն նպատակին հասնելու համար:

Իրերի բերմամբ, Հայաստանը վերաչինւում է Երեւանից եւ ոչ Կարինից կամ Մուշից... Մի՞թէ սա պատճառ է, որ այդ վերաչինումը լինի մեզ համար պակաս սիրելի, պակաս ցանկալի, պակաս ոգեւորիչ:

Մենք պէտք է ունենանք ազատ ու անկախ պետութիւն մեր հայրենի հողի վրայ: Սա է մեր պահանջը, մեր նպատակը: Իսկ թէ ո՞րտեղից կը սկսուի պետութեան կազմակերպութիւնը — հիւսիսից թէ հարաւից, արեւելքից թէ արեւմուտքից — դա արդէն մանրամասնութիւն է, որ ոչ մի արժէք չունի պատմական դատի վեհութեան առաջ:

Ահռելի զոհաբերութիւնների, անասելի տանջանքների ու զրկանքների, արիւնահեղ կռիւների ու յամառ աշխատանքի գնով հաստատուել է այսօր Արարատեան դաշտի վրայ ու նրա չուրջը Հայաստանի Հանրապետութիւնը:

Սա է այն կորիզը, որը՝ պարպանալով ու ծաւալելով՝ պէտք է տայ մեզ Անկախ ու Միացեալ Հայաստանը:

Ամէն մի հայ մարդ պէտք է յստակ գիտակցի այս իրողութիւնը եւ ըստ այնմ վարուի:



ARAM webaram.com



Հ· Հ· ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱԶԳ· ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԱՄԵՐԻԿԱՑՈՒՄ
Ձախից աջ՝ նստած Ա· ԷՆՓԻԱՃԵԱՆ, ԶՕՐ· ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, Յ· ՓԱՋԱԶՆՈՒՆԻ,
ԶՕՐ· ԱՆԴՐԱՆԻԿ, ՓՐՕՖ· ՏԷՐ ՅԱԿՈԲԵԱՆ· ոտքի՝ Յ· ՓԻՐԱԼԵԱՆ, Մ· ՏԷՐ ՊՕՂՈՍԵԱՆ,
Ս· ՄԵԼԻՔԵԱՆ, ԱՐՄԷՆ ԳԱՐՕ, ՊՕՆԱՓԱՐԹԵԱՆ



ARAM webaram.com

Այսօր Հայաստանի Հանրապետութիւնն է, ուր մենք պէտք է որոնենք ու գտնենք մեր փրկութիւնը, մեր գարաւոր տենչերի իրագործումը: Այստեղ է, որ հայ ցեղը պէտք է կեդրոնացնէ այսօր իր ամբողջ ուշադրութիւնը, իր միտքն ու հոգին, իր ստեղծագործական բոլոր կորովը, — որովհետեւ այստեղից է որ նա պէտք է լայնացնէ սահմանները, վերաշինէ ամբողջական Հայաստանը:

Այս է պատմութեան հրամայողական թելադրանքը:

Հանրապետութեան թշնամին — Հայութեան թշնամի է:

Հայը, որ կը յանդգնի խէթ աչքով նայելու Հանրապետութեան վրայ — դաւաճան է Հայկական մեծ գաղափարի:

Ամբուել՝ անկեղծօրէն ու անվերապահօրէն՝ Հանրապետութեան չուրջը, այժ եւ կենսունակութիւն տալ նրան — ահա օրուան պահանջը, ահա ամէն հայի սրբազան պարտքը:

Հանրապետութիւնը կազմակերպման չրջանի մէջ է: Նա կարօտ է բարեացակամութեան եւ գործօն օգնութեան, մանաւանդ որ կազմակերպւում է այնպիսի դժուարին պայմանների մէջ, որի նմանը թերեւս չի տեսած պատմութիւնը:

Այդ օգնութիւնն է, որ մենք եկել ենք որոնելու հեռաւոր Ամերիկայում:

Սխալ չհասկանաք մեզ: Մենք անճար ու լալկան կանայք չենք, որ եկել են աղերսելու մի պատառ հաց մեր անօթութիւնը կուրելու, մի կտոր հին շոր մեր մերկութիւնը ծածկելու համար: Մուրացիկներ չենք մենք: Մենք մարտնչող ու չինարար ժողովուրդ ենք, միանգամայն վստահ մեր սեփական ուժերի վրայ: Մեր նպատակն է ապահովել արդէն դրաւած դիրքերը, ամրացնել մեր ազատութեան հիմքը եւ ոչ թէ վերածել Հայաստանը մի ընդարձակ անկելանոցի օտար բարեգործների խնամատարութեան տակ: Եթէ մեր միակ հոգսը լինէր մեր ողորմելի կեանքերի փրկութիւնը, մենք չէինք անի այն, ինչ առինք այս հինգ տարուայ ընթացքում եւ այն, ինչ արել ենք սրանից չատ առաջ, ամբողջ տարիներ:

Ո՛չ, բարեգործութիւն չէ՛ մեր որոնածը:

Ժամանակաւոր օգնութիւն այս ճգնաժամի օրերում, բարեկամական աջակցութիւն մեր սեփական ոյժերը գործի դնելու համար, — ահա թէ ի՛նչ ենք խնդրում մենք:

Եւ խնդրում ենք առանց քաշուելու, ճակատներս բաց, որովհետեւ մեր բռնած դիրքը, մեր կատարած դերը համաչխարհային պատերազմի մէջ մեզ իրաւունք է տալիս ուղղել այդպիսի խնդիր դաշնակից մեծ պետութիւններին, քաղաքակիրթ ու ազատասէր ժողո-



ARAM webaram.com

վըրդին: Խնդրում ենք առանց քաշուելու նաեւ այն պատճառով, որ վստահ ենք մեր ոյժերի վրայ, պիտենք, որ ամենակարճ ժամանակամիջոցում պիտի կարողանանք վերադարձնել մեզ արած օգնութիւնը:

Այս է մեր առաքելութեան իսկական բնոյթը:

Միացեալ Նահանգների կառավարութիւնն է, որին եկել ենք դիմելու եւ որից սպասում ենք մեզ հարկաւոր օգնութիւնը:

Բայց սա պատճառ չէ, որ դուք, ամերիկահայեր, մնաք անմաս հայրենիքի վերաշինման գործի մէջ: Ինչ ընթացք ու ելք էլ առանալու լինի մեր առաքելութիւնը, ձեր վրայ մնում է մի խոշոր պարտականութիւն:

Համոզուած լինելով, որ այն զեղեցիկ խօսքերը, որոնցով պատուեցիք դուք մեզ, խօսքեր չեն միայն, այլ ձեր մտքերի ու զգացումների իսկական արտայայտութիւնը. վստահ լինելով որ այսօրուայ խօսքերը վաղը գործի պիտի վերածուին եւ դուք լիօրէն կը կատարէք ձեր վրայ ընկած պարտականութիւնը, վերջացնում եմ ասելիքս, լի հաւատով եւ յոյսերով:


ARAM webaram.com

## 3. ՓԻՐԱԼԵԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

*Մտրեւ տալիս ենք այն ուղերձը, որ Հայ ժողովրդական կուսակցութեան յայտնի անդամներից եւ Հայաստանի Հանրապետութեան քաղաքական պատուիրակութեան դիւանատնտեսական մասնագէտ-կցորդը Պրն. Յ. Փիրալեան արաւ, ի պատիւ Հայկական երկու առաքելութիւններին, Դեկտ. 16, 1919 թուին, Հ. Յ. Դաշնակցութեան կեդր. կոմիտէին կողմից Բոստոնում սարքուած ճաշկերոյթի ընթացքում:*

*Հ. Յ. Դաշնակցութեան ծագումը կատարուել է իմ օրերում: Ես նրա զարգացման սկզբնական շրջանում, Մոսկուայի Պէտրովսկի ճեմարանում, միշտ հետեւել եմ այդ կուսակցութեան հիմնադիրներին, յայտնի յեղափոխական-գործիչներ՝ Ռ. Միքայէլեան, Ս. Զաւարեան եւ Բոստոմ — որոնք նոյնպէս 30—35 տարի առաջ ուսանում էին այնտեղ: Նրանք բոլորն էլ օժտուած էին վերին աստիճանի բարոյական սկզբունքներով, ու տարուած էին հայրենասիրական գաղափարներով: Իմ ամենամօտիկ բարեկամն էր Ս. Զաւարեանը մինչեւ իրեն վերջին օրերը: Նրանք այնտեղ պատրաստուած էին տալ իրենց բազմաչարչար հայրենիքի բարօրութեան համար այն ամէնը, ինչ որ ամենաթանկագինն է մարդու համար՝ իրենց կեանքը: Ես պիտեցի այդ, սիրեցի ու պաշտեցի նրանց հայրենասիրութիւնը:*

*Այժմ Հ. Յ. Դաշնակցութիւնն իմ հոգում ամենամօտիկ կուսակցութիւնն է, եւ ես ինձ երջանիկ եմ համարում, որ 35 տարիներից յետոյ, շրջելով Եւրոպա ու Ամերիկա տեսնում եմ ամբակուռ կազմակերպական չարքերը այդ կուսակցութեան, որոնք իրենց պրօպագանդայի միջոցով վառ են պահում հասարակական խաւերի մէջ*



ARAM webaram.com

հայրենասիրական հոգին ու Հայաստանի Անկախութեան գաղափարը:

Իմ սիրելի ընկերների սրբազան գաղափարները տուին զործնական հետեւանքներ, եւ ես ինձ աւելի երջանիկ պիտի զգայի, եթէ կարողանայի դրկել նրանց եւ չնորհաւորել զիրենք իրենց գաղափարների յաղթութեան պատուների համար:

Միայն մէկ խնդրում ես նրանցից տարբերւում էի եւ միշտ վիճաբանութեան էի բռնւում նրանց հետ: Ես խոնարհւում էի նրանց ազգասիրական զգացումների առջեւ, բայց ես համաձայն չէի Հ. Յ. Դաշնակցութեան ծրագրի ընկերվարական բաժնի հետ:

Ես ապացուցանում էի նրանց հետ, որ դարերի հալածանքը հայ ժողովրդին սոխել է սիրել սեփականութիւնը ու բարեկեցիկ վիճակը (անհեռական բարօրութիւն), որը ֆիզիքական ուժերի բացակայութեան դէպքում, նոյնպէս կարող է ծառայել որպէս միջոց ինքնապաշտպանուելու առաճիկ սրից: Շատ հաւանական է, որ հայ ժողովրդի այդ յատկութեանը մենք պարտական ենք այսօր այն իրողութիւնը, որ մենք կարողացանք ներկայիս պաշտպանել Հայաստանի մէկ մասը: Մեր ժողովրդի 2500 տարիների պատմական անցեալը փառաւոր մի ապացոյց է իմ տեսածներին. մինչդեռ ուրիշ մանր ազգեր տասնեակներով եկել են ու չքացել երկրի երեսից, կուլ գնալով ուրիշ ազգերին:

Ես կարծում եմ, որ Հ. Յ. Դաշնակցութիւն կուսակցութեան հիմնադիրները լաւ դիտէին այդ, բայց եւ այնպէս իրենց ծրագրի մէջ մացրին ընկերվարական գաղափարները, որոնք բաց արին իրենց համար լայն դռներ դէպի առաջաւոր ընդդիմադիր (opposition) երկիրները քաղաքակրթուած Եւրոպայի: Նրանք ամրացնելով իրենց ամրիոնը Եւրոպայի մէջ, ստեղծեցին բարելաւ պայմաններ պրոպագանդայի համար եւ այդ կերպով պատրաստեցին հասարակական կարծիքը Հայաստանի մէջ իրաւական կարգեր մացնելու նկատմամբ: Այս դէպքում նրանից կարելի է սպասել խորհրդային դիւանագէտներ:

Ներկայիս այդ նպատակին հասել ենք: Քաղաքակրթուած աշխարհը պատրաստւում է ամրացնել երիտասարդ Ազատ Հայաստանը. իսկ Հ. Յ. Դաշնակցութիւնից այժմ սպասւում է նոր ու դժուարին աշխատանք, յարմարեցնելով իրենց գործունէութիւնը ներկայ քաղաքական պայմաններին:

Հայաստանը գտնւում է անհեռական վերաշինութեան նախօրեակին: Իւրաքանչիւր ժողովուրդ ստեղծելով անհեռական կեանք՝ մացնում է գրանից առաջացած ձեւերի մէջ իր արտասովոր՝ իրեն միայն յատուկ ստեղծագործութիւնը:



ARAM webaram.com

Այդ կողմից մեր երկիրը ներկայացնում է մի tabula rasa ամէն ինչ քանդուած է, ամբողջ բնակիչները դառել են պրոլետարներ, իսկ կապիտալը դեռ չէ կատարել իր պատմական դերը:

Անհրաժեշտ է լայնուած ստեղծագործական աշխատանք ամբողջ ազգաբնակչութեան ու նրա մտաւոր դասին. եւ որ գլխաւորն է, հետեւել՝ գործնական քաղաքականութեան:

Առաջին կանգնած է Անմահ Զաւարեանի փայլուն պատկերը. մի մարդ՝ որն ունէր գիտական պաշար եւ առողջ տնտեսագէտի մտածումներ...:

Ես կարծում եմ, որ Զաւարեանները դեռ չեն մահացել: Դեռ կանգուն է Հ. Յ. Դաշնակցութիւնն իր Զաւարեաններով:

Կեցցե՛ն Զաւարեանները:



ARAM webaram.com

# Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ ՅՕԴՈՒԱԾԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Բ. ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՒ

*«Վերածնունդ»ով կ'ողջունեմ Հայաստանի պետութեան վերածնունդի Բ. տարեդարձը:*

*Հայ ազգին երկար դարերէ ի վեր երազածն էր որ իրականացած է այժմ: Առաւօտեան Փիւնիկին պէս կը վերածնի ան իր աճիւններէն: 872 տարիներ անցած էին որ Հայաստանի մեր սեփական ազգային պետութիւնը վերջացած էր Բագրատունիների անկումովը: Եւ ի՛նչ տարիներ...: Մոսկալի հարստահարութիւններէ, գաղթականութեան եւ տարագրութեան, արիւնի եւ կոտորածներէ երկար դարերէն վերջ ահա՛ հապճեպ այժմ ան է որ կը կանգնի Հայը իր հայրենի սեփական աշխարհին: Ո՞վ կարող է պատշաճ բառեր գտնել ճշտութեամբ բացատրելու համար այն անճառելի ուրախութիւնը, այն ոգեւորութեան զգացումները, որով կը թրթռայ ամեն հայ սիրտ այս կատարուած եղելութեան վրայ, որ մեր ազգային պատմութեան մէջ նոր դարաշրջան մը կը բանայ: Հայ ազգի կրած այնչա՛փ երկարատեւ դարաւոր տառապանքներէն յետոյ, ո՞ր հայ սիրտ կարող է այժմ ուժգին խանդաղատանքով մը չզուրգուրալ Հայաստանի նորածին Հանրապետութեան վրայ եւ չօգնել անոր զօրացման եւ զարգացման:*

*1918 Մայիս 28ը յաւերժական յիշատակի արժանի օր մ'է Հայաստանի պատմութեան մէջ: Այդ ամիսը Կովկասեան նորածին 3 Հանրապետութիւնների անկախաբար գոյութիւնը հռչակող թուական մը դարձաւ: 1918 Մայիս 26ին Վրաստան պինք անկախ տէրութիւն մը յայտարարեց եւ Գերմանիայէն պաշտպանութիւն խնդրեց: Հետեւեալ օր Ադրպէյճան նոյնը ըրաւ եւ դիմեց Թիւրքիայի աջակցութեան: 28ին, Հայաստանի Հանրապետական վարչութիւնը ելաւ բոլորովին անկախ հռչակեց ինքզինքը եւ չնայելով իր անօգնական, ա-*



ARAM webaram.com

նօթի եւ թշնամիներէ չրջապատուելով մէն մենակ վիճակին, իր յոյսը իրեն վրայ դրած, ոչի ի բուն մաքառեցաւ ամեն դժուարութիւններու դէմ, անվհատ կռուեցաւ դիւցազնօրէն եւ վերջապէս իր ուժով ու խելքով յաջողեցաւ կանգնել Հայաստանի անկախ պետութիւն մը, որ աներեւակայելի դժուարութիւններու ու թշուառութիւններու մէջ կարողացած է պարպանալ հեպհեպէ, այնպէս որ Եւրոպայի Դաշնակից պետութիւնները ստիպուած եղան ճանչնալ Հայաստանի Հանրապետութիւնը ապրելու կարող, կենսունակ մարմին մ'է, այս տարի Յունուար 20ին պաշտօնապէս ճանչցուած հռչակելին անոր կառավարութիւնը եւ ընդունելին Հայաստանի պետութիւնն ալ կանոնաւոր պետութիւնների չարքին մէջ:

Կովկասաբնակ մեր այդ քոչ հայրենակիցներուն յաջողութիւնը մէկ անգամ եւս կ'ապացուցանէ, թէ ազգերը արտաքին ոյժերու ազդեցութեան արժանանալու համար պէտք է ներքին ոյժ կորսնցնեն եւ թէ ազգի մը անկախութիւնը չարուխր այլ կ'առնուի...:

Այս առիթով կ'ուզեմ յիշատակել նաեւ մեր ազատութեան ռահվիրաներէն հանդուցեալ Գրիգոր Արծրունիի քաղաքական մէկ մարգարէութիւնը:

Թուրքիայի դէմ հայերի յեղափոխական գործունէութեանը հակառակողներ կ'առարկէին այն ժամանակ, թէ մենք այդ կերպով պարզապէս գործիք կը դառնանք Ռուսիայի քաղաքականութեան, որ կը ցանկայ դրաւել իր սահմանակից Թրքահայաստանի հողերը, էրզրումը, Վանը, Մուշը եւայլն: Երբ այս մասին դիտողութիւն ըրի իրեն մի օր, նա պատասխանեց մօտաւորապէս հետեւեալը.

Ռուսիան Սլաւական փոքրիկ ազգերն ալ, նոյնիսկ յունական եկեղեցիներ, կլլելու ծրագիր կրնայ ունենալ. բայց յոյները, սերպերը, դիտցած են այնպէս վարուիլ, որ օգտուին Ռուսիայի այդ ախորժակէն եւ իրենց ազատութեան համար անոր աջակցութիւնը վայելեր են: Մենք ալ պէտք է ջանանք օգտուիլ այդ հանգամանքէն: Եթէ Թիւրք կառավարութիւնը մեր յեղափոխական չարժումներուն հետեւանքով ստիպուեցաւ Եւրոպայի ճնշման տակ ինքնավարութիւն տալ Հայաստանի եւ կամ դէթ բարենորոգումներ մտցունել այնտեղ, մենք մեր նպատակին հասած կը լինենք: Իսկ եթէ անկարելի բան է, որ Թիւրքը բարեկարգութիւն մտցնէ Հայաստանի մէջ եւ մեր չարժումներուն հետեւանքը այն լինի, որ մեր բաղձանքի հակառակ, Ռուսիան դրաւէ այդ տեղերը, այդ ալ յուսահատական չէ: Հայ ազգը փոխանակ Թիւրք կառավարութեան տակ անդադար հարստահարուելու, պաղթել ստիպուելու, կոտորուելու եւ հետզհետէ նուազելով ո-



ARAM webaram.com

չընչանալու, Թիւրքահայաստանի մէկ մասը Կովկասի հետ միանալով կը զօրացնէ Կովկասի հայութիւնը, հայերը աւելի բարեկեցիկ վիճակ մը կ'ունենան, աւելի հոծ բազմութիւն մը, այժ մը կը կազմեն Ռուսահայաստանի մէջ. Պարսկահայերի եւ Հնդկահայերի չարժումներին հետեւանքով Ռուսերի ձեռքն անցած Երեւանի մէջ այժմ հայերը աւելի կը չատնան եւ կը զօրանան քան նախկին տիրապետող Պարսիկները եւ այստեղի Հայերը նիւթապէս ու մտաւորապէս չատ աւելի զարգացած են քան Պարսիկ տէրութեան ձեռքին տակ տակաւին մնացած տեղերի հայերը, որոնք ապահով ու հանգիստ ապրելու միջոցներ ունենալու համար, կը ստիպուին հետզհետէ գաղթել Կովկաս: Միւս կողմէ Ռուսիան չափէն աւելի ընդարձակուած լինելով եւ միեւնոյն ժամանակ այլապան տարրերէ բազկացած իր բազմամիլիոն ժողովուրդները զոհացնելով կատարելու անզօր վիճակի մէջ գտնուելով, իրեն մէջ այժմ ծնունդ առած ընկերական յեղափոխական չարժումները քայքայման պիտի ենթարկեն ռուս կայսրութիւնը եւ եթէ մենք հայերս ալ մտաւորապէս պատրաստուած ու բազմաթիւ եւ զօրաւոր դարձած լինինք, այդ ժամանակ պիտի կըրնանք մեր ազատութիւնը ձեռք բերել իր սահմաններուն մէջ:

Ահա Գ. Արծրունիի մարզարէութիւնը կատարուած է այժմ:

Հիմա որ հարիւրաւոր տարիներէ ի վեր մեզ ճղակոտոր ընող սոսկալի պերութենէ եւ չատ մը անյաջող չանքերէ յետոյ ունեցանք վերջապէս հայ պետութիւն մը Հայաստանի մէջ, պէտք է որ ամէն կերպով այժ տանք անոր եւ պաշտպանենք: Կիլիկիայի մէջ Ռուբինեաններուն հաստատած հայ թագաւորութեան տկարանալուն եւ կործանուելուն պատճառ դարձան ոչ միայն արտաքին թշնամիներուն արշաւանքները, այլ եւ մեր ազգային ու եկեղեցական ներքին կռիւներն ու սոսկալի պատահարները: Ահա 545 տարի է որ կ'ողբանք ու կուլանք մեր Կիլիկիայի թագաւորութեան կործանման վրայ ալ, այդ երկար տարիներուն ընթացքին մէջ թիւրք բռնապետութիւնը հոն ալ մեզ թշուառացնելու, տկարացնելու եւ ոչնչացնելու իր ճիւաղային քաղաքականութիւնը գործադրած լինելով...:

Բոլոր սրտով դուրդուրանք ուրեմն, Հայե՛ր, Հայաստանի մեր նորածին Հանրապետութեան վրայ, առաւօրէն նուիրենք անոր մեր ոյժերը եւ փաստօրէն ցոյց տանք աշխարհի թէ Հայը արդարեւ կարող է եւ արժանի ազգ մ'է եղեր իր սեփական տէրութիւնն եւ անկախութիւն ունենալու:

**Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ**

«ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» Փարիզ, 1920, Մայիս 28



ARAM webaram.com

# ՀԱՅ ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ՈՒՂԵՐՁԸ
# Հ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՒ

*Հայե՛ր,*

*Մանուկ Հայաստանի երկրորդ տարեդարձն է այսօր։*

*Սրանից երկու տարի առաջ, չրջապատուած ներքին եւ արտաքին թշնամիներով, սովով եւ հիւանդութիւններով, անասելի ծանր երկունքով ծնուեց մեր անկախութիւնը։ Մեր այլասերուած տարրերը կարծում էին, որ մանուկ Հայաստանը չպիտի կարողանար ապրել, բայց նա ապրեց, զօրացաւ եւ աճեց։*

*Կան այժմ էլ մեր մէջ անարդ մարդիկ, որոնք միացած մեր դարաւոր թշնամիների հետ աշխատում են մեռցնել մեր մանուկ պետութիւնը։*

*Մանուկ Հայաստանը ի ցաւ դրանց զօրանում է օրէցօր։ Նա պիտի զօրանայ, ապրի, որովհետեւ մեր անկախութիւնը մեր ազգի լաւագոյն զաւակների ուժերի, աշխատանքների արդար պտուղն է՝ սկսած այն օրից, երբ Թուրք—Թաթարական բարբարոս ցեղը մտել է եւ ապականել մեր երկիրը։*

*Մենք ունինք այժմ մեր սեփական հայրենիքը, մեր հողը։ Մենք ենք մեր վրայի տէրը։ Մենք դնում ենք մեր օրէնքները։ Մենք ենք կառավարողը։ Եւ այն անարդ տարրական լուծը, որ խեղդում էր մեր կեղուն, մեր կուլտուրան եւ, որն ամենավատն է, մեր ոգին, այժմ թօթափուած է։ Օտարն այլեւս անկարող է մեռցնել, ոչնչացնել հայութիւնը։*

*Հայե՛ր,*

*Դեռ կան վտանգներ, որ մեզ սպառնում են։ Դեռ մեր դրութիւնը շատ ծանր է դրսից ու ներսից, դեռ մեր ամբողջ երկրի տէրը*



ARAM webaram.com

չենք: Մեծ կամք, մեծ եռանդ եւ մեծ աշխատանք են մեզ պէտք, մինչեւ որ կարողանանք հաստատել մեր ազատ եւ անկախ հայրենիքը, ապահով սահմաններով, ու սկսինք այնչափ յաւուրկ հային՝ կուլտուրական, չինարարական ու ստեղծագործական մեծ աշխատանք:

Իսկ դա կարելի կը լինի միայն այն ժամանակ, երբ մենք վըճռաբար, հաստատ, առ միշտ եւ ամուր կը փարենք մեր սեփական տանը — մեր հայրենիքին:

Կը սիրենք իրր մեր անձը ու ամէն կերպ կը պաշտպանենք մեր անկախութիւնն ու ազատութիւնը եւ կը ստեղծենք մեր երկրում ինքնակալ պետական կեանք:

Հայե՛ր,

Մեր մէջ է մեր յաղթութիւնը, մեր մէջն է մեր փրկութիւնը եւ մեր անկախութեան տարեդարձի այս օրը միանանք, ուրեմն, միահամուռ ուժերով մեր անկախութիւնը եւ հայրենիքը պաշտպանելու ամէնքի դէմ:

Մենք չե՛նք կարող նորից ստրուկներ դառնալ:

Կեցցէ՛ մեր մանուկ ազատութիւնը:

Կեցցէ՛ Անկախ, Միացեալ Հայաստանը:

Կեցցէ՛ Հայաստանի դեմոկրատիկ Հանրապետութիւնը:

Կորչի՛ն մեր անկախութեան եւ ազատութեան բոլոր թշնամիները:

ՀԱՅ ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ARAM webaram.com

## ՄԻՋ-ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԿՈՉԸ

*ՀԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴ,*

*Օգոստոսի 10ի պայմանագրով (Սեւրի դաշնագիրը) Հաշտարար կոնֆերանսը եւ պարտուած Թուրքիան ճանաչեցին մեր իրաւունքը ստեղծելու Ազատ, Անկախ ու Միացեալ Հայաստանը: Մեր հայրենիքի մի մասը, որին տիրացել է Թուրքիայի ապստամբ փաշաներից մէկը՝ Մուսթաֆա Քեմալը՝ այդ պայմանագրի իմաստով պիտի պարպուի Թուրք ուժերից եւ յանձնուի Հայաստանի Հանրապետութեան: Պայմանագրի այդ պահանջը իրագործելու փոխարէն՝ Մուսթաֆա Քեմալը արշաւանք է կազմակերպել դէպի մեր պետութեան սահմանները եւ նպատակ ունի իր բռնութեամբ զրաւած դաւառները կցել նոր հայկական հողեր եւս: Ոչ միայն այդ: Նա նպատակ ունի ջախջախել նաեւ հայ ժողովուրդի դիմադրական ուժը, մի անգամ էլ մեզ արիւնաքամ անել, որպէսզի հնարաւորութիւն ունենայ երկար պահել իր բռնաւոր ճիրաններում մեր հայրենական ժառանգութիւնը: Քեմալը կամենում է անհնարին դարձնել դաշինքի ճանապարհները հիւծուող մեր ժողովրդի վերադարձը հայրենիք: Նա նպատակ ունի մեր ժողովրդի տարագիր զաւակներին ընդմիշտ զրկել հայրենիքի քաղցրութիւնից ու հարազատ պետութեան հնարաւորութիւնից:*

*Փորձութեան օրեր են, հայ ժողովուրդ: Աւտաքին թշնամու արշաւանքին մենք պիտի պատասխանենք կուռ դիմադրութեամբ: Անպատկառ թշնամուն մենք պէտք է դուրս չպրտենք մեր երկրի սահմաններից: Նա այնպիսի հարուած պիտի ստանայ մեր դիմեալ բազկից, որ խոնարհի Օգոստ. 10ի պայմանագրի առջեւ, ձեռք քաշէ ոչ*



ARAM webaram.com

*միայն մեր այսօրուայ սահմաններէն, այլ եւ մաքրէ նախկին Թրքահայաստանը։*

*Արտաքին թշնամին թող իմանայ, հա՛յ ժողովուրդ, որ Անկախութեան եւ Հայրենիքի նուաճման ընդդէմ տարաձայնութիւն չկայ հայ քաղաքական կուսակցութիւններէ մէջեւ։ ՄԵՆՔ, ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ՏԱՐԲԵՐ ՀՈՍԱՆՔՆԵՐՍ, ԱՅՍՕՐ ՎՍՏԱՀՈՒԹԵԱՄԲ ԵՆՔ ՎԵՐԱԲԵՐԻՈՒՄ ՄԵՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՅՆ ԲՈԼՈՐ ՋԱՆՔԵՐԻՆ, ՈՐՈՆՔ ՆՊԱՏԱԿ ՈՒՆԵՆ ՅԱՂԹԵԼ ԵՒ ԴՈՒՐՍ ՎԱՆԵԼ ԹՇՆԱՄՈՒՆ ՄԵՐ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ։ Մենք աչք չունենք ղրած ուրիշի անփականութեան վրայ։ Մենք կամենում ենք պահպանել եւ տիրանալ մեր հայրենի անփականութեան։ ԱՅՍ ԽՆԴՐՈՒՄ ՄԵՆՔ ՀԱՄԵՐԱՇԽ ԵՆՔ ՄԵՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԵՏ։ Քեզ էլ, հայ ժողովուրդ, հրաւիրում ենք միակամ լինել նրա հետ, նեցուկ կանգնել նրա ձեռնարկած միջոցներին եւ արտաքին թշնամու դիմաց մոռանալ ամէն տարաձայնութիւն ու պառակտում։*

*Արտաքին թշնամուց, Թիւրքական փաշաներից ու բեկերից, դու բարիք չպիտի սպասես, հայ ժողովուրդ։ Ամէն բարիք ու երջանկութիւն դու պիտի նուաճես քո լարուած աշխատանքով ու եռանդով։ Ցոյց տուր քո աշխարհաչէն ձիրքերը, քո դիմադրական կորովը այսօր պատերազմի դաշտում, մարդ խաղաղ աշխատանքի մէջ։*

*Հանրապետական դրօշակի տակ դէպի՛ ազատագրա, դէպի՛ յաղթութիւն։*

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՐԵՒԱՆԻ
ԿԵՆՏՐ. ԿՈՄԻՏԷ
ՀԱՅ ԺՈՂ. ԿՈՒՍ. ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿԵՆՏՐ. ԿՈՄԻՏԷ
ՀԱՅ ՌԱՄԿ. ԿՈՒՍ. ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿԵՆՏՐ. ԿՈՄԻՏԷ
ՀԱՅԱՍՏ. ՍՈՑ. ԴԵՄ. ԲԱՆ. ԿՈՒՍԱԿՑ.
ԿԵՆՏՐ. ԿՈՄԻՏԷ
ՍՈՑ. ՅԵՂ. ԿՈՒՍԱԿՑ. ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿԵՆՏՐ. ԿՈՄԻՏԷ
Ս. Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑ. ԵՐԵՒԱՆԻ
ԿԵՆՏՐ. ԿՈՄԻՏԷ


ARAM webaram.com

## ԱՌԻՆՔՆՈՂ ԽԱՅԹԸ

*«Սովիէթ կառավարութեան Հայաստանի ուղղած վերջնագրին ամենէն յատկանշական պայմանն է՝ Ղարաբաղը եւ Զանգեզուրը փոխանակել Սեւրի դաշնագրով հայ պետութեան կցուած երեք արեւմըտեան նահանգներուն՝ Էրզրումի, Վանի եւ Պիթլիսի հետ:*

*Հանրապետութեան կառավարութիւնը երկու էական պատճառներ ունէր այս տեսակ առաջարկ մը մերժելու:*

*Առաջինը, դարերու յամառ, արիւնոտ աշխատանքով եւ անթիւ զոհողութիւններով կազմուած եւ դաշնակից տէրութեանց հանդիսաւոր կնիքովը վաւերացուած նոր, անկախ Հայաստանէն բուռ մը հողի եւ թշնամիին չի պիջելու դերագոյն պարտականութիւնն է որեւէ հայ կառավարութեան որ չի բաղձար իր իսկ ակարութեամբ քանդել հայկական անկախութիւնը եւ ստուերի մը վերածել հայ հայրենիքը:*

*Իսկ երկրորդ էական պատճառը այն ստոյգ համոզումն է որ, ԹՈՒՐՔ ՈՃԲԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՀԵՏ ԴԱՇՆԱԿՑԱԾ ՍՈՎԻԷԹ ՌՈՒՍԻԱՆ ՀԱՑԱՍՏԱՆԸ ԶՊԻՏԻ ԱԶԱՏԷ ԲՆԱՋՆՋՈՒՄԷ ԵՒ ԹՐՔԱԿԱՆ ՑԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԷ, ԵԹԷ ՄԻՆՉԵՒ ԱՆՂԱՄ հայ կառավարութիւնը, հայրենիքը պաշտպանելու հոգեկան կամ ֆիզիքական ակարութեան մէջ ընդունի՝ Ղարաբաղն ու Զանգեզուրը փոխանակել Էրզրումի, Վանի եւ Պիթլիսի հետ:*

*Պահ մը սակայն ընդունինք՝ թէ այս ճակատագրական օրերուն, բոլշեւիկ—Թրքական միացեալ հորդաներուն պինուորական յաղթութիւնները առեղծեցին այնպիսի կացութիւն մը, որ հայ կառավարութիւնը ստիպեց յաղթականներուն պայմանները ընդունիլ: Կրնա՞յ Հայաստան ապահով ըլլալ, թէ երբ պինքը կը բանտեն ներկայ Հանրապետութեան նեղ սահմաններուն մէջ, իրեն արգիլելով ոեւէ հաղոր-*



ARAM webaram.com

*դակցութիւն արեւմտեան պետութեանց հետ, պիտի ապրի մինչեւ իսկ թշուառ ու ապազուն կեանք մը: Ռուս Սովետական կառավարութիւնը իր արիւնաբրու թուրք դաշնակիցներուն հոգալին ամբողջութիւնը ա–պահովելէ յետոյ, երբ օր մը ինքզինքը գտնէ աւելի զօրաւոր վիճակի մը մէջ, մէկ հարուածով պիտի կորզէ նաեւ այդ փոքր Հայաստանը՝ զայն կցելով ռուսական պետութեան: Նոյնիսկ, եթէ Հայաստան վար դնէ իր զէնքերը եւ պարտուի, Ղարաբաղն ու Զանգեզուրը ստանալու դէղեցիկ խոստումէն, ամենէն հաւանական բանը որ պիտի պատահի, այն է, որ թուրքերը, պոլշեւիկներու լռիկ հաւանութեամբն ու դաւա–ճանութեամբը, քիչ առնէն պիտի բնաջնջեն հայութիւնը այդ փոքր եւ առանձին մնացած Հայաստանին մէջ ու հայկական հարցը պիտի լուծուի, այնպէս ինչպէս ծրագրած էին Թալէաթն ու Էնվերը:*

*Պոլշեւիկներու ներկայ փորձող առաջարկը չի տարբերիր Ցար–կերտի առաջարկէն, որ, ի փոխարէն կրօնափոխութեան, հայոց կը խոստանար մարմնական ամէն հանգիստ, հաճոյք եւ կեանքի ապահո–վութիւն»:*

(«ՊԱՀԱՒԱԿ», թիւ 115–781, 2 Նոյեմբեր 1920,
օրկան վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան, Պոսթըն)

ARAM webaram.com

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿՈՉԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

«Սոցիալիստական շարժման նորմալ
զարգացումը պայմանաւորուած է տուեալ
երկրի ազատ ու աւկախ դրութեամբ»:
ԱԻԳՈՒՍՏ ԲԵԲԵԼ

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ.*

*Այսօր հայ երկիրը բոլորում է ազատ ու անկախ գոյութեան երկրորդ տարին:*

*Այսօր հայ ժողովուրդը տօնում է իր քաղաքական վերածնութեան եւ պետական ինքնորոշման երկամեայ նուիրական տարեդարձը:*

*Այսօր Հայ Ռամկավար Հանրապետութիւնը թեւակոխում է իր մանուկ կեանքի երկրորդ տարին:*

*Եւ այսօր ողջ հայութիւնը ջերմ փափաքով սպասում է իր մեծացեալ եւ անկախ հայրենիքի զաղափարի եւ իրաւական ճանաչումը եւ փաստական իրականացումը:*

*Ո՛չ մի ժողովուրդ չի տուել իր գոյամարտի եւ ազատամարտի ձիգ ճամբին այնքան զոհեր, որքան հայ ժողովուրդը: Մասայական սրածութեան, հալածանքների ու բռնութիւնների, աւերումների ու կոթծանումների, թալանի ու յափշտակումների աղեխարշ պատմութիւնը չի ճանաչում եւ չի արձանագրել երկրորդ օրինակը այն երկրի եւ այն մարդկային հատուածի, որ դէթ հեռաւորապէս կարելի լինի նմանեցնել, համեմատել հայ ժողովրդի եւ Հայաստանի հետ, մանաւանդ Թրքահայութեան հետ:*



ARAM webaram.com

Հէնց այդ պատճառով ո՛չ մի մանր ու ճնշուած ժողովրդի ազգային հարցը չի առաջել այն աստիճան վիրաւոր պրոբլեմի բնոյթ, ինչպէս հայկական հարցն է: Ոչ մի ազգային դատ այնքան չի խըլուել դիւանագիտական կաթսայում, այնքան չի վատնակել համակրանքն ու բարոյական աջակցութիւնը միջազգային դեմոկրատիայի, որքան ամէնից շատ արնատուած, ամէնից շատ տառապած ու հիւծուած միշտ ու հանապազ տոկացող հայ ժողովրդի դերարդար դատն է:

Հայաստանի քաղաքացինե՛ր,

Մեծ յեղափոխականների քաղաքական իմաստութիւնը ասել է միշտ, թէ գլխաւորը ազատութիւն ձեռք բերելը չէ այլ ձեռք բերած ազատութիւնը պահպանելն է:

Հայ ժողովուրդը անհամար զոհերի եւ բազմատեսակ զոհաբերութիւնների գնով ձեռք է բերել իր ազատութիւնն ու անկախութիւնը:

Եւրոպան՝ միջազգային երկրների բարձր ատեանը ճանաչել եւ ընդունել է հայ ժողովուրդի անկապտելի իրաւունքները իր պատմական աւերխորհրդում, իր Ազգաց Անկախ եւ Միացեալ Հայրենիքում:

Համաշխարհային պրոլետարիատի սոցիալիստական Ինտերնացիոնալը իր բարձր ներկայացուցչութեան բերանով — Բերնի կոնֆերանցիայում ջերմապէն ողջունել է հայ ժողովրդի վերջնական ազատագրումը աւլիմանական եւ ցարական բռնակալութեան դարաւոր լծից եւ բուռն համակրանքով ընդունել է հայ դեմոկրատիայի պետական ինքնորոշումը — Անկախ եւ Միացեալ Հայաստանի իրականացման գաղափարը:

Այժմ քեզ է մնում, հա՛յ ժողովուրդ, եւ քեզանից է կախուած քո ազատութեան եւ անկախութեան պահպանութիւնը: Օտարները ընդունել եւ ճանաչել են քո իրաւունքները, այժմ դո՛ւ ևս, որ պիտի գնահատես ու պաշտպանես քո այնքան թանգ գնով նուաճած իրաւունքները:

Բանուորնե՛ր, գիւղացինե՛ր եւ պինուորնե՛ր,

Դո՛ւք էք հայ ժողովրդի կորիզը, հայ երկրի աղը, հայ պետութեան յոյսն ու ապաւէնը:

Դո՛ւք էք ձեր բազկի հարուածներով ժողովուրդը փրկել եւ ազատութիւն նուաճել· դո՛ւք էք ձեր քրտնաջան վաստակով ժողովուրդը կերակրում եւ երկիր վերաշինում: Ձե՛զ է պատկանում անկախ հայրենիքը իր իրաւունքներով եւ պարտականութիւններով:


ARAM webaram.com

Զգո՛յշ եղէք գառնապղեսա գայլերի խաբուսիկ շոյանքներից եւ սիրահարումներից:

Օրինակ վերցրէք ձեր հարեւաններից — վրացի բանուորներից, գիւղացիներից եւ դինուորներից եւ նրանց նման ցոյց տուէք թշնամիներին, որ ձեր մէջ եւս չափազանց վառ է ազգային արժանապատուութեան զգացմունքը եւ քաղաքացիական պարտաճանաչութեան գիտակցութիւնը, որպէսզի դուք չմոլորուէք գառնապղեսա գայլերի խաբուսիկ խոստումներից:

Թող բոնկուի ձեր մէջ սրբազան յուզմունքի բոցավառ կրակը եւ այս խորհրդաւոր պահուն, մեր հայրենիքի անկախութեան երկրորդ տարեդարձի օրը, սուրբ ուխտի երդումը տուէք, որ բոլորդ, որպէս մի մարդ, պատրաստ էք ոտքի ելնելու, որպէս քաջարի մարտիկներ, եւ պաշտպանելու մեր վտանգուած հայրենիքի սահմանները բոլոր թշնամիների դէմ ո՛ր կողմից եւ ի՛նչ անուան տակ ուզում են թող լինեն նրանք:

Ցիշեցէ՛ք մեր ուսուցչի իմաստուն խօսքերը, որ ասում է մի-այն ա՛յն ժամանակ կարող էք վայելել դեմոկրատիզմի եւ սոցիալիզմի բարիքները, երբ ազատ ու անկախ լինէք ձեր հայրենիքում:

Ցիշեցէ՛ք այդ փրկարար նշանաբանը եւ խրոխտ ու համարձակ, գիտակից ու պատրաստակամ կոչեցէք միշտ.—

Թո՛ղ կորչեն անկախ եւ միացեալ Հայաստանի բոլոր թշնամիները:

Թո՛ղ կորչեն հայրենիքի ներքին դաւաճանները եւ հակապետական տարրերը:

Թո՛ղ կորչի արտաքին թշնամիների նուաճողական իմպերիալիզմը:

Կեցցէ՛ անկախ եւ միացեալ Հայաստանը:

Կեցցէ՛ հայ դեմոկրատիկ հանրապետութիւնը:

Կեցցէ՛ սոցիալ—դեմոկրատիկ ազատ Հայաստանը:

Կեցցէ՛ միջազգային գիտական սոցիալիզմը:

Հ. Ս. Դ. Բ. Կ. ԵՐԵՒԱՆԻ ԿՈՄԻՏԷ



ARAM webaram.com

# ԱԿԱԴ. Ա. ԹԱՄԱՆԵԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետութեան կառավարութեանը առաջադրուած պետական խոշոր նշանակութիւն ունեցող խնդիրներէ շարքում բաւականին ուշագրաւ տեղ է բռնում շինարարութիւնը:

Մեծ էր Հայաստանի դառնութեան բաժակը եւ անխնայ նրա ճակատագիրը: Այս համաչխարհային պատերազմի ընթացքում նրա տերիտորիայի մեծագոյն մասը ենթարկուեց աւերածութեան: Այժմ հասել է ժամը անցնելու աւերուած դիւղերի եւ քաղաքների ճեւակերպուած վերաշինութեան մեծ գործին:

Արեւմտեան Եւրոպայում Ֆրանսիայում եւ Բէլգիայում, վերջին պատերազմի աւերուած վայրերի վերաշինութեան գործին պետական խնդիրների շարքում ամենանշանաւոր տեղերից մէկն է տրուած: Այդ գործի համար հրաւիրած են գեղարուեստի եւ գիտութեան յայտնի ներկայացուցիչները եւ կազմուած են յատուկ մինիստրութիւններ, որոնք այդ գործի ուսումնասիրութեանն էին անցել դեռ պատերազմի վերջանալուց չատ առաջ եւ ունին մի չարք աշխատութիւններ, որ ներկայումս հրատարակուած են եւ մասնագիտական գրականութեան համար մեծ արժէք են ներկայացնում:

Ներկայումս վերածնուող Հայաստանի աստիճանաբար զարգացող պետական կեանքի հետ միասին բացի աւերուածի վերաշինութեան գործից, ծագում է նաեւ լայն եւ ընդարձակ շինարարութեան անհրաժեշտութիւնը թէ՛ պետական հիմնարկութիւնների եւ թէ՛ հասարակական եւ մասնաւոր կարիքների համար:

Հայաստանի տերիտորիան ցայժմ կազմել է ծայրամաս, ծայրագաւառ, այդ իսկ պատճառով էլ խուլ գաւառին յատուկ բոլոր բա-


ARAM webaram.com

ցաւական զծերն է կրում իր վրայ: Քաղաքները եւ գիւղերը չափազանց յետ են մնացել ժամանակակից կեանքի պահանջներից եւ զուրկ են քաղաքակիրթ այն նուազագոյն բարեկարգութիւններից, որոնցով օժտուած են Եւրոպական ժամանակակից գիւղերն ու քաղաքները: Այժմ այդ քաղաքները եւ գիւղերը նոր պետական կեանքի կենտրոն են հանդիսացել եւ իրենց ներկայ վիճակում մնալ անկարող են. նոքա պիտի հիմնովին վերաշինուին եւ յարմարեցուին ժամանակակից քաղաքակրթութեան և տեխնիկայի պահանջներին, որպէսզի նոցա ապագայ զարգացումը կատարուի կանոնաւոր եւ անարգել կերպով ու պետութիւնը, որ ստիպուած է այժմ մեծամեծ ծախքեր կատարել իր ընթացիկ կարիքներին բաւարարելու համար հարկադրուած չլինի քանդելու եւ նորից վերաշինելու նոցա:



ԱԿԱԴ. Ա. ԹԱՄԱՆԵԱՆ

Այդ բոլոր հարկերը հանդէս են բերում պետական յատուկ հիմնարկութեան անհրաժեշտութիւնը. մի հիմնարկութեան, որը ձեռնհաս եւ տեղեակ լինի ճարտարապետութեանը, իր տրամադրութեան (որը ձեռնհաս եւ տեղեակ) տակ ունենայ արուեստի գանազան մասերում մասնագէտ ուժեր եւ որի գլխավորը լինի հմուտ, փորձառու եւ հեղինակաւոր ճարտարապետ:

Այդ հիմնարկութիւնը պիտի ընդունակ լինի ընդգրկելու եւ բաւարարելու երկրի շինարարական պահանջներին եւ, իրրեւ պետական աւելի կոմպետենտ օրգան, իր ձեռնէտութիւնը հանդէս բերէ:

Վերոյիշեալ նպատակով հիմնւում է Գլխաւոր Ճարտարապետի պաշտօնը: Գլխաւոր Ճարտարապետը կազմակերպում է իր վարչութիւնը եւ գլխավարում է շինարարական հետեւեալ աշխատանքները.

Ա. Աւերուած քաղաքների եւ գիւղերի վերաշինութիւն եւ տեխնիկական օգնութիւն ազգաբնակչութեանը:

Վերաշինել բառը պէտք չէ հասկնալ քանդուած տների նախկին ձեւերի վերականգնումի մտքով, պահպանելով ասիական աղքատիկ նիստ ու կացին առանձնայատուկ պակասութիւնները: Վերաշինութիւնը միաժամանակ պիտի քաղաքակրթական սկզբունքներ ներմուծի մեր ժողովրդի բնակարանը մանաւանդ նրա չքաւոր դասի,



ARAM webaram.com

ազդելով նրա բնակիչների նիստ ու կացի, մատղաշ սերունդի կրթութեան վրայ եւ պատուաստի քաղաքակիրթ կենցաղավարութեան պահանջները: Հարկաւոր է բաւականին լուրջ դնահատել լաւ հիմունքների վրայ դրուած վերաչինութեան գործի մեծ նշանակութիւնը: Անհրաժեշտ է նոյնպէս, որ վերաչինուած բնակարանները, բաւարարելով առողջապահութեան եւ քաղաքակրթութեան պահանջներին, պահեն ազգային ճարտարապետութեան բնոյթը:

Օտար տիպի չէնքերի անխմաստ իւրացումը, որ իր մասսայով կարող է հայ ժողովրդի ստեղծագործութեան հրաշալիքները կլանել ցանկալի չէ վերածնուած Հայաստանի համար, ինչպէս նաեւ հին չէնքերի պակասութիւնների պահպանումը: Անհրաժեշտ է զարկ տալ հայ ժողովրդի ստեղծագործական ոգուն, տալով նմանօրինակ հայկական ճարտարապետութեան ամենատիպիկական նմուշներից: Նըպատակայարմար վերաչինութիւնը պահանջում է.

1. Հետազօտել վերաչինուելիք քաղաքներն ու գիւղերը ուսումնասիրելով բնակարանների տիպերը:

2. Վերաչինուող եւ նոր կառուցուող քաղաքների եւ գիւղերի համար մշակել յատակագծեր, որ պարտադիր են եւրոպական գիւղերի եւ քաղաքների — այդինների —, կուլտուրական պահանջներին բաւարարելու համար:

3. Բնակարանների, ընտեսական չէնքերի, վարչական եւ հասարակական հիմնարկութիւնների, ինչպէս օրինակ. մատուռների, դպրոցների, բաղնիքների, դարբնոցների եւ ուրիշ շատ տեսակի չէնքերի համար օրինակելի տիպեր մշակել ազգային ոճի համեմատ:

4. Կազմակերպել տեխնիկական հսկողութիւն շինութիւնների վրայ, որպէսզի աշխատանքները կատարուեն համաձայն մշակուած նախագծերի, եւ տալ ժողովրդին տեխնիկական համապատասխան ցուցումներ:

5. Հետազօտել Հայաստանում գտնուած շինարարական նիւթերի ծննդավայրերը եւ նոցա մշակումը կազմակերպել:

6. Գիւղացիութեան աշխատանքները թեթեւացնելու համար հիմնել վերաչինուող գիւղերում շինարարական նիւթերի եւ գործիքների պահեստներ:

Բ. Քաղաքների Բարեկարգութիւնը:

Հայաստանի քաղաքները մեծ մասամբ պատմական եւ գեղարուեստական ահագին նշանակութիւն ունին: Հին բազմադարեան շինութիւնները առանձին գեղեցկութիւն եւ բովանդակութիւն են տալիս նոցա: Շատ դրաւիչ է նաեւ նոցա չրջապատող բնութիւնը, սա-



ARAM webaram.com

կայն չնորհիւ ղեկավարող նախագծերի եւ շինութիւնների վրայ լինելիք պետական համապատասխան հսկողութեան բացակայութեան, նոքա ստացել են ոչեղ ձեւ, քաոսային դասաւորութիւն, նեղուածքութիւն եւ անխուսեմ զարգացում: Անհրաժեշտ տեխնիկական շինութիւնների բացակայութիւնը նպաստում է հակառողջապահական դրութեանը եւ վատ է անդրադառնում բնակչութեան առողջութեան վրայ: Հարկաւոր է այժմ եւեթ վճռողական միջոցներ ձեռնարկել նոցա կարգաւորելու համար, քանի դեռ այս վեցամեայ արհեստական դադարումից յետոյ չէ վերսկսուել նոցա յետագայ զարգացումը: Այդ նպատակի համար հարկաւոր է քաղաքները նորից ձեւակերպել եւ նոցա ապագայ զարգացումը մշակուած նախագծերով ուղղել: Քաղաքները բարեկարգ վիճակի եւ առողջապահական պայմանների մէջ դնելու նպատակով հարկաւոր է կանոնաւորել գոյութիւն ունեցող փողոցները, ստեղծել հրապարակներ, զբօսավայրեր, ծառուղիներ, մանկական հրապարակներ խաղերի համար, պակասող սանիտարական կառուցումներ շինել (ջրմուղիներ, կոյուղիներ, եւ այլն), տեղափոխութեան միջոցներ եւ հասարակական նշանակութիւն ունեցող շէնքեր կառուցել (թատրոններ, դրադարաններ, շուկաներ, դպրոցներ, հիւանդանոցներ եւայլն) դեղարուեստականի միացումը պատմականի հետ եւ ժամանակակից բարեկարգումով բարձրացնել մեր քաղաքների նշանակութիւնը, դասելով նոցա Եւրոպայի ամենահետաքրքրական քաղաքների շարքում:

Քաղաքները բարեկարգելու համար հարկաւոր է.

1. Հետազօտել քաղաքները եւ արտագծել նոցա յատակագիծը:

2. Մշակել բոլոր քաղաքների համար նոր նախագծեր, որ հնարաւոր լինի անհրաժեշտ բարեկարգութիւնները մտցնել եւ ուղղութիւն տալ նրանց յետագայ զարգացմանը:

3. Անցկացնել ջրմուղիներ, կոյուղիներ, լուսաւորութիւն եւ տեղափոխութեան միջոցներ:

4. Շինել քաղաքների հասարակական շէնքերը եւ մշակել քաղաքային բնակարանների տիպեր:

Գ. Պետական հիմնարկութիւնների համար կարեւոր շէնքերի կառուցումը:

Անխուսափելի է խոշոր շէնքերի կառուցումը պետական հիմնարկութիւնների կարիքների համար ինչպէս օրինակ պարլամենտի, մինիստրութիւնների, համալսարանի, տեխնիկական եւ դեղարուեստական դպրոցների, հիւանդանոցների, թատրոնների, երկաթուղա-



ARAM webaram.com

յին կայարանների համար, կամուրջների, երկաթուղու նաւահանգըստի եւայլն եւայլն: Բոլոր յիշեալ շէնքերը իրենց յատուկ նպատակներին բաւարարելուց զատ նաեւ պիտի բաւարարեն ճարտարապետութեան եւ գեղարուեստի տարրական պահանջներին: Ցիշատակուած շէնքերը կ'իլխեն քաղաքի շրջապատի վրայ եւ բարերար ազդեցութիւն կ'ունենան շինարարութեան վրայ: Գեղարուեստօրէն կառուցուած շէնքերը գեղեցկացնելով՝ քաղաքները կ'ազդեն նաեւ ժողովրդի ճաշակի վրայ. «քաղաքների ճարտարապետութիւնը ազդեր համար թանգարան է»:

Պետական նպատակների համար կառուցուող շէնքերի վրայ առանձին ուշադրութիւն պիտի դարձնել եւ գործի հրաւիրել առեղծագործելու ընդունակ ականաւոր ոյժերին:

Դ. Շինարարական օրէնսդրութիւն եւ հասարակական ու մասնաւոր շինարարութեան ղեկավարութիւն:

Հասարակական եւ մասնաւոր շինարարութիւնը պիտի կարգաւորուի համապատասխան օրէնքներով ժողովրդի ապահովութիւնը եւ շահերը պաշտպանելու համար: Հարկաւոր է տների բարձրութիւնների համար որոշ չափ եւ կանոն սահմանել, որպէսզի նոքա փողոցները չմթագնեն, պիտի սահմանել բնակարանների եւ նոցա տարածութիւնների համար նուազագոյն չափեր եւ մշակել նոցա լուսաւորելու պայմանները համաձայն առողջապահութեան պահանջների: Բնակիչներին հրդեհի եւ այլ դժբախտութիւնների վտանգից զերծ պահելու համար անհրաժեշտ է առանձին օրինական պահանջների ենթարկել տաքացնելու գործիքները, մուտքերը եւ ելքերը, սանդուխքները, բակերի տարածութիւնները եւայլն:

Անհրաժեշտ է մշակել նախագծեր

1. Շինարարութեան օրէնքների
2. Շինարարական կանոնադրութեան
3. Պարտադիր կանոնների

Նաեւ հիմնել տեխնիկական հսկիչ մարմիններ Հանրապետութեան բոլոր շրջաններում:

Ե. Հայաստանում գտնուող շինարարական նիւթերի հետազոտութիւնը եւ քննութիւնը:

Մեծ շինութիւնների ժամանակ շինարարական նիւթերի յաջող ընտրութիւնը մեծ նշանակութիւն ունի: Հայաստանի համար ներկայումս առանձին նշանակութիւն եւ կարեւորութիւն է ստանում տեղական նիւթերի մշակումը եւ օգտագործումը, որոնցով Հայաստանը թէեւ հարուստ է, բայց հնարաւոր չէ լիուլի չափով օգտուել



ARAM webaram.com

նրանցից չնորհիւ այն բանի, որ բացակայում են ճշդուած եւ մանրամասն տեղեկութիւններ նոցա քանակի, որակի եւ ծննդավայրերի մասին: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է Հայաստանի չինարարական նիւթերի կանոնաւոր հետազօտութիւնը եւ ուսումնասիրութիւնը կազմակերպել եւ ձեռնարկել նոցա մշակման գործը: Շինարարական նիւթերի որակից եւ եղած պաշարից է կախուած նաեւ երկրի չինարարական գործունէութիւնը: Ենթադրուած է նիւթերի հետախուզումն կատարել Երեւանի, Լճմիածնի, Սուրմալուի, Նոր-Բայազէդի, Ալեքսանդրապոլի, Նախիջեւանի, Զանգեզուրի եւ Շարուր-Դարալագեազի գաւառներում ու Ղարսի, Օլթիի, Կաղզուանի եւ Արդահանի շրջաններում: Այդ վայրերից վերցրած նիւթերի նմուշները պիտի քննուեն քիմիական եւ տեխնիկական լաբօրատօրիաներում:

Զ. Հայաստանի հին ճարտարապետութեան յուշարձանների տեխնիկական հսկողութիւնը:

Հայաստանի ճարտարապետական յուշարձանների համաշխարհային նշանակութիւնը ահագին է եւ յայտնի: Եւրոպայի նոյնիսկ առաջատար երկիրներն պրպտում են նոցա ուսումնասիրութեամբ: Մեր յուշարձանները շատ եւ շատ դիտական աշխատանքների համար աղբիւր են հանդիսանում եւ համաշխարհային պատմութեան բազում խնդիրների լուծմանը նպաստում: Մեզ հայերիս համար, այդ յուշարձանները աւելի եւս արժէքաւոր են, որովհետեւ նոքա, ըստ դիտական Լինչի արտայայտութեանը, վկայում են մեր ազգի ընդունակութիւնը դէպի բարձր կուլտուրա: Սակայն մեր գեղարուեստի սքանչելի յուշարձանները դնահատելի են ոչ միայն այն տեսակէտից, որ նոքա պատմական նշանակութիւն ունին, այլ եւ այն, որ նոքա հիմք կը ծառայեն մեր ապագայ առեղծագործութեան եւ նիւթերի անսպառ աղբիւր կը հանդիսանան: Մեր պատմական գեղարուեստի հարստութիւնը պարտաւորեցնում է մեզ մեծամեծ ջանքեր թափելու նրան անձեռնմխելի պահելու: Մենք մեր պարտքը հանդէպ կուլտուրական աշխարհի եւ մեր ազգի ապագայ սերունդների կատարած չենք լինի, եթէ ամենամեծ չափով հոգածութիւն եւ խնամատար վերաբերմունք ցոյց չտանք այդ յուշարձանների վերաբերմամբ: Հատարակ հսկողութիւնից զատ անհրաժեշտ է մշտնջենաւոր եւ լուրջ հսկողութիւն սահմանել մեր յուշարձանների վրայ եւ միջոցներ ձեռնարկել պահպանելու մեր յուշարձանները ոչ միայն փչացումից ու քայքայումից այլ եւ փլումից:

Գլխաւոր ճարտարապետի ուրուագծած ծրագրի համաձայն



ARAM webaram.com

կենտրոնական վարչութիւնը կազմուում է հետեւեալ բաժիններից.

1. Ճարտարապետական բաժին, որին նպատակն է կազմել շէնքերի նախագծեր, նախահաշիւներ, կատարողական գծագրեր, հաշուետուութիւններ, իրականացնել նախագծուած շէնքերը և տեխնիկական հսկողութիւնը:

2. Երկրաչափական բաժին, որին նպատակն է քաղաքների, գիւղերի եւ շինարարութեան ենթակայ վայրերի յատակագծերը կազմել: Այդ աշխատանքները անհրաժեշտ են գիւղերի եւ քաղաքների համար նոր յատակագծեր կազմելու ու պանապան շէնքեր նախագծելու համար: Նոր կազմած նախագծերով եւս երկրաչափական բաժինը բնականից է գծում նախագծուած փողոցները եւ շէնքերը:

3. Շինարարական նիւթեր հետազօտելու եւ ուսումնասիրելու բաժին:

4. Բաժին ճարտարապետական յուշարձանների հսկողութեան:

5. Դիւան:

6. Նիւթերի պահեստ կամ մթերանոց, ընթացիկ շինարարական աշխատանքների համար պահանջուող անհրաժեշտ նիւթերի եւ պործիքների:

Բացի կենտրոնական վարչութիւնից հարկաւոր է բաժանմունքներ ունենալ Հայաստանի ներկայ մեծ քաղաքներում՝ Ալեքսանդրապոլում եւ Ղարսում, որտեղ ենթադրւում է ունենալ շինարարական ընթացիկ աշխատանքներ: Այդ քաղաքներում առանձին բաժանմունքներ պահելը աւելի նպատակայարմար է եւ նիւթապէս ձեռնտու, քան չարունակ կենտրոնական վարչութիւնից պաշտօնեաներ ուղարկելը, որ կապուած է օրապահիկների եւ ճանապարհածախքերի հետ:

Պանապան տեխնիկական մասնագիտական հարցեր մշակելու եւ շինարարութեան վերաբերեալ նախագծեր քննելու համար Գլխաւոր ճարտարապետը կազմում է իր նախագահութեամբ տեխնիկական խորհուրդ, որը կազմում է տեխնիկայի եւ դիսուրեան մէջ ամենապատեղ ներկայացուցիչները:

Համաձայն ուրուագծուած ծրագրի, Գլխաւոր ճարտարապետի վարչութիւնը հաստատուել է սոյն 1920 թուի Մայիսի 8ին, որից յետոյ եւ անմիջապէս անցել է կազմակերպչական գործին, որ դեռ տակաւին չէ վերջացած հարկաւոր մասնագէտներ Հայաստանում չլինելու պատճառով: Արտասահմանից էլ դժուարութեամբ են գալիս:


ARAM webaram.com

Վարչութիւնը միջոցներ է ձեռնարկել կազմակերպչական գործը չուտով աւարտելու։

Գլխաւոր ճարտարապետի վարչութիւնը իր ներկայ անձնական կազմով անցել է արդէն իր ծրագրի մի քանի անյետաձգելի կէտերի իրագործմանը եւ այդ ուղղութեամբ կատարում են հետեւեալ աշխատանքները։

1. Մթերում են անհրաժեշտ շինարարական նիւթերը։

2. կազմում են տարրական գպրոցների, հիւանդանոցների, համալիսական բաղնիքների եւ այլ հասարակութեանց նախագծերը։

3. Հիմնական վերանորոգութեանց են ենթարկում Զօրական գլխաւոր հիւանդանոցը եւ Երեւանի քաղաքային հիւանդանոցը։

4. կառուցում է մանրէաբանական ինստիտուտը։

5. կատարում են անհրաժեշտ նորոգութիւնները եւ կարկատանները պետական հիմնարկութիւնների շէնքերում։

6. Հնադիտական չրջաններում (Անիի չրջանում) ձեռնարկուել են յուշարձանների պահպանման, ցուցադրման, հաւաքման եւ այլ աշխատանքների։

7. կազմակերպել գաճ այրելու գործարանը։

8. Նախնական աշխատանքներ են կատարում թատրոնական եւ ժողովրդական տների համար համապատասխան հողամասեր գտնելու եւայլն։

9. Վարում են ընթացիկ գործերը։

10. Աւարտում է պետական բարձր հիմնարկութեանց համար կառուցուող շէնքը։

11. Նախագծում է ձեւակերպել Երեւան, Ալեքսանդրապոլ,



ARAM webaram.com

Վաղարշապատ եւ Աշտարակ քաղաքները ըստ որում Երեւանի եւ Վաղարշապատի ճեւակերպումն արդէն ճեռնարկուած է։

12· Գեղարուեստական աշխատանքներ նկարել·
ա· Նամակադրոշմներ
բ· Պետական դիմանիշ
գ· Պետական կնիք
դ· Պետական փոխառութեան աբլիգացիաներ
ե· Դրամանիշներ
զ· Կարմիր խաչի նշաններ
է· Զանազան դեկորատիւ աշխատանքներ։

13· Մշակումն կաւէ խողովակների եւ կղմինտրի։

Գլխաւոր ճարտարապետ՝
ԱԿԱԴ· Ա· ԹԱՄԱՆԵԱՆ

12 Օգոստոս, 1920 թ·
Երեւան


ARAM webaram.com

## ԱԶՐԲԷՅՋԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԻՑ ՅԵՏՈՑ

*Յեղաշրջման առաջին օրերը ոչ մի արտասովոր փոփոխութիւն չի նկատուել երկրում: Յայտարարուել է որ ամբողջ զօրքը իր կազմով և սպաներով մնում է իբրեւ Ազրբէյջանի կարմիր բանակ· բոլոր հիմնարկութիւններում պահուել է նախկին պաշտօնեայութիւնը: Նախկին մինիստրները եւ մուսաւաթի պարագլուխները ինչպէս Ռասուլզէկով, Խան Խոյսկի, Շաքի Բէկ, Ռուստամբէկով վէքիլով եւ ուրիշները փախել են երկրից: Մնացածները կարմիր ժապաւէններ հագնելով իբրեւ բոլշեւիկ շարունակել են իրենց պաշտօնն ու զործը· ատիկանութիւնը թէ՛ քաղաքներում եւ թէ գաւառում մնացել է անփոփոխ: Բացում խանութները եւ զուարճատեղիները եղել են բաց:*

*Սակայն ռուսական կարմիր բանակի գալով, երկրի թէ՛ ներքին եւ թէ արտաքին պատկերը աստիճանաբար սկսում է փոխուել· ձերբակալութիւնների թիւը սկսում է չատանալ: Բանտարկւում են 1· օտար, այսպէս կոչուած թշնամի, պետութեանց ներկայացուցիչները եւ քաղաքացիները, 2· Անցեալում բոլշեւիկների դէմ իրենց զործունէութեամբ աչքի ընկնող անձնաւորութիւնները, 3· Վարչական եւ պետական պաշտօնեաները եւ զործակալները: Առանձին եռանդով ձերբակալւում են Մուսաւաթիստները եւ դաշնակցականները: Գլխովին հաշւում են ընդամէնը 400 հոգի նրանց մէջ մի քանի հայեր:*

*Ռուսների գալով Ազրբէյջանի զօրքերի մէջ սկսւում է մի տեսակ զտումը: Նրանց չարքերը սկսում են նօսրանալ: Սկսւում է կատաճելի վերաբերմունք դէպի զօրքը: Երկիւղ են կրում որ նա կարող է միանալ ամէն մի հակայեղափոխական չարժման· սկսում են նրանց հետզհետէ զինաթափ անել կամ լեհական Զրօնա ուղար-*



ARAM webaram.com

կել: Ազրբէյջանը, մանաւորապէս Բագուն լեցուած է հետզհետէ ռուսական կամքի գործերով:

Սկսած է մի շարք հինութիւնների, քնակարանների և մի շարք ապրանքների բռնագրաւումէ: Շուկայից չքանում են բոլոր տեսակի ապրանքները. խանութները գոցուրկուած են, մեռնում է երկրի առևտրաարհեստական կեանքը եւ սկսւում է անտանելի թշուառութիւն: Մեծ քանակութիւնով իրենց հնութիւնները — կարպետներ, կտաւ, աֆտոմօբիլ, պրելու կարելու մեքենաներ, կոորեղէն, հագուստեղէն, կօշկեղէն, չաքար, բրինձ, չամիչ, ձիւղն ինչպէս նաեւ նաւթ եւ նաւթային արտադրութիւններից — բռնագրաւում են կամ գնում են և ծովով կամ երկաթուղով ուղարկում են Ռուսաստան: Երկիրը սկսում է դատարկուել: Թանկութիւնը օր ըստ օրէ մեծանում է: Ցաւուկ դեկրետով ապահովացած են նաւթային ամբողջ արդիւնաբերութիւնը, բանկերը, մի շարք գործարաններ եւ բոլոր արհեստանոցները: Բոլոր նշաններից երեւում է որ նաւթի արդիւնաբերութիւնը առհասարակ ոչ միայն չի աւելացել այլ եւ պակասել է: Մի դեկրետով ամբողջ հողը յանձնուում է պետութեան: «Կոմունիստ» պաշտօնական օրգանը իր յօդուածներով հրաւիրում է պետութեանը խլել կալուածատէրերից ոչ միայն հողը, այլ եւ նրանց ամբողջ ինչքը, ֆիզիքապէս ոչնչացնել կալուածատէրը դասակարգը, սկսել անխնայ քաղաքական կռիւ: Սակայն հակառակ դրա համար ուղարկուած արհեստաւորներին եւս պետութիւնը չի չարժուել: Նա վատահութիւն չունի դէպի նոր իշխանութիւնը, համարելով այն ոչ թէ մահմեդական այլ վերապրած Ռուսաստանի իշխանութիւնը:

Թուրքերէն լեզուն համարեա դուրս է վտարուել բոլոր հիմնարկութիւններից, բացմաթիւ ռուս մեծամասնականները գրաւել են կարեւոր պաշտօնները: Զինուորական ամբողջ ոյժը, կազակից ծովի ամբողջ նաւատորմիղը ռուսների ձեռքին է: Բանուորների, գինուորների եւ նաւաստիների խորհուրդի ընտրութիւններին չեն մասնակցել պետականները եւ Խորհրդի 600 անդամներից միայն 147 թուրքեր են, մեծագոյն մասը ռուսներ են, կան նաեւ հայեր, հրեաներ եւ այլն:

Այդպիսով պարզում է հետզհետէ, որ չնայած Ազրբէյջանի անկախ Հանրապետութիւն ճանաչելուն, իշխում է երկրում Սովետա-ռուսական տիրապետութիւն: Սկսում է դժգոհութիւն բնակիչների և բուրժուազիայի շարքերում եւ անցնում է պետութեան: Նոյնիսկ թուրք եւ ռուս կոմունիստների մէջ սկսում է մի խուլ հակամարտութիւն. ռուսները ցանկանում են կարելւոյն չափ սահմանա-

ARAM webaram.com

*վակել Ազրբէյջանի անկախութիւնը: Իսկ թուրքերը՝ ամրապնդել այդ անկախութիւնը: Եւ այդ հակամարտութիւնը ծաւալւում է կոմունիաների բոլոր խաւերում: Իրերի այդ դրութիւնը առաջ է բերում Մայիսի 26-ին Գանձակում եւ չրջանում բացարձակ եւ արիւնահեղ ապստամբութիւն, որը յետոյ տարածւում է Ղարաբաղ ու Մուղան: Ապստամբութեան գլուխն է անցնում Նուբի Փաչան: Այդպիսով սովետական իշխանութեան քարոզած դասակարգային կռուի փոխարէն սկսւում է ռուս—թաթարական ազգային արիւնահեղ կռիւ:*

Հայաստանի Տեղեկատու Բաժնի վարիչ՝ Մ. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ

Գործավար՝ Ց. ՋՐԲԱՇԵԱՆ



ARAM webaram.com

# ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԲՌՈՒՑԻԿԸ Հ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԷՄ

## ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԷՔ

*Ընկեր բանուորներ, գիւղացիներ եւ զինուորներ,*

*Ստախօսութեան եւ սուր պրովոկացիայի միջա սուրբ Դաշնակցական կառավարութիւնը Մայիսի 1-ին հարուածներ սանձալով Հայաստանի բանուորներից, գիւղացիներից եւ զինուորներից, որոնց ողջ համակրանքը Ադրբէյջանի յեղափոխական պրոլետարիատի եւ գիւղացիների հետ էր, այսօր ամէն կերպ աշխատում է պղտորել բանուորների եւ զինուորների յեղափոխական գիտակցութիւնը՝ ապագային աւելութիւն սերմանելով նրանց եւ Ադրբէյջանի յեղափոխական բանուորների և գիւղացիների մէջ, որպէսզի եղբայրական կռուի միջոցով երկարատեւ դարձնի մի առժամանակ եւս իր գոյութիւնը:*

*Ընկեր բանուորներ եւ զինուորներ,*

*Դաշնակցական հակայեղափոխական կառավարութիւնը Զեզ խաբելու համար պրոկացիան լուրեր է տարածում, որ իբր Բագուի յեղափոխական կոմիտէն պահանջել է Հայաստանի կառավարութիւնից յետ քաշել զօրքերը Զանգեզուրից և Ղարաբաղից, անբաժան մասը յայտարարելով այդ վայրերը Խորհրդային Ադրբէյջանի:*

*Ռուսաստանի կոմունիստական կուսակցութիւնը այսու յայտարարում է, որ նախ՝ այդ հեռագիրը գրուած է ոչ թէ Ադրբէյջանի Խորհրդային Իշխանութեան կողմից, այլ Ռուսաստանի Սովետական Իշխանութեան՝ յանձինս Կիրովի եւ Օրջոնիկիձէի: Ռուսաստանի Սովետական Իշխանութիւնը ստիպուած էր հեռագրել Հայկական կառավարութեան, որովհետեւ վերջինս Մուսաւաթիստների կառավարութիւնը ընկնելուց յետոյ, յարձակում գործեց Սովետական Ադրբէյջանի վրայ՝ Ղարաբաղի ուղղութեամբ:*

ARAM webaram.com

Հեռագիրը ուղղուած է Խորհրդային Ադրբէյջանին եւ Հայաստանի հակայեղափոխական կառավարութեան, որը եւ քաղաքական սրիկաներին յատուկ մեքենայութեամբ յեղյեղել է այդ հեռագիրը: Հեռագրի բովանդակութիւնն է՝ Խորհրդային Ռուսաստանը պահանջում է Հայաստանի կառավարութիւնից եւ Խորհրդային Ադրբէյջանից անմիջապէս յետ քաշել զօրքերը Ղարաբաղից եւ Զանգեզուրից, որպէսզի տեղական ժողովուրդը ԻՆՔՆՈՐՈՇՈՒԻ, որպէսզի նա վերջ ի վերջոյ ասի, արդեօք ի՞նչ իշխանութիւն է նա ուզում՝ Դաշնակցականների անարդ լո՞ւծը, թէ տեղական ժողովրդից կազմած աշխատաւորական իշխանութիւն: Հեռագիրը աւելացնում է՝ որ Ադրբէյջանի պրոլետարական իշխանութիւնը ընդառաջ է գնում Խորհրդային Ռուսաստանին եւ յայտարարում է, որ եթէ Հայկական կառավարութիւնը կը յանդգնի դիմադրել խորհրդային Ռուսաստանի պահանջին, Դաշնակցականները զօրծ կ'ունենան Խորհրդային Ռուսաստանի կարմիր բանակի հետ: Ռուսաստանի Խորհրդային իշխանութիւնը կամենալով ապատագրել Զանգեզուրի եւ Ղարաբաղի աշխատաւոր մասսաները մաուզերիստների ահռելի լծից, պահանջում է Հայաստանի կառավարութիւնից յետ քաշել իր զօրքերը վերոյիշեալ վայրերից: Նոյն իշխանութիւնը դիտենալով, որ հայ մուսաւաթիստները պրովոկացիոն լուրեր պիտի տարածեն հայ աշխատաւորների մէջ՝ հանդէպ Ադրբէյջանի Խորհրդային Իշխանութեան, պահանջում է Խորհրդային Ադրբէյջանից եւս հեռացնել իր զօրքերը այդ վայրերից:

Բայց Դաշնակցական հակայեղափոխական կառավարութիւնը, միջազգային իմպերիալիզմի հայկական այդ հաստուածը, չի կարող հանդուրժել իր կողքին Բանուորա—Գիւղացիական Ադրբէյջանը: Հայկական կառավարութեան շահերը պահանջում են ձեռք մեկնել վրաց մենշեւիկներին, միջազգային իմպերիալիզմին եւ Ադրբէյջանի տապալուած Մուսաւաթիստական կառավարութեան, որպէսզի ընդհանուր ուժերով կռուեն Անդրկովկասի ապստամբուած սովալլուկ բանուորների, գիւղացիների եւ գինուորների հետ:

Այդ է պատճառը, որ Մուսաւաթիստների կառավարութիւնը յեղափոխութեան նախօրեակին դիմել է վրաց եւ Հայ կառավարութիւններին օգնութիւն հայցելով վերջիններից: Դաշնակցական եւ մենշեւիկական կառավարութիւնների այդ դաւադիր ծրագրին, մենք բանուորներս, գինուորներս եւ գիւղացիներս համախմբուած կոմունիստական դրօշակի չուրջը, պիտի պատասխանենք միահամուռ ապստամբութեամբ: Զանգեզուրի եւ Ղարաբաղի հարցը կիսով չափ



ARAM webaram.com

լուծուած է այն օրից, երբ Բաքուի պրոլետարիատը եւ Ադրբէյջանի չքաւոր գիւղացիները ստանձնեցին Մուսաւաթիստների կառավարութիւնը եւ նա բոլորովին լուծուած կը լինի Հայաստանի բանուորների եւ գիւղացիների ապստամբութեամբ հայ մուսաւաթիստների՝ Դաշնակցականների կառավարութեան դէմ:

Թող Դաշնակցական կառավարութիւնը ստայօդ լուրեր տարածէ, թող նա լարէ Հայաստանի բանուորներին եւ գիւղացիներին Խորհրդային Ռուսաստանի եւ նրա դաշնակից Խորհրդային Ադրբէյջանի դէմ, մենք բանուորներս, գիւղուորներս եւ գիւղացիներս հայ վամպիրների, սպեկուլեանտների, կուլակների եւ վաչխառուների իշխանութեան այդ մարդակեր քաղաքականութեան կը պատասխանենք մեր բանուորա—գիւղացիական յախուռն հարուածներով:

Թող մեռնի դաշնակցականների կառավարութիւնը, կեցցէ՛ բանուորա—գիւղացիական Հայաստանը:

Կեցցէ՛ Բաքուի յեղափոխական պրոլետարիատը,

Կեցցէ՛ բանուորա—գիւղացիական Հայաստանի կարմիր բանակը,

Կեցցէ՛ Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը:

Ռուսաստանի Կումունիստական Կուսակցութեան
Ալեքսանդրապոլի Կոմիտէ


ARAM webaram.com

## ԼԵՒՈՆ ՇԱՆԹԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՀԱՅ-ՍՈՎԵՏԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*Սիմոն Ջան, ահա՛ քանի օր է ուշացուցի նամակիդ պատասխանը, յուսալով որ կերպ մը տրամադրեմ ինծի եւ գոնէ համառօտ բան մը գրեմ քու ուզած հարցի մասին, բայց վերջապէս եկայ այն տխուր եզրակացութեան, որ անկարող եմ, այս վայրկեանիս պօլշեւիկեան տխմարութիւններով զբաղուելու բնաւ դլուխ չունիմ, հիմա ես իմ գլխիս մէջ ունիմ իմ սեփական պօլշեւիզմը· այնպէս խրուեր եմ պարտքերու, անփողութեան, վիճակի անորոշութեան եւ օրուայ ապրուստի դժուարութիւններու մէջ, որ չդիտեմ ինչպէս եմ տակէն դուրս գալու· մեր գպրոցի վիճակը խախուտ է, վճարածը չնչին ու անկանոն· իսկ իմ բոլոր ձեռնարկներէս ու ծրագիրներէս ոչինչ դուրս չեկաւ· տուած յայտարարութիւնս իմ անպէտք աշխատանքներուս վրայ նոր անպէտք աշխատանք մը աւելցուց՝ Տեղեկատու ու Խորհրդատու բիւրօ: — Երբ օր մը գալու ըլլայ այն երջանիկ ժամանակը, երբ հնար ունենամ քիչիկ մը ազատ դլուխ ունենալու, եւ ուսելու հացէն ու գպրոցի վճարէն դուրս ուրիշ բաներու մասին ալ մտածելու, կը նստիմ ու կը գրեմ մեր դէպի Մոսկուա առաքելութիւնը եւ իմ տպաւորութիւնս, ի հարկէ ո՛չ իբրեւ պատասխան սբատախօս ու ցած Չիչերիններու ու Չիչերինիկներու, անկախ աշխատանք մը ինքն իրեն համար, իբրեւ յուշեր:*

*Հիմա քու հարցերուդ պատասխանեմ մէկ-մէկ նախադասութեամբ: 1) Մեր պատուիրակութիւնը ուղարկուեցաւ, որովհետեւ պօլշեւիկները արդէն տէր էին Ատրբէյճանին եւ անոնց հետ լեզու մը գտնելը դարձեր էր անհրաժեշտ թէ՛ վրացիներուն համար եւ թէ՛ մեզի· ռուսը ճորէն եկել էր կռվկաս: 2) Մենք Մոսկուա հասանք այն*



ARAM webaram.com

ժամանակուայ հաղորդակցութեան միջոցներու հնարաւոր արագութեամբ: 3) Քարախանի հետ համաձայնութեան եկանք բոլոր կէտերու վրայ. դաչինքը չատորագրուեցաւ, որովհետեւ Բագուի հայ, վրացի եւ թաթար կոմմունիստները բոլոր միջոցներով սկսան ճնշում բանեցնել Մոսկուայի վրայ, պահանջելին որ Ղարաբաղը, Զանգեզուրը եւ Նախիջեւանը թիւրքական հողեր են, ան վիճելի թուրքական եւ Հայաստանի հետ միացնելու խօսք անգամ լինել չի կրնար: Մոսկուա մէկ ու կէս ամիս ժամանակ զործ դրաւ իր Բագուի ընկերներուն հետ համաձայնութեան մը գալու եւ տեսնելով որ անկարելի է, որոշեց բանակցութիւնները տեղափոխել Կովկաս եւ ուղարկեց Լէրպանը Բագու եւ անկէ Երեւան: Մենք ո՛չ թէ ուշացած կամ խանգարած ենք, այլ շատ ընտիկ դիմած ու պահանջած ենք, որ չտապէն, որ վերջապէս պատասխան մը տան, որ մենք գործ ունինք եւ այդքան երկար Մոսկուա նստիլ չենք կրնար: 4) Այդ է մեր ուշացման պատճառը. մեր ետ գալն ալ կատարուած է այն ժամանակուայ հնարաւոր արագութեամբ. կրնայինք Բագուով չատ աւելի արագ տեղ հասնիլ, բայց մենք չուզեցանք: 5) Լէրպանը անձնապէս ոչ մէկ դեր չունի, հո՛ն ներսը իրենց մէջ չդիտեմ, թէեւ ներսն ալ կարծեմ կարեւորութիւն ունեցող դէմք մը չէր. մեզի հանդիպ խողովակ մըն էր, որ կը կատարէր կենտրոնէն եկած հրահանգները. հարցերու ըմբռնման մէջ նոյն դիրքը ունէր, ինչ որ ունէր Մոսկուան մեզի դէմ. համաձայնութեան գալու ջանք մը, Հայաստանէն Թուրքիա անցքը բանալու ջանք մը: 6) Լէրպանի հետ բանակցողը եղել է մեր պատուիրակութիւնը, որը սակայն միշտ խորհրդակցութիւններ է ունեցել կառավարութեան հետ, իսկ հիմնական պայմանները ստորագրելէն առաջ կառավարական խորհրդէն ներկայ են եղած եւ իրենց հաւանութիւնն



ԼԵՒՈՆ ՇԱՆԹ

ARAM webaram.com

են առած բոլոր կուսակցութիւններու ներկայացուցիչները: Սխալ է թէ համաձայնութեան չհկանք: Լըրբանի հետ լրիւ համաձայնութիւն կայացած է. եւ երկու կողմէն ձեւականութիւններով առարկրուած է ե՛ւ հիմնական համաձայնագիրը ե՛ւ երկու զաղտնի յաւելուածները եւ դեռ քէֆ ալ ենք կատարեր երկու պատուիրակութիւններս միասին մեր աշխատանքներու յաջող աւարտման առիթով: Լըրբանը առաւ մեր համաձայնագիրը եւ գնաց Բագու «ամէն ջանք ի գործ դնելու», որ ընդունել տայ իրենց Բագուի ընկերներուն, մեր փոխադարձաբար ընդունած կէտերը. ուրիկ եաքը մեր դաշնագրութիւնը պէտք է առանար մեր կառավարութիւններու վաւերացումը եւ պէտք է յայտարարուէր: Եւ այդ բոլորը զարձաւ աւելորդ՝ կարսի անկումով: 7) Ո՞վ է այդ Կարինեանը. զրական հետաքրքրութիւններով «հարուստ», Մոսկուայի մօտերը ապրող երիտասա՞րդ մըն էր. եթէ ան է, բարեկամ էր մեզի, իր կողմէն վատ ոչինչ չեմ նկատած, արդէն վատ ի՞նչ կրնար ընել. խօսք առնի՞լ–բերել. մենք դիտամտի մեր բոլոր քարդերը բաց էինք պահած. իսկ այն քարդերը որ բանալ չէինք կրնար, չենք բացած եւ ոչ–մէկուն: Այդ անունը կայ յիշողութեանս մէջ, բայց չեմ յիշեր թէ ով է: Եթէ Բագուի խումբին կը պատկանէր՝ կրնայ իրենց ժողովներուն մէջ իր դերը ունեցած ըլլալ: Ահա՛, սիրելիս, քու հարցարանիդ կարճ պատասխանները, չգիտեմ բանի մը պիտի ծառայեն թէ ոչ այդ հում վիճակին մէջ. ապահով եմ սակայն, որ մնացածը դուն կ'ևլիես:

*Մէջէմէջ գրէ՛ ինծի. ի՞նչ ասոխճանի լրջութիւն ունի Փարիզի մէջ օրաթերթ մը հրատարակելու Բիւրոյի մտադրութիւնը, քանի մը կողմերէ լսեցի:*

*Այլեւ պիտի խնդրէի քեզմէ անգամ մը Յատիսեանէն տեղեկանայիր ի՞նչ եղաւ Մարկոսեանի կտակի հարցը. արժէ՞ որ դեռ յոյս կապեմ այդ խնդրին, թէ ապարդիւն աշխատանք է. կա՞յ այդ կտակի գործադրութիւնը, որեւէ մէկը մինչեւ հիմա առե՞ր է այդ հաշուով. 1924—25 թուին որեւէ մէկը ընդունե՞ր է, իրրեւ նոր սան, եւ վերջապէս առաջիկայ տարուան համար ընդունելութիւն կա՞յ, խելքի մօտի՞կ է, որ իմ տղաս ընդունին, ըլլա՛յ Սուրէնը (բժշկութիւն), ըլլայ Վիգէնը (ևլեկտրական էնժէնէօր): Յօսէ անգամ մը Յատիսեանի հետ եւ գրէ՛ ինծի քու մտածածդ: Ես արդէն յոյս կտրեր էի մեր անցած տարուան ըրած դիմումէն, երբ Յատիսեանը Մարսէյլ եղած միջոցին նորէն յոյս ձգեց մէջս, եւ հիմա չգիտեմ ինչ մտածեմ:*



ARAM webaram.com

Շատ ու չատ բարեւներ քեզի, սիկնոյդ ու մեր ընկերներուն։

Համբոյրներով՝ Լեւոն Շանթ

1925 Մայիս 20, Մարսէյլ

Հասցէս է՝ ո՛չ դարձուր։

Rue Paradis 492 Marseille

Յ. Գ.— Աչտար հոսկէ անցնելու ժամանակ լսեր է, որ դուն մեզի ուղարկելու ես իր լուսանկարը, եթէ ունես ձեռքդ՝ ղրկէ՛։ սրտագաթ կը խնդրեն։

* * *

Սիրելի՛ Սիմոն, ամենէն առաջ կէտ-կէտ պատասխանեմ տուած հարցերուդ, թէեւ ազնգմէ մէկ-քանիին կարծեմ անցած նամակիս մէջ պատասխանած էի։

1. Մենք վլատիկաւկաս հասանք թէ չէ ներկայացանք տեղի բոլշեւիկեան բարձր իշխանութեան, հասկցուցինք մեր ով եւ ինչացու ըլլալը եւ խնդրեցինք որ մեզի վագոն տրամադրուի, որովհետեւ այդ երջանիկ օրերուն բոլշեւիկեան թատաւորութեան մէջ արդի իմաստով ո՛չ դնացքներ կային կանոնաւոր երթեւեկով, ո՛չ ճամբորդ իր ապատ կամքին, ո՛չ ալ դնովի տոմսակ, ո՛չ ալ երթեւեկող դնացքներուն մէջ տեղ ու վագոն. տեղ ունենալու համար կառավարութենէն պէտք էր յատուկ իրաւունք եւ կարգադրութիւն. մինչեւ Մոսկուա հեռագրեցինք, մինչեւ պատասխան եկաւ, մինչեւ վագոնի կարգադրութիւն եղաւ անցան քանի մը օրեր. եթէ մենք ալ մեր քէֆի համար կ'բաակի օր մը աւելի մնացինք կամ պակաս, ան ալ չեմ յիշեր։ Նոյն պատմութիւնը նաեւ Բոստով, հոն մէկ-երկու օր դուցէ կարողացայինք աւելի արագ չարժուել. Տէրթէրեանին եղբայրը նոր մեռեր էր թիֆէն եւ պէտք է անդամ մը իրենց դիւղը երթար ու դար։ Բայց այդպէս օր մը աւելի շուտ կամ օր մը աւելի ուշ հարցը չկար մեր առջեւը դրուած. մենք ո՛չ վայրկեան մը աւելի շուտ հասնելու անդն ենք ունեցեր, ոչ ալ աւելորդ ժամանակ ենք վատներ, եւ ընդհանուր առումով մեր դանդաղ կամ արագ չարժուիլը մեզմէ կախուած չէ եղել, այլ բոլշեւիկեան կարգերէն։ Պէտք չէ մոռնաս, որ Հիւսիսային կովկասը այդ օրերուն Մոսկուայի հետ սոլիդ կերպով կապուած չէր։ Այս բոլորը ես դրեցի քեզի համար. իմ կարծիքովս բոլշեւիկեան այդ կարգի «ամբաստանութիւններուն» պատասխանելը չար ժամավաճառութիւն է։ Ի՞նչ կարեւորութիւն ունի, եթէ չարաթ մը աւելի շուտ հասած ըլլայինք, ի՞նչ էր փոխուելու. չէ՞ որ մեր հասնելէ եառքը ամբողջ երկու ամիս պարապ նստեցուցին մեզի այդ մեծապատիւ բոլշեւիկները իրենց աւերակ Մոսկուայի մէջ. չարաթ մը աւելի պիտի նստած



ARAM webaram.com

ըլլայինք, ահա՛ բոլոր տարբերութիւնը:

2· Մեր կառավարութիւնը մեզի իբրեւ տեղեկատու տուած էր երեք որոշում. 1) ռուսները պէտք է ճանչնան մեր անկախութիւնը եւ դոնէ սկզբունքով հակառակ ոչինչ չունենան Թուրքական մասերու միացմանը մեր հողին, 2) բացարձակապէս պէտք է յարգեն մեր ապառութիւնը եւ մեր ներքին գործերուն չխիտի խառնուին, ուրիշ խօսքով կոմմունիզմի պահանջ պէտք չէ ըլլայ եւ 3) Զանգեզուրն ու Ղարաբաղը պէտք է մանէ հայկական սահմաններուն մէջ· Ծայրագոյն պարագային համաձայնիլ Ղարաբաղի խնդիրը հանրահարցի միջոցով վճռելուն: Այս երեք կէտերն ալ ռուսները անմիջապէս ընդունեցին չատ թեթեւ տարակուսիններով, անոնց համար Թուրքին ու սահրապրութիւնը երբեք կարեւորութիւն չէր ունեցած, նոր էին սահրապրեր վրացիներու հետ դաշինքը եւ մեր իսկ ներկայութեան կը խնդային այդ դաշինքին վրայ, «այո՛, ամառուան մը համար», ինչպէս կ'ըսէին կէս կատակ, կէս լուրջ: Եւ մենք արդէն պիտէինք, որ 9 թէ 11–րդ բանակը կ'ներթար (լաւ չեմ յիշում) դէպի Վրաստան· Լեհական պատերազմն էր, որ յետաձգեց Վրաստանի վրայ յարձակումը:

3· Ռուսներու կողմէն մեզի առաջարկ չէ եղած Լըլրանի հետ ճամբորդելու մասին: Եթէ ըլլար ալ մենք չէինք ընդուներ· մենք միշտ պահեր ենք մեզի իբրեւ անկախ երկրի մը դեսպանութիւն եւ ո՛չ–մէկ պայմանով Լըլրանի մը թեւարկութեան տակը չէինք մտներ: Իսկ եթ դառնալու որեւէ հապճեպ չունէինք այդ ատենճանի· մենք մեր դերը արդէն աւարտած կը համարէինք, բոլոր էական խնդիրներու չուրջ մանրամասն զեկուցումներ ղրկած էինք մեր կառավարութեան եւ կը կարծէինք, որ Լըլրանի հետ մեր կառավարութիւնը ինքը կը խօսի Հայաստանի մէջ՝ մեր արտաքին գործերու նախարարը, կամ անոր փոխանորդը: Ամէն դատ նախիջեւանով անցնիլ կը ցանկայինք, մեր կառավարութեան համար քանի մը միլիոն բերելու հաշիւներ ունէինք, այլեւ ընկերներ ունէինք սահմանը անցնելու· կային նոյնպէս ուրիշ մանր հարցեր: Նորէն այս բոլորը կը գրեմ քեզի համար· թէ չէ՝ դէպի դուրս տալիք պատասխանը մէկ է, ռուս կառավարութեան կողմէ մեզի առաջարկ եղած չէ, եւ եթէ այդ առաջարկը եղած ալ ըլլար՝ չէինք ընդունելու, պէտք չունէինք ենթարկելու ինքզինքնիս այդ կարգի տիպլոմատիկ խաղերու: Իրբեւ ինչ պիտի մտնէինք Լըլրանի վագոնները, իրբեւ դաշնակի՞ց (չէինք), իրբեւ գերի՞, իրբեւ պատա՞նդ: Սիրելի՛ս, այս նրբութիւնները ի հարկէ չեն կրնար հասկնալ մեր բոլշեւիկ ազգարնները, որոնք անկա-



ARAM webaram.com

խութիւնը ո՛չ ճաշակած են եւ ո՛չ ցանկացած. բայց մեր մէջ շատ ուժեղ էր այդ դիտակցութիւնը եւ այդ քաղաքացիական հպարտութիւնն ու քաղաքականութիւնը:

4. Թիֆլիսէն մինչեւ Մոսկուա մեզի հետ էին Երզնկեանն ու Փիրումեանը, մեր «դելեկացիոն» վագոնին մէջ, ընկերներու նման, քանի մը դաշնակցական շատ մեղմացուցած քննադատութիւններէ դուրս իրրեւ թէ մեզի պաղափարակից, կու գային յատկապէս Ղարաբաղը Հայաստանին կցելու համար աշխատելու իրրեւ թէ. պարզ էր, որ կու գային բոլշեւիկներուն հետ լեզու գտնելու, այն ժամանակ կը մտածէի իրենց ղրկող մարմիններու կողմէն, իսկ հիմա կը մտածեմ պարզապէս իրենց անձնական կաշին: Մոսկուա հասնելուս պէս իրարմէ զատուեցանք. սկիզբները մէկ-երկու անգամ կու գային մեր դեսպանատունը եւ կը հաղորդէին մեզի դուրսի «բոլշեւիկեան» տրամադրութիւնները, շատ երկրորդական ու անմեղ հաղորդակցութիւններ, քիչ-քիչ ատ ալ կարուեցաւ եւ անոնք մտան վերջնական-նապէս բոլշեւիկեան հունին մէջ. ձուկը գեր էր իր տարրը. եւ մեզի հետ այլեւս ոչ-մէկ կապ. վերադարձեր են չդիտեմ երբ եւ ինչպէս:

5. Ես Լըզրանի հետ ո՛չ մէկ կապ չեմ ունեցած Մոսկուայի մէջ, երեան ալ չեմ տեսած, անգամ մը միայն Տէրտէրեանը գնաց մտանեւոր ատեն մը մէջ մտանեւոր կերպով հանդիպելու, իրրեւ պատահական տեսակցութիւն, դաղափարները չօշափելու համար: Մեզի հետ խօսողը արտաքին գործերու նախարարութիւնն էր, եւ անիկա մեզի Լըզրանի հետ բնաւ յարաբերութեան մէջ չէ դրած պաշտօնապէս, ուրեմն պաշտօնապէս մենք չէինք ճանչնար Լըզրանը, մեր վերջին կամ վերջնթեր տեսակցութիւններու միջոցին էր, որ Քարախանը յայտնեց մեզի պաշտօնապէս, որ իրենք Լըզրանը ուղարկած են Հայաստան, հոն չարունակելու մեր «ընդհատած» խորհրդակցութիւնը: Նպատակն էր անգամ մը մուտք ունենալ Հայաստան, հետները «ցրուելու» ապրանք էին տարած ժողովուրդը զրաւելու համար, ինչպէս եւ ատոր «զրականութիւն» եւ պերսոնել. այսինքն ներսէն քայքայելու ծրագիրը: Երբ մենք Թիֆլիս հասանք, Լըզրանը անգամ մը Թիֆլիս եկած եւ վերադարձած էր. ես հոն ալ իրեն չեմ հանդիպած, եւ եթէ Թիֆլիս ալ ըլլար՝ ի հարկէ իրեն չէի հանդիպելու, առանց մեր կառավարութեան նոր հրահանգին այլեւս իրաւունք ալ չունէինք: Ես Լըզրանին առաջին անգամ տեսած ու խօսած եմ Երեւանի մէջ արտաքին գործերու նախարարութեան յարկին տակ, երբ մեր կառավարութիւնը որոշեց, որ Մոսկուա եղող կազմը չարունակէ բանակցութիւնը Լըզրանի հետ:



ARAM webaram.com

6 եւ 7 հարցերուդ պատասխանելը դժուար է առանց մեր ընդարձակ համաձայնագրերը աչքի տակ ունենալու, մանաւանդ որ ես միշտ վստահութիւն չունիմ իմ յիշողութեանս վրայ: Կրնամ պատասխանել մեայն խոշոր գծերով: Լըդրանի պահանջներն էին ա) բացարձակ հրաժարիլ Վերսայլէն, Եւրոպայէն, բ) ապատ անցք տալ մեր հողերուն վրայով զօրք եւ ռազմամթերք անցնելու Ադրբէյջանէն Թուրքիա եւ գ) թէ՛ մէկի, թէ՛ միւսի եւ թէ՛ վրացիներու հետ մեր ունեցած վէճերը հարթել իրաւարարութեամբ ուսանելու արբիթրաժին տակ: Այլեւ քանի մը մանր պահանջներ, ինչպէս օրինակ Կարսի մէջ պանուող նեղ-ոլիծ երկաթուղային վագոնները յանձնել իրենց, որպէսզի տան Թուրքերուն, Ադրբէյջանի եւ Թուրքիայի մէջ մեր հարաւով երկաթուղային կապ հաստատելու համար:

Մենք Ա. կէտը կարուկ մերժեցինք. անոնք քանի մը անգամ փոխեցին փոխոխեցին եւ մնաց տակը անորոշ ու վերացական ոչինչ չըսող յայտարարութիւն մը: Բ. կէտի դէմ առարկեցինք, որ կը վանանք ուսանելէն առացած դէնքերը մեր դէմ գործածեն Թուրքերը, ինչպէս եւ Թուրք բարմութիւններու մեր հողերուն վրայ դրանելը: Վերջ ի վերջոյ համաձայնեցանք մեր դիւանագիտական մարմիններուն քննութիւնն ու վաւերացումն առանալէն եաքը, որ 1) զօրք կրնայ անցնիլ երկաթուղիով որոշ չափուած պայմաններու տակ, անպէն ու փոքր-փոքր քանակութեամբ. 2) իսկ զալով դէնքին ուսանելը ընդունեցին, որ ինչքան դէնք որ անցնի մեր հողերուն վրայէն առնոր (յաւ չեմ յիշեր) 25 թէ՞ 30 առկոսը պէտք է մնայ մեզի իրրեւ ինքնապաշտպանութեան միջոց: Այդ երկու թիւերուն վրայ դիտեմ որ առարկութիւն եղաւ, վերջը որը մնաց չդիտեմ, կարծեմ 30-ը: Գ. կէտը, այսինքն մեր երեք զրացիներուն հետ վէճերը կարգադրելու համար ուսանելու արբիթրաժը ընդունեցինք:

Փոխարէնը անոնք կ'ընդունէին մեր անկախութիւնը, մեր ներքին գործերուն չխառնուիլ, արեւելեան սահմանի մէջ պէտք է մրտնէր Զանգեզուրը, իսկ Ղարաբաղի համար իրաւարարութիւն, ինչպէս եւ Նախիջեւանի համար, իրրեւ բալանս: Իսկոյն պէտք է միջամտէին Թուրքերու հետ մեր պատերազմը կասեցնելու եւ իրրեւ առաջին պահանջ պէտք է առեղծէին չէզոք զօտի մը մեր ու Թուրքերուն մէջ հին ռուսական սահմանին վրայ. եւ այս բոլորը իրրեւ մեր ու Թուրքերու ընդհանուր բարեկամ: Մեզի անմիջապէս պէտք է վճարէին երկու եւ կէս միլիոն ոսկի, Բաքուի նաւթային ճամբան պիտի բացուէր, պէտք է տային երկրագործական գործիքներ, պէտք է յանձնէին Մոսկուայի մէջ մեր կալուածական եւ այլ իրերը, դիւ-



ARAM webaram.com

բութիւններ պիտի տային ռուսական քանի մը կեդրոններու մէջ հաւաքուած հայ գրենական եւ գեղարուեստական երկերը Հայաստան փոխադրելու: Ահա՛ խոշոր գծերով եւ ինչ որ հիմա կրնամ յիշել, ինչ որ երկու կողմէն առորոշուած ենք:

8· Լըլրանը սաստիկ կը չտապէր մեր բանակցութիւններու մէջտեղին, մենք քիչ մը ծանր կը չարժէինք ականջնիս կարան կողմը: Առորոշուելուն պէս Լըլրանը դնաց ինքը, մեր կողմէն ոչ մէկ առաջարկ, համոզելու Բաղուի ընկերները, որ ընդունին մեր եկած համաձայնութիւնը· նոյնը նաեւ պիտի աշխատէր Թուրքերուն հետ: Բայց թէ՛ մեր կառավարութիւնը, թէ՛ մեր պինուորականները, թէ՛ անգլիական ներկայացուցիչը կը պարմանային բոլշեւիկներուն այդ տեսակ պայմաններ առորոշուած ըլլալուն, կա՛մ Թուրքերը չէին ճանչնար ինչպէս հարկ է, կա՛մ մեզ օրօրել կ՚ուզէին, կա՛մ վատահ էին, որ անդամ մը Հայաստանի մէջ առքերնին դնելէ ետքը ամէն ինչ կը պայթեցնէին, դուցէ եւ այս երեքը միասին: Եւ վերջապէս եղածը Թուղթի կտոր մըն էր եւ դառարկ առորոշութիւն մը, ի՞նչ կարեւորութիւն:

9· Լըլրանի դիրքը երկդիմի էր, մեզի, այսինքն մեր կառավարութեան հանդէպ լիապօր բանագնաց մըն էր, մօտաւորապէս ինչպէս մենք էինք Մոսկուա· բայց անառարակոյս է, որ բոլշեւիկեան մարմիններու հանդէպ անիկա ունէր մասնաւոր իրաւունքներ ու հրահանգներ թէ՛ Հայաստանի մէջ եւ թէ՛ Հայաստանէն դուրս Հայաստանի հետ կապուած գործերու վերաբերմամբ, որ ըսել է դրեթէ ամէն հարցի վերաբերմամբ Կովկասի մէջ:

10· Իր Թուրքերուն հետ ունեցած կապի մասին ոչինչ ըսել չեմ կրնար: Կը յիշեմ, որ Երեւանի մէջ չատերը (կամ դռնէ քիչերը) կային, որ անոր վրայ կը նայէին իբրեւ պատերազմական լրտեսի վրայ մեր Թուրքերուն հետ ունեցած կուռի միջոցին նատած մեր գործերու թիկունքին: Ես բոլշեւիկ մարդոց խօսքին ու կեցուածքին մեծ հաւատք ունեցող մարդ չեմ, եւ վերջապէս քաղաքականութիւնը սուտի ու խարէութեան հիւսուածք մըն է, չեմ պարմանար, որ Լըլրանը Թուրքերու առաջխաղացումը դիւրացնելու եւ մեզի ճամել տալու քաղաքականութիւնը վարած ըլլայ կա՛մ իր, կա՛մ Բաղուի կա՛մ Մոսկուայի թելադրանքով· բայց անկեղծ ըլլալու համար պէտք է ըսեմ, որ ես այդ աչքով չեմ նայած անոր վրայ, կարելի է իմ տիպլոմատիկ հոտառութիւնս թոյլ է եղած, մանաւանդ կեղտոտ գործերու մէջ, իմ տպաւորութիւնս այն է, որ ան կը ջանար իրօք որ հաշտութեան բերել մեզի ու Բաղուն, մեզի ու Թուրքերը: Ինձի կը թուի,


ARAM webaram.com

որ Լենինը կողմնակից էր Հայաստանի մնալուն, նոյնիսկ ո՛չ-բոլշեւիկեան, ինձի կը թուի, որ Կարախանը նմանապէս այդ ուղղութեամբ կ՛աշխատէր. ինձի կը թուի, որ ներքին կապ կար Լըզրանի ու Կարախանի մէջ: Լենին–Կարախան–Լըզրանեան քաղաքականութիւնը պարտուեցաւ մեր կարծ առջեւ ունեցած պարտութեամբ. յաղթանակեց իսկական քաղաքականութիւնը, «բոլշեւիկ Հայաստան անմիջապէս» պէնքով, եւ Հայաստանի կառավարութիւնը իրենց ձեռքը՝ հայ բոլշեւիկներու: Ինձի կը թուի, որ Ա. Յովհաննէսեան ու Սահակ Տէր-Գաբրիէլեանը Կարախան–Լըզրանեան խելքի մարդիկներ էին եւ ճիշդ ատոր համար ալ դրուած էին Լըզրանի հետ: Վերջը ատոնք բնականաբար բոլորն ալ փոխուեցան, երբ Բագուի բոլշեւիզմը տարաւ յաղթանակը: Ատոնք կա՛մ պէտք է սուզուէին ջուրին տակ կամ պէտք է բագուցիներուն յանկերգը պոռային: Մէկ երկուքը որ աւելի խոր հոգի ունէին, լռեցին ու անցան երկրորդական շարքերը. միւսները նետուեցան առաջ, Ա. Յովհաննիսեանին պէս, խոշոր պատառներ խածնելու համար: Մեր կարծ կուիներուն ժամանակը պիտեմ որ (բոլորովին կողմնակի ու մասնաւոր ճամբով) թէ՛ Աչոտը եւ թէ՛ Սահակը կը ցանկային կարծ առաջ մեր պինակաան յաջողութիւնը. դեռ հայ էին:

Եթէ Կարինեանը Փափազեանի քեռորդին է, իմ անցած օրուան դրածներս անոր չի վերաբերիր: Ան ուրիշ մարդ է: Փափազեանի քեռորդին դիտեմ, թէեւ դէմքը չեմ յիշեր. ոչ ալ հոգին կը ճանչնամ:

Սիմո՛ն ջան, վերջացնելէս առաջ երկու խօսք ալ իմ մասին: Գիտցած եղի՛ր, որ Մարսիլիա մնալու չեմ: Ո՛չ մարդ կայ հոս մարդավարի, ո՛չ ալ դրամ. եթէ մէկը ըլլար՝ կ՛ըլլար եւ միւսը. այնպէս որ ո՛չ իմ ծրագիրներս ո՛չ ալ իմ ապրուստս ոտքի հանել չեմ կրնար հոս: Վերջին ամիսները շատ դժուար կը վճարեն եւ շատ ողորմելի մարդիկ են. չդիտեմ ամառուան ամիսներու վճարը ինչ պիտի ընեմ. կրնաս երեւակայել դրամական վիճակս: Մտադիր եմ եգիպտոս անցնելու, դեռ պաշտօնական հրաւէր չունիմ, բայց մասնաւոր նամակներու յենուած յոյս ունիմ, որ յաջողուի: Ընտանիքս պէտք է փոխադրեմ Փարիզ. այդ մասին արդէն դրած եմ Տիգրանին, որ բնակարանի հոգ քաշէ: Եթէ հնար ունենայ եւ եթէ չուտով բնակարան ճարուի մէկ-երկու շաբաթ ես ալ կու գամ Փարիզ, Եգիպտոս մեկնելէ առաջ, եւ այն ժամանակ կը խօսինք մանրամասն. եթէ դալ չկարողանամ, քեզի իրազեկ կը պահեմ:

Սրտագին բարեւներով ու ջերմ համբոյրներով՝

ԼԵՒՈՆ ՇԱՆԹ

1925 Յունիս 18, Մարսէյլ



ARAM webaram.com

## ԿՈՉ՝ ՀԱՅ-ԲՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՌԹԻՒ

*Ամբողջ աշխարհի ազգերի Լիգային, խորհրդարաններին, կենտրոնական ու բանուորական կազմակերպութիւններին, դիւանական ու մշակութային ընկերութիւններին եւ մամուլին:*

*Եւրոպայում երկու տարի առաջ վերջացած մեծ պատերազմը բորբոքում է նոր ուժով Արեւելքում, մանաւանդ Անդրկովկասի եւ Առաջաւոր Ասիայում: Արեւմուտքից Հայաստանի վրայ են արշաւում թիւրք ազգայնականների գինուած ուժերը պանթիւրքիստ Մուսթաֆա-Քեմալի եւ Էնվերի գեկավարութեամբ, իսկ Արեւելքից՝ նրանց ազգակիցները՝ քօղարկուելով բոլշեւիզմի դրօշակի տակ՝ չտապում են միանալ նրանց հետ Հայաստանի հողի վրայ:*

*Իր սեփական ուժերին ձգուած հայ ժողովուրդը հերոսական կռիւ է վարում պաշտպանելով քաղաքացիական ազատութիւնների եւ ազգերի իրաւահաւասարութեան վրայ հիմնուած իր դեմոկրատական հանրապետութեան անկախ գոյութիւնը: Հայաստանի անկումը առաջ կը բերի կրօնական ֆանատիկոսութեան յաղթանակ եւ ազգային սարկութիւն:*

*Վերջ տալով Հայաստանին՝ նոյն պանթիւրքական ուժերը, որոնք ձգտում են, ի մէջի այլոց, նաեւ Բրեստ-Լիտովսկի դաշնագրի իրագործման, չեն յապաղի յարձակուելու միւս դեմոկրատիկ հանրապետութեան՝ Վրաստանի վրայ:*

*Եւրոպական դեմոկրատիայի մեծ խէալները Առաջաւոր Ասիայում իրագործելու համար մղուած կռուի այս ծանր վայրկեանին, մենք՝ ներքեւ ստորագրողներս՝ դիմում ենք Ազգերի Լիգային եւ քաղաքակիրթ աշխարհի ամբողջ դեմոկրատիային, կոչ անելով*


ARAM webaram.com

*իրական միջոցներ գտնել խափանելու համար կործանումը երկու հըզօր ժողովրդների, որոնք իրենց հողերի վրայ ստեղծում են եւրոպական ազատ պետական կեանքի նորագոյն ձեւերը, եւ միեւնոյն ժամանակ թոյլ չտալու, որ յառաջադէմ կեանքի համար արթնացող բոլոր պանդուխծները չվերադառնան միջնադարեան մռայլ ժամանակներին:*

*Կովկասի եւ Առաջաւոր Ասիայի ժողովրդների խաղաղութեան եւ Համերաշխութեան Լիգայի կազմակերպիչ Կոմիտէ*

Յովհ. Թումանեան, Վարլ. Զերբեզով:

Հոկտեմբերի 1920



ARAM webaram.com

# ՍՈՑԻԱԼԻՍՏ-ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՉԸ

*«Կռուով կը խլես քո իրաւունքները»*

*Ընկերնե՛ր,*

*Տաճիկ փաշաները, քիւրտ ու թիւրք հորդաների գլուխն անցած, ներս են խուժել մեր երկիրը: Բազմահազար հայ գիւղացիներ Ղարսի չրջանից տեղահան են եղած ու կրկին գրկել են գաղթականի ցուպը: Հայ դեմոկրատիայի հպիւ ապաքինուած վէրքը դարձեալ նորոգուել է եւ առաւօրէն հոսում է արիւնը նրա կրծքից: Նորից մեր Ֆիզիքական գոյութեան խնդիրն է դրուած պատմութեան կշռաթաթի վրայ:*

*Օրհասի այս ժամին Հայաստանի դեմոկրատիան մնացել է մենակ ու անօգնական: Երկու տարուայ քաղաքական անկախ կեանքի ընթացքում մենք չկարողացանք ունենալ դրսի այնպիսի բարեկամներ, որոնց օգնութեան վրայ կարողանայինք յոյս դնել վտանգի ժամին: Չկան եւրոպական նուաճողականները, մեր այդ «հաւատարիմ բարեկամները»... ճաշկերոյթի ժամանակ: Չկան բարեկամներ եւ մեր հարեւանների շարքերում: Հայ դեմոկրատիան այսօր իր ուժերով է, որ պէտք է ապահովէ իր գոյութիւնը եւ յետ վանէ արիւնռուչտ թշնամին:*

*Այսօրուայ յաջողութեան միակ պայմանը, ընկերնե՛ր, մեր դեմոկրատիայի բովանդակ ուժերի կազմակերպումն է հայրենիքի ինքնապաշտպանութեան գործի շուրջը: Հայ քաղաքական կեանքի ձեւաւորման ու նրա ընկերային բովանդակութեան շուրջը եղել են մեծ տարաձայնութիւններ մեր եւ Հայաստանի դեկավար հոսանքի մէջ, որի հետեւանքով առեղծուել է ծանր ու գաղջ մթնոլորտ միակուռ եւ միակամ գործունէութեան համար:*



ARAM webaram.com

*Բայց վտանգն այսօր սպառնում է հայ բազմատանջ դեմոկրատիային ոչ միայն քաղաքական իդէալների, այլ նաեւ նրա ֆիզիքական գոյութեան եւ այդպիսի վայրկեանում մենք պէտք է բովանդակազուրկ դարձնենք մեր միտքն ու հոգին եւ նուիրուենք միայն եւ միայն մի գործի՝ ճակատի պաշտպանութեան:*

*Մեր կեանքի այս փլուզումի օրերին իւրաքանչիւր ազնիւ գործի աշխատանքը կրկնակի արժէք ունի: Եւ այսպիսի մի վայրկեանում սոցիալիստ յեղափոխականը պէտք է լինի առաջին շարքերում՝ իր անկաշառ կարողութիւնները ի սպաս դնելու հայրենիքի պաշտպանութեան գործին:*

*Դէպի ճակատ, ընկերնե՛ր,*

*Դէպի մեր իրաւունքի ընձեռումը յաղթական կռւում:*

*ՍՈՑ. ԾԵՂ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ*
*ՀԱՑԱՍՏԱՆԻ ԿՈՄԻՏԷ*

Երեւան, 2 Հոկտ., 1920



ARAM webaram.com

## ԲՈԼՇԵՒԻԿԵԱՆ ՆՈՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՓԵՏՐՈՒԱՐ 18Ի ՊԱՏՁԱՌՆԵՐԻ

*Դաշնակցութեան նկատմամբ վերաբերմունքի հարցում ՀԿՊ կենտկոմում տարաձայնութիւններ են առաջանում, որոնք ուժեղանում են 1921 թուականի Յունուարին: Այդ տարաձայնութիւնների մասին չուտով իմանում է դաշնակցական ընդյատակը, որին զեկավարում էր Սիմոն Վրացեանը, այն Վրացեանը, որը դարձել էր սովետական աշխատող եւ յաճախակի հանդիպումներ էր ունենում Հայաստանի ռեւկոմի զեկավարների հետ:*

*Կենտկոմի մեծամասնութեանը թւում էր, թէ Դաշնակցութեան վրայ ընդհանուր յարձակում սկսելով, նրանց պարտիայի բոլոր անդամներին ձերբակալելու միջոցով հնարաւոր կը լինի կանխել նախապատրաստուող ապստամբութիւնը, ուստի պահանջում էր ձերբակալել բոլոր դաշնակցականներին, արտաքսել դաշնակցական բանակի սպայական կազմը: Այդ ներքաղաքական տարաձայնութիւնների մասին կովբիւրոյին զեկուցում է Ախա Նուրիջանեանը: Նա յայտնում է, որ կենտկոմում երկու օր չարունակ քննւում է երկրի ներքին դրութիւնը, Դաշնակցութեան նկատմամբ վերաբերմունքի հարցը, որի շուրջ տարաձայնութիւններ են առաջացել: Կենտկոմի որոշ անդամներ առաջարկում են այդ հարցը տեղափոխել Ռկ(բ)պ կենտկոմի Կովկասեան բիւրո· պարզւում է, ասում է Ախաը, որ հակառեւոլիւցիան կազմակերպւում է, դաշնակցական ընդյատակը կապ է հաստատել Զանգեզուրի եւ Ալեքսանդրապոլի դաշնակցական կազմակերպութիւնների հետ:*

*Յունուար 27–ին ՀԿՊ կենտկոմի անունից, Ալիխանեանի, Ախաի, Դովլաթեանի ստորագրութեամբ, Ռկ(բ)պ կենտկոմի Կովկասեան բիւրո է ուղարկւում մի բացատրագիր, որտեղ հիմնականում*


ARAM webaram.com

չարաշրուած է կենակոմի պլենումի որոշման բովանդակութիւնը, այն է՝

1.— Անողոք պայքար մաուզերիստների դէմ:

2.— Անողոք պայքար դաշնակցական կառավարութեան ակընյայտ գործակալների դէմ:

3.— Անողոք պայքար Դաշնակցութեան դէմ որպէս պարտիայի: Վերացնել կազմակերպման բոլոր հնարաւորութիւնները:

Այդ նպատակով բանտարկել եւ մեկուսացնել բոլոր դաշնակցականներին եւ կենտրոնական ու գաւառային դաշնակցական կազմակերպութիւնների բոլոր ղեկավարներին, լիպերներին, նախկին կառավարութիւնների բոլոր անդամներին, դատախազութեան աշխատողներին եւ պահեստի մէլիցիայի անդամներին՝ «դաշնակցական օխրանական» (պահնորդական բաժին):

Բանտարկել «ժողովրդական ապաւութիւն» պարտիայի աչքի ընկնող բոլոր անդամներին: Այդ ամբողջ կամպանիան յանձնարարել անցկացնելու ՌՍՖՍՌ-ի Չեկայի լիազօր ընկ. Ա.Թաարբէկեանին՝ անձնական ղեկավարութեամբ եւ պատասխանատուութեամբ:

Ընկ. ընկ. Կասեանը եւ Մռաւեանը կտրականապէս հրաժարուեցին ուեկոմի նախագահութիւնում անցկացնել այդ բանաձեւը, յայտարարելով, որ իրենք հեռանում են ուեկոմից եւ զբաղեցրած պաշտօններից: Կենակոմը հրաժարականը չէր կարող ընդունել, որոշեց հարցը փոխադրել Ռ(բ)Կ կենտկոմի Կովկասեան բիւրօ, հնարաւոր չհամարելով հրաժարուել որեւէ կէտից:

Անհրաժեշտ ենք համարում յայտնել, որ Երեւանի կոնֆերանսը եւ կոմիտէն ընդունել են բանաձեւ կենակոմի պլենումի որոշման ոգով:

Անհրաժեշտ է ամենահրատապ կարգով յայտնել Ձեր վերաբերմունքը այդ բոլորի մասին, ոչ մի րոպէ ուշացնել չի կարելի:

*Կենակոմ՝ ԱԼԻԽԱՆԵԱՆ, ԱԽԻՄ, ԴՈՎԼԱԹԵԱՆ»:*

Յունուարի 28-ին Կասեանը եւ Մռաւեանը Օրջոնիկիձէին իրենց դիրքը պարզաբանելու նպատակով ուղարկում են բացատրագիր, որտեղ յայտնում են իրենց անհամաձայնութիւնը կենակոմի մեծամասնութեան հետ:

Ինչպէս պարզում է վաւերաթղթերից, Կասեանը եւ Մռաւեանը չէին նկատում սովետական իշխանութեան համար առեղծուած իրաւրութեան վտանգաւորութիւնը, իսկ կենակոմի մեծամասնութիւ-



ARAM webaram.com

նը սխալ էր գնահատում դաշնակցականների ուժը: Նրանց թւում էր, թէ մի հարուածով կարելի է չէք դարձնել դաշնակցականների ելոյթը: Այդ ժամանակ դաշնակցականների աւանտիւրան կանխելու պայմանը ոչ թէ դաշնակցականների նկատմամբ ռեպրեսիաներ կիրառելն էր, այլ այն օբիեկտիւ պայմանների վերացումը, որ հող էր ստեղծում դաշնակցականների յաջողութեան համար:

Իսկ որո՞նք էին վերաբուարեան աւանտիւրայի օբիեկտիւ պայմանները. նախ՝ Հայաստանի բլոկատան մենշեւիկեան վրաստանի եւ Թուրքիայի կողմից, որոնք արգելում էին պարենային զնացքների մուտքը Հայաստան եւ դրանով իսկ սովի մատնում բնակչութեանը: Երկրորդ՝ Ալեքսանդրապոլում նստած քեմալականները, որոնք հրաժարւում էին եւս քաշուել Հայաստանից եւ բանակցութիւններ վարել ռեւկոմի հետ տերիտորիալ վէճերի հարցում: Նրանք ռեւկոմի դէմ պայքարում էին բոլոր միջոցներով: Իսկ ռեւկոմը իր տրամադրութեան տակ չունէր ո՛չ հաց, ո՛չ բանակ, ո՛չ փող, հետեւաբար՝ իշխելու ոչնչակէտեր: Տերիտորիալ հարցերից ոչ մէկը չէր լուծուած:

Այդ հանդամանքների ճակատագրական նշանակութեան մասին Գ. Վ. Չիչերինը մի չարք դիտուցագրեր է ներկայացրել ՌԿ(բ)Պ կենտկոմի Քաղբիւրոյին եւ Լենինին:

Դեկտեմբերի 14-ին գրած հաղորդման մէջ Չիչերինը ընդգծում է, որ, ստացուած տեղեկութիւնների համաձայն, Թուրքիան եւ Անտանտը միացած ձգտում են ստեղծել կովկասեան ֆեդերացիա ընդդէմ Սովետական Ռուսաստանի, այդ նպատակով բանակցութիւններ են վարում Դաշնակցութեան հետ, որպէսզի վերջինս օգտագործի Հայաստանի ողբերգական դրութիւնը եւ դրաւի իշխանութիւնը:

Կենտկոմին յայտնելով Հայաստանի ծանր դրութեան մասին, Չիչերինը գրում է. «Ձեր ուշադրութիւնն եմ հրաւիրում Հայաստանի եւ այնտեղ տեղաւորուած մեր զօրքերի ապէտալի դրութեան վրայ, որը վրաստանի կողմից դէպի Հայաստան մեր պարենային զնացքները բաց չթողնելու հետեւանք է:

Կարող է անհրաժեշտ դառնալ մեր զօրքերի եւս կանչելը, եւ դաշնակցականները, որոնց հետ Թուրքերը իբր թէ(*) բանակցութիւններ են վարում, կարող են կրկին անցնել իշխանութեան գլուխ: Դա սովետական իշխանութեան հեղինակութեանը Արեւելքում մեծ հարուած կը լինէր»:

---

(*) Ընդգծումը մերն է, Ս. Վ.



ARAM webaram.com

1921 թուականի Յունուարի 20–ին Լենինին գրած զեկուցագրում Ձիչերինը դարձեալ չեշտում է Վրաստանի եւ Թուրքիայի կողմից Հայաստանի բլոկադայի կործանարար նշանակութիւնը: Խօսելով Հայաստանի սովետական իշխանութեան գոյութեան համար հացի մատակարարման նշանակութեան մասին՝ Ձիչերինը Լենինին 1921 թուականի Մարտի 30–ին գրել է.

«Մեծայարգոյ Վլադիմիր Իլյիչ.

Սովետական իշխանութեան հաստատումից յետոյ յայտնի ակտը դա մատակարարումն է, եւ այդ տեսակէտից ինձ չատ է անհանգրստացնում Հայաստանի վիճակը: Վրացական հին կառավարութեան դէմ պայքարի պահին՝ սովետական կառավարութեան կողմից հէնց Հայաստանի անհրաժեշտ մատակարարման բացակայութիւնն էր, որ հայ մասսաներին դարձեալ հրեց դէպի դաշնակցականները...»:

Ռ.Կ(բ)Պ Կովկասեան բիւրօն քննարկում է ՀԿՊ կենտկոմի որոշումը եւ Կասեանի ու Մռաւեանի բացատրագիրը, յանձնարարում Օրջոնիկիձէին եւ Օրախելաշվիլուն՝ կովբիւրոյի որոշումը իրենց բատորապրութեամբ հաղորդել Ա.Իսին եւ Կասեանին:

Այդ որոշման մէջ ասուած է.

«Գտնում ենք, որ քաղաքական իրադրութիւնը հրամայաբար պահանջում է անողոք պայքար մղել Դաշնակցութիւն պարտիայի լիակատար լիկուիդացման համար, մեկուսացնել կազմակերպութիւնների զեկավարներին, ինչպէս նաեւ արտակարգ դատարանների եւ հակաժողովրդական միւս հիմնարկների անուանարկուած անդամներին: Դաշնակցականների դէմ պայքարում չպէտք է մոռանալ այն ներքին խմորումները, որոնց մասնակիցները ակտիւօրէն պաշտպանում են սովետական իշխանութեանը, օրինակ՝ Դրօ–Վրացեան խումբը: Հակաժողովրդական պարտիայի լիկուիդացման համար մղուող պայքարը ոչ մի դէպքում պէտք չէ վերածուի ինտելիգենցիայի դէմ յատուկն պայքարի, թէկուզ եւ դաշնակցական անցեալով: Ոչ մի խօսք չի կարող լինել պարտիական եւ պետական պատասխանատու պոստից այս կամ այն ընկերոջ հրաժարուելու մասին»:

Ինչպէս երեւում է այս հեռագրից, մինչեւ դաշնակցականների աւանտիւրան դեռ թուում էր, թէ Վրացեան–Դրօ–Տէրտէրեան «ձախ» դաշնակցականները լոյալ են սովետական իշխանութեան նկատմամբ: Ի դէպ, պէտք է նշել, որ Վրացեանն այնքան քօղարկուած է գործել, որ վերջին օրն է միայն իմացուել աւանտիւրային նրա մասնակցութիւնը, երբ նա արդէն թագնուել էր Կոնդում:



ARAM webaram.com

*Բայց երկու կողմերի հակադիր դիրքերից բխող կոմպրոմիսային այդ որոշումը չի լուծում հարցը, չի մաքրում մթնոլորտը:*

*Փետրուարի առաջին օրերին վիճաբանութիւններն այն աստիճան սուր բնոյթ են կրում, որ Կասեանը եւ Մռաւեանը Փետրուարի 7-ին հեռանում են կենտկոմից եւ հրաժարական տալիս:*

*Փետրուարի 7-ին կենտկոմի քարտուղար Ալիխանեանը Ռկ(բ)պ կենտկոմին եւ Օրջոնիկիձէին հեռագրում է. «կենտկոմի պլենումը հաստատ որոշեց իրագործել առաջադրած եւ ձեզ յայտնի ծրագրից բխող քաղաքականութիւնը: Կասեանը եւ Մռաւեանը հեռացան կենտկոմից, հեռանում են նաեւ զբաղեցրած պոստերից: Կենտկոմի պլենումը իրեն իրաւունք չհամարեց ընդունել նրանց հրաժարականը, նրանց փոխարէն ժամանակաւորապէս նշանակել է ընկ. Դովլաթեանին՝ ռեւկոմի նախագահի պաշտօնակատար, ընկ. Ասիխին՝ Արտաքին գործերի ժողկոմի տեղակալ»:*

*Ռկ(բ)պ կենտկոմի կովկասեան բիւրօն զարձեալ քննարկում է ՀԿՊ կենտկոմում եղած ներքաղաքական տարաձայնութիւնների հարցը: Որոշում է չընդունել եւ ոչ մի հրաժարական եւ իրագրութիւնը տեղում ուսումնասիրելու եւ կովկասեան բիւրոյի դիրեկտիւն անցկացնելու համար Հայաստան գործուղել կովկասեան բիւրոյի անդամ Էլիաւային: Այդ օրերին Օրջոնիկիձէն Հայաստանում տիրող դրութեան մասին սիստեմատիկաբար հաղորդում էր Ռկ(բ)պ կենտկոմին: Նա գտնում էր, որ նման իրագրութեան մէջ ռեւկոմի եւ կենտկոմի անդամների արուած յարաբերութիւնների պայմաններում չի կարելի արդիւնաւէտ աշխատել եւ միասնաբար պայքարել: Ուստի, պէտք էր վերանային ռեսպուբլիկայի ղեկավարութեան կազմը, այն համալրել փորձուած եւ հեղինակաւոր մարդկանցով: Օրջոնիկիձէն Ռկ(բ)պ կենտկոմի եւ Լենինի առաջ դնում էր Միասնիկեանին անյապաղ Հայաստան տեղափոխելու հարցը:*

*Պէտք է նշել, որ Յունուարի կէսերից մինչեւ Փետրուարի 18-ը ռեւկոմի իշխանութիւնը փաստօրէն գոյութիւն չունէր: Ռեւոլուցիայի համար օրհասական պահին նրա ղեկավարութեան մի մասը մեկնել էր Բագու: Երեւանում մնացել էին Ասիխը, Կասեանը եւ Դովլաթեանը: Երեւանն արդէն չրջապատուած էր: Բայց Ասիխն ու Դովլաթեանը եւս չէին հասկանում սպառնացող վտանգի ամբողջ լրջութիւնը»:*

*Ս. Տ. Ալիխանեան*

Սովետական Հայաստանի Դերը Հայ Ժողովրդի Ազատագրման Գործում (1917—1921 թթ.) Երեւան, 1965, էջ 296—302:



ARAM webaram.com

ARAM webaram.com

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


| | Էջ |
|---|---|
| Հեղինակի կողմից | 5 |
| **1918—1920 ԹՈՒԱԿԱՆՆԵՐԸ** | |
| Ի՞նչ էիճ փնտռում հիւսիսում | 11 |
| Կօալիցիա | 28 |
| Զինադադար եւ Հայաստանի սահմանների ընդարձակում | 38 |
| Լոյսեր եւ յոյսեր | 49 |
| Դիւղատնտեսական նախարարութեան մէջ | 66 |
| Կօալիցիայի լուծումը եւ Պարլամենտական ընտրութիւններ | 81 |
| Բոլշեւիկեան մուրճի եւ բրեական սալի միջեւ | 104 |
| Ներքին եւ արտաքին սուր տագնապներ | 115 |
| Սեւ մութ ամպեր... | 129 |
| Ծաղկաձորում | 150 |
| Ձախորդ օրերը կը գան ու կ'երթան | 155 |
| Հայ—բրեական պատերազմը | 169 |
| Իմ կառավարութիւնը | 180 |
| «Սա՛ է վերջին եւ վճռական կռիւը մեր» | 191 |
| **ՅԵՂԿՈՄԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ** | |
| Բոլշեւիկեան մեղրալուսինը | 211 |
| «Ձախ Դաշնակցութիւնը» | 218 |
| Դրոյի աճսորը | 224 |
| Տոպրակի մէջ | 229 |
| Սպայութեան աճսորը | 236 |
| Բռնագրաւումներ | 243 |
| «Թալշաբաթ» | 253 |
| Պետական շինարարութիւն | 260 |
| Ապարդիւն ճիգեր — տեսակցութիւններ Կասեանի, Աքարբէգեանի եւ Ալիխի հետ | 269 |
| Տեսակցութիւն Մռաւեանի հետ | 284 |


ARAM webaram.com

ՑԱՒԵԼՈՒԱԾ

էջ

Հ· Հ· Փարիզի պատուիրակութեան նախագահի զեկուցումը 295
Ա· Ջամալեանի եւ վ· Նաւասարեանի ճամակները 304
Ց· Քաջազնունիի ճառը Նիւ—Եորքի մէջ 310
Ց· Փիրալեանի ուղերձը 316
Մ· Փորթուգալեանի յօդուածը 319
Հայ Անկուսակցականներու միութեան ուղերձը 322
Միջ—կուսակցական խորհուրդի կոչը 324
Առիւծընող խայծը 326
Հայաստանի Սոց· Դեմ· կուսակցութեան կոչը 328
Ակադ· Ա· Թամանեանի ծրագիրը 331
Ազբէյջանի ներքին կացութիւնը խորհրդայնացումից յետոյ 340
Ռուսաստանի Կոմ· Կուսակցութեան բռուցիկը 343
Լեւոն Շանթի ճամակները 346
Կոչ՝ հայ—բրքական պատերազմի առթիւ 355
Սոցիալիստ յեղափոխականների կոչը 357
Բոլշեւիկեան նոր մեկնաբանութիւն Փետրուար 18–ի պատճառների 359

ARAM webaram.com

ARAM webaram.com

Imprimé au Liban

Imprimerie HAMASKAïNE

ARAM webaram.com

ARAM webaram.com

Կեդրոնատեղի՝

Librairie "HAMAZKAINE"

10, Rue Hussein Beyhoum

Beyrouth - Liban

ARAM webaram.com